ԻՆՔՆԱԳԻՐ 9

գրական հանդես

ISSN 1829–1139



ԻՆՔՆԱԳԻՐ 9

_ Inknagir(autograph) 9

Ինքնագիր գրական ակումբ
Երևան
2018

CALOUSTE GULBENKIAN FOUNDATION
ARMENIAN COMMUNITIES

Համարը հրատարակվել է
Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի աջակցությամբ

_ ԻՆՔՆԱԳԻՐ 9

_ Inknagir(autograph)

Խմբագիրներ՝ Վիոլետ Գրիգորյան, Վահան Իշխանյան

Պատասխանատու՝ Վահան Իշխանյան

Սրբագրիչ՝ Թագուհի Սուլիյան

Ձևավորումը՝ Նունե Խուդավերդյանի

էջադրումը՝ Արամ Ուռուտյանի

Ինքնագիր գրական ակումբ ՀԿ
Գրանցում՝ 211.171.00230, տրվել է 29.11.2001 թ.
Ստորագրված է տպագրության 25.11.2018 թ.
Տպաքանակը՝ 200
www.inknagir.org
violet.grigoryan@inknagir.org, vahan.ishkhanyan@inknagir.org
Լենինգրադյան 8, բն. 62, 0038
Երևան, Հայաստան
Հեռ.՝ (+374 55) 39 54 19
© Ինքնագիր գրական ակումբ, 2018

01. Ինքնագիր

07 *Ինքնիշխան բլբլոց*

02. Բնագիր

10 Գրիգոր Պըլտեան
21 Վիոլետ Գրիգորյան
29 Համբարձում Համբարձումյան
47 Բյուրակն Իշխանյան
73 Գևորգ Տեր-Գաբրիելյան
83 Միսաք Խոստիկյան
110 Մարիամ Մնացականյան
118 Արամ Կիրակոսյան
122 Աննա Դավթյան
127 Մար Մարգարյան
132 Ճեսի Առլեն
137 Նարեկ Թոփուզյան
147 Տիգրան Ալեքսանյան
151 Էլլա Կանեգարիան
160 Մարկ Նշանեան

03. Թարգմանություն

176 Շահրամ Խոսրավի
191 Յուլիա Կրիստևա
203 Սարոջինի Սահու
214 Ռիչարդ Բրոտիգան
221 Քորնել Ուեսթ
238 Անտոնիո Տաբուկկի
248 Ուիլյամ Կառլոս Ուիլյամս
258 Նորման Մեյլեր
264 Ժան Թարտիէօ
274 Ջոան Դիդիոն

04. Գրախոսական

284 Րաֆֆի Աճէմեան
292 Վահան Իշխանյան

_ ԻՆՔՆԱԳԻՐ

Ինքնիշխան բլբուլ

Ինչո՞ւ համառել գեղարվեստական գրականությունը:

Քաղաքա-տնտեսա-իրավական խոսույթն ու բառարանը դարձել են ոչ թե պարզապես գերիշխող, այլև կլլել ամենայն ինչ: Այնքան ասվեց՝ ամեն ինչ քաղաքականացրեք, որ ամեն ինչ մեռավ, մնաց քաղաքականությունը: Բազմաշերտ, բազմերանգ, նրբիմաստների զգույշ-հոգատար-բծախնդիր տարբերություններով կյանքի ճշմարտություն և իրականություն ստեղծող-ճանաչող հարուստ բառարանի փոխարեն՝ միայն մեկ ճշմարտություն և լեզու՝ հեղափոխության սև-սպիտակ օրենքը: Գիտե՞ս այդ լեզուն՝ կարող ես խոսել, չգիտե՞ս՝ համր ես: Բլբլերենը լուրջ չի համարվում, հարգի չէ, արագ չի խոսում, ակնկալելի բան չի ասում:

Ուրեմն դառնալու ես քաղաքական դասի լուռ ունկնդիրը և լսես.

«Քաղաքական դասի առաջին կանոնը՝ սիրել սեփական երկիրը: Գիտե՞ք՝ ի՞նչ է նշանակում սեփական երկիրը սիրել: Չգիտեք, քանի որ երեք ոջլոտ կոմունիստներ եք կամ դեմոկրատներ, մեծ տարբերություն չկա: Ես կասեմ դա ինչ է»[1]:

Ապա փակվես դասդ անգիր անելու, այնտեղ, ուր երկխոսությունը միայն ներսումդ է.

Փակիր, փակի՛ր աչքերդ, աղջի՛կս, արցունքներիդ վրա, հայրենիքիդ ջրի վրա, որ ոռեոռ հոսեց դեպ հետ:

Եվ *մարդկային կերպարը պատկերվում է ոչ միայն առանց հագուստի, այլ նաև՝ առանց իր քաղաքական իրավունքների: Ապաքաղաքականացված կերպար, որ մարմնավորում է այն, ինչ իտալացի փիլիսոփա Ջորջո Ագամբենը անվանել է հոմո սակեր՝ ապաքաղաքականացված կյանք, մերկ կյանք*:

Իսկ *Օրէնքը միշտ ի զօրու է, բայց այլեւս կեանքին հետ նոյնացած է*:

Եվ *«փչանալու», տաբու դառնալու սարսափը ավելի է շեշտվում, երբ հերոսը երանի է տալիս իր մեռած մանկության ընկերոջը*:

Կամ Կառավարության դիմաց իր հերթին *տախտակներին գամված սպասում է Բիձեն*:

Եվ հետթավշյա անկումը մի հույս է թողնում.

Գոնե *մահից հետո ես արթնանամ իմ սեփական դրախտում, որտեղ ամեն օր կլինի ապրիլի 23-ը*:

Ի տարբերություն քաղաքական անվանախուսափուկ, ինքնաթաքչուկ միտումների, որ ավելորդ ու ժամանակավրեպ է ներկայացնում՝ իրականում հենց գործելով որոշակի գաղափարախոսության ծիրում, ոչ միայն չժխտել գաղափարախոսական լիցքդ, այլև դիրքավորվել այնտեղ, ուր *սև մտավորականի ապագան ո՛չ արևմտյան ծնողի հանդեպ խոնարհական հակվածության մեջ է, ո՛չ էլ աֆրիկյան ծնողի կարոտաբաղձ փնտրտուքում: Ավելի շուտ, այն երկրագունդը պաշտպանող ու ավելի լավ աշխարհ պատկերացնող այս հիբրիդային տոհմագծի քննադատական ժխտման, իմաստուն պահպանման և ընդվզական փոխակերպման մեջ է*, ուր *միայն կան ընտրութիւնները, որոնք այս պահուն իրենք զիրենք կը ներկայացնեն. որոշելիք կայ, եւ կարելի չէ չորոշել. եւ ուզեմ-չուզեմ այդ որոշումներով ինքզինքս պիտի կերտեմ, ուր* տեսնում ես, որ *դու կին ես գունավոր ապակի, ներսից դուրս նայող եղունգով խազած ապակի, շուրթի ճաքը լիզող ինքն իրեն ապաքինող հաստ կրծկալի տակից պտուկով աշխարհին նայող, ուր փոփ մշակույթը շարունակում է մնալ «տանջի՛ր կանանց»-ի սահմաններում, միաժամանակ ավելացնելով կանանց կողքին նաև այլ խմբեր, որոնք հասարակության աչքում հստակ տեղավորվում են «թույլ», «անկարող» ու «մարգինալ» գաղափարների մեջ*, ուր *Պուրուշան (առնականությունը) պասիվ է, իսկ Պրակրուտին (իգականությունը)՝ ակտիվ: Իգականությունն այսպիսով Շակտի կամ էներգիայի աղբյուր է*, ուր *մայրական կիրքը վերանվաճման պես մի բան է, քանի որ շարունակ բացատրում-սուբլիմացնում է կյանքի և մահվան ազդակները, որ մեզ ուղեկցում են ամբողջ կյանքի ընթացքում և նույնիսկ մահվանից հետո*:

Գաղափարախոսականությունը կայանում է ոչ թե կանխավ որդեգրած սկզբունքների հիմքով, պատմելով, ներկայացնելով ու հղելով ինչ-որ տրված ու ոգեկոչվող ճշմարտությունների, այլ գեղարվեստական ճշմարտության ընդմեջեն, որ ձևակերպվում և իրադարձայնանալ է փորձում հընթացս, երբ *Շնչափող է լցվում քամին ու հետ է վերադարձնում հոցներ* **և** *Խճճուած սենեակի տպաւորութիւն մը կ՚ամփոփուի մէջդ*:

Նույն կարգի հանձնառության՝ ոչ թե կանխատուր փաստերի գրանցման ու ներկայացման, այլ գրական անվկա փաստարարման փորձ էր նաև քաղաքական գործընթացին՝ հեղափոխությանը, գեղարվեստական գրականությամբ անդրադարձող գործերի մրցանակաբաշխությունը, որին ներկայացված լավագույն գործերը տեղ են գտել այս համարում: Դրանք խոսում են ոչ թե քաղաքական բեմից, այլ կուլիսներից, որտեղ գլոբալ փոփոխությունների հետքերն են՝ ինքնությունների արտադրման ու վերարտադրման, նշանայնացման, խաղարկման ու ապրանքայնացման մեծ «շուկայում», էկրանների ու տեսախցիկների հսկող հայացքի ներքո փոքրիկ ու անկոր թվացող անհատական «դավադրություններն» ու ընդվզման ճիգը, հարմարվողական ամլությունը և պայթյունի հույսը: Կամ՝ «օպտիկական» հնարքով գլխավոր համարվողի սղումն ու չտեսնող-չգիտակցողի զուգահեռ լուսանցքայինի բեմելը: Կամ՝ փոփոխությունների ձգտման՝ ծերի ու երիտասարդի անհատական պատճառարկումներն ու ռազմավարությունները՝ ի հակադրություն հռչակված, տարփողվածի և այլն:

Ջանալ պահպանել այն բացառիկ տեղը, ուր գրականությունն ինքնիշխան է:

1 *Շեղատառ գրությունների հեղինակներին գտնել այս հանդեսում:*

_ ԲՆԱԳԻՐ



Լուսանկարը՝ Նավիկ Արմենակյանի

Գրիգոր
Պըլտեան

Անիերքելին

Աչքերդ կը ցաւին:

Կը գոցես կոպերդ: Խճճուած սենեակի տպաւորութիւն մը կ'ամփոփուի մէջդ: Կարծես կը խարխափես: Հանգիստ խաւար: Կը բոլորուիս ներքին բոցի մը շուրջ: Ոչ մէկ բանի յիշողութիւն:

Այս պահը՝ բոլոր պահերէն առաջ:

Որքա՜ն տեւեց:

Երբ կը թուի թէ ցաւը ահա նուազեցաւ՝ մէկէն սաստկացեր է արդէն: Անկարելի է կեդրոնանալ: Գլուխդ կը դնես բարձին: Նորէն կը թուի որ կ'ընկրկիս, կը հեռանաս բաներէն: Միջոցը պարպուեր է: Խորտակուած հորիզոն մը աջին: Միայն հետքեր: Գուցէ նշուլուող նշմարներ: Բայց յետոյ անկիւններէն, ականջներուդ վերերէն, սահող ու սեւցող ամպեր, սկիզբը շատ թեթեւ, ապա թանձր, պիկպակ, մէկէն ամպրոպի մը պէս կը վերադառնայ, կը պայթի, հաւանաբար պայթեր էր արդէն ինքն իրեն եւ փշուրները չէին հասած դէմքիդ: Եւ ատիկա կարելի չէր նախսզգալ, կանխել, ապա տարրալուծել: Ճիչը գուցէ պիտի ապատագրէր, կը խորհիս:

Ճիչը՝ անբան, անտէր, անկապտելի:

Կը սեղմես շրթներդ: Կծկուեր ես ակամայ:

Գիտես, այդ է. մէկը մտեր է մէջդ կարծես, խցկուեր, մթերուեր, քեզ կ’ապրի, կը շնչէ, կերպարանք ու տեղ կը փոխէ վրանաբնակ թափառականի սանձարձակ ապատութեամբ. խուլ կը պեղէ, կը քրքրէ, կը խրէ մէկէն իր խայթոցին ասեղը մէջդ: Դիմադրականութիւնդ փորձեր է եւ ահա... տեղի կու տաս: Միայն ստրուկն ես անոր: Կը ջանաս հետեւիլ ընթացքին, իբր թէ պիտի տիրապետես, իշխես անոր, փարատես կայն կամ ճզմես: Իսկ ան կ’ընդարձակուի, կը բազմապատկուի: Երբ հոսկէ կ’անհետանայ, կը յառնէ մէկ ուրիշ տեղէ, կը բողբոջի: Ծոծրակէդ կը բարձրանայ ճակատդ: Այնտեղ կը բրգանայ: Կ’արեւէ: Կը սեղմէ վիզ ու կզակ, պիտի կանոնք ոլորէ, կարծես իր անհաշուելի բջիջները կը սկսի տարածել հիւանդութեան մը նման որ կարծես գտեր է ելքը դէպի արտայայտութիւն, դարձեր է խիթ ու խոց:

Բոլոր բաները կ’երերան, կը սասանին, կը ծռմռին, կը ցաւին նոյն ատեն. սեղանը, հովէն սրսփուն վարագոյրը, հեռախօսը, գրադարանը: Քեզ աւելի ու աւելի կը մօտեցնեն մարմնիդ: Կը փակին անոր: Չես կրնար վերծիլ անկէ, որքան բանաս աչքերդ, ընկերանաս, ճգնիս ընկերանալ շէնքը, սանդուխները, սալայատակներն ու քաղաքը լեցնող աղմուկներուն: Դո՞ւռ մըն է բացուողը, թէ՞ մեթրոյի յանկարծակի արգելակումը որ կը սուրայ ողնայարդ ի վար մինչեւ ոտքիդ բթամատը ձախէն՝ հասնող ընդերքի փլուածքին: Ամեն ինչ օդին մէջ, առկախ, ամեն ինչ շփոթուող ընդհանուր թրթռացումի մը: Տակնուվրայութիւն մը շրջուող յարկերու դէպի մոխրագոյն վիհ մը, ուրկէ փայլակներ կ’անցնին, կը խրին միսերուդ մէջ:

Ցաւը սկսեր է քեզմէ առաջ, ինչպէս լեզուն որ կը խօսի քեզմէ առաջ:

Լարումդ կը նուազի: Յանկարծ դուն քեզ կը զգաս աւելի թեթեւօրէն հանդարտ, կը կարծես՝ բաները իրենց հին տեղերը պիտի գրաւեն, տիեզերքը իր խուլ կարգը: Ձեռքդ կ’երկարես լամբին, կը վառես լոյսը, կը բարձրանաս տեղէդ, թուղթ ու մատիտ կը գտնես, կը սկսիս մրոտել: Պատկերներ միայն, գոյն, ծաւալ, ուժգնութիւն: Ջիղ առ ջիղ, երակ առ երակ ցանցուող բոլոր մանրամասնութիւնները: Ո՞ր մէկը ըսես, ի՞նչ կանցառես: Գուցէ երեխան ես որ կը յուսայ գրչի, թուղթի թալիսմանով անհետացնել այդ այրուածքը, ինչպէս ատենին, երբ մանուկ էիր, գիշերը, մինակդ կը ջանայիր կարդալ, յարիլ լամբի լոյսին, փարատելու համար տեսողութեանդ թիթեռնացումները, ապա մութին անձկութիւնը, յետոյ ծունկի կարծես նախածննդեան կոտտանքները: Նոյն փորձը նորէն, երբ կը թուիս չափահաս մարդ, որ կը ջանայ անդոհը չէկոքացնել գիրերու տարացրուող կշռոյթով եւ կը դիտէ մատներուն ու բառերուն մրջնախաղը հետկհետէ անշարժացող, թուլցող, անկգայացող:

Կը մնաս ձեռնթափ: Կը կռթնիս սեղանին: Կ’ուզես մարձորդին պէս մկաններուն ներքեւէն ձեռնել, որոշել թրթռուն կգայուն թելը որ չես գիտեր ուրկէ՞ ուր է ձգուած: Մօտիկ ու անըմտել: Անիկա այնքան կպեր է մարմնիդ, այնքան փակեր է բաներուն որ չ’ըսուիր: Բառերուն երջանկութիւնը գիտես, ատոնց հեշտաբեր մահը կ’երապես, չարչարանքը նաեւ: Հիմա, ո՛չ մէկն է ո՛չ միւսը: Տարտամ սողոսկում մը՝ ուսոսկրներուդ միջեւ, ստուար ծփանքի մը պէս խորասոյզ որ կը կքի վրադ, կամ ինչպէս երբ առաւօտուն յայտնաբերեցիր պատշգամին դիկուած ձիւնը եւ աշխարհը որ ծխնելոյզներն ի վար կը փլի՝ մէկ շունչով մէջքիդ: Պզտիկ

հերձ մը, եւ ահա ծերպի մը սրընթաց ճեղքը կը վերածուի անդունդի: Թիկունքդ կը զգայ հարուածին հեռաւոր յառաջխաղացքը: Երբ կը նստիս՝ աշխարհը կը նստի, կ'ընկճուի հետդ: Էջքը վերջ չունի:

Կիկում առանց մոխրացումի:

Ինչ մը կ'աճի, ինքնօրէն, ոչ ոքի որեւէ բան կը հարցնէ, կը հարթէ բոլոր խոչընդոտները, պատուարները որ անգիտակից մարմինդ, ուղեղդ, գիտակցութիւնդ կը դնեն առջին: Կը քալէ դէմքիդ երկու կողմերէն, ճկմէ պիտի վայն: Քարայր մը՝ որ հետկհետէ կը նեղնայ եւ քեզ կ'առնէ իր երկու մօտեցող, սեղմուող պանգուածներուն միջեւ: Դանդաղօրէն կը սեղմուի, կը ճնշէ, պահ մը կարծես կը լայննայ, շնչել կու տայ, լոյսի պէս բան մը պիտի ժայթքէ, կամ անոր յոյսը, որպէսզի յետոյ քունքերդ աքցանէ: Յաճախանք մը ասիկա՝ անկասկած, ինչպէս բանդագուշանքները որ կ'աճին ինքնապատում պրոյցներու երկայնքին, երբ միտքը կը դառնայ վայրագնաց:

Զուր ցնորանք չէ՞ գրելով փորձել քրքրել, արմատախիլել այդ ինքնամուտը: Ինքնամուտը կ'ըսեւ երբ պարզապէս աճեր է ներսերէն, քեզի անծանօթ քու տարակայութենէդ, կարծես դուրսէն, քու իսկ գաղափարէդ:

Որքան ճգնիս այս անձեւ, հեղուկ թուող յորձանքը սեւեռել, կեդրոնացնել տեղ մը, անշարժացնել, միտքդ միշտ անոր դէմ, նետի մը նման որ կը դիմէ թիրախին, անիկա կը սփռուի հոս-հոն, կը թուի թէ ջախջախեցիր ընգղան: Յրուող, թուլցող, ծորող միսերը կը քսուին դէմքիդ: Պալարը չէ պայթեր, ընդհակառակը բջիջներու իր խլրդային գաղութները արդէն սփռուած, տարակայուած, հաստատուեր են մատերուդ ծայրը, դաստակիդ, արմուկներուդ, կոկորդդ ի վեր: Ջիղերը կը պրկուին, կը լարուին, կը կոտտան, չեն կտրուիր:

Փտող, բորբոսող արձանն ես ջուրի յատակին:

Պատկերը բան մը կը ծածկէ: Բան մը ցոյց կու տայ: Ո՛չ մէկը, ո՛չ միւսը բոլորովին: Տեսակ մը ապատ կառուցում, յեղյեղում, հետեւանքէ վերծ: Պատկերը՝ որպէսզի հեռանաս դուն քեզմէ: Դառնաս մոռացօնք:

Անոր տակէն, անտեսանելի, սլաքը յայտնուեր է նորէն: Աս ալ շատ թերի ձեւ մըն է ըսելու: Ցաւը տեսանելիի կարգին չի պատկանիր: Չես ալ կրնար շօշափել: Ան է որ քեզ ամբողջովին, քու ողջ բնութեամբդ կը բռնէ, կը բանի, կը ճմլէ, կ'ըմբռնէ, ինչպէս շիկացած երկաթը մորթը: Եւ գլուխդ կը վարնես հիմա բարձին մէկ կողմէն միւսը, կը յամառիս գրել պկուանքով, բայց գիտես, առանց տեսնելու, շօշափելու, որ մատիտի հետքը թուղթին վրայ երկար գիծ մըն է: Անվերծանելի: Կը նմանի աղաղակին: Բայց երբեք չպոռացիր: Ոչ, չես կրնար ճչալ: Կը ցաւիս: Կը զգաս միայն՝ հրաշէկ, լուսարձակ թել մը կ'անցնի մէկ քունքէդ միւսը: Կ'այրէ, կնքելու պէս կը տաղէ: Կը վերցնես հեռախօսը: Կը դնես տեղը վերստին. դաստակդ ի վեր բարակ, շիկացած ոլորաթելը կը պրկուի:

Աչքերդ բացիր: Աշխարհը չէ բռնկեր: Երդիքէն անդին երկինքը բոցատանջ աշխարհագրութիւն մըն է: Թէ ըլլաս, թէ չըլլաս, ոչինչ... այն ատեն գուցէ աշխարհն ալ չըլլայ: Պարզապէս անկէ պատկեր մը հիմա կը պահուի աչքերուդ հորիզոնին, ճերմակ-դեղին պանգուած մը, թել-թել, ծուէն-ծուէն, ոստայնանկուած, մոխրագոյն կապերու մէջ ամպակոյտ:

Պատճառ ու մեկնակէտ կը փնտռես:

Թերեւս չտեսնելու վախն է որ կը բանի, օր մը այլեւս չկարենալ յառաջանալու մտավախութիւնը: Կուրցողը բան մը կը տեսնէ, ստուերը, տեսածին յիշատակը. նման շուքեր: Չտեսնելը այս պարագային շուքերու հետ առնչուիլ է անկասկած: Ներքին տեսողութիւնը, յիշողութեան ու երեւակայութեան հետ, կը շարունակէ պատկերներ ստուերոտել: Ո՛չ խաւար, ոչ ալ լոյս: Մեր բնովին առնչումը դուրսին, որ յատուկ է կգայարանքներուն: Կուրցողը գուցէ կը գտնէ վերին դաշտ մը, գետին մը, աւելի ճիշդ՝ ծաւալի, խորութեան կգացողութիւն մը ուր մտածումը կը թուի աւելի ապատ, կարծես աւելի մտերիմ, ներկայութիւն մը՝ կորսնցուցած կամ նուաճած իր աններկայութիւնը: Սակայն ինչ ալ ըլլայ այդ վերին խորութիւնը՝ մտածումը կը կառչի մնացորդներու որպէսվի չչքանայ: Յետին գետինը՝ ուր այլութիւն մը կարելի է վկայակոչել, այդ անորոշ, թերեւս անձեւ ընչութիւնը:

Խաւարը, բացարձակը, վարկած մըն է միայն: Հոն կը տեսնես քու չտեսնելդ, հոն տեսնել չիասնիլդ: Ես խաւարը տեսայ բացագանչողն ու գեղգեղողը պատկեր, դրուագ, պատմութիւն կ'առաջարկէ յաճախ եւ միստիքին պէս իր խաւարչտին անգիտութիւնը կը պոռայ: Իսկ անցեալը որուն մէջ կը հեռակայի, կը խրի այդ փորձառութիւնը (կը հաւատաս որ փորձառութիւն մըն է) կը թելադրէ արդէն որ պատմութիւնը սկսեր է եւ խաւարին հերքումը, անոր քու չտեսնելուդ հերքումը ներկայ է, անցեալին մէջ փոխադրուած:

Սակայն անոր առթած սարսափը, խաւարի սարսափ կոչուած երեխայական, գուցէ նաեւ առասպելական, կը յարուցանէ ամեն տեսակ այլանդակ ոգիներ, ճիներ ու շունչեր: Ամբողջ հասարակ տեղիք մը այլաշխարհի: Միտքը, մարդուն միտքը, դարերէ ի վեր սանդարամետին ու Հադէսին մէջ կը սիրէ, կը հաճոյանայ վետեղել բոլոր վախազդու էակները, հրէշներ, նհանգները, դեւերը, շուտներն ու գրողները, անկեալ հրեշտակներն ու ընդոծին սատանաները: Խաւարը բնակուած է, անգիտակից ու գիտակից երկդիմի աւարով: Բանդագուշանքներով, յաճախանքներով, մարմնին թանձր, անլուծելի խտու-թեամբ սնանող մղումներով, կը յայտարարեն հարիւրաւոր գիտակ հոգեբոյժ, հոգեբան, հոգեվերլուծող: Թերեւս օր մը կարենաս տեսնել ատոնք պաստառի մը վրայ (ջղագարի, հոգեգարի կամ ցաւագարի տարբերակները) ինչպէս քու իսկ օրկաններդ շողարձակման սրահի պատին, ապշիս պահ մը այդ ծակոտկէն գոյութեանդ համար, մտովին ժխտես նոյնանալ այդ բծաւոր թափանցկութեանդ, բայց խաւա՞րը: Այդ խիտ, կանգուածեղ եթէ ոչ մոլեգին մթագնութիւնը ուրկէ ո՛չ մէկ աստուածութիւն կը ցաթէ եթէ ոչ սկզբնական քաոսին կատաղութիւնը, հոն ուր վերին ու վարին տոհմերը կը խառնուին իրարու եւ կը ծնի, ծներ է արդէն ցաւին երազը, ցաւին հրավառ կանթեղը, անդէմ ու անանուն, անդրագոյն քան կԱստուած:

Անոր հանդիպողը կ'այլայլի: Կը դիւահարի: Հոն իջնողը կամ հոնկէ բարձրացողը (ինչո՞ւ միայն իջնել, արդեօք առասպելները խաւարը կը տանին ընդերքի՞ն, ստորերկրեայ մեքենայութիւններո՞ւն) չի կրնար վերադառնալ լոյսին: Ակամայ կը տարուի անկէ, նման Որփէոսի, հմայուած անով եւ նայուածքը սեւեռած ետին, իր սիրածի, վինք լքածի, ուրացածի կամ հերքածի, այսինքն՝ կորուստի աւաղումին: Ի՞նչ է հմայքը մահաբոյրին, մահասփիւռին, մթամածին դիոնիսեան գրաւչութի՞ւնը: Եթէ գացողը վերադառնայ, պատռտուածը վերստին գտնէ իր ամբողջութիւնը... նման է մարդուն որ կը բախի իր իսկ

ծագումին եւ կը խոցուի խորապէս, նման Ոդիսեւսին, Արային եւ սանդարամետի բոլոր այցելուներուն, որոնք իրենց դարձով իսկ կը դառնան անխոցելի: Ասոնց դէմքին վրայ, ժպիտի մը կամ քարացած, վսեմ արտայայտութեան մը ետին կը նշմարուի աիարկու կսկիծին բերած ծամածուռը:

Ինչպէ՞ս յօժարիլ ձեւախեղումին:

Խաւարին մէջ տեղի կ'ունենան տեսիլքները: Առանց անոր ոչինչ կրնայ յայտնուիլ տեսանողի մտքին կամ սրտին, սրտի մտօք ինչպէս կ'ըսէին: Ինչ ալ ըլլայ բովանդա-կութիւնը՝ տեսիլքները կը թուին միւս կողմէն այս կողմ փոխանցուող ազդումներ: Ա՛յս կողմ: Եւ կը դառնան դէպքեր: Միշտ վուգահեռ աշխարհի մը երազա՜նքը: Ցնորանքը: Անդրաշխարհէն Յայտնութիւնք... կը տեսնուին միայն մութով, կարծես խաւարը ո՛չ միայն անոնց պայմանն ըլլար, այլ էութիւնը: Հսկողը խաւարի բնակիչ մըն է իր կարգին, որ քունի, արթնութեան մէկ պահուն կը ստանայ տեսիլքը ուր աներեւելի բան մը կու գայ տեսքի: Սակայն ինչ ալ ըլլայ՝ այդ տեսքը, իրէշային թէ իրեշտակային, եսին ժխտումն է, տեսքը տ-Եսքն է, ուր աչքին Եսը տեղի կու տայ տեսածին: Ասիկա այն չափով որ կը միանայ տեսածին: Տեսնելը դադրիլ է ըլլալէ Ես, միանալ է տեսնուածին, պահ մը, միայն շատ կարճ, րոպէական պահ մը: Եսին կորուստը տեսածին մէջ ներթափանցումով, ընկղմումով, լուծումով:

Ցաւը հերքումն է տեսիլքին:

Չ'ըսեր, չի թելադրեր, կը պոռայ որ մարմին մըն ես, պատռտուող, արիւնող կամ պարզապէս անտեսանելի բանէ մը ցնցուող, թրթիռի մը ենթարկուող մսակոյտ մը, մտքի խլեակ մը, որ կը տքայ, կը յամառի տոկալ, կը պառակտուի եւ կը մնայ մէկ ու մինակ: Հեւք ու հոգոց, լաց յաճախ, գետնաքարշ յանձնում մը անդիմադրելիին, ի յայտ կը բերեն այդ Եսը: Ինչ ալ ըլլայ առաջին դէմք մըն է մեռնողը, ենթակայ մը, ան որ կը հարթուի, կը տափնուի, կ'ենթարկուի քանի որ կայ, մինչ ծնունդը ոչինչէն խոստում մը կը թուէր, ենթակայութեան դանդաղ ու շքեղ նուաճումը: Ո՞վ չ'երազեր մնալ տեւական մանուկը: Ո՞վ պիտի չուզէր նորոգուիլ մշտապէս: Նախքան ոչինչին տրուիլը՝ ցաւող մարմինը շուարուն, ինքն իրմէ դուրս նետուած միտք մըն է որ կ'անգիտանայ իր մէջ բնակող, իր իսկ խելայեղ ու ինքնախոցող ուրիշութիւնը:

Անուն մը դնել անոր վրայ, գտնել դրդապատճառը թերեւս մեղմէ, ամոքէ. յետին մխիթարանք մը չէ՞ գիտնալ որ եղածը ուրիշ բան չէ եթէ ոչ երակներու լայնում մը, ջիղերու պրկում մը, արիւնահեղում մը, ուռեցք մը, գեղձապարկ մը, վէրք մը, ինչ գիտնամ: Բժշկական որեւէ քննութիւն կրնայ բնորոշել զայն, այսինքն՝ հազար ու մի ախտի մէջէն որոշել մէկը, միակը որուն հերթական պարագաներէն մին ես, հիմա: Իսկ սպիտակա-զգեստը կը նստի դիմացդ, գրասեղանին միւս կողմը, պաստառին վրայ ախտա-նշանները կը ստեղէ մի առ մի, ուշի ուշով կը հարցաքննէ ու կը գրէ, ապա կ'անցնի դարմանումի էջին. ոչի՛նչ, ոչինչ, փորձենք, կը պատահի, ահա անունն ու չափը, դեղ մը, քիմիական բաղադրութիւն մը, կարելի եղածին չափ ազդու, նաեւ անվնաս. բուսային, քաղցրաւենիքի նմանող անուշ, փռնչուկ կամ arnica, մեկոն, կանեփ կամ մորֆին խառնուած չես գիտեր ինչ եզակի խառնուրդ մը, ան որ պիտի յաջողի հանդարտեցնել, ապա ջնջել մվմկուքը, փարատել անոր ստեղծած անդոհը, քեզ մէկէն ցաւազերծէ եւ աշխարհիդ վերադարձնէ իր նախաւոր փայլը: Բայց ո՛չ մէկ ձեւով կրնաս ըսել այս

մասնաւոր, անհուն, կուտ ենթակայական բրտութիւնը, այն որ կը յանձնէ ոչ թէ միայն անկողնին, այլեւ մարմնի փոսին: Այն օրէն, ծնունդի կամ ծագումի բխումէն երբ հոգիդ իջաւ նիւթին մէջ ինկար որոգայթը: Ի՞նչ հարկ վարդապետելու, որ նիւթը ցաւն է եւ գնոստիկական հրեշտակները որ կարող են ցնծութեան, ատակ չեն ցաւին: Միայն մարդը… մարդեղէնը, մարմնեղէնը, մահկանացուն:

Ի՜նչ անհեթեթ կանականում՝ այն որ կը բաժնէ ցաւը տառապանքէն, խիթը վիշտէն, տանջանքը կսկիծէն, մտատանջութիւնը գլխացաւէն: Լեզուին ու մտքին վրայ կը բռնանայ միշտ հնագոյն անջատումը մարմնին ու հոգիին, այդ սկզբնագոյն անհաշտութիւնը, որ գոյութեանդ օրկաններուն արմատական անհամաձայնութիւնը կը թարգմանէ, նոյնիսկ երբ բանաստեղծը մէկտեղէ կզայութեան սենեակի մէջ մթերեալ ցաւերն ու հոգիի երկնքին խիթերը: Իսկ ի՞նչ ըսել մարմնեղինուած, ցաւող, չըսուած, ցաւցնող ու լռին միտքերէն ու միտումներէն, որ ֆանթազմի մը պատկերով կը գամուին, կը մխուին, կը խրին միսերուն մէջ եւ կզայարանքներդ կը վրկեն որեւէ բան կզալու կարողութենէն: Թերեւս հնագոյն ախտագիտութիւնը Հիպոկրատէսի օրերէն ի վեր կը ջանայ կարգաւորել մարմինն ու ախտերը, կանոնք ճկել կանոնի ուժով, որպէսզի ենթարկէ մտքի մը վերին օրէնքին: Ախտաճանաչելը կարդալ է մարմինը, գիտոսիկ բառով մը՝ ընթերցել կայն բծաւորող նշանները որոնք կայն կը մտցնեն խօսելիութեան համակարգին մէջ: Տնօրինել մարմնիդ, անոր ձեւին ու խորքին, բանիւ ու գործով, սիրոյ մէջ թէ ախտի, ահա այնքա՜ն բացայայտօրէն ժամանակակից մոլուցք մը:

Կը փորձես բաց պահել աչքերդ, ո՛չ թէ բաց աչքով երթալու աշխարհէն, կարօտագին, նայուածքդ ետիդ, այլ տեսնելու համար, անյայտին ու յայտնութեան միջեւ իջնող հորիզոնական բարակ շերտը հետզհետէ խորտակուող: Յանձնուիլ ցաւին տարուիլ է Եսէն որ խափանումին մէջ իսկ կ՚ուզէ տեսնել, տես-կզալ իր դանդաղ նուազումը, անկումը, իբր թէ երեւակայօրէն մնար տեղ մը՝ անմասն: Տեսնելը ըլլալ ու տրուիլ է տեսածին: Ծնիլ տեսքին ու հսկել անոր:

Ի՞նչ հարկ հաստատելու, որ անհեթեթ է ցաւը կամ թերեւս հոգեմտաւոր վարժանքով իմաստութեան մը կ՚առաջնորդէ, ինչպէս երջանկութեան արուեստը վաճառող իմաստունները կը խոստանան յաճախ. ցաւը կը հասունցնէ, կը կրթէ, կը կոփէ մարդս, կը վերածուի ապրումի, կեանքի փորձի, ստեղծարար տառապանքի: Կ՚ավնուացնէ հոգին, լուսեղէն երկաթի մը պէս կը տաղէ վէրք ու խոց եւ արիւնելով կը բուժէ: Ցաւով բուժո՜ւմը ցաւին երբ պառկած ես դիավննութեան սեղանին վրայ եւ անձկութեամբ կը սպասես կզայավրկիչ ներարկումի ասեղին: Միայն թէ տագնապի պահուն այդ ապառնին գոյութիւն չունի. որքան ալ կեդրոնացնել ուզես միտքդ մէկ կէտի վրայ, ճնշես վրան, սեւեռես, ոչնչացնել յաւակնիս, ինչպէս երբեմն ցասումով ու չարախնդութեամբ արմատախիլ կ՚ընեն ցեղ ու մարդախումբ, գերի ու վոհ, ամեն այլատարր գոյութիւն, կը վանեն ու կ՚անհետացնեն, որքան ալ բարձրանալ տենչաս դուն քեզմէ վեր, արհամարհելու պէս այդ մտերիմ ոսոխդ, ան կը մնայ, կը դիմադրէ, կը տոկայ անվեղչելի կորութեամբ: Եւ ասոր համար զուցէ յանձնուիլ մը կայ, ուր կը լքես դուն քեզ՝ անկօր, հետզհետէ նուաճող, վինաթափող յոգնութեան, կը դառնաս միայն ու միայն գործիքը էական կրաւորականութեան մը. դո՞ւն ես, թէ՞ մէկը, դիակի նմանակ մը, ինչ մը կամ ոչ ոք:

Պզտիկ, անվնաս թուող ցաւեր կան որոնց հաւանաբար մարդ կը վարժուի եւ կը նկատէ առօրեայ նեղութիւն, կամ ըսենք՝ ապրիլը չխանգարող հոլովոյթ մը, ապրելակերպ մը որ

արդարացումի պէտք չունի: Քառասուն տարի կինը ապրեր էր նման ցաւով: Իր մէկ մասն էր անիկա կարծես, իր ստացուածքը: Տեղ կը գրաւէր տանառաջքին, աթոռի մը վրայ, նայուածքը կը պտտցնէր փողոցէն մինչեւ տուներու տանիքները կտրատող երկինքը, կը տեսնէր աշխարհին նուազիլը թարթիչներէն. ձեռքը կը դնէր դունչին: Նոյն կանոնաւոր ու պատահական հերթականութեամբ կը յայտնուէին դուռ-դրացի, կը վրուցէին, գիտէին այդ ընտանի դարձած ներկայութիւնը բայց կը կրկնէին առհաւական հարցումը. ո՞ւրտեղդ կը ցաւի կոր: Միւսը՝ հարցումը հերքելու պէս ձեռքով մուր պիտի ընէր ու վանէր չես գիտեր ի՞նչ, կարծես որեւէ պատասխան կա՛մ անօգուտ էր, կամ ալ կարող կ'ըլլար մեղմ, տնտնացող այդ մկմկուքը ուժգնացնելու, թէեւ գոհ պէտք էր ըլլար որ եկողը որեւէ բացատրութեան պէտք չունէր, շատախօսելու նիւթ կը բերէր, պիտի ժղլէին, աստր-անոր բամբասէին, մոռցած պահ մը հանդիպումին պատրուակը: Հեզօրէն ընդունուած, թերեւս շփացուած ու սիրուած ցաւ մըն էր, ո՛չ բողոք, ո՛չ գանգատ. անոր բացակայութիւնն իսկ մտահոգիչ պիտի ըլլար եթէ երկար տեւէր, դաշտանի կանոնին մէկ խանգարումին նման: Ցաւը կրողը ճակատագրուած կը նկատէր ինքզինք ատոր. մեծ ցաւը գացեր, մնացեր էր բարակը, դարձած առտնին ու մշտական, բան մը՝ որուն հետ կ'ապրէր այսքա՜ն ատեն, որբեւարի կնոջ մը հաւատարմութեամբ: Կը վարնէր ափերը իրարու, ա՛տ մասին չմտածելու հաստատակամութեամբ. երբեք չէր խորհած, չէր համարձակած խորհիլ դիմել ո՛չ բժիշկին, ո՛չ մարձորդին, ո՛չ բուսագէտ բախտահանուկին, արդէն ինքն իրեն վճռած՝ հարկ չկար բուժել ախտ մը որ աչքին խաղին, ափերու քերուըտուքին, վիստի դնդերային գելումին պէս մաս կը կազմէր իր գոյութեան: Ատո՛վ կը վերապրէր:

Օհ, բայց ո՞վ պիտի ժխտէ ցաւին «դրականութիւնը»: Անոր երեւումը չէ՞ արդեօք ծածկուած, անտեսանելի եթէ ոչ անյայտ խախտումի մը ազդանշանը, գրեթէ մատչելի դարձնող օրկանական ներդաշնակութեան խզումը: Ի՞նչ լաւ որ ցաւեր էք: Ի՞նչ թանկագին յայտնութիւն: Լուռ մնացած, ցաւանշանի չվերածուած ախտերը երբ յայտնաբերուին արդէն ուշ կ'ըլլայ, կ'ըսէ ախտաբանը, անոնց լռութիւնը առյաւէտ բացասականութիւն մըն է: Իմ ցաւս իմ մէկ ծածուկ մասիս յայտնակերպումն է, մէկ թելադրանքը, անոր նախագծումը նախքան բուժիչ խօսքը որ վայն պիտի հաստատէ ու վաւերացնէ: Ան որ քեզ ապրեցնել կրնայ, այսինքն՝ փրկել ի չարէ եւ ի չգոյէ: Քանզի ցաւը այդ չէ՛, չարն ու չգոն նոյն ատեն, որ սակայն գոն ու գործեն իրենց ամենայն երկդիմութեամբ: Մարմնին յաւելուածային տրամաբանութի՞ւնը... Մարմնին անձայն բարբառը: Կը խօսի ան բացէն, կ'արտայայտուի նախքան խօսքին լիիրաւ առոգանումը: Կը խօսի իր մէջ ու ներքեւ ծուարած, հետզհետէ խաթարող աններդաշնակութենէն: Բժշկութիւնը քեզ այդ նախաւոր ներդաշնակութեան վերադարձնող գիտութի՞ւնն է, արհեստագիտութի՞ւնը, որ պիտի փորձէ բնաջնջել խախտումն ու կազմուածքը վերէն վար կտրող հերձը՝ շողարձակումով, վիրահատումով կամ հեռավար աթոմներու նշդրակով: Ամեն պարագայի՝ ահա մարմինդ բաց ասպարէզ՝ թեքնիք նորութեանց գործարկումին, անգամ մը եւս լքուած այդ քննիչ խօսքի մետաղային պեղումին: Կրնաս կարդալ ու խորհրդածել բժշկա-գիտական հանդէսներուն բոլոր արհեստավարժ յօդուածները, իրենց խիստ գիտական բացատրութիւններով, լուսանկարի կամ սխեմայի մը կից: Եւ սակայն ատիկա ոչինչ կը փոխէ հերձին ուժգնութենէն, անոր «որակ»էն պիտի ըսէիր, անոր աշխարհաժողով բնոյթէն, այն անձկութեան խոցէն որ իր մէջ կը հաւաքէ ամեն ինչ, իմ կուրութիւնս, անկգայութիւնդ ինչպէս քու, ո՛վ բարեկամ, բարեմտութիւնդ, երբ գութով, սրտակցու-թեամբ քաղցրացած նայուածքդ կը խոնարհես դէմքիս ու կը ջանաս մղկտուքիս

մինակութեան պատնէշը բեկանել. կ'անցնի, կ'անցնի, կը թելադրես, ձեռքդ դրած ուսիս, աշխարհիս ցաւը բեռ ըրեր նստեր ես: Մինչ դուն արտաքսուած ես կեդրոնէդ, մարմնէդ ու հոգիէդ, վտարուած, արտաքսուած բունէդ, վերածուած բոցակոյտի մը ամբողջ միջոցդ գրաւած: Տուներ կան որ ամրան շոգին կը բոցավառին ու կը հրկիզուին մէկէն:

Մարմինդ սկսեր է քրտնիլ, հոտիլ, փտիլ:

Ողջմիտ ըլլալու հակումով՝ ամեն բան վերջ մը ունենալու է, կ'ըսես: Ձեռքդ կը տանիս ցաւավերծիչ հրաշքին. երկու կաթիլ սրուակէն կամ բուռ մը ամենէն թունաւոր դեղահատներէն: Անդենական հանգիստը այսպէս ըլլալու է. կգայավրկութեան հաճոյքը անմարմնութեամբ մը սպառավինուած: Բայց ծովամայրը կայ, կը պահուըտի մէջդ, կարծես օտարանար, դադրէր քեզ յիշելէ, քեզ ըլլալէ, մանաւանդ քեզ օտարացնէր քեզմէ: Դո՛ւն, նորէ՛ն: Եւ հիմա կը քալես դէպի պատշգամին դուռը, լեղի լոյսը կը տարածուի, խորշոմեր է: Կ'անդրադառնաս որ թատերաբեմն ես գերիվեր մարտի մը, ուր կորսնցուցեր ես տարբերութիւնը այստեղին ու այնտեղին, իրերուն եւ կանոնք վգացող ընդունողութեանդ: Բթացեր: Անկարող ես ճշգրիտ դիրք ու շեշտ գտնելու դուն քու հանդէպ, եւ հակառակ ասոր չես դադրիր մելամաղձիդ մէջ իսկ քայլ մը առնել դէպի բակրիքը, շօշափել անոր փայտէ ողորկութիւնը, ճիգ մը ընել, խորհելով հաւանական ելքին:

Այսպէս. կարելի չէ մտածել երբ աչքերդ կը ցաւին, եւ կը ցաւիմ, տիկի՛ն, կ'ըսեմ, կը ցաւիմ, պարո՛ն, ոչինչ կրնամ ըսել ձեզի ցաւիս մասին, կ'արգիլէ ամեն խօսք, պատգամ, ուղերձ. ցաւ է ինծի նորէն որ ըսելիքս այնքան քիչ բան ըլլար, գրեթէ ոչինչ. չկարծէք որ ասիկա փախուստի ձեւ մըն է, կ'աղաչեմ, այդպէս մի՛ մտածէք, ձեզի որեւէ բան մերժելու կերպ մի՛ նկատէք, հոս երբեք նման նկատառում տեղ չունի. արդէն միասին չենք, ընկերութեան մը մէջ. դուք դուք էք եւ կը ցաւիմ որ ես ես եմ, հասարակ դերանուն որ դուք ալ էք երբեմն, տխեղծ մարմնով ու տառապելու փնթիութեամբ օժտուած. կը ցաւիմ որ ուզեմ պահել իմ տանջանքս, իմ տէրտս, իմ տեղս, իմ լէշս ու սատակս եթէ կ'ուզէք. մեծութիւն մը կայ լռելուն մէջ, ըսուած է, եւ որոշ բաներ լաւագոյն է կամովին խափանել, օրինակ ամեն խոստովանութիւն որ ցաւէն ավատագրումի կը միտի եւ կը խորացնէ վայն նոյն ատեն:

Շատ, շա՜տ կը ցաւիմ որ ձեզ ցաւցուցի, թերեւս, քանի որ վստահ չեմ ատոր: Իսկ եթէ այո, գոնէ մտածեցիք որ շատ կը տառապիմ եւ անկէ կ'ախորժիմ ալ, ո՞վ գիտէ: Այդպէս նորէն անուն մը դրիք, երբ ինձմէ աւելի լաւ գիտէք որ ցաւը տառապանքը չէ, հոգեկան է առանց մտաւոր ըլլալու: Հոգեկա՜ն: Աւելի սահմանաւոր քան անհուն. շնչերակային, թոքերուդ ու սրտիդ մէջտեղը: Ցաւին մէջ, այո, անոր խորերէն, ո՞վ ճակատագիր, կ'արհամարհեմ քեզ, ո՛չ հոգի կայ, ոչ ալ մարմին, ամեն ինչ խառն է այլեւս, խառնակութիւն, Բաբելոն, կոյտ մըն եմ, դէզ մը փորոտիքի, ճապաղիքի, որդնոտող, դիակնացող միսի որ մէկ կոխուածքով կրնայ ճզմուիլ, անշնչանալ. եւ այս ամենն ըսելը անշուշտ այսպէս մեկին կերպով ցաւ կը պատճառէ ինծի, քանի որ պիտի տխրիք, պիտի տրտմիք, պիտի տժգունիք կամ պարզապէս պիտի յուսաբեկուիք կեանքէն ու ասոր վայելքներէն, եթէ անպարկեշտ չթուի ձեզի, մանաւանդ երբ գիտէք որ ցաւը միշտ ուրիշինն է, միշտ օտարինը, միշտ դուրսէն կու գայ, իսկ յետոյ պիտի անդրադառնաք, գիտ մը պիտի ընէք որ ձեւ մը գտեր եմ ցաւս ըսելու, ցաւդ տանեմ պիտի ըսէք, ի՜նչ հիանալի բացագանչութիւն, ցաւդ տանեմ, եղբայր, ախպարիկ, քուրիկ ջան, պիտի ցաւակցիք, սրտակցիք, երբեմն նաեւ մրցակցիք հետս, քանի երբ խօսիմ ցաւէս անմիջապէս դուք ձերը պիտի առաջ քաշէք, արտայայտէք, ես ալ, ես ալ, հապա ի՞մինս...եւ մէկէն պիտի դարձնէք էջը,

ամեն բան բառերու փչուածքին տուած, պիտի հեռանաք, վիս պիտի թողուք առանձին, իմ բուն, սկզբնական վիճակիս: Ամեն մարդ իրը ունի, աշխարհին ալ, Աստուծոյ պէս, բոլորինը, որ կը պտուտքի երկրագունտի ընթացքով:

Գուցէ երթաք, ասիկա ենթադրութիւն մըն է իմ կողմէս, յետոյ միայն յիշէք մէկը, միակ ու չանցնող պահը մէկու մը որ տառապալից ցաւը կ'աղաղակէր քիչ մը անամօթ, նոյնիսկ լպիրշ ցուցականութեամբ, տեսակ մը թատերական ոճով, երբ ցաւատանջ գայլերն անգամ կը պահուըտին, ըսեր է մէկը, չէ՞ք յիշեր, եւ այդպէս կը նուաճեն ասպետական ավնուութիւն մը: Բայց մեռելները չեն տանջուիր: Կ'ապրին այնքան ատեն որ վկաներ կան կամ վիրենք յիշող հարազատներ. դուք ալ յիշեցէք, կամ թերեւս, ինչ որ հաւանական է, նոյնպէս ալ նախընտրելի, որ բոլորովին մոռնաք վիս, արդէն ինչ տեսաք ինձմէ, տողերու ստուերի ետին խծբծուած, ճմռթկուած դէմք մը, որ լուսանկար մը պիտի քարացնէր ընդմիշտ. ոչ իսկ այդ, աղաղակ մը, բայց աղաղակը չի տեսնուիր, կը լսուի երբեմն, եւ կը ցաւիմ որ մինչեւ ճիչի մը հասնելու զօրութիւնը կը պակսի ինծի, ըսել կ'ուզեմ անզօր եմ ու զուրկ որեւէ բան ցանկալէ, որեւէ բանէ հրապուրուելէ, եւ պիտի հարց տաք. ի՞նչ եղաւ արդեօք սա տղուն կամ մեր աղջիկին, ո՞ւր հասաւ. ցաւը սեռին, գոյնին, տեսակին հետ կապ չունի, ասիկա յայտնի իրողութիւն է: Պիտի չմտածէք որ շնորհիւ ձեր խաւաքարտէ ներկայութեան, փորձ մը ըրած եղայ ձեր տեղը գրաւելու, ձեր բազկերակը քննելու, ձեր սրտին զարկերը հաշուելու, խօսելու ձեր հետ, նոյնիսկ եթէ կրկնեցի ես վիս, խուսափումի ակնյայտ ռազմավարութիւն մը որդեգրեցի, նոյն ցաւաբան խօսքերը ըսի ի խորոց սրտից, եւ ասիկա դարերէ ի վեր, ցամաքամասէ ցամաքամաս, չնչին փոփոխու-թիւններով կամ ձեւավեղծումներով, քիչ մը մոռնալու համար ցաւը որուն ցանցին մէջէն սակայն տեսայ, հանդիպեցայ ձեվի:

Պնդելու, շեշտելու այս եղանակը, այս ցաւագրական հռետորութիւնը եթէ կ'ուզէք (որ կայ աշխարհիս սկիզբէն ի վեր, միշտ նոյն ու միշտ հին, յաւերժական վերադարձի ճշմարիտ հանգամանքով) յանձնարարելի չէր անշուշտ, բայց գոնէ պահ մը խաբկանքը կու տար որ տեղի ունեցած դէպքին ուղղութեամբ կ'ընթանայինք երկուստեք, կարեւորն ալ այդ էր, կարծեմ, երթայինք միատեղ, մինչեւ որ մէկս կամ միւսս բան մը հասկնայինք դէպքէն, գուցէ հաղորդուէինք նոյն աղեխարշ կսկիծով (ներեցէք որ հին բարբառի վինանոցէն կը հանուին այս բառերը եւ ատոնք ճշգրտելու ատեն չունիմ, քանի մէջս բնակողը վիս վրկեր է ժամանակէն ու ասոր հանդարտ վայելումէն) նոյնիսկ եթէ սոսկալի խիթը, այո, անոր եղջիւրային հորատումը կտրող-անցնող քունքերդ, այդ մետաղային ճխտումը գանկէդ՝ անփափկանկատութիւն պիտի ըլլար հաղորդել ուէէ մէկուն. մարդ թշնամիիս անգամ չի կամենար նման անասնական ստրկացում: Նուազ կարեւոր չէր գիտնալը, այո, գիտնալը, որ ասիկա խաղ մը չէր, ո՛չ, բնաւ, մելոտրամային դերասանութիւն մը, թէեւ կարելի էր այսպէս ալ մտածել. ցաւի ամեն արտայայտութիւն չափազանցութեան կը տանի մարդս, մտածեցէք. հազիւ քանի մը տասնեակ գիւղի ու քաղաքի պատահական չքացումը վերածեր էք մեթոտաբար կազմակերպուած նախճիրի, ալ չեմ խօսիր եղեռնագործու-թենէ, որուն բառը ձեր բերնին մէջ դարձեր է հաճելի նշանաբան, եւ ասիկա գուցէ կերպ մըն է, չափազանցութիւնը ըսել կ'ուզեմ, ինչպէս ծէսը, ցաւը մեծաբանելով ծածկելու, հերքելու, դիտողէն, լսողէն հեռու պահելու, կանխելու համար նաեւ ամեն վարակում:

Մեռնիլ առանց ցաւի, Տէ՛ր... հնարաւոր բացագանչութիւն մըն է, կը խորհիս, տարուիլ անկէ ողջ, ամբողջ... այո, վերջին պահուն, երբ այլեւս ոչինչ ըլլայ ընելիք եւ սիվիֆեան

պայքարիդ մէջ փորձուիս տեղի տալ երեկոյեան մռնչող ցուլիդ կամ ամբողջ շինուածքդ խախտող, կործանող միջուկային պայթումիդ:

Բանատեղծը կ'ուզէ, չես գիտեր ինչո՞ւ լաւատես է (իրապա՞շտ յանկարծ), եթէ ոչ բանաստեղծութեան իսկ դիւթակախարդութեամբ, կը պնդէ որ մտածես ցաւի ալքիմիա-յին, ամփոփուիս անոր մթին սենեակին մէջ, պեղչես անկէ ֆիզիքական անասելին, ստորնագոյնը, բոլոր պատմութիւններուն ողբն ու հառաչը, խօսքի խանդով վայն ընտանեցնես, քիչ առ քիչ ճկես-կոփես-յղկես անոր ըմբոստ ընդդիմութիւնը, հանես մարմնիդ մթարէն ու ցեխէն իմաստութեան ոսկին, վերջապէս խօսիս անոր հետ մտերիմ կրոյցի մը մէջ, ըսես՝ Բարի եղիր, ով Ցաւ, եւ մնա՛ հանդարտ աւելի, գիշերը ուզեցիր եւ ահա կ'իջնէ ան... ձեռքդ տուր ինծի, եղբայր եմք մեք... Այո, ձեռքդ տո՛ւր, նստէ՛ քովս, լռութեան մէջ վեհագոյն, օ Այլաբանութիւն այլընկեր, անգամ մը եւս կրուցենք, սիրենք պիրար կամ ատենք մինչեւ ի մահ, թմրինք յափրանքովը մեկոնի կարմիր աւիշին, եւ ցաւը ըմբոշխնենք: Եզակի, իսկապէս եզակի հաճոյքը կայ ցաւին, հաճոյքի ցաւի մէջ: Մազոխականութենէ ճառէլէ առաջ՝ թերեւս... ո՞վ սիրտ սասանեալ, թափանցելու է շօշափի, գգիռի, տրոփի ընթացքն ի վար ցաւի խորքին ուր կը սքողուի վայելքներուն վայելքը որ դուն կու տաս ինծի երբ կը ճնշես, կը մտրակես միս ու ոսկոր, կ'արիւնես ու կ'արիւնիս, եւ դուն ու ես, պոհ ու դահիճ, աղտոտ սաւանի անմահութեան վրայ կը մօտենանք, օ հեշտութիւն գրգանքի, արբեցուցիչ պգլխանքին, հոն ուր դուն ես իմ մէջ, դուն տուողն ու ցաւողը նոյն ատեն:

Եւ կամ մէկ ափդ պիտի պարնես միւսին, մոխիր պիտի թափես մազերուդ, պիտի աւաղես օրդ ծննդեան, անիծես եւ օրհնես գրեթէ նոյն ատեն աշխարհացաւդ, սկզբնական կապրութիւնը որ լրբօրէն միշտ երջանկութիւն երազել կու տայ, այսինքն՝ անցաւութիւն: Եւ հիմա, հակառակ ասոր, ինչո՞ւ չըսել որ հասարակ, գռեհիկ, անցաւոր, ամենատարած բան մըն ես, ճշմարտութիւնը անողոք՝ ճշմարիտին չափ սուտ, սուտին չափ անճշմարիտ, ամեն պարագայի՝ ո՛չ թէ դէպք ու դիպուած, արկած կամ վթարային պատահար, այլ գոյացական եղելութիւն՝ ճշմարտապէս եւ ոչ կարծեօք: Ապա, տեսակ մը քաղաքին մէջ պտտող հրաշքին նման կը սկսիս դուն քեզ այլպանելէ ետք սփոփել, վկայակոչել ոչ թէ հրեշտակ կամ դեւ, պոռնիկ կամ գեղեցկագոյնը գեղեցիկներուն, այլ դիւրալուր երաժշտութիւն մը. օհ, ո՛չ տիեզերականօրէն քաղցր խուսափերգը, որ անլսելի է եւ անօգուտ, ոչ ալ դարէ դար թաւալգլոր շոփենհաուրեան հռնդիւնը. միայն ու միայն կակաչուն, խռպոտ, ապիմաստ մռլտուքը ոչ մէկ բերնի մէջ աղացուող: Այն ինչ կը հերքէ ամեն քերթուած ու չափաբերութիւն, կը խախտէ ամեն ռիթմ, կը խափանէ ամեն շունչ:

Այո, ոչինչ փոխուած է, կ'եզրակացնես: Բանաստեղծական ամենուր որոնումը մարմնի լաբիւրինթոսին մէջ Լեսբոսէն Փարիզ, կամ փախուստը... կանաչաւուն ութոպիան Ամազոնիայի անտառներուն մէջ... առանց անոր, անոր հետ, անկէ անդին. ցաւածին, ցաւատենչ: Գլուխդ կ'իյնայ բարձին վրայ, անշարժ, պատին դիմաց: Գամուեր ես մահիճիդ: Սիրտդ կը տրոփէ: Ամեն թնդիւնի հետ կը հեւաս: Կը յարատեւես վերապրողի յամառութեամբ, ապուշ, կենդանի: Կը սպասես կառափնատի վճռական էջքին որ հատէ ամեն իմաստ:

Ոչինչ... նախադասութիւնը անձկագին վերադարձեր է մեկնակէտին, օդ ու պարապ կը փնտռէ, ինչպէս դիւցազնավէպ պատմողը կը կտրէ պատմութեան աղէտալի թելը, մեղմացնելու համար սարսափելին, կը կտրատէ ժամանակը, մնացեալ դրուագները կը

յետաձգէ յաջորդ օրուայ լացին ու վայելումին, աչքերը կը գոցէ, անխռով, կը սկսի մրափել. մինչ հերոսները՝ անոնք կը շարունակեն իրենց կգայաւերծ գոյութիւնը այլուր, կուգահեռ աշխարհին մէջ, կրկանքի, փորձանքներու, աղաղակներու գեհէնին առընթեր, կանցած ցաւը կամ վայելչօրէն անտարբեր անոր առք ու փառքին:

Իսկ ես, դուն, փակագիծ մը ապրելէ ետք, կապիճներուդ ցաւոտ խորութիւնն ի վեր կը նայիս պատռտող ժամանակի հորիզոնին. ո՛չ կրնաս հերքել զայն, ո՛չ ընդունիլ: Ձեր ցաւը, կը ներէք, չենք կրնար բաժնել, երբեք, երբեք, ձեզմէ ինչպէս աշխարհէն: Ձեզ կը մեկուսացնէ մինչեւ ձեզ փոխաբերէ, իր անյեղլի դատակնիքով ջնջէ ամեն յիշատակ, ամեն պատկեր, ամեն առարկայական դատողութիւն, եւ ձգէ որ երկիրը յարակայի բացարձակ պակուցումի մը կամ կմայլանքի մը մէջ: Եւ ահա վերջապէս նոյն յանկեր-գային, դարձդարձիկ, քեզ ներսէրէն քերցող անպատկերը, անհուն՝ այբուբենի պէս, անսայթաք ինչպէս արեւուն մատներ ու շրթներ սղոցող անցքը անապատէն. ինչո՞ւ բաները կան: Կան միայն երբ կը ցաւին: Կը մռնչեն ու կը ցնծան ու կը լռեն երբ ակռաներդ կը սեղմես: Ինչո՞ւ մտքին հսկումը՝ իր իսկ ապաբան խորտակումով արթուն, առաստաղի մթին սաւանին ներքեւ:

Բան չկայ, գլուխդ կը շարժես, կը հաստատես դուն քեզի որ գոյութիւն ունիս եղեր: Շատոնց, հիմա: Բա՛ն չէ փոխուած:

Փարիզ 2003

Վիոլետ Գրիգորյան

Բերմուդյան պատմություն

* * *

Ճստուկ ալապըստրուկ,

ապատության ստրուկ,

Էուստ ինքնաբստրուկ,

հարուստ անհարկատու,

բարուստ բառուբանտու

չարուստ վիուկ ջադու,

համ փափուկ, համ հատու.

ծյու–ծյու, մատնաթիվուկ,

այ դու ովնապիսուկ,

դնչուկաթաքն միսուկ

ատամնաթակ շիվուկ

Բնագիր

աջուահյակ լիվուկ

վարդագույն վարագույր

հարդարուն թաքնաթույր.

սավաքոք վիլ մաքոք,

վկափոկ մինչև թոք,

դե բլբլա, Միսս Talk.

Ջրահարս

(հայրենասիրական մուլտ-պոեզիա)

Ի՜նչ ծովեր, ի՜նչ եզերք, ի՜նչ գորշ ժայռեր, ի՜նչ կղզիներ,

աղաթթու ջրեր՝ լափին առ մահափեր,

ի՜նչ քնաբեր հաբեր՝ ձմեռ պապու նվեր,

ի՜նչ երկճյուղ լեզուներ,

հիպնոսված ճագարներ, թմբլիկ պոչիկներ,

երեք խոզուկների թղթե տանիքներ,

շնաձկան լողակ՝ կլոր-կլոր բոլորակ,

ի՜նչ ահատու կոհակ՝ ընդհուպ օղակ-օղակ...

ի՜նչ պիտբուլների աշխարհ, աղջիկս,

ի՜նչ դանակների հովիտ,

ի՜նչ թունավոր սնկերով մարգագետին...

Ողջո՜ւյն, ողջո՜ւյն, ողջո՛ւյն:

Ինչո՞ւ են, աղջի՛կս, աչքերդ այդքան մեծ,

ինչո՞ւ են ատամներդ այդքան սուր, աղջի՛կս,

բերանդ ինչո՞ւ է այդպես արյունոտ,

մազերդ՝ բիզ-բիզ օձեր, աչքերդ՝ բումերանգ հայելի,

լեզուդ՝ածելի...

Ինչո՞ւ ես կաղեկաղ դեգերում այս մռայլ ափերին՝

փուշ-փուշ փշուր հայելիների վրա,

արնոտ մեխերին, ասեղի ծայրին,

սայրի շեղբին, փշերի եզրին, թեժ ածուխներին...

Ա՜խ, իկուր ոտքերդ իրար մի՛ սեղմիր, էլ պոչ չունես,
էլ չես կարող լողալ փրփուրների եվրին, ջրայրերի խորքում,
բազմել գրկաբաց լոտոսի պորտին- օրո՜ր,
օրոր ջրիմուռյան ծածան դրոշներին- օրո՜ր
լուսնից տարուբերիկ ջրին- օրո՜ր, բաբաշ, օրո՜ր...
Տե՛ս, լողակներդ ո՜նց է բկիկ-բկիկ արել գայլաձուկը,
ատամների հետքը, ա՜խ, ո՜նց է մրմռում աղաջրի հուշից,
արցունքներիդ մուժից,
տե՛ս, ինչպես են թափվել գույն-գույն թեփուկներդ,
ոտքերդ ամբողջ՝ գորտնուկ, կրունկներիդ՝ կոշտուկ,
ռնմատոիդ արթրիտ,
բորբոսոիդ նմուշ, ախ, իսկը ցուցք՝ ոտքից գլուխ...
Փակիր, փակի՜ր աչքերդ, աղջի՛կս, արցունքներիդ վրա,
հայրենիքիդ ջրի վրա, որ ոռեոռ հոսեց դեպ հետ,
փակիր քո տուն-տունիկ ժայռի վրա,
լծկան դելֆիններով կառքիդ վրա՝ ալիքներին տռճիկ-տռճիկ,
ոստրեների բացուխուփով տոմսադակիչ,
կղկիների կանգառներից քույրիկ-քույրիկ
ծովախութերի վրա, գետաբերանների վրա, ճայերի վրա,
ծխող ալբատրոսի վրա, փոթորիկների վրա,
ալիքներին բեկբեկ լուսնի փայըլի վրա,
փակիր աչքերդ ջրերի վրա,
ջրերի, ջրերի,
ա՜խ, ջրերի վրա...
Տե՛ս, թե ինչպես խաղդ գլխիդ եկավ՝ արդ իսկական
քավթառ վհուկ, ֆալիկածառ, Խաչիկի դուստր,
փոքրիկ մկնիկ, ասողիկ կես-եղեգ, մահվան հա՛ հարսնացու,
երկուաչքամիքթանի-մի բերանով խատուտիկ փո՛ւհ փչող...
Էլ չես կարող ծովաձիուկ սանձել, միատրոփ սուրալ,
ափի հանդիսատես շարքին՝
տոտիկ-տոտիկ պինգվոտիկին,

գլդիգլոր փոկիկներին, հեռուներին, մոտիկներին,
չըփ-չըփանցիկ՝
չիկ-չիկ,
օդային պաչիկ.
ութոտնուկին- բարև՜, բարև՜, բարև՜,
բարև՜,
բարև՜, բարև՜,
բարև՜,
բարև՜, բա..., վայ, էլ ոտիկ չկա՞...
էլ չես կարող պարել կետի շատրվանին հեծած,
քույրավտառ մտնել մութ փորիկը, փայտե տղու հոգին կանչել,
թանաքաձուկ արտիստների ջրաներկած ալիքներում խաղալ պախկվոցի,
հանկարծ քաշել բեղը լոպ-լոպակիկ բեղլուիկի,
լուսաբացին ծովասիրաց վաղ համերգին
խեցեխոսը բերնիդ դնել, շեփորավոր մարջանների փողհարումով
ու ծղրտան որորների երգչախմբով
երգել փառքը փրփուրավգի սիրահարի...
Երգե՜լ, բա չէ...
Իկուր բերանդ մի՛ բացուխուփիր ձուկիկի պես

Տեսա՞ր՝ ճերմակ թուղթ ես, համր եղեգ, օդի դատարկ մի պղպջակ,

խատուտիկ ես՝ բկիկ-բկիկ, գլդիգլոր փչված առ մահ,

Տեսա՞ր, հա բա,

Նա, որ երգդ այդքան սիրեց,

Նա, ում սիրույն ծովդ կորցրեցիր,

Նա, որ երգդ այդքան սիրեց,

Նա, ում սիրույն խոսքդ կորցրեցիր,

Նա, որ երգդ այդքան սիրեց,

Նա, ում սիրույն պոչդ կորցրեցիր,

Նա, որ երգդ այդքան սիրեց,

էլ չի լսի ձայնդ երբեք,

երբեք,

էլ չես կարող երգել երբեք,

էլ չես կարող պատմել անդրջրյա քույրիկներիդ ողբի մասին,

հորդ մասին, որ իրեն ափ նետեց վշտից,

մորդ մասին, որ իրեն ժայռեժայռ պարկեց,

խուճուճի, որ պիրանիա նետվեց,

կոշկակարի սրտով արքայակնից գաղթած Օֆելյայի մասին,

որ ծաղկեփունջը քեզ տվեց

ու քեզ այնքան խնդրեց, ախր, չլսեցիր,

Չասե՞ց՝ մի հավատա, որ աստղերը բլա-բլա,

բայց իմ սերը երբեք բլա-բլա,

չասա՞ց՝ նրանք յուրյանց մամաների բալաներն են,

չասա՞ց՝ նրանք յուրյանց պապաների պահակներն են,

չասա՞ց՝ նրանք պարսաքարի ավակներ են,

չասա՞ց՝ նրանք գոռ յաբախտի սլաքներ են,

չասա՞ց՝ նրանք թագապաշտպան պավակներ են,

չասա՞ց՝ նրանք շավղասայթաք ժամանակի

հաշվապահակ, հաշվապահանջ, հաշվապանակ, հաշվահամար,

հաշվամատյան, հաշվակլոր (էս հաշիվ չի), հաշվակալակ, հաշվարկարար, հաշվակատար,

հաշվարարած, հաշվահարդար, հաշվապարտակ, հաշվաքանոն (էս էլ հաշիվ չի),

հաշվաքանակ, հաշվականոն, հաշվակարգակ, հաշվագիտակ,
հաշվանկատ, հանրահաշվակ մահակներ են...
Մեռավ գնաց, մեռավ գնաց
և հող մտավ, տիկին,
խոտ է բուսել գլխի վրա,
և մի քար կա ոտքին...
Ահա խնկունի, ահա ձեվ սամիթ և աղավնախոտ...
Ախ, ծովագի, ծովաբնակ ծովադուստր, ծովին գնա ալիքին, քանի որ
հարսնաքույր ես սիրածիդ հարսանիքին:
Ձուկ էիր՝ ջրերում լողա,
աղջիկ էիր՝ սողա առ մահ,
ոսկորներդ չըխկ-չըխ վարկիր քարերին:
Թե չէ՝ ի՞նչ ես աշխարհին ամբողջ իրար խառնել,
Տիտանիկ ու բոինգ-մոինգ իրար վարկում,
ծամում երկաթ-արճիճ, թքում քափ ու փրփուր.
Ջրաշխարհը բլթբլթացնում, ցունամի մեծ վերմակները ափին տալիս...
Հայրենիքդ ջնջվեց գնաց,
ջուր էր՝ ջուր դարձավ, հոսեց առիվեր,
հեքիաթ էր՝ երեք անգամ երկնքից վարկվեց քարերին,
ախ, մամա, վարկվեց քարերին...
Առաջին վարկից աչքերդ կուրացան,
երկրորդ վարկից մեջքդ կոտրվեց,
երրորդից պայթեց
սիրտդ:

* * *

Ինչ խլվլան ես դու,
Ալվլան, ալ լեզու
չալ կարմիր խուվարկու,
ասքի կատարածու:
Ի՞նչ կա թաքուն փշերիդ տակ,
Նենգ կենգուրու գրպանահատ,
Ապա, ապա՝ հատ առ հատ.

Արքայադուստր

(ինտերնացիոնալ արձակ)

Չէ՛ մեր անունը թուլություն, չունենք պոչ մենք ու ենք խոսում մաքուր գրական

հյուսիսահայերեն: Է ճիշտ, մեր մասին երգում չեն երգեր ու պատմում չեն սիրուն հեքիաթներ,

մեր արձանը դնում չեն ծովափին, բայց նոտարը է՛ մեկ կնքում-հաստատում:

Ենք մենք էլ ժանյակներ հյուսել ծովից ծով համբերության հելունով ու գաթա թխել՝ ալյուրի

առանց, ենք մենք էլ խատուտիկ փչել, ենք մենք էլ փիսո-փիսո արել, բայց մենք մեր պոչերը

դրոշակ սարքել չենք: Չենք մենք բնություն, ենք մենք բնապաշտպան:

Չենք մենք թռի-վռի, անոռուգլուխ կակղամորթներ, որ փափկածուլծուլ թավալվենք ջրալի

կապույտ վերմակների մեջ, պճնվենք ու սուրանք փարթիահանդեսների, հալվենք ու հոսենք

ջրատար-բեր, արքայակներ փնտրենք հեղհեղուկ ամրոցներում, ղեկաշեղ պատահած

նավաբեկուլին կոհենք մեր ձայնը, թուղթուգրով թաքցնենք մեր պոչը՝ համար նրան դուր

գալու, ու երբ փրփուրե թագը հալվի, ցունամի սարքենք ջրում մի բաժակ:

Չեն մեր արցունքները ապակե հեկության, հորդ մենք դուրսել ջրերից: Չենք համր

ջրահարսներ, ենք մենք գիտակից, հավասար քաղաքացի: Ենք մենք կարդում, հետևում

ալիքներին քաղաքական, ենք գնում ցույցերի: Ենք մենք պահանջում իշխանության

հրաժարականը:

Որպեսվի ալիք,

Ձողեր որպեսվի:

Սպան մենք թարսեցինք խլնքոտ ոստիկանին: Չէ՛, ոչ բռնություն, եմք մեմք դեմք բռնության

մշակույթին, ենք հարգում մենք օրենքը, օրենքը բայց է ենթակա փոփոխության, եմք

նախադեպք մեմք, է օրենքը գրվելու մեկանով:

Եմք տառապել մեմք էլ, ուն իրավունք ենք երջանիկ լինելու, ենք կարող մենք:

Է պատմությունը կերտվում մեր մասնակցությամբ: Կներ մենք խուժենք համալսարաններն ու կփոխ գիտությունը ենք:

Ենք քանդ մենք ելու այս աշխարհը՝ սիգար ու կոնյակով պվռնող

սեփականատղամարդատիրու ակումբը, տեղոր են ռումբեր գծումանախ ու բուծում երգեցիկ,

թավշե ջրահարսներ, որ ոչինչ պահանջում չեն, նվիրում միայն են, են տալիս անձնավոհ:

Չենք մենք երգում, ենք մենք խոսում, ենք մենք լեզուներ գիտ, ենք մենք թարգմանում

ջրահարսերենը: Չենք կարմիր գրքի դինոզավրեր մենք, ենք մենք հերոսներ ուրիշ ժանրի:

Ուն մենք ենք արգանդ, մար պինդ մին, ել ենք մենք քամ օմեգա 3, ցիում կալ ու վի-D-տամին ջրապոչի հարսայուղից:

Մեր ոսկորները են չխկչխկում քարերի վրա, մեր հոդերը են հռնդում մեր վստահ

շարժումներից, մեր անոթներով ջուր՝ չէ, թանձր է արյուն հոսում, մեր ողնաշարերի ձողերին

մեր արյունոտ սրտերն են ալիքվում որպես դրոշակ, որպես դրոշակ ալիքվում են մեր

արյունոտ սրտերը մեր ողնաշարերի ձողերին, մեր արյունոտ սրտերը մեր ողնաշարերի

ձողերին որպես դրոշակ ալիքվում են, մեր սրտերի դրոշակների ձողերին մեր ողնաշարերը

ալիքվում են որպես արյունոտ, ալիք արյունոտ որպես ձողեր սրտեր ողնաշար, դրոշաշարին

ողնակները մեր սրտաձողերի ալյակոտվում են, են շարողնաշարվում ձոնոտ տրերը պեսոր դրյուն...

լի ա ք լի ա ք լի

ա ք լի ա ք լի ա ք

ձ

ո

ղ

ձ ձ ձ ձ

ո ո ո ո

ղ ղ ղ ղ

ձ ձ ձ ձ ձ ձ ձ ձ ձ

ո ո ո ո ո ո ո ո ո

ղ ղ ղ ղ ղ ղ ղ ղ ղ

ձ ձ

ո ո

ղ ղ

Համբարձում Համբարձումյան

Ծնվել եմ 1984-ին բանվորագողական Շենգավիթ թաղամասում: Աշխատել եմ շինարար, բանվոր՝ մետաղի ջարդոնի ընդունման կետում, լրագրող, սցենարիստ, դասընթացավար: Գրել եմ պատմվածքներ, ստացել եմ մրցանակներ:

Գյոթնոցի բիձէն

Վերջին վանդակաձաղ դուռը բացվեց, և Գառնիկը՝ Բիձէն, ուղեկցող ոստիկանին ետևում թողնելով, դուրս եկավ գաղութի բակ, որտեղ ամենագնաց ջիփերի և գազելների մոտ մարդկանց խմբեր էին կանգնած: Չնայած նախատոնական այդ օրը գաղութում կալանավորների հետ տեսակցությունը արգելված էր, բանտարկյալների հարազատները եկել էին՝ հուսալով, թե կկարողանան համոզել կամ կաշառել ոստիկաններին, բայց նրանք անդրդվելի էին: Մոտ մեկ ամիս առաջ գաղութի տարածք մեծ քանակությամբ թմրանյութ էր ներմուծվել, ինչը լրատվամիջոցների բերանն էր ընկել: Այդ աղմուկ հանած պատմությունից հետո գաղութի պետը փոխվել էր՝ ավելի բարձր, բայց պակաս շահավետ պաշտոնի էր նշանակվել, իսկ նոր պետի նշանակվելու հետ կարտուղի ճանապարհներով տեսակցության մտնելը գրեթե անհնար էր դարձել: Կալանավորների մոտ տեսակցության եկածները՝ հասկանալով, որ անհնար է ներս մտնել, ոստիկանների հետ բանակցում էին՝ իրենց հետ բերած ահռելի քանակությամբ սնունդը ներս մտցնելու հաշվով:

Բիձէն ավատվելու կապակցությամբ նվեր ստացած անֆիլտր ծխախոտի տուփից մի սիգարետ հանեց ու վառելով սկսեց հաճույքով ներս քաշել թանձր ծուխը: Երեք տարվա

բանտարկությունից հետո ազատության մեջ ծխվող առաջին ծխախոտը նա որոշեց վայելել՝ միտքը չծանրաբեռնել ու ծխելու գործողությունը այլ գործողության հետ չհամատեղել: Երկնքից թափվող ձյան խոշոր փաթիլներից ծխախոտի գլանակը բռի մեջ պաշտպանելով՝ Բիձեն ծխեց այնքան, մինչև զգաց, որ մատները վառվում են: Ծխախոտի կրակը ձյան վրա հանգցնելով ու մնացորդը աղբամանի մեջ նետելով՝ քայլեց դեպի դարպասը:

– Մի կո՛ղմ քաշվի, չե՞ս տեսնում՝ անցնում ենք,– իր ետևից լսեց Բիձեն, երբ դարպասի մոտ էր հասել:

Դարպասն այնքան լայն էր, որ դրանով հանգիստ կարող էին երկու մեքենա անցնել, բայց Բիձուն չզարմացրեց ու չվրդովեցրեց նրանց պահանջը: Գիտեր՝ գաղութի ներքին օրենքները դրսում էլ են գործում: Բիձեն մի կողմ քաշվեց, և ինքնավստահ տեսքով երկու ջահելները, որ գաղութում ընդամենը «ճուտ» էին եղել՝ սրա-նրա համար էին վազվզել, «լավ տղա» խաղալով, անցան դարպասը ու քայլեցին դեպի քիչ հեռու կանգնած, մգեցված ապակիներով ճերմակ «Նիվան», որի բաց դռան մոտ կանգնած նրանց էր սպասում մի ուրիշ ջահել՝ նույն փուչ ինքնավստահությամբ:

Բիձեն անհագ շնչում էր սառը, թարմ օդը, զգում էր, թե ձյան սառը փաթիլները ինչպես են հալվում իր տաք ճաղատին, և թվում էր՝ իր մտքերն էլ են թարմանում՝ ազատվելով գաղութի նեխահոտից: Ներքևում, ճանապարհի երկու կողմում փռված ձյան ճերմակ ծածկույթը և նույնիսկ ջահելների ճերմակ «դորջարը» նրան հիշեցնում և մտովի տեղափոխում էին ընդհանուր բարաքից անջատված, կացարանի իրենց սպիտակ սավաններով վարագուրված մասնաբաժինը, և այդ համեմատության մեջ դրսի աշխարհը ավելի մաքուր, ավելի անաղարտ էր թվում: Ինչքան հեռանում էր գաղութից, այնքան դրսի աշխարհը ավելի հրապուրիչ էր թվում, և ազատ արձակմանը նախորդած օրերի վախերն ու մտածմունքները ետևում էին մնում, ինչպես ետևում էր մնացել ձյան ճերմակ ծածկույթի միջից վեր բարձրացող գաղութի սև ու մռայլ շենքը:

Մգեցված ապակիներով սպիտակ «դորջարը» անցավ Բիձու կողքով՝ ցեխախառը ձյուն շփելով նրա կոշիկներին ու տաբատին: Մեքենայի կատաղի արագությունը անհամբեր շտապողականությամբ վարակեց նրան, և Բիձեն արագացրեց քայլերը: Մոտ հարյուր մետր այդ արագությամբ քայլելուց հետո Բիձեն աստիճանաբար վերադարձավ նախորդ ռիթմին և ավելի դանդաղեցրեց քայլքը. այդ արագությամբ դեպի անորոշություն գնալ նրան հիմարություն թվաց:

Նախ երաժշտության ձայնը լսվեց, իսկ հետո սև, գաղութի վերջին պետի պես մռայլ ու հսկայամարմին ջիփը անցավ կողքով, կտրուկ արգելակեց ու ետ ընթանալով կանգնեց նրա մոտ: Մգեցված ապակիները իջան, և Բիձեն տեսավ երիտասարդ վարորդի սափրած գլուխն ու ճարպոտ դեմքը:

– Նստի՛,– ասաց վարորդը:

– Իրավունք չունեմ:

– Նստի՛, ա՛յ մարդ,– վարորդը կարծեց, թե իրեն քաղաքացիական հագուստով ոստիկանի տեղ է դրել:

Վարորդի դեմքը, ինչպես և դուրս պրծած լուսարձակներով ջիփի մռութը դուր չեկավ Գառնիկին, բայց նա նստեց մեքենան: Նստեց, որովհետև վաղ թե ուշ ստիպված էր շփվել դրսի աշխարհի հետ, և ինչքան շուտ լինեին այդ շփումները, այնքան շուտ նա կհասկանար, թե ինչպես պիտի իրեն պահի:

– Նո՞ր ես ազատվել, հորոխպե՛ր,– պատկառանքով հարցրեց վարորդը:

Բիձեն գլխով դրական պատասխան տվեց, ու անմիջապես հետևեց հաջորդ հարցը, որի նպատակը ընդհանուր ծանոթություն գտնելն էր:

– Ո՞ր բարաքում ես եղել:

Մի պահ Բիձեն երկմտեց, բայց երեք տարվա ընթացքում գաղութի ներքին օրենքները այնպես էին արմատավորվել նրա մեջ, որ չկարողացավ ստել.

– Գյոթնոցում:

Վարորդի շփոթմունքը ավելի մեծ էր, քան բարկությունը, և մի քանի վայրկյան ուղղակի չգիտեր, թե ո՞րն է այդ իրավիճակում ճիշտ պահելաձևը, թե ի՞նչ պետք է անի, որ իր գլխին խոսակցության թեմա չդառնա: Նա կտրուկ արգելակեց մեքենան, գրպանից հանեց գավով ատրճանակը և հայհոյելով, սպառնալով կրակել-սպանել՝ հրամայեց իջնել մեքենայից: Երբ Բիձեն արդեն շրջվել ու դուռը բացել էր, վարորդը ատրճանակի բռնակով հարվածեց նրա ճաղատին: Բիձեն գլուխը բռնելով գոռաց ու մեքենայից դուրս թռավ, փռվեց ձյան վրա:

Վարորդն այնպես պոկվեց տեղից և մեքենան այնպիսի արագությամբ վարեց, ասես նրա ետևից չարքեր էին ընկել: Մի կիլոմետրի չափ հեռանալուց հետո նա գրպանից հանեց բջջային հեռախոսը և հեռախոսի անվանացանկում գտավ մոտիկ ընկերոջ համարը: Ուզում էր նրան պատմել գլխին եկածը, բայց մտափոխվեց՝ իրեն ծաղրուծանակի առարկա կդարձնեին, ոմանք, հնարավոր է՝ հրաժարվեին իր մեքենան նստել: Գաղութի համակեցության ներքին օրենքները, որ գաղութի պատերից այն կողմ էլ իշխանություն ունեին, նա վատ գիտեր, և անորոշությունը ստիպեց լռել:

Բիձեն բարձրացավ: Գլխի պատռվածքից առատորեն արյուն էր հոսում, և նա գետնից ձյուն վերցնելով սեղմեց պատռվածքի վրա: Ձյունը անմիջապես կարմրեց ու տաք արյան հետ շփումից հալվելով՝ հոսեց ցած: Բիձեն կռացավ, ավելի մեծ շերտ հավաքեց, սեղմելով, պանգվածը խտացնելով, քարացած ձյունը դրեց վերքին ու քայլեց:

Թևաթափ անող տխրությամբ լցվեց նրա հոգին, բայց ոչ թե վարորդի հետ պատահած միջադեպի պատճառով, այլ որովհետև տասը-տասնհինգ մետր հեռավորության վրա տեսավ իր հողամասը, որի ցանկապատը քանդված էր, ծառերի մեծ մասը կտրված էր, իսկ մյուսներն էլ չորացել էին:

Այդ հողամասի պատճառով էր Գառնիկը հայտնվել գաղութում, ապա «գյոթնոց» ընկել ու կորցրել տունը, իսկ ավելի ճիշտ՝ հողամասում աճող կանեփի: Երբ նա եկավ ու չափարապատեց այդ խոպան հողակտորը, կանեփի բույսերը արդեն կային: Գառնիկը արմատախիլ արեց դրանք, բայց հաջորդ տարի դրանք ավելի առատ բուսնեցին, և նա հաշտվեց այն մտքի հետ, որ իր հողամասում կանեփ է աճելու: Շուտով նրան սկսեցին այցելել թաղի պլանքաշները: Բիձեն չէր վաճառում ու ինքն էլ «ուռող» չէր, բայց

չորացնում, մանրացնում էր կանեփի բույսը և պատրաստի էր հյուրասիրում. ինչո՞ւ թափել կամ փչացնել այն, ինչի կարիքը ուրիշ մեկը ունի:

Բիձեն գողական՝ հանցագործ աշխարհից հեռու կանգնած մարդ էր, բայց հարգում էր հանցագործ կյանքը ու այդ կյանքով ապրող մարդկանց: Չէր կարող բացատրել, թե ինչն է այդ հարգանքի պատճառը, բայց այն թաղում, որտեղ ինքն էր ապրում, այդպես էր ընդունված: Սովետական տարիներին ոստիկանական պետության պայմաններում գործող այդ մարդիկ վախ ու հարգանք էին տարածել, և այն տարածվել էր նաև Բիձու վրա:

Երեք տարի առաջ այդ օրը նա որոշեց այդ տարվա կանեփի բերքից մնացած պլանը «գրեֆ» անել գաղութին: Նախորդ երկու տարիներին թաղի ջահելները մեծ քանակությամբ «պլան» էին վերցրել նրանից նույն նպատակով՝ դատապարտյալներին ուրախ նոր տարի պարգևելու համար: Այդ տարի Գառնիկը որոշեց անձամբ տանել, որպեսզի ուրիշները իր ունեցվածքով լավամարդ չդառնան: Երբ ջահելները նորից եկան նրա մոտ, Գառնիկը մերժեց. «Հարսի ոռով փեսին լավությո՞ւն եք անում, ես կտանեմ»:

Գառնիկին բռնեցին հենց գաղութի պատի մոտ, պլաստիկե շշի մեջ լցված «պլանը» պատի մյուս կողմը նետելու ժամանակ: Բռնեցին, երեք տարվա ազատազրկման դատապարտեցին և բերեցին նույն գաղութը:

Եթե «ճշտով» առաջնորդվեին՝ գաղութում Գառնիկին պիտի լավ աչքով նայեին, որովհետև նեղության մեջ գտնվող կալանավորներին օգնելու պատճառով էր նստել, և նրա արարքը համընդհանուր հարգանքի պիտի արժանանար: Բայց գաղութում լավագույն ժամանակներ չէին. ամիսը մեկ գաղութ նայողներն էին փոխվում, փոքրիկ «թավշյա հեղաշրջումներ» էին լինում, «ղումար» չէր ֆռռում, «գրեֆներ» չկային, և «օբշչակը»՝ գաղութի բյուջեն, աղետալի չափերի էր հասել:

Բիձեն ճարպիկ ու ճկուն մարդ չէր, ներսի օրենքներից քիչ բան էր հասկանում և այդ խառը ժամանակներում իր տեղը չգտավ: Նա քնում էր բարաքի հիմնական մասի ամենավերջում, ամենավերջին շարքում, անլվա «պոռճերի»՝ փնթիների, մի քանի սիգարետով վաչվչող «ճտերի» ու «կամավների»՝ ուրիշների բեռները տանողբերողների հարևանությամբ: Նրա տեղերից այն կողմ արդեն սպիտակ սավաններով քողարկված գյոթնոցն էր: Անտերության մատնված ու արհամարհված Գառնիկը, որին անմիջապես Բիձա մականունով կնքեցին, ինքնամփոփ ու մռայլ էր դարձել: Նրա մոտ տեսակցության եկողներ չկային, դրսից սնունդ չէր ստանում, իսկ արժանապատվությունը և տարիքը թույլ չէին տալիս, որ սրա-նրա համար վազվզի: Բիձեն բավարարվում էր գաղութի «բալանդով»՝ սև հացով ու շոգեխաշած ցորենով: Հիսունվեց տարվա մոլի ծխող լինելով՝ նա նույնիսկ ծխելը թարգեց, որովհետև ամաչում էր անընդհատ ծխախոտ խնդրել:

Բիձու վիրավորված հոգում ընդվզում էր հասունանում, խոցված արժանապատվությունը, մինչ բանտարկությունը ունեցած պատկերացումները, որտեղ գողականները խիստ, բայց արդարադատ մարդիկ էին, և բանտարկվելուց հետո տեսածը խոր հիասթափություն էին առաջացնում:

Երբ Բիձեն գյոթի հետ հաց կերավ ու բարաքի հիմնական մասից տեղափոխվեց գյոթնոց,

գաղութում մտածեցին, որ «ստամոքսի»՝ սովի պատճառով է այդ քայլին դիմել: Բիձեն բացատրություն չուզեց տալ: Նա չէր փոշմանել իր արարքի համար, բայց եթե նույնիսկ պղջար, անօգուտ էր լինելու. գյոթնոցից վերադարձի ճանապարհ չկար:

Սահմանված արարողակարգով՝ առնանդամը նրա հետույքին կպցնելով՝ գյոթերի բրիգադիրը «փչացրեց» Բիձուն, ու այդ պահից նա «լիիրավ» գյոթ էր: Բիձեն արագ հարմարվեց նոր միջավայրին ու պայմաններին, սկսեց շփվել գյոթնոցի մյուս բնակիչների հետ: Գյոթնոցում բոլորը հավասար իրավիճակում էին, նույն իրավունքներն ու պարտականություններն ունեին, և կարևոր չէր, թե ով էին եղել նախկինում, ինչ գործով էին զբաղվել: Եթե դրսում «գյոթ» բառը օգտագործվում է սեռական կողմնորոշման իմաստով կամ որպես մարդկային որակների բնորոշիչ, գաղութում «գյոթը» որոշակի կաստայի ներկայացուցիչ է, և կարևոր չէ՝ նա սեռական կողմնորոշման, մարդկային հատկանիշների՞, թե՞ մեկ այլ պատճառով է գյոթնոց ընկել:

Գյոթերն են կատարում գաղութի բաղնիքի ու զուգարանի, բարաքի միջանցքների մաքրման բոլոր աշխատանքները: Գյոթերն են թափում կալանավորների մոտ կուտակված ամբողջ աղբը: Եթե ինչ-որ հարիֆ չիմանալով շփման մեջ է մտնում գյոթի հետ, գյոթը պարտավոր է տեղեկացնել, թե ով է ինքը, հակառակ դեպքում դաժանորեն կպատժվի: Եթե նեղ միջանցքով դեմ-դիմաց քայլում են «հարիֆը» և գյոթը, գյոթը պիտի մի կողմ քաշվի ու ճանապարհ տա հարիֆին: Քրեական օրենսգրքի նույն հոդվածով դատապարտված մյուս կաստաներին պատկանող կալանավորները հնարավորություն ունեն ժամանակից շուտ ազատվել, իսկ գյոթերը՝ ոչ: Գյոթերը գաղութում անհրաժեշտություն են, նրանց ոչ բավարար թվի դեպքում գաղութի վարչակազմի մոտ մաքրման աշխատանքների հետ կապված լուրջ խնդիրներ կառաջանան: Այդ պատճառով նույնիսկ ամենակարգապահ գյոթերը, կաշառքի նույն չափը տալով, չեն կարող ժամանակից շուտ ազատվել:

Բիձու գյոթնոց ընկնելուց մեկ ամիս անց նրա որդին, որ նույնիսկ մոր թաղմանը չէր եկել Հայաստան, Ռուսաստանից եկավ, վաճառեց Բիձու տունը, որի փաստացի սեփականատերն էր (սեփականաշնորհման ժամանակ Գառնիկն ու կինը իրենց մինուճար որդու անունով էին ձևակերպել տունը), և տան վաճառքից ստացած գումարը իր հետ բերածի վրա դնելով՝ շահավետ առաջարկ արեց գաղութը նայողներին: Նա հիսուն հազար դոլար առաջարկեց այն բանի դիմաց, որ հոր վրայից «գյոթի բազառը» հանեն: Թեև Բիձեն և որդին լավ փոխհարաբերությունների մեջ չէին և շուրջ տասը տարի իրար չէին տեսել, որդին չէր կարող թույլ տալ, որ իր հայրը այդ կարգավիճակում մնա: Նա Մոսկվայում «գողական գնացող» տղերքի հետ համատեղ գործեր ուներ և չէր ուզում խայտառակ լինել:

Գաղութին այդ փողը օդ ու ջրի պես պետք էր, և այդ հարցին լուծում տալու համար գաղութի խաղասենյակում հավաք կազմակերպվեց: Նրանք, ովքեր գայթակղվել էին առաջարկվող գումարով և ընդունելի էին համարում Բիձու որդու աննախադեպ առաջարկը, հիշեցին Բիձու գաղութ ընկնելու հանգամանքները, սակայն, ի վերջո, Բիձու վրայից «գյոթի բազառը» չհանեցին: Դրանից հետո Գառնիկի որդին վերջնականապես հրաժարվեց հորից ու թռավ Մոսկվա, իսկ Գառնիկն իր ամբողջ պատժաժամկետը անցկացրեց գյոթնոցում՝ զրկվելով ժամանակից շուտ դուրս գալու հնարավորությունից:

Բիձեն քայլելով հասավ քաղաքի ծայրամասում գտնվող ավանին: Իրիկնանում էր, իրար կողք շարված տների պատուհաններից շատերը լուսավորված էին: Հողամասից մինչև ավանի առաջին տներն ընկնող ճանապարհը դիտմամբ դանդաղ էր քայլել, որպեսզի մութն ընկնելու հետ տեղ հասնի. այդ դեպքում հավանականությունը, որ իրեն կտեսնեն, կճանաչեն, ավելի քիչ էր: Ծանոթ, թաց, դարուփոս ճանապարհով քայլեց դեպի փողոցը, որտեղ գտնվում էր տունը: «Երկու ընտրություն ա եղել,– մտածեց Բիձեն,– փողոցը չեն ասֆալտապատել»:

Խաչմերուկում կանգնած էր իր նախկին ընկերը՝ Վալոդը, որի հետ հաճախ ամռանը նարդի ու շախմատ էին խաղում, իսկ ձմռան երկար երեկոներին, վառարանի մոտ նստած, կրուցում: Երեք տարվա ընթացքում Վալոդը բավականին ծերացել էր, փոխվել: Մտածեց, որ ինքն էլ ահագին փոխված կլինի, և հնարավոր է՝ Վալոդը չճանաչի իրեն: Բիձեն, նախկին ընկերոջը չնայելով, արագացրեց քայլերը և անցավ նրա կողքով: Մի քանի քայլից լսեց ընկերոջ ձայնը.

– Կանգնի՛ հլա, դո՞ւ ես:

Բիձեն կանգնեց՝ անհույս սպասումով, որ ընկերոջ հաջորդ հարցը գաղութում անցկացրած ժամանակի մասին չի լինի:

– Արա՛, էդ ճիշտ ա՞, որ...

Բիձեն շարունակեց քայլել և կանգ առավ իր տան առջև: Տան դիմացի ճանապարհը հարթ ու ասֆալտապատ էր, ձյունը մաքրված էր ու լցրած ճանապարհի երկու կողմերում:

Մի քանի տարի առաջ տնկված մատղաշ շիվերը բարձրացել, ճյուղավորվել էին, և հիմա դրանք ոչ մի ցուրտ ու երաշտ չէր կարող չորացնել. նրանք պատրաստ էին ինքնուրույն կյանքի: Ցանկապատը ներկված էր, բակը մաքրված էր ձյունից ու կարգի բերված: Տան առջև մանկական խաղահրապարակ էր սարքված, կարմիր մանր ավազի վրա տեղադրված ինքնաշեն ճոճանակը քամուց տատանվում էր, և ճոճանակի մոտ պպզած երեխան, ձեռնոցներով պաշտպանված իր թույլ ձեռքերի մեջ խաղալիք գոգաթին աշխատեցնելով, առանց խանդավառության քանդում էր ցրտից սառած ու իրար կպած ավազը:

Բակի լույսը և տան լույսերը վառված էին, և ներկված, նորոգված պատուհանի ապակու միջով երևում էին խոհանոցի սեղանի մոտ նստած երիտասարդ տղամարդը և սեղանին ափսեներ դնող կինը, որի շարժումներում Բիձեն տեսնում էր այդ կնոջ՝ ընտանիքի հանդեպ ունեցած նվիրումն ու սերը: Տղամարդը ինչ-որ բան ասաց, և կինը ծիծաղեց, գլխով բացասական պատասխան տվեց և նայեց նրան ջերմ ու կամակոր հայացքով: Կնոջ խոհուն, սև աչքերը և երկար, առողջ մազերը փայլում էին խոհանոցի պայծառ լույսի տակ և հաճելի վերհուշ էին արթնացնում. նա նման էր իր կնոջը, այդ տարիքում կնոջ մազերն էլ էին փայլում, և աչքերում նույն փայլն էր առկայծում, երբ ժպտում էր: Բիձուն նույնիսկ թվաց, թե տղամարդն էլ իրեն է նման:

Կինն անցավ միջանցքով, դուռը բացելով՝ ձայն տվեց ավազի վրա պպզած երեխային, և երեխան, մոր ձայնը լսելով, վեր կացավ ու վազեց դեպի մայրը: Սովորաբար մութն ընկնելուն պես ծնողները նրան տուն էին կանչում, և նա համառում, ուզում էր մի քիչ էլ խաղալ, բայց այդ օրը ծնողները թողեցին սրտի ուզածի չափ խաղա, և մինչ հայրն ու

մայրը խոհանոցում գործ էին անում ու վայելում միմյանց ներկայությունը, երեխան հասցրել էր կարոտել ծնողների հոգատարությանը և սպասում էր, թե երբ կիհշեն իրեն: Նրա ձեռքերն ու ոտքերը սառել էին, բայց ինքնակամ, առանց մոր կամ հոր կանչի տուն վերադառնալը նրան անբնական էր թվում, ինչպես Բիձու համար անբնական էր կանգնել իր տան առջև անտունի կարգավիճակում:

Տղան վազեց դեպի մայրը, գրկեց մոր ոտքերը և հուզված, ամեն պահի արտասվելու պատրաստ ասաց.

– Մա՛մ, ինչո՞ւ շուտ չէիր կանչում:

Մայրը կարճ ծիծաղեց, ապա պպզելով գրկեց երեխային ու համբուրեց սառած այտը.

– Ուրեմն, մինչև քեզ չկանչեն, տուն չես մտնի, հա՞:

– Հա՛,– խոստովանեց տղան:

Մայրը փակեց տան դուռը և անջատեց բակի լույսը: Ապա հանեց երեխայի ձեռնոցները, գլխարկը, բաճկոնը: Քիչ անց նրանք արդեն նստած էին խոհանոցի սեղանի շուրջը: Բիձեն հմայված հետևում էր այդ գեղեցիկ ընտանիքի ընթրիքին, թե ինչպես են ծնողները քնքշությամբ նայում իրենց վավակի՝ պատառաքաղից օգտվելու փորձերին, ինչպես են ծիծաղում, երբ նա հոգնելով բարկացած մի կողմ է դնում պատառաքաղը և ձեռքով է վերցնում կարտոֆիլի տապական, ինչպես է մայրը հոգատարությամբ տապակած մսի նոր կտորներ դնում նրանց ափսեների մեջ, հյութ լցնում կիսատված բաժակներում: Մի ժամանակ իր ընտանիքն էլ էր այդպես համերաշխ, մինչև որդին մեծացավ, անվերադարձ Ռուսաստան մեկնեց, իսկ կինը մահացավ՝ աչքը որդու ճանապարհին:

Բիձեն տան մոտ էր եկել, որովհետև կարոտել էր իր տունը և որովհետև կարծում էր, որ իր հին իրերից ինչ-որ բան պահպանված կլինի՝ կնոջ ու իր լուսանկարներով ընտանեկան ալբոմը, ինչ-որ բան հագուստից և այլն, բայց հիմա Բիձեն ափսոսում էր կտրել նոր տերերին իրենց առօրյա երջանկությունից և իր կարիքներով խուժել նրանց կյանք: Նա ուրախ էր, որ իր տունը լավ ընտանիքի է բաժին հասել. գուցե նրանց հաջողի անել այն, ինչ չէր հաջողել իրեն՝ կառուցել համերաշխ ընտանիք, որտեղ սերն ու հարգանքը պահպանվում են, տարիների ընթացքում չեն կորչում:

Տնից մինչև ավանի հակառակ ծայրում գտնվող գերեզմանոցը կես ժամվա ոտքի ճանապարհ էր, բայց Բիձու անշտապ քայլերով ժամուկես տևեց. ինչո՞ւ շտապել, միևնույն է, կինը ոչ մի տեղ չէր գնա այնտեղից, և երբ էլ տեղ հասներ, հանդիպումը կայանալու էր: Բիձու ոտնաձայների վրա գերեզմանոցի պահակը՝ մոտավորապես նույն տարիքի մի ծերունի, դուրս եկավ պահակատնից՝ տեսնելու, թե ով է եկողը: Գիշերն իրենց հանգուցյալ հարազատներին այցի եկող հարբած տղամարդիկ երբեմն պատահում էին, բայց ավելի հաճախ գերեզմանների մետաղյա ցանկապատերի գողերն էին գալիս: Հենց նախորդ օրը պահակը մի անչափահաս պատանու էր բռնել գողության վրա, խղճացել էր, ոստիկանության ձեռքը չէր հանձնել: Բաց էր թողել, ուղղվելու հնարավորություն էր տվել, բայց նա լավ գիտեր այդ հանդուգն ջահելներին. սովորաբար նրանք նորից էին փորձում իրենց բախտը, և այդ ժամանակ պահակը այլևս չէր ներում գողերին:

Բիձեն գողի տեսք չուներ. գողն այդպես դանդաղ, գլխահակ ու մտամոլոր չի քայլի: Իսկ

երբ մոտիկից տեսավ նրան, ճանաչեց՝ երեք-չորս տարի առաջ մահացած կնոջ ամուսինն էր, որ վաղուց չէր երևացել գերեզմանոցում:

– Բարև,– ասաց պահակը,– ուղեկցե՞մ, թե՞ կգտնես:

– Կգտնեմ,– պատասխանեց Բիձեն,– աստծու բարին:

– Քո բացակայության ժամանակ տիրություն եմ արել,– ասաց պահակը՝ ֆինանսական փոխհատուցում ստանալու անթաքույց ակնկալիքով:

– Շնորհակալ եմ,– ասաց Բիձեն,– բայց ներող կլինես, չեմ կարող վարձահատույց լինել:

– Ի՞նչ ես ասում, ես հո դրա համար չեմ… – անկեղծորեն նեղացավ պահակը. նա խնամում էր անտեր թողնված գերեզմանները, և երբ տերերը հայտնվում էին, տեղեկացնում էր իր աշխատանքի մասին՝ հուսալով, որ վարձահատույց կլինեն, բայց դա չէր նշանակում, թե հենց սկզբից ֆինանսական ակնկալիք է ունեցել, պարզապես նա մենակ մարդ էր և կուզենար, որ երբ մեռնի, ինչ-որ օտար մեկը երբեմն հոգ տանի իր գերեզմանի մասին, որպեսզի իրենից մոլախոտով ծածկված մի կտոր չմնա, որի վրայով բոլորը կանցնեն-կդառնան, այլ երևա, որ այդտեղ մարդ է պառկած:

Թեև գերեզմանոցում մեռյալ մթություն էր, Բիձեն հեշտությամբ գտավ կնոջ հանգստարանը: Կնոջ հուղարկավորումից հետո, մինչև բանտարկվելը նա գրեթե ամեն օր գալիս էր գերեզմանոց, երբեմն նույնիսկ ուտելիք էր բերում և ճաշում գերեզմանոցում. երեսունհինգ տարվա համատեղ հացկերույթից հետո դժվար էր վարժվել մենակ հաց ուտելուն:

Կնոջ գերեզմանը ցանկապատված չէր, մահվանից հետո որդու ուղարկած փողը միայն թաղման և գերեզմանաքարի պատրաստման ծախսին էր բավարարել: Բիձեն հույս ուներ, որ որդին տան վաճառքից ստացած փողով սարքած կլինի, բայց որդին ոչինչ չէր արել, ով գիտի՝ գերեզման չէր էլ եկել:

Բիձեն նստեց գերեզմանաթմբից քիչ հեռու ընկած քարի վրա և, գրպանից ծխախոտ հանելով, վառեց: Նա ամաչում էր, որ երկարատև բացակայությունից հետո առաջին հանդիպումն էր, ու ինքն առանց ծաղիկների ու խնկի էր եկել: Խոսակցությունը չէր ստացվում:

– Բաց թողեցին,– անուրախ ասաց Բիձեն,– ո՞նց ես այստեղ, առանց ինձ:

Մոտ մեկ ժամ Բիձեն նստած մնաց գերեզմանի մոտ ընկած սառը քարի վրա: Նրա ձեռքերն ու ոտքերը, հետույքն ու ճաղատը սառել էին: Մութ գիշերվա գերեզմանային լռությունը մարմինը և հոգին հակում էին քնի, և Բիձու մեջ կնոջ կողքին հավերժորեն պառկելու, հանգստանալու ցանկություն էր առաջանում, բայց նա դեռ անելիքներ ուներ. պետք է գերեզմանը ցանկապատեր, իր գերեզմանաքարի պատրաստման ու թաղման ծախսը հայթայթեր: Իր համար չէր մտահոգվում, որովհետև այն կարգավիճակը, որ կամովին ընտրել էր, նրան դուրս էր դնում հասարակական կարծիքից կախված լինելու վիճակից: Մտահոգվում էր, որ կնոջ գերեզմանը ցանկապատված լինի, որ կողքին պառկած ամուսինը քիչ թե շատ շնորհքով թաղվի. կնոջ կողքին թաղվելուն արժանանալու համար նա պետք է հաղթահարեր այդ փորձությունը, ցույց տար իր տղամարդկությունը:

Բիձեն ձեռքերը և ճակատը շփելով քայլում էր: Աստիճանաբար արագացնում էր քայլերը, որպեսզի տաքացնի հոգնատանջ ու քնի կարոտ մարմինը. ապատ արձակվելու սպասումն ու անորոշ ապագայի հանդեպ ունեցած վախերը չէին թողել, որ նախորդ գիշեր քնի, և հիմա քնապակաս մարմինը պակաս դիմացկուն էր ցրտի հանդեպ:

Պահակը, որ մարդակարոտ էր, օրեր շարունակ միայն հանգուցյալների հետ էր շփվում, պահակատան բաց դռնից հորդացող լույսի ու տաքության մեջ կանգնած սպասում էր՝ ինքնավստահ կեցվածքով, այնպես, ինչպես տանտերը կդիմավորի հյուրին իր տան առջև կանգնած:

– Նե՛րս արի, տաքացի՛ր,– առարկություն չհանդուրժող ձայնով ասաց նա, երբ Բիձեն հավասարվեց նրան:

Բիձեն անխոս քայլեց դեպի պահակատունը, որի բաց դռնից նրան էր հասնում չափից ավելի թթված թթվի կծվահոտը, իսկ դռան դիմաց նրա երեսին խփեց սենյակից եկող տաքությունը:

Փոքրիկ սենյակում, որտեղ ապրում և աշխատում էր ծերուկը, մի թախտ էր դրված, դիմացը՝ փոքր սեղան, իսկ սեղանի վրա՝ հաց, թթու, օղի և օղու բաժակներ: Օղին բացված էր, բայց վրայից խմած չէր:

– Նստի՛ր,– ասաց հյուրընկալ ծերուկը,– խմելու հետ ո՞նց ես:

– Մի ժամանակ լավ էի,– պատասխանեց Բիձեն՝ թախտին նստելով ու մտմտալով՝ արժի՞ արդյոք ասել ծերուկին, թե որտեղ է անցկացրել բանտարկությունը:

– Իսկ ես նոր եմ սկսել,– ասաց պահակը,– էն օրվանից, ինչ պահակ եմ աշխատում:

– Հեշտ չի հանգուցյալների հետ...

– Չէ՛,– ընդհատեց պահակը,– հանգուցյալների հետ հեշտ է, ողջերի հետ է դժվար: Դու ճիշտ չհասկացար՝ ես մեռելներից չեմ վախենում, ուղղակի ափսոսս գալիս է, որ գերեզմանաթմբերի մոտ թողած խմիչքը թափեմ:

Ծերուկը լցրեց բաժակները՝ առանց ոգևորության, շտապողականության կամ ձեռքերի դողի, ինչը վկայում էր, որ իսկապես հարբեցող չի և միայն ափսոսանքից դրդված է խմում: Բիձեն այնպիսի զգացողություն ուներ, որ չարաշահում է պահակի բարեսրտությունն ու հյուրընկալությունը և խղճի խայթ էր զգում, որ չէր զգուշացրել նրան, թե ով է ինքը:

– Կներես, ես չպետք է ընդունեի քո առաջարկը,– ասաց Բիձեն՝ տեղից բարձրանալով,– դու չգիտես, թե ով եմ ես: Եթե իմանաս, ինձ հետ հացի չես նստի:

– Նստի՛ր,– ասաց ծերուկը,– ինձ համար նշանակություն չունի: Նստի՛ր: Ես այս հանրակացարանի բնակիչների մասին ամեն ինչ գիտեմ և նրանց հարազատների մասին էլ:

Պահակը իսկապես գիտեր բոլոր նոր թաղված հանգուցյալներին, ինչպես ինքն էր ասում՝ հանրակացարանի բնակիչներին, գիտեր, թե ինչ հարազատներ ունեն նրանք, ում գերեզմանին ով է այցելում և ինչ հաճախականությամբ: Գիտեր նաև Բիձու պատմությունը, որ լսել էր նրա հարևաններից, երբ նրանց հարցրել էր, թե ինչու այլևս չի այցելում կնոջ գերեզմանին:

Մի քանի բաժակ օղուց հետո հաճելի ջերմություն տարածվեց Բիձու մարմնով, գլուխը թմրեց, խառնիխուռն մտքերը, որ ողջ օրը հանգիստ չէին տալիս նրան, հօդս ցնդեցին: Նա զգաց, թե ինչպես են իր կոպերը փակվում, բայց չդիմադրեց և թողեց, որ քունը հաղթի հոգնած մարմնին:

Առավոտյան իրեն գտավ թախտի վրա պառկած և ծածկոցով ծածկված: Պահակը ննջում էր էլեկտրական ջեռուցիչի կողքին՝ աթոռակի վրա նստած: Բիձեն բարձրացավ թախտից, հագավ բաճկոնը և անխոս դուրս եկավ պահակատնից, որպեսզի չխանգարի պահակի հանգիստը և որպեսզի չհանդիպի նրան, որովհետև չէր կարողանալու խոսքեր գտնել իր երախտագիտությունը հայտնելու համար:

Բարակ բաճկոնի մեջ կուչ եկած Բիձեն քայլում էր դատարկ փողոցների սառցակալած ճանապարհով և մտածում էր իր հետագա անելիքների մասին: Պետք էր անձնագիր հանել, որ կարողանա թոշակ ստանալ, և պետք էր ինչ-որ տեղ աշխատանքի ընդունվել: Բայց տոնական օրեր էին, և մինչև ամսի 13-ը հազիվ թե անձնագրային բաժինը բաց լիներ:

Բիձեն քայլերն ուղղեց դեպի իր նախկին տունը. հույս ուներ, որ անձնագիրը գտնված կլինի, ու նոր տանտերը պահած կլինի այն: Նրա ձերբակալության ժամանակ անձնագիրը մոտը չէր, և երբ ոստիկանները պահանջեցին, Բիձեն գլուխն ազատելու համար ասաց, թե կորցրել է: Նրան այդպես էլ առանց անձնագրի դատեցին ու բանտարկեցին:

Ներկված ու վերանորոգված դարպասի մոտ տաքանալու նպատակով տեղում քայլելով՝ նա սպասում էր, մինչև տնից մարդ դուրս կգա, և ինքը կկարողանա իրեն հետաքրքրող հարցերը տալ: Չէր ուզում խանգարել նրանց հանգիստն ու քունը դռան զանգով, որ նոր էր տեղադրված և իրենց ժամանակ չկար: Հիշեց, որ կինը պարբերաբար խնդրում էր իրեն զանգ տեղադրել, ինքը խոստանում էր անել, բայց ականջի հետև էր գցում: Իսկ հիմա իր նախկին տանը նախանձով ու ուրախությամբ էր նայում: Այն, ինչ երեսուն տարում ինքը չէր կարողացել անել, տան նոր տերը երեք տարուց պակաս ժամանակում արել էր:

Բավական ժամանակ անցավ, մինչ տան դուռը բացվեց, և տղամարդը դուրս եկավ ու, գործնական շտապողականությամբ բանալիների խրձի մեջ ավտոտնակի բանալին փնտրելով, քայլեց դեպի ավտոտնակը: Միայն ավտոտնակի դռները բացելուց հետո նկատեց Բիձուն և հարցական նայեց նրան:

– Բարի լույս,– ասաց Բիձեն:

– Բարի լույս, ինչո՞վ կարող եմ օգնել:

– Ես ճանաչում էի էս տան նախկին տերերին,– ասաց Բիձեն:

– Հա, երեք տարի է՝ ինչ այս տունը գնել եմ:

– Գիտեմ, տան նախկին տերը իմ ընկերն էր: Հիմա նա չկա, ուզում եմ նրա իրերից ինչ-որ հիշատակ վերցնել: Նրա հագուստներից կամ ընտանեկան լուսանկարներից:

– Ցավում եմ, բայց ոչինչ չի մնացել, միայն կահույքից ինչ-որ բաներ և մեկ էլ՝ աման-չաման: Մենք տունը կահույքով գնեցինք, ու թեև տանտերն ասաց, որ մնացած իրերը իրեն պետք չեն, բայց մենք չթափեցինք, դրեցինք նկուղում, որ գա վերցնի: Մի ամիս

առաջ եթե գայիք, դրանք նկուղում դրված կլինեին, բայց ինձ նկուղի տարածքը պետք էր, և ստիպված աղբատար մեքենա վարձեցի ու թափեցի ամբողջը:

– Ափսոս,– ասաց Բիձեն,– մի ամիս առաջ ես այստեղ չէի:

Բիձեն քայլում էր հարավատ թաղամասի սառցակալած փողոցներով և մտածում, թե որտեղ պիտի քնի, և ինչպես պիտի ապրի մինչև աշխատանք գտնելը: Գրպանում 5000 դրամ ուներ, որ գաղութի իրենց մասնաբաժնի տղաներն էին հավաքել ու նվիրել, և անֆիլտր ծխախոտի տուփի մեջ մի քանի գլանակ: Կբավարարի՞ այդ գումարը մինչև տոնական օրերի վերջը, մինչև անձնագրային բաժնի բացվելը, անձնագիր հանելը ու աշխատանք գտնելը: Նա շտապում էր դուրս գալ մի ժամանակ հարավատ, իսկ հիմա թշնամական թաղամասից, որտեղ բոլորը գիտեին, թե որտեղ է անցկացրել բանտարկության տարիները: Պետք էր շտապ հեռանալ այդտեղից և այնպիսի թաղամաս գնալ, որտեղ ոչ ոք չէր ճանաչի իրեն. ազատության մեջ անցկացրած առաջին րոպեներին՝ սև ջիփի վարորդի հետ հանդիպումից հետո հասկացել էր, որ պետք է գաղտնի պահի բանտարկության տարիները, որպեսզի չծանրացնի իր՝ առանց այդ էլ ծանր վիճակը:

Երբ հասավ քաղաքի կենտրոնական մասը, արդեն իրիկնանում էր: Կենտրոնը կարդարված էր տոնական լույսերով, խանութների ու սուպերմարկետների մոտ դեռևս շարունակվում էր տոնական առևտրի եռուզեռը: Մեքենաների անվերջանալի հոսքը, տուն շտապող անհամբեր վարորդների վիլ ազդանշանները, տարիքն առած անցորդների մտախոհ դեմքերը, երիտասարդների ու մանուկների ուրախ ու գոհ ժպիտները հոգսաշատ տոնի վաղանցուկ կգացողություն էին հաղորդում նրան: Ուրիշի մտահոգություններ՝ մինչև ժամը 12-ը ամեն ինչ չհասցնելու մտավախությունը, վարկով արված առևտրի կամ այդ տարվա ամանորյա սեղանի պակասության պատճառով առաջացած նեղսրտածությունը և ուրախությունները՝ նոր տարվա հետ կապած հույսերն ու սպասումները, երջանիկ անգիտության մեջ ապրող երեխաների ամանորյա հեքիաթը փոխանցվում էին նրան, և կյանքը հնարավոր էր թվում:

Վաղուց նա չէր եղել քաղաքի կենտրոնում: Թոշակի անցնելուց հետո կյանքն անցել էր իրենց ծայրամասային գորշ թաղամասում, տնից հողամաս, հողամասից տուն ճանապարհին: Սուպերմարկետների, բրենդային խանութների փայլուն ցուցանակների ու Հյուսիսային պողոտայի մասին էլ միայն հեռուստացույցից գիտեր: Եվ հիմա բաց թողածը տեսնելու անհագուրդ ցանկությամբ քայլում էր այնքան, մինչև ոտքերը հոգնում էին: Այդ ժամանակ նստում էր փողոցում տեղադրված նստարանների վրա և շունչ առնելուց հետո շարունակում քայլքը:

Հանրապետության հրապարակում տոնական համերգը սկսվել էր, և երաժշտության ձայնը իր կողմը գրավեց Բիձուն: Նա նստեց հրապարակի մոտակայքում դրված նստարաններից մեկին և սկսեց հետևել համերգին ու հրապարակ եկած բնակչությանը: Մինչև լուսաբաց նա այլևս տեղից չշարժվեց, լսեց հանրահայտ երգիչների ելույթները ու հանրապետության նախագահի ամանորյա ուղերձը, որ հեռարձակվում էր հրապարակում տեղադրված մեծ էկրանից, տեսավ շքեղ հրավառությունը, հանդիսատեսների ցրվելը, հարբած Ձմեռ պապի ու Ձյունանուշի և պարսիկ պբոսաշրջիկների ծեծկռտուքը, տեսավ ոստիկանական մեքենան, որ պտտվում էր դատարկ հրապարակով, և որի բարձրախոսից ամենայն հավանականությամբ խմած ոստիկանը հայհոյախառն

բառապաշարով անիծում էր իր բախտը, որ հենց իրեն է բաժին հասել նոր տարվա օրով հերթապահություն իրականացնել:

Նա նստարանի վրա մեկնվեց ու քնեց ուշ գիշերին, երբ լուսաբացին մեկ-երկու ժամ էր մնացել: Առավոտյան նրան արթնացրեց Գոքորը՝ անթրաշ և անլվա, մաշված, կեղտոտ ջինսե տաբատով ու բաճկոնով տղամարդը: Նրա ձեռքին օղու փոքր շիշ էր:

– Վե՛ր կաց,– բզում էր նա Բիձուն,– էս օրով մենակ խմել չի լինում:

Բիձեն թեև մրսած էր, բայց խմելու ցանկություն չուներ, ավելի հաճույքով ինչ-որ բան կուտեր, բայց չուզեց անտունի ի սրտե արված առաջարկը մերժել: Նա վերցրեց իրեն մեկնած օղու շիշը ու, մի փոքր կում անելով, վերադարձրեց Գոքորին, որի տարիքը դժվար էր որոշել:

– Գնանք իմ տուն,– առաջարկեց Գոքորը:

Բիձեն տեղ չուներ գնալու և համաձայնեց:

Գոքորի տունը վթարային, կիսով չափ քանդված շինության նկուղային հարկն էր: Այդ շինությունը ենթակա էր քանդման, և դրա տեղում էլիտար բարձրահարկ շենք պիտի կառուցվեր, որտեղ պետք է ապրեին հաջողակ մարդիկ, որոնք աշխատանք ու եկամուտ ունեին: Շինարարությունը, սակայն, եղանակային պայմանների թե ֆինանսների անբավարարության պատճառով դադարեցված էր, շինտեխնիկան դուրս էր բերվել տարածքից: Նկուղային հարկում, որտեղ ապրում էր Գոքորը, տարաբնույթ ապրանքների կույտեր կային: Մանկական սայլակներ, դատարկ ճամպրուկներ, տարբեր չափսերի աթոռներ, մի սև-սպիտակ էկրանով հեռուստացույց և հեռուստացույցի առջև դրված բազկաթոռ, սովետական արտադրության ձայնարկիչներ, որոնցից միայն մեկն էր աշխատում, բազմաթիվ ամսագրեր ու գրքեր, ապակյա տարաներ, շշեր, մետաղի ջարդոն՝ էլեկտրալարեր, ալյումինե ու պղնձե ամաններ և այլն:

Բիձեն մնաց Գոքորի մոտ, և նրա տունը իր տունն էլ դարձավ: Նրանք գրեթե չէին շփվում, հազվադեպ էին միասին հաց ուտում, բայց մեկի գոյությունը մյուսի համար հենարան էր: Մի երեկո, երբ մի քանի բաժակ օղի էին խմել ու պառկել քնելու, Գոքորն անկեղծացավ. «Քեզանից առաջ այստեղ Սևոն էր ապրում, նրան գիշերով գնդակահարեցին սանիտարական վարչության տղաները»: Բիձեն երախտապարտ էր Գոքորին նրա բարեսրտության համար, բայց անտեր-անտուն շան կարգավիճակը, որին որդեգրում են ու ապահովում սնունդով, նրա արժանապատվությունը խոցում էր. դա այն չէր, հանուն ինչի շարունակում էր իր ողորմելի կյանքը: Այդ կռույցի հաջորդ առավոտյան նա կրկին գնաց իր նախկին տան թաղամասի ոստիկանության անձնագրային բաժանմունք: Նա արդեն մի քանի անգամ եղել էր այնտեղ, սենյակից սենյակ էր անցել, բայց գործը գլուխ բերել չէր հաջողվել:

Մոտ երկու ժամ սպասեց անձնագրային բաժնի պետի դռան մոտ: Երբ պետը ժամանակ գտավ նրան ընդունելու, Բիձեն կամաց թակեց դուռը և անվստահ քայլերով մտավ նրա սենյակ:

– Բարև ձեզ, կարելի՞ է,– ասաց Բիձեն ցածրաձայն:

Պետը հիսունն անց կին էր՝ մանկամարդ պոռնիկի շպարով: Նա մի կարճ հայացք գցեց Բիձու վրա և, հայացքը սեղանին դրված թղթերին հառելով, դեմքի դժգոհ

արտահայտությամբ, որ իրեն ինչ-որ բոմժ կտրել է պետական կարևոր գործերից, ասաց.

– Ասա՛:

– Ես նոր եմ գաղութից դուրս եկել, անձնագիրս կորցրել եմ մինչև նստելը: Հիմա ինձ անձնագիր չեն տալիս:

– Գնացե՛ք առաջին սենյակ, կասեն, թե ինչ փաստաթղթեր ա պետք:

– Գնացել եմ,– ասաց Բիձեն,– ձեր մոտ են ուղարկել:

Բաժնի պետը հայացքը բարձրացրեց, կասկածով ու վկվանքով լի հայացքով նայեց Բիձուն, ապա վերցնելով հեռախոսի ընկալուչը՝ լսափողի մեջ ասաց.

– Ռուզա՛ն, անցի՛ իմ մոտ,– ապա ընկալուչը ցած դնելով՝ ավելացրեց,– հիմա կտեսնենք:

Մի քանի վայրկյան անց ներս մտավ անձնագրային բաժնի աշխատող աղջիկը, որի մոտ Բիձեն մի քանի անգամ արդեն եղել էր:

– Ի՞նչ խնդիր կա սրա անձնագրի հետ կապված,– հարցրեց պետը:

– Ռոմելլա Միքեյելովնա,– հարգալից ձայնով խոսեց աղջիկը՝ երկարացնելով «Ռոմելլա» բառը,– անձնագիրը կորցրել ա, ո՛չ գրանցում ունի, ՛ոչ թաղապետարանից թուղթ ունի, ո՛չ տնային գրքույկ...

Աղջիկն ուզում էր շարունակել թվարկումը, բայց բաժնի պետն ընդհատեց.

– Լավ, ազատ ես,– ասաց բաժնի պետը աղջկան, ապա դարձավ դեպի Բիձեն,– մինչև համապատասխան փաստաթղթերը չներկայացնես, չենք կարող անձնագրավորել:

Բիձեն դուրս եկավ սենյակից. պետի հետ վիճելը, ինչ-որ բան բացատրելը անիմաստ էին, ինչպես որ անիմաստ ու անարդյունք էր եղել նրա ենթակաների հետ խոսելը:

Բիձեն աստիճանաբար վարժվեց անտունի կարգավիճակին և սկսեց զբաղվել այն գործով, ինչով Գոքորն էր զբաղվում: Նա գիշերները մետաղի ջարդոն ու ապակե շշեր էր հավաքում աղբամաններից: Իսկ ցերեկները աշխատանք գտնելու հույսով գնում էր ֆայլաբազար, բայց նրան շատ հազվադեպ էին աշխատանք վստահում: Նա շինարարական աշխատանքների վարպետ չէր, իսկ որպես բանվորական ուժ տանում էին երիտասարդներին: Նրան փոքր վարձով վերցնում էին հիմնականում կեղտոտ գործերի համար՝ աղբը թափելու կամ պայթած կոյուղագծերի կեղտաջրերը դատարկելու համար: Բայց մի օր պատահեց այնպես, որ աշխատանք գտնելու համար ֆայլաբազար եկած նորեկը, ով նրա հետ նույն ժամանակահատվածում նստել էր գաղութում, ճանաչեց նրան:

– Տղե՛րք, էսի գյոթ ա,– ասաց երիտասարդը ու հայհոյելով մոտեցավ, ոտքով հարվածեց,– նույն գաղութում ենք նստել:

Ֆայլաբազարում կանգնողներից մի քանիսը միացան երիտասարդին ու սկսեցին ոտքերով հարվածել ծերուկին, որը «գյոթ» լինելով՝ համարձակվել էր իրենց հետ նույն տեղում կանգնել, հաց ուտել: Բիձեն չէր պաշտպանվում և անձայն տանում էր հարվածների պատճառած ցավը: Ծեծն ավարտվեց միայն այն ժամանակ, երբ քիչ այն կողմ, ծեծին չմասնակցող տղամարդկանց խմբի մոտ թանկարժեք մեքենա կանգնեց:

Բոլորը մոռացան Բիձուն և շտապեցին դեպի մեքենայից իջած գնդլիկ տղամարդը, որը վստահաբար ինչ-որ աշխատանք էր առաջարկում և սակարկում էր վարձի շուրջ:

Երբ բոլորը հեռացան, Բիձեն բարձրացավ ընկած տեղից, թափ տվեց կեղտոտ շորերի վրայի փոշին, ձեռքի ափով սրբեց պատռված շրթունքից հոսող արյունը և քայլեց: Այդ օրվանից Բիձեն այլևս ֆայլաբազարում չերևաց, և նրա միակ աշխատանքը դարձավ աղբամանները քրքրելը:

Այդ գիշեր Գոքորը չվերադարձավ կացարան: Ուշ գիշերին Բիձեն դուրս եկավ կացարանից և փնտրեց նրան բոլոր այն վայրերում, որտեղ նա կարող էր լինել, ոտքի տակ տվեց քաղաքի կենտրոնական մասը, բայց ոչ մի տեղ չգտավ Գոքորին: Հույս ուներ, որ այն ընթացքում, ինչ ինքը փնտրում էր նրան, Գոքորը վերադարձած կլիներ կացարան, բայց Գոքորը չկար: Կացարանում նրա իրերն էին, նրա յուրահատուկ գարշահոտը, որ գալիս էր հագուստի վրայից, և կուտակած ինչքի կույտերը: Հիշեց՝ մի օր, երբ պառկել էին քնելու, Գոքորն ասել էր. «Էս հարստությունս քեզ եմ ժառանգում, քոռուփուչ չանես ունեցվածքս»: Հաջորդ օրը Բիձեն մոտակա կրպակից գնեց բոլոր օրաթերթերը և ծայրից ծայր կարդաց բոլորը՝ Գոքորի մասին ինչ-որ տեղեկություն ստանալու սպասումով, բայց նրա անհետացումը լրատվական իրադարձություն չէր դարձել:

Բիձեն կիսաքանդ շենքի նկուղում ապրեց մինչև մայիս: Այնուհետև ստիպված էր հեռանալ կացարանից, որովհետև շենքի քանդման աշխատանքները շարունակվեցին: Մի առավոտ նա քնից վեր թռավ ուժեղ աղմուկից: Շենքը ցնցվում էր, ճաք տված առաստաղից փոշի էր թափվում: Սկզբում մտածեց, որ երկրաշարժ է, բայց երբ ականջին հասան վերամբարձ կռունկի և աշխատող բանվորների ձայները, հասկացավ, որ ձմռան ընթացքում դադարեցված շինարարական աշխատանքներն են շարունակվում: Բրեզենտե պարկի մեջ արագ լցրեց Գոքորի և իր կուտակած մետաղի ջարդոնը, պայուսակի մեջ տեղավորեց հավաքված շշերի մի մասը, վերցրեց դոշակի տակ պահված խնայողությունները և դուրս եկավ շենքի նկուղից:

Նա հեռվից տեսավ, թե ինչպես շենքը հիմնովին քանդվեց, և փլատակների տակ մնաց, փոշիացավ Գոքորի ունեցվածքը, որ ինքը պարտավորվել էր պահել-պահպանել: Աննահանջ տխրություն իջավ նրա հոգուն, և ներսում մի բան կծկվեց կորստյան ցավից ու ափսոսանքից: Սեփական տան կորուստը այդպես չէր վշտացրել նրան, որքան քանդված շինության կորուստը, որտեղ բնավորվել էին ինքն ու Գոքորը:

Մետաղի ջարդոնը և ապակյա շշերը ընդունման կետերում հանձնելուց հետո նա նստեց այգու նստարանին և ստացված եկամուտը իր խնայողությունների վրա դնելով՝ հաշվեց փողը: Տասնվեց հազար չորս հարյուր քսան դրամ: Սա նրա հինգ ամսվա խնայողությունն էր, որ հավաքել էր ֆայլաբազարում պատահած կեղտոտ աշխատանքով և աղբամաններում քուջուջ անելով: Կնոջ գերեզմանը ցանկապատելու և իր գերեզմանաքարը պատվիրելու համար շատ ավելին էր պետք: Հիմա, երբ այլևս չէր կարող ֆայլաբազար գնալ, երբ կացարան չուներ, փող հայթայթելն ավելի էր դժվարացել, անհրաժեշտ գումարը հավաքելն արդեն անիրականանալի էր: Բիձեն մտածում էր, որ անհրաժեշտ գումարը հավաքելու համար պետք է ժամանակավորապես արտագաղթի, խոպան գնա՝ վերադառնալու և կնոջ կողքին հանգչելու պայմանով: Պետք էր այնպիսի վայր գնալ, որտեղ իրեն չէին ճանաչում, չգիտեին գաղութում անցկացրած

ժամանակահատվածի մասին: Ամենահինարավոր տարբերակը Ռուսաստանն էր, որտեղ գուցե որդուն էլ կարողանար գտնել և, արժանապատվությունը մի կողմ թողնելով, խնդրել, որ անհրաժեշտ գումարը տրամադրի:

Մեկ շաբաթից ավելի Բիձեն քնեց Հրավդանի կիրճում կամ այգու նստարանների վրա: Ամբողջ այդ ժամանակահատվածում նա փորձում էր ելքեր գտնել ստեղծված իրավիճակից, բայց ոչ մի օգտակար միտք գլխում չէր ծնվում: Անձնագրային բաժին գնալը արդյունք չէր տա՝ անտուն և անգրանցում մարդը այնտեղ ոչ մեկին պետք չէր, իսկ առանց անձնագրի չէր կարող երկրից դուրս գնալ: Տասը օր անց Բիձուն թվաց, թե գտել է ելքը:

Ամբողջ օրը Բիձեն նստած էր Հանրապետության հրապարակից սկսվող պուրակում դրված նստարանին՝ դատախազության շենքի մերձակայքում, կառավարության շենքից քիչ հեռու: Դեմքին անտարբեր հոգնություն կար. նա հոգնել էր կարեկից սրտի սպասումից: Նրա ձեռքերը անճարակ կախվել էին ցած, իսկ ոտքերը ժանգոտ, ծուռումուռ մեխերով մեխված էին տախտակի երկու կտորներին, որ թռցրել էր իր նախկին կացարանի շինհրապարակից: Նա ուզում էր ուշադրություն գրավել, պահանջել, որ իրեն անձնագիր տան, բայց անցորդների մեծ մասն անտարբեր անցնում էր նրա կողքով, ասես ինքը անտեսանելի է, ասես գոյություն չունի. մի մասը՝ ծաղրում ու ծիծաղում, մյուսները շտապ քայլերով հեռանում էին՝ փախչելով սարսափելի իրականությունից, չցանկանալով հավատալ տեսածին: Բիձեն համոզվել էր, որ մարդկանց աչքերը և հոգիները սովորել են թշվառությանը, իսկ մի մասն էլ հեռու է փախչում, ասես ինքը վարակ է, կարող է իրենց էլ վարակել, բայց չէր կարծում, թե նրանց հոգիներն այնքան են կարծրացել, որ կարող են չնկատել հուսահատության եզրին հասած և ինքնավնասման ծայրահեղ քայլին դիմելու պատրաստ մարդուն:

Ազատության մեջ անցկացրած ժամանակահատվածում Բիձեն նորից էր բացահայտում աշխարհը, որում այդքան տարի ապրել էր ու չէր ճանաչել: Բայց չէր չարանում մարդկանց վրա, որոնց կգալի մասը ապրում էր այն սահմանագծին, որից այն կողմ կարող էր հայտնվել իր կարգավիճակում: Այդ պատճառով էին նրանք չտեսնելու տալիս թշվառությունը, այդ պատճառով էին հեռու փախչում իրենից, ասես դրանով փորձում էին ապահովագրվել, հեռացնել, վանել իրենց սպառնացող թշվառությունը:

Գաղութում շատ դեպքեր էին լինում, երբ մարդիկ ինչ-ինչ պատճառներով անժամկետ հացադուլ էին հայտարարում, կտրում էին մատները, կարում աչքերը կամ բերանը, բայց նրանց հուսահատ արարքը համարժեք ուշադրության չէր արժանանում: Բիձեն կարծում էր, թե դրսում ուրիշ վերաբերմունք կլինի, բայց դրսի աշխարհը ավելի անհոգի էր, քան գաղութինը:

Գաղութից ազատվելու առաջին իսկ օրը մտածել էր վերադարձի մասին, բայց դրա համար նա պետք է ինչ-որ հանցանք գործեր, ինչ-որ մեկին վնասեր: Քանի անգամ խանութների ցուցափեղկերի մոտով անցնելիս ցանկություն էր առաջացել ջարդել ցուցափեղկերից մեկը և վերադառնալ գաղութ, որտեղ գնալու համար անձնագիր պետք չի, որտեղ սնունդ ու կացարան են տալիս, որ մարդը կարողանա գոյությունը քարշ տալ: Վերադարձի միտքը հանգիստ չէր տալիս նրան, բայց Բիձեն ամեն անգամ վանում էր այն իրենից. նա հանցագործ չէր և չէր համակերպվում այն մտքի հետ, որ կարող է ինչ-

որ մեկին վնասել: Բացի այդ, գաղութ վերադառնալու ցանկությունը նրան եսամոլություն էր թվում և դավաճանություն կնոջ հիշատակի առջև:

Մթնում էր, քաղաքի լույսերը վառվում էին շլացուցիչ պայծառությամբ, և նկատված լինելու հավանականությունը պրոյանում էր: Բիձեն տախտակներին գամված սպասում էր:

Պաստառ – պատմվածք
Քայլող մարդը

Նիկոլայ պապը, որին բացի սիրելի կնոջից՝ Սոնա տատից, բոլորը Նիկոլ էին ասում, անդադրում մարդ էր, ու չնայած առաջացած տարիքին՝ նրա հեղափոխական հոգին հանգիստ չուներ: 88-ի շարժումով ոգևորված ու միտինգներին մասնակցած շատ ցուցարարներ քաղաքական թոշակի էին անցել, և նրանց մասնակցությունը քաղաքական կյանքին սահմանափակվում էր շենքի բակում վերջին ընտրությունների ժամանակ կառուցված տաղավարում ծավալվող վրույցներով, բայց Նիկոլ պապը ոչ միայն բոյկոտել էր վրուցարանը, որովհետև խոշոր հաշվով այն ընտրակաշառք էր, այլև մասնակցում էր բոլոր միտինգներին ու երթերին: Պատկերացրեք, որ երբեմն նա մասնակցում էր նաև այն ուժերի միտինգներին, որոնցից խորապես կլվում էր: «Որ հասկանամ, թե ինչ են շնչում ժողովրդի հանդեպ»,– այսպես էր բացատրում իր տարօրինակ վարքագիծը Նիկոլը: Նա մասնակցել էր 88-ի շարժմանը, ԱԻՄ-ի միտինգներին, 96-ի՝ Վազգեն Մանուկյանի հանրահավաքին, Գեղամյանի, Ստեփան Դեմիրճյանի ու «Իմպիչմենթ» դաշինքի հանրահավաքներին: Ծեծվել էր, ջրվել էր ջրցան մեքենաներից, էլեկտրաշոկի էր ենթարկվել, իսկ 2008 թվականի մարտի մեկին անգամ ոստիկանական բաժանմունք էր տարվել, բայց նրա անկոտրում ոգին չէր ընկճվել, և հերթական հանրահավաքի օրը նրա ոտքերը նորից Ազատության հրապարակ էին տարել նրան:

Նիկոլը սիրում էր հանրահավաքները, բայց հանրահավաքներից առավել սիրում էր երթերը, որոնց ընթացքում մարմնի ամեն բջիջով կզում էր երթի էն հզոր լիցքը, որին յուրաքանչյուր մասնակից իր էներգիան էր գումարում, և մարդկային հոսքը, մի ամբողջություն դարձած, շարժվում էր առաջ:

Բայց եկավ մի պահ, երբ ընդդիմության ղեկավարները որոշեցին, որ երթերի ժամանակն անցել է, կամ գուցե հնարավորություն չունեին երթեր կազմակերպելու, և պերմանենտ հանրահավաքներն ու երթերը դադարեցին: Նիկոլը այդ ժամանակներում իր տեղը չէր գտնում, ափ նետված ձկան նման խեղդվում էր բնակարանի չորս պատի մեջ և հայհոյում ընդդիմության առաջնորդներին, որ միտինգավոր ժողովրդի մասին չեն մտածում: Միտինգներն ու երթերը նրա համար տոն էին: Հանրահավաքների օրերին նա հագնում էր իր լավագույն կոստյումն ու վերնաշապիկը, կապում էր լավագույն փողկապը, դնում էր լայնեզր գլխարկը, վերցնում էր ձեռնափայտը, որ ոչ թե քայլելուն օգնելու համար էր, այլ էլեգանտություն հաղորդելու, և դուրս էր գալիս տոնին մասնակցելու, իսկ հիմա ընդդիմության առաջնորդները նրան վրկել էին տոնից:

Մի որոշ ժամանակ Նիկոլը մնաց տանը՝ սպասողական վիճակում, փշերի վրա նստած, բայց մի օր որոշեց, որ ինքն իրեն տոն կնվիրի: Այդ օրվանից սկսած նա ամեն օր երկու ժամ քայլում էր Երևանի փողոցներով, ի հեճուկս ընդդիմության առաջնորդների և ի սարսափ իշխանավորաց: Ճիշտ է, նրա բողոքի մասին միայն ինքը գիտեր և վերնաշապիկները խնամքով արդուկող ու կոստյումը խոզանակով մաքրող կինը, բայց դա չէր մտահոգում Նիկոլին: Բողոքի ակցիաները նա անում էր ինքն իր համար, որպեսզի պարապուրդի չմատնվի և մարտական վիճակում լինի, երբ դրա կարիքը լինի: Թեև սուտ կլինի, եթե ասենք, որ Նիկոլի ակցիաները բոլորովին աննկատ մնացին: Ճիշտ է, առաջատար լրատվամիջոցները, ընդդիմության ու իշխանության լիդերները չիմացան դրանց մասին, բայց նրա ամենօրյա պբոսանքները աննկատ չմնացին հարևանների ու թաղեցիների շրջանում: Նիկոլի ծանոթները, հարևանները հաճախ նրան տեսնում էին տարբեր փողոցներում, և երբ հարցնում էին, թե ինչ է անում այդտեղ, անվարան պատասխանում էր՝ քայլում եմ: Շուտով նրա մասին բամբասանքը տարածվեց, և թաղի երեխաները նրա անունը դրեցին Քայլող մարդ:

Ամեն առավոտ Քայլող մարդը սափրվում էր, հագնում իր վերնաշապիկն ու կոստյումը և դուրս էր գալիս քաղաքական պբոսանքի: Քայլող մարդուն մեկ տեսնում էին Խանջյան փողոցում վեր ու վար անելիս, մեկ՝ Սայաթ-Նովայում, մեկ՝ Մաշտոցի պողոտայում, մեկ էլ՝ Բաղրամյանը «շրջափակելիս»: Այո՛, այո՛, կիրակի օրերին Քայլող մարդը պարտադիր Բաղրամյան պողոտայով էր «պբոսնում»՝ խրոխտ վեր ու վար անելով նախագահի նստավայրի առջևով. այն, ինչ հապարները չէին կարողանում անել, Քայլող մարդն անում էր ամեն շաբաթ:

Բայց կարճ ժամանակ անց կենտրոնի լայնարձակ պողոտաները ձանձրացրեցին կենտրոնաբնակ Քայլող մարդուն, և նա սկսեց երկրորդական փողոցներով քայլել, իսկ այնուհետև անցավ այլ շրջաններ: Եվ այն, ինչ տեսավ այնտեղ Քայլող մարդը, ցնցեց նրա հոգին: Նա տեսավ Մասիվի հանրակացարանի թշվառությունը, տեսավ աղբ քրքրող մարդկանց, տեսավ փողոցներ, որ վաղուց ասֆալտի երես չեն տեսել, թաղերում պպված անգործ ջահելներ և ժամանակից շուտ ծերացած ահելներ տեսավ, «բենզին» սրսկվողների ու անտերության մատնված մանուկների, որ խաղում էին պայթած կոյուղու ջրերի մեջ: Թեև Քայլող մարդը արագ էր քայլում, բայց նրա աչքից ոչ մի բան չէր վրիպում, և նա ամեն օր ավելի ու ավելի դառնացած էր վերադառնում տուն՝ տեսածը խղճի վրա բեռ դարձրած: Արդեն վաղուց քաղաքական պբոսանքը տոն չէր նրա համար, բայց նա պարտաճանաչորեն շարունակում էր քայլել, որովհետև ինչ-որ մեկը պիտի կգար ու տեսներ պետության ցավերը, և այդ մեկը նա էր:

Երբ Նիկոլը սկսեց իր քայլարշավը, Քայլող մարդը սկսեց կրկնապատկված եռանդով չափչփել Երևանի փողոցները: Իսկ երբ քայլարշավը հասավ Երևան, նա միացավ քայլարշավին և առավոտից երեկո քայլում էր: Նա հատկապես սիրում էր ուսանողական խմբերի հետ քայլել, որովհետև այդ ժամանակ նա ասես երիտասարդանում ու առույգանում էր: «Քա՛յլ արա, մերժի՛ր սերժին»՝ գոռում էին երիտասարդները, և ինքը պատանեկան խանդավառությամբ ձայնակցում էր նրանց: Երբեմն նա երթի մեջ կանգնում էր, ու մինչ երիտասարդների հոսքը իրեն շրջանցելով առաջ էր շարժվում, Նիկոլը գորովանքով նայում էր նրանց: Նա, ախր, պատկերացնել չէր կարող, որ այսքան լավ երիտասարդներ կան երկրում: Այդ պահերին այնպիսի կզացողություն էր ունենում,

որ իր քայլելն արդեն ավելորդություն է, ձևական, արհեստական մի բան, որ այդ տոնն այլևս իրենը չէ, բայց նա հեռու էր վանում նման մտքերը ու շարունակում էր քայլել: Բայց եկավ մի պահ, երբ ամբողջ երկիրն արդեն քայլում ու փողոց էր փակում, և Նիկոլը դուրս չեկավ տանից: Նրա համար արդեն պարզ էր, որ հաղթանակը մոտ է և անխուսափելի: Ավելորդության և անպիտանելիության զգացողությունը այնքան էր խորացել, որ տանից դուրս գալն ու տոնին մասնակցելը երեսպաշտություն էին թվում: Այդ վիճակը տևեց մինչև Նիկոլ Փաշինյանի ձերբակալման օրը:

Հաջորդ օրը Նիկոլ պապը քայլում էր իսկայական երթի մեջ: Նի՛-կո՛լ, Նի՛-կո՛լ՝ վանկարկում էին երիտասարդները, և Նիկոլը վանկարկում էր նրանց հետ: Երթին զինվորականներ էին միացել, որոնց հրամանատարը մեքենային միացված բարձրախոսից խաղաղության կոչեր էր հնչեցնում: Երկար երթի մեջ մի քանի թմբկահարներ կային, որոնք ռիթմ էին հաղորդում քայլքին կամ կանգնում էին, և ժողովուրդը «հո՛ւ» էր գոռում ու ծափ պարկում, և այդ օրվա «հու»-երն ու ծափերը ավելի սպառնալից ու հուժկու էին, քան երբևէ:

Հանկարծ ժողովրդի մեջ խլրտոց ընկավ, երթը կանգնեց: Ամեն կողմից սկսեցին ասել, որ Նիկոլին բաց են թողել: Մի քանի վայրկյան անց Քայլող մարդը տեսավ, որ Նիկոլն արդեն խանդավառ ժողովրդի ձեռքերի վրա է, նրանց գլխավերևում: Հետո, երբ Հանրապետության հրապարակում Նիկոլն ասաց, որ Սերժ Սարգսյանը հրաժարական է տվել, երբ քաղաքում տոնախմբություն սկսվեց, երբ մարդիկ սկսեցին երգել, պարել և ուրախությունից արտասվել, ուրախության հուլմունքի հետ մեկտեղ, Նիկոլի հոգուն մի անհասկանալի ու անբացատրելի տխրություն իջավ: Նա փորձում էր վերլուծել, հասկանալ, թե ի՛նչն էր դրա պատճառը, մի՞թե այն, որ հաղթանակով տոնը ավարտվում է, մի՞թե իր պայքարը հանուն տոնի մասնակցության էր:

Մինչև ուշ գիշեր Քայլող մարդը չքնեց: Անկողնում պառկած, կնոջ անհամաչափ խռմփոցի ձայնի տակ նա շարունակ մտածում էր իրեն պատած տխրության մասին: Նա տխրում էր բոլոր այն մարդկանց համար, որ չհասցրեցին զգալ հաղթանակի բերկրանքը, և տխրում էր, որովհետև այն հավատն ու վստահությունը, որ կար միմյանց նկատմամբ, գուցե էլ չլինի:

Առավոտյան Քայլող մարդը արթնացավ հոդացավից: Նա, ձեռնափայտին հենված, տնքալով ու քթի տակ ինչ-որ բան փնթփնթալով, հասավ լուգարան:

– Ի՞նչ եղավ քեզ,– անհանգստացավ կինը:

– Չգիտեմ, երբ քայլելուդ նպատակը լուգարան հասնելն է, ծնկներդ չեն ծալվում,– բողոքեց Նիկոլ պապը:

Բյուրակն
Իշխանյան

Քաղաքը սիրուն է, երբ այնտեղ չես

Մայրս ուզում է, որ ծրագրավորող դառնամ, բայց ես մաթեմ չեմ սիրում: Հայրս ուզում է, որ բժշկական գնամ, որովհետև կենսաբից լավ եմ: Ես ոչ մի տեղ սովորել չեմ ուզում: Անհամբեր սպասում եմ, թե երբ պիտի ավարտեմ դպրոցը, կիթառս վերցնեմ ու աշխարհով մեկ շրջեմ: Մայրս ասում է՝ կիթառով փող չեմ աշխատի: Հայրս ասում է՝ սոված կմնամ: Իսկ ինձ համար միևնույն է. ավելի լավ է սոված մնամ, քան մի խումբ իմբեցիլների հետ մի քանի տարի շարունակ գլուխ դնեմ, հետո նոր կիթառս առնեմ ու փողոցներն ընկնեմ:

Ինձ միայն Աստղն է հասկանում: Աստղն իմ ամենամտերիմ ընկերուհին է: Մենք երբեմն կռվում ենք ու ամիսներով չենք խոսում: Բայց հիմնականում չենք կռվում ու մտերիմ ենք: Մենք տարբեր դպրոցներում ենք սովորում ու ծանոթացել ենք նկարչության խմբակում: Միասին սերիալների սցենարներ ենք գրում ու մաթեմի տնայիններ անում: Աստղը մաթեմից լավ է: Ես էլ եմ ուզում լավ լինել, բայց երբեք Աստղին չեմ հասնի: Աստղը մենակ մի մեծ թերություն ունի. Լանա Դել Ռեյ է լսում: Բայց, դե, շատ չեմ մեղադրում. Լանա Դել Ռեյը էդ Շռանից լավ է, իսկ իմ դասարանի աղջիկներն էդ Շռան են լսում ու նեղվում են, որ ես Շռան եմ ասում: Ես էլ ասում եմ՝ դե լավ, Շիրա:

Աստղն ասում է՝ եթե կիթառս վերցնեմ, աշխարհով շրջեմ, ինքն իմ հարվածահարը կլինի: Գիտեմ, որ չի անի: Աստղը ավագ քրոջս՝ Մայայի պես է. մյուս տարի գերազանցությամբ կավարտի դպրոցը, համալսարան կընդունվի, ընտիր գնահատականներով կավարտի, հետո կմեկնի Գերմանիա: Բայց Մայան Աստղի պես ինձ չի հասկանում: Ասում է՝ եթե կիթառով փողոց դուրս գամ, մաման ու պապան կնեղանան: Նեղանում են՝ նեղանան, ի՞նձ ինչ: Իմ կյանքը չի՞: Ես եմ ուզում որոշել, թե ո՛նց ապրեմ:

Մայան եղել է օրինակելի երեխան, որին բոլորը պետք է նմանվեին: Իսկ ես դեռ մանկապարտեզից ոչ մի բանի պիտանի չէի: Դաստիարակներն անընդհատ բողոքում էին, որ ինձ աղջկա պես չեմ պահում. սրա-նրա մազերը քաշում եմ, ճաշի մեջ ավազ լցնում, մատիտները թափռտում, ցերեկները քնելու փոխարեն թաքնվում մահճակալի տակ: Առաջին դասարանից սկսած հենց տետրերիս մեջ նկարում եմ, դասի ժամանակ երգում եմ, տնայինս չեմ անում, դասից ուշանում եմ, դասատուներս Մայային են հիշում: Մայան ամբողջ դպրոցի, հետո նաև համալսարանի հպարտությունն էր: Հիմա էլ Գերմանիայի հպարտությունն է: Ամեն օր Ֆեյսբուքով գերմաներեն ստատուսներ է դնում, ամուսնացել, ազգանունը դարձրել է Հորն, իր համար երջանիկ ապրում է: Բայց, դե, չեմ դժգոհում. ժամանակ առ ժամանակ ինձ վինիլներ է ուղարկում: Վինիլների ուրիշ մատակարար չունեմ:

– Քեզնից մարդ դուրս չի գա,– ինձ ասում է մայրս:

– Աղջիկդ հեղափոխական ա դառնալու,– ասում է պապիկս:

Ես չգիտեմ՝ ինձնից մարդ դուրս եկա՞վ, թե՞ ոչ, բայց հեղափոխական կարծես դարձա: Դարձա իմ կամքից անկախ, առանց ուզենալու, բայց նաև առանց չուզենալու: Դարձա, որովհետև ուրիշ ոչինչ չէի կարող դառնալ, որովհետև պարզապես ուզում էի կիթառը ձեռքիս փողոց դուրս գալ ու չմտածել, որ հաջորդ օրը պիտի դպրոց գնամ:

Սովորականի պես դասից ուշացա: Առաջին ժամը հայոց էր: Ընկեր Գրիգորյանը ներս չթողեց:

– Միայն ծնողիդ հետ,– ասաց:

Իմ չար բախտից է, որ շաբաթը չորս անգամ առաջին ժամը ընկեր Գրիգորյանի մոտ ենք դասի: Շաբաթը չորս օր ընկեր Գրիգորյանի դասից ուշանում եմ: Ուշանալու հատուկ պատճառ չունեմ: Պարզապես քնած եմ մնում, իսկ ես սիրում եմ քնել, չեմ սիրում դպրոց գնալ: Ընկեր Գրիգորյանն էլ չի սիրում ինձ ու անընդհատ նվաստացնում է: Եթե նույնիսկ դասից չուշանամ, կասի՝ ուղի՛ղ նստիր, կողքինիդ հետ մի՛ խոսիր, մի՛ արտագրիր, հագո՛ւստդ ուղղիր, հեռախոսով մի՛ խաղա: Իսկ եթե ուրիշ առիթ չի գտնում, ուղղակի ցածր գնահատական է դնում, որ սիրտը հովանա:

Ինձ դասարան չթողնելը մեծ երջանկություն էր, բայց մյուս կողմից էլ մտածում էի՝ կարող էի ևս կես ժամ քնել ու միանգամից երկրորդ ժամից գալ:

Մինչ միջանցքում կանգնած կողմնորոշվում էի՝ ինչ անեմ մինչև հաջորդ դասը, ուսմասվարը դիմացս դուրս եկավ ու հարցրեց, թե ինչո՛ւ դասարանում չեմ:

– Ուշացել էի,– ասացի,– ընկեր Գրիգորյանը ներս չթողեց:

– Ամո՛թ քեզ,– ասաց,– հե՛չ Մայային նման չես:

Ուսմասվարը թևիցս բռնեց, հետ տարավ դասարան.

– Ընկե՛ր Գրիգորյան, թող էս դասին նստի, մյուս անգամ ծնողի հետ կներկայանա:

Ընկեր Գրիգորյանը ոչինչ չասաց, բայց ավելի լավ էր ասեր, քան էդպես ոտքից գլուխ ինձ չափեր՝ ասես ջինսիս վրա ծակեր փնտրելով, որ հիմա էլ էդ պատճառաբանությամբ դասարան չթողնի: Բարեբախտաբար, այդ օրը ջինսիս վրա ծակ չկար: Անձայն մոտեցա վերջին շարքի ազատ նստարանին:

Այդ դասին ընկեր Գրիգորյանը ստուգողական շարադրության սխալների ուղղում էր անում: Սովորաբար հավաքագրում է հաճախակի հանդիպող սխալներն ու բացատրում դրանք: Այս անգամ էլ էր նույնն անում, բայց որոշեց իմ շարադրությանն առանձին անդրադառնալ:

Վերնագիրն էր «Իմ հայրենիքը»: Կարծում էի՝ ահագին լավ եմ գրել, ու վերջապես ուզում է գովասանքի խոսքեր շռայլել: Բայց կարդալուց առաջ գրատախտակին մեծ-մեծ տառերով գրեց. «Ինչպես շարադրություն չգրել»:

– «Ես հայրենիք չունեմ»,– սկսեց կարդալ,– դժբա՜խտ, ողորմելի՜ արարած: Ինչպե՞ս կարելի է հայրենիք չունենալ: Ես ողբում եմ քո գոյությունը... «Ինձ ասում են, որ իմ հայրենիքը Հայաստանն է,– շարունակեց,– բայց ես չեմ ուզում Հայաստանի պես հայրենիք ունենալ, որտեղ ընտրություններն անընդհատ կեղծվում են, կաշառակերությունը համատարած է, իսկ դպրոցներում դասերը՝ ձանձրալի»... Դո՛ւ, ապիկա՛ր սրիկա, դու արժանի՛ չես Հայաստանի Հանրապետության քաղաքացի կոչվելու: Քեզ նմանները պետք է ժամ առաջ դուրս վռնդվեն մեր անեղծ հողից: Տեսե՛ք, տեսե՛ք, թե ինչեր է գրել. «Ասում են՝ հայրենիքը պետք է սիրել ու կառուցել: Բայց ինչպե՞ս կառուցել այն, երբ ընտրություններ կեղծողները ու կաշառքով գործարք անողները հենց այն նույն մարդիկ են, որոնք հայրենիքը սիրում են ու հանուն դրա պատրաստ են մեռնելու: Ես հանուն Հայաստանի չէի մեռնի, ոչ էլ կիրիվանդանայի կամ նյարդերս կքայքայեի: Երբ ավարտեմ դպրոցը, մեկնելու եմ Զիմբաբվե. գուցե դա է իմ հայրենիքը»... Զիմբաբվե՞: Ուրեմն մեր բազմամյա սուրբ Հայաստան երկիրը Զիմբաբվեի հե՞տ ես համեմատում: Եվ դու ամոթ ունե՞ս: Ինչպե՞ս են նման մտքեր ծնվում քո գարշ ուղեղում: Եվ դու Մայայի քո՞յր ես կոչվում: Գիտե՞ս Մայան ի՜նչ գեղեցիկ շարադրություններ էր գրում: Հաջորդ դասին ծնողիդ հետ կներկայանաս:

Կոկորդս սեղմվում էր, քիչ էր մնում՝ լացեի: Հազիվ ինքս ինձ հավաքելով մի կերպ արտաբերեցի.

– Մայայից ի՜նչ հայրենասեր: Սկի Հայաստանի քաղաքացի չի:

– Լռի՛ր, անամո՛թ: Չհամարձակվե՛ս առանց ձեռք բարձրացնելու որևէ բառ ասել:

– Լավ,– ասացի քթիս տակ ու գլուխս կախեցի՝ սպասելով, որ շուտով ընկեր Գրիգորյանը դասի թեման կփոխի: Ու մինչ կշրջվեր, որ գրատախտակին նոր բան գրի, պայուսակիցս հանեցի նվագարկիչս, մազերս արձակեցի ու այնպես լցրեցի դեմքիս, որ ականջներս ծածկվեն: Ականջակալներս մեջքիս կողմից հագա ու միացրեցի Քորթնի Բարնեթի նոր երգը: Նման պահերին միշտ երաժշտությունն էր օգնության գալիս: Եթե երգ չլսեի, կլացեի: «Գլուխդ թրաշիր, որ կզաս՝ ինչպես է»,– երգում էր: Մտածեցի՝ գլուխս թրաշեմ,

բայց երևի մամաս կջղայնանար ու կասեր, որ Մայան էդպիսի բան չէր անի, ընկեր Գրիգորյանն էլ նոր պատճառ կունենար ինձ դասի չթողնելու:

Զանգը տվեց: Ընկեր Գրիգորյանը դասարանից դուրս եկավ: Համադասարանցիներս ոտքի կանգնեցին, ու սկսվեց դասամիջոցի քաոսը: Ես նստած մնացի: Հաջորդ դասը կենսաբ էր: Դասս չէի սովորել: Մտածեցի՝ բացեմ կարդամ, բայց հենց գիրքը հանեցի պայուսակիցս, մի հսկայական ափ իջավ ուղիղ նստարանիս, գիրքս վերցրեց ու շպրտեց դասարանի մյուս ծայրը:

– Հլը էս կրծիկին տեսեք,– մեր դասարանի Արսենն էր,– մենք էդքան չկանք, դասամիջոցին կարդում ա:

Համադասարանցիներս ինձ չեն սիրում, բայց ամենաշատն Արսենը չի սիրում, որովհետև մի անգամ ձեռ էր գցել, շուռ էի եկել, ապտակել էի: Ճիշտ է՝ ծնող կանչեցին ու բացատրեցին, որ աղջիկը պիտի իրեն համեստ պահի, բայց Արսենը մինչև հիմա ինձ վրա մուռ ունի:

Կենսաբի դասագրքով դասարանի մյուս ծայրում տղաներն արդեն սկսել էին ֆուտբոլ խաղալ: Աղջիկները մի անկյունում հավաքված փսփսում էին: Երբ տեսան, որ գիրքս ֆուտբոլի գնդակ է դարձել, սկսեցին ծիծաղել: Բայց Մարիամն ավելի բարի գտնվեց ու հայտարարեց.

– Տվե՛ք, տվե՛ք, թող գիրքը կարդա, թե չէ սաղ օրը ոտերը տնկած Քորթնի Բորաթ ա լսում:

– Բարնեթ,– ուղղեցի:

– Թե չէ դրանից պակաս դժժան ա դառնում,– ասաց Մարիամը, ու աղջիկները ծիծաղեցին:

Դասարանցիներիս երեսը տեսնելու, դեմքներին նայելու ցանկություն ընդհանրապես չունեի ու անհամբեր սպասում էի, թե երբ է տուն գնալու ժամը գալու: Վերցրի կենսաբի գիրքս, գլուխս թաղեցի մեջը մինչև դասամիջոցի ավարտը, մինչև կենսաբի դասի ավարտը, մինչև հաջորդ բոլոր դասերի ավարտը, ու ոչ մի բառ չասացի:

Դասերից հետո գնացի նկարչության: Էնտեղ իմացա, որ Սերժ Սարգսյանը վարչապետ է դարձել: Ինձ համար մեկ էր. ես քաղաքականությամբ չէի հետաքրքրվում: Տանը, երբ մեծերը սկսում են քաղաքական բանավեճերը, ուզում եմ ականջներս փակել ու անհետանալ: Ահավոր անդուր մի բան է, երբ սկսում են ինձ անծանոթ անուններ տալ ու գոռգոռալ՝ փորձելով դիմացինին համոզել, որ այսինչյան այնինչը սրիկա է կամ լավ մարդ:

Բայց նկարչության խմբակում ուրիշ էր: Վահագը ոգևորված վիճում էր Աստղի հետ, թե՝ պետք է փողոց դուրս գալ: Աստղն ասում էր՝ իմաստ չկա: Ես կարծիք չունեի, բայց Վահագի կողմը բռնեցի, որովհետև սիրում էի Վահագին, ինքը ինձ՝ չգիտեմ: Մտածում էի՝ եթե հետը համաձայն լինեմ, դուրը կգամ:

– Փողոց դուրս գանք,– ասացի,– ես էլ կիթառս կբերեմ:

Երեկոյան Ֆեյսբուքը ողողված էր կանացի ստատուսներով ու տեսանյութերով: Մայան էլ էր անխնա ինչ-որ նյութերով կիսվում ու գերմաներեն ստատուսներ գրում: Ֆեյսբուքը

փակեցի, իմ վինիլների հավաքածուից ընտրեցի իներից մեկին՝ Բոբ Դիլանին։

* * *

Մեր տնից դպրոց երթուղայինով կես ժամ է։ Դասերը սկսվելուց քառասունհինգ րոպե առաջ տնից դուրս եկա՝ առաջին անգամ փորձելով օրինակելի, իսկ ավելի ճիշտ՝ աննկատելի աշակերտուհի լինել։ Նստեցի երթուղային, որը սովորականի պես լիքն էր, բայց դասից ուշացա։

Մայրս նախորդ օրը եկել էր դպրոց ու ընկեր Գրիգորյանին խոստացել, որ այլևս դասից չեմ ուշանա, իսկ ինձ խոստացել էր, որ եթե ևս մեկ անգամ ծնող կանչեն, նվագարկիչս կվերցնի ինձնից ու այլևս չի տա։

Ճանապարհին Կորյունի փողոցը ցուցարարները փակել էին։ Երթուղայինում ուղևորները փնթփնթում էին, թե՝ ժամանակ գտան, գործից-դասից ուշանում ենք։ Ստիպված էի իջնել ու մնացած մասը ոտքով գնալ՝ հոգեբանորեն պատրաստվելով ընկեր Գրիգորյանի հերթական հարձակմանն ու առանց նվագարկչի ժամանակաշրջանին։ Ինքս ինձ մխիթարում էի, որ Յություբ կօգտագործեմ։ Բայց երբ հասա դպրոց, հասկացա, որ գոնե այս անգամ լավ եմ պրծել։ Համադասարանցիներս հավաքված էին դպրոցի մուտքի մոտ ու փորձում էին դուրս գալ։ Պահակը չէր թողնում։ Իսկ ընկեր Գրիգորյանը գոռգոռում էր, թե՝ հենց հիմա պիտի վերադառնանք դասարան, քաղաքականությունը մեր խելքի բանը չէ, թե՝ մեր գործը մենակ լավ սովորելն է, թե՝ մեր այս վարքով վտանգում ենք սահմանին կանգնած մեր եղբայրների կյանքը և այլն, և այլն։

Բաց դռան ճեղքից աննկատ ներս սողացի ու սկսեցի հետևել բանակցություններին։ Մարիամը պահակին բացատրում էր, որ այս պահին կարևոր է, որ փողոցում լինենք, որ դասերը վաղն էլ կանենք, իսկ պահակը ռոբոտի պես կրկնում էր.

– Տնօրենը կարգադրել ա, տնօրենը կարգադրել ա, տնօրենը կարգադրել ա։

– Ես հենց հիմա կմտնեմ տնօրենի մոտ, և դուք կհասկանաք, թե ինչ է նշանակում իմ դասից դուրս գալ,– ընկեր Գրիգորյանը շարժվեց տնօրենի կաբինետի ուղղությամբ։

– Էրեխե՜ք, պատուհանը,– շշնջացի այնպես, որ միայն կողքիս կանգնածները լսեն, իսկ պահակին չհասնի։ Փսփսոցները տարածվեցին, ու հանկարծ բոլորս խելոքացած վերադարձանք դասարան։

Մեր դասարանը երկրորդ հարկում է։ Դրա համար ճաղավանդակ չկա։ Բայց դրսից աստիճաններ կան դեպի կողքի բակը բարձրացող, ու պատուհաններից մեկը հենց այդ աստիճանների վրա է բացվում։ Արդյունքում՝ չափից դուրս բարձր է առաջին հարկ կոչվելու համար, բայց բավականաչափ ցածր, որ պատուհանից դուրս ցատկելու դեպքում ողջ-առողջ մնաս։

– Արա՛գ, քանի Գրիգորյանը չի էկել։

Բացեցինք պատուհանը։ Սկզբում Արսենը թռավ։ Հետո մեր պայուսակները շպրտեցինք։ Հաջորդը մնացած տղաներն էին։ Հետո Արսենն օգնեց բոլոր աղջիկներին։ Վերջում մնացի ես։

– Ճանապա՛րհ տվեք,– ասացի: Արսենը կանգնած էր ուղիղ պատուհանի տակ, որ ինձ էլ օգնի:

– Չես կարա, կընկնես,– ասաց Մարիամը:

– Ճանապա՛րհ,– կրկնեցի: Բոլորը մի կողմ քաշվեցին: Ցատկեցի ու այդ պահին լսեցի դասարանի՝ բացվող դռան ձայնը:

– Էկան,– ասացի,– թռանք, քանի չեն ֆայմել:

Արագ-արագ վերցրինք մեր պայուսակները ու վազեցինք փողոց, վազեցինք դեպի ազատություն, վազեցինք հեղափոխություն անելու:

Միացանք մի երթի ու քայլեցինք քաղաքով մեկ: Համադասարանցիներս ինչ-որ բան էին վանկարկում, բայց ես չէի լսում: Ականջակալներս միացրել էի ու Քորթնի Բարնեթ լսելով ու երգելով առաջ էի գնում: Հավես էր փողոցի մեջտեղով քայլելը, երբ մեքենաներ չկային, ու ոչինչ չէր խանգարում:

Ասում էին՝ երթից հետո հանրահավաք էր լինելու, բայց ես դրա հավեսը չունեի: Հենց հասանք հրապարակ, առանց որևէ մեկի որևէ բան ասելու Աբովյանով դուրս եկա ու Բուլվանդով շարժվեցի դեպի Մաշտոցի պողոտա: Ու քայլեցի Մաշտոցով, քայլեցի այնքան, մինչև Մատենադարան հասա: Այնտեղից թեքվեցի դեպի Կորյունի փողոց, հետո Աբովյանով իջա մինչև Սայաթ-Նովա, հետո ուղիղ գնացի դեպի Բաղրամյան ու քայլեցի մինչև «Բարեկամություն» մետրո: Քայլեցի այնքան, մինչև այլևս չէի կարող քայլել, մինչև նվագարկչիս մարտկոցը նստեց: Ու այնտեղից միայն քայլեցի դեպի մեր տուն:

Տուն մտնելուն պես տեսա, որ երեսունմեկ հատ բաց թողնված կանգ կար, ու բոլորը մորիցս էին: Հինգ հատ էլ էսէմէս էր գրել. «Ո՞ւր ես, պանգում եմ, չես վերցնում», «Հո երթերի մե՞ջ չես: Վտանգավոր ա, արի տուն», «Ո՞ւր ես», «Ո՞ւր ես», «Մի բան գրի»:

– Մա՛մ:

Մայրս ջղայնացած դուրս եկավ խոհանոցից ու ասաց, որ քիչ էր մնում՝ ոստիկանություն կանգեր, ասաց, որ չպիտի որևէ տեսակի երթի կամ հանրահավաքի մասնակցեմ ու որ դասերից հետո պիտի ուղիղ տուն գամ:

– Փողոցները փակ էին,– ասացի,– ես մեղավոր չեմ, որ ինձ հեռու դպրոց եք ուղարկում:

Մտա սենյակս, բացեցի Ֆեյսբուքը: Ստատուսներ կարդացի, թե՝ այստեղայնտեղ ընկերներիս բերման են ենթարկել: Իմ բախտը բերել էր, որովհետև որտեղով որ քայլում էինք, ոստիկաններ չկային: Կամ էլ կային, բայց մեկ բերման ենթարկելու հավես չունեին: Մեյլս բացեցի: Ինտերնետային ընկերներիցս մեկը Քորթնի Բարնեթի նոր՝ դեռևս չթողարկված ալբոմը ներբեռնելու հղում էր ուղարկել: «Մարդու չասես»,– գրել էր:

Ներբեռնեցի ալբոմը, լցրեցի նվագարկչիս մեջ, փակեցի Ֆեյսբուքն իր բոլոր հեղափոխություններով ու քաղաքական թոհուբոհով, լույսերն անջատեցի ու պառկեցի գետնին. Քորթնի Բարնեթի նոր ալբոմն ունեի, ու աշխարհում այլևս ոչինչ կարևոր չէր:

* * *

Շաբաթ-կիրակի դաս չկար, ու երթերին մասնակցելն ավելի հեշտ էր դարձել: Կիթառս հետս տանում էի, թեև նվագելու առիթ չէր լինում: Երթերին Վահագին ու Աստղի հետ էի գնում: Դրա համար ականջակալ դնելու կարիք չկար. Վահագի ու Աստղի հետ երբեք չեմ ձանձրանում:

Ճամփին պարբերաբար կանգնում էի, նկարում Վահագին ու Աստղին ու մյուսներին. Մայան խնդրել էր, որ նկարներ ուղարկեմ: Մայրս րոպեն մեկ գրում էր ինձ, ես էլ անմիջապես պատասխանում էի, որ լավ ենք, որ ոստիկանություն չկանգեր:

Բայց եթե կանգեր ոստիկանություն, տեսնես վերցնող կլինե՞ր: Քաղաքում ինչքան ոստիկան կար-չկար, փողոցներում էր, ու եթե դիմացներս չփակեին, մեկ մեքենաները չլցնեին, բռնություն չգործադրեին, երևի կմտածեի, թե ցուցարարներ են: Դե ի՞նչ իմանաս, ամեն գույնի ու ձևի մարդիկ կային փողոցներում:

– Որ Սերժը հրաժարական տա, քաչալանալու եմ,– ասացի Աստղին:

– Գժվե՞լ ես,– ասաց:

– Չեմ գժվել: Հրաժարական չի տա,– ասացի:

Վահագը լսում էր մեր խոսակցությունը:

– Տենց բան չանես,– ասաց:

Ու մինչ կպատասխանեի, մեկ էլ զգացի՝ բոլորս իրար ենք սեղմվում: Ոստիկաններն առաջին շարքերից մարդկանց հավաքում էին ու առաջ գալիս՝ այդպիսով փոքրացնելով մեր տարածքը: Վահագը պինդ բռնեց ձեռքս:

– Գնա՛ տուն,– ասաց,– վտանգավոր ա:

– Արի միասին գնանք,– ասացի:

– Չէ՛, ես մնում եմ:

– Քո համար վտանգավոր չի՞:

– Դու աղջիկ ես,– ասաց:

– Պա՛հ:

Ու դուրս եկա շարքերից: Ինձ այլևս Սերժի հրաժարական պետք չէր քաչալանալու համար: Մտա առաջին պատահած վարսավիրանոցը ու խնդրեցի գլուխս սափրել:

Երբ վարսավիրանոցից դուրս եկա, Նիկոլ Փաշինյանին ձերբակալել էին: Փաստորեն, շարժումը մնացել էր առանց առաջնորդի, իսկ ես՝ առանց մազերի:

* * *

Հրաժարականի ժամանակ տանն էի: Մայրս դուռը կողպել էր վրաս ու չէր թողել, որ տնից դուրս գամ: Չգիտեմ՝ ինձ համա՞ր էր անհանգստանում, թե՞ ջղայնացել էր, որ քաչալացել էի: Մի քիչ հիստերիկացա, լացեցի, հետո մտա սենյակս ու որոշեցի ամբողջ օրը ոչ մեկի

հետ չխոսել: Ու անգամ հրաժարականից հետո, երբ քաղաքը թնդում էր, ու բոլորը փողոցում էին, երբ անգամ մայրս ու մորաքույրս էին փողոց դուրս եկել, ես մնացել էի իմ սենյակում ու մտածում էի, թե այդ հրաժարականն ի՞նչ էր նշանակում ինձ համար:

Մենք շատ վատ չենք ապրում: Ասենք՝ Մարիամի պես վերջին մոդելի հեռախոս չունեմ: Չունենք նաև սեփական ավտոմեքենա, իսկ ամռանը հազիվ մի քանի օրով Բաթում ենք գնում, բայց սոված երբեք չենք մնացել, հագնելիք էլ ունենք: Դրա համար ինչքան էլ ընկեր Գրիգորյանը դռնեդուռ ընկներ ու մերոնց փորձեր համոզել, որ ՀՀԿ-ին կամ Սերժին ընտրեն, հայրս շատ ուղիղ ու չոր կվռնդեր նրան՝ ասելով, որ եթե շարունակի, ոստիկանություն կկանչի:

Մերոնք միշտ ընդդիմությանն են ձայն տալիս, բայց հայրս ասում է՝ մեկ ա, սաղ նույնն են: Երբ սկսվեց հեղափոխությունը, ու երբ չէի ուզում փողոցում լինել, մանտրայի պես կրկնում էի՝ «մեկ ա, սաղ նույնն են»: Եթե Մարիամը, Արսենը ու իրենց նման մնացածներն են հեղափոխականները, ինձ պե՞տք է այն: Ես չէի ուզում նրանց հետ նույն դասարանում լինել ու չէի ուզում նրանց հետ հեղափոխություն անել: Ես վստահ էի, որ նույնիսկ հեղափոխությունից հետո նրանք շարունակելու էին ծաղրել ինձ ու իմ կիթառը:

«Չե՞ս գալիս,– գրեց Աստղը,– Վահագն էլ ա ստեղ: Սենց քեֆ-ուրախություն չեմ տեսել»: Ու ֆոտո ուղարկեց:

Վահագի հետ այն օրվանից հետո չէի խոսել:

«Տրամ չունեմ»,– պատասխանեցի:

«Ի՞նչ ա էղել»:

«Եսի՞մ: Առավոտը մամաս դուռը փակել էր վրաս, իսկ հիմա ես չեմ ուզում դուրս գալ»:

Հետո սելֆի արեցի, ուղարկեցի:

«Տենց ասա,– գրեց Աստղը,– գալիս եմ»:

Կես ժամ անց Աստղը մեր տանն էր:

Ես ու Աստղն ուրիշ ընկերուհիների նման չենք. իրար տեսնելիս երբեք իրար չենք պաչում ու չենք գրկում: Բայց էդ օրը հենց ներս մտավ Աստղը, պինդ գրկեցի նրան: Ու երկուսով լացեցինք, Աստղը՝ ուրախությունից, ես՝ չգիտեմ ինչից:

– Դու ինձնից հեղափոխական ես,– ասաց,– խոստումդ պահեցիր:

Չասացի, որ նախորդ օրն էի քաչալացել՝ առանց գաղափար ունենալու, թե ինչ է տեղի ունենալու հաջորդ օրը: Չասացի, որ երբ տուն հասա ու առաջին անգամ առանց կողմնակի ներկայության հայելու մեջ նայեցի, մի կուշտ լացեցի. ահավոր գեշացել էի ու ամիսներ շարունակ էդպես գեշ էի մնալու:

– Կարո՞ղ ա մենք իսկականից մեր երազած երկրում ենք ապրելու,– ասաց:

– Չէ՛,– ասացի,– սա իմ երազած երկիրը չի կարա լինի:

* * *

Հետո եկավ «տոտալ գործադուլի ու դասադուլի» օրը: Փողոց դուրս գալն այլևս վտանգավոր չէր: Ոստիկանները մեկ չէին անհանգստացնում: Դասարանցիներով դպրոցի մոտ հավաքվել, դասից թռել ու փակել էինք Սայաթ-Նովան: Նստել էինք Սայաթ-Նովա-Աբովյան խաչմերուկում: Այդ օրը կիթառս հետս էի վերցրել:

– Մի բան նվագի, լսենք,– ասում էին կողքից:

Վահագն անցնում էր Սայաթ-Նովայով, ծանոթ մարդկանց փնտրում, որ միանա: Տեսավ ինձ դասարանցիներիս հետ, մոտեցավ մեկ: Սափրած գլուխս կարծես չնկատեց. գլխարկով էի: Որոշեցի նրան պարմացնել ու սկսեցի Քորթնի Բարնեթի «Անանուն, անվերջը» նվագել: Բայց առաջին մի քանի բառից հետո Մարիամը սկսեց ցուցադրաբար հորանջել, իսկ հետո էլ թե՝ էս ինչ անկապ բաներ ես նվագում, քաչալացել ես, չեղած ճաշակդ էլ մազերիդ հետ թրաշել: Վահագը կիթառը ձեռքիցս վերցրեց: Մի երկու բան «Բիթլզից» նվագեց ու երգեց: Ես էլ քթիս տակ ձայնակցում էի: Հետո աղջիկները սկսեցին ուրիշ բաներ պատվիրել, ու Վահագն անցավ ռավմահայրենասիրական երգերի, որոնցից ոչ մեկի բառերը չգիտեի ու չէի էլ ուզում իմանալ: Բոլորը միասին երգում էին, բացի ինձնից, իսկ Վահագն իմ կիթառն էր նվագում: Էդ պահին ուզեցի լացել: Ինձ, իմ լսած երգերը, իմ հետաքրքրությունները ոչ մեկի պետքը չէին: Անգամ Վահագին Քորթնի Բարնեթի երգերն առանձնապես դուր չէին եկել: «Կնիկական ա»,– ասել էր:

«Գալի՞ս ես գնանք Կասկադ»,– գրեց Աստղը:

«Փողոց ենք փակել,– պատասխանեցի,– ո՞ւր ես»:

«Մենք էլ ենք փողոց փակել,– գրեց,– լոքշ ա, հավես չկա ստեղ լռվելու: Արի թռնենք Կասկադ»:

«Կասկադում ի՞նչ կա»:

«Բան չէ: Ու էդ ա կայֆը»:

«Գալիս եմ,– գրեցի,– 10 րոպեից Թամանյանի մոտ»:

Չսպասեցի, որ Վահագը հաջորդ երգը վերջացնի: Կիթառը ձեռքից խլեցի, դրեցի պատյանի մեջ ու հայտարարեցի.

– Ես գնում եմ:

– Ո՞նց, բա փողո՞ցը, բա հեղափոխությո՞ւնը,– ասաց Մարիամը:

– Գնում եմ ուրիշ փողոց փակելու:

Կիթառը գցեցի ուսիս ու քայլեցի դեպի Կասկադ:

Կասկադում մարդ չկար: Մենակ Աստղն էր Թամանյանի արձանի տակ նստած: Պահակներն էլ չէին երևում, թե չէ հաստատ Աստղին արդեն հանել էին էնտեղից:

– Լավ ա էկար,– ասաց:

– Գնա՞նք փողոց փակելու,– առաջարկեցի:

– Հավե՞ս ունես: Տեսե՞լ ես ովքեր են փողոցներում:

– Բա ի՞նչ անենք:

– Արի Կասկադ բարձրանանք... յա, կիթառո՞վ ես: Կտա՞ս մի քիչ նվագեմ:

– Եթե Լանա Դել Ռեյ չնվագես, անպայման:

Թամանյանի արձանից հեռացանք, տեղավորվեցինք նստարաններից մեկին, ու Աստղը սկսեց ինձ անծանոթ ինչ-որ երգ նվագել:

– Էս ո՞վ ա,– հարցրի:

– Ես եմ գրել,– ասաց,– էրեկ:

Զղայնացա, բայց ոչինչ չասացի: Երգ գրելը մինչև էդ պահն իմ մենաշնորհն էր: Երբ ինձ ասում էին, որ դասերս անեմ, որ հետո համալսարան ընդունվեմ, մարդ դառնամ, ընդդիմանում էի: Ասում էի՝ համալսարան չեմ գնալու, Քորթնի Բարնեթի պես երգչուհի եմ դառնալու ու աշխարհով մեկ պտտվեմ: Աստղը գերազանցիկն էր, ես՝ երաժիշտը: Ու հանկարծ Աստղն էլ է սկսել երգեր գրել:

– Դու էդքան անգլերեն գիտե՞ս:

– Չէ՛, մենակ դու գիտես:

– Բառերը տուր, ես էլ հետդ երգեմ:

Ուղարկեց հեռախոսով, ու ձայնակցեցի Աստղին: Էդ պահին որտեղից որտեղ պահակներից մեկը հայտնվեց.

– Աղջիկնե՛ր,ստեղ երգել չի կարելի:

– Դե լավ, մեկ ա մարդ չկա,– ասացի:

– Ասում եմ՝ չի կարելի:

– Հեղափոխություն ա էղել, կարելի ա,– ասացի:

Ժպիտը հազիվ զսպելով ևս մեկ անգամ կրկնեց, թե չի կարելի:

Հավաքեցինք կիթառը ու միասին Կասկադ բարձրացանք՝ հուսալով հեղափոխական Երևանը վերևից տեսնել: Բայց ոչինչ չէր երևում, բացի նրանից, որ որոշ փողոցներում երթևեկություն չկար:

– Նիկոլը վարչապետ կդառնա՞,– մեկ էլ հարցրեց Աստղը:

– Եսի՞մ,– ասացի,– ինձ մեկ ա: Ես գնալու եմ Հայաստանից:

Երեկոյան սենյակումս փակված նվագում էի: Մեկ էլ Աստղի երգը հիշեցի: Բառերը բացեցի, նայեցի: Ախր, Աստղն անգլերեն շատ վատ գիտի, իր տնայինները միշտ ես եմ օգնում, ո՞նց էր երգ գրել: Վերցրի հեռախոսս, նայեցի ուղարկած տեքստին: Բառերը գուգլեցի: Բերեց հեղինակին. Սյուզան Վեգա, երգի անունը՝ «Միայնությունը կանգնած»: Կյանքում էս անունը չէի լսել: Գտա ամբողջ ալբոմը, քաշեցի, լսեցի: «Միայնությունը կանգնած» երգը մի անգամ էլ առանձին լսեցի: Ահավոր լավն էր: Իսկ ես կարծում էի՝ բոլոր հին ու նոր լավ երաժիշտներին գիտեի:

Երգը մի քանի անգամ էլ լսեցի ու սկսեցի կիթառով նվագել սովորել: Մյուս անգամ Աստղին տեսնելիս կնվագեմ, միասին կերգենք:

* * *

Սպիտակ հագուստ: Զգվում եմ սպիտակից: Զգեստապահարանումս միայն մի սպիտակ շապիկ ունեմ, վրան գրած՝ NOBODY REALLY CARES IF YOU DON T GO TO THE PARTY: Մայան է ուղարկել իմ թախանձագին խնդրանքներից հետո: Քաշեցի հագս, ծղոտե գլխարկ դրեցի, վերցրի կիթառս, դուրս եկա ու գնացի հրապարակ, որտեղ Աստղն ինձ արդեն սպասում էր:

– Էս ի՞նչ ես հագել,– հարցրեց:

– Իմ սիրած մայկան:

Աստղն իր դպրոցական վերնաշապիկով էր:

Էկրանից հետևեցինք քվեարկությանը ու բոլորի հետ ցնծացինք, երբ տեսանք արդյունքները: Ես չգիտեի՝ ուրախանայի՞, թե՞ տխրեի, որովհետև Նիկոլ Փաշինյանին երբեք չեմ սիրել, բայց հայրս ասում է՝ քաղաքականությունը չպետք է անձերով լինի: Դրա համար փորձում էի հեռանալ նրա անձից ու ընկալել հեղափոխությունը որպես քաղաքական երևույթ:

Բայց կիթառս դեռ ուսիս էր, ու չէի հասցրել բացել:

– Գնա՞նք Սունդուկյան,– առաջարկեցի:

– Սպասի, Նիկոլը գալիս ա,– ասաց Աստղը:

– Նիկոլն ինչների՞ս ա,– պատասխանեցի,– ես նվագել եմ ուզում: Գնում եմ, երբ հավես ունենաս, միացի:

Գնացի Սունդուկյանի այգի ու նստեցի կլորի մեջ: Մարդ չկար: Անգամ սիրահար վույգերն էին անհետացել. ավելի կարևոր անելիք ունեին: Շուրջս աղմուկ էր, քեֆ-ուրախության ձայներ էին լսվում: Որ կողմնակի ձայները չխանգարեն, ականջակալներս դրեցի ու սկսեցի նվագել մայկայիս անունով երգը: Ես իմ ձայնը չէի լսում, բայց Քորթնիին կուգահեռ երգում էի:

Չգիտեմ՝ քանի անգամ նույն երգը նվագեցի: Երևի քսան, երևի երեսուն: Ու հերթական կրկներգին հասնելիս նկատեցի, որ մեջքիս հետևում ինչ-որ մեկը կանգնած է: Շրջվեցի: Աստղն էր: Հանեցի ականջակալներս ու հարցրի.

– Վաղո՞ւց ես ստեղ:

– Արդեն մի չորս անգամ կլինի, ինչ էս երգը լսում եմ: Ուրիշ բան չե՞ս նվագի:

– Կնվագեմ,– ասացի,– քո երգը սովորել եմ: Արի միասին երգենք:

Ու սկսեցի նվագել Սյուզան Վեգայի «Միայնությունը կանգնածը», ու միասին երգեցինք:

Աստղը երգելիս ժպտում էր ու նայում ուղիղ աչքերիս մեջ: Երբ ավարտեցինք, պինդ գրկեցի Աստղին ու ասացի.

– Ապրե՛ս:

* * *

Հինգշաբթի դասից չուշացա, բայց դասարան հասնելուն պես գլխարկս հանել էի: Երբ ընկեր Գրիգորյանը ներս մտավ, գլխարկս գլխիս չէր: Տեսավ քաչալ գլուխս, ոչինչ չասաց: Գրատախտակին գրեց. «Իմ քայլը (ստեղծագործական շարադրություն)»:

«Հինգ հարյուր յոթանասուներկու քայլ է պետք Կասկադի գագաթ հասնելու ու քաղաքը վերևից տեսնելու համար»,– գրեցի:

Թագուհի Լուիզայի կամուրջը

1.

Տուն գնամ, ի՞նչ անեմ: Տես՝ եղանակը հրաշք: Ձեռնոցներ էլ պետք չեն հեծանիվ քշելու համար: Քամի չկա: Գնա, լճերի շուրջը պտտվիր, մարդկանց հետևիր: Գուցե քեզ լավ զգաս:

Թագուհի Լուիզայի կամուրջը դատարկ էր: Ժամը տասին ո՞վ է գործից դուրս գալիս, որ դու էլ գնացել ես, տնկվել ես կամրջին: Ի՞նչ ես անում էստեղ: Հրեն, էն տարօրինակ արարածների արձանը, որ Էմիլը ֆոտո արեց Էլթոն Ջոնի համերգի օրը: Տուն գնալու ժամն է, Միա՛, գնա՛ տուն: Կամուրջը քեզ չի փրկի:

Կողքից ինչ-որ կանացի ձայն ինչ-որ բան ասաց:

– Ես դանիերեն չեմ հասկանում,– պատասխանեց Միան:

– Լա՞վ ես,– ձայնը շարունակեց անգլերեն:

– Հա,– ասաց ու մի քանի մետր այն կողմ գնաց, որ մենակ մնա: Դեմքն ուղղեց դեպի լիճը, որի վրա արտացոլվում էին մոտակա խանութների լույսերը:

Մի քիչ մնամ, գնամ տուն: Թե չէ շատ ուշ կհասնեմ:

– Հաստա՞տ լավ ես,– ձայնը նորից մոտեցավ:

– Չէ՛,– առաջին անգամ շրջվեց ու նայեց ձայնի ուղղությամբ: Մանուշակագույն աչքերով, թուխ մաշկով, սև խուճուճ մազերով աղջիկ էր,– չէ՛,– կրկնեց: Միայի աչքերը լցվեցին:

– Ի՞նչ է պատահել: Գուցե պատմես, ավելի լավ կզգաս քեզ: Ինքս էլ լավ չեմ,– աղջիկը սիգարետ առաջարկեց:

– Շնորհակալ եմ, չեմ ծխում,– նորից շրջվեց, նայեց ջրերին:

– Ես ընկերոջիցս եմ բաժանվել,– ասաց աղջիկը,– մի կես տարի առաջ: Մի քիչ առաջ իմացա, որ նոր ընկերուհի ունի...

Աղջիկը լռեց, սիգարետը վառեց, հետո շարունակեց.

– Իսկ քեզ ի՞նչ է պատահել:

– Չգիտեմ,– աչքերը ձեռքերով սրբեց,– ոչինչ:

– Գիտես: Ինձ թվում է՝ սերը սովորելու համար է: Մենք չենք դադարում սիրել մեկին էնքան, մինչև չենք սովորում ամեն ինչ, ինչ պիտի սովորեինք նրանից:

– Հենց սովորելու նյութը սպառվում է, սերն էլ է սպառվում,– ասաց Միան,– սերը սպառվել է, հետևանքները՝ չէ:

– Գիտես, տասնյոթ տարեկանում անսովոր բան է նման լուրջ հարաբերություն ունենալը: Բայց քսաններում մարդիկ շատ են դեյթ անում, չէ՞:

– Հա՛: Մեկ-մեկ չափից դուրս շատ,– Միան նորից սրբեց աչքերը,– մեկ-մեկ էլ ուղղակի ուրիշի անկողին են մտնում, հետո ուզում, որ շարունակես հետը մնալ:

– Երանի՜ կարողանայի լացել,– ասաց,– սա էլ իմ լացն է,– ծուխը դուրս փչեց:

– Փորձի՛ր: Օգնում է: Սկզբում ես էլ չէի կարողանում, ֆիզիկապես վատ էի զգում: Փորձի՛ր... Իրոք հանգստացնում է:

Միան սրբեց աչքերը, նորից նայեց ջրերին: Թագուհի Լուիզայի կամուրջը սովորականից դատարկ էր: Երբեմն-երբեմն հեծանվորդներ էին անցնում: Մութն ընկել էր:

2.

Մի ժամ, ընդամենը մի ժամ էլ դիմացիր, ու դուրս գալու ժամանակը կգա: Խոր շունչ: Խո՜ր շունչ: Այ այդպես: Լավ է:

– Էսօր երկա՞ր ես մնալու,– սենյակ մտավ Ենսը:

– Մի ժամ էլ ու վերջ:

– Էս Լին չկա՞:

– Արձակուրդ է:

– Հա էլի, մենակ մեկ նման ախմախներն են էս լավ եղանակին աշխատում... Լա՞վ ես:

Միան նորից խոր շունչ քաշեց՝ ամեն կերպ փորձելով թաքցնել արագացած շնչառությունը:

– Մի քիչ չէ... բայց երևի բժշկի գնամ էս քանի օրը:

– Հա, էս վիրուսները շատ անդուր են: Քեզ հաճելի օր,– Ենսը գնաց:

Նայեց կոմպի էկրանին ու չգրվող տեքստին, մտածեց՝ մի ժամ անկապ նստելու է ու ոչինչ չանի: Վաղը կզանգի բժշկին, կնկարագրի, թե ոնց է առավոտները սրտխփոցից արթնանում, իսկ գործի ժամանակ չի կարողանում կենտրոնանալ: Իսկ հիմա ավելի լավ է՝ գնա լճեր:

Հեծանիվը կանգնեցրեց Թագուհի Լուիզայի կամրջի մոտ, ոտքով հարվածեց տարօրինակ արարածների արձանին ու շարժվեց դեպի լճափի խոտածածկ տարածք: Մի երկու ժամ գիրք կկարդամ, շուրջս կնայեմ, կգնամ տուն:

Թվում էր՝ քաղաքում ինչքան մարդ կար, էդ օրը գործից շուտ էր դուրս եկել, գնացել լճեր: Միան տասը րոպե շարունակ պտտվելուց հետո հազիվ մի քառակուսի մետր տարածք գտավ, որտեղ նստելիս ուրիշի գարեջրի շշերին չէր կպչի: Պայուսակից հանեց գիրքը,

բայց մինչ կբացեր, քառասունին մոտ մի տղամարդ մոտեցավ.

– Կարելի՞ է:

– Եթե տեղավորվես, խնդրեմ,– պատասխանեց Միան անգլերեն՝ հուսալով, որ հարցը ճիշտ է հասկացել:

– Ստեղացի չե՞ս:

Տղամարդը Միայից ոչ հեռու գտնվող դատարկ շշերը հրեց դեպի կողքի ընկերական խումբը (հավանաբար նրանցն էին) ու նստեց Միայի կողքին այնպես, որ միմյանց չդիպչելու համար նվազագույն տարածություն էր մնացել նրանց միջև:

Ու սկսվեցին ստանդարտ հարցերը, որոնցից Միան արդեն պկվել էր. անունդ ի՞նչ է, որտեղի՞ց ես, ինչո՞ւ ես Դանիայում, ինչո՞վ ես զբաղվում, ինչքա՞ն ժամանակ, դուրդ գալի՞ս է: Դանիացիներին թվում է, թե ամբողջ աշխարհի բնակչությունն իրեն ձգում է Դանիա տեղափոխվելու համար: Դե արի ու բացատրի, որ Էմիլն ուղիղ երկու տարի համոզում էր, որ Միան ճամպրուկները հավաքի ու Համբուրգ-Կոպենհագեն գնացքը նստի:

– Ի՞նչ ես ուսումնասիրում,– հարցրեց տղամարդը:

– Լեզու և ուղեղ,– պատասխանեց Միան:

– Դա իմ մասին է. ես գրենլանդացի եմ ու հիվանդ ուղեղ ունեմ:

Էս անգամ կարծես խոսակցությունն ինչո՞ւ հենց Դանիա ուղղությամբ չի գնալու:

– Հիվա՞նդ: Այսի՞նքն:

– Ասում են՝ շիզոֆրենիկ եմ:

– Ո՞վ է ասում:

– Նրանք՝ հիվանդանոցում աշխատողները:

– Հաճա՞խ ես հիվանդանոցում լինում:

– Էնքան էլ չէ: Հենց զգում եմ՝ պսիխոզը սկսվում է, գնում եմ:

– Հեչ նման չես հիվանդի:

Թե Միան կյանքում քանի՞ անգամ էր շիզոֆրենիայով հիվանդի տեսել: Ծնողներից լսել է, որ հորեղբայրը շիզոֆրենիա ուներ, ու ժամանակ առ ժամանակ հարևանների դռներն էր ծեծում, գոռգոռում վրաները, պահանջում, որ գլխի չիպը հանեն: Բայց հորեղբայրը մնացել էր Տաջիկստանում, հոգեբուժարան էին տեղափոխել: Միան շատ բան չգիտեր նրա մասին, միայն պատմություններ էր լսել:

Կողքի խումբը գնալով ավելի աղմկոտ էր դառնում, ու իրար լսելը դժվարանում էր:

– Քայլե՞նք,– առաջարկեց տղամարդը:

Երկուսով վեր կացան ու շարժվեցին լճի երկայնքով:

– Գիտես, վաղուց թոշակի եմ անցել, հիմա կյանքն եմ վայելում: Դանիան հրաշալի երկիր է: Այստեղ ամենաբարդ բանը երջանիկ չլինելն է,– ասաց տղամարդը:

– Հա՛, ու բազմաթիվ օտարերկրացիներ դա չեն հասկանում: Կարծում են՝ որ ուրիշ երկիր գնան, ավելի երջանիկ են լինելու:

– Դու ինձ մի աղջկա ես հիշեցնում:

– Ո՞ւմ:

– Չգիտեմ: Հիվանդանոցում եմ տեսել: Էնքան էին էլեկտրաշոկ տվել, որ ոչինչ չէր հիշում:

– Բայց ես հիշողության խնդիր չունեմ:

– Արտաքինդ նկատի ունեմ: Մեկ էլ անունդ: Անունդ ի՞նչ էր:

Զարմանալի էր, որ այդքան կարճ ժամանակ անց չէր հիշում, բայց ամեն դեպքում Միան կրկնեց անունը:

– Քանի՞ տարեկան ես:

– Քսանյոթ:

– Ես էլ հուլիսի 27-ին եմ ծնվել: Ուրեմն մի ընդհանուր բան ունենք... Մարդկանց

հեռուստատեսությունը դժբախտացնում է: Ուղեղները կառավարում են այնտեղից: Դրա համար ես հեռուստացույց չունեմ:

– Ես էլ: Արդեն երկու օր է, ինչ չունեմ:

– Անունդ ի՞նչ է:

Երրո՞րդ, թե՞ չորրորդ անգամ էր հարցնում: Որպես օտարերկրացի Միայի բախտը բերել էր, որ ամենատարածված դանիական անուններից մեկն ուներ. արտասանելու կամ հիշելու խնդիրներ չէին լինում, ինչպես, օրինակ՝ իր չեխ կոլեգա Անյեժկայի դեպքում: Միան կրկնեց անունը:

– Բարդ է:

– Հա՛, դժվար հիշվող անուն է,– Միան փորձեց քաղաքավարի լինել:

– Չէ՛, նկատի ունեմ՝ բարդ ու խճճված է: Իմը պարզ է, թափանցիկ՝ Նոե՜լ:

Միայն այդ ժամանակ Միան նկատեց, որ մինչ այդ տղամարդու անունը չէր հարցրել:

– Ես տուն հասա,– ասաց Նոելը: Այդ ժամանակ արդեն լճերի Օստերբրո թաղամասի հատվածում էին,– հաճելի էր քեզ հետ ծանոթանալը,– գրկեց Միային, հրաժեշտ տվեց և ուղղվեց դեպի Օստերբրո: Միան կարմացավ հանկարծակի հրաժեշտից, շուռ եկավ, որ հետ գնա Թագուհի Լուիզայի կամուրջ, որ էնտեղից վերցնի հեծանիվը, տուն քշի: Ճամփի կեսին մեկ էլ լսեց՝ մեկը հետևից կանչում է.

– Հե՜յ, համարդ կտա՞ս, քեզ տեղ հրավիրեմ,– Նոելը վազելով հասել էր Միայի հետևից:

Միան ուղիղ հինգ անգամ կրկնեց համարը, մինչև Նոելը կարողացավ հավաքել և պանգել:

– Պահի՛ր այս համարը, կզանգեմ:

Կիրակի օրվա լռքշ: Նախորդ օրվա խմոցիից հետո Միան մինչև ցերեկվա երեքը քնել էր, իսկ հետո մի բաժակ սուրճը ձեռքին ծուլորեն տանը ման էր գալիս ու մտածում՝ ինչով զբաղվի մինչև օրվա ավարտը: Հեռախոսը զնգաց:

– Բարև, ես Նոելն եմ, ինձ հիշո՞ւմ ես: Լճերի մոտ ենք հանդիպել:

– Հիշում եմ:

– Ուզում եմ քեզ ընթրիքի հրավիրել: Կգա՞ս:

– Իհարկե: Ե՞րբ,– Միան փորձեց հիշել, թե արդյոք հաջորդ շաբաթվա մեջ ազատ երեկո ունի՞,– ուրբաթ հարմար կլինի՞,– ժամը ութին Ենսենց հետ խմելու է գնալու, բայց երևի կհասցնի մինչև էդ Նոելի հետ ընթրել,– ժամը վեցին:

– Շատ լավ: Թագուհի Լուիզայի կամուրջը գիտե՞ս: Այնտեղ հոթդոգի ստենդ կա, հենց դրա մոտ:

– Գիտեմ, մինչ հանդիպում:

– Բայց գիտես, չէ՞, ես շիզոֆրենիկ եմ:

– Գիտեմ:

– Ու դեռ ուզո՞ւմ ես հանդիպել:

– Ուզում եմ:

Հինգ րոպե անց հեռախոսը նորից զնգաց:

– Նոելն է: Կներես, դեռ օրացույցումս չեմ գրել: Ուրբաթ էր, չէ՞: Ամսի 19-ին: Թագուհի Լուիզայի կամուրջ:

– Ահա՛:

– Բայց ես շիզոֆրենիկ եմ, գիտես, չէ՞:

– Գիտեմ: Իմ հորեղբայրն էլ է շիզոֆրենիկ:

Միան արդեն վերջացրել էր սուրճը ու պատրաստվում էր հագնվել, որ գնա ջիմ, գոնե մի քիչ ճարպ մաշի կիրակի օրով, երբ հեռախոսը երրորդ անգամ զնգաց:

– Ես շիզոֆրենիկ եմ: Հաստա՞տ ուզում ես հետս հանդիպել:

– Հաստա՛տ:

– Ուրբաթ էինք պայմանավորվել, չէ՞: Թագուհի Լուիզայի կամուրջ: Հոթդոգի ստենդ: Ժամը վեցին:

4.

– Ո՞նց էր անցյալ շաբաթ: Որևէ հետաքրքիր բան կա՞ր,– Լին ու Միան խոհանոցում միասին ճաշում էին:

– Չէ՛: Եղանակն ընտիր: Համարյա ամեն երեկո լճեր էի գնում:

– Լճե՞ր: Ի՞նչ կա էնտեղ:

– Քաղաքի կուզահեռ իրականություն:

– Նկատի ունես՝ հարբած թինեյջերնե՞ր:

– Անծանոթների հետ շփվող դանիացիներ տեսե՞լ ես: Եթե չէ, գնա լճեր: Ոնց որ դուրս գաս էստեղից ու հիմայից ու հայտնվես ինչ-որ երևակայական աշխարհում, որտեղ դանիացիները խոսում են անծանոթների հետ:

– Դու քեզ տեսե՞լ ես հայելու մեջ: Էնքան տառապած տեսք ունես, որ նույնիսկ ամենասառը դանիացին կմոտենա, կհարցնի՝ ոնց ես:

– Շնորհակալություն, դուք շատ բարի եք: Էսօր ժամադրության եմ:

– Հո՞: Ո՞ւմ ես ճարել էս անգամ:

– Էս անգամ,– Միան դեմքը ծամածռեց,– Նոել: Կես գրենլանդացի-կես դանիացի:

– Պապա Նոել:

– Էլ մի:

– Բա Ենսենց չե՞ս գալիս:

– Գալու եմ: Կպատմեմ ոնց անցավ: Հիմա անցնեմ գործիս, մասնակիցը եկել է:

Միան վեր կացավ, վերցրեց դատարկ ափսեն ու դրեց միջանցքում կուտակված կեղտոտ ափսեների վրա:

– Թե հետո սուրճ խմելու գնաս, ձեն տուր,– լսվեց Լիի ձայնը խոհանոցից:

Միան դիմավորեց գիտափորձի մասնակցին, տարավ լաբորատորիա, հարցաթերթիկը լրացրեց. տեսողությո՞ւնը: Նորմալ: Լսողությո՞ւնը: Նորմալ: Ընտանիքում հոգեկան հիվանդներ կա՞ն: Ոչ: Դեղեր ընդունո՞ւմ է: Ոչ: Առաջադրանքը բացատրեց ու դուրս եկավ սենյակից: Սուրճի հավես կա, Լիի հավես՝ չէ:

Ուղիղ ժամը վեցին Թագուհի Լուիզայի կամրջին էր: Հոթդոգի ստենդ չտեսավ: Մի քանի անգամ հետուառաջ արեց, բայց Նոելը չկար: Հեռախոսին նայեց. ո՛չ զանգ, ո՛չ սմս: Ի՜նչ լավ, էս դարդից ազատվեցինք: Տասը րոպե սպասելուց հետո իջավ լճի կանաչ խոտի մոտ: Դիմացը լճի բազրիքին մի տղամարդ էր նստած, որը նայում էր հեռվին ու ժպտում: Հետո սկսեց սուլել, իսկ սուլոցը կամաց-կամաց երգի վերածվեց: Ձայնը բարձրացրեց ու երգեց. «Հե՜յ, Ջո՛ւդ, ինձ չզցես»: Երգը կեսից ընդհատեց ու շուրթերը սեղմեց: Դեմքի մկանները ձգվեցին: Նայեց մայր մտնող արևին ու ժպտաց: Իսկ երբ արևն անհետացավ շենքերի հետևում, տղամարդը վեր կացավ ու անշտապ հեռացավ:

5.

Թագուհի Լուիզայի կամրջի մոտ երեք ժամ նստելուց հետո շարժվեց դեպի Դաունթաուն, որտեղ Ենսենք արդեն եսիմորերորդ գարեջուրն էին խմում:

– Լսել եմ՝ ժամադրության էիր,– խորամանկ ժպտաց Ենսը,– ո՞նց անցավ:

– Ընտիր: Ամբողջ ժամանակ «Հեյ, Ջուդ»-ն էր երգում:

– Բիթլամանի ես հանդիպել:

– Ջուդամանի:

Բոլորը ծիծաղեցին:

– Ոնց որ նախկինիցդ լավ է,– ասաց Լին:

– Անկողնում՝ հաստատ,– պատասխանեց Միան,– կարող ես փորձել:

– Էս ե՞րբ հասցրիր,– հարցրեց Ենսը:

– Ես շատ էֆեկտիվ եմ,– Միան մի շնչով Ֆրանցիսկաների շշի կեսը դատարկեց:

– Երևում է,– ասաց Լին:

– Կամա՜ց, կհարբես,– ասաց Էմիլը, որ մինչ այդ լուռ էր:

– Ու սրա-նրա հետ կքնեմ,– Միան ևս մեկ հսկայական կում արեց շշից,– քեզնից եմ սովորել:

«Տասնիհինգ րոպեից Մուս»,– Միան Կարմենից սմս ստացավ:

– Կներեք, ես պիտի գնամ:

– Էլի ժամադրությո՞ւն,– հարցրեց Ենսը:

– Չէ, ռումմեյթս բանալին մոռացել է, դրսում է մնացել: Գնամ, դուռը բացեմ:

Միան դուրս եկավ Դաունթաունից ու քայլեց դեպի Մուս:

Ուրբաթ գիշերը Կարմենն ու Միան Մուսում հապիվ մի ազատ անկյուն ճարեցին խցկվելու: Ասում են՝ էնտեղ հիմնականում արտասահմանցիներն են խմում, իսկ ավելի ուշ ժամերին աղջիկ-տղա են կպցնում, երբեմն միասին տուն գնում, երբեմն էլ սեքսը հենց տեղում՝ զուգարանում անում: Միան ու Կարմենը գրեթե ամեն ուրբաթ Մուս էին գնում. Կարմենը հույս ուներ հանդիպել այն ֆրանսիացի տղային, որին մի անգամ անտանելի հարբած ժամանակ մերժել էր, հետո փոշմանել: Այդ ուրբաթ գիշերներին Կարմենն ու Միան ինչ ծանոթ մարդու ասես չէին հանդիպել, բայց այն ֆրանսիացի տղան չկար ու չկար:

– Ժամադրությունդ ո՞նց անցավ,– հարցրեց Կարմենը:

– Ընտիր, բայց շուտ պոկվեցի: Գնամ զուգարան,– Միան նկատեց, որ զուգարանի մոտի հերթը կարճացել է:

Զուգարանի հերթի մեջ մի թխամաշկ իտալացի առաջարկեց միասին մտնել: Մուսի զուգարանային պատմությունների մասին Միան շատ էր լսել, բայց առաջին անգամ էր ինչ-որ մեկը հենց էդպիսի ուղիղ առաջարկ անում:

– Չէ՛, ես պիտի չիշիկ անեմ,– պատասխանեց, ու երբ հերթը հասավ, մենակ մտավ զուգարան:

Ավելի ուշ թխամաշկ իտալացին Միայենց սեղանին մոտեցավ: Պարզվեց՝ Կարմենը ճանաչում էր նրան, անունն էլ նշեց: Ջովաննի՞ էր, թե՞ Ջուզեպպե: Երրորդ գարեջրից հետո Միային անունները քիչ էին հետաքրքրում: Կարմենին ասաց, որ Ջովաննի-Ջուզեպպեն իրեն զուգարան էր հրավիրել: Կարմենը հռհռոցը դրեց, խոստացավ, որ իրենց ընդհանուր ընկերներին կպատմի. Ջովաննի-Ջուզեպպեն փաբում սեքս էր փնտրում:

– Աստվածաշունչը կարդացե՞լ ես,– հարցրեց Միան թխամաշկ իտալացուն, իսկ Կարմենը ծիծաղեց: Ասաց, որ դա գիշերվա՝ տղա խուսացնելու լավագույն նախադասությունն էր, ու պոստեց Ֆեյսբուքում:

Միան չգիտեր՝ ինչու այդ հարցը տվեց, բայց հաջորդ հարցը Մովսեսի, կենդանիների ու տապանի մասին էր.

– Մովսեսն ամեն կենդանուց քանի՞ հատ հետը տապան տարավ:

Կարմենն ուշաթափվեց հարցից, իսկ իտալացին շփոթված հարցրեց, թե ինչու երկուսն ընդունելի պատասխան չէր: Իսկ սեղանի տակ Միայի ոտքը հայտնվել էր իտալացու ոտքերի արանքում:

– Դուրս գա՞նք,– առաջարկեց Միան:

– Ես քեզ համար դուռը կպահեմ,– ասաց իտալացին:

– Իսկ շո՞ւնչդ:

Կարմենը նորից սկսեց ծիծաղել, հագավ կուրտկան ու ասաց.

– Ես երևի ձեզ մենակ թողնեմ:

7.

Առավոտյան ժամը չորսին Թագուհի Լուիզայի կամուրջն աղբանոցի էր նման: Մեկընդմեջ հարբած մարդիկ էին անցնում ու ինչ-որ անհոդաբաշխ արտահայտություններ բաց թողնում: Կարմենն արդեն տուն էր գնացել: Միան մենակ էր մնացել թխամաշկ իտալացու հետ, որի անունն այլևս չէր հիշում: Թագուհի Լուիզայի կամրջի վրա լույսը բացվում էր: Թխամաշկ իտալացին օրորվում էր: Տարօրինակ արձանների գլխին գարեջրի շիշ էր դրված: Էմիլը լիներ, կխփեր, որ ընկնի:

– Դու գերմանացու նման չես, հեչ նման չես: Տաքարյուն ու սիրուն ես:

Դանիայում առաջին անգամ գերմանացի չլինելը որպես կոմպլիմենտ էր հնչում: Թե չէ երբ ասում էր՝ գերմանացի եմ, հարցնում էին՝ չէ, բայց իսկականից որտեղի՞ց ես: Ու Միան սկսում էր պատմել Տաջիկստանում ծնված ծնողների մասին՝ եկրափակելով, որ ինքը գերմանական անձնագիր ունի, որ իր մայրենի լեզուն գերմաներենն է ու երբեք Տաջիկստանում չի եղել:

– Քեզ պիտի իմ տուն տանեմ: Արի միասին տուն գնանք:

Արդեն լիքը պաչպչվել էին: Մնում էր «իմ տուն, թե քո տուն» հարցը: Երբ Մուսից դուրս եկան, թխամաշկ իտալացին առաջարկեց իր տուն գնալ, իսկ Միան առաջարկեց Թագուհի Լուիզայի կամուրջ:

– Էլթոն Ջոն սիրո՞ւմ ես,– հարցրեց Միան:

– Ես շատ փող չունեմ,– ասաց:

– Եթե ունենայի՞ր:

– Մեծ տուն կառնեի, որտեղ երկուսով կապրեինք... Մենակ էս մի երգը գիտեմ:

– Վատ չէ: Բայց հիմա պիտի տուն գնամ:

Թխամաշկ իտալացուն մի անգամ էլ համբուրեց, հետո նստեց հեծանիվը, որ էնտեղ թողել էր դեռ Նոելի հետ ժամադրությունից առաջ ու գնաց տուն:

Հաջորդ անգամ, երբ Կարմենին տեսավ, հարցրեց, թե ինչ էր տեղի ունեցել այդ գիշեր: Թխամաշկ իտալացին իր բոլոր ընկերներին պատմում է, որ կախարդական գիշեր է անցկացրել ու գրեթե սիրահարվել է:

– Հա՜, ընտի՜ր գիշեր էր: Իսկ դու ի՞նչ պատասխանեցիր:

– Ասացի՝ բա ինչո՞ւ գոնե համարը չվերցրիր:

– Քեզ հետ եմ խոսում, չե՞ս լսում:

– Կներես: Լսում եմ, լսում եմ,– Լին հայացքը հեռացրեց պատուհանից ու նայեց ուղիղ Ալիի աչքերի մեջ: Ոչինչ չէր պգում:

– Մոլորված ես երևում: Ինչ-որ բա՞ն է պատահել:

– Չէ՛, չէ՛, շարունակի՛ր, լսում եմ:

Այլևս չուզեց Ալիի հետ հանդիպել: Հա, լավ տղա էր, հետն էլ մշակութային լիքը ընդհանրություններ ունեին: Բայց հենց Ալին պատճառ դարձավ, որ Լին համոզվի՝ ակադեմիայից դուրս տղամարդկանց հետ չարժե ժամադրության գնալ: Միևնույն է, խոսակցությունները ծավալվելու են ձանձրալի թեմաների շուրջ՝ տուն-տեղ-երեխաներ, ու ինչ-որ պահից սկսած միայն ձևացնելու է, թե հետաքրքրված է՝ անհամբերությամբ սպասելով, թե երբ է տուն գնալու: Իսկ էքսպերիմենտների, դեղյալների, կոնֆերանսների ու հոդվածների մասին խոսելիս դիմացը նստած տղամարդը քաղաքավարությամբ ժպտալու է՝ առանց որևէ բան հասկանալու:

Ակադեմիայից դուրս տղամարդիկ անհետաքրքիր էին: Գուցե պակաս խելացի չէին, բայց նրանց աշխարհը լրիվ ուրիշ էր: Նրանք կարող էին ժամերով փողից ու մեքենաներից խոսել կամ եղանակից դժգոհել, բայց հենց պոստդոկ ճարելու կամ լավ ազդեցության գործակցով ամսագրերում տպագրվելու մասին խոսք բացվեր, վրույցն անմիջապես փակուղի կմտներ: Բացի դրանից, Լին վաղուց մոռացել էր, թե ինչ է ակադեմիայից դուրս կյանքը, ու ամեն անգամ դրան բախվելիս մշակութային շոկ էր ապրում: Աշխարհը սկսվում ու ավարտվում էր կամպուսով, պրոֆեսորներով ու ուսանողներով ու նրանց արանքում սեղմված ասպիրանտներով ու պոստդոկներով: Եթե նույնիսկ երբեմն ստիպված էր լինում շփվել համալսարանի հետ կապ չունեցող մարդկանց հետ, դրանից անմիջապես հետո ամբողջ երեկոն հիստերիկաների մեջ էր անցկացնում, թե՝ ինչու եմ ես էսքան տարբեր ծնվել:

Համալսարանական առօրյայի ամենասիրած իրադարձություններից մեկն ամսվա վերջին ուրբաթն էր, երբ ֆակուլտետի բոլոր ասպիրանտներով հավաքվում էին մոտակա բարում, մինչև ուշ գիշեր գարեջուր խմում ու քննարկում ակադեմիական հարցեր, նաև դրանցից դուրս, բայց անպայման լուրջ ու կարևոր աշխարհաքաղաքական հարցեր, որոնք հասարակ մահկանացուներին հասանելի չէին: Հումանիտար ֆակուլտետում տղա ասպիրանտներն էսպես թե էնպես քիչ էին, մեծամասնությունն էլ կա՛մ միասեռական էր, կա՛մ ամուսնացած, բայց Լին հույսը չէր կտրում, որ այդ ուրբաթօրյա հանդիպումներից մեկից վերջապես մենակ տուն չի գնա:

Տարվա առաջին ուրբաթ հանդիպումը նշանակվել էր հունվարի վերջին: Դժվար ամիս էր հունվարը, ու մի քիչ կվարճանքը չէր խանգարի: Լին առավոտյան սիրուն հագնվեց ու թեթևակի շպարվեց, բայց ոտքերը չթրաշեց՝ մտածելով, թե դժվար այդ օրը որևէ բան լինի, մանավանդ որ ինքն անմիջապես անկողին մտնողներից չէր: Այդ օրվա համար մի քիչ հմայքը հերիք էր:

Աշխատանքային օրվա ավարտից հետո բարում սկսեցին հավաքվել հոգնած ասպիրանտները: Լին եկավ ուշացած, երբ իրար միացած չորս սեղանների շուրջ արդեն մոտ տասնհինգ հոգի չաչանակում էր: Արագ-արագ գնահատեց ներկաներին: Նկատելով Էմիլին, որը միակ հետերոսեքսուալ ամուրի տղամարդն էր, անմիջապես տեղավորվեց նրա կողքը և գնաց գարեջուր բերելու:

Եգիպտագետ Էմիլի հետ ծանոթացել էր ամառային վերջին ուրբաթներից մեկի ժամանակ, երբ արևն ուշ էր մայր մտնում, բայց ստվերում ցրտոտ էր, ու շենքի տանիքից իջել էին ջրանցքի ափ, որ վայելեն արևի վերջին ճառագայթները: Էմիլն ուշ էր միացել խմբին: Եկել էր գզգզված, տանջված տեսքով, արդեն բավականաչափ խմած: Հանել էր կոշիկներն ու ոտքերը մտցրել ջրանցքը: Տարիքով մեծ էր երևում, բայց մի քանի անգամ հարցնելուց հետո պատասխանել էր՝ հա՛, ասպիրանտ եմ: Լին պարմացել էր, որ երբ ասել էր, թե ինքը հայ է, Էմիլը չէր կմկմացել, թե՝ աշխարհագրությունից վատ եմ, դա որտե՞ղ է: Փոխարենը սկսել էր Մատենադարանից ու այնտեղի ձեռագրերից խոսել ու ասել, որ ուզում է մի օր Հայաստան գնալ:

Ու մինչ արևը մայր էր մտնում, իսկ գարեջրի պաշարները վերջանում էին, կողքի խոսակցություններից Լին կարողացել էր պարզել, որ Էմիլը որդի ունի, որի մայրը ռումինացի պոետ է, հետևաբար մի քիչ էլ ռումիներեն գիտի: Իմացավ նաև, որ նա մինչև անցյալ տարի արգելում էր Էմիլին տեսնել երեխային: Վերջին մի տարին էլ որդուն փաթաթել է Էմիլի վզին, հավվադեպ է խնամում: Իսկ թե մոր հետ ամուսնացած եղել է, թե չէ, ինչքան են իրար հետ ապրել, սիրել են իրար, թե ոչ, կողմնակի խոսակցություն-ները ոչինչ չասացին: Նաև լսեց, որ Գերմանիայում ընկերուհի ունի, որին ոչ մի կերպ չի կարողանում համոզել, Դանիա բերել, մտածում է բաժանվելու մասին: Բայց այն ժամանակ նրան Էմիլի ամուսնական կարգավիճակն առանձնապես չէր հետաքրքրում, որովհետև օրեր անց պիտի Բլումին հանդիպեր ու որոշ ժամանակ նրանով տարված լիներ:

Այդ ամառային երեկոն ավարտվել էր նրանով, որ Էմիլը գրպանից թուղթ ու գրիչ էր հանել, Լիին խնդրել, որ մի քանի հայ գրողի անուն տա: Լին առանձնացրել էր Հրանտ Մաթևոսյանին, Թումանյանին ու Բակունցին՝ մտածելով, որ, միևնույն է, չի կարդալու, ձևի համար է հարցնում: Դրանից հետո պատահաբար տեսնում էր Էմիլին համալսարա-նի տարածքում, բարևում, երբեմն մի երկու բառ փոխանակում, անցնում:

Բարից վերադառնալով՝ Լին չրխկացրեց գարեջրի շիշն ու բացեց կրույցը.

– Կարդացի՞ր իմ խորհուրդ տված հեղինակներին:

– Դեռ չէ, բայց ուսումնասիրել եմ, մեկի գրքերից էլ պատվիրել եմ, անունը չեմ հիշում:

Լիի աչքերը կլորացան. փաստորեն լուրջ էր հարցրել: Էդ ո՞ր հայ հեղինակին էր կարողացել ճարել անգլերեն, դեռ մի բան էլ պատվիրել:

– Մի՛ պարմացիր: Ես գրականություն շատ եմ սիրում: Ում հանդիպում եմ, հարցնում եմ, որ իր երկրից մի քանի հեղինակի անունն տա:

Իսկականն է: Ուրեմն երեկոյի ընթացքում ահագին խոսելու թեմա կլինի:

– Փաստորեն շատ ես կարդում, հա՞,– հարցրեց Լին:

– Օ՜, շա՜տ-շա՜տ: Բայց պկվում եմ գրաքննադատներից, որ բռնում ու մասնատում են հրաշալի գրականությունը, մեկ սովորեցնում, թե ոնց պիտի հասկանանք: Ախր նրանք էնքա՜ն փոքր են էդ բոլոր հեղինակների կողքին: Ո՞նց են համարձակվում գրքի էջերից էլ շատ էջերով մենագրություններ գրել: Գիրք կարդալն ընթերցողի ու հեղինակի երկխոսությունն է, նրանք ինչո՞ւ են մեջ ընկնում:

– Գրականագիտությունն էնքան էլ... – Ռունեն, որ գրականագիտության ասպիրանտ էր, փորձեց միանալ վրույցին, բայց էմիլը շարունակեց.

– Գրականությունը չի կարելի մասնագիտություն սարքել: Երբեք չեմ ուզել: Որովհետև դա ինձ համար փախուստի վայր է, երբ ուզում եմ առանձնանալ աշխարհից, մենակ մնալ հեղինակի հետ: Հատկապես վերջին տարիներին դժվար ժամանակներ էին, գրքերը չլինեին՝ կորած էի:

– Հասկանում եմ,– Լին փորձում էր չընդհատել էմիլին, չնայած մենախոսությունները մի քիչ ձանձրալի էին, իսկ գրականագետ ասպիրանտների հետ մտերիմ էր,– փոքրուց միշտ կարդացել եմ... սթրեսային պահերին իրոք օգնող միջոց է: Իսկ դու ի՞նչ դանիացի գրողների խորհուրդ կտաս,– Լին թուղթ ու գրիչը պատրաստեց:

Կողքի սեղանից Ենսը շրջվեց դեպի էմիլը.

– Միան լավ տեղավորվե՞լ է: Մի երկու անգամ լանչին տեսել եմ:

– Հա՛: Կոպենհագենն էնքան էլ դուրը չի գալիս, բայց ինչ արած,– պատասխանեց էմիլը,– ի՞նչ էի ասում: Հա, դանիացի գրողնե՞ր,– սկսեց ծիծաղել,– այն, ինչ խորհուրդ կտամ քեկ, դանիացիները հաստատ չեն սիրում: Ավելի լավ է՝ այս մարդկանցից հարցնես,– ու ցույց տվեց իրենց դիմացը նստած Ռունեին ու մյուս երկու գրականագետներին:

– Լավ, Դանիան թողնենք: Ընդհանրապես քո սիրած գիրքը ո՞րն է:

– Մըմմմ, դժվար հարց է... երևի... կասեի Ջոյսի «Ուլիսեսը»:

– Կարդացե՞լ ես,– Լիի աչքերը փայլեցին:

Բլումը դժգոհում էր, որ ինքը ոչ մի գիրք չի կարդացել, որ «Ուլիսեսը» կիսատ է թողել: Իսկ Լին ծիծաղում էր՝ բացատրելով, որ մարդու կարդացած լինել-չլինելը եթե «Ուլիսեսով» որոշես, ուրեմն համարյա բոլորին չկարդացածների մեջ կդասակարգես:

– Իհարկե: Բայց առանց բառարանների, առանց օգնող գրքերի, առանց գրականագետների հերձման: Դա ընդամենը մի խմած իռլանդացու պատմություն է, որը Դուբլինով մեկ թափառում է: Հրաշալի գիրք է:

Խմած իռլանդացի: Բլումը չէր խմում: Ստերեոտիպային չէր: Հազիվ էր Լին մի քանի անգամ համոզել, որ հետը գարեջուր խմի: Լին ինքն էլ խմող չէր: Դանիայում էր այդ սովորությունը ձեռք բերել, այն էլ միայն հանուն ինտեգրման. եթե չես խմում, կարող ես ընդհանրապես հույսդ կտրել, որ սոցիալական կյանք կունենաս:

– Համաձայն եմ,– Լին հայացքը հառեց պատուհանին՝ անհայտ ուղղությամբ, ինչպես

Ալիի հետ վերջին հանդիպման ժամանակ էր:

– Այստե՞ղ ես:

Լին նայեց էմիլի աչքերի մեջ: Ժպտում էր էմիլը, իսկ աչքերն անհետացել էին ակնակապիճներում: Գարեջրի շշերը հերթով դատարկվում են, էմիլն ու Լին մեկումեջ շրջվում, կողքի խոսակցություններին են միանում: Հետո հանկարծ լռություն էր տիրում: Լին էլ թեմա չուներ խոսելու:

– Այս ընթացքում Հայաստան գնացե՞լ ես,– հարցրեց էմիլը:

– Հա՛, մի անգամ՝ դեկտեմբերի վերջին:

– Ո՞նց էր:

Մակերեսային պատասխանը՝ շատ լավ էր, որ ընկերներիս ու ընտանիքիս տեսա, խոր պատասխանը՝ էմոցիոնալ ծանր փուլով էի անցնում, ընկերներս չլինեին, չգիտեմ՝ ինչ վիճակում կհայտնվեի: Ահավոր մենակ էի մնացել Կոպենհագենում:

Ծննդյան տոներից անմիջապես առաջ չէ՞ր, որ Բլումը սկսեց համը հանել: Սարսափելի պահեր էին: Ո՞նց դիմացավ:

Լին նորից սկսեց վննել էմիլի աչքերը: Դրանք փայլում էին: էմիլը կգուշորեն մատները մոտեցրեց Լիի ձեռքին ու սկսեց շոյել: Հետո բռնեց ձեռքը:

– Ոնց որ դպրոցականներ լինենք,– ասաց էմիլը:

Գրողը տանի, ոնց որ էմիլը Սթոուները լինի: Անունն էլ Վիլյամ լիներ, լրիվ ինքը կլիներ: Հաստատ նա կմնա ակադեմիայում իր ամբողջ կյանքում, իսկ երբ մեռնի, ոչ ոք չի հիշի ո՛չ եգիպտաբանությունը, ո՛չ պապիրուսները: Ռումինուհին էլ գիժ էդիթն է: Լին էլ Քեթրի՞նն եմ: Տարիքային տարբերությունն էլ է նույնը: Չէ՛, Լին Քեթրինը չէ:

Երեկոյի մնացած ընթացքում Լին ու էմիլը թաքուն բռնել էին միմյանց ձեռքերը՝ մասնակցելով սեղանի շուրջը ծավալվող խոսակցություններին, որոնք գնալով ավելի պակաս աղմկոտ էին դառնում, քանի որ մարդիկ կամաց-կամաց ցրվում էին տներով:

Լին ու էմիլը նախավերջինը դուրս եկան: Հենց մտան վերելակ, էմիլը Լիին քաշեց իր մոտ ու սկսեց համբուրել: Ի՜նչ լավ է: Երանի՜ այս պահը չվերջանա:

Վերելակը հասավ առաջին հարկ: Դռները բացվեցին, հետո նորից փակվեցին: Լին ու էմիլը դեռ համբուրվում էին:

– Ի՜նչ սիրուն ես,– շշնջաց էմիլը:

Անսովոր խոսքեր էին: Սովորաբար Լիի տղամարդիկ կա՛մ լռում էին, կա՛մ հաճոյախոսություններ շռայլում նրա խելքի կամ կարդացած գրքերի հասցեին: Մի անգամ մեկն ասել էր՝ ուզում եմ ուղեղիդ հետ սեքս անել: Մի ուրիշն էլ ամեն համբույրից հետո հարցնում էր, թե ֆրանսիական դասականներից ում է կարդացել, ու ամեն անունից հետո ավելի պինդ գրկում Լիին: Արտաքինի մասին երբեք ոչ ոք ոչինչ չէր ասել: Դրա համար չգիտեր՝ ի՛նչ ռեակցիա տար, չգիտեր նույնիսկ՝ հավատա՞ր, թե՞ չէ:

Դուրս եկան փողոց ու ձեռք ձեռքի տված շարժվեցին դեպի կայարան: Մինչ գնացքը կգար, նորից համբուրվում էին: Այս դրվագը նկատելու էին մնացած ասպիրանտները ու առաջիկա օրերի ընթացքում Լիին թաքուն հարցնելու էին, թե հետո ինչ եղավ, հետն էլ ավելացնելու էին. «Սիրուն տեսարան էր. դու ու Էմիլը կանգնած էիք լույսի տակ ու երկար համբուրվում էիք: Ոնց որ կինոյից կադր լիներ»: Բայց ոչինչ չէին ասելու գերմանուհի պոստդոկի բացակայության մասին:

– Արի իրար հետ քնենք,– ասաց Էմիլը,– նկատի ունեմ՝ ուղղակի իրար կողք պառկենք, իրար ձեռք բռնենք, համբուրվենք: Սեռական որևէ բան չի լինի:

– Բայց... բայց ինչո՞ւ չլինի որ:

– Դե... փորձում էի հեռվից գալ, քաղաքավարի լինել: Ուրեմն քո՞ տուն:

– Չգիտեմ: Գուցե քո՞:

– Իմը հարմար չէ... ըըըը... հյուր ունեմ:

Լին լռեց: Էմիլը շարունակեց.

– Եթե անհարմար ես զգում, կթողնենք ուրիշ անգամ:

– Ուզում եմ քեզ ներսից զգալ:

Էմիլը կարծես չհավատաց ականջներին, լռեց մի պահ, հետո շշնջալով պատասխանեց.

– Ես էլ: Բայց ես այն տղաներից չեմ, որը պահպանակը գրպանում ման է գալիս:

Մտան Լիի նկուղ: Էմիլը սկսեց պատից կախված նկարներն ուսումնասիրել:

– «Պատմությունների կառուցվածքն ըստ Վոնեգուտի»: Վոնեգո՞ւտ: Իմ սիրած գրողներից մեկն էլ նա է:

– Երբեք չեմ կարդացել,– ասաց Լին,– միշտ մնում է կարդալիքների ցուցակում:

– Իսկ ովքե՞ր են այս մարդիկ:

– Գիտնականներ: Միասին կոնֆերանսի էինք:

Հետո երկար վննեց Տրանսիլվանիայի բացիկը, բայց ոչինչ չասաց: Պատի նկարները մոռացվեցին, որովհետև Լին ու Էմիլն ավելի կարևոր գործ ունեին: Սկզբում Լիի սև շրջազգեստը դուրս եկավ: Լին կարծես բացակա լիներ, մտքերն ինչ-որ ուրիշ տեղում: Ահագին ուշ հասկացավ, որ ինքն էլ պիտի Էմիլի շորերը հանի:

Երբ երկուսն էլ մերկ էին, Էմիլը պառկացրեց Լիին մահճակալին, մի քանի քայլ հետ գնաց, նայեց մերկ մարմնին:

– Ի՜նչ սիրուն ես: Աստվածուհի:

Կլիշե: Ուրեմն Էմիլը կլիշեներ է սիրում:

Հետո մոտեցավ ու սկսեց շոյել մարմինը: Լին լուռ էր, չէր շարժվում, ոչինչ չէր ասում:

Դանիացի աղջիկներն ակտիվ են անկողնում: Ուրեմն դու էլ պիտի ակտիվանաս: Ակտիվացի՛ր, ակտիվացի՛ր:

Երևի նույնիսկ ընթացքում քնեց, որովհետև հաջորդ անգամ, երբ աչքերը բացեց, կարծես երազից էր արթնանում: Էմիլը պինդ գրկել էր նրան: Հետ քաշվեց: Ինչ-որ տհաճ հոտ զգաց: Էմիլի մարմնի սովորական հոտն էր: Նորից քնեց՝ երազում Բլումին տեսնելով:

Առավոտյան աչքերը բացեց, ու մինչ Էմիլի մատները սահում էին նրա ուսի վրայով, անթարթ նայում էր պատին փակցված չորրորդ նկարին՝ քառատերև երեքնուկին, տակը Բլումի ձեռագրով ամսաթիվը. «18 դեկտեմբերի 2015 թիվ»:

Լին հետ քաշվեց դեպի մահճակալի մյուս ծայրը:

– Կներես, սխալմունք էր: Երևի շատ էի խմել,– ասաց:

Էմիլի հեռախոսը զանգեց: Էկրանին գրված էր՝ Միա: Պատասխանեց.

– Շատ էի խմել: Ենսն ինձ իր տուն տարավ: Հիմա գալիս եմ:

Լուսանկարը՝ Անաստասիա Կաչանովա

Գևորգ
Տեր-Գաբրիելյան

«Սա եմ ես»

Լումաներն իրար չէին գալիս:

Լաուրան ակտիվ քայլերով, պլիսանդռայի տակից սպիտակ սրնքաձկնիկները խաղացնելով մոտեցավ.

– Շեֆն ասում է՝ գնաս Կապան մասնաճյուղ:

Վարդգեսը լումաներով էքսելը մի կողմ թողած՝ իմեյլ էր կարդում Մոսկվայի օֆիսից. Էլվինայի տղան աուտիզմ ունի, դրա համար Էլվինան ավելի ու ավելի քիչ է աշխատում, գործը կախ է ընկել... Ասում են էսօր, թե աուտիզմը հեչ հիվանդություն էլ չէ, էդ նոր հորինած բաներից է, բայց դե հասկանալի է, ինչ էլ լինի՝ ծնողները քաշվան... Համեմատած Լաուրայի հետ՝ էլի դիմանալու է: Էն Լաուրայի վիճակն էլ էն չի, ինչքան էլ դիմանա՝ ծնվելուց երեխու գլուխն արյուն է լցվել, բժիշկներն առաջարկել են թողնել հիվանդանոցում, ինքը հիմար-հիմար, շշկռած՝ համաձայնելու վրա է եղել, ամուսինն ասել է՝ «ոչ մի դեպքում», արդեն 17 տարեկան է, դե արի ու էդ 17 տարեկանին էդպես պահիր... գոնե բանակի խնդիր չկա... ու իհարկե, չնայած լավ ամուսին է, բայց ողջ բեռն իր ուսերին... Պինդը, ոտները ոնց են ճլտճստում... Մոսիկյանը որ փախավ՝ Լաուրային էլ տակ թողեց, խեղճը տարիներ շարունակ բենկին էր դուրս գրում՝ տասը տոկոսն իրեն

վերդիր, ու գործից, պայմանավորված, ժամը երեքին դուրս գալիս: Հիմա դե արի ու տակից դուրս արի: Էլի ուրիշ բաներ էլ կլինի, թե լուման լումայի մուրալովի մեջը խորանանք:

Սև արմնկակապերը խնամքով հանեց, չծալեց՝ կոլոլեց, դարակը բացեց, գցեց մեջը: Փայտյա հաշվիչն էլ շրխկացրեց, որ բոլոր կոճակները մի տեղ հավաքվեն, ուղարկեց կոլոլված արմնկակապերի ետևից, դարակը կողպեց: Սեյֆի դուռը ստուգեց: Հետո նախ և առաջ անջատեց «Հին Երևան» կայքը, որում թափառում էր, ձև թափելով, թե գործ է անում, քանի որ անելու բան չուներ, քանի նոր շեֆը չէր ասել, ինչ անի, հետո՝ ՀԾ-ն, հետո՝ իմեյլը, դուրս եկավ իր նշանաբառից, խնամքով անջատեց համակարգիչը, թղթերը Լաուրայից վերցրեց, բաճկոնը հագավ, գլխարկը դրեց գլխին, գնաց գանձասենյակ, իրեն հասնող գործուղման փողը ստացավ ու գնաց Կապան:

Տնքտնքալով մարշրուտկայով հասավ Կապան, դիտեց իրավիճակը, դժվար մի երկու խոսք խոսեց մասնաճյուղի հաշվապահի հետ ձևի համար, Հայաստանի որոշ գեղեցկությունից մի քիչ իրեն լավ կգաց, «վերջին անգա՛մ», պոչամբարից սիրտը վատացավ, «տեսնես՝ ինքը ստեղով անցել է, թե չէ», չմտածեց, գլխի մեջ ո՛չ միտք, ո՛չ մուտք, մտածելը վերացավ էսօր չէ, էն այլմոլորակային Տարոնից չէ, տեսնես ոնց է ապատվել, չի ծառայել, չէ՞, գլուխը պրծցրել, *տեսնես պապան-մաման ով են, լավ կուլտուրական տղա է*, մտածելը էն տարին վերացավ, որ Պետրոսին բերին, ինքն իրենից գոհ է՝ մտքի ուժով մտածելն անջատեց, կգալն անջատեց, բայց ոչ լրիվ, շուտով խոսքը լրիվ կանջատվի, վետերոկում հաց կերավ մեկ անգամ, հյուրանոցի նախաճաշը չհաշված, դըմփը-դըմփը հասավ Երևան, եկավ տուն, տեսնի՝ կինը նոր կահույք է բերել, պահարան է դրել այն պատին, որին իր մանկության լուսանկարներն էին: Ոնց էլ հասցրել է: Ինքը, հայրն ու մայրը՝ Մոսկովյանի վրա, Կարապի լճում, Սունդուկյան թատրոնի մոտ, շուկայի մոտ, հրապարակում… Երկու կողմից իր ձեռքերը բռնած… Հայրը՝ ճաղատ, բայց կենդանի…

Եկավ՝ Մոսիկյանի ցրտոտ առանձնասենյակում փոքրիկ պարոն, պարոնիկ Միրզոյան Տարոնը, Տարոնիկը նստած՝ թղթեր էր թերթում, մորուքը տնկած, փողկապը թուլացրած, լայվ սելֆիի պատրաստ սմարթֆոնը՝ հատուկ պատվանդանիկի վրա առջևը տնկած, իսկ իր ու Լաուրայի սենյակում երկու տղա՝ քսաներկու-քսաներեք տարեկան ճժեր, բայց՝ հաճելի տեսքի, փորներն արդեն ցցված, չեն ծառայել, սենյակը պողոս-պետրոս էին անում, տպիչը շուռ տվին, բայց խնամքով, թավշյա, թղթերը հավաքում-տանում էին: Լաուրան հիմնարկում չէր: Ասում են՝ Միրզոյանի ազգականը չէ, բայց, ասում են՝ մոտիկ են, հետը կապ ունի: Իմը չի, ես իրանց հաջողություն եմ ցանկանում, ես էլ՝ ջհանդամը, բայց իմը չի: Բա որ պապաս լիներ, բա իմը չէ՞ր լինի: Տանում էր Հուրարապի գյուղերը ձուկ բռնելու… Էն գյոռմամիշ մուկը Հուրարապ չթողեց, սաղ հարամ արեց… Բա չէի՞ ուպի իրա թլպատ շան կոկորդից ես էլ բռնեի: Բայց, դե՝ իմը չի, իմ դարդն ուրիշ ա:

Տարոնը տեսավ իրեն, վեր կացավ, կուլտուրական, մոտեցավ, ձեռք մեկնեց, ասաց՝ նստե՛ք, ինքն էլ կողքը նստեց: «Սուրճ կուզե՞ք»: «Ես սուրճ չեմ խմում»:

Փռշտաց:

– Առողջությո՛ւն:

– Մերսի:

Խնամքով ծալած թաշկինակը շալվարի գրպանից հանեց, բացեց, մեջը մի լավ խնչեց, հիմա տենց մոդա ա, նայեց թաշկինակի մեջ, ուշադիր վննեց, հետապոտեց, մի հատ էլ խնչեց, խլինքը ծալեց թաշկինակի հետ, գրպանը դրեց, բեղերը սղալեց: Ցից քիթը վեր քաշեց, խմեց մի երկու անգամ: Էլի փռշտաց: Հինգ անգամ փռշտաց: Վարդգեսին թվում էր՝ ամեն փռշտոցից մորուքը երկարում է: Երբ խոսում էր, բահ-մորուքի կճատ ցից ծայրը դեպ Վարդգեսն էր ուղղվում, ձգտում մասնակցել, ասես ևս մեկ թավշյա շոշափուկ: Այն կպմված էր խիտ գանգուրիկների պարույրներից: Վարդգեսի վիզը քոր եկավ:

– Պարո՛ն Միկիկյան, մեկ մոտ ստուգումներ են, այսօր ես խնդրում եմ տուն գնացեք, վաղը կգաք: Հաշվետվությունը կարո՞ղ եք տանը անել:

Վարդգեսը ձեռքը տարավ դեպ ծոցագրպանը.

– Ամենն այստեղ է, կարող եմ հենց հիմա…

– Չէ՛, չէ՛, հիմա պետք չի: Տանն արեք՝ էքսելով, վաղը կբերեք:

– Էլեկտրոնային փոստով ուղարկե՞մ:

– Կարիք չկա: Ձեր փոստն ի՞նչ է, մեյլ ռու՞վ է:

– Այո՛:

– Դա էլ կփոխենք:

– Դե բոլորինս էլ…

– Հասկանալի է: Այստեղ շատ բան է փոխվում, ինչպես տեսնում եք: Չե՞ք շոգում բաճկոնով:

– Չէ՛, ճիշտն ասած, այստեղ ձեկ մոտ փչում է…

Տարոնը նորից փռշտաց: Սպիտակ գիշատիչ քիթը գնաց-եկավ, բայց այս անգամ թաշկինակը չհանեց:

– Ճիշտ եք: Ես էլ վաղվանից բաճկոնով կգամ, թե չէ վայ թե մրսեմ, որ լայվ եմ անում՝ ուղիղ մեջքիս է փչում: Դա էլ կփոխենք…

Վարդգեսը նրա լայվերից արդեն մի քանի հատը նայել էր, որ տեղյակ լինի՝ հիմնարկում ի՛նչ է կատարվում: Հատուկ կարթուցիչ էր դնում գիշերվա երկուսին՝ որ բաց չթողնի: Բումերանգը մռթմռթում էր, իհարկե, ննջարանից գոմռում, բայց, դե, ինչ արած:

Ողջ էկրանին՝ քիթն էր: Քառասուն հազար հոգի առաջին անգամները նայում էր, հետո քչացավ: Հետո ինքն էլ դադարեց նայել:

Տարոնը նորից ուշադիր նայեց Վարդգեսի բաճկոնին:

– Սիրում եմ այսպիսի երկարափեշ բաճկոններ: Սրանք կրկին մոդա են այսօր: Էս խաչուփաչ օձիքները ոնց էի սիրում վախտին… Ներկարվա՞ծ է:

– Չէ հա, հո ժաբո՞ չի… Միակտոր բան է, էլի…

– Հա՛, հա՛, պարզ է, կներե՛ք, չնկատեցի: Կարելի՞ է շոշափել: Շատ լավ, շատ լավ: Ինչպե՞ս

էր Կապանը:

– Նորմալ...

– Դէ կգրեք, վաղը կգաք:

Երբ դուրս էր գնում, Տարոնը նորից փռշտաց, բայց Վարդգեսը երկու դռների մեջտեղն էր, ներսինն արդեն համարյա փակել՝ դրսինից էր դուրս գալիս, ասաց՝ առողջություն, բայց համոզված չէր՝ Տարոնը լսե՞ց, թե՞ ոչ, ուզում էր ներսի դուռը նորից բացի, նորից ասի, բայց դրսի դռան արանքում էր մնացել, իսկ էն երկու տղերքը թղթի կապույկներ ձեռքները՝ եկել առջևը կանգնել սպասում էին, երբ պիտի դուրս պրծնի էդ աքցանից, որ ներս գնան, գրեթե հուպ էին տալիս, Վարդգեսը հազիվ նրանց միջով անցավ, էդպես էլ չհասկացավ, Տարոնը լսե՞ց իր վերջին «առողջությունը», չէ՞, հիմա ի՞նչ անի, դուռը ծեծի, հետ գնա ասի՞. չկարծի՞ հանկարծ, թե ինքն իրանց դեմ ա. ինքը դեմ չի, անկեղծ, էդ խլինքն էլ՝ դե, իրանց սորոսներում հիմա տենց ա մոդա, ինքը գիտի:

Թավշյա՜, հանգի՜ստ, տղուս թայ ա վայ թե, բայց ոնց որ ծնված օրից շեֆ եղած լինի ճժոն:

Եվ ահա եկավ տուն, էս շոգին տաք մարշրուտկով, քրտինքի կճուճ, հոտից կանայք այս ու այն կողմ էին դեմքները թեքում ու ծամածռում, գլխարկի եզրերը քիչ էր մնում քսվեին իրենց ճնճղուկի բներին, բա չէ, Կապանում գիշերած, մարշրուտկով էնտեղ, հետո՝ էդ, շեֆի հետ վրույց, հիմա էլ առնվազն մի երեսունհինգ աստիճան կլինի, օպերայի ջերմաչափը քառասուներկուս էր ասում, դե հիմա էլ չեն թաքցնում, ընդհակառակը՝ չափազանցում են: Լաուրան էլ չզանգեց, դե, գործ չունեմ, չեմ զանգի, ով գիտի:

– Արա՛գ նստեք, տեղավորվե՛ք, շարժվու՛մ ենք:

Մարշրուտկի կանանց երեխեքից մեկը, թե՝ «Մա՛մ, մա՛մ, ձյաձյան ինչի՞ ա շինել հագել, բա շոգ չի՞»:

Տարեց մի ուղևոր.

– Այդպիսի բառեր չի կարելի ասել, տղա՛ ջան: Ինչպե՛ս մայրիկդ չի ամաչում: Է՛դ են, էլի, էսօրվա անկիրթ սերունդը:

– Կներե՛ք, դուք չհասկացաք, Բաբկենչիկը գերմաներեն է սովորում, ասաց «շնելլե», «շնելլե», չէ՞, Բաբկենչի՛կ:

– Դա էլ գեղեցիկ չէ՝ վարորդին մեր թշնամու լեզվով ծաղրել: Ինքը ձեվ ի՞նչ է արել, ինքն ի՞նչ մեղք ունի:

– Ո՞վ է ծաղրում որ:

– Ձեր երեխան:

– Ինքը չի ծաղրում, ինքը թարգմանում է նեմեցերեն:

– Հերիք ա, էլի, էդ մարդուն կպնեք, հիմա դրա մեջ ի՞նչ սխալ բան կա:

– Ում եմ կպնո՞ւմ որ:

– Հիմա ինչ անենք, որ ինքը նեմեց ա:

– Հեսա Մերկելն եկավ՝ սաղին ցույց կտա:

– Հեսա իրա հերթն էլ ա գալու, դուք սպասեք...

– Սկզբում՝ Շեռի Ֆըքոն, հետո...

Շնելլե:

... Տեսնի՝ կինը պահարան է բերել, փեղկը բացեց՝ մեջը լիքը շոր ու տռպրակ ու չորացած մանդարինի կճեպ, Պետոն շատ էր սիրում, էն օրվանից էդ հոտը տանել չի կարողանում, ափսոս չէր «յասամանի ջուրը», ոնց վերացրին, հիմա բանկ է, որտեղից էլ էսքան շոր, էն օժիտն էլ գնաց, բան էլ թվում է տարիներով չեն առնում՝ ու էլի լիքը լցվում է, փողն իր պահուստից, իհարկե, թե չէ փող որտեղից, վաղուց էր ասում՝ «պլվել եմ, էս շորերը միշտ էստեղ թափած», բերել-հենել է իրենց միակ ազատ պատին, որին ինքը լուսանկարներն էր կպցրած պահում, դեռ բանվորների վրա էլ հաստատ փող ծախսած կլինի: «Բա էստեղ եղածն ի՞նչ ես արել»: «Տղայիդ ասացի՝ տանի ավտոտնակ», վարսավիրանոց վաղուց չի եղել, գլավիրովկա արած մազերն արդեն իրոկեպից անուժ ներքև են կախվում:

Ո՜ւֆ-ո՜ւֆ, նստեց, մի քիչ հանգստացավ, ջուր խմեց, տնքտնքալով դխկդխկան վերելակով իջավ ներքև, բանալիների տրցակը մոռացել էր, «կանչեմ կգցի՞, չէ՞, կկորի. որ չկորեր էլ՝ չի լսի, երբ ա լսել որ», նորից վերև-ներքև, բանալին ձեռքում շխկշխկ, սեյֆինն էր գալիս մատներին, ավտոտնակինը դժվար էր ջոկվում, մտավ ավտոտնակ՝ չկա: Իր հին մկրատների արկղիկը գտավ, փոշոտ, բացեց՝ մեջը չէին: Թե խի՛ պտի մեջն ըլնեին: Դե արի ու էս քունջուպուճախում բան գտիր: Զանգահարեց որդուն: Իր կյանքի ամենամեծ հերոսությունը, ամենամեծ շնորհակալությունը պգում էր դեպ իր համադասարանցի էդիկի հորեղբոր տղան, որը դարձել էր պինկոմ: Երբ էդիկի հետ գնացին մոտը՝ ասաց «ես քիչ բան կարող եմ անել, խիստ է հիմա, օրինականով քեզ չի հասնում, երկրորդ աղջիկ ա», «իկուր եմ ծնել, փո՛ւստ», ասաց, ծիծաղեցին նույնիսկ, այնօր դեռ իբր մտածում էր, դեռ թարմ էր, ստիպված էր, ծիծաղեցնող բան էլ կարար ասեր, իբր ծնողը ես էի, մինչև հիմա էլ մեկ-մեկ մտքով խաբուսիկ անցնում է, բայց մի համար տվեց, կանգեցին բժշկին, ասին՝ պինկոմ Հովհաննիսյանն է ասել: Հավիվ պրծավ դրանից, հավիվ տակից դուրս եկավ, թե խոր մտածես՝ շկաֆն էլ էդքան տարի հետաձգվեց դրա պատճառով, ավտոտնակն էլ քունջուպուճախ է էն օրից, հավիվ պահեց Նանային օժիտ, էն էլ պետք չեկավ, էդ տղերքն էլ էնտեղ որ քչփորում են՝ սիրտը դրա համար է դխկդխկում, Լաուրան էլ որ չկա՝ դա է միգուցե, օժիտ չէ՝ բայց թե պետք եղավ կծախվի, էդ է մնացել, հենա Հակոբը հարցնում էր՝ ինչքանով, բայց խոր մտածել էլ արդեն չի լինում, մտքերը փախնում են, խոսքերն էլ են փախնում, բայց ամենամեծ իր հերոսությունը, իր կյանքի արդյունքը (որովհետև Նանան հեչ, Նանան հաշիվ չէ, փախավ Անգլիա էն դմբոյի հետ, ասին՝ Եհովա ենք, նրա հետ չեն շփվում. թեև հոգու խորքում գիտի, որ թե լրիվ ամեն ինչ թարս գնաց՝ Նանան հո գոնե կա. բայց դե ինչ), թե չէ էս Պողոսից հեչ հույս չկա, անունն էլ Պողոս դրին՝ երկուսն էլ անբախտ, ախր, թե հայրս յոթ տարեկանում չգնար... Խեղճ մայրս ինձ շալակեց ու տակից դուրս եկավ, սանիտարկա Բանգլադեշի պոլիկլինիկայում, սաղ ճանաչում էին, մինչև ութսունինը տարեկան, Աստված հոգին լուսավորի, մինչև հիմա հիշում են, փողոցում բարևում, «դուք Ասյայի տղան եք, չէ՞», էլ Ասյա մնաց, որ: Պապան որ չգնար՝ ինքը բա սե՞նցն էր լինելու, մեկ էլ հո՛պ՝ վեր կացավ ու գնաց, ու ինչ է ինքը հիշում իր պապայից՝ քիմիայի էդ լաբորատորիայում էդ մենզուրկաները՝ մեկից մյուսը գունավոր հեղուկ է հոսում... Տեսնես ուր է դրել ձախորդ Պողոսը, կանգեց՝ «էնտեղ պիտի լինի, պա՛պ», «չեմ հիշում՝ ուր դրեցի», «դե, կգտնվի,

էլի», «լավ, ես կգամ՝ կգտնեմ», ինքը չի էլ պատկերացնում, ինչ հերսություն է արվել, մատակարար, առայժմ Հակոբի Ջորիով էստեղ-էնտեղ դեղ է տանում-բերում, ասում են՝ ասպիրին կարդիոն էլ անհետացավ, «ոչինչ, պա՛պ, մի բան կանենք», սպասում է, դժգոհ է, իրեն առաջ չեն գցում, Տարոնից միգուցեև նույնիսկ մեծ՝ բայց արի ու տես, որ Տարոնը ճիշտ է կողմնորոշվել, սա՝ դեռ սպասում է, հույսեր ունի, լավ չեն փողոց փակել, հինգ հոգով մի հատ Հակոբի Ջորի ունեին, մի Ջորիով բա փողոց փակե՞լ կըլնի, մի Ջորին բա հաշի՞վ ա, ամոթ էլ ա, կենտ մի Ջորի դատարկ մայրուղում՝ ու մեկ էլ շուրջը գունավոր երեխեքի ամբոխ, ծո՜ւփ, ծո՜ւփ, մարդ չունեին՝ կողքի դպրոցի երեխեքին ժողովեցին, ծա՜փ, թե էդ երեխեքն էլ չլինեին՝ հեղափոխության կայֆը հեչ չէր կգա, ուրիշները մակերատիով էին փակում, սրանք՝ Ջորիով, բայց, դե, մեկ է, սա արդեն իմը չի, բա որ հերս չգնար էն վախտ, ես բա սրան չէի՞ մասնակցի:

«Հեսա-հեսա, պա՛պ, հեսա-հեսա», գոնե էքսել սովորիր, ասում է՝ մտածում են քաղաքապետի ցուցակում հարյուր յոթանասունվեցերորդին իրե՞ն դնեն, թե՞ Հակոբին, մի տասը տարուց հերթը կհասնի, ասում է՝ ինքն ավելի լավ էր փակում, քան Հակոբը, ասում է՝ Հակոբը գլուխ էր պահում, թեև իր ընկերն է, հեսա-հեսա, թե բանը բանից անցավ՝ գարաժը կծախեն, իհարկե, իրենց կողմից, դե, հերոսությունը շատ սպասելի չէ, հերոսությունը մի անգամ է արվում ու լինում է այդպիսին, մերվում-գնում, մոռացվում, չգնահատվում, պատկերացրու՝ կյանքդ փրկվեց, շա՜տ ես մտածելու դրա մասին, էն ա ապրելու ես, էլի, դու հո չե՞ս փրկողը, փրկողը կհիշի, փրկվողը՝ լղրվելու է գնա, փրկողը չմնաց, որ հիշի, փրկվողներն էլ՝ ապերախտ: Ինքը կես-կատակով ասում էր «ես իր տեղը գնամ», որ տենց ըլներ՝ վայ թե սենց չըլներ, բայց դե գիտեր, որ ինքը հո չի գնացողը, ինքն իրանը գնաց Վառաշիլավգռադ, ետ եկավ վախտին, պենիտնայա բատարեա, էն Ջինայի տոտերը՝ էս Լաուրայի պես ճստճստան, իլը մի բան էլ ավել: Օ՜ֆ: «Որ իմ հետ չի պատահի ինչ պատահի»՝ էդ էր էլի դավաճանական միտքը, դավադիր, հոգու խորքում. աչքով տվեց փաստորեն: Պատահեց:

Հերոսությունն այնտեղ կռիվելը չէ, Պետրոսիկ ջան, պողոս-պետրոս գլխիս ավեր, հերոսությունն իմ արածն անելն է՝ ըռխից պոկեցի, արդեն ատամներ էր կրճտում՝ հիաբուխ, հիաբուղկ երախից կիսատ-պռատ ծամված հանեցի, նեխած մսի հոտը բռնել էր, նշանակետը՝ ռունգերս, հապիվ էի շնչում: Ու հիմա, թե պետք լինի, կգնա ու կնստի, բայց, դե, առողջությունը… քանի օր կդիմանա… էն գյառլամիշը լավ էլ մի շաբաթ դիմացավ, բայց դե դրան ինչ կա, առողջ, էն մեկն է մեղք, վրան տեսք չի մնացել, վերցրին խայտառակ արին առցանցով մեկ: Հերոսությունը, տղա՛ս, դա է: Պլիսե թե գլիսանդրավորված, վաղուց արդեն առանձին են քնում, վայ թե աղջկա հետ կապի մեջ է, մայր է, թե չէ պահարանի փողը որտեղից: Վաղը գնամ-տեսնեմ գլխիս ինչ է գալիս: Էս ո՞ւր ճխտած կլինի անշնորհքը, բայց դե լավ է գոնե Լաուրայի պես վիճակում չենք, գլուխը մի կողմ է կախվում, փսլինքը բերանից ծորում է, նենց էլ սիրուն երեխա է, հերոսուհին Լաուրան է, ես եմ հերոսուհին, շուտով ես եմ էդպիսին դառնալու, իրենցից հերոսություն սպասել չի լինի, փսլինքս բերանիս ձախ անկյունից սրբող չի լինի, ասում է՝ «պիտի վերստուգիչ վարչությունում դասավորվեմ, մի լավ դրանց բոլորին թափ տամ», դե թափ կտաս, բա չէ, վաղը գործի գնամ ու գործընկերներդ թավշյա՜, աջից ու ձախից հրես թեթև՜, հրեշտակաբա՜ր, իրենց խասիաթի համաձայն, արմնկակապերս էլ չեն թողնի հագնեմ, կտակեմ Լաուրային, Լաուրայի մեղքը վերցնեմ, մեկը մնա՝ փսլինքս

մաքրի, ինքը սովոր է, էդպես է կարգը, մի հոգու փսլինք մաքրողը երկու հոգունն էլ կմաքրի, ինքը լավ տղա է, բարյացակամ, շատ բան է հասկանում, միակտոր, ներկարված, թեթև, թավշյա, կխոսենք, կհամաձայնի, հրեշ չի, երեք երեխու տեր, մեկը՝ հիվանդ...

Նստցնի մեկ իրար կողք ու փսլինքներս մաքրի, Նանան էլ ամիսը մի ութսունվեց հազար հինգ հարյուր երեսունյոթ ու քսան ուղարկի, սոված չեն մեռնի, պլիսանդռան մի ձևի յոլա, շատ չըլնի՝ Նանայի մոտ գնա, բայց ինքը չի ուզի, լավ էլ տեսք ունի, ինչ է եղել որ, թող մասնավոր դասեր տա, իրա թելադրությունը լավ էր, բոլորն էին ասում. «Ես բոլորից լավ գիտեմ գրական հայերեն լեզուն»:

Վարդգեսը բարձրացավ տուն, գլխարկը հանեց, բաճկոնն ու վերնաշապիկը հանեց, պահարանի պատճառով է՛լ ավելի փոքրացած իր անկյունիկում թաց մայկայով նստեց իր սեղանիկի մոտ, գլխի ետևը՝ միակ լուսանկարը մնացած՝ բանակային Պետիկի, մեդալը դոշին, էլ բան չէր տեղավորվում, դե դա էլ հո չէր հանելու, լղլղկան փորը հազիվ տեղավորվեց, իր համակարգիչը միացրեց, դա էլ հեչ բան չէր, ամեն մարդ չէ, որ հիսունն անց, էդքան բանից հետո համացանց կսովորի, ասցին ապրուստ է՝ ասաց «լսում եմ», ինքը միշտ էլ կարգապահ էր, ես համառ եմ: Աշխարհը բացեց-մտավ ներս, տեսնի խալն ինչ է ասում, մի քիչ ջղերը հանգստանան, խորացավ, գնաց սիրած կայքը՝ Հին Երևան, անջատվեց, նոր լուսանկարներ էին դրել, Մոսկովյան, շուկա, հրապարակ, Գում, Ցում, Պողոս-Պետրոս, մանկական երկաթուղի՝ դեռ հոր ժամանակվա, ով սաղ՝ ով մնացած, հին ստադիոն, նոր ստադիոն, խորացավ, չէ, հա, միտք՝ միտքս որն է, անջատի՛ր, էդ էր պակաս, պառադ, էրեբունի-Երևան: Հա, ջոկ են քնում, բայց էն ժամանակներում լավ էլ լավ էր, ինչ Զինա, ինչ բան: Էհ, դեռ մի երկու տարի առաջ հատուկ նշում էինք տղուս օրը, բայց դե շատ ծանր էր, լիքը մարդ էր գալիս, պալիռովկան սիրում էր հյուրասիրել, սալաթներ էր սարքում, ինքն էլ կողքից խորոված բերում, էլ բժիշկը, էլ տղան որ Սինգապուրում է՝ հարևանը, Պետրոսի դեպքի քննիչը, Պետրոսի հետ ծառայած ընկեր-ընկերուհի, տեսնես ուր կորան, Խաչիկն ինչքան գիտեմ՝ Ինդոնեզիա է, էն պուճուրիկ-ճլպտուրիկը՝ որ շատ էր լացում, մարդու գնաց-կորավ, տղուս ջնջեց իր կենսագրությունից, իր երեխեն էլ հեչ չի իմանա ոնց էր լացում տղուս թաղմանը: Էդիկը կնոջ հետ, պինկոմին էլ մի անգամ հրավիրեցին՝ «ավելի լավ է՝ ես չերևամ», ոչ մաղարիչ ուզեց, ոչ բան, հերոսությունն այդպես է լինում, էդիկ ջան, չի պանգում, դե ես էլ ուր կանգեմ՝ գործերը խառը, պինկոմին էլ թավշյա, Լաուրա ջան, պինդ կաց, ես քեզ հետ եմ: Դե արի ու հասիր էն սատանու բաղեր, արդեն մի չորս ամիս է՝ չի եղել, տեղը հափշտակած չլինեն, էն գյոռլամիշի ատամները եռում էին, ամեն գնալուց՝ մե քսան սանտիմ խորացած, էն յեքքյա ընտանիքը՝ անընդհատ էլ մարդ ա մեռնում, ամեն երեք ամիսը մեկ՝ թաղում, եռանդ մեջս լիներ՝ գրեի ինչ պետք է անել, եթե հանկարծ, բայց, դե, գրելս չի գա, հաշվետվությունն էլ չեմ կարենա անեմ, թքած, վաղը, մեկ է՝ վերջին օրն է, բանավոր ասելս էլ չի գալիս, ո՛ւմ ասեմ, բերանից չծորողին ասեմ՝ շատ ծանր կընդունի, գլիսանդռային՝ հեչ ասվելու բան չի, էդիկին էլ չեմ պանգում, էդիկին է պետք միշտ պանգել, մոմ վառել է պետք էդիկին ու իր ընտանիքին, բայց հիմա պանգել չի կարելի, սխալ կլինի: Էստեղից իհարկե դուրս կտանեն, իններորդ հարկից պիտի իջեցնեն, լիֆտը չի մտնի, կսահեմ-դուրս կընկնեմ, ոնց որ պապաս, քիչ էր մնում ընկնի, հազիվ պահեցի կպած, մեջքիս իջավ, էդ չեմ մոռանա, Պետրոսի համար հատուկ սրահ վարձեցի, ճարս

ինչ, գոնե նորմալ աղջիկ լիներ՝ Եհովային ասեի-գրեի՝ տենց բան չանեք: Չի էլ գա: Պետրոսին էլ չեկավ:

Փուչիկներով պառադի օրն է, մայիսի մեկ, եղանակը լավ է դեռ, անձրևը հետո է գալու, վերջին նկարս էր, ուր տարան խցկին, պիտի ասեմ որ տուն գա՝ հանի:

Լիքը մարդ, ահա, նախկին գրախանութի մոտ՝ ամբոխը ծո՜փ է տալիս, սիրո՜ւն, մայր ու հայր ու որդի, ձեռքին՝ փուչիկ, կողքին սպիտակ գոգնոցով աղջիկ, բայց ինքը կապ չունի, տեսնես՝ ով էր, տեսնես՝ սաղ է թե մեռած, տեսնես՝ տատ է թե ինչ, գուցե հետո համադասարանցուհիս էր, հայրը ճաղատ՝ Պողոսի պես, անբախտ Պողոսի, տեսնես՝ ով էր ավելի անբախտ մեծ հաշվով, Պետրո՞սը, թե՞ Պողոսը, որ սենց հերով մնաց, նա գոնե փախավ-գնաց, գլուխը պրծցրեց, իսկ սա մնաց ու պիտի ինձ քաշի: Ավելի շուտ մայրս էր անբախտ, որ Պողոսի էր գտել, դրանից ամեն ինչ սկսվեց, բայց դե ինչ արած, ինքը կասեր, էդ է: Ինքը պինդ էր: Իսկ նա... Ինքը հիմա ասենք որ էն վախտ չգնար, բա ես այս վիճակում կլինեի՞, բա Հայաստանն այսպիսին կլինե՞ր:

Էս երկու հատ նույնի՞ց են արել: Մի քանի րոպե տարբերությա՞մբ:

– Ինչ-որ ուրիշ ես, – ասաց պլիսանդռան:

– Մի՛ խանգարիր էլի, հազիվ մի լավ բան եմ գտել:

Սպիտակ գոգնոցով, ոնց որ մեր դասարանի Նունեն լինի, բայց էս տղան շա՜տ մազալու ա, հլա աչքերը ոնց ա պլշել, հայրն էլ ճաղատ, մայրն էլ՝ իսկը մորս բոյի...

Վարդգեսը լուսանկարը դաունլոադ է անում, մի անգամ էլ է փնտրում, իհարկե պատահականություն է՝ ամբոխի մեջ հանկարծ հայտնաբերել, հազիվ թե ճիշտ գուշակած լինի, մեծացնում է, սակայն լուսանկարը, իհարկե, շատ թեթև որակի է «Արմենպրեսի» կայքում դրված, մեծացնելուց պղտորվում է, աչքերը լղոզվում են, չես հասկանում:

Վարդգեսը վեր է կենում, հոտավետ վերնաշապիկն ու բաճկոնը հագնում, թևատակի հոտից կնճռոտվում, գլխարկը դնում գլխին:

Գնում է լողասենյակ, որ դեպադոր անի:

– Քանի եմ ասել՝ բաճկոնդ չհանած կեղտոտ թևատակիդ դեպադոր մի՛ արա, կպվելի է: Ո՞վ է տեսել, դու հո գյաբռլամի՞շ չես, ա՛յ մարդ:

Վարդգեսը թքեց ու գնաց դեպի դուռը: Ցասամա՜ն:

– Էս ո՞ւր, ա՛յ մարդ, սոված չե՞ս:

Իջնում է հոտավեր վերելակով, աղբի կույտերը շրջանցելով՝ դուրս գալիս շոշ, ավտոների քթի տակ շոշը կտրում, առանց նայելու, առանց ուշունցին ուշք դարձնելու, մարշրուտկեն չի ուշանում, Վարդգեսը հազիվ նստելու տեղ է գտնում, ավ մի պլիսանդրայի ու մի երեխու մեջտեղ խցկված՝ հասնում կենտրոն, «Արմենպրեսի» տեղը գիտի դեռ հին քաղաքից՝ նախկին ռայկոմի շենքը, Պապլավոկի դիմաց, մի քիչ սխալվում է, տեղը գտնում, մի երկու տղա կա, «1963-ի նկարները, պառադը մայիսմեկյան», «Հասկացա, հայրի՛կ,– ասում է տղան,– Վասիլյան Արծրունի մոտ են դրանք, իր սեփականությունն է, իր հոր արած լուսանկարներն են, ինքը էստեղ չի գալիս, իր արվեստանոցում է աշխատում»,

հասցեն վերցնում-գնում է Կասյան, Կասյանի այդ սիրելի շենքերից մեկի մուտքի կողպեքի կոճակը սեղմում, Վասիլյան Արծրունն իրեն ընդունում է, դժկամորեն, բայց տեսնելով տարիքը՝ փափկում, բացում է ալբոմները, նայում են, քիչ է մնում անջատվի, բերանի ձախ անկյունից փսլինք է ծորում, դախացած մատներն էլ սկսել են դողալ, որ ձեռքը դժվարությամբ շալվարի գրպանն է տանում փեդացած, նախկինում թավշյա թաշկինակը հանի՝ դողում է (դեկադորը դեռ դնում է, թարմ արդուկած՝ երբ շալվարը փոխում է, այդքանը դեռ պահպանվել է հին վարք ու բարքից, բայց դե ամիսներով չի փոխվում. բայց ինքը մեջը գոնե չի խնչում), բերանը սրբում է,– Էջմիածին,– նորից է գալիս, սպառնում է կաչալ, հազիվ է ներս խմում-քաշում, – Կոնդ,– չկա ու չկա – Երրորդ մաս – ետ ու առաջ է թերթում, աշխատելով մատնահետք չթողնել,– Էրեբունի, – կավճաթերթերը խնամքով շուռումուռ է տալիս,– Լենինական,– մեջքը լարած, բազկաթոռի ծայրին նստած, հետույքը նեղվում է,– Տիգրան Պետրոսյան,– անկոչ հյուր, Վասիլյան Արծրունն իր սենյակում անհամբեր գնում-գալիս է, լավ է ներս թողեց,– Պարույր (ժպիտը չէչոտ բերնին),– տղաներն էլ բարի էին, ուղղություն տվին, տեղն ասացին,– Ավետիք Իսահակյանը՝ ձեռնափայտով,– էն աղջիկն էլ հեռախոսն ասաց Վասիլյան Արծրունի,– «Գայանե» ունիվերմագ, – տարօրինակ վրաս էր նայում, հատուկ հեռու էի կանգնում, շալվարս հո չէի՞ մոռացել կոճկել, չէ ոնց որ թե,– Կասկադի ջրվեժիկ, էս ինչքան բարություն կա էս աշխարհքում, էս ինչ սիրուն ամառ է, ծառ գրեթե չկա, բայց ինչ որ մնացել է՝ տերևները պսպղում են, ասես ոսկի,– խիտ անտառը հեռուստաաշտարակի լանջին, դեռ երկու հատ են, խիտ անտառը Մանումենտի լանջին, հեծանվորդներ, ահա պառադը, ահա մյուս պառադը, գեներալ Մարտիրոսյան՝ Մանումենտի թնդանոթի կողքին, իսկ փուչիկով տղան ու ճաղատն ու փոքր-մոքր պլիսանդռա հագածը՝ չկան, պիտի հետս քարշ տայի, գնամ-բերեմ, տաքսիով, փողս կհերիքի, -«Սասունցի Դավիթ» կինոթատրոն, – գնամ շալակեմ-բերեմ-ցույց տամ՝ հաստատ կգտնի, «Կարող եք էլեկտրոնայինով ուղարկել, ես կնայեմ»,– Սվերդլով,– «էդ էլ ես ճիշտ ասում, տղա՛ ջան, չֆայմեցի»,– «Դվինի» բարը՝ թռչնի բարձրությունից,– մեյլ ռու, ասում ա՝ էդ էլ չի կարելի,– Լալայանց, – «Իսկ դուք իմ հայրիկին ճանաչե՞լ եք»,– ձկան խանութ,– «Իհարկե, բա ոնց չեմ ճանաչել, հորս ընկերն էր, թե հայրս չգնար՝ բա ես է՞ս էի դառնալու»,– Իգիթյան,– բա որ հորս ընկեր չլիներ, բա խի՞ պտի սաղ ամբոխի մեջ հենց մեկ նկարեր,– Սկիֆ ջրավական,– էն էլ երկու հատ, պապայիս վերջին կադրերը,– Թուրքի թաղը՝ կինո «Ռոսիայից» առաջ,– իրարից մի քիչ հեռու՝ երկու կադր,– Կուկեռն, – հե՛ս ա, հե՛ս ա, գտա՛, գտա՛, կարճ շալվարով տղայիկը, մի ձեռքով մոր ձեռքը բռնած, մյուսով՝ փուչիկը, պլշած նայում է, կողքին սպիտակ գոգնոցով աղջիկ՝ մի քիչ հեռու, նա կապ չունի, իսկ աջ կողքին՝ բարձրահասակ, մի քիչ ճաղատ, աչքերը մի քիչ կկոցած, աչքերի շուրջը՝ մանրիկ կնճիռներ, հայացքը՝ հեռուն, իսկը՝ հերոսության պտուղ Պողոսը, Պետրոսը գնաց՝ Պողոսը մնաց, դու մեր տան Պողոս՝ ես ձեր տան Պետրոս, պահեցի, չթողեցի, Պողոսը՝ ճաղատի քթից ընկած, մենակ թե մի քիչ մեծ,– ու շուրջները ծփող ամբո՜խ, ամբո՜խ: Բա որ ինքը չգնար, բա է՞ս էր լինելու կյանքը:

Հաստ բութ մատը՝ բարձիկի մեջ փող հաշվելուց փոսիկ ու մի պիպիկ կապույտ թանաք, դողացնելով մոտեցրեց նկարին, բայց այնպես, որ հանկարծ չդիպչի, գլուխը բարձրացրեց, անհամբեր ետուառաջ անող Վասիլյան Արծրունի ուշադրությունը անֆոկուս աչքերով որսաց.

– Ե՛ս եմ սա: Սա ե՛ս եմ:

Վասիլյան Արծրունը մոտեցավ, կռացավ, նայեց նկարը, ուշադիր վննեց:

– Դա չեք կարող դուք լինել:

– Ինչո՞ւ:

– Որովհետև դա ես եմ, դա էլ իմ հայրն ու մայրը, սա էլ իմ քույրն է, ու դա 1989 թիվն է՝ տոնախմբությունը Ժողովրդական դեպուտատների ընտրություններից հետո, երբ Իգիթյանն ընտրվեց: Ինքն էլ չխկցրել է:

Սեպտեմբեր 8, 2018

Միսաք
Խոստիկյան

չեբ

տրաքիկոմեդիա հեղափոխության նախօրեին

մոնոներկայացում 5 պատկերով (առանց Հ. Թոխատյանի)

(Ռեմարկները կամ գոնե դրանց մի կգալի մասը, բեմադրիչի հայեցողությամբ, հնարավոր է՝ հնչեն դերասանի շուրթերից)

1

(Դահլիճի բարձրախոսից տղամարդու ձայնով ազդարարվում է ճապոներեն մի քանի նախադասություն: Ապա կանացի ձայն. «Սիրելի՛ հանդիսատես, սկսում ենք ներկայացումը: Չմոռանաք միացնել բջջային հեռախոսները ներկայացումից հետո»: Հնչում է երաժշտություն. Վագների «Տանհեյզերի» նախերգանքը, որի մեջ ճանաչելի ընդգծվում է «Նաշ պառավոկ վպերյոդ լետիտ» երգը: Երաժշտությունը վերջապես խլանում է:

Թույլ լուսավորված բեմ է մտնում Հրանտը՝ Չեբուրաշկայի հանդերձանքով, ձեռքին՝ ֆաստֆուդի ֆրի կամ չիպս, և նստում ուտելու: Վառում է հետը բերած լապտերը, պարկվում է՝ նստել է Միքի մաուսի դիմաց: Երկմտանքից հետո վերջապես իրեն ստիպում է մի ֆրի հյուրասիրել: Հաջորդ պահին Միքի մաուսն ընկնում է կողքի):

– ՉԵԲՈՒՐԱԽՆՈՒԼՍԱ:

(Հրանտը ֆրին դնում է իր բերանը: Հրում է ընկած Մայթիին: Հանդերձանքի մեջ դերասան չկա: Հրանտը հանում է իր Չեբուրաշկա-գլխարկը: Սկսում է իր գլուխը շոյել):

– Ապրի, ապրի... Պուպուշ... *(ծոցից հանում է մեդալիոնն ու նայում)*: Այո՛, Հրա՛նտ: Պուպուշ, պուպուշ Հրանտիկ: Արտաբերման վարժություններս չգիտեմ երբ պիտի անեմ: Սմարթ ատամներիս չեմ վարժվում:

(Հնչում է ճապոներենով երկար հայտարարություն ամբոխի վանկարկումների ֆոնին):

– Ինչերեն է՞ր: Վերջն ա:

(Դահլիճով սահում են երկու անօդաչու թռչող սարքի ստվերներ: Ֆրին մնում է կոկորդում, սկսում է հազալ):

– Էս էլ հարամ արին:

Ես ձեր տամագոչին չեմ՝ արևով ձենս լարեմ: Մաջալ տվեք՝ էս քաղցկեղն ուտեմ:

Անհեթեթ խոսքեր: Ասենք՝ ե՞րբ վերջը չի եղել. պայքար մինչև՝ մի փայ քար, ո՞ւմ փայ քար:

(Շարունակում է ուտել):

Ե՞րբ էր վերջին վերջը, ասենք՝ վերջին Պոն՝ մի՞թե պո-ետը... հարի՜ֆ՝ ի՞նչ փայ քար: Ոչ քար, մահարձան, անձայն:

Զուն Զնձա
Զօնձն Զնձանձ
Զենձն Զանձ
Զնձին Զօնձա

Տեսնես ինչպես միշտ կորցնելու բան կա՞, թե՞ վերջին վերջ ամենավերջում՝ վերջը կկորի:

Թաղեսսի թուղթը վկա: Կմտածեի՞ր՝ մինչև դատաստանը, վերջինը ոչ թե թանգարանում, այլ քրդերի համար ճապոնական տոնավաճառի շրջում մեջ: Սա էլ *(շոյում է Չեբուրաշկա դիմակ-գլխարկը)* պիտի էս լեզվով խոսի: Առավել ևս՝ որ հիմա էս լեզուն, որ խոսում եմ, չնայած դեռ պաշտոնապես ընդունված է, ասենք, նաև Իրաքում, թերևս ոչ ոք չի հասկանում արդեն՝ «գիտության օտար»:

Վաղուց, բայց՝ ոչ Չեբին:

Ես էլ, ով գիտի, մոռացած կլինեի, եթե չասեին, որ Չեբը դրանով խոսի...

(Մատնացույց է անում Միքիի հանդերձանքը, դիմում նրան):

Ա՛, լա՜վ, լա՜վ, փեպեվե՜նգ, իհարկե, եթե քեզ հետ ալ լեզու չթռչեր՝ գպվռտվեր:

Մարդ չի հասկանում՝ ի՞նչ են գտել Չեբի մեջ, ճապոնացիներն ի՞նչ են հասկանում Չեբից, ինչի՞ պիտի բոլորին անհասկանալի էս լեզվով խոսի: Լավ ա՝ ֆայմեցին, որ հենց ես պիտի Չեբը լինեմ: Չե՛բ, հաճախ ոչինչ չեմ հիշում, բացի քեզնից՝ երևի մանկության Չեբից: Ինձնից լավ ոչ ոք քեզ չգիտի:

(Երգում է՝ մուլտի երաժշտության հնչերանգը նմանակելով):

– Նաշ պառավոզ լիծիտ վպիրյոդ, վ կամունե աստանովկա:

Ասում են՝ սպիտակգվարդիականների երգ է եղել:

(Շարունակում է «երգել» ևս մի քիչ՝ չիփս ուտելով):

Հանրային ռադիո նամակներ էին եկել Ճապոնիայից, թե ինչու փակեցիք հայկական երաժշտության ծրագիրը: Ո՞վ կմտածեր, որ ճապոնացիք՝ էդ ծպտյալ ազգայնական-ները, լսում են հայկական երգերը՝ սիրում:

Լավ էր՝ ճապոնացիք առան Չեբի իրավունքները, ասում են՝ ոնց որ 2003-ին: Քնատները վանդակում չեն փակում գոնե, էս *(քթի դիմաց է պահում հերթական ֆրին, ապա՝ դնում բերանը)* քաղցկեղի փողը տալիս են՝ չսատկեմ, մյուսները սրանից էլ էին պրկվում: Իմացա՝ սրանք պարզել են, թե մայրաքաղաքի բեմերի աստղ եմ եղել, առանձնատուն ունեցել վերևներում: Կարող է՝ իրոք եղել եմ:

(Կեցվածք է ընդունում):

Ինչու չէ, ես հավատում եմ: Գուցե իրոք...

Հուր ուներ մորուք, հուր հեր ուներ, և աչերս էին արեգակունք:

(Հաբ է կուլ տալիս):

Ամեն դեպքում միայն սպառնալիքի, պրկանքի տակ, Գենայի պես, գուցե ինձ էլ հնարավոր չլինի ոտքի հանել: Թեկուզ սատկացրու՝ չեմ կարողանա անգամ ճիպս շարժել. մի սուտ պատրանք է պետք, գոնե մի բերան իմաստ: Խեղճը... ի՞նչ արին գլխին, վեր կենալ չկարողացավ, երբ պարզվեց, որ ինչ խոստացել են, երբեք չէին անելու՝ չեն արձակելու՝ ինձ տեսնի:

Չնայած էդ առնետ Սանը ֆշշացրեց, թե ով էլ էդքան ռենտգեն ճառագայթվեր, վեր չէր կենա: Չգիտեմ, չգիտեմ: Անտանելի էր դարձել, երբ տեսա նրան վերջին անգամ, մաղձոտ էր՝ դառը:

Գոնե սրանցից ավելի քիչ եմ նեղվում՝ սրանց լեզուն չգիտեմ, կապ չունեմ, չեմ ակնկալում ոչինչ:

– Չե՛բ *(դիմելով իր դիմակին)*, սրանք քեզ վաղուց են առել ռուսներից, ինձ էլ վերջին անգամ ե՞րբ ծախեցին: Լսեցի՝ մեծ վթարից հետո են առել, շատ բան են առել, բայց հաշվի չեն առել, որ էստեղ օդորակիչները չեն աշխատելու: Սուշին հազիվ փրկեցին բարեգործական ակցիայով: Քրդերը կմարսեն:

Ըհը՜ *(ցույց տալով շուռ եկած Միքի մաուսին)*, չդիմացավ կտրիճ տղեն:

Ասենք, երևի բկլիկը կարող էր իրեն թույլ տալ արանքը ճղել՝ կեսից թռնել: Մայքիից վիկա չի պահանջվում ամեն անգամ դուրս գնալու համար... բնական պահանջով: Բայց ինչ-որ երկար չեղա՞վ: Բայց ո՞նց ծլկեց առանց շորի: Մի՞թե գեղուհի մը համբույրով մեկը մեր Միքիից մարդ շինեց:

Զուն Զնձա

Տրաքիկոմեդիա:

Էհե՜յ... մաչո՛ աստղ, վեվկե՛կ... ինչքա՜ն եմ համբուրել այս շուրթերը, շալակդ ելել: Ո՞ւր են հիմա քո կատակները...

(Գրկում է Միքիի գլուխը):

Գոնե հիմա ուշադիր լսում ես, առաջ չէիր թողնի մի խոսք ասեմ. քո գործերը, քո մտքերը, քո վբաղվածությունն ու հաղթած մշակույթդ կանգվածային: Հիմա եղի՛ր ինձ համար:

(Երգում է):

Դարձի՛ր ինձ համար, եղի՛ր ինձ համար... քլաուդ թեքնոլոջի ես ինձ համար... մի գլուխը լավ՝ երկուսն ավելի, հատկապես, եթե մյուսը դատարկ է:

Դատարկ գլխի կարիք միշտ կա:

Բայց, այնուամենայնիվ, ինչո՞ւ է դատարկ իսկապես:

(Թփթփացնում է գրպանները: Հանում է հեռախոսը, փորձում):

Սրանցից գլուխ չեմ հանում՝ ստեղծված են, որ ինձ կատարյալ հիմար զգամ: Ի՞նչ իմանամ՝ որից հետո ո՛րը սեղմեմ, որ ինչ լինի, ինչ բացվի:

Երեկ սա էլ են երևի վարի տվել կնքվածները:

Զուն Զնձա
Զօնձն Զնձանձ

(Դառնացած դնում է գրպանը):

Ո՞ւր ես, տղա՛: Կփնտրվի՞ս կոր: Ի՞նչ եղար, ջա՛նըմ: Չէ... Մայքին բոլորի առաջ չէր մերկանա... էդ... էդ խփնվածի պես, անունն ի՞նչ էր, դե որ իմ խաղացած Չեբի դերը պիտի խաղար՝ վիզը ծուռ: Հարիֆի յանը լրիվ տարել էր. խոսում էր դատարկ պատերի, հեռուստացույցի, լուսապաստառների հետ, ճանճերի հետ, ինչ-որ հրի, ջրի, պղնձե փողերի փորձություններ,

(վեր է կենում, սկսում է կողքանց քայլել՝ մի ոտնաթաթի կրունկը մյուսի ծայրին դնելով)

Նշանների լաբիրինթոս էր տեսնում խոհանոցից պետքարան չեղած տեղը՝ երկու քայլի մեջ. ուր գնար՝ միշտ մի կողմի պատի ուղղությամբ էր շարժվում: Խորհրդանշաններ ամեն ինչում, բոլորի հագուստների գույներում: Չես հասկանում՝ ինչի՛ դեմ էր պայքարում: Մերկացավ: Բռնեցին տարան, էլ չերևաց:

(Բռնում է Մայթիի ականջներից և ուղղում իրեն):

Հոգուս հետ իկուր ես խաղում, իբր՝ աղե՞կ եմ հիմա, գլուխս շոկով տե՞ղը գցեցին, գուցե փախե՞լ եմ հիվանդանոցից: Ում ուզում ես՝ ասա. ես գիտեմ, որ դա ես չեմ եղել:

Մայթի՛, գիտեմ՝ դու այս աշխարհից ես՝ աչքաբաց, հերոս մուկ, ոչ թե… պույ-պույ: Չնայած, վերջին հաշվով, պույ-պույի քեֆին էլ քեֆ չի հասնի, բայց, Մայթի՛, դու երբեք ձախորդ չես եղել: Հերոս, որի պոչից կախված է ոչ միայն շաղգամի հանել-չհանելը, այլև միգուցե ամբողջ աշխարհի փրկվելը: Բայց ինչքա՞ն կկարողանայիր ապրել վայրում, ուր ոչինչ, ոչինչ այլևս չես ճանաչում, ծուռ հայելիներում, բոլորովին արտառոց:

(Սկսում է կննել Մայթի մաուսի կոշիկները, գաղտագողի նայում շուրջը, փորձում է հանել վրայից ու հագնել):

Մի՛, դե մի՛….

Հո-ռո-մ Պուպու
Հո-ռո-մ Պուպու
Առոն ի մու
Չին ի տու
Չին ի տու

Ոչ մի վատ բան չկա արածիս մեջ, կոշիկ ու շոր երկնքից չեն ընկնում: Վերջիվերջո, ընկերս է թողել ինձ՝ բա ում:

(Հանում է Միքիի շալվարը նրա հանդերձանքի՝ սև տրիկոյի վրայից ու հոտոտում: Խճճվում է շալվարը հագնել փորձելիս):

(Անիվներով խաղալիքի պես մի լրտես ռոբոտ է մտնում բեմ, Հրանտը տապ է անում, ռոբոտը ետ ու առաջ է անում ու հեռանում է):

– Գնա՛, գնա՛ խաբար տուր… Կտայիր, եթե չիպդ կրծած չլիներ:

Հո-ռո-մ Պուպու
Չին ի տու

Հանգիստ… *(նորից ծոցից հանում է մեդալիոնը, նայում):*

– Հանգի՛ստ, Հրա՛նտ:

Առաջին անգամը չի, որ խառնվում ես: Դու դա կարող ես, հերո՛ս:

Ձուն Ձնձա
Ձօնձն Ձնձանձ
Ձենձն Ձանձ
Ձնձին Ձօնձա

Ոչ մի կակաչել:

Սա հագնում են, չէ՞: Սա ի՞նչ էր, ո՞նց էին հագնում:

(Շալվարի գրպանից դրամներ են թափվում: Հրանտը ապշած կննում է, թե ինչպես են դրանք թափվել, դասավորվել: Ցույց է տալիս):

– Պեգասի համաստեղությունը: Այսպես ստեղծվեց: Այսպես ստեղծեցի: Ողջ տիեզերքը… Բոլոր աստղերը չէ, որ փուչ հրդեհ են: Կան մոլորակներ, որ քաղաքակիրթ լույսով

պատված՝ աստղ են թվում, իսկական աստղեր՝ անդիմադրելի ձգողությամբ, անդառնալի հիվանդ աստղեր:

(Մատնացույց է անում Միքիի հանդերձանքը, ապա՝ կոպեկների համաստեղությունը):

– Ինչո՞ւ մուկը... ձին... պիտի ապրեն, իսկ դո՛ւ, աղջի՛կս... առաջին անգամ պատահեց, երկրաշարժը չէր, չէ՝ երբ սեղանից ընկավ ջանիկս, ջանիկս, ջանիկս: Որ շտապ հիվանդանոց պիտի հասցնեմ՝ պարզ էր, հասկացա, բայց չէի հասկանում՝ ի՛նչ անեմ սա, ո՛նց հագնեմ՝ շալվարս, ջանի՛կս, ո՛նց պիտի հագնեմ, ո՛նց պիտի հագնեմ շալվարը: Շալվարը արագ պիտի հագցվի,

(խփում է իր գլխին)

չի կարելի ամեն անգամ մի ոտքից մյուսն անցնելիս տիեզերքն արարել:

Բայց եթե ես չընդարձակեմ տիեզերքը...

(ձեռքը մտցնում է շալվարի փողքը ու հանում մյուս կողմից)

ինձ կճխլի ծակը:

(Թռչկոտում է, ապա արագ գետնից հավաքում է դրամները):

Ինչքան ետ գցած ունի, որ սա էլ չի վերցրել:

(Կրկին լսվում է լրտես ռոբոտ-խաղալիքի ձայնը, ստվերը շարժվում-մեծանում է պատին):

Ամեն անգամ, երբ թակարդը լարվում եմ, ընկնում, հավերժ վերադարձի կարուսելը նվագում է ուղեղիս մեջ... Շալվարի ամբողջ պտույտը՝ հերթով՝ չկարողանալու բոլոր տեսարանները. երկրաշարժից, երեխու ընկնելուց, գրադի տագնապից, մեծ վթարից, մինչև, ո՞րն ասեմ... երեկվա ծեծը, էսօրվա ցնցումը: Սերիալը բոլոր տարբերակներով՝ հնարավոր, անհնար: Մեծ փոս ոլորում-փորում գլխիս մեջ:

Միևնույն է, դրանց արանքում համարյա ոչինչ չեմ հիշում, ասում են, Գենայից հետո: Միայն լիալուսնին կարմանալի բաներ են կատարվում, եթե ստացվի, մի բան ճարեմ՝ քնեմ, քնած հիշում եմ, անգամ նախքան ծնվելս եղածը...

(Հաբ է փնտրում ու կուլ տալիս):

Հիշում եմ ու չեմ հավատում... Այդ մնացուկը՝ Լուսինը, կարծեմ, դեռ չեն հասցրել լրիվ օտարել: Լուսինն ուկողները շատ են՝ իբր վիճարկում են անհնարինը:

(Չարչարում է շալվարը):

Մայթի՛, մի՞թե անելու ես՝ ինչը սպառնում էիր, թե՞ պատմելու ես, մինչև կշտանաս: Չանես՝ ո՞վ կանի: Առնետը, առնետը գցեց աղջկաս... Չի ստացվում:

Բայց ո՞վ չի կարողանում: Չեմ հասկանում՝ ո՛նց են հագնում էս անտերը մարդիկ:

Երեկ – հե՜յ, ինչի՞ եք խփում, ի՞նչ եմ արել: – «Չեբուրաշկա՛, ականջներդ կկտրենք, բի՛ձ, բի՛ձ, անասո՛ւն» են ասում ու քացով դեմքիս: Ինչի՞ դեմքիս: Ես դերասան եմ, չե՞ք հասկանում՝ պերսոնաժի փոխարեն ծեծ եմ ուտում: Չեն տարբերում՝ դեր, դիմակ, դերա-

սան. «Դու չես ջոկում»,– ասում են,– «բը՜ձ, հենց Չեբուրաշկի Չեբօղրաշկա»... Ինչի՞ դեմքիս:

«Պատասխան՛ կտաս»:

Իրենց հարազատներին են ուզում, իրենց չեղած կյանքի, բարիքի հատուցումը: Բայց Չեբը ի՞նչ կապ ունի, ա՜յ կնքվածներ: Գնացե՛ք մեղավորներից ուզեք... Ինձ վրա եք դնում, իմ անունով անվանարկում, շանսատակ անում, որովհետև Չեբուրաշկա՝ ուրիշ եմ, դա իբր քիչ է՝ անծանոթ, ընդհանրապես «գիտության անհայտ» եմ: Ամեն մեկդ էլ ուրիշ չե՞ք: Դուք ձեր շատ էլ լավ իմացած հիվանդություններից եք քաշված, ձեր իսկ տականք թափոնից՝ հենց թարախակալած ուրիշությունից... Իսկ որ իմանայիք՝ ինքներդ ո՛վ եք, ու չպղծեիք ինքներդ ձեզնից, դեռահասների պես դինոզավրերի տարիք չէիք երևակայի՝ հուր հեր, հուր ունեք մորուս և աչերն են ձեր արեգակունք:

Ձուն Ձնձա

(Հաբ է կուլ տալիս):

Ես եմ՝ Չեբն է ձեր շանսը մաղձից չթունավորվելու, ձեր հայելու մեջ երևալու հույսը:

Չէ՛, ծեծում եք, որովհետև պարզապես կարող եք ծեծել... ծեծել ու վե՛րջ:

(հազում է)

Ավազ է ամեն տեղ՝ աչքերիս մեջ, կոկորդիս մեջ:

Չասեք, թե ո՛ւմ եմ պետք որ, չասեք՝ չգիտեք՝ ի՛նչ եք անում: Առնետը տանի ձեր աղջկան:

(հազում է)

Հանգիստ, հանգիստ: Շնչել, շնչել, մեկ, մեկ, շնչել...

(Շոյում է իր գլուխը ու ցնցվում):

Ո՞վ է շոյում Հրանտին: Ես: Ես՝ ո՞վ: Ես դրսի՞ց եմ: Չե՞մ: Ինքս: Մի՞թե Չեբն է ես: Չե՞բը: Ե՞ս:

(Ծոցից հանում է մեդալիոնը, կախում ուղղալարի պես, ուղղաձիգ կայունացնում: Ձեռքի ափը պատվի առնելու պես դնում ճակատին, իջեցնում քթի վրա և ուղղալարի շնորհիվ ուղղում իր գլուխը, վիզը, իրանը, ամբողջ կեցվածքը: Ժպտում է:

Լսվում է ճապոներեն հայտարարություն:

Կրկին Հրանտի կերպարանքը ծռվում է: Կնոջ ձայնն ազդարարում է. «Հարգելի՛ հանդիսատես, սկսում ենք ներկայացումը, չմոռանաք ներկայացումից հետո միացնել ձեր բջջային հեռախոսները»):

Գալիս եմ, գալիս: Ինչերեն է՞ր:

(Թաքցնում է մեդալիոնը ծոցում ու ճապոներենի պես մի ֆրազ է բղավում):

Ի տարբերություն ձեզ՝ Չեբը ինքնության որոնումների մեջ երբեք չի ընկել, չնայած ոչ մի բառարանի ցուցակում չկա:

(Քարշ է տալիս Միքիին ոտքերից):

էդ Լառիսկա-սանը չգտնի: Հո-ռո-մ Պու-պու

(Թաքցնում է կուլիսում: Վերադառնում, վերջապես ազատվում է շալվարից, կոլոլում է այն ու կոխում ծոցը, թփթփացնում փորն ու գլխին քաշում Չեբուրաշկայի դիմակ-գլխարկը):

Դառա Ծելեպուփկոտ: Իրենց դարն է: Բայց անկախ գույնից, դրանք բոլորն էլ նույն դեմքով են ու պոչավոր:

(Շոշափում է իրեն):

Հղի՞, չէ՜ ... Չեբը Օն է: Գրված է՝ Օն:

Բա ինչի՞ գիշերը մուտքի մոտ էն լիրբ աղջիկն ասեց՝ որ կերածս իրեն տամ, Չեբուրաշկան ցույց կտա, ու սկսեց քանդել փեշի կոճակները: Օն՝ հեշտո՞ց: Իգականության նշանն ինքը չի կարող արդեն էգ լինել այդպես՝ պարզապես դասվել էգերի շարքը:

(Ցածր երաժշտություն է լսվում, ապա կրկին՝ ճապոներեն հայտարարությունը):

Չեբը իգական չէ, ոչ էլ՝ կին: Դեռատի Նրբությունն է: Օն՝ քնքշության կորությունը: Ան-կա խտխտան ենթակա:

(Հանում է ատամի պրոթեզը, մաքրում ու նորից դնում է):

Գալիս եմ, հիմա: Սկսե՛ք...

Քրչոտությունը շփոթում եք նրբության հետ՝ իկուր:

(Դուրս շտապելիս ընկնում է:)

Չէ՛, չէ՛, չէ՛... Առավել ևս, ո՞նց էին ասում՝

(թափ է տալիս իրեն)

ոչ «ընկած կին», Հո-ռո-մ Պու-պու: Թեկուզ ամեն քայլի ընկնի՝ վեր կկենա:

Անգամ սիրո մեջ վախենում եք ընկնել՝ կրավորական չհամարվեք հանկարծ: Առնետը տանի ձեր աղջկան: Էլ ո՞վ է ի վիճակի այդքան ընկնելու: Ո՞վ չի վախենա, ո՞վ կհանդգնի:

(Բեմից դուրս գալիս վերադառնում է, ուտելիքի պարկի մնացած պարունակությունը միանգամից դատարկում բերանը, խցկում կոկորդը, լպստերը վերցնում ու հեռանում է: Երաժշտությունն ուժեղանում է):

2

(Դահլիճին դիմահայաց՝ բեմի կենտրոնում կախված մեծ լուսապաստառ է լուսավառվում: Սկսվում է շոու ծրագիրը: Ցուցադրվող տոնական, ռիթմիկ երաժշտական հոլովակում պարում է Չեբուրաշկա-Հրանտը՝ ռոբոտների կորդեբալետի ուղեկցությամբ, առևտրի մեծ սրահում: Հոլովակի վերջում, ասես լուսապաստառից, խանդավառ բեմ է նետվում Չեբուրաշկա-Հրանտը՝ մեծ ծաղկեպսակը վզից թեք կախված՝ ամբողջ իրանով մեկ, որի անվերջ երկար պոչ-շարունակությունը գետնատարած քարշ է գալիս նրա ետևից: Նա ոգևորված արտասանում է).

Սա իրիկունն ըլլայի ես,
եւ իըպէի ճակտին ամէն անցորդի,
չքնաղագեղ ու նըւաղուն յամուրդի
սա իրիկո՜ւնն ըլլայի ես:

(«Սա իրիկուն շտապեք տոնավաճառ» Հոյ-հոյ ակցիայի»,– բղավում է լուսապաստառի Չեբուրաշկան: «Հոյ-հոյ»՝ կրկնում է կորդեբալետը: Նույնը հնչում է քրդերեն:

Լուսապաստառին պեղչերով տարօրինակ ապրանքների ու այլափոխված հայտնի տեսարանների շքերթ է:

Մինչ լուսապաստառը հետվիետե աննկատ կորցնում է պայծառությունը, բեմում շատ ավելի լուրջ տոնով շարունակում է Չեբուրաշկա-Հրանտը առանձին լուսարձակի լույսի տակ).

Սա իրիկունն ըլլայի ես,
լի երգովը թռչուններուն, մարդերուն,
ու տարրերուն աղաղակովը տրոփուն՝
սա իրիկո՜ւնն ըլլայի ես:

(«Սա իրիկուն չուշանա՛ք. Հո՜յ»,– բղավում է լուսապաստառի Չեբուրաշկան: «Հո՜յ-հո՜յ»՝ կրկնում է կորդեբալետը և քրդերեն թարգմանությունը: Հրանտի ոտքին է ընկնում-փաթաթվում ծաղկեպսակը:

Համեմատաբար ավելի ու ավելի խամրած լուսապաստառին պեղչերով տարօրինակ ապրանքների ու այլափոխված հայտնի տեսարանների շքերթն է: Չեբուրաշկա-Հրանտը գրեթե շշուկով շարունակում է).

Սա իրիկո՜ւնն ըլլայի ես,
թոյլ, նապենի, շըղարշային, վարդաբոյր,
ու ծըփայի պերթ ոսկեսար վարագոյր
վըրան ամէն հոգիի:

(Մթնեցում ամբոխի վանկարկման ֆոնին:

Դադար:

Բարձրախոսից կրկնվում է տղամարդու ձայնով սկզբում արտասանված ճապոներեն խոսքը: Կնոջ ծանոթ ձայնն ազդարարում է. «Հարգելի՛ հանդիսատես, սկսում ենք ներկայացումը»):

3

(Բարձրախոսից կրկնվում է տղամարդու ձայնով սկզբում արտասանված ճապոներեն խոսքը:

Բեմին՝ ձախից մթում մի մեծ գրասեղան է՝ բազկաթոռով ու պահարան: Միայն սեղանի մակերեսն է լուսավորված՝ վրան դրված լամպով:

Աջից առանձին լուսարձակով լուսավորված մտնում է Հրանտը՝ նախկին հանդերձանքով, թևի տակ պահած արդեն կգալիորեն փոքր ականջներով Չեբուրաշկայի գլուխ-դիմակը, ու կուչեկուչ մոտենում, կանգնում է սեղանի դիմաց, ձեռքի ափերը իրար կպցրած խոնարհվում սեղանի առաջ ու երկար մնում է այդ դիրքում: Ապա ափալ-թափալ վրա է բերում):

Ներողությո՛ւն: Ներողությո՛ւն, բայց, ես չէի ուշանա, ես երբեք... վերի տեսախցիկը վկա, չէի ուշացել: Ինձ չթողեցին մտնեմ: Չթողեցին, մինչև ըստ Ձերդ Սանի հրահանգի ականջներիս չափը տեղում պատշաճ չ...ըը...կրճատեն: Նախօրո՞ք: Նախօրոք չէին տեղյակ... կներե՛ք, ես երբեք, երբ նախկինում չկային տարապի սահմանափակումներ, ցուցումների ցանկ... իհարկե, իհարկե՝ ես չէի էլ փորձի հարցականի տակ դնել... դուք ավելի լավ գիտեք, թե ի՛նչ չափի ականջներ, վարք, խոսք ու շոր պիտի Չեբուրաշկան ունենա... ես ի՞նչ, միայն, կներե՛ք, կներե՛ք: Ի՞նչ Ուսպենսկի, Շվարցման: Այսպես, միանշանակ, շատ ավելի վայելուչ է՝ կոկիկ, ներկայանալի, էլ չասած՝ հարմար, նպատակահարմար:

(Որոշ դադարից հետո ավելի է կռանում):

Այս հրաշք ծրագրին ես մեծ խանդավառությամբ եմ... Դուք գիտեք. ես մի պահ անգամ չվարանեցի դերը ստանձնելու... ինձ արված ձեր շքեղ առաջարկը, չնայած բոլոր կշտամբանքներին, որ իբր ուրիշի հաշվին, ուրիշի տեղն եմ վբաղեցնելու: Նման անլուրջ տվայտանքների պատճառով ես ձեր ընձեռած բացառիկ շանսը չէի կորցնի: Առավել ևս նախորդ անգամվա դրա ամբարտավան պատասխանից հետո: Արժանապատվորեն հայտնեցի, որ մերժել եմ դերը, որն իր ձեռից առել ու ինձ էին առաջարկել, իսկ դա, թե՝ իրեն, պարզապես, նման՝ իմ դերը վերցնելու առաջարկ չէին անի, առհասարակ: Չեն էլ անի, գոռով, տմարդի: Դու ուրիշներին հասկանալի չես,– ասեցի: Խևերը ծափ տան, դու պարի: Գինդ չի աճի: Սոսիները՝ քեզ պատեր, երկինքը՝ տանիք: Դեռ գլխի էլ չէր նույնիսկ, թե ո՛ւմ նամակի հիման վրա են ամեն ինչ ձեռից առել:

Ո՛չ, ո՛չ, իհարկե, ե՛ս չեմ ասել, թե՝ մարդ կա՝ ընդարձակում է տարածքն աշխարհի, մինչ ոմանք շալակած աշխարհին են տանում... օրը ցերեկով... մեկնաբանում, ժողովում՝ տիրություն անում, իրենցով անում:

Իսկ Չեբուրաշկային, այո՛, կրպարտում են: Դուք գիտեք՝ նա երբեք այլախոհ չի եղել: Այդ անմեղսունակ խեղկատակ խաղալիքը չէր կարող ներգրավվել որևէ ռեժիմի դեմ պայքարում: Որբերին միշտ էլ ջանում են վորագրել... անգամ հայտարարված թշնամու վիժվածքներին:

Նա երբևիցե չի հակադրվել, չի դիրքավորվել որպես բացառիկ... չնայած, այո՛, այդպես էլ չի ուծացվել՝ չհասցրեց... չհասցրեցին, այսինքն՝ չի ճանաչվել լրջորեն, չգիտեմ, ասենք՝ գիտության կողմից... չնայած ձեռնարկված միջոցներին, Չեբից սարքած տիպարը իհարկե շատ հանրահայտ էր, բայց մեծ հաշվով իրականում նա մարգինալ է մնացել:

(Ավելի է կքում:)

Չեմ... Ես իրոք տեղյակ չեմ, չեմ լսել, թե ուր կլինի, չեմ տեսել... Մայքիին վերջին անգամ վաղուց... դե, մենք հազիվ էինք ծանոթ... ինչո՞ւ ինձ պիտի ասեր՝ սեյսմոլոգ չեմ... ես...

դատապարտում եմ բոլոր էդ պայթեցումները՝ ահաբեկչական ծրագրերը: Լեռներում, առավել ևս, խաղ անել չի կարելի… ոչ մի տեղից, չգիտեմ, որտեղի՞ց իմանայի, պարզապես եենթադրեցի…

(Վերջապես չոքում է:)

Եթե մի բան իմանամ՝ անշուշտ, անմիջապես… հավատացա՛ծ եղեք…

Ես… ես թափանցիկ եմ:

(Բեմի լույսը վառվում՝ շատանում է: Չոքած Հրանտը ուշադիր նայում է սեղանի տակ, գողեգող պտտեցնում է աչքերը, ի վերջո բարձրացնում է գլուխն ու համոզվում, որ մենակ է: Թեթևացած արտաշնչում ու փռթկացնելով սրբում է քրտինքը):

Հրանտի՛կ, Հրանտի՛կ…

Ի՞նչ: Ի՛նչ իմանայի՝ ինքս ինձ եմ խոսում: Ի՞նչ, ի՞նչ եմ ասել որ:

Ա-յա-յա՜յ…

Է՜, ոչինչ չի եղել: Զուն Զնձա: էդ առաջ էր, որ պաշտում էի ինձ, և երբ հիասթափվում՝ կրքոտ ատում էի: Ա՜խ, առնետը տանի աղջկադ: Հիմա սովորել եմ ըմբռնումով մոտենալ ինձ, մեկ, պինձ, պիս: Հանդուրժողաբար: Սոսիները կարմիր գրքում են, իսկ բայթերը երկնքում չեն հերիքի դարդերիս: Ինձ չեք ստիպի ներս փախչել:

(Գրպանից հանում է բջջային հեռախոսը: Դարձյալ չի աշխատում: Ջեռքերը դառնացած թափ է տալիս ու հեռախոսը դնում է գրպանը: Դիմում է աջ: Բարձրախոսից հնչում է տղամարդու ճապոներեն խիստ խոսք: Հրանտը չի հավատում ականջներին:)

Ե՞ս… ի՞նձ… Ինչերե՞ն էր:

(Եվս մի ճապոներեն նախադասություն է հնչում: Փնտրում է հաբ՝ գտնում է):

Վերջինը յալլա՛:

Ինչի՞ հենց ես: Ինչե՞ր եմ քաշել: Ես չանեմ՝ ուրիշը կանի: Հասկանալի է: Ես, գոնե, ուրիշներից լավ կանեմ, իրոք:

Գենան ասում էր, որ դա ստորության նշանաբանն է, բայց Գենան չկա: Միքին էլ՝ յալլա՛:

Զուրմ ի պարմ
Ի ջարմ Զնջեր
Ռագրն ի հԱրկ
Մտավ ի փարկ

Ինչպես ասում է ռուս պոետ Նեկրասովը, իսկ նա գիտեր ինչ է ասում…. գործակալ էր, ասում է՝ տուն երբևէ կարող ես չունենալ, բայց գրասենյակ ունենալ պարտավոր ես:

Այսպես

(կամաց-կամաց սկսում է պարել)

թե այնպես:

Ավելի լավ է գրասեղանի վրա, քան վահանի՝ բաց երկնքի տակ գիշերել:

Մխ, Առնետ Սանը իր պոչը կուտի՝ չի մարսի հաստատ.

(ատամները սեղմած շարունակում է նախադասությունը կապկելով)

ինձ այստեղ տեսնի՝ տեղում քոռացած ատամները փակ լեզուն կուլ կտա: Կրված ու վառված աշխարհին էլ կրծի հեչ չի հովանա՝ իր վերջին պատանդ, իր վերջին մատաղ, իր տենդի կոմբի վլերը խրած: Իսկ ես շատ թեթև մի ամպի նման, թեկուզ անշալվար, կոֆե-սիգարով մի ոտքս պիտի մյուս ոտքին գցեմ՝ քանի դեռ ունեմ ... չհաշված մի բութ, մի մատ ու մի կես:

(Նայում է ոտքի թաթերին: Կայսրի պես անցնում է գրասեղանի ետևը, վերջապես նստում բազկաթոռին երկար ծանրութեթև անելուց հետո ու անմիջապես վեր է կենում ու սեղմում սեղանի կոճակը: Առաստաղն ու պատերը սկսում են շարժվել աղմուկով: Սարսափահար մտնում է սեղանի տակ՝ թաքնվում: Դուրս է գալիս սեղանի տակից, գողեգող նորից կոճակ սեղմում: Լույսերը փոխվում են, ու բարձր երաժշտություն է հնչում: Նորից է սեղմում. ամենը վերադառնում է նախնական վիճակին: Նորից է սեղմում սեղանի մի կոճակ: Ներս է մտնում լրտես-ռոբոտը: Հրանտը վերցնում է նրան փակցված թուղթը կամ ֆայլը՝ աչքի անցկացնում՝ այդպես էլ չգտնելով թուղթը կարդալու հարմար հեռավորությունը):

Ապրե՛ս, կեցցե՛ս... տեսնում եմ՝ արդեն մեջդ մտցրել են գլխավոր փոփոխությունները՝ իմն ես հիմա, Գիքո՛ր: Սրանից հետո անունդ Գիքոր կլինի: Մի քիչ կեցվածքիդ վրա կաշխատենք... Հա՝ խոսելիս վերին շրթունքդ շարժիր՝ չես շարժում:

(Շոյում է ռոբոտիկի իրանը, մատը մտցնում նրա բերանը: Շարունակում է կարդալ: Բռնում է գլուխը):

Ու դրանք բոլորը Չեբուռաշկա պիտի լինե՞ն: Տրաքիկոմեդիա: Ազգ...

(հակում է)

Օղակ կտրուկ արջերը
Արջպիդ կապուկ, անձուկ անցուկ
Հորը խրուկ առանց նեցուկ

Ահեղ Չեբուրապոր: Թիվ կա Գենայի մետաստակներին, չկա՝ սրանց ֆիլիալներին: Մե՛ր, ... մե՛ր ֆիլիալներին: Եթե մեր ասելով, մեր համարելով մերը դառնար՝ հիմա ո՞ւր էինք... Մեր՝ նշանակում է՝ մեկ արդեն, ոնց ասեմ, մերել են: Սլաքները մեկ՝ ընդհանրապես, շերեփը դեն ու սուս:

(Բեմի երկու բանվորներ, պինվորական կամուֆլյաժ համազգեստ հագած, բեմ են բերում ոչ մեծ լուսապաստառներ, տեղակայում՝ ուղղելով դեպի սեղանը: Մինչ այդ նրանցից մեկը մի թուղթ է տալիս շվարած Հրանտին ու դուրս գնում գործընկերոջ հետ ալեհավաքները բերելու):

Քանի այս...

(Հրանտը մատնացույց է անում լուսապաստառները ու նայում թղթին՝դիմելով լրտես ռոբոտին)

տե-լե-կոն-ֆերենսինգ կոչվածը չի սկսվել, բան կա անելու: Նախ պիտի սափրվել, մոգոնել՝ ի՞նչ եմ էդ էգուցվա Չեբուրաշկացուներին հաչալու:

Կարծես չէր կարելի նախօրոք տեղյակ պահել՝ իմանայի գլխիս գալիքը, էդ բոլոր շեղաչյաների առաջ, աշխարհի առաջ… տակից դուրս պիտի գամ: Ո՞նց: Բայց, այո՛, դիրքը պարտավորեցնում է:

Սրանց ավանդապաշտ հոգին խորը կլինի…

(Պահարանում փնտրում է ու գտնում սափրվելու պիտույքներ):

Ահա

(Ծոծրակին կապում է թիկնոցի պես մի սավան-սրբիչ: Սկսում է թրաշվել):

Կարաբալախ ձանբլան
Կարաբալախ ձանբլան
Տուպլախ տուպլախ
Կանչում էր Նորէն նորէն
Արեւելքի մութէն
Հեր իմ բար
Անդիէն եկար
Կարաբալախ

Ինձնից ի՞նչ մարվիչ-հրահանգիչ: Ամեն անգամ իրենք են լուրջ-լուրջ պարտք համարում ինձ խրատել. նախորդ անգամներին իմ իսկ արածներից ո՛րը անեեեմ, ո՛րը շեշտեմ, ինչպես ժպտամ:

(Ձեռքը դնում է ռոբոտիկի վրա, քաշում ծնկներին, շոյում ու հոտոտում):

Երնեկ քեզ՝ դու ստեղծագործ «Ես»-ի ու ջանիդ դարդը քաշող «Ես»-ի խնդիր չունես:

Խրատում են հուպական տոնով՝ կարծես գյուտ են անում, ձու են ածում: Ես էլ դեմքիս թախծոտ շան ակնածանք սարքած՝ «իհարկե, իհարկե», իբր շատ հաց ու պանիր պիտի ուտեմ, որ իմ պիրծ դնչովը ձեր քաղաքակիրթ լաքին մեռնեմ: Չե՞ն ջոկում, որ հենց նույն բանն են ուզում, ինչին հերվանը թթու մռութ էին անում. վերջը երևի տեղ է հասնում ուրեմն՝ հալելույա: Երբեմն: Կամ էլ կարծում են, թե դիմացինը չի ջոկում, որովհետև կես փոր քաղցկեղից դենը չի դատում:

Կարաբալախ ձանբլան
Կարաբալախ ձանբլան
Տուպլախ տուպլախ
Կանչում էր Նորէն նորէն
Արեւելքի մութէն
Հեր իմ բար
Անդիէն եկար
Կարաբալախ…

Գլամուր՝ ապականում առանց սահմանների՝ սին ու ակտիվ. գործիքն առեք կարող ձեռից, բայց անտեղյակ անելքից, անտեղյակ, որ անտեղյակ, ուժով կռռեք, որ այնու-

ամենայնիվ յոլա բերի բանը ձեզ համար հիմարս, սուտ փառքի համար՝ ընթացքում լղոզ կոտորակվելով, որպես թե՝ չկա. անողը չկա ու չի էլ եղել՝ դուք եք, որ կաք: Առնետը տանի ձեր աղջկան: Դեռ չհանդիպած՝ հիվանդ ու նսեմ եք հաշվում ուրիշին ու ձեզ՝ գերադաս ու անքննելի, միշտ սրբագրված ամեն սխալով, որ իմաստ չունի սխալ կոչվելու, քանի որ ձերն է:

Շրէշ բլուրեն
Կօնդի կլորեն
Լոյսն է գալու
Արեւ ծագելու

(Գրկում, շրջում, թե՛ համարյա ջարդում, թե՛ շոյում է ռոբոտիկին, որը ճռճռում ու ճվվոց է արձակում):

Հեռակառավարեք ականջներին դարանակալ, որ առիթ գտնեք ձեր դիրքի, փողի հախով սեփական լորձը թափելու գլխիս. թե՝յուրաքանչյուրն իր թառին մտիկ, վերմակի չափով թող երգը երգի՝ իր ճարը ճարի, խեղճ ջանը յուղի: Գիտությո՞ւն, արվե՞ստ՝ սնափառ ինքնասացություն ուժով առնված խեղդվելուց հետո: «Ես»-ի դարդը տեղ հո չի թողնի ուրիշ բանի՝ կառնետանա խցված գլխում: Քաղաքակի՞րթ: Խոտան ինքնատիրաժ. փայլող աչքերով, համառ մակաբույծ ուրիշի ջանքով առկա խորշերում՝ խրամատավոր:

(խռխռացնում, հազում է)

Ամեն տեղ ավազ, ավազ ու փոշի

(Ասմունքող գուսանի առոգանությամբ, լրիվ օճառ-փրփուրով ծածկված երեսով)

Բան շինիիք՝ հասկնալը հասկանայիք, չավերեիք չհասկացած, չհասկացման դադրը իմացած, հուշտ չէիք լինի չհասկացած, թաք թե տնգով մնաք թախտին, չէիք ծաղրի հին լուռ թառը: Ուստեն կասեր՝ տասը մատով կտրիչ չկա, թարմ վարդաբույր քրտինք չկա: Ի՞նչ խոյացում, բյուրեղացում գոլ ջրերում՝ խցանվածին ոչ հղացում: Չխորացած՝ դես ու դենի դուքյաններում պայծառացում գտնիլ չկա...

(Ռոբոտիկին ոտքից գլուխ փրփուրով է ծածկում:)

Զուն Զնձա
Զօնձն Զնձանձ
Զենձն Զանձ
Զնձին Զօնձա

Հիմա էլ որոշել եք, որ ծառայեմ, բայց չխաղամ... էլ չխաղամ:

Լավ: Ավելի լավ՝ էլ բուկ չեմ ճղի՝ չեմ հաչա աջ-ձախ, տարիքս վկա՝ չարի վերջը չի:

(Հեծնում է ռոբոտիկին ու ճոճվում):

Իբր՝մեռնեմ Հոյ-հոյ փայլին: Խաղե՛ր տվեք իշխանական նուրբ ճաշակով ու մյուս կողմից՝ վարժանքներդ ապահովե՛ք հպատակի բուռն ծափերով, որ Հեկուբը ձեր բառերով իրեն կորցնի ու կոտորվի: Դա էլ ոչինչ համեմատած վերադասի արտոնությամբ «վերև քաշված» մուսաների մի սպասավոր գործընկերոջ՝ մանրախնդիր պարանոյիկ: Մարդու միս կերած ուսուրական վագրի ծարավով, ով իշխել է թեկուզ մի ժամ, չի կշտանա ուրիշ

կերով՝ ինչ էլ խաղա, մի ցավ ունի ամեն ինքում ու մութ կարոտ, թե եղել է ի սկզբանե հենց հավակնորդ քյոխվայության, ասել է թե՝ ինչ էլ դուրս գա, ձեռքի տակով պիտի անցնի: Առնետը տանի, ո՞վ իմանա՝ դեռ կտեսնեք:

Գլամո՜ւր...

օդ շնչելու՝ չկա օդ, չկա երես:

Կռիվ եմ տալիս ամեն արածս, որ թողնեք անեմ՝ հավերին ծիծաղ. հեչ էլ մի թողեք. քիթս գետնից առանց կտրելու՝ օր-գիշեր գործ՝ փուչ, հիմար: Շնորհակալ եմ, որ դուրս չեք տշում ուրիշների պես՝ միայն մախաթներ ամսականներիս:

Դեր եմ ասում, ի՞նչ դեր: Կարծես երազիս Մասիսն էր, «Էստի՞ համեցեք» լիակատար հավաքածուի հուշարձան դառնալ՝ էս քուրջը վրաս: Երազի՜ս՝ ասի՞: Ի՞նչ էլ բառեր են րիսայքլ բնից մեկ-մեկ դուրս լողում լուսնոտի նման:

Էլ չեմ կարող... չեմ կարող խալխին

(մատները մտցրած բերանը՝ քաշում է ծայրերից, կքանստելով)

մինչև ականջներս ժպիտներ չիվել: Թրաշվելուց հոգնել եմ արդեն... ոտքերս չկան: Որ նստեմ, էլ վեր կենալ չկա....

(Նստում է)

կնստեմ, վեր չեմ կենա՝ ղեկավար մարմին եմ:

Թող թարգմանիչները հիմա մտածեն, թող ամեն ինչի պատասխանը տան, առնետը տանի դրանց աղջկան: Իսկ դու... դու գնա... Երնե՜կ քեզ, Սանի՛կ. թե՞ դու էլ ունես ներքուստ կնճիռներ: Գնա՛ ու խփի՛ր մուտքի մոտ փչված Զերդ ջան Սանի ջոջ խրտվիլակին, ծուխդ դուրս թող գա: Հենց դրա համար են ռետինից դրել: Չէ՛, սպասի՛ր, Գիքո՛ր. բեր Հոյ-հոյի երեկվա բոլոր մասնակիցների ֆայլերը տեսնեմ: Մոռացել էի՝ քեզ պետք է ամեն ինչ բառացի ասել՝ լուսանկարները առանց դիմակների, հասկացա՞ր, և բոլոր տեսախցիկների երկու օրվա նյութերը բեր:

(Կոկորդն է մաքրում: Լրտես ռոբոտը դուրս է քշվում բեմից, մինչ բեմի բանվորները վերադառնում են ու զբաղվում մալուխները միացնելով ու ալեհավաքներով: Հրանտը սրբում է դեմքը և թաքցնում սափրվելու պիտույքները):

Վե՛րջ, նոր եմ արդեն՝ թարմ դեմք, թարմ հայացք: Պուպո՜ւշ, պուպո՜ւշ Հրանտ: Այլևս բարձրից, ժամանակի հեռվից՝ մեծ կտրվածքով պիտի նայել իրավիճակին, չխրվել, չսրտնեղել: Այս բարձր դիրքից ամեն ինչ ավելի լավ է, քան թվում էր: Ուրեմն ի գործ՝ հեշտ չի լինելու: Ինչե՜ր եմ քաշել, ինչքա՞ն եմ պայքարել, բայց ամեն ինչ առջևում է: Ինչքա՞ն գործ կա անելու, տեղը գցելու:

(Դիմում է բեմի բանվորներին):

Ուշադի՛ր՝ չվնասե՛ք: Հարգարժա՛ն պարոնայք, դիցուք ես էլ պիտի

(սեղանի վրա ստորագրում ու հանդիսավոր վերադարձնում է թուղթը այն բանվորին, ումից իր դատելով վերցրել էր)

իրերս ներբեռնեմ՝ նոր առանձնասենյակս է: Դռան վրա՝ Չեբ Սան... մինչ վաղը

(Հրանտը դուրս է գալիս՝ մի պահ ոտքը կախ գցելով, մինչ երեք լուսապաստառներից հնչում են տարբեր ձայներիկներ. մեկից լսվում է պարսկական սիրային երգ, մյուսից՝ նորությունների հաղորդում՝ ռադիոակտիվ ճառագայթման մակարդակը, պարետային ռեժիմի կարգադրությունները... երրորդից՝ թուրքական գովազդ ամբոխի վանկարկման ֆոնին:

Հեռուստապաստառները տեղակայված են սեղանի առաջ հանդիսատեսի նկատմամբ գրեթե թիկունքով: Բեմի բանվորները, թառած գրասեղանին, մի փոքր տարվում են հաղորդումներով: Հրանտը վերադառնում է ձեռի հետ հապիվ հարմարեցրած երկու կապոցով՝ մեծ ու փոքր: Բանվորներն անցնում են իրենց գործին: Հրանտը բացում է պահարանն ու խցկում կապոցները մեջը: Պարզ է դառնում, որ մեծի մեջ Մայթիի դիմակ-գլխարկով հանդերձանքն է: Հոտոտում է Հրանտը, վերջիվերջո հաջողացնում է պարտակել այն ու փակել պահարանն այնպես, որ հերթական անգամ չբացվի՝ ամեն կերպ ջանալով թաքցնել բեմի բանվորների ուշադրությունից, ու վերջապես ինքն է տապալվում գետնին: Անմիջապես ոտքի է կանգնում: Պահարանից այդպես էլ դուրս մնացած փոքր կապոցը շտապ խցկում է գրասեղանի գզրոցը: Ետուառաջ է անում: Բեմի բանվորներից մեկը մի թղթապանակ է հանում իրենց գործիքների պայուսակից, դնում է սեղանին: Բանվորները հեռանում են):

Սրանց մի ոսկոր պետք կլինի գցել:

Պետք է անհապաղ արդյունավետ աշխատանքի ապացույց տալ:

(Գզրոցից հանում ու քանդում է փոքր կապոցը: Մայթիի շալվարն է: Հոտոտում է):

Էդ լրտեսիկ-ռոբոտիկը ո՞ւր մնաց: Սա տամ, տանի հանձնի: Գիքո՛ր: Չլինի՞ գնաց էլի ինձ վառի:

(Գրպանից հանում է բջջային հեռախոսը՝ փորձում):

Բա չէ՝ մեկ էլ փորձեմ:

Ջօնձն Ջնձանձ
Ջենձն Ջանձ
Ջնձին Ջօնձա

Խնդա վրաս: Սրանցից միայն ձվից նոր ելածներն են գլուխ հանում:

(Դառնացած ձեռքը թափ է տալիս ու հեռախոսը դնում գրպանը):

Սա արդեն վտանգավոր է, չի լինի հագնել՝ հետախուզություն են սկսել: Բացի դրանից՝ հիմա երևի ինձ մի բան կտան հագնեմ ցուրտ ու ցեխին՝ կարգավիճակս պարտավորեցնում է քամակս ծածկել: Ինչպես ասում էր Մոսկվաներում պաշտպանած բարեկամս՝ «Եթե մենք՝ լիդերներս, մեր ուսերին չառնենք ողջ լոգիստիկան, այս քոսոտ ժողովուրդը ինքն իրեն լրիվ վարի կտա»: Քանի գնում է, հակվում եմ համաձայնելու: Մասաչուսեթի Դավիթն էլ: Ուրեմն այսպես.

Մեծարգո՛ Ձերդ Սան, կասեմ, մեր շրջահայացության շնորհիվ, ուրեմն, հայտնաբերվեց կորօրինակ ա՛յ սա: Այո՛, փնտրվող, անունը չտամ, գիտեք, թե ո՛ւմ շալվարը: Որտե՞ղ: Դե... եթե անցնեիք Առնետ Սանի աստիճանների մոտով. ապա՝ տակը:

Տե՛ս՝ դրան ի՞նչ օրն եմ գցելու, այդ այլաշխարհիկ թարախին ու բոլորին, ով կյանքս

(կոկորդն է մաքրում)

անիծել է, կլինի ճորտ, մերկ ու ստրուկ... Շողուլները կպրկեմ: Միայն թողեք վրաս ելնեն՝ գլխիս ավազ մաղեն, կեղտ քսեն դեմքիս: Անապատ, վառվող անապատ. ավազ ամեն տեղ, ավազ ու փոշի երակների մեջ առնետներ: Հիմա ես եմ դեմք՝ դե տեսեք ձեր հալը, ինձ Չեբուրաշկա չկարծեք:

(Շփում է ափերը: Հասցնում է բռնել բանվորի բերած հաստլիկ թղթապանակը, որը քիչ էր մնում գցեր սեղանից՝ ոգևորված իր սպառնալիքներով: Բացում ու թերթում է):

Բա ոնց... Տրաքիկոմեդիա... Սրանք լրիվ են ցնդել: Կանոնակարգ: Ի՞նչ են կարծում՝ ե՞րբ պիտի կարդամ Չեբուրաշկագիտական այս տիտանական մատենագրությունը, ոսկեղենիկ թարգմանաբար, մարգարտաշար բոլոր հրահանգները, ցուցումները...

(Բարձրախոսից լսվում են ճապոներեն խոսք ու մուլտֆիլմի երաժշտությունը):

Հրես սկսվեց...

(Բարձրախոսից՝ կնոջ ձայնը. «Հարգելի՛ հանդիսատես, ներկայացումը սկսվում է»):

(ոտքով խփում է պահարանին)

Սո՛ւս՝ դու չկա՛ս:

4

(Հայտարարվում է կոնֆերենսինգի մեկնարկը ու հընթացս թարգմանվում: Կանացի ձայն լուսապաստառներից՝ «Լսվում է... մե՛կ, մե՛կ... յալլա՛, գնացիիինք):

Ողջունում ենք Հոյ-հոյ հեռուստակամրջի բոլոր մասնակիցներին. Ողջո՜ւյն, Շանհա՜յ, *(բացականչությունների ալիք մի էկրանից)*, ողջո՜ւյն, Սինգապո՜ւր *(պատասխան բացականչությունների ալիք մյուս էկրանից)*, ողջո՜ւյն, Ալյասկա՜ *(բացականչությունների երրորդ ալիքը)*: Ձեզ մոտ արդեն լուսինն է դուրս եկել, իսկ ձեզ մոտ արևն է շողում: Հոյ-հոյի տարեցտարի, անգամ՝ ամսեամիս ընդարձակվող ծիրում արևն ու լուսինը չեն բաժանվում, միաժամանակ են երկնքում»:

(Այս ընթացքում Հրանտը ուղղալարի պես կրկին կախ է տալիս իր ծոցից հանած մեդալիոնն ու արագ ետ խցկում՝ փնչացնելով):

Դեժավյո՜ւ, դեժավյո՜ւ... Ինչերի՞ն էր:

(Հազում է: Փնտրում է հաբ՝ չի գտնում: Երկու ձեռքով բռնում, շփում է փորը):

Էլ հաբ չի մնացել: Պուպո՜ւշ, պուպո՜ւշ Հրանտ:

(«Մեր ընկերությունը մեծ ծրագրեր է իրականացնում: Այսօրվանից սկսում ենք Չեբուրաշկայի կերպավորմանն ուղղված նախապատրաստական սեմինարը Հայկական բարձրավանդակի Հոյ-հոյ մասնաճյուղից»: Հրանտը փնթփնթում է):

Աշխարհագրությունը ե՞րբ փոխեցին էլի…

Զօնձն Զնձանձ
Զէնձն Զանձ
Զնձին Զօնձա

Դեռ երեկ Անատոլիա-Հարավային Կովկա՛ս չէր: Ապաչիները ուղղաթիռ կդառնան, կացինները՝ իրթիռներ, բախտավորները՝ կրկին տեղանո՛ւն: Հրա՛նտ…

(Մաքրում է կոկորդը):

Հը՜-րա՜նտ…

(Բեմի երկու բանվորները ներս են բերում նախորդ տեսարանից հայտնի մեծ ծաղկեպսակը ու հագցնում սառած Հրանտ-Չեբի վրա և հեռանում):

«Սեմինարը կվարի արտոնագրված ու հավատարմագրված խաղակատար, փորձառու ականջակիր՝ տոնավաճառի բազմամյա անփոփոխ ու անկրկնելի Չեբը: Համեցե՛ք խնդրեմ: Հրանտը հագնում է դիմակ-գլխարկը *(լսվում է ողջույնի ալիք)*, ձեռքով է անում հեռուստապաստառներին, ապա հանում է գլխինը: «Խնդրեմ ներկայացրե՛ք կերպարը մեր տարբեր մասնաճյուղերում ձեր գործը շարունակելու ելած կամավորներին, մի փոքր մեկնաբանեք»: Հրանտը վերցնում է պաստառներից մեկին կցված խոսափողը):

Սա իրիկունն ըլլայի

(հակում է)

Ողջո՛ւյն, ողջո՛ւյն… շինում էինք, շինում էինք և վերջապես շինեցինք:

(Երկու ձեռքով բռնում, շփում է փորը):

Լսվո՞ւմ է, մե՛կ, մե՞կ…

(աղմուկ պաստառներից)

Չե՞մ երևում:

ա-յա-յա՜յ…

(Բարձրացնում, թափահարում է ձեռքը: Բարձրանում է բազկաթոռի վրա՝ մի ոտքը սեղանին կեցվածք ընդունում):

Իսկ այս դիրքի՞ց: Ասում էի, չէ՞, առանց սրա *(ցույց է տալիս սեղանը)* բան դուրս չի գա: Ինչե՜ր եմ քաշել:

(Բարձրանում, կանգնում է սեղանին: Աղմուկ պաստառներից):

Հաստատ կերևամ վերից… վերևից լավ է:

Հե՛յ, եղբայրնե՛ր…

(երգում է)

Ընդ աստեղաց ինչ կա սիրուն, քան կանձկալի ընկեր անուն:

Առաջին անգամն եմ այս հեռուստակամրջին՝ հուզված եմ:

(Ընկրկում է՝ ետ իջնում, նախանջում է: Երկու ձեռքով բռնում, շփում է փորը:

Բայց սեղանից ճանկում է թղթապանակը ու, այնուամենայնիվ, նորից բարձրանում սեղանին: Իր հետագա ճառի ընթացքում մերթընդմերթ թերթատում է թղթապանակը, ետուառաջ դնում էջերը, որոնք երբեմն թափթփվում են: Ի վերջո, ձեռ է քաշում դրանից):

Թյուրիմացություն չլինի. Չեբը, այո՛, ո՛ւմ պիտի ներկայացնեմ, ասացիք, այո՛, ընկերվարական միջավայրում է հայտնվել, բայց «պանձկալի» ընկերությունը ողջունելով՝ դա նկատի չուներ բնականաբար: Մեր օրերում միանգամայն անհեթեթ կլիներ: Անշուշտ: Հոյ-հոյ ընկերությունը նկատի ուներ՝ Հոյ-հոյ ընկերությունը, որը մեկտեղել է բոլորիս՝ տալով Չեբ դառնալու շանս: Մեկ անգամ ևս եկեք հայտնենք մեր բազմաձայն ու բազմալեզու շնորհակալությունն այս ընկերությանը, այստեղ աննախադեպ հիմնավոր արմատակալած հաստատությանը, որի ծիրում, ինչպես ասաց տիկին հեռուստա-Սանը, լուսինը երբեք ամբողջապես չի ծածկի արևը՝ չնայած տեղական հերթական խավարումներին:

Կերպարը, որը պիտի ներկայացնեմ, վերջին եռամսյակում ծանրակշիռ ներդրում է ունեցել Հոյ-հոյ վաճառքների դինամիկայում ոչ միայն Օսակայում և Բեյջինգում, այլև այստեղ՝ մասնավորապես քրդերի և այլ եղբայրների միջավայրում, անգամ արտակարգ դրության պայմաններում: Այս կերպարը հույս ու հավատ է ներշնչում հաճախորդներին՝ լավատեսություն ու կյանքի բերկրանք: Դա է պատճառը, որ Ձերդ Սաների խորհուրդը որոշում է կայացրել յուրաքանչյուր մասնաճյուղում բացել համապատասխան հաստիք և ձեզ ընձեռել իրականացման նախանձելի շանս: Հավատացնում եմ ձեզ՝ ծանր են Չեբիականջները՝ հանաք չի կրելն ու բարձր պահելն օր ըստ օրե:

Հասցրի տեղեկանալ՝ դուք վերջերս մտցված ԳԺՌՊՏ հատուկ քննությամբ եք ընտրվել: Վարչությունը համոզված է, որ օժտված եք ձեր առաքելության համար նպաստավոր շնորհներով, առաքինություններով.

յուրաքանչյուրիդ խորամանկությունը, դրա արձանագրված գործակիցը, որքան էլ մեծ լինի, չի հաղթահարի ձեր չպատճառաբանվող մղումները. դուք անհուսալիորեն անուղղելի եք և ընկնավոր, եթե կարելի է այդպես կոչել ձեր ապուշությունը: Դուք պետք է հասկանաք, որ դա ոչ միայն ցավալի կամ անցանկալի չէ, այլև շատ արդյունավետ կդարձնի ձեր ինքնեկ գործունեությունը: Մանկուրտ կոմբիներ չեք դառնա, որովհետև իրոք անկառավարելի ապուշ եք, հուսամ: Արհեստական, ավելորդ ջանքերի կարիք չեք ունենա անմեղ ու սրտաբաց ներկայանալու համար. ջանքեր, որոնք երբեէ համոզիչ չեն լինում կամային ինքնությունների պարագայում: Դատողական համառությամբ ու խորամանկություններով նրանք փորձում են հաղթահարել կամ թաքցնել իրենց տարօրինակությունները ու ակամա սանձում են երևակայությունը՝ վերածվելով մեծապատիվ, քաքսիրտ գլադիատորների, քյոխվաների: Հոյ-հոյ ծրագրով մարզվելով՝ դուք չեք ունենա նրանց՝ հաճախ վիրավորված, եսասիրության, անհատական կամ խմբային ինքնության պարանոյան:

Ամեն անգամ ընկնելիս կջնջեք, կկորցնեք ձեր հայտանիշները: Ինքնության լարումից այլապես դառնում են նախանձոտ, սնապարծ, քինախնդիր, մի խոսքով՝ իշխանամոլ, եթե անգամ այդ իշխանությունը նրանց մերձավորների շրջանից, անգամ սեփական

մարմնից դուրս չտարածվեր: Իսկ տարածվելուն համեմատ կուրացնում, խլացնում է: Ամենուր պատրաստի դիրքեր, դիրքեր, դիրքեր են: Դիրքը քեզ պես չիմացավ, թե ո՛նց տարավ քեզ՝ ինչպես ձևավորվեց: Իսկ դիրքերը հիմնավորվում են Չեբի նկատմամբ հոգածությամբ, դաշինքները ցեմենտվում են նրանով՝ կանգուն թե ընկած:

Ջնջե՛ք ձեր անունն ու այրե՛ք ծագման կամուրջները, դուք Չեբ եք: Դա միանգամայն արդարացված է մեր հզոր հաստատության տեղեկատվական հզորության, մյուս կողմից՝ իմտությունների անկասելի արժեկրկման պայմաններում: Չեբը անտեղի է, նախօրոք չդիրքավորված պարադոքսալ, դիրքավորվող չրթիկ: Բաղկացուցիչների հարաբերությունները փոխելուց համադրությունը փոխվում է: Նույնականացման անհնարությունը փոխում է կոնֆիգուրացիան:

Ձեզ ավելի հեշտությամբ կհաջողվի երկարատև անորոշությանը դիմանալ, ինչքան հնարավոր է հետաձգել որոշման պահը ստեղծագործունեության մեջ: Կտարվեք անտեղի դրսևորումներով՝ փաստորեն անհեթեթությամբ ու թը՜մփ: Մեծ ականջներում ամբոխվող բազմաձայնության հակասություններից, անչափ գիտակցությունից է ընկնում ի սկզբանե անծնող Չեբը: Եվ դարձյալ՝ ոչ մի սպի:

(Մաքրում է կոկորդը):

ՁօՆձՆ ՁՆձաՆձ

Կնեռե՛ք, մի քիչ շեղվեցի...

Բոլորդ դիտե՞լ եք ֆիլմը:

(Լուսապաստառներից լսվում է աղմուկի ալիք: «Ո՞վ է Չեբը»՝ հարցնում է նույն կանացի ձայնը):

Հրաշալի, հրաշալի... մի փոքր դաշտային աշխատանք...

(Ակատվում է ծաղկեպսակից, դնում է սեղանից վերցրած ականջակալները):

Հարցում կատարենք... միացրե՛ք, խնդրեմ, դահլիճի տեսախցիկները: Ձեզ հետաքրքրող հարցին անդրադառնալու համար մեզ ուղիղ միանում է Չեբի հանդիսատեսը, այստեղ՝ Հոյ-հոյ դահլիճում:

(Հրանտը իջնում է դահլիճ):

Սա իրիկունն ըլլայի ես
Ու հպեի ճակտին ամեն անցորդի....

(Լուսավորվել է բեմի կենտրոնում կախված մեծ լուսապաստառը: Վերին անկյունում փոքր կադրեր են մուլտիպլիկացիոն ֆիլմից: Խոշոր պլանում պատկերանում է Հրանտը՝ խոսափողը դահլիճի հանդիսատեսին մեկնելիս).

Ինչո՞ւ այդքան մեծ ականջներ ուներ:

Դուք պկվո՞ւմ եք Չեբից, թե՞ ատում եք,... ինչո՞ւ:

.... (կրուցում է հանդիսատեսի հետ)

Ինչո՞ւ էր գիտությանն անհայտ... Ինչո՞ւ է Օն: Գուցե բոլորովին սեռ չունի: Նա է, կամ այն է, ինչ կորում է սեռ ստանալի՞ս:

Հետաքրքիր է: Բայց չնայած հարցականի տակ էր, նույնության խնդիր ինքն անձամբ չուներ. միայն սոցիալական՝ կացարանի, կրթության, աշխատանքի, մասնակցության: Ինքնության խնդիր չունի՝ ի հակադրություն, ասենք, Քիփլինգի փղիկի, որը բոլորից հարցնում էր իր ինչ կամ ով լինելը: Հիշում եք՝ այն փղիկի, ում քիթը կոկորդիլոսը քաշեց-երկարացրեց, ու դրանով վերջնականապես որոշվեց նրա փնտրածը՝ իր փղիկ լինելը: Չեբի պարագայում նախ այդ հարցը չկա, և կոկորդիլոսն էլ շատ սիրալիր է՝ նման որևէ բան չի անում. ընկեր էր փնտրում, և Չեբի անհայտ լինելը չխանգարեց ընկերությանը, առավել ևս, որ Չեբն ինքն առաջինը արձագանքեց:

Ավելին. հիշում եք, կոկորդիլոսը բացականչում է. «Ինչպե՜ս հայտնի չէ, թե ո՛վ է», «շատ էլ լավ հայտնի է»: Չեբը «շատ էլ լավ հայտնի է» նրան ոչ այն պատճառով, որ, ասենք, Անդերսենի անճոռնի ճուտիկի պես վերջիվերջո վերածվում է շքեղ կարապի կամ մի այլ քաջ հայտնի, բառարաններում, մատենադարաններում, քարտեզներում գրանցված արարածի, այլ պարզապես որովհետև մտերիմ ընկերն է, թեկուզ այդպես էլ անհայտ մնար բոլորին: Բայց այդ քնքուշ ու հավերժ երիտասարդ հոգին, ինչպես գիտեք, ունեցավ նաև ուրիշ ընկերներ: Այդ թվում՝ ֆիլմից ձեզ ծանոթ, արևմտամետ, համենայն դեպս, արտաքինից և որոշ իրավիճակներից դատելով՝ արևմտամետ տիկին Շապոկլյակը, որը, ի վերջո, կոկորդիլոսի գլխի վրայով հաստատեց իր ընկերությունը Չեբի հետ:

Ի՞նչ եք կարծում, այդ վերջին կապը չէ՞ր առասպելական ԽՍՀՄ-ի փլուզման պատճառը:

> *(Անօդաչու թռչող սարքերը ներխուժում, երկու պտույտ են անում դահլիճում ու պատկերվում կենտրոնական մեծ լուսապաստառին: Լսվում է տագնապի ազդանշան: Կանացի ձայնը՝ «Չնախատեսված հանգամանքների պատճառով հեռուստակամուրջը կընդհատվի. շնորհակալություն մասնակիցներին: Կողմերին լրացուցիչ կտեղեկացնենք հնարավոր հաջորդ կոնֆերենսինգի մասին»:*
>
> *Լսվում է արտակարգ իրավիճակին վերաբերող քրդերեն հայտարարություն):*

5

> *(Դահլիճից Հրանտը բեմին է դնում խոսափողը, ապա և իր փորը ու գլորվում, բարձրանում է բեմ կրկին: Գրպանից հանում է բջջային հեռախոսը:)*

Զօնձն Զնձանձ
Զենձն Զանձ
Զնձին Զօնձա

> *(Ձեռքը կրկին դառնացած թափ է տալիս ու հեռախոսը շպրտում է մեծ լուսապաստառին):*

Առնետը տանի ձեր աղջկան

> *(Բարձրախոսից տղամարդու խիստ ձայնով լսվում են ճապոներեն կարգադրություններ: Կանացի ձայնը հրահանգում է. «Բոլորը մնան իրենց տեղերում, ոչ ոք չլքի շենքերը: Դրություն 121: Նկուղներ իջնելու անհրաժեշտության և կարգի մասին կիրավեկվեք հարկ եղած պարագայում: Հորդորում ենք խուճապի չմատնվել, իրավիճակը վերահսկվում է: Հրահանգները չկատարելու դեպքում ձեր*

կյանքը չենք կարող երաշխավորել: Իսկ այժմ կլսեք «Սիրված մեղեդիները»: Մինչ տեսարանի ավարտը մեղմ լսվում է, բեմադրիչի հայեցողությամբ, հնարավոր է Չիոչիոսանի արիան «Մադամ Բատերֆլայ» օպերայից: Մեծ լուսապաստառին Հոկուսայի Ֆուձիյամա լեռան 36 տեսքերը սահուն ու աննկատ հերթափոխվում են՝ կուգադրվելով Մասիսի մեծադիր լուսանկարին, որը վերածվում է Կիլիմանջարոյին:

Հրանտը աջ ու ձախ է անում, երկու ձեռքով բռնում, շփում է փորը):

Ինչերե՞ն էր:

(Ապա իրեն նետում է դեպի պահարանը):

Գենա՛, Գենա՛, սկսվեց, Գենա՛... նորից, չէ՛, չէ՛

(սեղմում է պահարանի դռները)

Գենա՛, չգնա՛ս, առանց քեզ էլ գլուխ կհանեն, լսո՞ւմ ես, չե՛ս գնա, գլուխ հանեն-չհանեն՝ դու ի՞նչ գործ ունես, միջուկի մասնագետ, ճարտարագետ չես, փրկարար չես... թեկուզ ամեն ինչ գրողի ծոցը գնա... գնա՛... Գենա՛... մի՛ գնա... 121... 121... նորից... 121...

(Սեղմում է գլուխը կրծքին, երկար պապանձվում ու դանդաղ ծնկներին է իջնում: Հռհռում է: Պահարանից հանում է Միքիի հանդերձանքը ու խոսում նրա գլխի հետ):

Հավատալու չի: 121...

(հապում է):

Ինձ թվում էր՝ վաղուց անցել-գնացել... անցածն անցած է:

(հապում է):

Ոչինչ չի անցել: 121: Սա մղձավանջի կարուսելը չի՝ իսկականից է կրկնվում, ոնց որ ոչինչ չի փոխվել: 121:

Ների՛ր, կներե՛ս, Միքի՛, Միքի՛, կներե՛ս, Միքի՛, ների՛ր, ես լրիվ, ինձ լրիվ, ինձ թվաց՝ հիմա հիմա չի...

Դու դեռ չէիր եկել, դու ուշ եկար, Գենան արդեն չէր...

Նրան չտեսար: Նա միշտ վերցնում էր իր վրա: Նա գլուխ էր հանում, հայտնվում էր, ու հնարամտությունը փոխում էր վիճակը...

(Հոտոտում ու համբույրներով ծածկում է Միքիի գլուխը):

Պիտի իմանաս, Միքի՛. նույնիսկ վթարից հետո առաջվա պես ես կռռում էի, թե ավելի լավ է՝ ոչինչ չլիներ, քան, քան եղածը... 121

Եթե նա չգնար վթարի ժամանակ... հիմա ոչինչ չէր լինի ընդհանրապես, բացարձակապես: Հասկանո՞ւմ ես: Բացարձակապես: Նա կապ չուներ, խաղակատար էր, բայց արեց, արեց անհնարը...

Նրանից ոչինչ չէր մնացել... Ես ոչինչ չէի կարող անել:

(հապում է):

Գնա՛, դարդ մի՛ արա: Ասում եմ՝ մեզ իրապես ոչ ոք նույնիսկ չի էլ նկատում, մարդիկ տեսնում են դիմակը, իրենց նախապես ակնկալածը՝ տիպարները, որ պատկերացնում են, դու միայն վեր կաց՝ ոտքերդ շարժիր: Դիմակդ են ընկալելու՝ վե՛րջ... Թեկուզ ճղվես՝ ուրիշ ոչինչ, միայն վեր... Թեև նա ճիշտ էր. իրոք հոտոտում են՝ ինչը կարիք չկար: Ու վրա տալիս, եթե տարբերվես իրենց պատկերացրածից կամ, ավելի ճիշտ՝ անգամ չպատկերացրածից: Առնետը տանի ձեր աղջկան:

Միքի՛, չհավատա՛ս, եթե ֆշշացնեն, թե նա այդ երկաթբետոնե հսկաներին բան ուներ պահ տված, դրա համար իբր վազեց՝ չկորցնի: Չհավատաս, կամ էլ եթե ասեն, թե «մերն» էր, այսինքն՝ իրենցն էր... Շատ բաներ կասեն՝ դու մի՛ հավատա:

Միքի՛, չկա՛ նրա նման, չկա՛... ասում էր՝ «պիտի գնամ, որ արժանի լինեմ ապրելու»: Բա որ մեռնե՞ս: «Կապ չունի». ասեց, ու արյունս ետ էր հոսում երակներովս:

Երբեք չեմ ների նրան ինձ մենակ թողնելու համար՝ այդպես հալից ընկնելու համար: Կարող էի ավելի ուշադիր լինել նրա նկատմամբ, խնամել, բայց փոխարենը հերսոտում էի, որ հալից ընկել էր:

... Ահա նայի՛ր...

(Ծոցից հանում է մեդալիոնը, բացում):

Նայի՛ր դու այստեղ, նախ՝ այս պատկերին և ապա սրան, այս երկու եղբոր դիմադիրներին: Տես՝ ի՜նչ շնորհք կա այս դեմքի վրա: Մի համադրություն, մի ձև, իսկապես, որի վրա ամեն երանի կնիքն է դրել հավաստիքը աշխարհին տալու, թե ահա մի մարդ՝ թող որ կոկորդիլ: Այս էր ընկերդ, եթե հանդիպեիր: Իսկ այժմ նայի՛ր մյուսին՝ ի՛նձ նայիր:

(Քաշում է իր ականջներից ու գլուխը խփում գետին):

Ի՜նչ հիմարն եմ ես՝ ինչի՞ եմ պատմում:

Մայքի՛, ես կամ՝ ինչ էլ որ եմ՝ կամ, արժանի, անարժան... ու դու միշտ կլինես ինձ հետ: Եթե «լինել» բառը դեռ իմաստ գտնի: Հետս պիտի լինես:

(հազում է):

Հետս պիտ ըլլաս, հոգի՛ս, և հարց պիտի չտաս լինելու մասին: Հարցը ես եմ իսկ, որ կիակի կախման կետերին:

Քեզ էլ չեն տեսնում տիպարիդ ետև:

Հանրահայտ են տիպարները մեր՝ նախապես, վաղուց, ինչպես էլ խաղանք՝ էլ չասեմ՝ լինենք,

(Միքիի վզին կապած բանտը բարձրացնում ու հարմարեցնում է նրա գլխին)

ո՛չ, չեն փոխվելու:

Շալվարդ կտանք առնետին՝ բկներին մնա: Մենակությունս օգտագործեց՝ մտերմացավ, որ գցի՝ ինձ վերջնականապես դատարկուն անի:

Քեզ՝ ոչ մեկին, կպահեմ քեզ ինձ:

(Կրկին հոտոտում ու համբույրներ է տեղում):

Դու իմն ես այսպես, թեկուզև դատարկ: Հակառակ դեպքում սա ինձ չէիր թողնի:

(Շարժում է Միքիին այնպես, որ նա, ասես, գլխով է անում):

Բայց ի՞նչ է եղել, ի՞նչ է այս անգամ: Երբևէ այսչափ իրար չէին անցել Ջօնձն Ջնձանձ 121 էլի:

Միքի՞:

(Հրանտը ոտքի է կանգնում: Դեն է շպրտում Միքիի հանդերձանքը ու սևեռվում վրան):

Մի՞թե հաջողացրել ես մտնել հանքը: Սա իրիկունն ըլլայի. տրաքիկոմեդիա: Այդ գրողի անիծյալ հա՞նքը: Մի՞թե ընդունակ եղար անելու ասածդ: Չէ՜է՝ դու չէ, իհարկե ոչ, բայց մեկն ու մեկը, ինչ-որ մեկը գուցե տարվե՞լ է խաղիդ հմայքով: Մի երկրպագու ականջները կախ քո լեզվի թույնից: Ո՞վ դիմանա ինֆանտիլ շարմիդ, շփացա՜ծ նարկիս:

(Լսվում է հեռավոր, բայց ըստ երևույթին հզոր պայթյուն: Հրանտը չոքում է):

Սա ինձ չի թվում՝ մեկն արել է դա: Առնետը տանի դրա աղջկան:

Եվս երկու պայթյուն էլ լինի՝ տրաքիկոմեդիա – չիք: Գիտես՝ կժայթքի: Բայց ով ստանձնել է ասածդ անել, գուցե չգիտի: Գուցե չի լսել: Բացատրե՞լ ես, որ երեք պայթյուն տեղը տեղին, ու սարը՝ մեղա: Երեք պայթյուն՝ բիձեն կպարթնի.... այդպես չէ՞ր ասում էդ ճապոնացին: Ա՜յ քեզ թամաշա:

Քո կոմբին գիտի՞: Թե իր արևին փրկում է արդեն ճառագայթված դաշտավայրը էդ դժոխահավ արտապատումից, կարծում է՝ Մասիսը թվային պատրանք է ամպոտ, վաղուց հոգնած մեծ սուտ դեկոր, մի տեղանշան երկաթ թրթուրով երգահաններին: Եվս երկուսը՝ ապո՜ւշ, կժայթքի:

(Սկսում է բռունցքներով, ապա վեր կենալով՝ քացով հարվածել իր՝ Չեբի դիմակ-գլխարկին):

Վե՜րջ... վե՜րջ... վե՜րջ...

Ջօնձն Ջնձանձ
Ջենձն Ջանձ
Ջնձին Ջօնձա

Տրաքիկոմեդիա... կտրաքի... տրաքի... մի ապուշ կանի, կանի մաշած գլուխ... բայց ինչի՞դ էր պետք:

(Գրկում է Չեբի դիմակ-գլխարկը ու համբուրում):

Սա իրիկունն ըլլայի...

(Երեք հեռուստալուսապաստառները ակտիվանում են: Մեկից պարզ է դառնում, որ «Մասիս լեռան խառնարանում տեղակայված «Նոյյան տապան» հանքարդյունաբերական համալիր ներթափանցած միանձնյա ահաբեկիչը հենց ներկա պահին ձերբակալվել է»):

Ո՛չ:

Ի՞նչ:

Ո՞ւմ են բռնել:

(Հազում է):

Մի՞թե սրանք էլ հավատացել են, որ դու դա կանես: Չէ՛... Սրանք բոլորի ֆայլերը ունեն մոլեկուլային մակարդակներով: Չեն դնի վրադ, եթե միայն անվանդ վրա սև կեղտ չի թափված արդեն նախօրոք: Բայց ո՞վ կթափեր: Ո՞վ պիտի աներ: Առնետը տանի դրա աղջկան:

Ե՞ս:

Ե՞րբ:

Նե, նե, նե, ես չէէէ...

(Պարսկերեն խոսքին կուգահեռ լսվում է, որ «Պայթյունն իրականացրած ահաբեկիչը, ըստ փորձագետների կանխատեսումների, ամենայն հավանականությամբ չէր սահմանափակվելու այդ պայթյունով: Հետախուզական աշխատանքները շուտով կպատասխանեն այդ հարցին: Ինչևիցե, չարագործի ինքնությունը պարզված է: Պարետային կայակորից տեղեկացրին, որ նա ճանաչվել է. Հոյ-հոյ տոնավաճառի ժամանակավոր կվարձարար կազմի աշխատակից մկնիկի խաղակատարն է: Նրա մասին ավելի մանրամասն տեղեկություններ կհաղորդենք հաջորդ թողարկմանը»):

Սո՞ւտ: Ինչերե՞ն էր: Նա չի:

(Հեկեկում է):

Նա չի ձերբակալվել:

Ա՛խ, Գենա՛... էէէ... Միքի՛, Միքի՛, ինչի՞, ինչի՞ է, մուկիկը, մուկիկս, չէ՜է, լեոպարդս ինչի՞ է բարձրացել լեռան ձյուները: Հիմա ո՞նց քեզ հանեմ... Ամեն ինչ իկուր, իկուր... ո՞նց հանեմ, ո՞նց... Ա՛խ, Միքի՛... Միքի՛... ի՞նչ անեմ... ի՞նչ կաներ... ի՞նչ կարելի է անել... ի՞նչ անել քեզ համար: *(Հազում է)*:

Սո՞ւտ: Մայթին չի ձերբակալվել:

Չի կարող ձերբակալվել:

Չենք հիասթափեցնի, եթե ասել է՝ կանեմ, ուրեմն՝կանի

հենց ձերբակալված՝ ձեր հսկողությամբ:

Առ քեզ ալիբի՝ ինքը ձեր ծակում՝ պայթյուն կլինի: Սարը մեկ հատ էլ պիտի որ տանի, երրորդ չի լինի՝ նրան կապատեն:

(Հրանտը մարմնից պոկում է իր հանդերձանքը և չվերջացրած, ջանում մտնել Միքիի հանդերձանքի մեջ՝ քաշել գլխին: Վայր է ընկնում ու հուսահատ կրկնում ջանքերը):

Մայթին չի ձերբակալվել, չի ձերբակալվել, նրան տեսել են, նրան կտեսնեն... դեռ կլինի երկրորդ մի պայթյուն՝ շուտով, շատ շուտով, կլոր ականջներով մեկը դա կանի, ու կտեսնեք՝ չի ձերբակալվել, Մայթին գալիս է պայթեցնելու, Մայթին արդեն գալիս է, տրաքացնելու... սո՛ւտ է, սո՛ւտ է... Մայթին երկրորդը կտրաքացնի... գործը կավարտվի, անկասելի է մայթը Մայթիի... Ես, ես արդեն... արդեն գալիս եմ...

(Տապալվում է գետնին ու կռվում հանդերձանքի հետ):

Կոլոտ գեներալ, ինչի՞ ես էդպես կոլոտ, վտիտ, լղար, Միքի՛: Մի՞թե միշտ էիր այսքան պուճուր: Ես՝ ո՛չ. Չեբը չաղ չի, լկտի՛, ո՛չ, ծեր չի, ո՛չ, ծեր չեմ, հիմա՛ր...

(հոտոտում է իր տրիկոյի թաց լաքան)

121, 121, ոչ... հոգնել եմ սրանից....

(Մաքրում է կոկորդը):

Պատահում է... դու էլ տակդ արած կլինես... ինչի՞ ես,

Ինչի՞ ես էդքան փոքր:

Ինչի՞ ես էդքան մանր-մունր, Միքի՛, տղա, տղամարդ չես, լակո՛տ... Ինչի՞ ես, Միքի... ո՛չ, ես ծեր չեմ, լակո՛տ, նույն տարիքի ենք համարյա՝ ինձնից լավ գիտես... Իսկ ականջներդ առհասարակ հայր են գալիս Չեբինին: Ո՛չ, ես ծեր չեմ... Երկու կլոր կլորականջավոր, բայց չի մտնում ախր...

Մի՞թե միշտ էիր այսքան... մի՞թե միշտ էիր... Մի՞թե չեմ ճանաչել քեզ... Ի՞նչ ապուշ եմ ես:

Մի՞թե դու ես արել իրոք: Ո՞ւմ համար ես աշխատել... Դո՞ւ ես արել: Ամենի պես քեզ հաջողակ ու դատարկ եմ կարծել... իսկ դու թաքուն մարկիզ դե Պոզա էիր փորձում: Ի՞նչ հույսով: Պարզ չի՞, որ խաղալու շանս չի լինի: Պարզ չի՞, որ չես փրկի էդ հանքի կեղտից: Ամեն ինչ վերջնականապես վարի կտայիր:

Ի՞նչ Չեբուրաշկան եմ ես:

(հակում է):

Ո՛չ, ո՛չ... մի րոպե...

(գրպանից հանում է մի բուռ մետաղադրամները)

Ա՜յ մուկ, դու քե՜զ ֆռացրու, խղճուկի՛ մեկը, ոչինչ էլ չունեիր սրանից բացի:

(Միքիի հանդերձանքը վրան քաշելու անհաջող և հուսահատ փորձերից հետո սկսում է բռնաբարել այն սեղանի վրա: Ընկնում են: Գետնատարած թավալվում, թափահարվում հեռուստալուսապաստառների շարժուն լույսերի տակ):

Դու սարն ես ելել թուլամտության ահից, դասալի՛ք... վախկո՛տ... ծերության ահից ու տկարության, տրաքացնես հանքը՝ միֆդ քո՛ք մնա... միֆդ քո՛ք մնա՝ Մասիսին մեռնե՜ս, իբր մեծ գործով,

թե՞ բոց՝ կրակ տաս ձյունապատ գլխին, կրակ առնես սարից կախ ընկած պոչիդ... հատած, հատած: Դե, ուրեմն, Տռռռաքիկոմեդիա...

(Ավելի թափով թափահարվում է, պատառոտում Միքիի հանդերձանքը: Լսվում է ճապոներեն հայտարարություն: Կնոջ ձայնն ազդարարում է. «Հարգելի՜ հանդիսատես, ներկայացումը սկսվում է...» Բեմ է մտնում ռոբոտիկը ու կանգնում մեկուսի լուսարձակի լույսի տակ: Չեբը տապալվում է գետին):

Ժայթքի՛ր, Մասի՛ս... Ժայթքի՛ր՝ վերջերի վերջն է... Ժայթքի՛ր, Մասի՛ս... ա՜հ... Արա, Մասիս... աաահ... Ժայթքի՛ր՝ թքի՛ր, Մասի՛ս... Ժայթքի՛ր, Մասի՛ս... ա՜աահհ... Մասի՛ս... արա, Մասի՛ս.... Ժայթքի՛ր, Մասի՛ս.... Ժայթքի՛ր... հհհա... Մասի՛ս.... Արա, Մասի՛ս... Արա... հհաա... Մասի՛ս.... Ժայթքի՛ր, Մասի՛ս.... Ժայթքի՛ր, Մասի՛ս... աաաաաահ... աաաահհհ... աաահհհ... հահհհ... հհհհ

(Հրանտն ու Միքիի պատառոտված հանդերձանքը փոխնիփոխ հեծնում են իրար ու ցնցում՝ տապալում հեռուստապաստառները: Գալարվում, նորից հեծնում ու ցնցում՝ ցնցվում: Երաժշտությունը շարունակվում է ամբոխի վանկարկման ֆոնին: Մթնեցում):

Մարիամ Մնացականյան

Ծնվել եմ Երևանում, 1994-ին: 2010-2016 թթ. սովորել եմ ՀՊՄՀ-ի գեղարվեստական կրթություն ֆակուլտետի երաժշտական կրթություն բաժնում: Մասնագիտությամբ դաշնակահար եմ, ունեմ դաշնամուրի մանկավարժի մագիստրոսի կոչում: 2016-ին ավարտել եմ TV Ideal լրագրողների և հաղորդավարների ստուդիան: Հրապարակումներ ունեմ irates.am, Culture.am, ArmDreams.com կայքերում:

Ակումբ «27»

Էլի նույնը, էլի կապտուկներ: Երեկ էլի ծեծ կերա, շատ հավեսով, շատ իսկական: Էլ ո՞ր մի լեզվով կարող ես ասել՝ ծեծ ուտել: Ուտելը հաճույքի հետ են կապում: Գրգռում ենք համի ռեցեպտորները: Այսինքն՝ ծեծն էլ է հաճույք: *Եթե ծեծում ա, ուրեմն սիրում ա*: Ինչպես միշտ՝ խմած էր եկել շան որդին: Մինչև ժամը երեքը աչքերս կիսափակ պառկած էի անկողնուս մեջ, սպասում էի: Երկու տարբերակ էի դիտարկել. կա՛մ պիտի գար ու կեղտոտ թաթերով ներքնազգեստիս մեջ մտներ, կա՛մ էժանագին սպիրտից սատկած՝ գար ու փռվեր դռան շեմին: Կոշիկների կտկտոցից հասկացա, որ առաջինն է լինելու, սպիրտն էժանագին չէր... մոտենում է: Գիտեմ, որ պիտի վախենամ, բայց պառկած առաստաղի ճաքերն եմ հաշվում:

Կը՛տ...կը՛տ... կանգնեց. սկսեց խոզի պես խռխռալ: Վրայից գոմաղբի հոտ է փչում, նույնիսկ ափսոսում եմ թքել երեսին: Այսինքն՝ դժվար էլ հասցնեի: Դեմքս է ուսումնասիրում, մթության մեջ չի հասկանում՝ աչքերս բա՞ց են, թե՞ ոչ: Սիրուն լուսնի լույսի տակ սրա ծորացող դեղնավուն թուքն է երևում: Լուսի՛ն ջան, ախր ո՞նց, շողերդ պիտի փռես սրա՞ վրա, շրջանցի՛ր, թեքի՛ր գլուխդ:

Հետ եմ հրում՝ թեթև, անուժ, հուսահատ: Մա՛մ, տուն եմ ուզում: Ճիշտ էիր ասում՝ համբերի,

սովորի, կհասցնես: Չէ, էլ չեմ հասցնի, 27 եմ: Ոտքով փորիս, մեջքիս, գլխիս, վզիս վրա հետք կմնա: Մինչ սա ինձ ջարդում ա, մտքումս ամեն կապտուկիս համար պատմություն եմ հորինում. չէ՛, չէ՛, ի՞նչ եք ասում, Տիբեթում յոգայի ժամանակ եմ վնասել: Վա՜յ, Վարսի՛կ ջան, սա շուտվա ա, փոքր ժամանակ հեծանիվից եմ ընկել: Հա՛, հա՛, սմոքի այս ա:

Խռխռաց, քնեց, իսկ ես լաց չեղա, ինչո՞ւ լաց չեղա:

Մեկ ամիս, երկու ամիս, վեց ամիս, մեկ տարի: Մա՛մ, երջանիկ եմ, տուն եմ գալիս: Ասում են՝ մարդասպանության հոդվածը լուրջ հոդված ա, բայց չգիտեմ ինչի ինձ չեն նստացնում: Զանգեցի ասացի, որ սպանել եմ: Եկան, տարակուսած ինձ են նայում, ինձ ու դիակին: Չտեսան, որ աչքերը մարդկային են, ասացին՝ տիկի՛ն, խոչ մորթողի համար դեռ հոդված չկա: Պատուհանից դուրս եմ նայում, գոռում են.

– Մի-ա-ցե՛ք, մի-ա-ցե՛ք:

* * *

Արդեն կես տարի է՝ միասին ենք, պաշտոնապես: Կյանքումս առաջին անգամ ինձ լիարժեք եմ զգում: 27 տարեկան եմ ու միայն հիմա եմ հասկանում, որ կարող եմ պիտանի լինել, որ ինձ էլ կարող են սիրել... ծիծաղելի է, չէ՞: Ես դեռ Մասլոուի բուրգի ստորին շերտերում եմ, ստացվում է: Ամեն ինչ փոխվեց, շերտ առ շերտ մաշկս քերթելով՝ շերտերում տեղս գտա: Մի կռիվ հաղթել եմ արդեն, մնաց էլի մեկը, կարևորը:

Հիմա ի՞նչ եմ անելու: Ես հասուն տղամարդ եմ, բայց վախենում եմ, ուղղակի սարսափում: Լավ, միասին ենք, բա հետո՞, հետո՞, հետո՞, վե՛րջ, բա-բա՛խ: էդ վերջից եմ վախենում, վախենում եմ, որ վերջը կգա առանց իմ կամքի: Ինձ կուղարկեն անցնելու Դանթեի բոլոր պարունակները: Չգիտեն ախր, որ ճանապարհը գիտեմ, էլի եմ անցել, հերթով, քայլ առ քայլ, միայնակ: Հիմա այդքան էլ տխուր չի լինի, դժոխքում մենակ չեմ լինի: Վախենում եմ, ուղղակի սարսափում: Բայց հետդարձ չկա, թաքուն ապրելը հավասար է չապրելուն: Բայց թաքունը դեռ գաղտնին չի: Բոլորը պիտի իմանան:

Հիմա մտովի պատրաստվենք, պատկերացնենք բառերի տեղատարափը, անձրևանոց վերցնենք. դու այլասերված ես, ո՞ր մեղքիս համար, ախր, դու ինքդ ես հոգեբան, քեսպենսերին վառել էր պետք, ես գիտեի, գիտեի, գնա՛, գնա՛: Կշտամբող հայացքներ, կուլ տված արցունքներ, ցավ, մերժում, դատապարտում:

Ֆո՛ւհ, անձրևանոցը. Հեղափոխություն է, հեղափոխություն է, հեղափոխություն է.

– Մա՛մ, պա՛պ, ես տղամարդու հետ եմ, բայց գիտե՞ք, մա՛մ, երջանիկ եմ, վերջապես երջանիկ եմ... մեկ, երկու, մեկ, երեք, հինգ, տասը. լուռ հայացքներ, արցունքներ, պայքար, անձրևանոցս չոր է, հույս. դու մեր որդին ես, դա նշանակություն չունի, մեկ ժամանակ տուր, ո՞վ է նա, եթե դու երջանիկ ես, ուրեմն մենք էլ. հույս:

Հեղափոխություն է, հեղափոխություն է, հեղափոխություն է:

* * *

Չի ստացվում պասաժը, չի ստաց-վում ու վե՛րջ: Աջ ձեռքն առանձին, ձախ ձեռքն առանձին, հիմա միացնում ենք: Գրո՛ղը քեզ տանի, Լի՛ստ, ախր ինչի՞ համար, պոռկե՞: Նայում եմ, թե ինչպես է նվագում Ռիխտերը, հետո՝ Գիլելսը, հետո՝ Ռուբինշտեյնը: Ինքնագնահատական, սպասի՛ր, էդ ո՞ւր, հե՜յ-հե՜յ:

Վաղը ծննդյանս օրն է, 27 եմ դառնում: Վաղը քննության եմ, Կամպանելլան եմ նվագում: Վաղը ծննդյանս օրը չէ, բայց 27 եմ դառնում: Էլի կենացներ եմ լսելու, ի՜ֆ. ամուսնացիր, մեկին գտիր, բախտդ բացվեր, էլի՛, կույգվեիր: Պատկերացնո՞ւմ եք՝ մարդ կա էդ պրոցեսը «կույգվել» բառով է նկարագրում.

«Քո՛ւրս, բա մի հատ չկույգվեի՞նք, ապի՛կ»:

Ապե՛ր, չէ՛, էլի, կլինի՞ էս պասսաժը մոտս ստացվի, գրո՛ղը քեզ տանի, Լի՛ստ: Մայրս պարբերաբար սենյակիս դուռը բացում, հոգոց է հանում, բացում, ճպպացնում է ու գնում: Գիտեմ ինչ ես մտածում, մա՛: Մտածում ես, որ չստացվեցի, գուցե սխալվեցիր, որ ինձ դաշնամուրի հետ կույգեցիր, գուցե լավ կլիներ ինչ-որ շնչավոր մեկի հետ կույգվեի, որ չմտածեի, թե ինչո՛ւ մինչև հիմա Կամպանելլայի պասսաժները չեն ստացվում մոտս:

Բայց կլինի՞ ես ինձ խեղդեմ խմիչքի մեջ, հետո՝ մեր փոչոտ Բարսիկի մեջ, հետո՝ Բախի ֆուգաների մեջ: Ախր ո՞նց քեզ պատմեմ, որ էնքան եմ խրվել, որ դրսի աղմուկն ինձ արդեն երաժշտություն է թվում: Գոռում են՝ հո՛ւհ... հո՛ւհ. ռիթմ, ութ-ութ քառորդ, ութ-ութ քառորդ: Մարդիկ հեռվից ոնց որ նոտաներ լինեն՝ խառը, առանց պաուզայի, շյոնբերգոտ: Ասում ես՝ թավշյա, թավշյա, թավշյա: Ես լսում եմ էդ թավշյան, ես մտել ու էդ թավշյա նոտաների մեջ եմ արդեն ապրում:

Բարսիկս վարագույրը ճղճղելով մագլցում է դեպի լուսամուտ: Խեղճս անհանգիստ է, մոռացել է նույնիսկ վիսկսն ուտի: Աման-չամանները պարկվում են՝ չըխկ-չըխկ: Լիստի պասսաժներն եմ փորձում. ստացվում է, չի ստացվում, ստացվում է, չի ստացվում: Դաշնամուրս դղրդում է.

«Ութ-ութ քառորդ, ութ-ութ քառորդ»:

* * *

Ծխախոտ ծխախոտի ետևից: Զգում եմ, թե ոնց է լեկուս դառնանում: Դանդաղ ներս եմ քաշում թունավոր ծուխը. երանի՜ իրական թույն լիներ: Ինձ թվում ա՝ մարդկանց 80 տոկոսը ենթագիտակցորեն դրան ա ձգտում: Առաջին գլանակից հետո սպասում ես, սպասում, սպասում, բայց ոչինչ չի լինում: Հետո էլի ես ծխում, էլի ու էլի, մինչև մոխրի մեջ թաղվելդ, բայց ոչինչ, դու դեռ կաս, հա՛ էլի, կաս: Սա ինքնասպանության միակ լեգալ տարբերակն ա: Ոչ մի գործիք չեն վաճառում, որ խիղճդ հանգիստ պառկես, միայն ծխախոտ:

Մարդկանց տեսակ կա, հավերժ սուիցիդալ տեսակ: Միշտ նույն մտքերով, նույն կեղտի մեջ լող տվող ու էդ կեղտի մեջ թագավորող: Էդ կեղտը քեզ կուլ ա տալիս: Չնայած դու քեզ լավ ես զգում, որովհետև էդ կեղտի մեջ մի տեսակ լույս կա: Քեզ առաջարկում են մաքուր տարածք, որտեղից մենակ վարդի հոտ ա գալիս, որտեղ լսում են Ֆրենկ

Սինատրա, դու էլ ֆրակ ես հագնում, սվոյ ես արդեն, իրենցն ես, մենակ ատամներիդ դեղնությունն ա քեզ մատնում: Մտնում, ուզում ես երգել հետները, բայց մեկ էլ դրսից ժանգոտած դարպասի ճռճռոց ես լսում, տեսնում ես՝ ոնց են ճանճերը հավաքվում նեխած աղբի շուրջը, նայում ես ցեխոտ կոշիկներիդ, վեր ես կենում, հանում ես ֆրակն ու մտնում ճռճռացող դարպասից ներս:

Մաքրում ես, մաքրում ես, մաքրում ես, որովհետև քոնն ա: Երգում ես «Սարերի հովին մեռնեմ», մեկ էլ մաքուր օդ ա փչում, 27 տարվա մեջ առաջին մաքուր օդը: Հետ ես նայում՝ Սինատրան երգում ա «Նյու Յորք, Նյու Յորք», «Երևան բաղ եմ արել, ջիգյարս դաղ եմ արել»: Ավելի բարձր ես երգում, շատ բարձր ես երգում: Ու տեսնում ես, որ գալիս են, շողշողացող աչքերով են գալիս, քո հետ սկսում են մաքրել ու մաքրվել, միջիդ ժանգը կորում ա, նեխած աղբը կորում ա, ճանճերը կորում են, ծխախոտի տուփը ոտքիդ տակ ճմվում ա, իսկ դու մաքրում ես: Քրտինքդ կաթիլ-կաթիլ թափվում ա ու տեղը ծառ աճում:

Մարդկանց մի տեսակ կա, հավերժ պայքարող տեսակ, ապրող տեսակ, ժպտացող տեսակ.

– Ախպե՛ր, հեղափոխություն ենք անում, գալի՞ս ես:

* * *

– Մի րոպե, բայց դու *ակումբ 27-ից* չես, երեք տարուց կգաս:

– Չէ՛, չէ՛, բան ունեմ ասելու, լավ, էլի՛, մա՛մ, մի քիչ էլ խաղամ: Գրանցեք 27-ի տակ, ձեր տողերում ինձ էլ տեղ տվեք, բան ունեմ ասելու: Չորս հոգու կերպար հագա-հանեցի, հագա-հանեցի, վերջապես ես եմ, իմ կերպարով: Կարող եմ, չէ՞, մի բան էլ ես ասել.

Շնորհակալություն:

Վազում եմ, վազում եմ, ինձ սիգնալ են տալիս, բայց ես ծիծաղում եմ, գոռում եմ, լացում եմ.

– Սիրո՛ւշ ջան, մի հատ շամպայն տուր, շո՛ւտ արա, ջհայնամ, որ աշխատավարձս դեռ չեմ ստացել:

Շունչս փչելով վազում եմ տուն: Առաջին անգամ մերոնց մոտ լաց եմ լինում. երջանկությունից: Ստացվեց, ստացվեց, գը՛մփ-գը՛մփ, բաժակները լցվեցին: Շնորհավոր, ժողովո՛ւրդ, ինտրովերտ հալովս բոլորին գրկում-պաչում եմ:

Ծաղկաձորի քոչարի են պարում, շրջանի մեջ բոլորն իրար նայում ու ժպտում են, նայում ու լացում են. տարարարիրա- րարամ, տարարարիրա-րարամ: Ընկերուհուս եմ տեսնում, էս տասը օրվա մեջ ոչ մի անգամ չէի տեսել ու խոսել հետը: Մտածում էի՝ օֆիսային պլանկտոնը էլի նստած աթոռն ա մաշացնում, ինձ էլ ձեռ կառնի երևի, որ շնորհավորեմ ու... դրոշը կապած գլխին, թաց աչքերով գալիս փաթաթվում ա.

– Ոտքերս ուռել են, էնքան եմ քայլել, 10 օր էր՝ քուն-դադար չունեի, հաղթել ենք:

Ավելի եմ սկսում լաց լինել, մտածում եմ՝ մարդ երեխա ունենար՝ ամեն ինչ պատմեր, կիսվեր հետը:

Գալիս եմ տուն. օրացույցի մեջ ամսի 23-ը կարմիր շրջանակի մեջ եմ առնում: Հաջորդ օրը պարթնում եմ, էլ ամսի 23-ը չի, մյուս օրը պարթնում եմ, էլի 23-ը չի, 10 օր հետո էլ 23-ը չի: Կլինի՞ մահից հետո ես արթնանամ իմ սեփական դրախտում, որտեղ ամեն օր կլինի ապրիլի 23-ը:

Հեչ մի բանի մասին

«Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել»... չէ՜, սա չէ:

«Առավոտ էր, Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտներից մեկը»... չէ՜, է՜, էս մեկն էլ չէ:

«Գիշեր է, երևանյան փողոցների լուսապայծառ լապտերներով ողողված գիշերներից մեկը»...ըհը, սա՛ է:

«Լուսապայծառ» բառը վեցերորդ դասարանից այս կողմ չէի լսել: Լավ, պատմում եմ. արդեն ասացի գիշեր է, երևանյ... մի խոսքով, հասկացաք: Հագել-կապել գնում եմ աշխատանքի... մի րոպե, գիշերո՞վ: Լավ, ուրեմն հագել-կապել գնում եմ խմելու, այո:

– Վիճակդ տեսե՞լ ես,– իյա, էս բարև-բարլուս չկա՞ր:

Մոտ ընկերուհիս է, մինչև քթի ծայրը փայլեցրած:

– Վիճակս տեսել եմ,– ակամա ճպպացրի:

Ո՞նց չեմ տեսել. ջինսս ճմռթված (հո՜պ, ոչ մի նորմալ մարդ ջինսը չի արդուկում), վերնաշապիկս՝ նույնպես (լա՜վ, մեղավոր եմ), ակնոցիս աջ ապակուն էլ՝ մի մեծ հետք (հա՛, բայց ամեն ինչ տեսնում եմ, չէ՞):

– Էսօր էլի սկյուռիկների փրկության գործո՞վ էիր զբաղված, ակո՜ւնք իմաստության:

– Հա՛, սկյուռիկների պաշտպանության նախարարը չե՞մ, ես չանեմ՝ ո՞վ անի:

– Դու քե՛զ պաշտպանի, սկյուռիկներին հերթ կհասնի:

– Ինձ թող իմ երկիրը պաշտպանի,– ըըը, լավ, չխորանանք... բազմակետ, բազ-մա-կետ (...)

Հա, խմելու: Մատուցո՜ղ, մի բաժակ գարեջուր... «Կիլիկիա», խռուստալից (բյուրեղապակի) բաժակով... ապրե՛ս: Մի բաժակ էլ «Բլյու լագունա», գունավոր ձողիկով... ապրե՛ս: Երկու կտոր խելք, մի գրամ մարդկություն, կես կտոր խաղաղություն, թարմ թխած ավնվություն, ծովից ծով Հայաստան, ո՞նց թե մի բաժակ, ասում եմ՝ ծովից ծով, մի կտոր հող ու հաշիվը... բայց նայի, հա, հողի համար չեմ վճարելու, տես հանկարծ դեռ ինքդ պարտք չմնաս:

«Կիլիկիան» շատ լավ գարեջուր է... ի՞նչ «Միլլեր», «Բիթբուրգեր», «Քրոմբախեր»: «Կիլիկիա», «Կիլիկիա», «Կիլիկիա»: Շատ լավ բույր ունի ու հաճելի դառնություն: Թոնրից նոր հանած հացի բույրն ունի ու թոնրի մոտ երգող տատի ձայնի հաճելի դառնությունը:

«Բլյու լագունա»... շատ լավ երկնագույն երանգ ունի, շատ հաճելի, շատ աղվոր, ըհը՛:

Նստել եմ թախտին... իրոք թախտին եմ նստել: Երևանը, ճիշտ է, սիրունացնում են, պարդարում, լուսավորում, փայլեցնում, ~~քանդում, ավիրում,~~ կառուցում: Լավ են անում (չէ), բայց արի ու տես՝ հին խելքի տեր, անգրագետ ու անճաշակ, դեգրադացված մարդիկ դեռ քաղաքի թաքուն անկյուններում թախտեր ունեն, իշոտնուկներ ունեն, խռուստալից բաժակներ ունեն, նավթավառ էլ կճարվի: Այ էսպիսի անդուր բաներ, անունն էլ սրճարան, ինչի՞ համար ենք վճարում, հին ու մաշված թախտի՞... այո՛: Ընկերուհուս փայլեցված քիթը էս թախտի հետ հեչ չի սազում, «Բլյու լագունան» կփրկի աշխարհը... «Աշխարհըս մե փանջարա է...» չենք խորանում: Խմում ենք գարեջուր, սովորական գարեջուր «Կիլիկիա» անունով, գարեջրի բրենդի անունն է: Նստել ենք սովորական թախտի վրա, սովորական փոքր քաղաքի մի ավերակ շենքի մեջ... վերջ:

– Էն օրը, էն օրն ասելով՝ երկու ամիս առաջ մեր կուրսի Գնդլը, դե գիտես, էլի՛:

Իհարկե գիտեմ, բոլոր համակուրսեցիներին էլ գիտեմ, մեկը մյուսից «Գնդլ»:

– Մի խոսքով, մեքենայով եկավ հետևիցս, հավաբնի մոտ (մեր համալսարանը) կանգնել ա, ամբողջ մուտքը փակել ա:

Մեքենայի բրենդը, Գնդլի հագած վերնաշապիկը, սանրվածքը, մի օրվա եկած թրաշը... սո՛ւս էլի, սո՛ւս, փակի՛ր բերանդ, սա՛ սդ կտրի:

Սասս կտրած լսում եմ... գլխով եմ անում, լսում եմ, գլխով եմ անում, գարեջուր եմ խմում, հալալ ա Գնդլին, լսում եմ, գարեջուր եմ խմում, ժպտում եմ, ապրի Գնդլը, գարեջուր եմ խմում...

Ափսո՜ս, Անո՜ւշ, սարի ծաղիկ,
Ափսո՜ս իգիթ քու յարին,
Ափսո՜ս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսո՜ս էդ ծով աչքերին...

Գարեջուր եմ խմում:

Պատերը մրոտ են, երևի վառարանից է եղել: Ընկերուհիս միալար տվկում է, ես էլ պատերն եմ ուսումնասիրում: Մի փոքր կիսատ-պռատ տեսողությունս լարում եմ ու մրոտ պատերի միջից փորագրած տառեր տեսնում: Հա էլի, տառեր են... ակնոցս հանեցի, աջ ապակին վերնաշապիկիս վրա մաքրեցի... ընկերուհիս դեմքը ծամածռեց, պա՛հ:

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ... սիրուն-սիրուն մասնիկներ, գալարներ, պոչիկներ:

Է, Ը, Թ, Ժ... մուրն անցավ, մնաց լույսը, աչքերս տրորեցի. լույսն ուժեղ էր:

Գնդլ...Գ, Ն, Դ, Լ... սիրուն-սիրուն գալարներ, մասնիկներ:

– Ես էլ էդ փափուկ խաղալիքը ուղիղ չորրորդ հարկից ներքև շպրտեցի,– վեր թռա:

Ձախ ոտքը աջի վրա գցեց, «Բլյու լագունայից» ֆռթացրեց: Խեղճին մինչև չորրորդ հարկ քարշ էր տվել, որ դրամատիկ կերպով ցած նետի պատուհանից: Խաղալիքը նկատի ունեմ:

Վերջերս գիրք եմ նվեր ստացել, բառերի ծագումնաբանության մասին է. մինի-բառարան ու մի ամբողջ կենսագրություն: Կարդում եմ, չեմ կշտանում, թունդ սիրահարվում եմ (Ա, Բ, Գ, Դ): Մայրս որ բառարան էր կարդում, հազիվ էի ծիծաղս կսպում. ի՜նչ աննպատակ ընթերցանություն:

– *Մա՛մ, մի երկու բառարանային բառ ասա, պատմվածքիս մեջ ներառեմ:*

Գեղագունակ, խտխտուն, քաջակերպ, չքնաղագյուտ... ասաց:

Գեղեցիկ բառի հոմանիշներն են: Միշտ է այդպես: Երբ սերդ մեծ է, լեզուդ ինչ բառ ասես կհորինի: Երբ ցավդ ուժեղ է, լեզուդ ինչ բառ ասես կլռի: Երբ կորուստդ մեծ է, շատ չէ՝ մի երկու կտոր հող, մի քանի քար, լեզուդ ինչ տառ ասես կլացի: Հարուստ լեզու է, հարուստ ցավ:

Անցանք առաջ: Ուղիղ քայլով դուրս ենք գալիս դեպի ծուռտիկ փողոց: Ես վստահ քայլում եմ իմ հնամյա տրեխները (կեդերը) հագս, ընկերուհիս իր լաքապատ կրունկների վրա... անվստահ:

– Էլ էդ Նոյի դարի սրճարան ոտք չեմ դնի,– ուզում էի ասել՝ աղջի՛կ ջան, երբ Նոյը տապանով իջավ Արարատ լեռան գագաթին... ես սկսում եմ կասկածել, որ հենց դու ես իմ մոտ ընկերուհին:

Նայում եմ երկնքին, նայում եմ քաղաքին, նայում եմ շենքերին, լապտերներին, նստարաններին, աղբարկղերին, ոնց որ մեկըականջիս տակ երգի.

Ապքագէ էրթա չի,
Թաքիդում փէրէված ա
Իսա ինչբէս աշխարի ա,
էմմէն դաղ խարէված ա

– Քո կարծիքով՝ մարդիկ ինչի՞ համար են երկրից գնում,– հարցնում եմ:

– Պարզ չի՞, աշխատանք չկա:

Չէ՛, պարզ չի: Ես մտածում եմ, որ հոգին իր սեփական հիշողությունն ունի: Մարմինը ծնվեց այս հողի վրա, ապրեց, մահացավ, էլի ծնվեց: Հոգին քամու պես եկավ, քամու պես շրջեց, քամու պես գնաց: Ես գիտեմ, որ իմ հոգին ինձ քարշ է տալիս իմ տուն: Մի ժամանակ մտածում էի, որ տունս երևի էն սիրուն, ձնավոր, արհեստական քաղաքներից մեկում է, հեսա կմեծանամ ու կգնամ: Հետո սկսեցի հասկանալ, որ իմ տունը Ա, Բ, Գ, Դ-ն է, ուր էլ գնամ՝ հետ եմ գալու: Հիմա գիտեմ, իմ տունը հեռու-հեռու սարի ետևում է, երբ Նոյը իջավ սարի գագաթին, հոգիս տեսավ ու սիրահարվեց սարի ետևի հողին:

Էրգիքէ էլլուշ քուկիմ,
Աստաղէ Փէրնուշ քուկիմ,
Լուսնիկայի մէշնան հէդ,
Քէկի փութ էնուշ քուկիմ:

Հետո քամին փոխվեց, փչեց հակառակ ուղղությամբ, հոգիս լաց եղավ, որովհետև սարի հակառակ կողմում էր հայտնվել: Բայց սիրեց այդ հողը, մշակեց, խնամեց, բերք ստացավ: Քամու հետ եկավ, քամու հետ գնաց: Հիմա սպասում եմ, թե երբ պիտի քամու

ուղղությունը փոխվի, որ ետ գնամ իմ տուն: Քարերն եմ կարոտել, հետո էլ հողն անմշակ մնաց, բա որ լեզուս չհասկանա՞...

Կհասկանա:

– Հա՛, ճիշտ ես ասում, աշխատանք չկա դրա համար էլ գնում են, ո՞ւր մնան:

Էրթուշ քուկիմ իսթի հէդ,
Այէ հէդրա էրթանք մէք,
Մէդողում աշրհսիվա,
Լուսնիկա էլլողուք մէք:

Երևանի ծուռտիկ փողոցներով քայլեցի, գարեջրի դառնությունը վայելեցի, լապտերների լույսը տեսա, մարդկանց աչքերի մեջ նայեցի, մտքով գնացի իմ տուն:

Ուզում եմ Երևանի ծուռտիկ փողոցներով քայլել, գարեջրի դառնությունը զգալ, լապտերների լույսը տեսնել, մարդկանց աչքերի մեջ նայել, գնալ իմ տուն...

Գյուղացի Համբոյի տանը կռիվ չէր ընկել, որովհետև տան մեջ կռիվ չի ընկնում:

Արամ
Կիրակոսյան

Ծնվել է 1998-ի ձմռանը Երևանում: Մնացածը՝ հետո: Եթե ուշ չլինի:

Դիլիջան, տակ Դիլիջան

– Դիլիջա՞ն ինչ ես կորցրե:

Հարցնում եմ, որ փոշմանեմ, ու գնաց նույն կասետը. հովանանք, կովանանք, աղջկերք, խմել, անվերջ սեքս… Ով խոսար սեքսից, ա՛յ անվերջ կույս: Խմելը՝ հա՛, խմելը լավ ա ստացվում: Է՜հ, Դիլիջա՛ն, տա՛կ Դիլիջան:

Տռաս, բարդիներ, Փինք Ֆլոյդ, պիվեքի չխչխկոցը, քամի, լավ ա:

– Ապե՛, ծծվանք Ֆլոյդիցդ:

– Բա ի՞նչ, Ծիմըծի՞:

Հե՛հ, փախավ շախից:

– Թեկուց:

Վայ չփախավ. մատ: Քոքեց Ծիմըծի: Քունեմ:

Սևանը, չայկեքը, կրուցները սրանց՝ մոյ լուչշի դռուգ պրեկիձենտ Պուծին:

Ծովագյուղ ու մտանք թունելը, մտանք չոր, վառված Հայաստանից, դուրս եկանք կանաչ,

կենդանի Հայաստան: Ու ամեն պավառոտը նոր տեսարաններ ա բացում՝ նոր անտառոտ սարեր, ու նոր շնչառություն ա բացվում մոտդ: Ու կուկուռուվներ: Բայց գայթակղվել չկա, դու գիտես՝ ուր ես գնում, ու երբոր արդեն թվում ա՝ էլ պավառոտները խաբեցին քեվ, դիմացդ դուս ա գալիս հին ու բարի կնիկը՝ հետևը, բանը, ցցած կուկուռուվներով, ու թեքում ենք ավտոն:

Տաք, համով, աղ, ցելաֆան, բիսեդկա, պուլպուլակ, համով, վիբիլը որտե՞ղ ա: Պուճուր քաղաքի մաշված հյուղակները:

– Մի տեղ հաց չուտե՞նք:

– Նոր կերանք, քշի տունը:

– Մեկդ գտեք էլի:

Տունը, սիրուն, քարից, փայտյա, մեջը փայտ, խալիներ, փայտից արձաններ, հարմար, սիրուն, սաղ կա:

– Մնում ա աղջկերքի հարցը:

Վայ քունեմ քո հարցը:

– Հլը կանգի տիրոջը, կարող ա ճարում ա:

Փնտրողը կգտնի՝ ասում ա: Մինչև էտ մանղալը, փեդերը, պիվա փըշշ, շամփուրին հագցնելը, ճպճպոցը, մսոտ, միս, ՄԻՍ: Ու եկան իրեք հատ, մեկը մյուսից գեշ, մյուսը մեկից գեղ, գեշ, տգեղ:

– Հա լավ, որ տոպրակ քցես գլխներին, լավ էլ պուց են:

– Վայ քունեմ լավը…ը չեն:

Արաղը բաց: Կոլան արաղի հետ, արաղը կոլայի, ու խորովածը, խոզի, խոզավարի, յուղ, քեվ ի՞նչ լցնեմ: Լավ, խիստ էի շատ, վատը չեն, հումորով նույնիսկ, սիրու՞ն: Ծխել: Նարդի՞: Բեր նարդի, կարճ եմ խաղում բայց: Երգելը, պռուցները սրանց, մինչև փորացավ խնդալը:

– Մաֆիա չքցե՞նք.... Ապե՛, մաֆիա խաղացող:

– Հաջո՛ղ:

– Գյո՛թ: Սո՛ւր, մաֆիա խաղու՞մ ես:

– Չէ՛, բռա՛տ, ավելի ուշ կարող ա:

– Մնացա՞ծն ուր են:

– Ախախ, երևի վերևը շինվում են:

Մ՜ի, ա՜ի, վայ, չէ՛, չէ՜ խնդրում եմ, աչքերս հանե՛ք, աա՜, արաղ, շուտ արաղ աչքերիս, կոկորդս: Մութ ա, հանգիստ: Քել դուս, ծխենք: Լա՞վ ես:

– Կա՛ր, բան ասեմ, բայց երդում կեր՝ մարդու չես ասի:

– Ասա՛:

– Չէ՛, երդվի սկզբից:

– Երկարցնում ես արդեն:

– Ապե՛, վոբշըմ, էն կարմիր շորով աղջիկը կա՞:

– Մարգո՞ն:

– Հա՛, Մարգո, ճիշտ ա, վոբշըմ, բարձանամ տենամ Լյովը իրան կունի ա անում:

– Ի՞նչ:

– Լսեցիր:

– Չէ՜:

– Հա՛:

– ...,- սառել ա: – Ի՞նչ ասեմ, քունեմ էս շրջապատը, ապե՛ր. մեկը գյոթ էր՝ քիչ ա, մեկն է պուց ծծող եկավ գլխներիս, սատկցնելու եմ ես դրան, արա՛, լա՜վ, արա՛, Լյովից որ չէի սպասում, պուց ծծող ագառկա բերա՛նդ ժաժ տամ, արա էտի միշտ էլ ուներ տենց բան իա մեջը:

– Հա՛, բայց, ապե՛, իրա մոտ սուս:

– Արա՛, ես քեզ սենց ասեմ՝ դու էսի մոռանում ես, ջոգա՞ր, էսի խլեշի պես բան ա, ջոգո՞ւմ ես:

Պիվա, գլուխս տրաքում ա, բլոտ, քաղցր, մառախուղ:

– Քնողը գյոթ ա:

– Ապե՛, կամաց, աղջիկ կա:

– Տո քունեմ սրանց աղջիկ ասողին:

– Վա՞տ ես:

– Հեսա ասեմ՝ վատը ով ա, ա՛յ ֆուցն, արի ստե, հալդ քունեմ:

Բլյադը, էս էր պակաս, պաիեք սրանց, Ա՛րս, մի բան արա, քթին, փորին, ժաժ տամ, Ա՛րս, էս ով եք դուք, արունլվիկ, եկեք, երեխե՛ք ջան, եկեք ձեզ ճամփեմ՝ լավ ա, ինչքա՞ն եմ տալի, ինչքա՞ն, վայ մերը քունեմ, առե՛ք, ա՛ռ, սի՛կտիր, սի՛կտիր: Արա Լյովը լացում ա.

– Ապե՛, լա՛վ, վսյո՛, էղել էղել ա:

– Ներող եք, տղե՛ք, էլ սենց պռապուսկատ չեմ անի:

– Հա լա՛վ դու էլ, եսիմ ինչ չի:

– Տո բա ի՞նչ ա, որ ինչ չի, քունեմ սենց բանը:

– Կա՛ր, լավ, ապե՛, հասկացանք:

– Ներող եք, տղե՛ք:

Թե բա քնողը... Սաղս քնեցինք:

Առավոտվա ծխելը, յուղոտ բաժակից ֆանտա խմելը, օդը, խորովածի լավաշը, համով, կայֆ:

– Տի՛կ, երեկ շատ խմեցիր. քել լուչշե Արսը քշի:

Ճամփին սաղս սուս, քամի, Փինք Ֆլոյդ, լավ ա:

ktktktkt kt

Կարկուտների կտկտոցից սովորում եմ տպել լատինատառ: Առաջին գրածներս շուտ մոռանում եմ, հիշում եմ՝ ի՜նչ լավ էր, երբ խելոքությունիցս էի ջղայնանում, իսկ հիմա՝ չէ, ու գրում եմ «V»: Պապիկիս ձեռքերը քարից էին, «քարի մեջ արյուն կա»,– ասում էր, իսկ ես երազում էի տեսնում արյուն, իսկ ես վախենում էի արյունից, ու սովորեցի գրել երկու ցուցամատով, հետո կոնյակ էլ սիրեցի: Կոնյակ էլ սիրեցի: Աշուն: Գույները իրավունք չունեն, գույները պարտավոր չեն. երգելով մենակ չես ուրախանա, երգերով չես ուրախանա, պետք են մարդիկ, իսկ ինձ պետք ա ուրախություն առանց մարդկանց: Ու էս խառը վիճակին պայմանական Պողոսը, թե բա՝ ախպե՛ր, լսի՛...

Երկար կապակցված տուֆտեր, ծանր դատարկություններ, որ մտնում են ճակատիս տակ, դմբում աչքերիս: Մեռնե՜ս դու, Պողո՛ս, մեռնես քո կապակցված տուֆտերով դատարկ ծանրությունների ապատ անկման արագացումից: Իսկ ես զգում եմ վերարկուն ուսերիս, որ ինձնից առաջ դեռ պապաս ա գցել՝ փորձելով անել էտ ավելի գռասիո, քան ինքը կաներ երևի, կցալ ինձ ավելի վստահ, քան ինքը կարար երազեր, պտտում սիգարետը ու սեղմում ատամներս ու հիանում ինձնով: Վառում եմ ու քունքով զգում՝ ոնց են ուրիշները հիանում ինձնով. բայց ընկերնե՞րս ուր են, ո՞ւր է իրանց հիացմունքը, քմծիծաղը, ժպիտը, նախանձը, էն պարտք մնացած ուրախությունը: Պողո՛ս, հե՛տ արի, արի խմենք:

Առաջին բաժակով հանդիպման կենացը.

Հանդիպումները դեմ դիմաց հայելիներ են

Երկրորդ բաժակով ծնողների կենացը.

Անարդար ա խղճալը իրանց

Երրորդ բաժակով սահմանին կանգնած տղեքի կենացը.

Սահմանի տղերքը պետականության մատաղն են, Աստվա՛ծ ջան, չընդունե՜ս տենց մատաղ

Չորրորդ բաժակով խմենք, Պողո՛ս, քո՛ կենացը: Քիչ ենք ճանաչում իրար, բայց մի տեսակ մաքուր բան կա, անկեղծություն կա մեջդ, որ ուրիշ տեղ չեմ տեսել, ու շատ սիրում եմ քեզ: Ու գլուխս նորից պտտվում ա ու ցավում քո հիմար անկեղծություններից. դժվար քեզ իրոք սիրեմ. նենց, ոնց ընկերներիս եմ սիրել, որոնց դու իրանց ճկույթն էլ չարժես, իրանց ճկույթի եղունգն էլ չարժես, իրանց ճկույթի եղունգի տակի կեղտն էլ հազիվ արժենաս՝ էնքան եմ իրանց իմ սիրուց տվել ու դատարկվել եմ մենակ: Մենակ, դնում եմ սիրածս երգը, հետո backspace, alt-shift, «Վաղաժամկետ ազատում»:

Լուսանկարը՝ Նավիկ Արմենակյանի

Աննա
Դավթյան

Ինչպես ամառ

Խշշում է ամառը տաքով: Օդի մեջ ամեն ինչ չոր ու տաք խոտ է: Դաշտերը բեռնատարներով տուն են գալիս: Ամառվան ուղեկցում է ուժը: Որ հաստ մարմնի մեջ չէ: Այլ ուժեղ է՝ ինչպես ծառի միջին չափի ճյուղը՝ ոչ բարակ, ոչ հաստ: Գյուղը վարում է այն կյանքից, որն իր համար ամենասովորականն է: Տաք արևի տակ ընդարմացած մարմիններ՝ փայլուն ու ձիգ: Չի կարող կսպել իր մեջ աճող հիացումը: Տղամարդիկ հասկանո՞ւմ են:

Նայելը՝նայում է: Հեռավոր բարեկամ Մխո քեռուն ասել էր՝ ուզում է խոսել հետը, ու քեռին գիտեր, որ խոսքն իր խմելու, տնից հեռացած կնոջ ու երեխաների մասին է: Բայց Մխո քեռին տարօրինակ արտահայտություն էր օգտագործում, ասում էր՝ ես հասկացա քո կանչը: Որտեղի՞ց էր ասում: Քեռին չգիտեր, թե ինչ է կանչ բառն արթնացնում Խաննայի մեջ:

Երբ մեքենայով անցնում էին, ու դիմացի ոլորանից հայտնվեց խոտի իսկայական հակերով բեռնատարը, վարորդի կողքին, դրսի ոտնակի վրա մթան մեջ երևաց մեկի ուրվագիծը ու մարմին դարձավ Խաննայի մտքում: Միտքը տակնուվրա էր: Շրջվեց ու քեռու տղային ասաց, որ սեռական ամենախոլ բաները գյուղում է կգում: Խոլ ի՞նչ է՝ ասաց

նա: Խելառ՝ ասաց: Բարձր միացրած երաժշտությամբ քշում էին գյուղի փողոցներով՝ մթան մեջ, իրարից տեղյակ, իրար հետ հասած ընկալման այնպիսի աստիճանի, որտեղ «չի կարելի»-ն դատարկ բառ էր: Խաննան գիտեր, որ կա նրա երկար վիզը, ինչ-որ տեղ, կողքանց տեսնում էր դրա ցոլացրած լույսը, որ մեքենան էր գցում դիմացի փոսավոր ճանապարհին: Խաննան գիտեր ատամների շարվածքը, շրթունքի ջահելագույն բեղն ու մորուքը, խալը, կգում էր երկար, մկանե թևերը, տեսել էր բարակ փորը՝ մազերի գծով, ու կոնքի փոսիկը՝ վարտիքի մեջ մտնող: Նրա մարմնի ամբողջ տեղեկությունը:

Գլուխը հետ գցեց:

Երգեց:

Մութ էր: Ճանապարհի կողքին տանձի այգին էր, որտեղից գալիս էր բվի ձայնը: Մեքենան խթանված սահում էր փոսերի կողքով՝ լուսավորելով դիմացի գյուղի այսուայն խութը, որտեղ մարդիկ էին քնած ինչ-որ բանի ծոցում:

Ձախ թևի վրա բլուրն էր, որի փշերի ու տատասկների գլխին էր կանգնած Աբգարի մորաքրոջ տունը ու ամբողջ հոգով նայում էր տանձուտին: Այստեղ էր ապրում Գոռը՝ սարքված մկաններից ու ջղերից: Երբ գնում էին Ղարաբաղ՝ Աբգարի պինվորական երդման արարողությանը, Խաննան դիմացն էր նստել, որ թույլ չտա վարորդը քնի: Բայց դիմացն էր նստել, քանի որ դիմացն էր Գոռը՝ ամաչկոտ ու հպոր: Մութ ծառերի մեջ էին քշում, որտեղ երբևէ մարդ էին սպանել, ու մեքենան գերի էր անտառներին ու սպանության պատմություններին, ինչքան գնում էին, անտառե բլուրներն ավելի էին շատանում, պատմությունները դառնում էին ավելի վարիուրելի, ու ամեն ոլորանի վրա Խաննան բռնում էր Գոռի թևը՝ մտքին այս ամբողջը ու մի բան: Բռնելու վրա՝ Գոռը պրկում էր թևը, Խաննայի բռան մեջ ծավալվում ու ուռում էր մկանի գունդը, որի վրա դողում էր կաշին: Խաննան ուզում էր հակվել այդ թևի վրա, թեթև հպվել լեզվով, Խաննայի գլխում մթության մեջ հազար լեզուներ էին պտտվում: Երբ ոլորանն անցնում էին, մկանը հետ էր սահում իր տեղը, Խաննան բաց էր թողնում ձեռքը, թուլացած դնում էր գոգին՝ ափը թեթև քրտնած: Նայում էր դիմացը՝ վազող ծառերին ու Ղարաբաղի ճանապարհին, ու մտքի մեջ տեսնում էր Գոռի համար գնված ամուսնական մահճակալը: Նրանց՝ փշերի ու տատասկների վրա կանգնած տան ետևի սենյակում, որտեղ միշտ քամու ոռնոց կար: Գոռը հուժկու թևերով պաշտպանելու էր կնոջը:

Քամուց:

Ու փշերից:

Գոռի սենյակում կար թղթե կարապ՝ խոնարհված գլխով:

Դաշտերում մեկական մեծ հակ՝ արևի ամեն մի շողի տակ: Պատված են խոզանով: Ի՞նչ կարող ես անել, եթե ոչ նկարագրել բնությունը: Կանչը: Խոտերը կառչում են Խաննայի պարանոցից:

Երբ գյուղում որոտ է լինում, կրակում են ամպերի վրա:

Հասկերից դուրս է թափվել հատիկը, բակում շեղջված է ցորենը: Աբգարը բոբիկ ոտքերով մեջն է: Կոճերի մոտ սրունքները բարակ են, մատների արանքում է մնում ցորենի մղեղը: Քանի որ գիտի, որ տղամարդ է, ցավ չի պգում: Խոտերը կառչում են

Խաննայի պարանոցից:

Աբգարը վրան է ցանում մոր դուխին:

Ամբողջ տունը լցված է նրա վկի հոտով:

Ընկերոջ ծնունդն է, գնացել են Գյումրի՝ բոկի: Ընկերը հյուրասիրել է: Մթան մեջ քշել են երկու ընկերով, բուֆերով երաժշտություն են լսել, անցել են Հռոմի կամուրջը, գնացել են ուղիղ, հետո էլի ուղիղ՝ ճամփի կարկատանների վրայով, մեքենայի թսթսան լույսի հետևից դեպի աղջիկների կանչող կանչը: Խաննան ուզում է ամբողջը պատկերացնել: Գգվե՞լ են արդյոք իրար, համբուրվե՞լ են, մատները տարե՞լ է արդյոք նախ վկի վրայով, հետո բարակ արանքներով, հետո մտե՞լ է արդյոք խոռոչը, սիրե՞լ է, որ թաց է, թե՞ միևնույնն է եղել: Ինչպես են մկանները թրթռացել, ինչպես է շնչել-հևացել, ինչպես է բախել պատերը, ինչպես է կպել, ինչպես է սպառել իրեն: Քանի՞ անգամ է կարողացել: Սրանք չխոսվող հարցեր չեն իրենց մեջ, բայց Աբգարը երբեմն ասում է՝ իի՞յ, ու Խաննան փակում է թեման: Խաննան է փակում: Հետո ծխում են:

Գյումրիի մութ ճանապարհը հանգիստ չի տալիս: Աղջիկների փոքրիկ բոկանոցը՝ նեոնային լույսերի մեջ: *Ցանկության կզացումը՝ ճանապարհի խճին ու ասֆալտին:*

Եվ կա հարսը՝ իր հարսնությունն անող: Աբգարի եղբոր նշանածը: Եղբոր սիրածը: Լուռ սուրճ է վերցնում, վեր դնում՝ սպասելով իր ամուսնական գիշերվան: Արանքից սահում են օրերը, սահում են դաշտերը, ցորենները, ակնարկները, միայն սուրճն է հաստատ ու մնայուն, ինչպես սպասումը: Հինգ տարի սպասել, մինչև առաջին թառաչները կարկվեն կանաչ սենյակի պատերին ու դուրս գան լուսամուտից, որ նայում է կողքի տան կարմիր պատին: Վարագույրն էլ է կանաչ: Վարագույրն էլ է սպասում: Սպասում է, որ քեռին խոպանից բերի հարսանիքի փողը: Առայժմ այդ սենյակը տրամադրված է Խաննային: Խաննան քնում է նրանց համար թափված փափկագույն դոշակի վրա: Լսում է նրանց հեծեծանքները: Խաննան նրանց աչքերով նայում է առաստաղին, ու հարսի բերանից ինչածը փաթաթվում է տարօրինակ, ճենապակե ջահին: Հարսը միշտ ներքևից է: Հատակը տախտակներով ճռռում է: Կողքի տան պատը մի մետրի վրա է, արանքում՝ բաղեղի փոքր քոլ ու անպետք երկաթեղեն: Տան հետևում գետնից դուրս եկող ժայռերի գլուխներ են, որ քեռին տաշել է ինչով պատահի: Ժայռերի կողքին թեթև հող կա, ու մի երկու բան-ման է աճել՝ դեղնած ծաղիկ, լաթի կտոր: Հետո Լուսիկենց տունն է, Սեդրակենց: Այստեղ նույնպես սպասում են: Խաննան չգիտի, թե հատկապես ինչի՛:

– Տղա՛ ջան, լոմը տարար, ծռեցիր, բերեցիր:

Լոմը դեմ էին տվել բեռնատարի ակերի արանքը մտած մեծ քարին ու մեքենան հետ էին քշել: Լոմը աղեղվել էր: Հետո պիտի ուժ դնեն, պողպատը տաքացնեն, վառեն, այրեն, խփեն, որ ուղղվի: Այն բեռնատարն էր, որի վրա տղամարդու ուրվագիծ կար: Խոտի հակերը բարձած էին մինչև ամպերը: Ինչ-որ ձեռքեր ու թևեր:

Խաննան որ եկավ, տան հետևի բակում նույնքան խոտ կար: Մղեղները ծվեն-ծվեն արևի մեջ, Աբգարի շապիկից ներս: Նա ամբողջը մենակ ներս լցրեց: Գոմի տանիքը: Եղանը խրում էր հակի մեջ, սվվոցով հանում էր վեր ու նշան բռնում տանիքի փոքրիկ դռանը: Խոտն ուժի տակ ինքնիրեն պարելով ներս էր լցվում: Խաննան այդ ուժի գերին էր, ինչպես Ղարաբաղի անտառների: Խաննան ուրախ էր, որ իր տրամադրության տակ եղած մի

կյանքի հարցերն էր միայն պարտակելու, որ չկային ավելի կյանքեր: Ավելին չէր կարողանալու ապրել, եղածն արդեն լիուլի էր: Խաննայի պարանոցից միշտ ինչ-որ բան էր կառչած:

Գյուղում տղաները ծխում են: Ճարում են խոտ-մոտ, բարձր միացնում են մագը ու քշում են մինչև գյուղի աշխարհի ծայրը: Աբգարը ցույց էր տալիս գյուղի հաճույքները, որից Խաննայի աչքում խամրում էին դիսկոներն ու պարի տաղավարները:

Ու հետևից մեջքը կլլվում էր սիգարետի ծխով:

Աբգարի երազը: Հավնոցում չորս աղջիկ էր պահում, նրանցից մեկն ամենասիրունն էր ու ամենաշատն էր փախնում իրենից: Բայց Աբգարը կարողանում էր չորս ոտքերով կենդանի դառնալ, որի ինչ լինելն ինքը չէր տեսնում, միայն պգում էր, որ վազում է չորս ծանր ոտքերի վրա՝ կարտոֆիլի մարգերի միջով, ու հասնում էր աղջկան, ու հենց հասնելու պահին նրա կենդանական վազքը դառնում էր մարդկային գիրկ ու գրկում էր աղջկան: Մյուս երեքը կամացուկ մոտենում էին:

Լվացարանի տակ ջրի ծանրացած կաթիլներ կային:

Խաննայի երազը: Փոքր համբույր վզին, հետո լեզվով, թուք է քսվում փշաքաղված մաշկին, մատները եղունգներով սահում են ողնաշարի ձորակով ներքև, բռնում է կոնքի մսից, ձեռքը դնում է վրան, դիմադրություն,– թո՛ղ,– ձեռքի ափը վերուվար է անում, պգում է վարտիքի թաց կետը, բերանով ուղղակի բերանում, լեզուն պգում է բոլոր ատամները, վահանաձև գեղձը ինչ-որ բան է արտադրում, որը կանգնում է կոկորդում՝ լցնելով ներքևի ատամնաշարի արմատները: Ատամները ձգվում են դեպի կոկորդը՝ սահելով ներքև՝ փորը: Ծնչափող է լցվում քամին ու հետ է վերադարձնում հևոցներ: Երազը չի դիմանում:

Երբ փոքր էին, Աբգարը բարուրված պառկած էր կարմիր բազմոցին, տատի սարքած կլոր բարձի վրա: Խաննային դրել էին խնամակալ: Տասներկու տարեկան էր: Օրորեց, չէր քնում, հետո կռացավ ու համբուրեց բարուրի թաց բերանը: Միշտ հիշեց:

Ղարաբաղի անտառներում են, դիվերսանտներ են փնտրում դասակով: Աբգարը պատմում է՝ աչքերը պատշգամբից հառած դիմացի տան ընկուզենու մութ կողերին: Ադրբեջանցիները հարձակվել էին ճամփով գնացող Նիվայի վրա, ամուսնուն սպանել էին, կնոջ աչքն էին հանել: Դասակը հրաման ստացավ փնտրել դիվերսանտներին: Քայլում էին գիշերից գիշեր, պլաշ-պալատկեքով քնում էին հորդառատ անձրևի տակ: Օժանդակող ուժեր չկային, հաց բերող չկար: Օձեր էին քերթում, շարում հրացանի սվին դանակին, խորովում: Մամուռով ջուր էին քամում, խմում: Աբգարը դիպուկահար է, ու Խաննան դիտանցքի մեջ տեսնում է նրա անհանգիստ շարժվող աչքը, որի մեջ մթից խոշորացած բիբն է՝ կաղինի չափ: Հիմա, երբ պատմում է, աչքերն էլի չռված են, ընդհանրապես նրա աչքերի բացվածքը մեծ է, ակնագնդերը տեղադրված են իրենցից մեծ ակնակապիճների մեջ, որոնց երկու եզրերին մանրամասն երևում են մանր մազանոթները: Այդ աչքով նայել է նրան, ում թշնամի է համարել: Ղարաբաղի անտառներում, ինչ-որ բլուրների գագաթին, որոնց անունները հա տալիս է: Ինչո՞ւ է այս պատմությունը այդքան դուր գալիս Խաննային, նրան, ով ատում է պատերազմները: Եվ տեսել է նրա լուսանկարը քողարկող համազգեստի մեջ, որով ձուլվել են ծառերին, թփերին: Աբգարը պատմում է, որ իրենք էլ սարքում էին համազգեստը՝ հնացած

պինվորական շորերից: Կապ է տվել համակարգող կենտրոնին, որ տեսնում են դիվերսանտներին, որ էսինչ ձորակում են: Պատմում է ու սիգարետի մնացուկը երկրորդ հարկից երկու մատով շպրտում է տան պարսպից այնկողմ, դեպի հողե ճանապարհը: Նրա մարմինն աճում է գիշերվա մեջ՝ նրա պատմած պատմության ընթացքին: Խաննան նրա մարմինը տեղադրում է էսինչ ձորակում, էսինչ բլրի լանջին, տեսնում է նրան անձրևի տակ, տեսնում է նրա վախն ու համարձակությունը, տեսնում է մատը ձգանին, քթից չռռացող անձրևի միջից կամաց դուրս է գալիս շունչը, թուքն անգամ կուլ չի տալիս, որ հրացանը թիրախից չգցի, լսում է կրծքի վարկը, որի տակ մի ամբողջ սիրտ է խփում: Ինչ էլ սրա տակ դնես, գեղեցիկ կթվա, անգամ սպանելը: Խաննան չի սարսափում իր մտքից: Նայում է նրա սպորտային սպիտակ բաճկոնին, որի տակից ոչինչ չի հագել: Համեմատում է պատերազմներն ու մերկ իրանը, որի մեջ հեշտորեն մխրճվում է վենքից դուրս պրծած փամփուշտը: Տեսնում է այդ իրանը արյան մեջ ճապաղված: Տեսնում է ինքն իրեն գժված: Տեսնում է ելքի բացակայությունը: Նա անընդհատ մարմինները կապում է մահվանը: Ինչ-որ ձեռքեր ու թևեր:

Տանձուտում են: Մութ է: Եկան մեքենայով, հետո հուշիկ քայլերով: Մտան իրար քայլերի մեջ, իրար քայլերը կոխեցին: Կանգնեցին գիշերվա երկնքի դեմ, նայեցին՝ ծառերը, դեռ ամառվա վերջը չէր, բայց արդեն: Բները կանգնած էին ավելի մութ: Հյուղակը՝ խավարի աչքի մեջ: Բարձր խլրտում էին ծղրիդները: Երկնքում լուսինը՝ ինչպես լուսին: Տանձի տերևը փայլում էր լույսի տակ: Ճյուղերը տերևների մեջ քամի էին բռնում: Մի ամբողջ ցանկապատ բարդիներ՝ բարձր ու ծանր: Մի դաշտ այնկողմ դիմացի գյուղն էր: Անվարժ ցանկապատ էր քաշված՝ ոստերից ու լարերից: Խճավոր փողոցից բաժանում էր մացառների աղեղը: Խոտը ծծել էր թացությունը, պառկած էր խուլ: Ոտքերի տակ գետնի սավանն էր: Չէին դադարում շնչել, մեկը՝ ավելի բարձր:

Մար
Մարգարյան

Ծնվել եմ 1989 թվականի հունիսի 17-ին Արտաշատի շրջանի գյուղ Մխչյանում:1995-ից հաճախել եմ տեղի միջնակարգ դպրոցը, 1996-ին ընդունվել եմ տեղի երաժշտական դպրոցի ժող. գործիքների քանոնի բաժին: 2003-2007-ին սովորել եմ Երևանի Նաղաշ Հովնաթանի անվան արվեստի ակադեմիական ուսումնարանում ժող.գործիքների քանոնի բաժնում, իսկ 2007-2011-ին ուսումս շարունակել եմ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի նույն բաժնում: 2009-ից աշխատում եմ Հանրային Ռադիոյի և Հեռուստատեսության Արամ Մերանգուլյանի անվան ժող.գործիքների անսամբլում, որպես քանոնահար, մի շարք հանրապետական մրցույթների դափնեկիր եմ: 2016-ին բանաստեղծություններս հրապարակվել են Հասմիկ Սիմոնյանի բլոգում,իսկ 2017-ին Գրեթերթ ամսաթերթում:

* * *

դու կին ես

գունավոր ապակի

ներսից դուրս նայող

եղունգով խապած ապակի

շուրթի ճաքը լիզող

ինքն իրեն ապաքինող

հաստ կրծկալի տակից

պտուկով աշխարհին նայող
կոպերի պես փխրուն ու անհարթ
թարթչի տատանումներով
տառապանքը ներս հրող
ճերմակ աղբակույտում

շարունակ ինքն իրեն սուսող
չհասկացված
չգիտակցված
իրական կին
ցաքուցրիվ մազերն
արմատից սանրող
ինքն իրեն գունավորող
դրսից ներս չնայվող
կին-հայելի
ներսից դուրս նայող
անարյուն
աներակ
անկիրք
անտարբեր
սառը
ապակյա կին
թողած մատնահետքերը լվացող
մերկանալու չափ գայթակղիչ
գեղեցիկ հագուստով հմայող
ուրիշներով իրեն տրվող
կին-հայելի
ներսից դուրս նայող
դեպի ներս խորացող
դեպի դուրս խորացող
գունավոր ապակի(ն)

* * *

մեռած իմ ընկեր
արյունոտ մարմինդ
սպասումիս մեջ տեղավորեցի
որ դատարկ չմնամ
մաշկս կուլ է տալիս օտար ստվերներ
շուրթերս անասելիք են
անկցա ոչինչ
համբուրիր ինձ այս մեռնող գիշերվա մեջ
որ արյանս հոսքը լսելի լինի մակարդվելիս
քո ամենամոտ ու կողքին
ամենասպասմանս մեջ
ամենավերջին պահին
ընկնում եմ ամեն կողմից
ամեն հայացք վայրէջք է ու կրկնակի մահ
երանի փշրվեի ձեռքերիդ մեջ
ու ավարտվեի
ինչպես ամենասովորական ապակի-աղջիկ
դու խոսում էիր հերոսների լեզվով
երբ ես կախաղան էի բարձրանում
դու երգում էիր
երբ ես հնչյուն էի դատարկվում
դու ալիք-ալիք մեռնում էիր
որ ինչ-որ մի բան շարունակի ապրել
ինչ-որ շատ կարևոր մի բան
շատ կարևոր

* * *

● անխնա կտցահարեք, ճանկռեք, քերծեք ինձ թռչուններ,
● ես ծառ եմ ու համբերություն չունեմ,
● կտրեք ինձ, պոկեք, պատառ-պատառ արեք,
● վառեք, փչեք, ինձ դե՛ն նետեք, մարդի՛կ,
● ես ծառ եմ ու համբերություն չունեմ,
● փոխեք տեղս, փոխեք արմատներս, փոխեք գույնս, փոխեք ձևս,
● փոխեք տունս, փոխեք փողոցս, փոխեք երկիրս, փոխեք մոլորակս,
● փոխի՛ր ինքդ քեզ, սպանի՛ր ինքդ քեզ,
● դու ծառ ես, դու քրջոտ ծառ ես,
● անհամբեր ու քրջոտ ծառ ես, ծա՛ռ:

* * *

● ամեն ինչ.
● դանակի շեղբը կծկված մատների արանքում,
● ուռած, կարմրած ու տրաքած աչքերը,
● պատուհանի դիմացի սիրուն, կանացի ցցերը,
● մինչև պորտ հոսող ու դեռ էլի հոսող ու չընդհատվող արցունքը,
● դինոզավրի գրոտեսկային նկարը խարխուլ պատին,
● գրքի ժանգոտած ու բորբոսնած կազմի ներսում
● ճմռթված ու կուչ եկած էջերը,
● միջնամատի կոտրված եղունգը բթամատով սրությունը որոշելիս,
● անտեղի ու անիմաստ մտքերը,
● և այն, որ չգիտեմ, թե էս բանաստեղծությունը ինչու սկսեցի գրել,
● ու ամենամենասարսափելին այն, որ չգիտեմ, թե ոնց եմ ավարտելու,
● իսկ դրանից ավելի սարսափելի, որ էս ամենը ավարտ չունի,
● դրա համար էլ գնացեք կուգարան, որ տակներդ չանեք հանկարծ,
● էս մեկն անավարտներից ա:

* * *

բութ, բութ, բութ երեխա
ցավի տոպրակ սրտով,
կրծոտիր թռչնիդ խաշած միսը,
ծծիր ոսկորները,

հաճույքից լիկիր շուրթերդ,

մատներիդ թմբիկները,

գուրգուրիր ինքդ քեզ,

քո սերը հեռացավ քեզնից,

հեռացավ քեզնից...

հիմա լիքը ջուր կա հոգումդ,

դատարկելն ա դժվար,

սատկա՛ծ ձուկ,

հիմար երեխա,

հիմար, հիմար, հիմար,

դույլերդ բավական չեն, բավական չեն,

միկիր որտեղ պատահի՝

տանը, ծառի տակ, ասֆալտին,

քո սերը հեռացավ քեզնից,

հեռացավ քեզնից...

* * *

Երբ գնաս

աշխարհի չափ լոլիկի հյութ կխմեմ,

կխմեմ էնքան, մինչև փորս տրաքի,

հեռուստացույցով լսեցի էսօր,

որ սրտին օգտակար ա...

գնո՞ւմ ես,

գուցե հե՞տ դառնաս,

օգնիր ինձ դատարկեմ ներսինս, վատ եմ...

մերսի, արդեն կարող ես գնալ:

* * *

Լուս

քո գնալուց հետո

շարունակում եմ մահանալ

երբ գաս տերևներ բեր հետդ

որ հողի տակ ծիլեր չտամ հանկարծ

Ճեսի
Առլէն

Ծնած եմ Պեւըրլի, Մասսաչուսէթս, մեծցած՝ Սան Լուիս Օպիսփօ, Կալիֆորնիա: Ներկայիս կ՚ապրիմ Լոս Անճելըս, ուր UCLA-ի Մերձաւոր Արեւելեան լեզուներու եւ մշակոյթներու բաժանմունքին մէջ Ph.D կը կատարեմ՝ կեդրոնանալով միջնադարեան շրջանի վրայ, միաժամանակ արեւմտահայերէնի դասեր տալով կիրակնօրեայ դպրոցի մը մէջ:

Հետք

Երբ կ՚ըսեմ *ես*, ամբողջ մարդ մը մի՛ երեւակայեր. ամբողջ եղած եմ, բայց չեմ այլեւս. եղեր եմ այն մարդը, որ անընդհատ նուազ ամբողջ կը դառնայ:
Լուսանկարի մէջ հին *ես*ս տեսայ, հագուստներ կը հագուէր որ չունիմ այլեւս, մազ ունէր որ այլեւս մազս չէ, միտքեր՝ որոնք այլեւս չեմ կրնար մտածել. կը փորձէր թաքնուիլ չնկարուելու համար, իբր թէ իր ինքնութենէն քիչ մը պիտի կորսնցնէր այն պահուն. սակայն լուսանկարուեցաւ կարծես որպէսզի այսօր կարենամ աւելի իրական *ես* մը տեսնել. քիչ մը հիւանդ կը թուէր հոգեպէս, քիչ մը տխուր, սակայն առնուազն առաքինի կեանքով կ՚ապրէր. նկարուելու այդ վախը չունիմ այլեւս. ընդհակառակը՝ որքա՜ն ուրախ կ՚ըլլամ կենալով լուսանկարչական մեքենային դիմաց, ըսես ինքնութիւնս կորսնցնելէն հաճոյք առնեմ.

դժուար է յիշել՝ ե՛րբ ամբողջ էի. վստահաբար անցեալին աւելի ամբողջ էի այն օրերուն երբ գործս եւ Սան Լուիս Օպիսփօ՝ մեծցած քաղաքս ձգելով անապատ տեղափոխուեցայ գրելու համար. ամբողջ պէտք է ըլլայ մէկը՝ ատանկ բան մը ընելու. կարծեցի որ պիտի փրկուէի գրելով. որքա՜ն կը գրէի, որքա՜ն լուրջ կը նստէի գրական գործիս վրայ ամբողջ օրուայ ընթացքին. ներկայիս չեմ կրնար անշարժ նստիլ երկու նախադասութիւն գրելու համար առանց Ֆէյսպուքս բանալու, բայց այն ատեն գրած էջերովս ամբողջ այդ

սենեակս կը լեցուէր, այնչափ որ քալելու տեղ չէր մնար այլեւս. իրականութեան մէջ շատ պզտիկ սենեակ մըն էր, հազիւ տեղ կար քալելու.

աստղերու համար կը գրէի, եւ կ'երեւակայէի թէ առաջին անգամն էր որ բառերու այդպիսի շարք մը քով քովի եկած է թուղթի վրայ. գիշերները, երբ այնքան յոգնած էի որ անկարող կ'ըլլայի գրելու, դուրս կ'ելլայի եւ աստղերուն կ'ըսէի՝ *սպասեցէ՛ք, սպասեցէ՛ք, ի՛նչ կը պատրաստեմ ձեզի համար*, եւ կը թուէր որ քիչ մը աւելի պայծառ կը փայլէին. կ'երեւակայէի թէ ինչպէս քննադատները պիտի ապշէին գրածս առաջին անգամ կարդալով՝ *այսքան կարեւոր գրող մը չենք տեսած մեր դարուն, ահաւասիկ իր սերունդի փառքը, ահաւասիկ նոր Ճէյմս Ճոյս մը*. Յակոբ Օշականին տեղը Ճոյս կ'երեւակայէի, որովհետեւ այն ատեն կը գրէի անգլերէնով՝ այն լեզուն որ դաւաճանեց ինծի, թէեւ հիմա աւելի յաճախ կը զգամ թէ ես եմ անոր դաւաճանողը.

չեմ վզջար որ այլեւս անկարող եմ անգլերէն գրելու, ոչ միայն որովհետեւ վերջացուցած ամէն պատմուածքս կը սկսէի ատել եւ ամենամեծ գիրքերս չէի վերջացուցած, կամ նոյնիսկ սկսած ալ չէի. շատ ընթերցողներու կարիք երբեք չեմ ունեցած կամ ալ ուզած. չեմ փորձած աշխարհը փոխել գրածովս. ամբոխին համար չեմ գրած. միշտ ինքզինքիս համար գրած եմ, նոյն ատեն յուսալով անշուշտ, որ սիրած մարդ մը, աւելի շիտակը՝ աղջիկ մը կարդայ եւ սիրահարի ինծի.

թէեւ աստղերու համար չեմ գրեր այլեւս, եւ առանց կասկածի ալ գրելու կարող չեմ, սակայն աւելի ազատ կը գրեմ, հոգ չընելով բառերու շարադասութեան համար, մանաւանդ որ հայերէն կը գործածեմ, գիտնալով թէ մէկը գրածս պիտի չկարդայ. սակայն հայերէնով գրելս ուրիշ խնդիր մը ստեղծած է՝ ինչպէ՞ս գրեմ վտանգուած լեզուով մը թուային աշխարհին մէջ.

տպագրային ֆի՞լմ մը, որպէսզի ընթերցողը չանդրադառնայ որ կը կարդայ.

փորձառական բանաստեղծութի՞ւն, որպէսզի լեզուն վերջնականապէս ինքն իր դիակին վերածուի.

ծլիկի եւ առնանդամի արկածախնդրութիւննե՞րը, որպէսզի խօսողներու վերջին սերունդը խայտառակուի իր վերջին շունչը փչելէն առաջ.

նոր ձեւերո՞վ ու շինծու բառերո՞վ, որպէսզի հինը եւ դասականը արհամարհուի.

կամ ալ,

այլ:

Հին *ես*ս յիշելը միշտ կը տխրեցնէ զիս. եռանդով ու խանդավառութեամբ չեմ գրեր այլեւս, չեմ ալ ապրիր. Քորնիշի մէջ թաքնուած մարդը միտքս կու գայ եւ իբր թէ գրածիս մասին ըլլայ իր խօսքը՝ *բառերուն միջեւ հուր չկայ*.

անոր համար է կարծես որ ամբողջ չեմ զգար այլեւս. թափանցիկ եղեր եմ, թէեւ անթափանց կը զգամ. իմ եւ իմ միջեւ միջոց մը կայ, թանձր բարձր պատ մը, որ չեմ կրնար անցնիլ. տարօրինակը այն է որ մեծ մասամբ ապրած օրերս կամ ըսենք ամենայիշարժան օրերս անցուցած եմ սենեակիս չորս պատերէն ներս այս ներքին պատը քանդել փորձելով. քանի՜ ժամ, քանի՜ տարի անցուցած եմ ներաշխարհս խուզարկելով, կամ ըսեմ՝ խուզարկել փորձելով, քանի որ երբեք չեմ յաջողած.

բնաւ չէի մտածեր արտաքին աշխարհի մասին միեւնոյն ատեն երբ բոլոր ընկերներս անդադար կը ճամբորդէին. մերթ ընդ մերթ Ֆէյսպուքս պիտի բանայի տեսնելու Փարիզ, Լոնտոն, Հռոմ՝ ինչ կտաւներ տեսած էին, ինչ շէնքեր, տեղեր, թանգարաններ, ինչեր կերած էին, որքան սուրճ խմած էին քանի սրճարաններու մէջ, որքան սիկարէթ ծխած էին իսկական փարիզցիներու հետ. յետոյ Փարիզը չափազանց հասարակ դարձաւ, այնպէս որ աւելի տարաշխարհիկ տեղեր փնտռեցին. այս տարբեր տեղերուն նկարներն ալ դրին մանրամասն նկարագրութիւններով, իսկ ես պիտի չկեդրոնանայի տեսածներուս վրայ եւ վերջապէս նոյնիսկ տեղերու անունները յաջողեցայ մոռնալ. այնքան լուրջ էի, այնքան տարուած ինքնակերտ աշխատանքովս, կեդրոնացած ներաշխարհիս մէջ ճամբորդութեան վրայ, որ հոգս չէր թէ սենեակէս չէի ելած. ճամբորդութիւնը ներսս էր, այցելելի վայրերը, ընդարձակ միջոցները, չփնտռուած երկիրները իմ կամ գիրքերու մէջ էին. յետոյ ես ալ ճամբորդեցի, ես ալ Փարիզ, Լոնտոն, Հռոմ այցելեցի, սիրեցի, ապշեցայ, Ֆէյսպուքիս վրայ նկարներս դրի. որոշեցի որ մէջս պարապ էր, եւ այլեւս հոգս չէր թէ ինչ կար հոն.

բայց վերջերս կարօտցած եմ սենեակիս այդ պատերը, այդ բոյնը որուն մէջ ամէն ինչ, որ արտաքին էր, կրնայի լքել. հիմա երբ նորէն կը փորձեմ սենեակս նստիլ ներսս մտնելու համար, արտաքին բաները այլեւս մնայուն հետս են, եւ չեմ կրնար զանոնք թողուլ. կարօտցած եմ այդ չգիտնալս՝ արտաքին աշխարհը չգիտնալս, որ թոյլ կու տար ներաշխարհ մտնել, եւ այն կեանքը որ ապրեր էի, ստեղծեր էի այդ պատերէն ներս. արդիական ձեւով ճգնաւորի կեանք մը փորձեր էի ապրիլ.

վերը բերնէս փախցուցի որ *անապատ* տեղափոխուեցայ, որ ճիշդ չէ՝ հին ճգնաւորներու կեանքի մասին մտածելով ըսի այդպէս. իրականութեան մէջ անտա՛ռ էր, կամ աւելի ճիշդ՝ Աբթոս անունով գիւղը Սանթա Քրուզ Ռէտվուտ անտառին մէջ, ուր հսկայական ծառերով շրջապատուած պզտիկ սենեակ մը վարձեցի.

ապրանքներս բաւական քիչ էին՝ թէյ, հաց, աղ, քանի մը տետրակ, սրբապատկերներ, խունկ, եւ անկողնի տեղը՝ վերմակներ գետնին վրայ, եւ բաւական շատ գիրք, աղօթագրքեր անշուշտ, բայց մեծ մասամբ գեղարուեստական գիրքեր, նաեւ համակարգիչս որով կը գրէի. եւ հոս է, ուր կեանքիս երկու պատմութիւնները իրարու կ'ընդհարին. նախ ըսի որ մինակս կ'ապրէի գրելու համար, յետոյ ըսի որ մինակ էի ճգնաւոր կեանքը ապրելու համար. ճիշտ են երկուքն ալ, նաեւ ճիշտ չեն, քանի որ երբեք չկրցայ որոշել ո՛ր մէկ կեանքը ապրիլ, ո՛ր նպատակը ունենալ՝ կա՛մ մեծ գիրք մը գրել, կա՛մ Աստուած եւ ներքին *ես*ս փնտռել.

ճիշդը ըսած՝ այդ երկուքը այնքան ալ հեռու չեն իրարմէ. անշուշտ կայ գրողի կեանքը, որ հաճոյքներով լեցուն է՝ երկար գիշերներ, որոնց ընթացքին բանաստեղծը ուզածին չափ կը խմէ ու կը ծխէ, սիրականներու հետ կ'ըլլայ՝ կեանք մը որ քնարական բանաստեղծներու կը պատկանի. բայց ես աւելի մեծ կ'ուզէի ըլլալ՝ դիւցազներգութեան կը ձգտէի. եւ ինչպէս Էմէրսոն կ'ըսէ, *քնարերգակ բանաստեղծը կրնայ գինի խմել ու շռայլութեամբ ապրիլ, իսկ դիւցազներգակ բանաստեղծը, այն որ աստուածները եւ դէպի մարդիկ իրենց էջքը պիտի երգէ, պէտք է փայտէ ամանէ մը ջուր խմէ.*

այսինքն ճգնաւոր կեանքը պէտք է ապրի. հակառակ անոր որ կեանքը ապրելու այդ երկու ձեւերը կը նմանին իրարու, արդիւնքները եւ նպատակները լրիւ հակոտնեայ են. մէկը կը փորձէ ամէն ինչ վոհել անտեսանելի աշխարհի համար, իսկ միւսը՝ ինքզինք վոհաբերել արուեստի համար. պարմանալի ըլլալու չէ ուրեմն, թէ ո՛չ մէկուն, ո՛չ միւսին յաջողեցայ հասնիլ. ծոմ կը պահէի, ջուր կը խմէի, մինակս կ՚ապրէի, բայց բոլոր ջանքերս մէկ բան սորվեցուցին՝ ցանկութեան վգացումն էր որ կը փնտռէի. Աստուած չգտայ, ներքին *եսս* չգտայ, կամ ատիկա վիս ձանձրացուց եւ վերջաւորութեան բոլոր ջանքերէն եւ ուրացումներէն ետք անդրադարձայ որ ծոմ պահելը վգայարանները կը գրգռէ այնպէս, որ կարելի ըլլայ ամէն ինչ աւելի վօրաւոր վգալ՝ ուտելիք, հաճոյք, վսեմ բանաստեղծութիւն, փափուկ մարմին. թէեւ այլեւս չեմ փորձեր մեծ բանաստեղծ կամ ճգնաւոր դառնալ, դեռ ծոմ կը պահեմ հաճոյքը վօրաւոր վգալու համար:

Գաղտնիքներ կան, որոնք չեմ կրնար ըսել, հակառակ անոր որ ամբողջ էութեամբս կը փորձեմ վանոնք հաղորդել անուղղակի կերպով, շեղիմաստ բառերով. երկար ժամանակ կը խօսիմ ձախողելով հաղորդել այն, որ մէկ նախադասութեամբ պիտի կարենայի ըսել.

գաղտնիքներ կան, որոնք քեվ կը ձեւեն, կը յօրինեն, կը կերտեն, կը սահմանեն, կը սահմանափակեն, կ՚ավատեն, որոնք քեվ կը ծածկեն, կը յայտնեն, կ՚ուրախացնեն, կը տանջեն.

գաղտնիքներ կան, որոնք կը պահես, կը ծածկես, կը հագուիս, կը հանես, որոնցմով կը հպարտանաս, որոնցմէ կը վախնաս, կը փախչիս, կը յոգնիս, կը պահուըտիս, որոնց կը դիմես, որոնց կը դիմանաս, կը մոռնաս, կը յիշես, կը վգուես, կը սիրես, կ՚ատես, կ՚ուտես, կը մարսես, կ՚ըլլաս:

Կեանքը ներածութիւն է բանի մը որ երբեք պիտի չգայ. որքան շրջաններ ու շարժումներ կ՚անցնին կեանքիդ ընթացքին, ներածութեան մասեր են միայն.

կան մարդիկ, որ պիտի ըսէին թէ այս կեանքը ներածութիւնն է աւելի իրական աշխարհի մը. պէտք է այս առաջին կեանքը ապրիլ սպասելով յաջորդին. ուրիշներ կան, որ պիտի ըսէին թէ այս կեանքը ամէն ինչ է, ասկէ անդին ոչինչ կայ. ո՛չ մէկուն, ո՛չ միւսին համաձայն եմ. կ՚ապրիմ հաւատալով, որ կեանքը ներածութիւն մըն է, հակառակ անոր որ գիտեմ թէ ներածութենէն ետք բան մը պիտի չգայ.

սակայն չեմ հաւատար ասոր առանց կասկածելու. վստահաբար աս ալ մտայնութեան շրջան մըն է, որ պիտի անցնի եւ պիտի յաջորդուի ուրիշով մը. այդուհանդերձ վստահ եմ, որ այս հաւատալիքին վրայ հիմնուած կարեւոր որոշումներ պիտի առնեմ, յետոյ այս հաւատալիքն ալ պիտի ձգեմ ինչպէս միւսները, բայց որոշումները եւ անոնց արդիւնքը պիտի մնան.

կեանքը անանկ է. կրնաս փիլիսոփայութիւնդ փոխել, բայց չես կրնար ետ երթալ այդ փիլիսոփայութենէն ներշնչուած որոշումներդ փոխելու համար. կեանքի բոլոր խորհուրդներէն ամենէն անսպասելին կեանքին բնորոշուիլն է անփոփոխելի որոշումներով, կորոնք պիտի չառնէի այսօր.

մետաղէ շղթայ մըն է կեանքը, որ կ՚երթայ անհուն կարելիութիւններու տարածութեան ընդմէջէն. անոնցմէ բան մը կ՚ընտրուի, շղթան քիչիկ մը աւելի կ՚աճի, նորէն անհուն

կարելիութիւններ կը շարուին դիմացդ եւ պէտք է բան մը ընտրել. նորէն ու նորէն. վերջերս անկարող եմ դադրիլ անցեալին նայելէ եւ մտածելէ թէ ո՞ւր կամ ի՞նչ պիտի ըլլայի եթէ այլապէս ընտրած ըլլայի. անցեալիս կը նայիմ, անոր շղթայի օղակներուն կը հետեւիմ սկիզբէն մինչեւ որ ներկայ *ես*իս հասնիմ, եւ կ'ապշիմ որ այն ընտրութիւններուն արդիւնքն եմ, կորոնք այսօր պիտի չառնէի, այն *ես*երուն արդիւնքն եմ, որոնցմէ ոչ մէկն եմ այլեւս, որոնք նոյնիսկ չեմ ալ ճանչնար.

անցեալին ընտրութիւններուն վերադառնալ կարելի չէ. միայն կան ընտրութիւնները, որոնք այս պահուն իրենք զիրենք կը ներկայացնեն. որոշելիք կայ, եւ կարելի չէ չորոշել. եւ ուզեմ-չուզեմ այդ որոշումներով ինքզինքս պիտի կերտեմ. նոյնիսկ եթէ փորձեմ բոլորովին նոր բան մը ընել կամ նոր *ես* մը ըլլալ, անցեալիս դեռ կապուած պիտի մնամ.

միեւնոյն ատեն որքան ժամանակ կ'անցնի այնքան ինքզինքէս կ'օտարանամ:

Գրելու ատեն միայն յանցանք կը զգամ.

դաւաճանելու յանցանքը՝ Աստուծոյ, ծնողքիս, կնոջս, մայրենի լեզուիս, եղած *ես*ին որ չեմ այլեւս.

երբեմն կը խորհիմ թէ կարելի պիտի ըլլար ըրածներս գրել դրական ձեւով. բայց յանցանքէն դրական զգացումներ չեն գար. եւ ամենէն դժուարը այն է որ յանցանքը կը զգամ առանց կղզալու, այնպէս որ փախուստը կը մնայ անկարելի.

կը մնայ միայն յանցանքը գրել:

Նարեկ Թոփուզյան

Ծնվել է 1980 թվականի մայիսի 19-ին, Երևանում: Ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը, 2003-2005 թթ. ծառայել է ՀՀ պինված ուժերում:

Տպագրվել է «21 պատմվածք», «Երիտասարդ գրողների անթոլոգիա» ժողովածուներում, «Կայարան» տարեգրքում, «Գրանիշ» գրական կայքում և ինտերնետային այլ կայքերում:

2017 թ. լույս է տեսել հեղինակի «Խաբել «Հայռուսգազարդին» պատմվածքների ժողովածուն:

Քարի պես կտկտոցը

Զաքարը՝ Զքոն, մտածում-մտածում ու ասում է, որ խորհրդային այլատյաց քրեական օրենսգրքի ժամանակներում իրեն դավաճան անվանարկած ու դրա համար քոթակված ընկերոջ՝ Սամոյի հետ շատ բաներ է արել: Հետո մտածում է ու վերապահում անում՝ իրականում ինչեր ասես չէ, որովհետև հիմա, որ հետ է նայում, յանի եսիմ ինչեր էլ չեն արել՝ ծով պցերի հետ չեն թաթախվել, Կոմայգու շիմեյլերի հետևից թթու կայֆեր չեն վառել, Սփայս-Սուբոտեքսով ծիածանագույն երազներ չեն կամարել, մարդ չեն սպանել ու իրենց փոխարեն անմեղ մարդուն բերդի ճաղերին հանձնել: Եվ, այնուամենայնիվ, միասին մաթեմի դասաժամից փախել, պուշ-պուշ նույն այդ դասի առաջադրանքն

Բնագիր

են սերտել, իրար հետ Յոթից Ութերորդ Մասիվների տափաստանային միջակայքերում հասցրել են մի ֆուռ մագնիս «ծախել»: Շշի բերանից արաղ են խմել, երբ ստացվել է հասնել սրտներում բույն հյուսած աղջիկներին ու միմյանց աչքերից արտասուքներ են քամել, երբ նրանք պարզվել է՝ աղջիկ չէ, կլոֆելինի դատարկ սրվակ են կամ փրկարարի մուգ կապույտ ֆորմա: Ձեռնարկատիրական գործունեությամբ էլ են զբաղվել, որի խերը ո՛չ Զաքարը, ո՛չ էլ ընկերը չեն տեսել, իրար հետ են դժգոհել երկրից էլ, երկրի մորից էլ, երբ համանման իրավիճակներում վերաբերմունքն իրենց նկատմամբ այլ, ուրիշի նկատմամբ լրիվ այլ է եղել: Այդ ու այլ անարդարությունից կատաղած՝ որոշել են եվրոպական այն երկիրը, ուր սիկտիրները կքաշեն, եթե երկիրը չդվվի, բայց հետո մեղա եկել, թե դվվի-չդվվի, իրենք երկրից գնացողը չեն: Եսիմ ինչ է, եսիմ ինչ չի, բայց ստացվում է՝ որոշ բաներ արել էին, համա բոկի եղածն ի՞նչ է, միասին բոկի չէին գնացել:

Լեյլայի մասին քիչ բան է հայտնի: Անունից դատելով՝ եզդի էր, բայց եզդի չէր, հայ էր, քուրդ էր, չերքեզ, պարզ չէր, համենայնդեպս, եզդի չէր: Բոկության հետ նրա անվան կապակցումից պետք էր կարծել համեստ բոկ-բոկարած է, համա քշած «Լեքսուսի» շքեղությունից դատելով՝ խանում էր: Էդ Լեյլայի ու նրա օբյեկտի մասին տեղեկությունները հայտնի էին ընդհանուր այնպիսի խոսակցություններից, որոնց սկզբնաղբյուրն աշխարհի տակն անցնես, տակից դուրս գաս, միևնույն է՝ չես գտնի՝ անսեռ, անդեմ հայտարարություններից, որոնցից մածունի սպիտակը սևագունում՝ հալչած կուպրի մածուկ է դառնում, կխտարի միսը ճիճվոտում՝ քյաֆթառ կովի լեշ է դառնում, ավտոն թեշտի է վերածվում, թեշտը՝ նավթի տոննանոց բոչկի, պոռնիկը՝ հրեշտակի, հրեշտակը՝ խաղավիկի: Լեյլայի էդ օբյեկտը ծվարած էր շենքերի տաք ծոցում, հանրակրթական ու գեղարվեստական դպրոցներից քիչ հեռու: Հասարակական բարոյականության կուսական ու սնոտի սփաթի առաջ խոյընթաց լեռնացած ու իր ընդոստ վերելքի մեջ քար կտրած-արձանացած կառույց էր օբյեկտը, նրանցից, որոնց դեմ ընդվզում են բնակիչները, նահապետական անհամատեղելիության մասին են խոսում ցեղակրոն արմատականները, տեղացի իսլամիստները, շիիտները, մազդեականներն ու ինքնահռչակ իրավապաշտպանները, բայց լռում են բոլորը, երբ գալիս է դրանց դեմն առնելու ժամանակը: Բանջարաբոստանային կուլտուրաների սովետական խանութների մետաղական տեսքն ուներ Լեյլայի օբյեկտը, որը ձևափոխված, մի քիչ ընդլայնված ու միջնորմներով բաժանված էր գրասենյակների: Այստեղ երկտեղանի մահճակալների վրա տարբեր կատեգորիայի պատվիրակություններ էին ընդունում-ճանապարհում Լեյլայի աղջկերքը: Մի խոսքով, քնձախ մի բոկանոց էր օբյեկտը:

Լեյլայի օբյեկտը փողոցի երթևեկելի մասի նկատմամբ ցածրադիր դիրքում է, այնպես, որ օբյեկտից փողոցը չի երևում, փողոցից՝ օբյեկտը: Զաքարն ու Սամոն Լեյլայի օբյեկտ գնացին երթուղային տաքսիով, որովհետև նրանցից ոչ ոք սեփական մեքենա չուներ: Նրանք, իհարկե, կարող էին այնտեղ գնալ տաքսիով, բայց վարձավճարը, որ պարտադրված պիտի լինեին վճարել տաքսուն, կարող էր էականորեն նվազեցնել աղջիկների համար նախատեսված նրանց ֆինանսական միջոցների քանակությունը: Չի բացառվում, որ անբավարար միջոցների դեպքում Լեյլայի աղջիկներին դոմփելուց հետո դոմփեին հենց նրանց: Չի բացառվում, որ չդոմփեին էլ, բայց հարակից սրճարանի բարմեն աշխատեցնելու եղանակով թրաֆիքինգի ենթարկեին պատմականորեն նրանց հատկացված ժամանակն ապատ տնօրինելու իրավունքը: Նրանք իջան օբյեկտից հեռու,

որ ոչ ոք չնկատի տրանսպորտային միջոցի տեսակը, որը նրանց հասցրեց այնքան ոչ պարտադիր վբաղմունքին, ինչպիսին է շնանալն առանց դրա որակի վրա էապես ազդող հույզերի ու ապրումների: Հեռու իջնելու նպատակը ավտոյով ու ոտքով եկածի նկատմամբ տարբերակված վերաբերմունքի բացառումն էր: Շատ հասկանալի ցանկություն, որովհետև ամեն ինչ կյանքում բխում է հավասար հնարավորություններ ունենալու մարդկային ինքնաբուխ ցանկությունից, հավասարությունից բխում է արդարությունը, արդարությունից՝ ազատությունը, էդ ամբողջից՝ եղբայրությունը, այնպես որ, ինչպես կասեր ազգային գվարդիայի հիմնադրմանը ձոնված ճառում Մաքսիմիլիան Ֆրանսուա Մարի Իսիդոր դը Ռոբեսպիերը՝ Liberté, Égalité, Fraternité, ախպերնե՛ր:

Զաքարն ու Սամոն հպարտ քայլվածքով մոտեցան օբյեկտի շքամուտքին հարակից տարածքին, որը եզերված էր մագլցող թփերով ու թփերի փոխարեն պատերով եզերված լինելու դեպքում կարող էր ծառայել որպես առանձնատան անպետք իրերի պահեստարան: Այդտեղ կարելի էր ամռանը պահել մեքենայի ձմեռային անվադողերը, ձմռանը՝ ամառայինները, պահել իննսունականներից մնացած փայտի ժանգոտ վառարանը, հեղույսներից կիսակախ դռներով հնամյա պգեստապահարանը, քրքրված ծածկով բազմոցը, ճռճռացող հատակով մահճակալն ու հնամաշ կոշիկները: Տխեղծ լուսավորությունը և ինտերիերային ավելորդաբանությունների բացակայությունը Զաքարի գիտակցության մեջ տարածքը նույնացրեց պահեստարանի հետ, մինչդեռ այն սրճարան էր: Տեղավորվելով սեղաններից մեկի շուրջը, նրանք մատուցողուհուն պատվիրեցին «Կոկա-կոլա» բերել շինծու էնպիսի հպարտությամբ, որից կարելի էր բխեցնել, թե կարող են և Բլյու Կյուրասաս» պատվիրել, եթե ցանկանան: Հավանաբար իրենց նման «Կոկա-կոլա» ծծողների մատուցողուհին իր աշխատանքային գործունեության ընթացքում շատ էր հանդիպել, որովհետև ցուցադրական հպարտությունը ազդեցություն չթողեց:

– Իսկ աղջիկներ չե՞ք ցանկանում,– հարցրեց նա հեգնական ձայնով՝ ակնարկելով, որ «Կոկա-կոլա» խմել կարելի է ցանկացած տեղում, իսկ այստեղ՝ ոչ, իսկ եթե նույնիսկ այո, ապա օբյեկտի հիմնական գործառույթների վերաբերյալ որոշակի դիրքորոշում հայտնելուց հետո միայն:

Զաքարը թաց տեղ չպառկող լեզվանի իրավաբան է ու ասում է՝ յանի իրենք առանց էդ քածի արտահայտչական խորդուբորդությունների էլ տեղեկացված էին, որ «Կոկա-կոլա» խմել կարող են ցանկացած տեղ՝ նորմալ սրճարանում, որից անվադողի հոտ չի գալիս, այգում, որի լուսավորությունը տեղում ինքնասպան լինելու մաղձոտ ցանկություն չի ծնում, հենց խանութում՝ սառնարանի մոտ կանգնած վիճակում, մի խոսքով, գիտեին, որ ցանկացած տեղում «Կոկա-կոլա» կլկլացնելու սահմանադրական իրավունք ունեն, ու ասում է իրենց իրազեկվածությունը մատուցողուհու դեմքին շփփացնելով, ուղարկեցին աղջիկների հետևից:

Նույն պոռնիկի վրա ընտրության կանգառը բացառելու նպատակով նրանք շտապեցին մեկը մյուսից առաջ ընկնել ու արդյունքում իրենց ներկայացած աղջիկներից միաժամանակ ընտրեցին մեկին, որովհետև մնացածները դինոզավրից հինգն անց կամ, լավագույն դեպքում՝ հինգ էին պակաս: Այնպես չէր, որ Իռան խաղողի մատղաշ ճյուղ էր. առաքինի ապրելու մոտիվացիան վաղուց կորցրած, կողային մաշկածալերը

կողոսկրերի երբեմնի նավանի կամարների գծերում կոռով պատսպարած, կերակրելուց փթիր ծծերը մի կերպ կրծկալի տակ ուռցրած կին էր նա ու, այդուհանդերձ, ավելի լավը, քան մյուսները: Իռայի ընտրությամբ կաշկանդված՝ Զաքարն ու Սամոն, ակնթարթ անց վերապահում արեցին՝ թե որ չեն խորշում փոխնիփոխ նույն ծխախոտը ծխել, նույն շշից ջուր խմել, ուրեմն ի՞նչ կլինի, եթե նախօրոք համաձայնեցրած հերթականությամբ նույն պցին քունեն:

Իռայի կյանքում իրենցից առաջինը լինելու իրավունքը Զաքարը վիջեց ընկերոջը: Զաքարը 2... տարեկան էր, ու սա առաջին անգամն էր, երբ կնկա համ պիտի տեսներ ու չգիտեր, թե ինչպես են կնոջը համտեսում: Արդեն հասկացել էր, որ եկել է այստեղ ա՛յդ նպատակով ու հասկանում էլ էր, որ երբ ֆիզիոլոգիայի ժանրի օրենքներով ընկերոջը հատկացված ժամանակը սպառվի, իսկ այն ներածական բառուբանով, նախերգական մերկացմամբ, ֆրիկցիոն ակտիվությամբ, տնքոցներով ու հեծեծանքներով քարը տրաքի տնելու է առավելագույնը տասնհինգ-քսան րոպե, գալու է գնալու իր ժամանակը, բայց, միևնույն է, հետաձգում էր այդ պահը, որովհետև Զաքարն Իռայի ծակը խցանելու քաղցրարյուն գործից երկյուղում էր, ինչպես կաթոլիկ միսիոները՝ բորոտից: Զաքարը հոգոց է հանում ու ասում՝ «Լուրջ եմ ասում, ես ինքնուրույն նույնիսկ պրոպկեն չէի կարողանա գինու շիշը կոխել, դրանից էլ վախենում էի, այսինքն՝ դրանից էլ էի վախենում»:

Սամոն վերադարձավ քսան րոպե անց: Գոհ էր: Հասցրել էր երկու անգամ դոմփել, բայց այդ վարկածին Զաքարը մինչև հիմա հավատալ չի կարողանում: Մինչև հիմա նա չի հասկանում, թե ինչպե՛ս կարելի է երկու փոր քունել քսան րոպեում ու հաճույք ստանալ դրանից կամ գոնե երկրորդ անգամից: Զաքարը մինչև հիմա չի հասկանում, թե այդ ինչպե՛ս է հնարավոր երկու անգամը քսան րոպեում: Զաքարի մեջ մի քիչ ասպետական բան կա՝ նա այն սին կարծիքին է, որ կնոջը, նույնիսկ եթե նա պոռնիկ է, պիտի տաս նրա ակնկալիքները, որովհետև տղամարդու գերխնդիրն է տեսնել իրենով գոհացած կնոջը, ու տեսական գիտելիքները Իռային մինչև հոգու խորքը ցնցելու գործին ծառայեցնելու համար Զաքարը փորձեց Սամոյից հստակեցնել «երկուսը՝ քսան րոպեում» մեթոդի տեսական հիմքերը: Սամոն, սակայն, ցրողական մի բան մրթմրթաց, ու եկավ Զաքարի գնալու ժամանակը:

– Ո՞նց ա անունդ, կյա՛նքս,– հարցրեց Իռան, երբ արդեն սենյակում կանգնած էր նրա դիմաց ու շփոթմունքից չէր իմանում որտեղի՛ց սկսել:

– Զաքարիա՛,– ասաց ու գլխին տվեց՝ թո՛ւ, արա՛, Զաքարիաս ո՞րն է, ասա՝ Զքո, էլի:

– Զաքարիա՛ ջան, քանի՞ տարեկան ես,– հարցրեց Իռան

– 2...,– պատասխանեց Զաքարը մի տեսակ ձայնով, որից ակնհայտորեն կգացվեց նրա կաշկանդվածությունը:

– Մի՛ լարվի,– ասաց Իռան՝ շագանակագեղձի մերսում կատարելու համար բժշկական կապույտ ձեռնոցները ձեռքին ճտտացնող բուժքրոջ սառնասրտությամբ ու երկու ձեռքով ձգվելով դեպի ամրակը, քանդեց, նավանքով վար բերեց կրծկալը:

– Լա՞վն են,– տեսնելով Զաքարի անթաքույց կմայլմունքը՝ հարցրեց Իռան:

– Հա՛,– այլևս անկառավար ձեռքը Իռայի կրծքին դնելով թառանչեց Զաքարը, բայց արի անկեղծ, անկեղծանում է նա` խույ թե հա, տարիների բեռը ստորոտից կախ տված, ճմլկոտած, առաձգականությունը կորցրած ու հարպտկային սկավառակի կողքը տեսանելիորեն նշմարվող կնճիռներով ծերուկ ծծեր էին դրանք: Այնքան ծեր, որ սեղմելիս մատը մխրճվում էր դրանց մեջ ու դեմ առնում կրծոսկրի կոշտ ու ցամաք հարթավայրին: «Չէ՛, հաստատ տենց չէին»,– հոգոց է հանում նա:

– Կյա՛նքս, չե՞ս ուզում հանվես,– հարցրեց Իռան` Զաքարի մարմինը բռնած դողէրոցքին ու ատամների կափկափոցին անհաղորդ:

– Իռա՛, մի հարց տամ, ինչի՞ ես դու սրանով զբաղվում,– տվել է հարցը Զաքարն ու հիմա բարձրաձայն վերլուծում է. շատ ապուշ, դեբիլության աստիճանի ապուշ հարց, որով սկսնակը միանգամից մատնում է իրեն, որովհետև, տո՛, քո ի՞նչ գործ` ագառկեն ինչու է իր ագառկությունն անում, դու քո գործն արա, սիկտիրդ քաշի, գնա, թե չէ պոռնիկն ի՞նչ պիտի այդ հարցին պատասխանի, hո չի՞ ասի, թե իր զբաղմունքն իր էության դոկտրինալ դեֆինիցան է, բնական է, պիտի ասի, որ երեխաներ ունի, որոնց կերակրել է պետք, որ ճար չունի, ստիպված է, հացի խնդիր է լուծում:

– Կյա՛նք, մեկը պիտի՞ երեխեքիս պահի,– կարճ կապեց Իռան ու Զաքարի ամորձիներն արագ առավ ձեռքը: Չի բացառվում, որ այդ հապճեպությունը կարող էր նպատակ հետապնդել ժամանակ շահել այլ հաճախորդների համար, չնայած այնտեղ` դրսում, չկային Իռկայի բորբ ծոցոնը մտնելու համար դռները ջարդող մարդիկ: Չի բացառվում նաև, որ Իռան էրեկտիլ մղձավանջներում հեծեծացող շատ հաճախորդների հաջաթ-ների վրա էր մաշացրել մատների ունիկալ դակտոնախշերը, մինչև կարողացել էր դրանք պատշաճ ապրանքային տեսքի բերել ու, նկատի ունենալով հնարավոր այդ խնդիրը, շտապում էր գնահատել գլխի գալիքը: Եթե այդպես էր, ապա Զաքարի առումով Իռան անհանգստանալու բան չուներ, միայն մտքից, որ մինչ այդ սեփականից բացի այլ ձեռքում հայտնվելու բախտավորություն չունեցած իր խեռն այժմ ուրիշ ձեռքերում է, միայն դրանից Զաքարը տնկել էր տղությունը: Իսկ այդտեղ միայն դա չէր` Իռայի ափերի ջերմությունը, դրանց վերուվարումն ու տարուբերումը: Ա՜խ: Շա՜տ արագ Իռայի բոլորապտույտ ափը նեղ եկավ Զաքարի համար: Նեղ ճեղքը, առայժմ միայն ձեռքի, ընդլայնվեց ու խոշորացավ, խոշորացավ այնքան արագ, որ Իռան` կյանքում հազար կլիր տեսած տրամվայի դիսպետչեր, բացականչեց.

– Է՜հ, ա՛յ թե ինչ ասել ա ջահել օրգանիզմ, է՜, հը՞, կյա՛նք, կա՛յֆ ա:

– Հա՜, կյա՜նքս,– տնքաց Զաքարը:

– Կյա՛նք, դու կարո՞ղ ա ախպար ես,– հանկարծ հարցրեց Իռան, ու Զաքարը գիտակցությունը բռնած աղջամուղջի խորքերից կենտրոնացավ երկու բանի վրա. մեկ` ինչի՞ն էր Իռային պետք իմանալ իր անունը, եթե նա, միևնույն է, պիտի իրեն «կյանք» բառով դիմեր, ու երկրորդ` ախպարն ի՞նչ կապ ունի տեղի ունեցողի հետ:

– Ինչի՞,– հարցրեց նա հետաքրքրված:

– Դե՜, որովհետև բառերի վանկերը վերջում երկարացնում ես,– ծիծաղեց նա:

– Հա՛, ախպար եմ,– պատասխանեց Զաքարը մի քիչ հպարտությամբ:

– Կյանք, կարո՞ղ ա ինձ մի քիչ փող տաս,– գանդոնի գալարները հարթեցնելուց, դրա եւրային ռեզերվուարից քաշքշել, հարմարեցնելուց հետո թախանձագին հարցրեց Իռան և ցուցամատի ու բթամատի շրջանակով ծերից մինչև արմատը իրելով դուրս բերեց դրա տակը սպրդած օդը:

Ուրեմն, անժխտելի իրողություն է, որ Զքոն բոլշևիկների կուտը կերած՝ վաղնջական Աթենքի տները, պիտա հացով ֆետա պանիրը Ստեփանավանի գեղերից մեկի գետնափոր հյուղակով ու ցեխի պես վռիկ սև հացով փոխած միամիտ ախպարների ժառանգ է, բայց նա նոր չէ, այ-հա՜յ, 47 թվին գաղթած, բոլշևիկների կտերի բովով անցած ախպարների ժառանգ է, ու էդ իրավիճակում Զքոյին քյլելն անհնար էր, որովհետև նա վեց հազար դրամը սենյակի, հինգ հազարն աղջկա համար համամասնությամբ կատարել էր վճարումն ու չուներ ոչ մի լրացուցիչ պարտավորություն:

– Իռա՛ ջան, բայց մենք օբյեկտին փողն արդեն տվել ենք,– միամիտ ձևանալով պատասխանեց Զաքարը, ու որպեսզի ասածը հիմնավոր լինի, հնչեցրեց համամասնությունը,– վեց հազար՝ սենյակի համար, հինգ հազար՝ քո հետ լինելու:

Երևի անտակտություն էր Իռայի դեմքին շփացնել նրա իրական գինը: Պոռնիկ էր, թե ոչ՝ դա կարող էր նրան վիրավորել, բայց Իռային ակնդետ նայող Զքոն հասկացավ՝ բացահայտումն Իռայի վրա ոչ մի ազդեցություն չէր թողել: Իռան գիտեր իր գինը:

Հետույքի տակ բարձ դրած ու երկտեղանի մահճակալի վրա ոտքերը կիսաբաց պառկած Իռան փոթորկվեց միանգամից, հենց Զքոն մտավ նրա մեջ: Զքոն առանձնացնում է նրա այս կտրուկ վերափոխումը, ասում է՝ Իռան այնպես էր տնքում, վերուվարումների հետ այնպես անկեղծ էր հեծծում, որ իրեն թվացել էր, թե Իռան մի քանի վայրկյան առաջվա Իռան չի, իսկ ինքն էլ այնպիսի մի կատարյալ մաչո է, որից նա իր չարքաշ կյանքում չի ունեցել: Զքոն միայն հետո իմացավ, որ դա նրա աշխատանքի բաղկացուցիչ մասն է՝ ֆիզիոլոգիական ազդակների ցնծությունը սաստկացնել հոգեբանականներով՝ պագշոտ ախերով ու աղաղակներով, բայց մինչ կիմանար, Իռան նրա ցանկությամբ հետույքով ծունր եկավ դեպի իրեն, ու Զքոն պարզապես ընդհուպ մոտեցավ նրան: Մնացածը նա ինքն արեց, որովհետև Զքոյի տեսական գիտելիքները, հայտնի է, բավարար չէին հասարակ մի ծակ պռոպկելու համար: Ձեռքերով լխտիկ ծծերը գրկած, մի փոքր հետ ու առաջ անելուց հետո նա կգաց սերմի խոլական խտղտոցն ամորձապարկում, այնինչ սեքսի մեկնարկից հազիվ երեքուկես րոպե էր անցել: Զքոն մտածեց հանգստի կարճ դադար տալ, բայց տհաճ էր խոստովանել, որ իր ողջ կորությունը բավել էր երեք րոպե միայն, ու Զքոն խրեց, խրեց մինչև վերջ, մինչև քոքը, մինչև Իռայի արգանդափողն ու մինչ մարմնի հեշտագին ջղաձգությամբ, գլուխն արտիստիկ կերպով հետ շպրտած հանգուցալուծվում էր, Իռան բացականչեց.

– Մաաա՜րրրը, ո՜նց եմ սիրում քարի պես էս կտկտոցը:

Անմիջապես այն բանից հետո, երբ լատեքսային արգելապատնեշով միջնորդավորված սերմնահեղուկը քարի պես բախել էր Իռայի հեշտոցապատերը, նա վերագտել էր հոգեկան հավասարակշռությունը: Կարգն Իռան այնպես մանրակրկիտ էր մշակել, որ մի վայրկյան չկորցրեց, անվրդով ցատկեց մահճակալից, բռնեց կախ ընկած գանդոնի պռնկեպռունկ լի ռեզերվուարն ու ձգեց այն դեպի իրեն: Իռան, հիմքից մզելով, դուրս բերեց Զքոյի միզասեռական համակարգի բավիղներում կորած-մոլորված վերջին

կաթիլ սերմնահեղուկը, հանեց այն, ապա թիթեռնիկի պես վավեց դեպի կուգարանը՝ նետելու այն կուգարանակոնքի մեջ: Մինչ կլռեր կուգարանակոնքի գահավիժող ջրի շաչյունը, Զքոն արդեն սկսել էր մտածել երկրորդ անգամի մասին, բայց դրա համար գոնե կես ժամ պետք կլիներ, որն անհրաժեշտ էր սպառել:

– Ի՞ռ ջան,– ձեռնամուխ եղավ նա ժամանակի սպառմանը,– որ պետք լինի՝ կանգով կարա՞ս դուրս գաս, ստեղ մի տեսակ էն չի, մի տեսակ ճնշող ա,– ասաց ու կողք նայեց: Իրականում լավ էլ սենյակ էր, համենայնդեպս, իր տեսածներից վատը չէր:

– Չէ՛, կյա՛նք, ես օբյեկտից դուրս գործ չեմ անում,– պատասխանեց Իռան ու շարունակեց,– սրանով օբյեկտից դուրս մի մարդու հետ եմ զբաղվում՝ ընկերոջս հետ:

Երբ պուտանկեն ընկեր է ասում, նկատի ունի իր յոբըռին, պարզապես նա այդպես մեղմ է ասում, որ գոնե ինքն իր աչքից չընկնի: Ինքնահարգանքի այդ մնացորդը պահպանելու համառությունն ուղղակի զարմանալի էր, առավել զարմանալի էր, սակայն մեկ այլ բան՝ այսպիսի գործի մեջ, այսքանից հետո Իռան փաստորեն դեռ մի հատ էլ իր հաճույքի համար կոխվելու հավես ուներ:

– Իռա՛, էսքանից հետո դու հլը հավես ես ունենում սրանով զբաղվե՞լ:

– Հա, կյա՛նք, էս գործ ա, ես սրանից հաճույք չեմ ստանում:

Նրա այս պատասխանից հետո դիլխոր մի լռություն տիրեց, որը խախտեց Իռան:

– Հը՛, չգնա՞նք,– հարցրեց նա:

– Ի՛ռ, մի հատ էլ չանե՞նք,– աղերսագին հարցրեց Զքոն:

– Է՜հ, ախր, ի՞նչ պարտադիր է անել դա վրա-վրա, մի քանի անգամ,– ասաց Իռան ու ձեռքն առաջ բերելով սկսեց մաժմժել Զքոյի Շագրենի կաշին, երևում էր, որ նա չէր ցանկանում մերժել, բայցև գործն անում էր առանց հատուկ ոգեշնչման:

– Դե՜հ...– կարմրելով Իռայի ուղղախոսությունից կմկմաց Զքոն:

– Ախր, կյա՛նք ջան, որ մենք կարողանանք էդ նորից անել, քո մոտ պիտի նորից կանգնի, բայց քո մոտ չի կանգնում:

– Դե լավ, Իռա՛, թո՛ղ,– վիրավորանքը ցույց տալով ասաց Զքոն, ապա վրան քաշելով հագուստը, սենյակից ցուցադրաբար դուրս եկավ: Իռան Զքոյին չպահեց, Զքոն օտար մարդ, նրա վիրավորանքը Իռային ի՞նչ, Իռան նրան հետ պահելու, փարվելու, գրկում պարուրել-փաղաքշելու, կոտրված սիրտն առնելու ոչ մի բարոյական պարտավորվածություն չուներ:

Զաքարն ասում է՝ Սամոյի հետ շատ բաներ էին արել, դե, էնտեղ դասից փախչել, սարերում դաս սովորել, ֆուռով մագնիս ծախել, բայց բոպի եղածն ի՞նչ էր, միասին բոպի չէին գնացել: Ասում է՝ էդ օրը գնացին՝ հեչ բան, գնացին գնալու ու հայտարարելու համար՝ թե իրենք՝ հավար տարվա ընկերներ, ամեն ինչ արել են ու նույնիսկ միասին գնացել են բոպի:

Մեղք դնելու չի

Աստված էդ ձեվ համար առաջին ատյանի դատարանի դատավոր չի, ոչ էլ վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների ու մինչևիսկ ոչ էլ Եվրադատարանի: Այդ իսկ պատճառով աստծո կղերական կամ աշխարհիկ վարքագիրներից ոչ մեկին նրա գոյության ավելի քան երկու հազար տարվա ընթացքում հլը չի հաջողվել նկարագրել մի դեպք, որ աստծո դատաստանի առաջ որևէ մեկը հոր մեղքերի համար պատասխան տված լինի, էնպես որ, էդ գյադուն հոր խեղճությունը մեղք դնելու չի: Նրան մեղք դնելու չի, որ հերն իր կյանքում հազիվհազ հաջողել է բանկա-բութուլկեքի հավաքչությունն ու դրանց էժան՝ հատը տասը-քսան դրամանոց հանձնուքը օգտագործված շշերի ընդունման կետերին: Նրան մեղք դնելու էլ չի մերը, որ խոշոր ծծերը ծաղկատար վարդագույն խալաթի տակ փքված փորին է կախ տվել ու տակտ չունի հորն առնի-տանի, գլուխն օտար աչքերից հեռու հողի: Ու եթե նրան մեղք դնելու չեն ո՛չ հերը, ո՛չ մերը, ապա առավել ևս մեղք դնելու չեն պադեզդներում քարշ եկող բոլ քուրն ու բերդերում ռավբոյի համար փտող խառոշի ախպերը:

Նրան մեղք դնելու է նա հենց ինքը. ահա նա ինքը՝ նոսր մազերը ճակատին թելիկ-թելիկ կախ տված, «Ադիդասի» հանրաճանաչ եռաժապավենը տաբատի կողեզերքին կուզահեռած, արևից վառված դարպասի գունատ փայլն աչքերում ամբարած, էդ գյադեն ուրեմն ո՛չ շենք ունի, ո՛չ շնորհք, ո՛չ ֆասադ, ո՛չ ֆունդամենտ: Նրա օրվա զբաղմունքը դեռ իննսունականների սկզբին քուչի սնանկացած բուդկի դիմաց իր նմանների հետ լռվելն է ու «փիահահա՜»՝ սրա-նրա վրա ղժժալը: Նա անում է սա սրբազան երկյուղածությամբ ու նույնպիսի երկյուղածությամբ էլ Երևան-Արմավիր ճանապարհի մերձակա հատվածից քաղած պլանի վրա է բերում պապիրոսի թղթի թքոտած եզրերը: Էս մեկը նա անում է ոչ միայն քննարկվող երկյուղածությամբ, այլև առաջինից որակապես տարբերվող այնպիսի մի երկրորդ երկյուղածությամբ, ինչպիսին է վախը դեպի նարկոյի օպերները, ու այնպիսի պարբերականությամբ, որ նրա դեմքը դրանից դեղնականաչավուն է, ճիշտ ինչպես բուսական կանցվածը, որ նա գլանակում է: Նա նաև շարում է քուչի լակոտ-լուկուտներին ու սրան շեմուշկի, նրան՝ պապիրոսի, մյուսին՝ կարտի կալոդի, սուրհանդակների պես ուղարկում է այս ու այն կողմ և նրանց վրա հյուսում իր կայացման սարդոստայնն այն ժամանակ, երբ ազատ է գրազով բլոտ խաղալուց: Այդպիսի ժամանակ, ճիշտն ասած, նա քիչ է ունենում, որովհետև մեկ բուդկի մերձակայքում թթվելը, մեկ էլ՝ շենքի բեսեդկում բլոտ խաղալը նրա կյանքում կենտրոնական տեղ են զբաղեցնում: Մի արկղ գարեջուր, խաշի մի սեղան, Էջմիածնում օրհնած մի գառ՝ ահա նրա ամենօրյա բլոտների առարկան, որոնք նա երբեմն հաղթում է, իսկ հաճախ՝ պարտվում: Եթե ընդհանրացվելու լինի, Պետոն նրանցից է, որոնց ոչ ոքի մտքով չի անցնի ներս առնել ու սրտի մի անկյունում մի պուճուր տեղ տալ:

Պետոյենց դիմացի շենքի հարևան Շուշիկը, ինչպես իր նման շատ-շատերը՝ պսակի տակ մտնելիս երկար այս ու այն կողմ չի նայել, փեսացուի ով ու ինչ լինելը չի քննարկել: Առել, քննարկումները հետաձգել է ավելի հարմար օրվա կամ, ո՞վ գիտի, գուցե որևէ քննարկում ապագայում առհասարակ չի էլ նախատեսել և անսպասելի մտել է տակը կամ մագլցել

վրան ու ինը ամիս անց կանխատեսելիորեն լույս աշխարհ բերել դստերը: Շուշիկը, ինչպես մնացածը՝ վերցրել երեխուն շարել է, ու երբ երեխեն արդեն «աղու-գղու»՝ սկսել է գգղալ, երբ սկսել է խաշլամի ջրի մեջ թաթախած հացը մոր մատի հետ կուլ տալ, նոր միայն սկսել է քննարկել կողակցի արժանիքները: Ակապիվայետցա՝ մարդը խմում է, մարդը քարշ է գալիս, տարբեր պլանքյաշների հետ հավայի թեմաներ է բռնում, Շուշիկին քշելու փոխարեն դիվան է քշում, ղումար է խաղում, տուն փող չի բերում, ու ակապիվայետցա՝ մարդն էդ ամբողջը չի արել նախկինում և սկսել է անել հիմա: Հազիվ է Շուշիկը սկսել թերուդեմն անել, երբ վրա է հասել հայհոյանքների և բռունցքների տեղատարափն ու նրան, ինչպես իր նման շատերին՝ ակգուտակով աչքն են խոթել իրենց նախկին բոլոր նախագուշացումներն ու մի քիչ գռեհիկ պատվիրել՝ դեռ էն ժամանակ, էն-էն ոտները չռելուց առաջ էր պետք մտածել, պետք էր մտածել ժամանակին, քանի մեջը երեխա-բան չկար, իսկ հիմա ուշ է: Եվ Շուշիկը սսկվել-սեղմել է ատամներն ու, դավայ՝ հանուն երեխի դիմանալու: Մարդու ձեռամբ պատից պատ ծեփվելով ու վայր ընկնելով, պլինդուպի նսեմ բարձրությունից իր չար բախտի վրա կաղկանձելով, մեկ է դիմացել Շուշոս, երկուս է դիմացել, բայց վերջում արդեն ակգուտակի հերն էնտեղ, էրեխի հերն էստեղ՝ անիծել ու չորս տարիների տառապանքներից հետո մարդուն հավսար-կգաստ կուգահեռել է հորից օժիտ առնված տան դռանը, ապա դուրս շպրտել կ չերծյամ սաբաչիմ:

Շուշիկը, բայց էստեղ էլ, ինչպես իր նման շատ-շատերը՝ չի կարողացել կանխագուշակել բոլոր հնարավոր ելքերը. սրբակրոն պայրույթի պահին սկզբից մտածել է՝ հե՞րս որն է, հե՞րն էրեխու ինչին է՝ ո՛չ պանգակ է, ո՛չ պանգուլակ, ու թողել է նրան առանց հոր, բայց հետո, ակներևաբար, իր գործն է արել սեփական անհեր մանկության տեսիլքը, ու Շուշիկն աչքերը չորս է արել նոր հոր փնտրտուքով: Շուշիկը սկզբից մտածել է՝ ո՞րձս որն է, վավաշոտ ձեռքը երկար մինչև շեքամեջը, երևակայությունը՝ անսպառ ու բռնել-թողել է իրեն առանց որձի, բայց հետո, ակներևաբար, իրենց սև գործն են արել մարտյան մրրկածուփ գիշերներին փոթորկող հորմոնները, ու նա էլի հայացքով սավան է փռել երկրագնդի բոլոր չորս կողմերի վրա: Շուշիկին մեղք դնելու չի՝ հիմա մի ապուշություն է, արել է՝ չպիտի մարդուն ներս թողներ՝ թողել է, թողնելուց հետո չպիտի դուրս աներ՝ արել է: էդքանից հետո Շուշիկը տենչացող հայացքը հառել է անհետք գնացած մարդու հետևից, որովհետև էստեղ անհեր էրեխեն, էնտեղ՝ նրա ջահելության թառամող վարդի կոկոնը: Ու մեղք դնելու չի Շուշիկին, որ նա դստեր համար հայր, իր համար՝ ամուսին է փորձել գտնել:

Իսկ որ Շուշիկը փորձել է, պարզ է դարձել փողոցներից Պետոյի անհետանալուց հինգ ամիս անց: Հինգ ամիս հարևանությունը գլուխը պատերին, պատը՝ գլխին՝ թե էս տենաս Պետոն ո՞ւր է կորչում, իսկ վերջում հանկարծ Պետոն հայտնաբերվել է Շուշիկենց շենքով վերուվարելիս: էդ վերուվարելը հաճախակի է եղել, ու առաջին բանը, որ մարդկանց միտն է եկել, նա է, թե Պետոն հաշտվել է պապենական թշնամի ազգականի հետ ու հաճախակի այցելություններով փորձում է ցեխ դարձած արյունը կոնդիցիայի բերել, բայց հետո շենքը մեջտեղից ճեղքել է լուրը՝ Շուշիկը երկրորդ երեխով հինգ ամսական պատճառավոր, պատճառի հետ՝ անհաշտ, մտել է դանակի տակ ու կիսամեռ, մի կերպ

դուրս է եկել դանակի տակից: Պետոյին հարցնում են՝ ասում է՝ իրեն մեղք դնելու չի՝ պատճառն իրենից լինել չէր կարող՝ սեքսոպաթոլոգից թուղթ ունի, որ չէր կարող, Շուշիկին են հարցնում՝ ուսերն է թոթվում՝ ճիշտ է, Պետոն ներս առնելու չէր, սրտի անկյունում տեղ տալու չէր, բայց իրեն մեղք դնելու չի՝ հապա ի՞նչ աներ՝ երեք տարեկան դստերը հեր էր պետք, իրեն՝ մարդ:

Ու այս ամենից հետո վերջը պարզ չի՝ ո՞ւմ պիտի մեղք դրվի՝ Պետոյի՞ն, թե՞ Շուշիկին: Պետոյին՝ չէ, որովհետև սեքսոպաթոլոգից թուղթ ունի, Շուշիկին՝ չէ, որովհետև խելք չունի:



Տիգրան
Ալեքսանյան

ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

վայրկյանն իր կրկնությունն ա գտնում հաջորդ վայրկյանի մեջ

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ի սկզբանէ էր Բանն և Բանն էր առ Աստուած և Աստուած էր Բանն

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ոչինչ գոյություն չունի ու չի կարող ունենալ եթե չլինեն բառերը

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

Բնագիր

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

այս բանս ջուր ա որի մեջ լուծում եմ ամբողջ աշխարհը

ամենը տարրալուծվում ա անվերջանալիորեն կրկնվող այս բանիս մեջ

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ու կրկնվում ա բանս անընդհատ

Ինչպես ծովի ալիքները կրկնվում են ծովափին

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

որ կողմ էլ գնում եմ գլուխս ջարդվում ա պատերին

ընդհանրապես ուր գնալ եթե երկիրը կլոր ա ու

ցանկացած քայլդ քեզ ավելի ա մոտեցնում սկզբնակետիդ

ու եթե պիտի այդքան հեռու գնաս որ հասնես մեկնակետիդ ապա էլ ինչի գնալ

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ոչ մեկնակետ կա ոչ էլ վերջակետ

մենք երբեք էլ մեր տունը չենք գտնի եթե չջարդենք էս պատերը

էս ինչ պատեր են

ողջ աշխարհին անցա բայց էս պատերից անցնել չստացվեց

ուղեղս ա խփում գանգիս պատերին

թե ես եմ գանգս խփում պատերին

մեզ խաբել են տանը դպրոցում

իսկ ճշմարտությունը պետք էր փնտրել հենց ներսում

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ես երբ մեռած էի մորս տանն էի

դուրս արեց տնից հենց սիրտս խփեց

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

չկան տներ որ մի հոգուց ավել տեղավորեն

մարդ ծնված օրվանից անտուն ա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

մեր տունը պատերից էն կողմ ա

մենք թափառում ենք դեռ այս կողմերում

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ու ջղագրգիռ ներվային անհեթեթ

Ու տարերային ցնդած խելագար մենք քարշ ենք գալիս գինետներից գարեջրատուն գարեջրատներից փախնում օղետուն

տուն տուն տուն տունիկ

անտնությունից մերկանում ենք մենք

մտնում իրար մեջ

փակում ենք աչքերն ու ջերմություն փնտրում

թվում ա ըհը գտել ենք տունը

էդ էլ ա պրծնում

ու մենք մրսում ենք ու տուն ենք փնտրում

գտածներս օղետուն գինետուն գարեջրատուն

տուն տուն տուն տունիկ

գերեզմանատուն

տուն իմ հողե տուն

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

հնարավոր կլինի տեսնես էս երկիրը բահերով փորել ու հրթիռներով տեղափոխել ուրիշ մոլորակ

խելագարություն կամ մահ

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

կենդանի գառնուկների կողքին կախված են մորթված գառնուկները

էրեկ լավ գառան խորոված կերանք

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ես հրաժարվում եմ էս բանն հասկանալ

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ոչինչ գոյություն չունի բառերից էն կողմ

ոչ միայն գործիվ այլ նաև բանիվ որովհետև ի սկզբանե էր Բանը ու հետո մնացածը

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

դժվար ա ասել

արդյոք գոյություն ունի աստված կամ լոխնեսյան հրեշը

բայց վստահ կարելի ա ասել որ գոյություն ունի բանը

ու եթե բանին բան չասենք գոյություն կունենա արդյոք բանը

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

պոեզիան պետք ա հասկանալ

կատելով այն գրականությունից

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

պոեզիան պետք ա հասկանալ առանց գրականության

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

պոեզիան պետք չի հասկանալ

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

պոեզիան պետք ա լսել որպես երաժշտություն

ես չեմ հասկանում իրերի իմաստը

այս բանս ջուր ա որի մեջ լուծում եմ ամբողջ աշխարհը

պղտոր պղտոր ջուր

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

ռեպետիտիվ տեխնիկա ռեպետիտիվ տեխնիկա

Էլլա
Կանեգարիան

Մահվան սեռը. ինչո՞ւ է կին լինելը դեռ վտանգավոր

Թող մարմինս հանգստանա մահվան մեջ ընդմիշտ՝ այն զգեստներով,
որոնք ես չեմ կարողացել կրել կյանքի ընթացքում:

«Գլեն կամ Գլենդա», ռեժիսոր՝ Էդ Վուդ

Տղամարդը կնոջ շորեր է հագնում: Սա այլևս այնքան էլ սուր թեմա չէ, հատկապես որ շատ հոլիվուդյան ֆիլմերի, կատակերգությունների միջոցով այն «սողոսկել» է մեծ էկրաններ ու փոքր-ինչ սովորական դարձել լայն հանդիսատեսի համար, անգամ հայաստանյան պայմաններում:

Ֆիլմերում կին հագնվելու ամենատարածված պատճառաբանումներից մեկը հերոսի պարտադրվածությունն է:

1959-ին նկարահանված «Ջազում միայն աղջիկներ են» ֆիլմում Թոնի Քերթիսի և Ջեկ Լեմոնի հերոսները Ջոզեֆինա և Դաֆնա են դառնում՝ ստիպված կանանց հագուստ են հագնում գանգստերներից փախչելու համար: Թեև թեթևորեն նկատվում է այլ խնդիր ևս՝ հերոսներից մեկին սկսում է դուր գալ կին լինելը, բայց դա էլ մատուցվում է

կոմիկականորեն ու չի վիրավորում այն ժամանակվա հանդիսատեսի պատկերացումները:

Մեկ այլ «անվտանգ վզգեստափոխման» օրինակ է 1982-ին նկարահանված Թութսին (ռեժիսոր՝ Սիդնի Փոլլաք), որտեղ Դասթին Հոֆմանի մարմնավորած հերոսը կին էր հագնվում ավելի լավ աշխատանք գտնելու համար:

«Միսսիս Դաութֆայեր»-ում (1993 թ., ռեժիսոր՝ Քրիս Քոլամբուս) Ռոբին Ուիլյամսի մարմնավորած գլխավոր կերպարը կանացի հագուստներ է հագնում իր երեխաներին ավելի մոտ լինելու համար:

Այլ ֆիլմերում էլ սա պուտ «պետքի վրով» արարք է, կոնսպիրացիա, որն օգնում է թաքնվել, անվտանգ հետևել մարդկանց և այլն՝ «Մեծ մամայի տունը» (2000 թ., ռեժիսոր՝ Ռաջա Գոսնել), «Սպիտակամորթ ծտերը» (2004 թ., ռեժիսոր՝ Քինեն Այվորի Վեյանս) և այլն:

Նման ֆիլմերում կանացի կերպարանափոխումն անցնում է հնարավորինս հանգիստ, քանի որ «հարգելի պատճառների» շնորհիվ հանդիսատեսը չի դատապարտում տղամարդու կանացիացումը:

Այլ վերաբերմունքի են արժանանում այն ֆիլմերը, որտեղ հարկադրվածությունը տեղը

Թոնի Քըրթիսը և Ջեկ Լեմոնը «Ջազում միայն աղջիկներ են» ֆիլմում (ամերիկյան անվանումը՝ Some Like It Hot)

վիջում է ցանկությանը, երբ տղամարդը ինքն իր կամքով ուզում է կնոջ շորեր հագնել:

Դրա լավագույն օրինակներից է «աշխարհի ամենավատ ռեժիսոր»[1] Էդ Վուդի 1953-ին նկարահանած «Գլեն կամ Գլենդա» ֆիլմը: Հենց Էդ Վուդի մարմնավորված կերպարը հագնում է իր ընկերուհու շորերը ոչ թե որ ստիպված է, այլ որ ուզում է: Վուդի ֆիլմում կին հագնվելը ներկայացված էր «դաստիարակչական նպատակներով», կնոջ շորերով տղամարդու նկատմամբ հասարակությանը ընտելացնելու համար, ինչի մասին վկայում է ֆիլմի ամենասկզբից հնչող տեքստը, որով կոչ է արվում կուսապ լինել և չդատապարտել «զգեստափոխվող» մարդկանց: Դա հստակ ցույց է տալիս նաև նարատիվի կառուցվածքը, որ հիշեցնում է դաստիարակչական ֆիլմեր:

Եթե այս ֆիլմը փորձում էր ընտելացնել հանրությանը զգեստափոխության մտքին, ապա վերջերս էկրաններ բարձրացած ու աղմուկ հանած «Դանիացի աղջիկ» ֆիլմի նպատակն այլ էր՝ ցույց տալ մարգինալացման խնդիրը՝ որպես կուտ կնոջը վերաբերող պատմական պրոբլեմ:

Այլ կերպ ասած՝ տղամարդիկ մարգինալացվում են, երբ փորձում են կին դառնալ:

Այս թեմային անդրադառնալու համար հարկավոր է նաև ուշադրություն դարձնել Նազիկ Արմենակյանի «Մենակության շտամպը» լուսանկարչական գրքին՝ հրատարակված Երևանում, 2013-ին, որտեղ և՛ լուսանկարներում, և՛ հերոսների խոսքում երևում է, թե

Կադր «Գլեն կամ Գլենդա» ֆիլմից

ինչպես է անձը տարատեսակ ազդեցությունների տակ մարգինալացնում ինքն իրեն ու դարձնում սեփական սեռականությունը դիմակահանդես՝ պայծառ ու փերֆորմատիվ:

Մինչդեռ կանանց համար համեմատաբար անվնաս է անցնում տղամարդկայնացումը: Թեև կա դրա այնպիսի ողբերգական օրինակ, ինչպիսին է Քիմբերլի Պիրսի 1999-ին նկարահանած «Տղերքը չեն լալիս» ֆիլմը, որը տպավորիչ ներկայացնում է ամերիկացի տրանս Բրենդան Թինայի կյանքը:

Այսուհանդերձ սա ընկալվում է իբրև անվնաս սեքսուալ խաղի մի մաս, ինչպես օրինակ «9/5 շաբաթ» ֆիլմում կամ, օրինակ՝ Aerosmith-ի «Crazy» երգի հոլովակում: Կանայք հաճախ են կրում տղամարդկանց պատկանող իրեր, ու հասարակությունը դա ներում է:

Թույլ ատրիբուտիկայով ու պահվածքով տղամարդկայնացումը կարող է դառնալ այցեքարտ դեպի ավելի մեծ հնարավորությունների աշխարհ: Հաճոյախոսություն է կնոջը արված «տղամարդ կին» արտահայտությունը: Եվ հակառակը՝ վիրավորական տղամարդուն ուղղված՝ «կնիկ», «ղկիկ» արտահայտությունները, տղամարդու կանացիացումը անընդունելի է:

Սրա լավ օրինակ է վերջերս առցանց շրջանառվող Վրեժ Իսրայելյանի «Ծիծիկների սիմֆոնիա» պատմվածքը, որտեղ ասվում է. «էգ տղամարդկանց երկիր է, հացի մեջ թրթիռ չկա, ականջիդ մոտ պահիր, երաժշտություն լսո՞ւմ ես, չես լսում: Այ, էս օդին, որ խմում ենք, մեջը շունչ չկա, մեռած է: Օդն էլ է էգ, ծիծիկի թրթիռն ըմբոշխնող տղամարդու պակասից է քանդվելու: էգ տղամարդկանց երկիր է»:

Տղամարդը «կնաֆիկացվելով», անկախ սոցիալական կարգավիճակից, դուրս է գալիս մեծ հնարավորությունների աշխարհից:

«Դժվար է տղամարդու համար, երբ կինն է իրեն նայում: Կանայք սովոր են տղամարդու հայացքին...»:

Այս խոսքը «Դանիացի աղջիկը» ֆիլմի հերոս՝ Այնորի կնոջը՝ Գերդայինն է: Հաշվի առնելով, որ ողջ ֆիլմը ներկայացված է տղամարդու հայացքով (male gaze)[2], սա կարող է համարվել բնորոշիչ ֆրազ: Տղամարդու հայացքը, որով ներկայացված է ֆիլմը, «գիտի՝ ինչպես ֆետիշացնել կնոջը, ինչպես նրա ֆորման դարձնել պոռնոգրաֆիկ»[3]:

Անգամ հերոսների պահվածքն է մատնում, որ նրանք իրենց սեփական անձը դիտարկում են ուրիշի՝ տղամարդ ուրիշի հայացքով: Իզուր չէ, որ Այնորը (դերակատար՝ էդդի Ռեդմեյն) տեսարաններից մեկում մերկապարուհուն նայելով կրկնօրինակում է նրա շարժուձևը, որովհետև մերկապարուհին համարվում է տղամարդու ստեղծած կոնստրուկտ, ով հստակ գիտի, թե ինչպե՛ս է պետք «վաճառել» սեփական սեքսուալությունը:

Թե՛ «Դանիացի աղջիկը» ֆիլմի, թե՛ «Մենակության շտամպը» գրքի հերոսներն այնքան են ընտելացել տղամարդկային պատկերացմանը, օբյեկտիվիկացիային, որ իրենք էլ իրենց իբրև օբյեկտ են դիտարկում ու ներկայացնում:

Կադր «Դանիացի աղջիկը» ֆիլմից

Այսպես, օրինակ՝ նկարիչ Այնորը սկսում է իրեն կին զգալ և այդ պահից սկսած ընկնում է տարատեսակ թիթիկությունների ու պահվածքի մանիերիզմի գիրկը: Նա սկսում է խաղալ կին՝ այնպիսի կին, ինչպիսին կուզեին տեսնել տղամարդիկ: Այս խնդիրը լավ երևում է նաև Նազիկ Արմենակյանի «Մենակության շտամպը» ֆոտոգրքի հեոսներից մեկի խոսքում. Լոռենան ասում է. «Ամեն օր մի նոր կերպար էի ստեղծում, իմպրովիզացիաներ անում, մի օր Մոնրո էի, մի օր՝ Գարբո...»:

Նազիկ Արմենակյանի գրքի հերոսներն էլ Այնորի պես կին են խաղում, ու որքան էլ Արմենակյանը իր մարդամոտ, մաքսիմալ «ներս» սողոսկող հայացքով փորձում է կոտրել այդ խաղը ու ցույց տալ «ճշմարտությունը», միևնույն է, բախվում է «խաղի» պատնեշին: Որքան էլ նա տեքստով, հերոսների կենցաղը ցույց տվող ատրիբուտներով փորձում է մոտենալ իսկական հերոսներին, միևնույն է, լուսանկարներում երևում են բեմականացված կերպարներ:

Ֆիլմում նույնպես ներկայացվում է «խաղը», կենտրոնացումը կանացիության փերֆորմատիվության վրա՝ կին խաղալը, հագնվելն ու շարժուձևի մանիերիզմը, և հետ է մղվում Այնորի բուն կերպարը: Ֆիլմն առաջ է բերում կրկին նույն հոլիվուդյան ֆետիշիստական ու պահպանողական հայացքը:

Արմենակյանի հերոսներից մեկը՝ Լայման, ասում է. «Ունեմ ինձանից մեծ երկու քույր ու որ տեսնում էի նրանց հագին կանացի շորերը, սարաֆանները, ինձ ավելի շատ էր դուր գալիս, քան տղու հագուստը…», այդպես «Դանիացի աղջիկը» ֆիլմի Այնորը մեկ էլ գայթակղվում է կանացի շորերով:

Զգեստափոխության ու շորերի հետ կապված մոտ 14 տեսարան կարելի է գտնել մի ֆիլմում, որը ներկայանում է իբրև «տրանս պատմության էջերը բացահայտող» ֆիլմ: Սակայն բացահայտման փոխարեն ռեժիսոր Թոմ Հուփերն ընդամենը շարունակում է անվտանգ հոլիվուդյան «զգեստափոխման» հայտնի թեման:

Պոլիտկորեկտության ներկայությունը միշտ նշանակում է, որ դիմացի օբյեկտը Ուրիշ է

Ինչպես նշում է ամերիկյան Vanity Fair ամսագիրը, «ֆիլմը պահում է պատշաճ հեռավորություն իր ուսումնասիրության առարկայից, զգուշանալով, որ ոչ ոքի չնեղացնի…»[4]:

Նույն մոտեցումը բնորոշ է այս թեմային անդրադարձող տարատեսակ գործերին: Հոմոսեքսուալության կամ տրանսսեքսուալության թեմաներին հատուկ են պոլիտկորեկտ հեռավորությունը և սուր դրամատիզմը:

Նապիկ Արմենակյանի «Մենակության շտամպը» գրքի[5] դեպքում, օրինակ՝ դրամատիզմի առկայությունը հստակորեն կապված է ոչ թե լուսանկարչի դիտակետի, այլ հենց հերոսների ինքնաանդրադարձման հետ:

Նրա հերոսներն իրենք իրենց դիտում են «տղամարդու հայացքով», որի դիմաց իրենք Ուրիշ են, նորմալ չեն, հետևաբար և արժանի չեն նորմալ կյանքի, հետևաբար և կրում են «շտամպ», մի բան, որն իրենց կառանձնացնի բոլորից…

Այսպես հերոսներից մեկը՝ Լայման է բնորոշ արտահայտություն անում՝ «Մենակության շտամպ կա մեր վրա…», որը հստակ ցույց է տալիս իր մոտեցումը սեփական սեռականության հանդեպ:

Այս թեման դիպուկ ներկայացրել է նաև Քեթի Աքերն իր «Բղջախոհություն» գործում[6], որ անցյալ տարի հրատարակեց հայերեն թարգմանությամբ «Ինքնագիրը»: Այստեղ հերոս նավաստին այսպես է արտահայտվում իր մասին.

«Գիտեմ՝ այս սեռականությունը, իմ ով լինելը առանձնապես հպարտանալու բան չեն: Ես համարյա ոչինչ եմ, բայց չեմ կարող ինքս ինձ ատել»:

Մշակութային կարծրատիպերը գործածելով՝ Աքերը պարզ ցուցադրում է, թե ինչպես դրանք կարող են ստիպել մարգինալացնել սեփական անձը:

Սեռականության դրամատիզմի ու մարգինալության խնդիրը վավերագրական լուսանկարչության կոնտեքստում ավելի սուր է երևում:

«Մենակության շտամպը», Լոռենա

Լուսանկարը՝ Նազիկ Արմենակյանի

Արդեն նշվեց, որ լուսանկարիչը ձգտում է հերոսներին մաքսիմալ «բնական» ներկայացնել, առանց որևէ միջամտության, այսինքն՝ այնպիսին, ինչպիսին իրենք կան կամ ինչպիսին համարում են, որ կան: Սակայն այս խնդիրը բարդ է լուծել, եթե նկարահանման օբյեկտը ընկալում է նրա ինքնությունն իբրև խաղ, դիմակ, որը պետք է կոնկրետ կանոնների ենթարկվի: Իսկ կանոնները հետևյալն են՝ կինը տանջվում է ու մահանում...

Կին լինելու դրամայից մինչև գենդերցիդ

Բոլոր ժամանակներում գրքերը գրվել են սերմնահեղուկով,
այլ ոչ թե մենստրուալ արյունով:

Էրիկա Ջոնգ[7]

Թեև «Դանիացի աղջիկը» ֆիլմը հիմնված է իրական փաստերի վրա, սակայն կարող էր ավարտվել այլ կերպ, օրինակ՝ հերոսի հաջող սեռափոխմամբ ու հասարակական խոչընդոտումների հաղթահարմամբ: Բայց ավարտվում է սեռափոխված հերոսի մահով: Սրանով ևս մեկ անգամ ցույց է տրվում արվեստում կանացի կերպարի ու դրամատիկմի սերտ կապակցվածությունը:

Սա ամբողջությամբ շարունակում է այն ավանդական նարատիվը, որտեղ ըստ Էդգար Պոյի՝ գեղեցիկ կնոջ մահը «աշխարհի ամենապոետիկ թեման է»[8]:

«Դանիացի աղջիկը» ֆիլմի գլխավոր հերոսի մահը ցույց է տալիս, որ Հոլիվուդում դեռ չկա յուրահատուկ մոտեցում տրանսգենդերային թեմային: Տրանսգենդեր հերոսը

Հոլիվուդի համար նույնականանում է կին հերոսի, հետևաբար և ավելի մարգինալ ու հալածվող պերսոնաժի հետ: Իսկ ի՞նչ է պետք անել կին պերսոնաժի հետ. այո, տանջել նրան: Ինչպես Հիչքոքն է ասում՝ «Ես միշտ հետևում եմ դրամատուրգ Սարդուի[9] խորհրդին, իսկ նա ասել է՝ «Տանջի՛ր կանանց...»[10]:

«Դանիացի աղջիկը» ֆիլմում Այնորի կնոջ՝ Գերդայի հոգատարությունը այնպես է ընդգծված, որ պատումի գլխավոր խնդիրը թուլանում է, այնքան է կենտրոնանում սեռափոխվող Այնորի կնոջ կգացումների, ապրումների ու պայքարի վրա, որ կարող է տպավորություն առաջացնել, թե ֆիլմի առանցքը սիրող կինն է ով ամեն ինչին

«Մենակության շտամպ», Բայոնս

Լուսանկարը՝ Նազիկ Արմենակյանի

դիմանում է: Գերդայի հոգատարությունը այնքան է տպավորել կինոգետներին, որ նրան մարմնավորած Ալիսյա Վիկանդերը այս տարի արժանացավ «Օսկար» մրցանակի:

Ֆիլմը հերոսականացնում է գլխավոր հերոսներից հետերոսեքսուալին՝ «նորմալ» կնոջը, ով ամենածայրահեղ պահին էլ ամուսնու կողքին է: Մինչդեռ իրական Գերդան լքել է իր ամուսնուն ու, ի տարբերություն էկրանայինի, չի եղել նրա կողքին մահվան պահին: Իսկ ինչո՞ւ էկրանային Գերդան մինչև վերջին պահ ամուսնու կողքին էր. սյուժեի դրամատիկմը սրելու համա՞ր, թե՞ գլխավոր հետերոսեքսուալ հերոսին տեսադաշտից կորցնելու ու տրանսգենդերությանը մի փոքր ավելի տեղ տալու վախից:

Իհարկե կան որոշ խախտումներ արդեն դասական դարձած մոդելից, ինչպես Պատրիսիա Հայսմիթի «Աղի գինը» գիրքը և դրա հիման վրա նկարահանված ռեժիսոր Թոդ Հեյնսի «Քերոլ» ֆիլմը: Գրքում չկա ո՛չ «ոչ ավանդական սեռական կողմնորոշվածության» (այս դեպքում՝ լեսբիականության) հետ կուգորդվող դրամատիկմ, ո՛չ թեմային բնորոշ ողբալի ու տրագիկ ավարտ, հակառակը՝ այն լավատեսական է: Այս գրքի նորամուծությունը սուբժանրի համար ոչ բնորոշ հեփփի էնդային ավարտն է:

Բայց նման «շեղումները» կլիշեավորված պատումից շատ հազվադեպ են պատահում, ու կարելի է ասել, որ դեռ փոփ մշակույթը շարունակում է մնալ սարդուական «տանջի՛ր կանանց»-ի սահմաններում, միաժամանակ ավելացնելով կանանց կողքին նաև այլ խմբեր, որոնք հասարակության աչքում հստակ տեղավորվում են «թույլ», «անկարող» ու «մարգինալ» գաղափարների մեջ:

1 *Կինոքննադատ Մայքլ Մեդվեդի ու իր եղբոր՝ Հարրիի կողմից՝ 1980 թվականին, «Golden Turkey Awards» գրքում:*

2 *Այս կոնցեպտն առաջին անգամ ներկայացվել է հանրությանը Լորա Մալվիի 1975 թվականի էսսեում՝ «Վիզուալ հաճույք և նարատիվ կինո» («Visual Pleasure and Narrative Cinema»):*

3 *Carol J. Clover «Her Body, Himself. Gender in Sasher Film».*

4 *Vanity Fair, Richard Lawson, How the Danish Girl Forgets about the Girl.*

5 *2010-ին լուսանկարիչը սկսեց աշխատել այս թեմայի շուրջ: Հետագայում ֆոտոշարքը վերածվեց գրքի և ծավալուն ցուցահանդեսի՝ Հայաստանում, Եվրոպայում և Հոնկոնգում:*
Արմենակյանի գրքի մասին տես նաև՝ Վահան Իշխանյանի «Սահմանազանցներն են. Ցուցահանդես ընդհատակում՝ «Մենակության շտամպը»

6 *Քեթի Աքերը ամերիկացի նշանավոր փանկ, ֆեմինիստ գրող է:*

7 *«Թռիչքի վախ. Ինչպես փրկել սեփական կյանքը»:*

8 *«The Philosophy of Composition», 1846.*

9 *Խոսքը ֆրանսիացի դրամատուրգ Վիկտորիեն Սարդուի (1831-1908) մասին է, որի պիեսների հիման վրա են բեմադրվել են հայտնի «Տոսկա», «Ֆեդորա» օպերաները:*

10 *Donald Spoto, The Dark Side of Genius.*

Լուսանկարը՝ Նազիկ Արմենակյանի

Մարկ Նշանեան

Ֆրանց Կաֆկա՝ Օրէնք եւ Պատկեր

Հոս կը ներկայացնեմ պզտիկ ուսումնասիրութիւն մը Ֆրանց Կաֆկայի գրիչէն ելած «Նոր փաստաբանը» (Der neue Advokat) վիպակին շուրջ: «Նոր փաստաբանը» լոյս տեսած է *Ein Landarzt. Kleine Erzählungen* (Գաւառական բժիշկ մը: Կարճ պատումներ) գիրքին մէջ, 1919ին: Ահաւասիկ նախ՝ թարգմանութիւնը.

Նոր փաստաբանը

Նոր փաստաբան մը ունինք, Դկ. Ցլագլուխը: Արտաքինին նայելով՝ շատ բան չկայ որ յիշեցնէ այն ժամանակը, երբ Աղեքսանդր Մաքետոնցիի երիվարն էր: Ճիշդ է՝ եթէ մէկը ծանօթ է պարագաներուն, պիտի հասկնայ ո՛վ ըլլալը: Եւ սակայն անցեալ օր տեսայ թէ ինչպէս Արդարադատական Ատեանի շատ պարզ պաշտօնակիցներէն մէկը ձիարշաւի կանոնաւոր յաճախորդի մասնագիտական հայեացքը յառած՝ հիացումով կը հետեւէր փաստաբանին, երբ վերջինս կը բարձրանար շքամուտքի աստիճաններէն, իր քայլերը թնդացնելով մէկ առ մէկ մարմարին վրայ:

Ընդհանուր առմամբ, փաստաբաններու ընկերակցութիւնը դրական ընդառաջեց Ցլագլուխին: Զարմանալի խորատեսութեամբ՝ բոլորը մտածեցին որ Ցլագլուխը այսօրուան հասարակական պայմաններուն մէջ՝ դժուար պիտի գտնէ իր տեղը, եւ այդ պատճառով, բայց նաեւ իր աշխարհապատմական նշանակութիւնը նկատի առնելով, խորհեցան որ ամէն պարագայի՝ արժանի է սիրայօժար ընդունելութեան: Այսօր — կարծեմ՝ անհերքելի է այս մէկը — չկայ ո՛չ մէկ մեծն Աղեքսանդր: Ճիշդ է՝ շատերը գիտեն մարդ սպաննել. պակաս չեն նաեւ անոնք՝ որոնք խրախճանքի սեղանին դիմացի կողմէն իրենց բարեկամը կրնան տէգով խողխողել. եւ շատերուն ալ՝ Մակեդոնիան պզտիկ կու գայ, ու կ'անիծեն Փիլիպոսը — հայրը. բայց ո՛չ մէկը, իրապէս ո՛չ մէկը կրնայ մինչեւ Հնդկաստան հասցնել: Այն ատեն ալ արդէն իսկ՝ Հնդկաստանի դռները անհասանելի էին, բայց անոնց ուղղութիւնը ցոյց կը տրուէր թագաւորի սուրով: Այսօր դռները ուրիշ տեղ են, աւելի հեռու, աւելի բարձր. ո՛չ մէկը ցոյց կու տայ ուղղութիւնը. շատեր սուրեր կը ճօճեն, բայց անոնցմով միայն դանկտել գիտեն. եւ նայուածքը որ պիտի ուզէր անոնց հետեւիլ՝ շփոթութեան կը մատնուի:

Ահա՛ ինչու թերեւս աւելի լաւ է, ինչպէս ըրաւ Ցլագլուխը, օրէնսգիտութեան մատեաններուն մէջ մխրճուիլ: Ազատ, կողերուն վրայ չունենալով ձիաւորի պիստերուն ճնշումը, լուսամփոփի հանգստութեան յանձնուած, հեռու Աղեքսանդրի ճակատամարտերու ժխորէն, կը կարդայ ու մեր հին մատեաններուն էջերը կը դարձնէ:

Ֆրանց Կաֆկա

1

Վալտեր Բենիամին, Ջորջօ Ագամբէնի օգնութեամբ

1934ին, Կաֆկայի մահուան տասնամեակին առիթով, Վալտեր Բենիամին անոր մասին իր դարադարձիկ փորձագրութիւնը կը շարադրէր[1], ու հոն կը կարդար ինչպէս միշտ՝ նախապատմական աշխարհէն (կամ «մահուան ամենախոր գաւառներէն») փչող խորհրդաւոր փոթորիկը, այն փոթորիկը որուն պատճառով Կաֆկայի անաւարտ (ու յետ մահու տպուած) պատմուածքներէն մէկուն մէջ՝ Գրաքուս անունը կրող արկածով սպանուած որսորդին դէպի Տարտարոս տանող նաւակը կը տատանէր աջ ու ահեակ ու մեռեալներու թագաւորութեան չէր հասներ: Յետ մահու անորոշութիւնն էր, բայց ինքը չէր տանջուեր անկէ[2]: Միայն թէ կը վարանէր: Մնա՞լ այսուհանդերձ այս գեղեցիկ աշխարհին մէջ, որպէս մեռեալ կամ վերապրող, թէ՞ նորէն յանձնուիլ փոթորիկին, այն յոյսով որ վերջապէս մահուան ճամբան պիտի գտնէ ու մոռցուի մարդկութենէն, կամ ընդհակառակը յիշուի մարդկայնօրէն, սուգով, կոհագործումով, աստուածներու օրհնութեամբ:

> «Մեռա՞ծ էք»: «Այո», ըսաւ որսորդը, «Ինչպէս որ կը տեսնէք: Տարիներ առաջ, ահաւոր շատ տարիներ առաջ եղած պիտի ըլլայ, քարայծ մը որսալու ատեն՝ ժայռէ մը վար տապալեցայ Սեւ Անտառին մէջ, Գերմանիա կը գտնուի: Ատկէ ի վեր՝ մեռած եմ»: «Բայց նաեւ ողջ էք, չէ՞», ըսաւ քաղաքապետը: «Ձեւով մը», պատասխանեց որսորդը, «ձեւով մը նաեւ ողջ եմ: Դիակատար մակոյկս ճամբան շուարեցաւ, արդեօք ղե՞կը սխալ դարձաւ, վարո՞ղը պահ մը անուշադիր գտնուեցաւ, գեղեցիկ ծննդավայրս առինքնե՞ց, չեմ գիտեր ինչ պատահեցաւ, միայն գիտեմ որ երկրին վրայ մնացի ու

> մակոյկս ատկէ ի վեր երկրային ջուրերու վրայ կ՚երթեւեկէ»:... «Եւ անդենականին հետ ո՛չ մէկ կապ չունի՞ք», հարցուց քաղաքապետը, պռստելով ճակատը:

Եւ այս Տարտարոս տանող ու երբեք տեղ չհասնող նաւակին դրուագը տարօրինակօրէն Բենիամինին կը յիշեցնէ յանկարծ Պլուտարքոսին կողմէ պատմուածը հին խորհուրդներուն եւ կոհագործումներուն վերաբերեալ, որոնց մասին կ՚ըսէ Պլուտարքոս, «նոյնքան Յոյներուն, որքան՝ բարբարոսներուն մօտ, կը բացատրուի... երկու տարբեր էակներ եւ երկու իրերամերժ ուժեր, որոնցմէ մէկը աջ ձեռքով շիտակ կը քշէ, եւ միւսը ընդհակառակը՝ կը հակառակի ու դէպի ետ կը տանի»[3]: Ըսի՝ տարօրինակօրէն, բայց ի՞նչ բան տարօրինակ չէ Բենիամինի կողմէ ստեղծուած կապակցութիւններուն մէջ: Անշուշտ Պլուտարքոսէն փոխ առնուած տողերուն մէջ՝ խօսքը բացարձակապէս մահուան խորագոյն գաւառներուն մասին չէ, կարգին մեռնելու անկարելիութեան մասին չէ, սուգով ու կոհագործումով այս աշխարհէն հեռանալու մասին չէ: Չարի ու բարիի խառնուրդին մասին է: Բայց Բենիամին ուրիշ բան է որ ունի ի մտի, «դէպի ետ» շարժումն է վինք հետաքրքրողը, այն շարժումը որուն ենթարկուած ենք, փոթորիկին պատճառով, այն հուժկու հովին պատճառով որ կ՚արգիլէ մեր աշխարհակալի յառաջընթացը: Այնպէս որ մէկ պատկերէն միւսը անցնելով, մէկ հեղինակէն յաջորդին ցատկելով, Կաֆկայէն Պլուտարքոս, ու վերադարձ դէպի Կաֆկա, Գրաքուս որսորդին ճամբան կորսնցուցած նաւակէն եւ ամէն ինչ աւրող ու աւերող փոթորիկէն, ետ՝ «դէպի ետ շարժումը», ահաւասիկ Վալտեր Բենիամին վերջապէս կը հասցնէ մեզ իր ուզած տեղը: Գերմաներէն պիտի մէջբերեմ. Umkehr ist die Richtung des Studiums, die das Dasein in Schrift verwandelt[4], իսկ թարգմանուած՝ «Դէպի ետ շարժումը ուսումնառութեան ուղղութիւնն է, որ գոյութիւնը գիրի կը վերածէ»: Անշուշտ հոս՝ ամէն մէկ բառ վերաքննելի է: Ի՞նչ է այս Studium կոչուածը, ուսումնառութի՞ւն, ուսումնասիրութի՞ւն: Իսկ Schrift կոչուա՞ծը: Որ «գիր»ն է, այո, բայց Բենիամինի գերմաներէնով կրնայ նոյնքան Սուրբ Գիրքին յղուիլ, ուրեմն Աստուծոյ խօսքին, իր աստուածային ծագումէն պարպուած: Կամ ո՛չ: Եւ պարպուած կամ ոչ՝ կրնայ նշանակել Օրէնքը, գլխագրուած: Ուրեմն ուրիշ ձեւով թարգմանուած՝ «Շրջադարձը ուսումնական ուղղութիւնն է, որ կեանքը կը վերածէ օրէնքի»: Շրջադարձով, դէպի ետ շարժումով, կեանքը եւ օրէնքը ուրեմն այլեւս կանավանելի չեն: Այս հաստատումին երկու երեսներն ալ սակայն խորհրդաւոր են, նոյնքան խորհրդաւոր են: Ինչո՞ւ «շրջադարձ»ով: Եւ ի՞նչ կը նշանակէ կեանքի եւ օրէնքի այս անկանավանելիութիւնը: Թերեւս մէկը հասկնալով՝ կարենանք միւսը աւելի լաւ հասկնալ:

Բայց նախ՝ փակագիծ մը: Կեանքին եւ օրէնքին այս անկանավանելիութեան հանգամանօրէն անդրադարձած է Ջորջօ Ագամբէն: *Homo Sacer* գիրքին կեդրոնական բնանիւթն է: Ու ի՛նքն է կարծեմ որ առաջին անգամ ըլլալով Վալտեր Բենիամինի եւ իր բարեկամին՝ Գերշոմ Շոլեմին միջեւ փոխանակուած նամակներուն մէջ մանրամասնօրէն կարդացած է Կաֆկայի մեկնաբանութեան վերաբերեալ վիճարկումը: Ընթերցողը կը յղեմ *Homo sacer*-ի առաջին բաժնի 4րդ գլուխին, որուն վերնագիրն է՝ «Օրէնքին կերպարանքը»: Ագամբէնի գիրքին հայերէն թարգմանութիւնս երբ լոյս տեսնէ, կ՚ուզեմ յաւելուածով մը՝ Բենիամինի եւ Շոլեմի միջեւ փոխանակութեան տուեալները նոյնպէս տալ թարգմանաբար: Հոս պիտի բաւարարուիմ քանի մը մէջբերումներով, Ագամբէնին մօտեցումը հասկնալի դարձնելու համար: Ագամբէնի գլխաւոր նիւթն է «արտակարգ վիճակ»ը, այսինքն՝ քաղաքական վիճակ մը, ուր օրէնքը առկախուած է, բայց առկախուած է անշուշտ օրէնքով, գերիշխանական — աւելի ճիշդ՝ գերինքնիշխանական — որոշումով:

Գերինքնիշխանութիւնը (եւրոպական լեզուներով՝ *սովրենութիւն* կոչուածը) օրէնքին աղբիւրը ըլլալէ առաջ, օրէնքը առկախելու ուժն է, կարողութիւնն է, լիազօրութիւնն է: Իր կեանքին վերջին ամիսներուն գրած «Պատմութեան յղացքին մասին» դրոյթներուն մէջ, Բենիամին կը խօսի «իրական արտակարգ վիճակ»ի մը մասին, կոր կը հակադրէ «կօրութենական» արտակարգ վիճակին: Օրէնքին առկախումը կանոն դարձած է, կ'ըսէ: Կը նշանակէ որ օրէնք չկայ այլեւս, բայց կ'ապրինք աւելի քան երբեք օրէնքի լուծին տակ, քանի որ օրէնքի գերիշխան որոշումով է որ օրէնքը առկախուած է: Գերիշխանութեան գաղափարին վրայ հիմնուած (եւ վայն արմատապէս քննադատելու ձգտող) Ագամբէնի այս մեկնաբանութիւնը կանակական առիթներով բացատրած եմ: Յայտնութենական մեկնաբանութիւն մըն է: Օրէնքը միշտ ի զօրու է, բայց այլեւս կեանքին հետ նոյնացած է: Ագամբէն չի յղեր ուղղակի Բենիամինի փորձագրութեան Կաֆկայի մասին: Կը մէջբերէ միայն 1934ին փոխանակուած նամակներէն Բենիամինի եւ Շոլեմի միջեւ, որոնք անշուշտ պատմականօրէն կարեւոր են ու լոյս կը սփռեն փորձագրութեան վրայ: Շոլեմի բանաձեւումներէն մէկը կը գործածէ (Սուրբ Գիրը որպէս օրէնք իր նշանակութիւնը կորսնցուցած է վայն ուսումնասիրողներուն համար, բայց եւ այնպէս կը մնայ ի զօրու), կարգացնելու համար «վտարող-կապ»ի կառոյցը (վտարուած ենք օրէնքէն, բայց կապուած օրէնքին), որ մեր կեանքը յատկանշող կառոյցն է: Աիաւասիկ. «Ամէն կողմ երկրագունդին վրայ՝ մարդիկ այսօր կ'ապրին օրէնքի մը եւ աւանդութեան մը վտարող-կապին ենթարկուած …: Բայց ճիշդ ա՛յս է գերիշխանական յարաբերակցութեան սկզբնատիպ կառոյցը, եւ այդ նիհիլականութիւնը որուն մէջ կ'ապրինք ուրիշ բան չէ այդ առումով՝ եթէ ոչ նոյն այդ յարաբերակցութեան վերբերումը որպէս այդ»[5]: Եւ Բենիամին ի հարկէ յստակօրէն կը բացատրէ Շոլեմին.

> Ուսանողները կորսնցուցած ըլլան Սուրբ Գիրը թէ չկարենան վայն վերծանել՝ վերջաւորութեան նոյնն է, քանի որ Սուրբ Գիր մը առանց իր բանալիներուն Սուրբ Գիր չէ այլեւս, այլ նոյն ինքն՝ կեանքը, այդ կեանքը կոր մարդիկ կ'ապրին գիւղին մէջ, տակը այն բլուրին որուն վրայ դղեակը կանգնած է: […] Շատ մը կաֆկայեան այլաբանութիւններ կը ձգտին շրջումի մը, որուն իմաստը ըստ իս՝ կեանքը փոխակերպելու եւ Գիրին հաւասարեցնելու փորձն է:[6]

Եւ կը պատրաստուինք «ագամբէնեան» այս փակագիծը գոցելու: Ագամբէն յայտնօրէն ընդհանրացած ու յայտնութենական դարձած «արտակարգ վիճակ»ի մը ստորոգութեան ընդմէջէն կը կարդայ Բենիամինին կողմէ առաջադրուած այս «հաւասարեցում»ը կեանքին ու օրէնքին միջեւ: Բայց Բենիամինն ալ իր կարգին՝ Կաֆկայի գործին մէջ կը կարդայ Օրէնքի կրկնիմաստ կորուստը, ա՛յն մէկը որ Օրէնքը կը դարձնէ ա՛լ աւելի ճնշիչ ու տիրակալող, քանի որ կորսուածին կամ անվերծանելիին հետ այլեւս հաշուի նստելու միջոց չկայ: Շրջուած ձեւով կարդալ պէտք է, կ'ըսէ: Հրամայական մըն է: Կամ՝ պէտք է հասկնալ թէ ի՛նչ կը նշանակէ շրջուած ձեւով կարդալը: Նորէն հրամայական մըն է: Օրէնքին հետ երկու ձեւ կայ ուրեմն վարուելու: Մէկը՝ դէպի առաջ, ուղղութիւն ցոյց տուող, աշխարհներ ներգրաւող ձեւը: Եւ կայ միւս ձեւը, դէպ ետ: «Շրջումը ուսումնական ուղղութիւնն է, որ կեանքը կը վերածէ օրէնքի»: Ո՛չ մէկ ժխտականութիւն այդտեղ, ո՛չ մէկ «արտակարգ վիճակ», ընդհանրացած կամ մասնակի, յայտնութենական կամ քաղաքական, ճգնաժամային կամ հանապազօրեայ: Չէ՛ որ Բենիամին գաղափար չունէր «արտակարգ վիճակ»ին մասին, ի վերջոյ՝ Կարլ Շմիտի ամենէն հաւատարիմ ընթերցողներէն մէկը եղած է, վայն ամենէն շատ լուրջի առնողներէն մէկը, անոր հետ

ճակատ ճակատի վիճարկողներէն մէկը։ Ճիշդ է նաեւ, որ Կարլ Շմիտի հետ այդ վիճարկումի ընթացքին ալ՝ գրաւարկը Օրէնքն էր, պետականութեան եղանակով եւ պետականութենէն անդին։ Այո, այս ամբողջը ճիշդ է։ Բայց «շրջում»ի հրամայականով, կամ «օրէնքը շրջուած կարդալ»ու եղանակին վրայ դրուած շեշտով, Բենիամին գոնէ այստեղ՝ չի՛ յղեր փորութենական կամ իրական արտակարգ վիճակի մը, պարզ է, որովհետեւ արտակարգ վիճակը չի կրնար հրամայական մը ըլլալ։ Առ առաւելն՝ կրնայ իրավիճակ մը ըլլալ։ Ինչ որ չի նշանակեր որ Ագամբէնին մեկնաբանութիւնը սխալ է։ Կը նշանակէ միայն որ պարտքին տակն ենք շրջումը կարդալու Բենիամինին հետ։ Առանց աճապարելու։ Առանց քաղաքականը եւ սուրբգրայինը իրարու խառնելու։

2

Վալտեր Բենիամին, անկախ՝ Ջորջօ Ագամբէնէն

Բենիամինը ո՞ւր կը կարդայ այս շրջումը։ Կը կարդայ պայն «Նոր փաստաբանը» վիպակին մէջ, ուրիշ ո՛չ մէկ տեղ։ «Շրջում»ին ուսուցիչը Bucephalus-ն է, կ'ըսէ, Բուկեփաղոսը, Մեծն Աղեքսանդրի «ցլագլուխ» կամ «պուարակագլուխ» մարտական երիվարը, որ երեւան կու գայ Կաֆկայի «Նոր փաստաբանը» վերնագրուած կարճ վիպակին մէջ։ Այս ձեւով՝ վերջապէս, երկար ու դարձդարձիկ ճանապարհէ մը ետք, հասանք Ցլագլուխին։ Բայց կը գուշակենք արդէն իսկ, որ մեր առջեւը երկարող ճանապարհը նոյնքան երկար ու նոյնքան դարձդարձիկ պիտի ըլլայ։ Բենիամին երեք բան կը կարդայ Կաֆկայի Ցլագլուխին հետ առնչութեամբ։ Անշուշտ՝ Օրէնքին հետ կապակցութիւնը, անշուշտ՝ ուղղութեան բացակայութիւնը, քանի որ այսօր այլեւս ուղղութիւնը ցոյց տուող չկայ, անշուշտ նաեւ՝ հանգստութիւնը, քանի որ վերջապէս ապատած ենք ուղղութիւն ցոյց տուողներէն, բայց կը կարդայ նաեւ «արդարութիւն»ը։ Ահաւասիկ, Բենիամինի բառերով.

> Այս պատմութիւնը վերջերս Վերներ Կրաֆտին կողմէ մեկնաբանութեան առարկայ դարձաւ։ Գրուածքին ամէն մէկ մանրամասնութիւնը խնամքով բացայայտելէ ետք, մեկնաբանը կ աւելցնէ հետեւեալը. «Ո՛չ մէկ տեղ գրականութեան մէջ՝ առասպելին ուղղուած այսքան հուժկու, այսքան վերիվայրող քննադատութիւն չէ եղած, որքան՝ հոս»։ «Արդարութիւն» բառին պէտք չունէր Կաֆկան — այդպէս կը խորհի հեղինակը։ Այսուհանդերձ՝ Արդարութեան անունով է որ առասպելին ուղղուած քննադատութիւնը տեղի կ'ունենայ։— Բայց այսքան յառաջանալէ վերջ եթէ այստեղ կենանք, Կաֆկային ըսածը փախցնելու վտանգը կայ։ Իրապէս Օրէ՞նքն է, որ յանուն Արդարութեան, առասպելին դէմ կարելի է այսպէս գործի կանչել։ Ո՛չ անշուշտ, քանի որ որպէս Օրէնքի ուսումին նուիրուած Ցլագլուխը իր ծագումին հաւատարիմ կը մնայ։ Միայն թէ կարծես՝ Օրէնքը չի գործադրեր — ու այդտեղ է բուն նորութիւնը Կաֆկայի իմաստով, Ցլագլուխին եւ փաստաբանութեան համար ընդհանրապէս։ Օրէնքը որ դադրած է կիրարկուելէ եւ միայն կ'ուսումնասիրուի, ահաւասիկ ո՛ւր է Արդարութեան դուռը։
>
> Արդարութեան դուռը ուսումնառութիւնն է։ Եւ սակայն Կաֆկան այդ ուսումնառութեան չի համարձակիր կապել այն խոստումները, կորս աւանդութիւնը Թորային հետ առնչած է։ Իր օգնականները սպասարկուներ են, որոնք աղօթատո՛ւնը կորսնցուցած են, իսկ իր աշակերտները՝ ուսանողներ են որոնք Գի՛րը (die Schrift) կորսնցուցած են։ Այլեւս ոչի՛նչ կը կեցնէ զիրենք «ուրախ ու դատարկ ճանապարհին»[7]։

Բենիամինի ուսումնասիրութիւնը հոս չ'աւարտիր։ Ասկէ ետք կարճ պարբերութիւն մը եւս կայ, կոր յետոյ պիտի կարդանք։ Այստեղ յանկարծ այն տպաւորութիւնն ունինք, որ Բենիամին կը յղուի հրէական կենդանի աւանդութեան, Սուրբ Գիրքին հետ կապակցու-

թեամբ, եւ այդ աւանդութեան շարունակականութեան մինչեւ մեր օրերը, յատուկ ուսումնառութեամբ: Ուղղակի Կաֆկային չի վերագրեր այդ յղումը, քանի որ ան «ուսումնառութեան չի համարձակիր կապել այն խոստումները, վորս աւանդութիւնը Թորային հետ առնչած է»: Չի վերագրեր, բայց կը պահէ մեկնաբանական յղումը, եւ հոս գերմաներէն die Schrift (կոր վերստին «Գիրը» թարգմանեցինք) յստակօրէն կը նշանակէ «Թորան», իրէական Սուրբ Գիրքը: Բայց քանի մը տող վերը, հոն ուր ընթերցողը կարդաց «իրաւագիտութիւնը», գերմաներէն բառն է das Recht, որ «իրաւունք»ն է որպէս հաստատակարգ, ինչ որ փաստաբաններու գործունէութեան հիմքն ու ատաղձն է: Այսինքն՝ Օրէնքը, առանց ո՛չ մէկ կրօնական երանգի: Ու անգլերէնը, քանի որ ուրիշ բառ չունի, կը թարգմանէ the Law: Մենք ալ թարգմանեցինք «Օրէնքը»: Ուրեմն պէտք է իրարմէ կատորոշե՞լ թէ ո՛չ քաղաքացիականը եւ կրօնականը: Բենիամին կ'երթեւեկէ մէկուն եւ միւսին միջեւ: Եւ 75 տարի առաջ գրուած Բենիամինի այս աշխատասիրութիւնը խոր հետքեր ձգած է Կաֆկայի ընթերցողներուն վրայ, կարմանալի չէ: Միջոց չկայ որոշելու, Բենիամին այդտեղ իրէակա՞ն աչքերով կը կարդար Կաֆկան, կամ ո՛չ: Մէջբերուած տողերը ամէն պարագայի՝ վերանայուած ու թերեւս ալ՝ աւելցուած են Վալտեր Բենիամինին կողմէ իր բարեկամին՝ Շոլեմին ըսածներուն որպէս պատասխան ու հակադրութիւն[8]: Բայց այս երթեւեկութիւնը կար արդէն իսկ Բենիամինի մտածողութեան մէջ ատկէ 13 տարի առաջ, երբ կը գրէր Կարլ Շմիտին հետ երկխօսութեան մը եղանակով եւ «գերիշխանութեան» վերաբերեալ անոր տեսութիւններուն որպէս հակադրութիւն՝ իր «Ի նպաստ բրտութեան քննադատութեան» գրուածքը, ուր քաղաքական գերիշխանութիւնը կը մտածուէր «առասպելական բրտութեան» եզրերով, հետեւաբար անոր վերջաւորութիւնը (որ հաւասար է՝ վայն քննադատելու կամ պարզապէս անոր պատմականութիւնը յայտնաբերելու հնարաւորութեան) «աստուածային բրտութեան» միջամտութեամբ: Ու Վերներ Կրաֆտ կրնար կարդացած ըլլալ Բենիամինի 1921ի այդ քաղաքական աստուածաբանութեան մարզին պատկանող աշխատասիրութիւնը, երբ Կաֆկայի «*Նոր փաստաբանը*»ի մասին իր հակիրճ մեկնաբանական էջերը կը խորագրէր «*Առասպել եւ Արդարութիւն*»[9]: Բենիամին ծանօթ էր Վերներ Կրաֆտին, բայց չէին տեսնուած 1921էն ի վեր: 1933ին հանդիպած են Փարիզի Ազգային գրադարանը: Բենիամինն է պատմողը Գերշոմ Շոլեմին. «Զարմանքով իրմէ քանի մը աշխատասիրութիւններ կարդացի, որոնց չեմ կրնար մերժել համակրանքս ու յարգանքս»[10]: Եւ ահաւասիկ ուրեմն Վերներ Կրաֆտին գրածը. «Այս ամբողջը, ամենէն պարզ բանաձեւումով, լման առասպելին քննադատութիւնն է:... Աղեքսանդրի կռիւներուն ձիաւորը առասպելական հերոսն է, որ այն ատեն արդէն իսկ չէր կրնար մինչեւ Հնդկաստան հասցնել, բայց գոնէ թագաւորական սուրով ուղղութիւնը ցոյց կու տար: Ցլագլուխը, այդ ձիաւորէն եւ այդ ժխորէն ձերբակատուած, կը գտնուի արդարութեան ժամանակաշրջանին մէջ: Կը սպասէ»[11]: Այս է եղածը: Չեմ գիտեր, թէ Բենիամին ի՛նչ բան կը տեսնէր այս տողերուն մէջ որ ըլլար համակրելի ու յարգելի, բացի անկէց որ Կրաֆտ ի՛ր՝ Բենիամինի՛ ստորոգութիւններուն կը յղէր լռելեայն: Կը յարգէ, ի հարկէ, բայց կը սրբագրէ: Բենիամինի սրբագրութեամբ՝ Արդարութեան դարպասը իրաւունքը չէ, իրաւագիտութիւնը չէ, Օրէնքը չէ, ասոնց չկիրարկուիլն է: Միայն կարդացուիլը, միայն կարդալը: Եւ քանի որ Բենիամին այստեղ ո՛չ մէկ ճիգ կը թափէ «առասպել»ի քննադատութեան դրոյթը հերքելու կամ առնուազն սրբագրելու համար, ենթադրել պէտք է որ այդ կէտին շուրջ համաձայն է Վերներ Կրաֆտին հետ: Ու եթէ հետեւինք այս գիծին՝ «Նոր փաստաբանը»ին մէջ պէտք է կարդանք տեսակ մը ազատագրում առասպելական

աշխարհէն, որ մեր աշխարհն է ենթադրաբար, մեր քաղաքական տիեզերքն է, մինչեւ որ հաստատուի Արդարութեան թագաւորութիւնը, անշուշտ այդ հաշուով՝ մեսիանական թագաւորութիւն: Մինչեւ որ բացուին Դռներն Յուսոյ:

Ու եղաւ երկու մեկնաբանութիւն: Խորքին մէջ՝ կէտ առ կէտ հակադիր մեկնաբանութիւններ: Առաջինը, Ջորջօ Ագամբէնի օգնութեամբ, կեանքի եւ օրէնքի նոյնութիւնը կը հասկնայ ընդհանրացած ու յայտնութենական «արտակարգ վիճակ»ի մը ընդմէջէն: Երկրորդը, Վերներ Կրաֆտի օգնութեամբ կամ ոչ, կայն կը հասկնայ որպէս դուռն ու դարպասը մեսիանական թագաւորութեան եւ ուրեմն հակառակ ուղղութեամբ՝ որպէս ամենէն կործանիչ քննադատութիւնը զոր կարելի ըլլար ուղղել պատմաքաղաքական իշխանութիւններուն: Երկու մեկնաբանութիւններն ալ կարելի է համոզիչ կերպով վերագրել Վալտեր Բենիամինին, նոյն տողերուն մէջ արտայայտուած: Երկուքն ալ Օրէնքի գաղափարին կու տան առաջնակարգ կարեւորութիւն, թէկուզ կորսուած, թէկուզ չգործադրուած եղանակով: Երկուքն ալ «քաղաքական աստուածաբանութեան» սահմաններուն մէջ կը դեգերին: Կը կարծէինք սակայն որ Բենիամինի աչքին «Օրէնք»ի գաղափարը Կաֆկայի գործին «մեռեալ անկիւն»ն է: Այդ է որ կ'ըսէ բացայայտօրէն Գերշոմ Շոլեմին ուղղուած նամակի մը մէջ, որուն յղեցինք վերը մէկ անգամ արդէն իսկ: Ի դէպ՝ այդ նամակին սեւագրութիւնն ալ պահպանուած է, չեմ գիտեր ո՛ր մէկ հրաշքով: Ահաւասիկ իր բառերով. «Կաֆկային կողմէ դրուած տեւական շեշտը Օրէնքին վրայ կը խորհիմ որ իր գործին մեռեալ անկիւնն է. կ'ուզեմ ըսել որ այդտեղէն մեկնելով՝ մեկնաբանական առումով հնարաւոր չէ շարժիլ: Այդ յղացքին հետ չեմ ուզեր գործ ունենալ»[12]: Իսկ սեւագրութեան մէջ նոյն բանը շատ աւելի սուր կերպով ըսուած է: Նախ այդ յղացքը «գաղտնիքներու նպարավաճառի գպրոց»ին յարմար կը գտնէ հոն ու կ'աւելցնէ. «եթէ այսուհանդերձ պաշտօն մը ունի Կաֆկայի գործին մէջ — հարցը բաց կը ձգեմ — պատկերներէն մեկնող մեկնաբանութիւն մը — ինչպէս կ'ընէ ի՛մ մեկնաբանութիւնս — անոր պիտի վերադարձնէ ամէն պարագայի»[13]: Բայց եւ այնպէս երբ խօսքը «նոր փաստաբան»ին մասին էր, դժուար թէ կարենար Օրէնքը, գլխագիրով կամ առանց գլխագիրի, լքել գաղտնիքներու նպարավաճառի գպրոցին ու զբաղիլ միայն «պատկերներ»ով:

Բայց մինչեւ ծայրը չկարդացինք Բենիամինի փորձագրութիւնը: Վերջին պարբերութիւնը մէկ քով ձգեցինք: Մէկ անգամ, կ'ըսէ, Կաֆկան յաջողած է իր լման կեանքի ընթացքին փնտռածին հասնիլ, ապշեցուցիչ արագութեամբ մը, իր ամենէն կատարեալ էջը արտադրելով, որ միեւնոյն ժամանակ մեկնաբանութիւն մըն է, կարծես թէ այդտեղ՝ Կաֆկան ինքն իր մեկնաբանը դարձած ըլլար: Խօսքը Սանչօ Պանսան նկարագրող էջին մասին է: Ահաւասիկ նախ այդ սեւագիր էջը, որ 1931ի «Չինական պատի կառուցումին ատեն» հաւաքածոյին մէջ կը կրէր «Սանչօ Պանսայի ճշմարտութիւնը» վերնագիրը.

> Տարիներու ընթացքին՝ Սանչօ Պանսա, որ երբեք չպարտացաւ իր այդ ըրածով, իրիկուան եւ գիշերուան ժամերուն իր դեւին — որուն ետքը Դոն Քիխոտէ անունը տուաւ — տրամադրութեան տակ հոյլ մը արկածախնդրական եւ ասպետական վէպեր դնելով, այնքան լաւ յաջողեցաւ ձերբակատուիլ անկէ, որ վերջինս սկսաւ ամենէն խենթ արարքներուն նուիրուիլ, որոնք սակայն նախասահմանուած առարկայի մը բացակայութեան պատճառով — որ ի դէպ՝ նոյն ինքն՝ Սանչօ Պանսան պէտք է ըլլար — ո՛չ մէկուն վնաս չհասցուցին: Սանչօ Պանսան, ազատ մարդ դարձած, անայլայլ կերպով Դոն Քիխոտէին հետեւեցաւ իր արշաւներուն ընթացքին, ինչ որ մինչեւ իր օրերու վերջաւորութեան՝ իրեն ընձեռեց հաճելի ու օգտակար ժամանց:[14]

Ու ահաւասիկ Վալտեր Բենիամինի ամենավերջին պարբերութիւնը.

> Հանդարտաբարոյ խեղկատակ եւ անօգուտ օգնական, Սանչօ Պանսան առջեւէն դրկած է իր ձիաւորը ճամբաներուն վրայ։ Ցլագլուխը վերապրած է իր ձիաւորին։ Մարդ ըլլաս թէ ձի, այլեւս այդքան ալ կարեւոր չէ, կը բաւէ որ կռնակիդ բեռէն ազատիս։[15]

Ցլագլուխը որպէս վերապրող։ Գերմաներէն՝ **Bucephalus hat den seinigen überlebt**։ Անգլերէնը թարգմաներ է՝ outlived։ Ան մեռեր է, ինքը շարունակեր է ապրիլ։ Ինչո՞ւ չէ։ Թարգմանիչները երբեք չեն հասկնար թէ ի՛նչ կը նշանակէ գրել ու թարգմանել Ցլագլուխի լեզուով, կ՚ուզեմ ըսել՝ վերապրող լեզուով։ Հարցը նաեւ այն է, որ այստեղ՝ Բենիամին չի փորձեր հարց տալ թէ ի՛նչ է կապակցութիւնը վերապրողին եւ «կռնակի բեռան» միջեւ։ Հոս կը կեցնէ քննարկումը։ Ինչո՞ւ վերապրողը պէտք է օրէնսգիտական գիրքերուն մէջ մխրճուէր։ Ենթակայ էր։ Ենթարկուած էր գերիշխանին։ Հիմա դարձած է ինքնիշխան։ Ինքնիշխա՞ն, թէ՞ վերապրող։ Արդեօք ինքնիշխան որպէս վերապրո՞ղ։ Կարելի՞ բան է։ Ինչպէ՞ս պէտք է մտածել ուրեմն այս երկուքին կապակցութիւնը, եւ օրէնքին հետ անոնց խաղը։ Մարտահրաւէր մըն է, նետուած մեր ուղղութեամբ։ Ու Բենիամինը չ՚օգներ մեկի այդ մարտահրաւէրին դէմ յանդիման։ Առաջին անգամը չէ նաեւ որ Բենիամին տեսարան մը կը կազմակերպէ ուր վերապրողը պէտք է երեւէր, ինքնիշխանութեան դէմ յանդիման դրուէր։ 1923ին լոյս տեսած թարգմանիչին գործին մասին գրած յօդուածը ճիշդ նոյնը կ՚ընէր։ Վիպապաշտներու իմաստով թարգմանութեան մասին կը խօսէր, բայց Հէօլդերլինի թարգմանութիւնները կու տար որպէս օրինակ եւ յարացոյց արդի թարգմանութեան, չանդրադառնալով որ այդ հակադրութիւնը կ՚ենթադրէր վերապրող լեզուի մը գաղափարը, հակադրուած ինքնիշխան (կամ ինչպէս պիտի բացատրեմ հոս վերջաւորութեան՝ գերինքնիշխան) լեզուներու գաղափարին եւ իրականութեան։ Ուրեմն ստիպուած ենք ծայրէն սկսելու, ամէն ինչ նորէն բացատրելու, ու եթէ Կաֆկային գործն է այսօրուան մեր խնդիրը՝ պէտք է համոզուինք թէ որքան ալ յարգելի ըլլան քաղաքական աստուածաբանութեան ծիրին մէջ պտտող մեկնաբանութիւնները, մէկ բան կը պակսի անոնց. *պատմականացումը*։ Կաֆկան պատմական ժամանակի մը մէջ ապրած ու հեղինակած գրող մըն էր։ Լեզուներու գերինքնիշխանութեան որոշ եղանակի մը կը հպատակէր։ Այդ եղանակը ծայրէ ծայր պատմական բնոյթ ունէր եւ ունի տակաւին։ Այն մէկն է, որ ծնած է ԺԸ. դարու վերջաւորութեան Վիպապաշտներուն հետ, անոնց աշխատանքով, եւ այն մէկն է որուն մենք ալ կը հպատակինք մինչեւ այսօր։ Այս ամբողջը բացատրութեան կը կարօտի։ Բացատրութեան կը կարօտի նախ եւ առաջ՝ «գերինքնիշխանութիւն» բառը զոր գործածեցի երկու տող վերը։ Վերապրող Ցլագլուխը հակադրուած է «գերինքնիշխան»ին, որ Աղեքսանդրն է Կաֆկայի այլաբանական վիպակին մէջ։ Իր «վերապրողի» հանգամանքն ու էութիւնը հասկնալու համար, պարտքին տակն ենք հասկնալու գերինքնիշխանին *պատմական* հանգամանքն ու էութիւնը։ Պատմականը այսօր է։ Երկու հազար տարի առաջ չէ։ Մեր այսօրը պատմական է։ «Այսօր»ին եւ այսօրուան պատմականութիւնը նկատի ունենալով է, որ Միշէլ Ֆուկոյ կը խօսէր «ծննդաբանութեան» մասին, Նիցչէի հետքերուն վրայ։

3

ա) Դըլէօզ-Գուատարիի մօտ «կրտսեր»ի գաղափարը

1975ին Ժիլ Դըլէօզ եւ Ֆելիքս Գուատարի միասին Կաֆկայի մասին գիրք մը հրատարակեցին, որուն ենթախորագիրն էր «Pour une littérature mineure»[16]: Ի նպաստ կրտսեր գրականութեան մը: Կաֆկան պատմականացնելու, եւրոպական լեզուներու պատմութեան մէջ արձանագրելու իրենց փորձն էր այդ մէկը, հետաքրքրական բայց ո՛չ անպայման յաջող: Հեղինակներու աչքին ի հարկէ՝ Կաֆկան իրենց «կրտսեր գրականութիւն» կոչածին յարացուցական ներկայացուցիչն էր: Իրենց հասկցած ձեւով՝ «կրտսեր գրականութիւն մը փոքրամասնական լեզուով գրականութիւն մը չէ(ր), այլ պիտի ըսէինք՝ այն գրականութիւնը կոր փոքրամասնութիւն մը կ՛արտադրէ մեծամասնական լեզուով»[17]: Այդ շրջանի Պրագայի Հրեաներու արտայայտութեան լեզուն դարձած էր գերմաներէնը: Այս տեսակի գրականութիւններու պարագային, կ՛ըսեն Դըլէօզ եւ Գուատարի, ամէն ինչ քաղաքական կը դառնայ ու ամէն ինչ հաւաքական բնոյթ կը ստանայ: Որուն համար իբրեւ օրինակ կու տան Կաֆկայի Ժոզեֆինան, որ իբր թէ հրաժարած կ՛ըլլայ առանձնակի երգելու իր փափաքէն, ու մեր թարգմանութեամբ՝ «ուրախութեամբ պիտի կորսուի մեր ժողովուրդի հերոսներուն անթիւ կանգուածին մէջ»: «Կրտսեր»ի եւ «առաջնակարգ»ի (կամ «մեծամասնական»ի) հակադրութիւնը փոխ առնուած է ուղղակի Կաֆկայէն, որ կը փորձէ երբեմն իր հաշուոյն երկուքին յատկանիշները վերբերել[18]: «Կրտսեր»ը որպէս այդ՝ իմաստ մը ունի երբ կը դիմադրէ տիրող կամ տիրակալ լեզուի ճնշումին, երբ անոր մէջ լռուածը խօսեցնելու դերը կը ստանձնէ: Այնպէս որ Դըլէօզ-Գուատարիի համաձայն՝ այդ բառը խորքին մէջ՝ որոշ գրականութիւններ որակող ստորոգելին չէ, այլ ամէն գրականութեան «յեղափոխական պայմաններուն» անունը, տիրող լեզուի սահմաններէն ներս: Գրել պէտք է, կ՛ըսեն, «ինչպէս շուն մը իր ծակը կը փորէ, ինչպէս առնէտ մը՝ իր որջը»[19], հասնելու համար սեփական յետամնացութեան, սեփական անապատին, բնակուած ու փարթամ երկրին մէջտեղը: Վահէ Օշական պիտի ըսէր՝ սեփական «արուարձան»ին, քաղաքին սահմաններուն վրայ տարածուող: Գրել գողցուած լեզուով մը: «Ինչպէ՞ս դառնալ մեր իսկ լեզուին վաչկատունը, գաղթականը, գնչուն»[20]: «Գնչու»ի կերպարը հեղինակներու գրչին տակ կու գայ ուղղակի Կաֆկայի թելադրանքով: Պրագայի Հրեաները գերմանական փոքրամասնութեան մաս կը կազմէին, կ՛ըսէ ի հարկէ Կաֆկա, ինչպէս «խանձարուրին մէջ գերմանացի երեխան գողցող գնչուները»: Մաքս Բրոտին ուղղուած Յունիս 1921ի հռչակաւոր նամակին մէջ ըսուած է, հոն ուր Կաֆկան կը բացատրէ թէ անկարելի է չգրել, անկարելի է գերմաներէն գրել, բայց անկարելի է նաեւ ուրիշ լեզուով գրել[21]: 25 տարի առաջ՝ ահա՛ ինչ կը գրէի այդ ուղղութեամբ եւ ըստ երեւոյթին այդ պատկերէն ներշնչուած (կը վերարտադրեմ մանր փոփոխութիւններով եւ յապաւումներով). «Գողնալով լեզու մը որ իրեն չի պատկանիր, սեփականացնելով օտարին լեզուն խանձարուրին մէջ, մեծցնելով այդ լեզուն, անոր վրայ հոգալով ինչպէս թէ ըլլար ի՛րը, փոքրամասնականը, գաղթականը, թափառաշրջիկը իր օտարութիւնը կը մտցնէ լեզուին մէջ: Ծպտում իսկ չէ: Այլ՝ գողօնին հանդէպ հոգատարութիւն մը: Փոքրամասնական գրականութիւնը այն մէկն է, որ մեծամասնական լեզուին մէջ *կը թարգմանէ* տիրուածը, թերաճը, վիժածը, անապատայինը, այդ բոլորը որ պիտի չըսուէր երբեք, եթէ չըլլար մեծամասնականը»[22]: Այո, բայց այս ըսուածները կը վերաբերին Կաֆկայի յարաբերութեան ի՛ր լեզուին հետ: Ո՛չ թէ Ցլագլուխի կամ Ժոզեֆի-

նայի յարաբերութեան իրենց լեզուին հետ: Հետաքրքրական է տեսնել թէ ես ալ այդտեղ, Դըլէօզի եւ Գուատարիին հետքերուն վրայ, կը խօսէի «փոքրամասնական գրականութեա՛ն», բայց «մեծամասնական լեզուի՛» մասին: Նոյն լեզուին մէջ կը մնանք, մէկ կողմէ՝ սեփական, միւս կողմէ՝ գողցուած ու սեփականացուած: Տիրուածը ստիպուած է *թարգմանելու* ինքզինք, եթէ կ'ուզէ լսուիլ, իբրեւ թէ: Բայց Ժոզեֆինային կամ Ցլագլուխին հարցը իրենք զիրենք գողցուած ու սեփականացուած լեզուով մը թարգմանել չէ՛: Բան մը ուրեմն թերի է այս մեկնաբանութեան մէջ: Եւ հիմա՝ երկու եզրայանգում:

1) Դըլէօզի եւ Գուատարիի կատարած պատմականացումը կը մնայ կէս ճամբան: Կը վերաբերի Կաֆկայի գրական արարքին ու գործունէութեան, կը յիշէ ու կը յիշեցնէ որ Կաֆկայի գերմաներէնը իր իսկ կողմէ նկատուած էր «գողցուած», «սեփականացուած»: Զայն սեփականացնելով՝ Կաֆկան ենթադրաբար ներսէն կը գործածէր անոր տիրակալութիւնը կամ տիրապետութիւնը: Ի՞նչ նպատակով կամ ի՞նչ արդիւնքով: Պարզապէս թարգմանելու համար իր լեզուական ենթակայութիւնը (ստիպուած էր լեզու մը գողնալու ըսելու համար որ ստիպուած էր լեզու մը գողնալու): Այդ է որ Կաֆկա կ'ուզէր ըսել իր «անկարելի է չգրել, անկարելի է գերմաներէն գրել, բայց անկարելի է նաեւ ուրիշ լեզուով գրել» եռակի արտայայտութեամբ: Այդ կէտէն մեկնելով իրենց մեկնաբանութիւնը զարգացնելու համար, Դըլէօզ եւ Գուատարի այնպէս մը կ'ընեն որ նոյն լեզուին մէջ թարգմանութիւնը գրականութեան տայ *վկայագրական* տարողութիւն: Ըսի՝ թարգմանելու համար իր լեզուական ենթակայութիւնը: Բայց այդ չէ՛ արդէօք որեւէ «ենթակայութեան» պայմանը եւ նոյնիսկ սահմանումը: Այդ չէ՛ որ արտայայտուած է «ենթակայ» բառով: Այդ չէ՛ որ Ջորջօ Ագամբէնը կը մղէր Աուշվիցի մասին իր գիրքով (Quel que resta di Auschwitz) ենթակայի նոր տեսաբանութիւն մը առաջադրելու, ամբողջութեամբ հիմնուած «վկայելու անկարողութեան մասին վկայել»ու արարքին ու անհրաժեշտութեան վրայ[23]: Եւ այդ հաշուով՝ Կաֆկայի Ցլագլուխը պարզապէս արդի ենթակա՛ն է արդէօք: Այսինքն՝ այն մէկը որ իր կռնակին հեծած գերիշխան ձիաւորը վար նետած է:

2) Այո, այդ ձեւով՝ միայն կէս ճամբան կտրած են Դըլէօզն ու Գուատարին: Այդ կէսին համաձայն՝ Ցլագլուխը արդի ենթական պիտի ըլլար: Այդ կէսը կոր կտրած են նկատի չ'առներ որ նաեւ վերապրողն է ան: Բայց գոնէ կտրած են, եւ մեծամասնականի ու փոքրամասնականի, տիրողի ու տիրուածի իրենց առաջադրած հակադրութիւնը կը պատրաստէ բուն խնդրին բանաձեւումը: Եւրոպական լեզուները (եւ անոնց մէջ ուրեմն եւ ի միջի այլոց՝ գերմաներէնը) ե՞րբ եւ ինչպէ՞ս դարձած են «գերինքնիշխան»: Ահա՛ բուն խնդիրը: Հարցումը պատմական չափում մը կը բանայ ու կ'ենթադրէ: Կաֆկային Աղեքսանդրը եւ Ցլագլուխը, «գերինքնիշխան»ը եւ «վերապրող»ը, այդ հորիզոնէն ներս եւ այդ չափումին համաձայն է որ կ'իմաստաւորուին: Բայց անշուշտ այս ամբողջը կը պահանջէ որ լաւ հասկնանք, թէ ի՛նչ են «գերինքնիշխան»ը եւ «վերապրող»ը, պանոնք չշփոթենք ուրիշ եզրերու հետ: «Գերինքնիշխան»ը տիրակալը չէ, տիրապետողը չէ: Իսկ վերապրողը վկան չէ բացարձակապէս:

բ) *Վերապրողը եւ գերինքնիշխանը*

Ուրեմն նախ՝ գործածած բառիս մասին: Ինչո՞ւ կ'ըսեմ «գերինքնիշխան», ուրկէ՞ յայտնուեցաւ այդ բարդութիւնը: Վերը հապճեպ կերպով ըսի որ կը համապատասխանէ եւրոպական լեզուներուն մէջ «սովրենութիւն» կոչուածին: Չեմ ուզեր զայն առաջարկել որպէս նորաբանութիւն: Պարագայական գործածութիւն մըն է կատարածս: Հայերէնը մէկ

եկրով չի կրնար արտայայտել ինչ որ եւրոպական լեզուները կ'արտայայտեն իրենց «սովրենութեան» յղացքով (ֆրանսերէն՝ souveraineté, անգլերէն՝ sovereignty, իտալերէն՝ sovranità, մինչեւ իսկ գերմաներէն՝ Souveränität, հակառակ անոր որ գերմաներէնը սովորաբար չի սիրեր լատիներէն արմատներ գործածել): Սովորական պէտքերուն համաձայն, «ինքնիշխանութիւն» բառը բաւարար է, բայց բուն յղացքին մէկ երեսը միայն կ'արտայայտէ: Ու միշտ կը շփոթուի, ի դէպ, «ինքնավարութեան» հետ: ԺԸ. դարուն քաղաքական մարզին մէջ ծնած իրականութիւնը (եւ յղացքը անշուշտ) գրեթէ նոյնիհետայն փոխադրուած է գրական մարզէն ներս, նոյն դարու վերջաւորութեան, Գերմանիոյ Վիպապաշտներու բացած աւանդութեամբ: Այդ մասին ալ անցողակի կերպով ակնարկեցի վերը: Ասկէ երկու դար առաջ ի հարկէ՝ Վիպապաշտները որոշած էին ամէն ինչ թարգմանել, եւրոպական գրականութեան մեծ ու պզտիկ գործերէն մինչեւ հին հնդկական բանաստեղծական ու դիցացավերգական գործերը: Այդ ծրագիրին մասին ընթերցողը կրնայ տեղեկանալ Անտուան Բեռմանի *Օտարութեան փորձընկալումը* գիրքին ընդմէջէն, որ Վիպապաշտներու առաջին սերունդին մօտ թարգմանութեան գործունէութեան եւ տեսաբանութեան կ'անդրադառնայ ընդերկար, քալելով անշուշտ Վալտեր Բենիամինի հետքերուն վրայ, որ իր առաջին աւարտաճառը այդ հարցին նուիրած էր: Անտուան Բեռմանի գիրքը թարգմանեցի Րաֆֆի Աճէմեանին հետ գործակցութեամբ, նկատի առնելով անոր բացառիկ նշանակութիւնը պատմական իմաստով[24]: Թարգմանելով, այսինքն առաջին հերթին՝ եւրոպական լեզուներուն միջեւ թարգմանական հաղորդակցութիւն մը ստեղծելով, մէկէն միւսը անցքը ապահովելով, նաեւ ամէն մէկուն սահմանները կ'ապահովէին Վիպապաշտները, եւ ուրեմն կը սկզբնաւորէին լեզուներուն համար՝ մէկը միւսին հանդէպ օտար ըլլալու նոր եղանակ մը: Կը սկզբնաւորէին լեզուներու գերինքնիշխանութիւնը: Ամէն մէկ լեզու իր սահմաններէն ներս ինքն իր օրէնսդիրը եւ ինքն իր օրինապահն էր, եւ սակայն ամէն մէկը լռելեայն կը հպատակէր ընդհանուր անգիր օրէնքի մը, որ լեզուներուն միջեւ խաղաղ գոյակցութիւնը հնարաւոր կը դարձնէր: Թարգմանութիւնն էր, որ այդ խաղաղ գոյակցութեան պայման-ները կը տեղաւորէր, կը սահմանէր, կը փորձընկալէր, եւ թարգմանութիւնն է ուրեմն որ լեզուներու գերինքնիշխանութիւնը կը գործադրէր, իրականութիւն կը դարձնէր: Այս հաշուով Անտուան Բեռմանի գիրքին վերնագիրը տուող օտարութեան փորձընկալումը միաժամանակ սահմանի մը եւ օրէնքի մը փորձընկալումն է: Հայերէն լեզուով՝ «սահման» կը նշանակէ նաեւ «օրէնք», նոյնիսկ եթէ այդ հին իմաստը մասամբ կորսուած է արդի հայերէնին մէջ: Գերինքնիշխանութիւնը — պետական ինչպէս լեզուական — այս հաշուով երկու անգամ «սահման»ի հետ գործ ունի, դէպի ներս եւ դէպի դուրս, ատկէ՝ բառին միաւորուած կրկնիմաստութիւնը: Դէպի ներս՝ ինքն իր օրէնքին ակն ու աղբիւրն է, բայց դէպի դուրս՝ փոխադարձ ճանաչումը թարգմանութեամբ հնարաւոր դարձնող օրէնքի մը կը հպատակի: Սահմանադրական է երկու ուղղութեամբ: Օտարութեան փորձընկալումը միշտ միասնաբար՝ օրէնքի՛ փորձընկալում մըն է:

Իսկ այդ փորձընկալումը պատմական բնոյթ ունի, այն իմաստով որ չկար ան Վիպապաշտներէն առաջ, այսինքն ԺԸ. դարուն ստեղծուած (գեր)ինքնիշխանութեան գաղափարի կայացումէն եւ կայունացումէն առաջ: Ահա՛ պատմականութիւնը որուն մասին կը խօսէի: Կաֆկայի գործը անընթեռնելի կը մնայ եթէ նկատի չառնուին գեր-ինքնիշխանութեան պատմականութիւնը եւ ասոր փոխադրած «օրէնք»ի, «սահման»ի, «օտարութեան», «ենթակայութեան» պատկերացումները: Անընթեռնելի կը մնայ եթէ

նկատի չառնուի ի միջի այլոց, կամ առաջին հերթին, որպէս տեւական երկխօսութիւն մը Վիպապաշտներուն հետ: Տարբեր ձեւերով երկխօսութիւն մըն է: Կը ցցուի անոնց դէմ: Կամացուկ մը՝ կը մտնէ անոնց հագուստներուն մէջ: Համբերութեամբ ներսէն կը քակէ այդ հսկայ շէնքը, պոր անոնք մէկ-երկու սերունդի վրայ, Շլեգել եղբայրներէն մինչեւ Գէօթէ, իրենց ձեռքերով շինած էին. *լեզուներու գերինքնիշխանութեան շէնքը*:

Ու ամէն պարագայի՝ անըմբռնելի կը մնայ Ցլագլուխին «վերապրող»ի հանգամանքը, եթէ չհասկցուի որ «գերինքնիշխանութեան» հակադրուած է ան ու անոր հետ կը մշակէ նոյն յարաբերութիւնը ինչ որ վերապրող լեզու մը գերինքնիշխան լեզուի մը հետ, կամ ինքն իրեն հետ որպէս գերինքնիշխան, քանի որ ի վերջոյ նոյն լեզուն կրնայ գործել երկու տարբեր եղանակներով: Ինչպէս գերմաներէնը որ Դըլէօզ-Գուատարիին համաձայն՝ կը գործէր որպէս մեծամասնական լեզու, բայց Կաֆկայի գրչով՝ որպէս փոքրամասնական, որպէս կրտսեր, երկրորդը կախեալ ըլլալով առաջինէն, վերիվայրող «կախեալութեամբ» մը: Լեզուի մը վերապրող հանգամանքը նոյնպէս՝ կը հասկցուի միմիայն եթէ դէմ յանդիման դնենք պայն լեզուներու ընդհանուր (կամ նոյն լեզուի) գերինքնիշխան վիճակին, հանգամանքին ու եղանակին: Անշուշտ վերապրող լեզու մը կրնայ շարունակել ապրիլ ու մեռնիլ ինքն իր հաշւոյն, որքան որ ուզէ: Այդպէս կարելի է խորհիլ: Բայց տեսէ՛ք որ յաջողեր է յայտնաբերել ինքզինք (ու յայտնաբերուիլ ուրիշներուն կողմէ) որպէս վերապրող, ուսումնասիրել իր պատմութիւնը, հին ու նոր, բանալ օրինագիրքերը, տեսնել թէ ինչպէս կը գործէին ու տակաւին կը գործեն գերինքնիշխան լեզուներու փաստաբանները: Այս ամբողջը կարելի պիտի չըլլար, եթէ նախ եւ առաջ սորված չըլլար գերինքնիշխանութեան փաստաբանական լեզուն, ընդունուած չըլլար փաստաբաններուն կողմէ — թերեւս ոչ գրկաբաց, բայց առնուազն սիրայօժար —, ու այսօր մաս չկազմէր անոնց արհեստակցական միութեան, անոնց կողմէ վերջապէս ճանչցուելով որպէս ա՛յն ինչ որ է՝ վերապրողը անշուշտ, բայց վերապրողը ըլլալէ առաջ ու մանաւանդ՝ լման գերինքնիշխանութեան շէնքը ատենօք իր վտիտ ուսերուն վրայ կրողը: Եւ հոս յանկարծ Կաֆկային վիպակը կը դադրի այլաբանական ըլլալէ: Որովհետեւ ի վերջոյ, Ցլագլուխը որքան ալ հագուած-շքուած ըլլայ իրենց նման, որքան ալ շքեղ ըլլայ իր քալուածքը, փաստաբանները կը տեսնեն — չեն կրնար չտեսնել — որ ձի մըն է եղածչեղածը, թէկուզ աշխարհահռչակ:

Եւ այս հաշուով խորքին մէջ՝ եղաւ երեք իմաստ «սահման» բառին համար: Կար նախ սահմանը որպէս գերինքնիշխան լեզուները իրարմէ բաժնող եւ իրարմէ օտարացնող անտեսանելի տրոհումը: Կար յետոյ սահմանը որպէս օրէնք, ներքին եւ արտաքին, լեզուներու գոյակցութիւնը ապահովող եւ օտարութիւնը որոշադրող: Բայց կայ հիմա նաեւ սահմանը որպէս վերջաւորութիւն, գերինքնիշխանութեան ենթադրեալ վերջաւորութիւնը, որմէ մեկնելով եւ որմէ դիտելով (թարգմանական քալուածքով եւ ծննդաբանական հայեցքով) Ցլագլուխը այնպէս մը կ՚ընէ որ գերինքնիշխանութիւնը վերստանայ իր պատմականութիւնը: Երեքը միասին թարգմանական փորձընկալումին կալուածը կը կազմեն: Բայց երրորդը Ցլագլուխին միայն հասանելի է, ինքն է վերապրող լեզուին բնակիչը: Մինչ այդ դեռ երկար ժամանակ մենք՝ խեղճ թարգմանիչներս պիտի շարունակենք գերինքնիշխանական լեզուներով սահմանուած օտարութիւնը երջանկօրէն փորձընկալել:

1 Տե՛ս Walter Benjamin, *Gesammelte Schriften* (որ հետագայ յղումներուն մէջ՝ GS տառերով պիտի նշուի), **Band II-2**, ***Aufsätze*, *Essays*, *Vorträge*** [Յօդուածներ, փորձագրութիւններ, դասախօսութիւններ], էջ 409-438:

2 Անաւարտ պատմուածքին ընդունուած վերնագիրն է՝ «Der Jäger Gracchus» [Գրաքուս որսորդը]: Լոյս տեսած է առաջին անգամ ըլլալով 1931ին *Beim Bau der chinesischen Mauer* [Չինական պատի կառուցումին ատեն], յետոյ կրկին 1936ին *Beschreibung eines Kampfes* [Կռիւի մը նկարագրութիւնը] հատորներուն մէջ: Զայն կը կարդամ այսօր Fischer Verlag-ի հրատարակութեամբ (**Franz Kafka.** ***Gesammelte Werke in zwölf Bänden***, հատոր 5, էջ 40-43, տպուած առանց վերնագիրի, ինչպէս որ կ'երեւի ձեռագիրներուն մէջ): Անգլերէն թարգմանութիւն, Franz Kafka, *The Complete Stories*, Schocken Books, Նիւ Եորկ, 1971, էջ 226-231:

3 Ծանօթ է երեւոյթ, որ Բենիամին կը սիրէ բազմապատկել մէջբերումները: Իր գրուածքը կը հիւսէ երբեմն միայն մէջբերումներով, բայց երբեք չի տար իր մէջբերումներուն յղումները: Ներկայ պարագային՝ այս տողերը փոխ առեր է (ուղղակի թէ անուղղակի, անկարելի է գիտնալ) Պլուտարքոսի 1786ին լոյս տեսած գերմաներէն թարգմանութենէ մը, ***Moralische Abhandlungen*, *aus dem griechischen übersetzt von Johannes Friedrich Kaltwasser*** [Բարոյական տրակտատներ, յունարենէ թարգմանուած Յ. Ֆ. Կալտվասերին կողմէ], հատոր 3, էջ 433:

4 GS, II-2, էջ 437:

5 Giorgio Agamben, *Homo sacer, Il potere sovrano e la nuda vita*, էջ 59:

6 Տե՛ս Walter Benjamin, Gerschom Scholem, *Briefwechsel 1933-1940* [Նամականի, 1933-1940], պատրաստուած Կ. Շոլեմին կողմէ, Suhrkamp, Ֆրանկֆուրտ, 1988, էջ 155:

7 GS II-2, էջ 437: «Արդարութիւն» բառը գրեցի մեծատառ: Թարգմանիչի որոշում: Գերմաներէնը գոյականներուն համար՝ չի պատորոշեր մեծատառն ու փոքրատառը: Իսկ «ուրախ ու դատարկ ճանապարհին» խօսքը փոխ առնուած է Կաֆկայի ասոյթներէն, Մաքս Բրոդին կողմէ 1931ին լոյս տեսած *Betrachtungen über Sünde, Hoffnung, Leid und den Wahren Weg* (Նկատողութիւններ մեղքի, յոյսի, տառապանքի եւ ճշմարիտ ճանապարհի մասին) վերնագիրով: Տե՛ս Franz Kafka, *Gesammelte Werke in zwölf Bänden*, հատոր 6, էջ 235: «Որքան շատ ձիեր կը լծես, այնքան աւելի արագ կ'ընթանայ — ոչ թէ ի հարկէ քարին կատուիլը քարակոյտէն, ինչ որ անկարելի է, այլ փոկերուն խզուիլը, հետեւաբար՝ ուրախ ու դատարկ ճանապարհը»:

8 Այս մասին տե՛ս *Briefwechsel*, էջ 166 (11 Օգոստոս 1934ի նամակը), ուր կ'ըսէ թէ ձեռագիրի վերադարձին կը սպասէ, վերջնական վերանայումները կատարելու համար: Նոյն նամակին մէջ կը գրէ. «Կաֆկայի գործին մէջ չեմ ուրանար Յայտնութեան բնանիւթին ներկայութիւնը, քանի որ հոն կը կարդամ մեսիանական չափումը — բայց "ձեւափոխուած"»: Շոլեմին համաձայն սակայն՝ Բենիամինի մեկնաբանութիւնը չափէն աւելի կը չէզոքացնէր կամ նոյնիսկ կ'ոչնչացնէր Կաֆկայի գրուածքներուն «իրեական ջիղը» (*Briefwechsel*, էջ 174):

9 «Mythos und Gerechtigkeit» լոյս տեսած էր 1933ին: Կարելի է այսօր զայն կարդալ Werner Kraft, *Franz Kafka, Durchdringung und Geheimnis* (Խորաթափանցութիւն եւ Գաղտնիք) հատորին մէջ, Suhrkamp, 1968:

10 *Briefwechsel*, էջ 121 (18 Յունուար 1934ի նամակէն):

11 Werner Kraft, *Franz Kafka*, էջ 15:

12 *Briefwechsel*, էջ 121 (18 Յունուար 1934ի նամակէն):

13 Սեւագրութիւնը կը կարդամ Բենիամինի Ամբողջական գործերու խմբագիրներուն կողմէ հաւաքուած ծանօթագրութիւններու բաժնին մէջ, տե՛ս

GS II-3, էջ 1245: Աիաւասիկ գերմաներէնը. «Sollte er in Kafkas Werk dennoch eine Funktion haben — was ich dahingestellt sein lasse — so wird auch eine Interpretation die von Bildern ausgeht — wie die meinige — auf sie führen» :

14 Franz Kafka, *Gesammelte Werke in zwölf Bänden*, հատոր 6, էջ 167:

15 GS II-2, էջ 438:

16 Gilles Deleuze, Félix Guattari, *Kafka. Pour une littérature mineure*, Minuit, Փարիզ, 1975: Ատենօք *Յառաջ* եւ *Հորիզոն* թերթերու գրական յաւելուածներուն մէջ պզտիկ ուսումնասիրութիւն մը գրեցի, «Երկուորեակին գրականութիւնը» վերնագրով (Միտք եւ Արուեստ, Յուն.-Փետր. 1993, Հորիզոնի գրական յաւելուած, Մարտ 1993), ուր կ'անդրադառնայի արդէն իսկ «կրտսեր գրականութեան» հարցերուն: Հոն կը յիշեցնէի որ Դըլէօզ եւ Գուատարի միասին հեղինակած են քանի մը դարագլուխ հանդիսացող գործեր, որոնց շարքին *L'Anti-Oedipe*, 1973ին, գիրք մը որ հոգեվերլուծական մօտեցումներու գերակշռութեան դէմ դրօշ կը պարզէր:

17 *Kafka*, էջ 29: «Մեծամասնական» բառով հոս կը թարգմանեմ ֆրանսերէն majeure բառը, որ կրնայ նաեւ նշանակել «գլխաւոր», «առաջնակարգ»:

18 Օրինակ օրագրային ձեւով՝ 25 Դեկտ. 1911 թուականին: Տե՛ս *Gesammelte Werke in zwölf Bänden*, հատոր 9, էջ 243:

19 *Kafka*, էջ 33:

20 *Kafka*, էջ 35:

21 Տե՛ս Franz Kafka, *Briefe 1902-1924*, Fischer Verlag, էջ 205:

22 Տե՛ս *Յառաջ, Միտք եւ Արուեստ*, Մարտ 1993, էջ 3: Այդ յօդուածին մէջ կը մէջբերէի նաեւ ֆրանսացի քննադատ ու գրականագէտ Մարթ Ռոպէռի հետեւեալ տողերը (Կաֆկայի օրագիրին ֆրանսերէն թարգմանութեան առիթով գրուած յառաջաբանին մէջէն). «Պրագայի գերմանալեզու գրագէտը — Հրեայ կամ ոչ — կը ժառանգէր լեզու մը, որուն վիճակը բացայայտօրէն կայն խօսող պզտիկ խմբակին վիճակը կը ցոլացնէր: Կտրուած որեւէ ժողովրդական բարբառէ, հեռու նաեւ Գերմանիոյ մէջ ամէն կողմէ գրականութիւնը սնուցանող աւիշէն, այդ լեզուն կը տառապէր նոյն արմատախլումէն, զոր մարդիկ կը զգային իրենց մորթին վրայ, ու ասոնց պէս՝ կրկուած էր ան աւանդութենէ եւ պատմութենէ...: Քարացած եւ աղկաղկ, բանաստեղծին կ'ընծայէր շատ քիչ թիւով բնական հնարաւորութիւններ...» (*Le Journal de Kafka*, Փարիզ, 1954, էջ XVII): Իսկ mineur բառն ալ կու գայ ուղղակի Մարթ Ռոպէռէն (անդ, էջ XX, ուր ծանօթագրութեան մէջ՝ քննադատը կը գործածէ **littératures nationales mineures** արտայայտութիւնը): Տե՛ս նաեւ կենսագրական տուեալները, Ernst Pavel, *The Nightmare of Reason. A Life of Franz Kafka* հատորին մէջ (Նիւ Եորք, 1984):

23 Տե՛ս ֆրանսերէն լեզուով՝ «Témoigner et traduire» վերնագրով փոքր աշխատասիրութիւնս, լոյս տեսած *Le Sujet de l'histoire. Vers une phénoménologie du survivant* (Պատմութեան ենթական: Դէպի վերապրողի բներեւութաբանութիւն մը) հատորին մէջ, Lignes, 2015: Իսկ հայերէն՝ Երեւանի Բուն tv-ի վրայ «Թարգմանել օտարութեան մէջ» շարքիս 2րդ բաժինը: Բայց այդ չէ՛ նաեւ, կ'ուզեմ ըսել՝ ենթակայութեան վկայագրական տարողութիւնը չէ՛ նաեւ, որ Միշէլ Ֆուկոյի վերջին տարիներու կատարած աշխատանքը կը բացատրէ, անցնելու համար «ենթակայեցում»էն «ենթակայացում», assujettissement-էն subjectivation: Այդ մասին ընթերցողը կը յղեմ նոր լոյս տեսնելիք ուսումնասիրութեանս, «Թարգմանութեան բովէն: Միշէլ Ֆուկոյի սեռային ենթական», գրուած որպէս վերջաբան Ֆուկոյի *Սեռականութեան պատմութիւն* գրքի առաջին հատորին, որ լոյս պիտի տեսնէ ի մօտոյ:

24 Antoine Berman, *L'Epreuve de l'étranger.* ***Culture et tradition dans l'Allemagne romantique***, լոյս տեսած է 1984ին: Հայերէնը՝ Անտուան Բեռման, *Օտարութեան*

փորձընկալումը: Մշակոյթ եւ թարգմանութիւն վիպապաշտ Գերմանիոյ մէջ, Սարգիս Խաչենց-Փրինթինֆօ, Երեւան, 2017: Վերջաւորութեան դրուած է յաւելուած մը, Ֆրիդրիխ Շլեգելի «Կոտորակներ»ու հայերէն թարգմանութեամբ, եւ անշուշտ բացատրական վերջաբան մը, որ սոյն հարցերուն շուրջ փորձագրութիւն մըն է արդէն իսկ, որուն մէջ չկայ սակայն «սահման»ի եւ «օրէնք»ի փորձընկալումը որպէս «օտարութեան փորձընկալում»ին նախապայմանը: Ահա՛ ինչու ծայրէն բացատրել պէտք էր, այս անգամ՝ Կաֆկայի օգնութեամբ:

_ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ



Շահրամ
Խոսրավի

Թարգմանությունը՝ Լիլիթ Հակոբյանի

Աշխարհագրությունը և պատմությունը, որոնք ձևավորել են իմ կյանքը, ինձ չթողեցին որևէ այլ տարբերակ, քան գրել: Նախ՝ որպես բախթիարի էթնիկ փոքրամասնություն Իրանի ներսում, իսկ հետո՝ որպես ներգաղթյալ Իրանից դուրս, ես փորձում էի հասկանալ սահմաններն ու սոցիալական եզրագծերը:

Հիմա ես մարդաբանության պրոֆեսոր եմ Ստոկհոլմի համալսարանում և մի քանի գրքերի հեղինակ, բայց նախընտրում եմ կարճ էսսեներ ու գեղարվեստական գործեր գրել:

Գրքերը.

«Երիտասարդ և հանդուգն Թեհրանում», Փենսիլվանիայի համալսարան (2008)

«Ապօրինի ճանապարհորդը. սահմանների ինքնա-ազգագրություն», Փալգրև միջազգային ակադեմական հրատարակչություն (2010)

«Անապահով կյանքեր. սպասում և հույս Իրանում», Փենսիլվանիայի համալսարան, (2017)

«Աքսորից հետո. ազգագրական հեռանկարներ», Փալգրև միջազգային ակադեմական հրատարակչություն (2017):

Քաղաքը բնորոշում են սրճարանները, ոչ թե բարձրահարկ շենքերը կամ մայրուղիները: Քանի առանց մինչև ուշ գիշեր բաց սրճարանների, ուր մարդիկ հաճախ և մեծ քանակությամբ սուրճ կարող են վայելել, պարզապես չի կարող լինել քաղաքային կյանք:

Սուրճը դառնահամ է: Առաջին անգամ համտեսելով՝ չես վայելում, սակայն շուտով սկսում ես կախում ունենալ դրանից: Սուրճը փոխում է մեկ, փոխում է մեր փոխհարաբերությունները: Իսկ երբ փոխվում են սոցիալական հարաբերությունները, փոխվում է նաև այն, թե ինչպես ենք մենք նկարագրում մեկ և մեր հասարակությունը: Սրճարաններում մեր սուրճ խմելն ավելի խորը տպավորություն է թողնում մեկ վրա, քան կարող ենք պատկերացնել: Մենք այնքան ժամանակ և էներգիա ենք ծախսում դրա համար: Նավթից հետո սուրճի առևտուրն ամենամեծն է միջազգային շուկայում: Մարդիկ սովորել են սիրել սուրճը, և մեկ դարից էլ քիչ ժամանակահատվածում այն անցել է Եթովպիայից Եմեն, ապա՝ ամբողջ Օսմանյան կայսրությամբ դեպի Կաիրո, Հալեպ և Կոստանդնուպոլիս:

Առաջին անգամ եվրոպացիները կգացել են սուրճի համը 17-րդ դարի երկրորդ կեսերին: Քրիստոնեական Եվրոպայում բացված առաջին սրճարանը եղել է Լոնդոնում 1650-ականներին: Այդ տարիներին Լոնդոնում եռում էր հեղափոխական շունչը, և սրճարաններն արագորեն դարձան հեղափոխականների հավաքատեղիները: Սրճարանները նաև այն վայրերն են, որտեղ սոցիալական անհավասարությունն ավելի ակնհայտ է դառնում:

Երբ Շառլ Բոդլերը՝ արդիականության առաջին ժամանակագիրը, փորձում էր նկարագրել այդ ժամանակի Փարիզը, ստեղծում էր տեսարան սրճարանում՝ քաղաքային ցածր խավի մասնակցությամբ: Իր հայտնի «Փարիզյան մաղձը» արձակ բանաստեղծությունների ժողովածուում նա ներկայացնում է մարգինալացված աղքատների և նոր Փարիզի փոխհարաբերությունները: Բարոն Հաուսմանի ռացիոնալ քաղաքն իր արձակ բուլվարներով և լայն հրապարակներով տեղ չուներ աղքատների համար: «Աղքատների աչքերը» գործում ցնցոտիներով մի մարդ իր երկու որդիների հետ շքեղ նոր սրճարանի պատուհանից ներս է նայում:

Հոր աչքերն ասում էին. «Ի՜նչ գեղեցիկ է»... Փոքրիկ տղայի աչքերը. «Ի՜նչ գեղեցիկ է: Բայց այստեղ միայն այն մարդիկ կարող են գնալ, որ նման չեն մեկ»:

Բոդլերի այս ժողովածուի հրատարակումից գրեթե մեկուկես դար անց սրճարանները քաղաքի քիչ վայրերից են, որոնք հասանելի են մարգինալացվածների համար:

Թեհրանում և Ստոկհոլմում կատարած իմ դաշտային ուսումնասիրությունների ընթացքում ես նմանություններ եմ նկատել, թե ինչպես են սրճարանները դառնում այնպիսի վայրեր քաղաքում, որտեղ կարող են հավաքվել խտրականության ենթարկված մարդիկ: Հասարակությունից դուրս մնացածների համար, լինեն երիտասարդ կանայք Թեհրանում, թե ներգաղթած ընտանիքների երեխաներ՝ Ստոկհոլմում, սուրճ խմելը հնարավորություն է ընձեռում մասնակցելու սոցիալական կյանքի այն հատվածին, որն այլ պայմաններում փակ է իրենց առաջ: Ըստ Յուրգեն Հաբերմասի

իդեալականացրած պնդման՝ սրճարանները հանրային տարածք են այն խոսույթի համար, որի վրա է հիմնվում քաղաքացիական հասարակությունը:

Զարմանալի չէ, որ սրճարանները սովորաբար բացվում են հասարակության մարգինալ կանգվածի՝ներգաղթածների կամ փոքրամասնությունների կողմից: Փարիզում առաջին սրճարանը բացվել է հայի կողմից 1671թ.: Մեկ այլ հայ բացել է առաջին սրճարանը Վիեննայում՝ 1685-ին: Իմ հայրենի քաղաքի՝ Սպահանի և Թեհրանի առաջին և լավագույն սրճարանները գտնվում են Ջուլֆայում՝ հայկական թաղամասում: Նյու Յորքում առաջին սրճարանը բացել է անգլիացի ներգաղթյալ 1696 թ.: Այսօր Ստոկհոլմում գրեթե անհնար է գտնել մի սրճարան, որի տերը ներգաղթյալ կամ ոչ շվեդական արմատներով չէ:

Սուրճ խմելը եվակի սոցիալական իրադարձություն է, որն անանուն է, թեև՝ հանրային: Այն մարդկանց սովորեցնում է քաղաքային կյանքի ռիթմին: Քաղաքում սուրճ խմելն ավելին է, քան ընդամենը սուրճ ըմպելն ու դրա հետ կապված բոլոր հնարավոր այլ գործողությունները: Սրճարանում նստած՝ դու հանրային տարածքի կենտրոնում ես, միևնույն ժամանակ գտնվում ես քո առանձին մթնոլորտում, մենակ ես գրքիդ կամ ընկերներիդ հետ: Սուրճ խմել նշանակում է մասնակցել սոցիալական կյանքին: Այն տալիս է պատկանելության կգացողություն, երբ անում ես մի բան, որը նաև ուրիշներն են անում:

Պճնամոլների և պորտաբույծների (որոնց դիտում էր Վալտեր Բենիամինը Փարիզի կամարաշարերի միջով պբոսնելիս) չարտոնյալ բարեկամների պես՝ լուսանցք մղվածները նույնպես ցանկանում են դիտել ու դիտվել սրճարաններում: Սրճարանն ապատ ճախրանք է պարգևում ձեր երևակայությանը: Ինչպես Փարիզի կամարաշարքը քաղաքային կյանքի մասին Բենիամինի վերջին հատորում, այնպես էլ այսօրվա սրճարանները երազելու տարածք են, վայր, ուր կարող ես խուսափել ծայրամասային մեկուսությունից, անրջավայր: Սա հնարավորություն է լինել պակաս ներգաղթյալ, պակաս հակառակ սեռից և պակաս չնկատված: Սակայն նաև վայր է, ուր կարելի է հիմնել քաղաքային սուբյեկտիվությունը:

Այս անցանկալի խմբերի ներկայությունը փոխում է հասարակական վայրն ու տալիս քաղաքի կապմաքանդիչ մեկնաբանությունը: Սա գուցե կարող է բացատրել Իրանի կառավարության անհանդուրժողականությունը սրճարանների հանդեպ, որոնք հան-դիպելու վայր են երիտասարդ տղամարդկանց և կանանց համար, քանի որ հենց այստեղ է, որ անձնականը, արգելված սերն ու էրոտիկմը բաց են հասարակական հայացքի առջև:

Այն փաստը, որ Ստոկհոլմի ծայրամասերից երիտասարդներ կամ անձնական սենյակներից թեհրանցի կանայք, թեկուզ ժամանակավորապես, տեղ են գտնում քաղա-քում, հաշվի առնելով, թե ինչ արժի սուրճը սրճարաններում, ներկայացնում է նորմատիվ քաղաքային կարգի քննադատություն և մարտահրավեր է նետում դրան: Քաղաքը փոխելու ավելի քիչ իրավունքներ ունեցող անհատները իրենք են փոխվում՝ փոխելով քաղաքային լանդշաֆտը: Հենց այսպես է, որ սուրճ խմելը կարող է բացահայտել քաղաքի բնավորությունը, ռիթմն ու քաղաքական դինամիկան:

Անհետացող գրախանութներ.
Նամակ Շվեդիայից, Տորոնտոյից և Իրանից

Ես վերադարձա Տորոնտո 2010 թ. մայիսին՝ որպես Տորոնտոյի համալսարանի կողմից հրավիրված դասախոս: Երբ Շվեդիան (որտեղ ապրում եմ) դառնում է կեցության համար անտանելի, իսկ Իրանը (որտեղ ծնվել եմ)՝ չափազանց վտանգավոր, փրկություն եմ գտնում Տորոնտոյում, որն անկասկած էթնիկ բազմազանության առումով աշխարհի քաղաքների առաջատարն է:

Բնակարան վարձեցի համալսարանի հանրակացարանների հարավային թևում, որը մոտ էր Օնտարիոյի արվեստի պատկերասրահին: Իմ ժամանման հաջորդ օրն իսկ, անտեսելով իրերս, որոնք դեռ չէի դասավորել, ճանապարհվեցի դեպի Քուինս Վեսթ կոչվող թաղամասը, որը հայտնի էր իր մշակութային բազմազանությամբ և բոհեմականությամբ: Դա քաղաքի կենտրոնի առավել ազդեցիկ հատվածներից է, ուր 19-րդ դարի աղյուսե փոքրիկ տնակները հպարտ կանգնած են բարձրահարկերի շվաքում: Ինձ այս թաղամասն ամենաշատը, անխոս, դուր էր եկել Pages-ի (էջեր) շնորհիվ, որը Տորոնտոյի լավագույն անկախ գրախանութն էր:

Գրեթե 400 մետրանոց գրախանութն առաջարկում էր պոեզիայի, կոմիքսների, գիտական, գեղարվեստական և արվեստին նվիրված գրքերի խառնուրդ, ինչպես նաև ամսագրերի և պարբերականների ուշադրության արժանի մի հատված: Նոր ստացած գրքերը դրվում էին մուտքի մոտ՝ աջ կողմի վրա, առաջին բաժնում, իսկ դրանց կողքին վավերագրություններն էին: Կողքի սեղանն ամբողջությամբ նվիրված էր պոեզիային, իսկ նրանից հետո գալիս էր կանադացի հեղինակներով ծանրաբեռնված սեղանը: Աջ կողմի պատի վրա ձգվող գրադարակները գեղարվեստական գրականությանն էին նվիրված, իսկ ձախ կողմինները՝ արվեստին և վիզուալ մշակույթին: Պատերի արանքում ազատ տարածքը զբաղեցնում էին գենդերային, ռասայական, փիլիսոփայական, անտրոպոլոգիական թեմաներին և գրաքննադատությանը վերաբերող գրքերը: Pages-ն ավելին էր, քան գրախանութ: Սեփականատերը՝ Մարկ Գալսմանը, որ նաև ամսագրերի խմբագիր էր և ռադիոհաղորդավար, անթիվ մշակութային իրադարձություններ է կազմակերպել և երեք տասնամյակների ընթացքում աջակցել փոքր և անկախ հրատարակչություններին: Pages-ի նվիրվածությունն առաջադեմ արվեստի շարժմանն ակնհայտ էր այն բաժնում, որը «հակամշակույթ» խորագրով էր:

Pages-ը իմ տեսած ամենահիոյակապ գրախանութներից մեկն էր իր լայն ու ոգեշնչող ընտրանիով, երևակայության աշխարհի դարպասն էր: Տորոնտո այցելությունների ընթացքում կանոնավոր կերպով Pages մտնելը պարտադիր էր: Այնտեղ ժամեր եմ անցկացրել՝ մի բաժնից մյուսն անցնելով, գրքեր վերցնելով ու թերթելով: Ցանկացած այդ լավ գրախանութ, եթե այն ունի փոքրածավալ գրքեր, իսկական արկած է:

Այս անգամ, փոքրիկ սրճարանում արագ նախաճաշից հետո և սպասումներով լի, պատրաստվում էի ողջ առավոտն անցկացնել Pages-ում: Բայց Pages-ը չկար: Չէր տեղափոխվել: Փակվել էր: Ընդմիշտ: Մեռել էր, ինչպես ասացին, երբ հարցրեցի շուրջն ու փնտրեցի առցանց: Մի քանի օրվա փնտրտուքից հետո մի նախկին աշխատակից գտա, որ այժմ աշխատում է մոտակա բուտիկում: Նա պատմեց, որ վարձակալության

հանկարծակի կրկնապատկումը վերջին հարվածը եղավ Pages-ի սրտին: Բոհեմական և հակամշակութային այս թաղամասի առևտրայնացվելուն պես մեկը մյուսի հետևից ներխուժել են մոդայիկ բրենդները, ու վարձակալության գինը բարձրացել է: Pages-ի վարձը 15 000 դոլար ամսավճարից շատ արագ դարձել է 30 000 դոլար: Իսկ թաղամաս՝ Pages-ից մի փողոց հարավ, էր ժամանել հսկայական Chapters խանութը, որը պատկանում է Կանադայի ամենամեծ գրավաճառ Indigo Books և Music Inc.-ին, և որի երեք հարկերում խանութից հեռու գտնվող ընկերության աշխատակիցների կողմից ընտրված գրքերը թշվառորեն աննկատ էին մնում գունագեղ ու մոդայիկ խաղալիքների, սուրճի բաժակների, մարմնամարզության պարագաների, մոմերի, շոկոլադի, ջրի տարաների և յոգայի գորգիկների կողքին:

30 տարի նույն տեղում գրքեր վաճառելուց և միջոցառումներ կազմակերպելուց հետո Pages Books and Magazines-ը չկա: Պարսիկները մարդուն կարոտելիս ասում են՝ «տեղդ դատարկ է»: Pages-ի տեղը ուղիղ և փոխաբերական իմաստներով դատարկ է: Խանութից ներս նայելով՝ տեսա դատարկ ցեմենտե հատակը, անջատված հոսանքի լարերը և առաստաղից կախված խողովակները: Կոնկրետ վայրի՝ տեղի դատարկությունը դառը սառնություն ունի: Այն պոռնոգրաֆիկ մերկ է: Ամեն բան աչքիդ առաջ է: Ոչինչ թաքցրած չի: Էլ տեղ չկա գաղտնիքների համար, որտեղ առաջ խցկված գրապահարանները ծածկում էին պատերը, և հավարավոր էջեր «ինչ-որ բան» աչքիցդ հեռու էին պահում՝ գայթակղելով, որ վերցնես իրենցից մեկին ու թերթես:

Pages գրախանութում, տերը՝ Մարկ Գալսմանը

Հաջորդ մի քանի օրերի ընթացքում ես մեծ վշտով ու կսկիծով բացահայտեցի, որ Pages-ը միակ գրախանութը չէր, որ անհետացել էր Տորոնտոյում: Քաղաքի մնացած երեք լավագույն գրախանութները նույնպես չկային՝ This Ain't the Rosedale Library-ն Կենսինգտոն Մարկետում, Հարբորդ փողոցի Atticus Books-ն իր օգտագործած գիտական գրքերի առինքնող հավաքածուով, ինչպես նաև, կրկին Հարբորդի վրա, Women's Bookstore-ը՝ ֆեմինիստական գրախանութը: Women's Bookstore-ն իրականում լրիվ չէր մեռել, ասես կոմայի մեջ լիներ, կենաց-մահու կռիվ տար: Ամբողջ ամառ փորձեր էին արվել նրան կրկին կյանքի կոչելու՝ առցանց գումարի հայթայթման միջոցով և նոր ներդրողներ փնտրելով: Ժամանակ առ ժամանակ ստուգում էի իրենց կայքը՝ վստահ լինելու համար, որ այն դեռ շնչում է, ինչպես ծեր ազգականի հանդեպ ենք ուշադիր, երբ գիտենք, որ նրա օրերը հաշված են:

Դառը սառնությունը դատարկ Pages-ի, որ դեռ ոչ վաղ անցյալում լի էր գաղափարներով, երևակայությամբ, երազանքներով, պատմություններով ու ձայներով, մարդու սիրտ էր ճմլում: Pages-ի անհետանալը նորից բացեց հին վերքերը, ինչպես մի աքսորի տառապանքներն են հիշեցնում մյուսը: Տասնամյակներ առաջ իմ սիրելի գրքերի մի ահռելի մասը քրեականացվել էր Իրանում: Իմ աչքով եմ տեսել, թե ինչպես են երկրի ինկվիզիտոր կառավարության ահից գրքեր վառում ու թաղում: Այդ վառված կամ թաղված գրքերը գաղափարական մանիֆեստներ չէին, ընդամենը վեպեր էին: Դրանց թվում շատերն իմ սիրելիներն էին՝ էթել Լիլիան Վոյնիչի «Բոռը», որի կազմի վրա Ֆրանցիսկո Գոյայի «1808 թ. մայիսի 3-ի մահապատիժները» նկարն էր, Ջոն Սթեյնբեքի «Ցասման ողկույզները», Ջորջ Օրուելի «Անասնաֆերման» և «Հարևանները»՝ իրանցի հեղինակ Ահմադ Մահմուդի ազդեցիկ վեպը: Երեք տասնամյակ անց պարզեցի, որ գրքերի կիզման իմ կենդանի փորձառությունից դեռ չորս տարի առաջ չեխ գրող Բոհումիլ Հրաբալը իր «Չափազանց բարձր մենության» մեջ նման տառապանք է նկարագրել: 1976 թ. հրատարակված այդ վեպը պատմում է այն մասին, թե ինչպես են քրեականացվել գրքերը կոմունիստական բռնապետության ժամանակ: Այդ գիրքը պատմում է Հանտայի ազդեցիկ պատմությունը, որ երկու կրակի արանքում էր հայտնվել՝ գրքի հանդեպ անհագուրդ սիրո և իր աշխատանքի միջև, որն իրենից ներկայացնում էր գրքերի ոչնչացումը թուղթ կտրատող մեքենայի օգնությամբ: Իսկ գրքերի հետ միասին անհետացան նաև գրախանութները:

Իրանում՝ իմ հայրենի Սպահան քաղաքում, նույնպես գրախանութները մեկը մյուսի հետևից անհետացան: Երբ ես դեռահաս էի, «Նորան»՝ «Սեփահան» առևտրի կենտրոնի ամենաներս ընկած մասում մի փոքր գրախանութ, իմ ապաստարանն էր դպրոցից, պատերազմից, հեղափոխական հսկիչներից ու ծնողներիցս, ում անհանգստացնում էր իմ՝ դպրոցական ծրագրին անհամապատասխան գրքերի ընթերցանությունը: Նրանք նաև անհանգստանում էին իմ ապահովության համար: Վաղ 1980-ականներին գիրք կարդալը կարող էր վտանգավոր լինել: Հիշում եմ, ինձ ասում էին, որ որոշ գրքեր թաքցնեմ դասագրքերի տակ, որպեսզի փողոցում ուշադրություն չգրավեմ: Ինձ համար «Նորան» դեպի երևակայության աշխարհ բացվող պատուհան էր: «Նորայում» էր, որ գնեցի համաշխարհային գրականության հոյակապ թարգմանություններ՝ Զոլայի «Հողը», Ստենդալի «Կարմիրն ու սևը», Ռոբերտ Մերլեի «Մահն իմ արհեստն է», Հենրի Ֆիլդինգի «Թոմ Ջոնսը» և Ագաթա Քրիստիի խորհրդավոր վեպերը, ինչպես նաև

պարսկական գլուխգործոցներ՝ Սադեղ Հեդայաթի «Քոռ բուն», Սամադ Բեհրանգիի պատմվածքները, Սիմին Դանեշվարի «Սավուշունը», Աhմադ Մահմուդի «Մի քաղաքի պատմությունը»: «Նորայի» տերերը 20-ն անց երկու երիտասարդներ էին: 1980-ականների կեսերին այն հանկարծակի վերացավ, փակվեց՝ առանց որևէ նախազգուշացման: Իրանում գրքի հետ գործ ունենալը՝ դրանք գրելը, հրատարակելը, վաճառելն ու անգամ կարդալը, երբեք ապահով զբաղմունք չի համարվել: Ես դեռ մտածում եմ, թե այդ երկու երիտասարդների ճակատագիրն ինչպես դասավորվեց՝ բանտ, թե աքսոր:

Այսօր Սպահանում, որն Իրանի երկրորդ ամենամեծ քաղաքն է, և ժամանակին եղել է տունը մի քանի հայտնի պարսիկ վիպասանների՝ Հուշանգ Գոլշիրիի և Ջաաֆար Մոդարես-Սադեղիի, կա ընդամենը մի գրախանութ, որն արժանի է գրախանութ կոչվելու: Մի քանի տարի առաջ դրա տերը՝ միջին տարիքի թոշակառու ուսուցիչ, խղճալի ձայնով ինձ պատմում էր, որ էլ չի դիմանում: Իրանում գրախանութներն անհետանում են ոչ թե բարձր վարձավճարների, այլ պետական ճնշման պատճառով: Թերթերի փակման, ինտելեկտուալների, լրագրողների ու գրողների ձերբակալման հետ մեկտեղ մեծ թվով գրախանութներ են փակվում: Գրախանութներն ապաստարան են մտքի համար, վայր, ուր կարելի է գաղափարներ կիսել, և այդ իսկ պատճառով՝ վտանգավոր են բռնապետության համար: Կենտրոնական Թեհրանի տպագրատուն-գրախանութ «Մորղ-է Ամինի» վրա հարձակվեցին «Աստծո կուսակցության աջակիցները» (Անսար-է Հեզբոլլահ) 1995 թ. օգոստոսին: Պատճառը «Աստվածները երկուշաբթի օրերը ծիծաղում են» գրքի հրատարակումն էր, որը վեպ է միասեռական բասիջիի՝ կինված ուժերի կամավորի մասին: «Աստծո կուսակցության աջակիցները»՝ վիրավորված, որ իրենց կարող էին նույնացնել միասեռականների հետ, նախ ծեծել էին աշխատակազմին, ապա գրքերի վրա բենզին էին լցրել ու հրկիզել գրախանութը: Ոչ ոք չձերբակալվեց, ոչ ոքի չդատեցին: 2004 թ. ձմռանը կանանց գրքերի նշանավոր հրատարակչություն «Ռոշանգարանը» (լուսավորիչներ) հրկիզվեց: 2000-ականի կեսերին, երբ Թեհրանում գրախանութները նաև փոքրիկ սրճարաններ էին ունենում, ուր կային գրասեղաններ, և գրքերի շնորհանդեսներ էին տեղի ունենում, կազմակերպվում էին գրական հանդիպումներ, նրանց վրա իշխանությունների հարձակումներն ավելի ուժգին դարձան: Միայն 2007 թ. Թեհրանում 6 գրախանութի վրա հարձակում է տեղի ունեցել: Իրենց գոյությունը պաշտպանելու համար բազմաթիվ գրախանութներ դադարեցին գիրք վաճառել ու վերածվեցին գրենական պիտույքների խանութների: Որոշները միայն դասագրքեր են վաճառում: Բազմաթիվ լավ, հաճախ նաև «արգելված» գրքեր դուրս են եկել գրախանութների դարակներից և իրենց տեղն են գտել Թեհրանի համալսարանի դիմացի մայթերին: Տխուր տեսարան է պարսիկ և համաշխարհային գրականության լավագույն գրքերը տեսնել կեղտոտ, պատռտված, շպրտած մայթերին:

Կանգնած եմ Pages-ի դիմաց՝ Քուին Վեսթ թաղամասում: Վերջին օրս է Տորոնտոյում, եկել եմ Pages-ի դատարկության մի քանի լուսանկար անելու: Գրախանութից մնացած միակ հետքը աշխատանքային ժամերի նշումն է ձախ դռան վրա՝ առավոտյան 9-ից մինչև երեկոյան 10-ը՝ աշխատանքային օրերին, շաբաթ՝ 10-10-ը, կիրակի՝ 11- 20-ը: Աջ կողմի պատուհանի մեծ ապակուն մի ճերմակ ցուցանակ կա՝ «Տրվում է վարձով»: Դրա տակ մեկ այլ բան է գրված՝ միակը, որ կապում է այս սառը, դառը, դատարկ տարածքը երբեմնի կենսալի, աշխույժ, ոգևորիչ գրախանութի հետ: Հազիվ է նշմարվում: Ինչ-որ մեկը սրտի սիմվոլում գրել է Pages բառը, իսկ դրա կողքը՝ «Ես դեռ լաց եմ լինում քեզ համար»:

Վաղ 1990-ականներին գերմանացի փիլիսոփա Դիետեր Հոֆման-Ակստելմը գրել էր, որ ոչ մի այլ պատկեր ավելի լավ չի կարող բնորոշել աշխարհը, քան սահմանային անցակետում անձնագիր ստուգող ոստիկանը: Եթե այսօրվա աշխարհը ներկայացվեր մեկ տեսարանում, ավելի քան երկու տասնամյակ անց, ապա անկասկած դա կլիներ բեռնատարի թափքում արկղերի ու բեռների արանքում խցկված մարմինների պատկերը:

Աշխարհի հարուստ հատվածը աղքատ հատվածից բաժանող սահմանը նկարելու համար օգտագործվում է ռենտգենյան ապարատ: Այն անտեսանելին տեսանելի է դարձնում և երևան է հանում առանց փաստաթղթերի մարդկանց՝ նրանց, որ ապրում են սահմանի սխալ կողմում. անփաստաթուղթ, անթուղթ մարդիկ, այսպես կոչված՝ անօրինականներին, կամ, ավելի ճիշտ՝ անօրինականացվածներին:

Կարող ենք կարծել, թե անօրինական միգրանտը հար և նման է այլ ճամփորդների, և եղած-չեղած միակ տարբերությունը թուղթ ունեցողի և չունեցողի միջև ընդամենը մի թղթի կտոր է: Ռենտգեն ճառագայթները ցույց են տալիս սպիտակամորթ մարդու մարմինն ու նրա մութ, կասկածելի ծագումը: Մարդկային կերպարը պատկերվում է ոչ միայն առանց հագուստի, այլ նաև՝ առանց իր քաղաքական իրավունքների: Ապաքաղաքականացված կերպար, որ մարմնավորում է այն, ինչ իտալացի փիլիսոփա Ջորջո Ագամբենը անվանել է հոմո սակեռ՝ ապաքաղաքականացված կյանք, մերկ կյանք: Կյանք, որ վուրկ է բոլոր քաղաքական իրավունքներից և, հետևաբար, հարմար է կոհաբերելու համար: Ըստ Կարլ Շմիդտի քաղաքական տեսության՝ ժամանակակից պետության կոնցեպտը ավելի վաղ շրջանի աստվածաբանական իղացքների աշխարհիկացված տարբերակն է: Պետությունը կոհաբերություններ է պահանջում ճիշտ այնպես, ինչպես անցյալում Աստված էր դա անում: Եթե նախկինում գործ ունեինք անհավատների հետ, ապա այսօր նրանք անօրինական միգրանտներն են: Սահմանը հատողներին կոհաբերելը ազգ-պետության պինանոցի բաղկացուցիչ մասն է և նրա ինքնիշխանության ճանաչումն ու ընդունումը:

Զոհաբերվող արարածների վերածված անփաստաթուղթ ճամփորդները պակաս մարդ են: Սահմանը հատողների կենդանակերպացումը լավագույնս ընդգծում է նրանց խոցելիությունը: Այս դաշտում գործածվող եկրաբանությունը լի է կենդանիների անուններով, որ նույնացվում են անփաստաթուղթ ճամփորդների հետ: Զրկված լինելով սահմանը հատելու իրավունքից որպես մարդկային էակներ՝ անփաստաթուղթ ճամփորդները տեղափոխվում են կամ որպես ապրանք, կամ էլ՝ որպես կենդանի:

2015 թ. օգոստոսի վերջերին Ավստրիայի ավտոճանապարհներից մեկում հայտնաբերվեց 71 դիակ մի բեռնատարի թափքի մեջ: 71 մարմին մի կերպ խցկել էին հավի միս արտադրող «Հիգա» ձեռնարկությանը պատկանող փոքրիկ բեռնատարի մեջ: Թափքի երկու կողմերում փակցված են հավերի նկարներ, ինչպես նաև գրված է ձեռնարկության կարգախոսը՝ «Ակնիվ հավ»: Ազատ տեղաշարժվելու նրանց իրավունքը կյանքի կոչվեց միայն այն ժամանակ, երբ նրանք հրաժարվեցին իրենց մարդկային կերպարից և վերափոխվեցին սննդի: Անփաստաթուղթ ճամփորդների ապրանքայ-

նացումը՝ որպես հերթական ծախու ապրանք բազում այլ ապրանքների շարքում, որպես վաճառասեղանին դրվող կենդանու մարմին, երևան է հանում ներկայիս աշխարհի կապիտալիստական և ռասիստական բիրտ կերպարը: Մարդկային մարմինները դարձել են փոխանակման խորհրդանիշ (որպես աշխատուժ՝ արտադրելու համար, որպես սեքս աշխատող՝ հաճույք պատճառելու համար, որպես պարզապես մարմին՝ իր օրգանները տրամադրելու համար), որոնք ծպտվել են մեկ այլ բանի տակ, օրինակ՝ «ավնիվ հավերի»: Հատկանշական է, որ stowaway (անտոմս ուղևոր) եզրը, որ նշում է մարդկանց, ովքեր թաքնվել են ավտոմեքենայում, որպեսզի առանց թույլտվության կարողանան ճամփորդել, պատմական գործածության մեջ վերաբերել է առարկաներին, մասնավորապես՝ մթերքի:

«Արվեստագետն ու քարը» արվեստի երկարատև նախագիծը, որի հեղինակներն էին Մատեո Գիդին և Ջուլիանա Ռակոն, քննում էր ապրանքների և մարդկանց (ան)շարժունակությունը ներկայիս աշխարհում: Արվեստագետները պարզապես հետևում են ինչ-որ առարկայի (7 խորանարդ մետր և 25 տոննա կշռով քար) և մարդու շարժմանը (Իբրահիմ Ջավաբրեհ, պաղեստինցի արվեստագետ), երկուսն էլ Արևմտյան Ափի հարավում գտնվող Առուբ փախստականների ճամբարից էին և ուղևորվում էին Իսպանիա: Մինչ 2015-ի սեպտեմբերի սկզբին քարը հասավ Բարսելոնա, արվեստագետը դեռ մնում էր իր հարկադրված անշարժության մեջ: Նախագիծը բացահայտում է մեր ժամանակների մի ակնառու պարադոքս, որ ընթացիկ գլոբալ ֆինանսական վիճակը առաջացնում է շարժողականության մի տեսակ (ապրանքի և կապիտալի) և միևնույն ժամանակ անօրինականացնում շարժման մեկ այլ տեսակ (միգրանտներ):

Շահրամ Խոսրովիի փախստականի փաստաթուղթը

Շարժման աշխարհում միգրանտները պետք է անշարժ լինեն: Մինչ տեղաշարժման արտոնյալ իրավունքներ ունեցողները անցնում են սահմանները հաղթական, ասես, գլոբալիզմի և կոսմոպոլիտիզմի ոգով արված մի պատկառելի գործողություն, նրանք, որ չունեն թղթեր, դա անում են՝ իրենք իրենց անտեսանելի դարձնելով, դառնալով մի ինչ-որ ուրիշ բան կամ ընդհանրապես տեսանելի չլինելով: Առաջին խումբը հարմարավետ տեղավորված է նավասենյակներում, մինչ մյուս խումբը թաքնվում է բեռնատարներում, գնացքների տակ կամ ինքնաթիռների անվախցերում: Նրանք շարժվում են մթության մեջ և ստվերներում: Նրանք ոչ թե դարպասներով են անցնում, այլ ճեղքերով: Նրանք ոչ թե հատում են սահմանը, այլ մագլցում են պատերի վրայով, սողում են փշալարերի տակով: Անըմբռնելի լարում կա միգրանտների, որ ստիպված են անտեսանելի դառնալ սահմանը հատելու համար, և սահմանի տեսանելիության միջև, որն իրենից ներկայացնում է օրենքն ու պետության ինքնիշխանությունը:

Ճակատագրի հեգնանքով անփաստաթուղթ վբոսաշրջիկները աշխարհին տեսանելի են դառնում միայն, երբ մեռնում են: Մահն է, որ նրանց մյուսների ուշադրությանն է արժանացնում: Նրանց անկենդան մարմինների պատկերը՝ Եվրոպայի ափերում, խեղդված տղամարդկանց, կանանց, ահել ու ջահել՝ փոքրիկ կոնտեյներներում, սա է, որ նրանց տեսանելիություն է հաղորդում, որն իրենք չունեին, քանի ողջ էին:

2013 թ. նոյեմբերին մոտ 350 միգրանտներ խեղդվեցին, երբ նրանց նավակը խորտակվեց Լամպեդուսայի ափերի մոտ: Իտալիայի վարչապետը հայտարարեց, որ բոլոր մահացածներին կշնորհվի Իտալիայի քաղաքացիություն: Միևնույն ժամանակ հանրային դատախազը մեղադրում էր 114 փրկված չափահասների «անօրինական» միգրացիայի մեջ, ինչը նշանակում էր 5000 եվրո տուգանք և արտաքսում: Մահը որակավորում է որակավորում չանցածներին: Երեք տարեկան Ալան Քուրդին, որ քուրդ-սիրիացի փախստական էր և խեղդվել էր Միջերկրական ծովում 2015 թ. սեպտեմբերին, մեկ այլ վառ օրինակ է: Նրա կերպարը շուտով ներկայիս փախստականների ճգնաժամի այլաբանությունը դարձավ: Պատկերը, որում երեխան ծովափին կուչ է եկել սաղմի դիրքում, velcro* կոշիկներով և մուգ կիսատաբատով, դեմքով գետնին, սարսռեցրեց ամբողջ մարդկությանը, ում համար Ալանը անտեսանելի էր եղել: Այժմ նրա անկենդան մարմնի լուսանկարները, որոնք անմիջապես սփռվեցին աշխարհով մեկ, դարձել են խորհրդանիշն այն մարդկանց, որ տառապում են փաստաթուղթ չունենալու պատճառով: Իսկ Կանադայի իշխանությունները, որ մերժել էին նրա ընտանիքի ապաստարանի դիմումը, Ալանի հորը՝ ընտանիքից միակ ողջ մնացածին, բնակության իրավունք են առաջարկել: Մահը որակավորում է որակավորում չանցած ողջերին:

Առանց փաստաթղթի կբոսաշրջիկներին նկարագրելու բառապաշարը լի է նրանց «որակավորում չանցնելը» մատնանշող տերմիններով՝ ան-փաստաթուղթ, թղթակուրկ, ան-պետություն, ան-անձնագիր: Այդ «ան» նախածանցն ու less (զուրկ) վերջածանցը, որ օգտագործվում են արտոնություններից զուրկ կատեգորիաների համար (ներառելով նաև անտուն ու գործազուրկ մարդկանց), նշում են ինչ-որ բանի պակասը՝ որակավորման պակասը, որակի պակասը: Մի կտոր թղթի պակասը պարզապես դառնում է պակասն այն որակավորման, որն անհրաժեշտ է համայնքի անդամ դառնալու համար: Վերը նկարագրված ռենտգենյան լուսանկարին նայելիս տեսանելի է դառնում, որ միգրանտ եզրը (փախստականներն ու ապաստարան փնտրողները ներառյալ) այլևս գոյական չէ: Այն մարդկանց կատեգորիա է, ովքեր ոչ ավելին են, քան իրենց մերկ մարմինները:

Երբ 2015 թ. սեպտեմբերի սկզբներին գրում էի այս տողերը, մի տեսահոլովակ էր շրջանառվում համացանցում: Այն ցույց էր տալիս մի խումբ մարդկանց՝ անփաստաթուղթ ճամփորդների, որ փորձում էին ոտքով անցնել Հունաստան-Մակեդոնիա սահմանը: Սահմանապահները նրանց հանդեպ կոպիտ են վարվում: Մի սիրիացի միջին տարիքի տղամարդ նայում է տեսախցիկին ու ասում.

«Ինչո՞ւ... ինչո՞ւ: Սիրիայում պատերազմ, ինչո՞ւ... Սահմանները փակ, ինչո՞ւ... Ինչո՞ւ: Ինչո՞ւ»:

Ամենուր սարսափելի տեսարաններ տեսնելով՝ նա գլուխը շրջում է, տեսնում տղամարդկանց, կանանց, ահել ու ջահել, որ ոտքով անցնում են մայրցամաքներ, որ փախել են իրենց երկրից ավերիչ պատերազմի պատճառով ու հիմա էլ դեմ են առել ԵՄ ռազմականացված սահմանին, նա ուզում է իմանալ, թե ինչ է տեղի ունեցել: Նրա «ինչու»-ն ոչ միայն անհանգստություն է, ոչ միայն կգացական ռեակցիա Սիրիայում իր տեսած սարսափելի տեսարաններին և եվրոպական սահմաններին, այլ նաև նշանակալի քաղաքական, ինչպես նաև մարդաբանական հարցադրում: Նրա «ինչու»-ն պատմականացվել է: Եվ ոգեկոչում է ուրիշ «ինչու»-ներ՝ արդիականացնելով հիշողություններն ուրիշ աղետներից, ուրիշ իրավակուրկների, ճամփին մնացած ուրիշ անհայրենիք մարդկանց, ուրիշ ճամբարներից, ուրիշ սահմաններից, ուրիշ պարտություններից:

Ամեն դեպքում այս մարմինները, որոնց վրայից հանել են իրավունքները, ողջ թե մեռած, անփաստաթուղթ ճամփորդները շարունակում են բացահայտել ներկայիս սահմանային ռեժիմի սխալները: Քանի դեռ նրանք շարունակում են անցնել այն տեղերով, որտեղով իրենց անցնել չի կարելի, նրանք ցույց են տալիս ներկայիս սահմանային տրամաբանությունը՝ պահպանելու պետության անկարողությունը: Միլիոնավոր մարմիններ, որոնք պետք է անշարժ մնային, տեղում, ոչ թե տեղահան, խրված, ոչ թե ճանապարհին, այնտեղ, ոչ թե այստեղ, շարունակում են ամեն տարի ապօրինի հատել սահմանները: Մարմիններ, որոնք հրաժարվում են ճանաչել կամ հարգել սահմանները՝ ցույց տալով, որ ազատ տեղաշարժն իրականում հնարավոր է, և հորիզոնին պատկերում են այն աշխարհի ուտոպիան, ուր սահմաններ չկան:

Արդյոք առանց սահմանների աշխարհն ուտոպիստակա՞ն է

Ովքեր չեն շարժվում, չեն նկատում իրենց շղթաները:
Ռոզա Լյուքսեմբուրգ

Ուտոպիան երևակայական ապագա է: Այն արդար է և ճիշտ կազմակերպված: Ուտոպիայի կարիքը փախուստ է ներկա ժամանակից՝ դիստոպիական ժամանակից, որը հեռու է իդեալական հասարակությունից: Սակայն դիստոպիան ուտոպիայի հականիշը չէ: Դիստոպիան նույն ուտոպիան է, որը սխալ է գործում. իրավիճակ, որտեղ ուտոպիստական գաղափարները հասանելի և գործածելի են միայն մարդկանց որոշակի խմբի համար: Սա էլ հենց շարժունակության դեպքն է: Ազատ շարժունակությունն արդեն իսկ գոյություն ունի, բայց միայն մարդկանց մի փոքրիկ կատեգորիայի համար, որ վայելում են ազատ շարժվելու հնարավորությունը, մինչդեռ

մարդկանց մեծամասնությունը մնում է սահմանների ներսում և դրանց արանքում: Ներկայիս իրավիճակը դիստոպիական է 45 միլիոն հարկադիր տեղահանված մարդկանց համար, որոնք պիտակվել և դասակարգվել են որպես փախստականներ, ապաստան փնտրողներ, ներքին տեղահանված մարդիկ, անհայրենիքներ: Մեր ժամանակներում առանց փաստաթղթի ճամփորդներին, այսպես կոչված՝ անօրինական ներգաղթողներին, անօրինական ձևակերպված անձանց սպասում է մի մութ ու սարսափելի անախորժություն: Այս դիստոպիան մեր ժամանակակից աշխարհն է՝ կառուցված տեսանելի և անտեսանելի սահմանների վրա:

Սահմաններն ու տեղաշարժվելու սահմանափակումները չեն դադարեցրել կամ նվազեցրել մարդկանց տեղաշարժն ու գաղթը: Սահմանները չեն դադարեցնում շարժը սահմաններից անդին, սակայն դրանք գաղթողների համար շատ ձևերով շատ ավելի թանկ են դարձնում այն: Տեղաշարժման կարգավորումները գործում են ըստ սոցիալական դասակարգման, որը ներառում է սեռական, գենդերային, ռասայական և դասակարգային անհավասարություններ:

Առանց փաստաթղթերի ճամփորդները վճարում են սահմանային վերահսկման գինը ոչ միայն գումարով, այլ նաև իրենց կյանքի գնով: Քանի որ օդային ճանապարհով առանց փաստաթղթերի սահման անցնելը գրեթե անհնար է դարձել, մարդկանց մաքսանենգները օգտվում են ծովային և ցամաքային ճանապարհներից: Ամենաշատ վերահսկվող սահմանային գոտիները շրջանցելու համար մաքսանենգների ուղիները տեղափոխվել են դեպի ավելի վտանգավոր և անհասանելի մասեր: Ամենաhասանելի սահմանային գոտիները փակելը նշանակում է, որ «աշխարհագրությունը կանի գործի մնացած մասը»: Եվ հենց այդպես էլ լինում է:

Հարուստների աշխարհի և աղքատների աշխարհի միջև եղած սահմանները դարձել են մահվան ցուցահանդես: Օրական միջինը 2-3 մարդ է կոհվում եվրոպական սահմաններին, սա թիվ է, որը վերցրած է փաստագրված դեպքերից: Ապրանքները, սակայն, կարող են ազատ տեղաշարժվել: Զարմանալի չէ, որ առանց փաստաթղթերի ճամփորդները թաքնվում են բեռնատարներում և կոնտեյներներում, ապրանքների հետ, ավելի ճիշտ՝ որպես ապրանք, որպեսզի կարողանան անցնել սահմանը: Սահմանները ստիպողական անշարժություն են պարտադրում անցանկալի միգրանտներին: Նրանց տեղավորում են ճամբարներում՝ փախստականների ճամբարներում, տրանզիտ ճամբարներում, կալանավորների ճամբարներում: Ժամանակավոր ճամբարները մշտական են դառնում: Փախստականությունը դառնում է երկարաժամկետ: Առանց փաստաթղթի ապրելը՝ մինչև կյանքի վերջ:

Այս ազգ-պետություն համակարգում բոլոր մարդիկ, ենթադրվում է, որ պետք է պատկանեն ինչ-որ պետության: Սա նաև նշվում է Մարդու իրավունքների ուտոպիստական հռչակագրի 15-րդ հոդվածում՝ բոլորն ունեն ազգության իրավունք: Այս հռչակագիրը, սակայն, լռում է էմիգրանտներին ազգություն շնորհելու պետությունների պարտավորությունների մասին: Այսպիսով, Մարդու իրավունքների հռչակագիրը դրա կարիքն ունեցող անհայրենիք մարդկանց առաջարկում է հնարավոր, սակայն անհասանելի իրավունքներ: Ազգ-պետություն համակարգից դուրս տեղ չկա մարդկության համար՝ մարդու համար, որ օրինական և քաղաքական կարգավիճակներից այն կողմ է:

Անհայրենիքի մշտական վիճակը, գոյատևելը որպես պարզապես մարդ արարած անհամատեղելի է ազգ-պետություն համակարգի հասկացության հետ: Անհայրենիք լինելը դիտվում է որպես ժամանակավոր կարգավիճակ, թեև սերունդներ կարող են այդ կարգավիճակով ապրել: Այդ կարգերից դուրս անձինք, անհայրենիքները, կազմում են հասարակության «մնացորդը»: Միայն այս ազգ-պետություն համակարգում մարդկության դասակարգման այս համընդհանուր ձևը (քաղաքացիության տեսանկյունից) կարող է արդյունքում ունենալ հետևյալ ազդեցությունը՝ ըստ Հաննա Արենդտի՝ «տան և քաղաքական կարգավիճակի կորուստը նույնականացվում է համայն մարդկությունից աքսորվելու հետ»:

Սահմաններն օգտագործում են պետությունները, որպեսզի միգրանտներին բացառման, խտրականության և շահագործման ենթարկեն: Սահմաններն օրինականացնում են պետության խտրական իշխանության գործածումը փախստականների, անփաստաթուղթ ճամփորդների և քաղաքացիություն չունեցող միգրանտների հանդեպ: Սահմանների միջոցով նույնիսկ հնարավոր է քաղաքացիություն ունեցող անձանց դարձնել իբր-թե-քաղաքացի, որոնց իրավունքները կարող են կասեցվել, մերժվել, հետաձգվել և չընդունվել իրենց կրոնի, էթնիկ պատկանելության, մաշկի գույնի կամ դասի պատճառով:

Շվեդական REVA նախագիծը դրա վառ օրինակն է: Նախագիծը գործում էր որպես ներքին սահմանային վերահսկողություն Ստոկհոլմի մետրոյի կայարաններում՝ անփաստաթուղթ ուղևորներին ձերբակալելու նպատակով: Այսպես կոչված՝ անօրինական միգրանտի ռասայականացված կերպարը բազմաթիվ շվեդների (ովքեր ծնվել են Շվեդիայում կամ ապրում են այնտեղ արդեն երկար տարիներ) հիշեցրեց, որ պետությունն իրենց դեռևս չի ընդունում որպես Շվեդիայի իսկական քաղաքացիների: Սահմանները ոչ միայն մարդու, այլև քաղաքացու իրավունքներն են ոտնահարում: Մեկ այլ օրինակ է ռումինացիների արտաքսումը ԵՄ երկրներից, չնայած նրանք նույնպես ԵՄ քաղաքացիներ են հանդիսանում և ունեն իրավունք գտնվելու մեկ այլ ԵՄ երկրում մինչև երեք ամիս: Ռումինացիների արտաքսումը տարբերվում է ԵՄ այլ քաղաքացիների արտաքսումից: Նրանց տեղաշարժն անցանկալի է իրենց էթնոսի և դասակարգման պատճառով: Նրանց տեղաշարժը նման է խառնամբոխի տեղաշարժին: Ինչպես Պոպուդոպոլոսն (Popudopoulos) է ցույց տալիս, շարժունակություն եզրը վերաբերում է ոչ միայն շարժմանը, այլ նաև հասարակ մարդկանց, աշխատավորներին: Ամբոխին: Սահմանները աշխատավորների և ամբոխի շարժը հսկելու գործիքներ են (the mobility of the mob): Սահմանները գործատուներին իշխանություն են տալիս աշխատավորների հանդեպ, քանի որ սահմանները կապիտալիստական արտադրանքի մի տեսակն են: Սահմաններն արտադրում են «լավ աշխատողների»: Որոշ երկրներում, օրինակ՝ Դուբայում, միգրանտ աշխատողների անձնագրերը պահվում են գործատուների մոտ, որոնցով նրանք միգրանտներին զրկում են տեղաշարժվելու հնարավորությունից: Նրանց տեղավորում են աշխատանքային ճամբարներում, քաղաքից դուրս: Նրանց չի թույլատրվում փոխել գործը: Եթե աշխատողը լքի իր գործատիրոջը կամ, այսպես կոչված, հովանավորին, նա անմիջապես դառնում է փախստական կամ օրինազանց: «Փնտրվում է» կարգի հետախուզական հայտարարություններ են հայտնվում օրաթերթերում՝ «փախուստի դիմած» աշխատողների լուսանկարներով: Վիզան

երկարացնելու համար միգրանտ աշխատողները պետք է «աշխատանքային լավ նկարագիր» ունենան: Սահմանները նաև «լավ կանայք» են արտադրում, հլու մարմնավաճառներ և խառնամբոխի այլ անդամներ (Anderson et al 2009):

Այս ամբողջ սահմանային խառնաշփոթը օտարերկրացիների համար է, նրանց, որ երբևէ չեն դադարում լինել օտարերկրացի՝ անկախ այն բանից, թե որքան երկար են բնակվել համապատասխան երկրում, սևամորթների, նախկինում՝ հրեաների, հիմա՝ մուսուլմանների, ռումինացիների և մյուսների, ու բնավ էական չէ, թե ինչքանով են նրանք ինտեգրվել հասարակությանը: Ինչպես ասել է Էտիեն Բալիբարը, սահմանները դարձել են անտեսանելի, դրանք ամենուր են և ոչ մի տեղ: Այսպիսով, անցանկալի մարդիկ չեն արտաքսվում սահմանի կողմից, նրանք ստիպողաբար հենց սահման են դառնում: Հարցն այն չէ, թե ինչ և որտեղ է սահմանը, այլ թե՝ ով է սահմանը:

Սահմանները չեն սահմանափակում տեղաշարժը, դրանք սահմանափակում են իրավունքները: Խնդիրը ոչ թե միգրանտներն են, այլ սահմանները: Սահմանները խտրականություն են դնում: Սահմանները սպանում են: Սահմանները սոցիալական անհավասարություն և գլոբալ անարդարություն են պահպանում և վերարտադրում:

Աշխարհին առանց սահմանների հնարավոր է: Մարդիկ ազատ տեղաշարժվում էին երկար ժամանակ, մինչև դա սկսեց խարանվել և քրեականացվեց: Մինչև այժմ էլ ազատ տեղաշարժվում են նրանք, որ չեն ճանաչում կամ չեն հարգում սահմանները՝ անփաստաթուղթ ճամփորդները: Սահմանի նման անցումը, որը տեղի է ունենում ամեն տարի հարյուր հազարավոր մարդկանց կողմից, ցույց է տալիս, որ ազատ տեղաշարժը հնարավոր է: Եվ մենք պետք է հիշենք, որ միակ տարբերությունը նրանց միջև, ովքեր ունեն փաստաթղթեր, և նրանց, ովքեր դրանք չունեն, հենց այդ թղթի կտորն է միայն:

Ուտոպիստական է միայն հաջողված և արդյունավետ սահմանային վերահսկման գաղափարը: Մեր աշխարհի արտաքին տեսքը, որի յուրաքանչյուր մաս կապված է մյուսին ճանապարհների, լարերի, օդային ուղիների և անձնական կապերի միջոցով, մեզ հուշում է, որ անիրական է սահմանափակել նրանց տեղաշարժը, որ պատրաստ են դա անել: Անիրական է նաև հավատը, թե մենք կարող ենք պահպանել ներկայիս սահմանային վերահսկողությունն ու պաշտպանել ու հարգել մարդու և քաղաքացու իրավունքները: Արմատական փոփոխությունների շնորհիվ տեղի ունենալիք արդյունքների մասին մտածելու փոխարեն՝ մենք երկարացնում ենք տեղահանվածների դիստոպիական իրավիճակը մարդասիրական նորարարությունների միջոցով՝ ստեղծում ենք Եվրոպայից հեռու ավելի մեծ ու ավելի բարեկեցիկ ճամբարներ փախստականների համար, դրամաշնորհներ տրամադրում մարդկանց ապաստարան-ներին, մի քիչ ավելի շատ փող ենք տալիս ՄԱԿ-ի ՓԳՀ-ին:

Արմատական փոփոխությունը չի նշանակում բացել սահմանները, այլ՝ մերժել սահմանների գաղափարն ինքնին: Բաց սահմանները մի օր կրկին կարող են փակվել: Բաց սահմանները ընտրում են և խտրական են: Դրանք մուտքի իրավունք են տալիս նրանց, որ ավելի օգտակար և առավել արդյունավետ են: Սահմանները օտարերկրա-ցիների արժեքը չափելու գործիք են:

Արմատական փոփոխությունը, ի տարբերություն բաց սահմանների քաղաքականու-թյան (ինչպիսի ռոմանտիկ կոսմոպոլիտիզմ), ամբողջովին մերժում է տան և հայրենիքի

գաղափարը: Հենց անտունությունից է ծնվում և հնարավոր դառնում իսկական հյուրասիրությունը: Անտունությունը նշանակում է որևէ տեղ չընկալել որպես տուն: Միայն այդ վիճակում է, որ մարդկությունը կարող է դադարել տեղայնացված լինել, ազգ-պետությանը հատուկ ժանտախտը կարող է անհետանալ և մարդկանց մասին արմատ գցելու «բուսաբանական» մտածելակերպը, անհատների ու տարածքի միջև անքնին կապը կարող է վերանալ: Անտունությունը նշանակում է ապատարածքայնություն, ընդհատություն, փոփոխականություն և դադարներ, որը ազգային ինքնության բուսաբանական կերպարի լրիվ հակապատկերն է: Անտունությունը, որպես հարացույց, որպես աշխարհում գտնվելու մի ձև, որպես կենսակերպ, որպես էթնիկ և էսթետիկ նորմատիվություն, բաց է անում դռներն ու դիմացինին ընդունում՝ ինչպես որ նա կա, այլ ոչ թե ինչպես կուզենար, որ լինի:

«Իսկ ո՞րն է այլընտրանքը», սա է այն հարցը, որը սովորաբար տալիս են՝ փոփոխության հնարավորությունները պիտակավորելու համար: Չափազանց կարևոր է ստեղծել նոր հնարավորություններ հարցերի և քաղաքական տեսլականների համար, ինչպես նաև քննադատական մտքի: Անտունության գաղափարը, առանց սահմանների աշխարհը ոգևորիչ տեսլականն է ավելի լավ ապագայի, քան այն, ինչը սպասում է մեզ այժմ:

* *Velcro Shoes – այլաբանորեն՝ հարմարավետություն և ֆիզիկական գրավչություն ապահովող կոշիկ:*

Յուլիա
Կրիստևա

Թարգմանությունը՝ Նարե Ֆելեքյանի

Հոգեվերլուծաբան, գրող և ֆեմինիստ Յուլիա Կրիստևա(Julia Kristeva) ծնվել է Բուլղարիայի Սլիվեն քաղաքում 1941թվականին: 1966-ին տեղափոխվել է Ֆրանսիա: Հեղինակ է մի շարք գրքերի, բազմաթիվ մրցանակաների դափնեկիր՝ այդ թվում Կանաց ազատության համար Սիմոն դը Բովուար մրցանակի: Դասախոսում է ԱՄՆ-ի և Ֆրանսիայի մի շարք համալսարաններում:

Մայրական կիրքը

Աշխարհիկ մայրության մասին այս հավակնոտ թեման կկարգացնեմ մայրական կրքի դասական ճանապարհով, առանց անտեսելու, սակայն, «աշխարհիկ» բառը: Եթե ավելի պարզ, կխոսեմ հոգեվերլուծությանը վերաբերող սոցիալ-քաղաքական առնվազն չորս թեմաների մասին: Ցավալի է իհարկե, որ հոգեվերլուծությունը առանձնապես չի հետաքրքրվում այդ բնագավառով, այսուհանդերձ հույս ունեմ, որ իմ խորհրդածությունները որոշ չափով լույս կսփռեն մայրական կրքի վրա:

1. Կյանքի մասին գիտություններն ու մանկաբարձությունը օր օրի ավելի լավ են հասկանում հղիության առեղծվածը, որն անցյալում, հենց առեղծված լինելու պատճառով մորը ինչ-որ կորություն էր վերագրում և միաժամանակ տագնապով և հրամայաբար մերժում այն: Այսուամենայնիվ, հղիությունը վերահսկելու ժամանակակից

տեխնոլոգիաների շնորհիվ կամ պատճառով կնոջ բեղունությունը և հղիությունը շարունակում են ոչ միայն հմայել մեր հավաքական երևակայությունը, այլ նաև սրբավանի և նվիրականի ապաստանն են համարվում: Եվ իսկապես, եթե հաշվի առնենք ժամանակակից պահանջները, թերևս «անդինը» լիներ մոր արգանդը, ոչ թե այն, ինչ մեր գլխի վերևում է: Արդյոք մեր օրերում մայրությունը կրոնական կգացմունքի վերապրուկը չէ՞, որ կենսատեխնոլոգիաների կրահապատ շերտի ետևում կորցրել է իր բարոյական պաշտպանվածությունը, սակայն ոչ իր դրախտային սպասելիքները: Եթե մի կողմից իրեական կրոնը և մյուս կողմից՝ չինական փիլիսոփայական ուղղությունները որդեծնության և ընտանիքի արժեքները վենք են դարձրել վիտալիստական[1] այդ աստվածպաշտության դեմ ամեն գնով պայքարելու համար, ապա ի՞նչ մոդելներ է առաջարկում ապակրոնացումը:

2. Սրան զուգահեռ, երեխա ունենալու տնտեսական և անձնական դժվարությունները ազգային համերաշխության մթնոլորտ են ստեղծում. ծնողական արձակուրդի իրավունք երկու ծնողների համար, պարգևավճար յուրաքանչյուր երեխայի կամ միայն երրորդ երեխայի համար. այս և նման այլ հարցեր դեռ շարունակում են մնալ չլուծված և հուզել հասարակությանը: Ի հավելումն այս ամենի՝ մեր օրերում մայրությունը բախվում է նաև համաշխարհայնացումից բխող անհարմարություններին, որը, թերևս, անհնար է դարձնում մարդկային տեսակի վերարտադրության առաջնային խնդրի *քաղաքական* լուծումը:

3. «Հաշմանդամների ազգային խորհուրդ» («Conseil national Handicap»[2]) կազմակերպությունը նախագահելու տարիներին հաճախ եմ առնչվել «խիզախ մայրերի» հետ. մայրեր, որոնց զավակները հաշմանդամ են կամ դպրոցում և, առհասարակ, հասարակությանը մերվելու լուրջ խնդիրներ ունեն: Գաղտնիք չէ, որ սրանք նախևառաջ այն մայրերն են, ովքեր հանձն են առնում մարտնչել առաջին գծում: Սեփական երեխայի անհաջողություններն ու ուրիշներից տարբերվելը, ճիշտ է, ընկճում են մորը, բայց նա նախևառաջ մարտիկ է: Նրան միայն մեկ հեռանկար կարող է հուսահատության մատնել՝ իր մահը. «Ի՞նչ կլինի իմ մահից հետո»: Քանի դեռ մայրը ողջ է, երեխան կապրի հնարավոր ամենաապահով կյանքով: Եվ քանի որ արժեքների բոլորիս հայտնի ճգնաժամը կարծես թե դեռ խնայում է գլխավոր ընդհանուր արժեքի՝ կյանքի կարևորությունը, խիզախ մայրերը մեր օրերում կարծես անկյունաքարը լինեն մի քաղաքակրթության, որն այլևս կորցրել է իր հենքը:

4. Եվ վերջապես Ֆրանսիայում, ինչպես նաև ամբողջ աշխարհում, թերթերը հաճախ խոսում են մայրական հանցագործությունների մասին. մանկապղծություն, որն իհարկե կանանց շրջանում ավելի հազվադեպ է պատահում, սակայն պատահելիս չի խնայում նաև մորը, ինչպես նաև տարատեսակ կոպիտ վերաբերմունք, մանկասպանություն, սառցախցում պահված երեխաներ և այլն: Մայրության և հղիության այս համատարած մերժման մթնոլորտը հասարակության հետ ոչ մի առերևույթ «խնդիր չունեցող» մայրերի շրջանում ծնունդ է տալիս «օբյեկտային հարաբերության»[3] սովորական դարձած աղետին, որին, ըստ ամենայնի, մայրերը հեշտորեն համակերպվում են. այլասերումն ու պսիխոզը սովորական երևույթներ են դարձել, որ մայրությունը ո՛չ փորձում է բացատրել, ո՛չ էլ սուբլիմացնել[4], այլ ընդհակառակը, քողարկում, նույնիսկ խթանում է դրանք:

Վերը նշված այս չորս թեմաների կողքին մեկ թեմա ևս պետք է դիտարկել. *մայրական կիրքը*: Ֆրոյդից և Լականից[5] հետո հոգեվերլուծությունը սկսեց հետաքրքրվել հոր դերով՝ նրա կարևորությամբ, թուլություններով և այլն: Այն տպավորությունն է, որ փիլիսոփայությունն ու հոգեվերլուծությունը մոր դերով առանձնապես չեն հետաքրքրվում, թերևս այն պատճառով, որ այն ոչ թե դեր է, այլ *կիրք*: Այս հարցի շուրջ իր մտորումներում Վինիկոտն[6] ավելի հեռուն է գնացել, քան Ֆրոյդը, և իր առաջարկած «բավականին լավ մայր»[7] տերմինը ինչ-որ առումով խուսափում է մայրական կրքի լծից: Անդրե Գրինն[8] իր աշխատանքներում ավելի խորացրեց «մայրական խելագարության» վերլուծությունը, նրա բակում կոլեգաները՝ ի թիվս այլոց նաև Իլզե Բարանդեն[9], Ֆլորանս Գինյարը[10], Ժանին Շասգե-Սմիրգելը[11], ևս բազմաթիվ գործեր են հրատարակել այդ թեմայով: Այսուամենայնիվ, պետք է խոստովանել, որ նույնիսկ հիմա՝ Ֆրոյդի ծննդյան 150-ամյակին, մենք պարադոքսալ ձևով դեռ նոր մայրցամաք հայտնաբերած լինելու փուլում ենք:

Այս ամենից ելնելով՝ կարող եմ ենթադրել, որ եթե ժամանակակից մշակույթը և հատկապես լրատվամիջոցները «ողջությունը և դրան հատկացվող օգնությունը գերագույն արժեք են դարձնում», ապա դրա միակ նպատակը այդ մայրական կրքի մասին հարցադրումներից խուսափելն է. կրքի միակ տեսակը, թերևս, որ վիրտուալ չէ, և որևէ մանիպուլյացիայի չի ենթարկվում, այլ, ընդհակառակը, սիրային կապի նախատիպն է, որ կա: Կրոնների արժեզրկմանը կամ, ընդհակառակը, բռնկուն վերելքին բախվող մեր ժամանակակից աշխարհում այդ կապը համարվում է միակ «սրբությունը»: Ավելի հեռուն գնալով՝ կասեմ նույնիսկ, որ մայրական կիրքն այնքան խրթին թեմա է, որ մայրերն իրենք են ենթագիտակցաբար մասնակցում դրա քողարկմանը. նրանք նախընտրում են սրբացնել կնոջ արգանդը, շահարկել «կատարյալ երեխային», «արքա երեխային» և դա ծառայեցնել ի նպաստ իրենց շահերի, քան լույս սփռել այդ կրքի սպառնալիքների և օգուտների վրա, որոնք վերաբերում են նախևառաջ իրենց՝ մայրերին, ապա նաև երեխային, հորը և հասարակությանը: Ենթադրում եմ՝ արդեն պարզ է, որ մայրության կենսաֆիզիոլոգիական, տնտեսական և գաղափարական կողմերը քննելու համար, ինչի մասին ընդհանուր գծերով խոսեցի նախաբանում, ամենաընդունելի ճանապարհին այդ կրքի երկակիությունն ընդունելն է:

Արդյոք ի վիճակի՞ ենք մայրության կենսաբանական, սոցիալական դրսևորումներում և, հատկապես, մեդիաոլորտում իշխող մայրական կրքի համատարած մերժումը փոխարինել այդ երևույթի գիտակցված ուսումնասիրությամբ և վեր հանել դրա սպառնալիքներն ու օգուտները: Ես՝ որպես մայր, հոգեվերլուծող և գրող, կարծում եմ, որ մայրությունն այսօր այս հարցի պատասխանին է սպասում: Եվ ուրեմն կփորձեմ ապացուցել, որ մայրությունը «բնազդ» չէ, որ այն չի սահմանափակվում «երեխա ունենալու ցանկությամբ» (Մարիլիա Այզենշտայնը[12] բոլորովին վերջերս վերլուծության է ենթարկել «երեխա չունենալու ցանկությունը», կխնդրեմ չշփոթել ինքնահիացական մերժման հետ, որ երեխային համարում է «վատ օբյեկտ», «մասնակի օբյեկտ», ինչ-որ արտաթորանք, որ արագ պետք է հեռացնել, կամ ֆետիշ, որին պետք է մումիֆիկացնել): Ես կփորձեմ ապացուցել, որ մայրական կիրքը վերանվաճման պես մի բան է, քանի որ շարունակ բացատրում-սուբլիմացնում է կյանքի և մահվան ազդակները, որ մեզ ուղեկցում են ամբողջ կյանքի ընթացքում և նույնիսկ մահվանից հետո:

I. Ի՞նչ ենք հասկանում *կիրք* ասելով: Նախնական պատկերացում տալու համար կսկսեմ *հուզական կրքից*: Մայրությունը կրքի այն տեսակն է, երբ *հույզերը* (*կապվածության* և *ագրեսիայի* զգացում սաղմի, նորածնի, երեխայի հանդեպ) վերափոխվում են սիրո զգացմունքի (իդեալականացում, համատեղ երկար կյանքի պլաններ, նվիրվածություն և այլն)՝ համեմված *ատելության* մեղմացված զգացմունքով: Մայրը հղիության առաջին իսկ վայրկյանից սկսած հայտնվում է կենսաբանության և իմաստի խաչմերուկում. մայրական կիրքը երեխայի հետ կապը չի բացատրում միայն *կենսաբանական* տեսանկյունից և աստիճանաբար սուբլիմացնում է հարձակվողական և ագրեսիվ տրամադրությունները:

Մայրական կիրքը երկակի է. այն ի սկզբանե ձևավորվել է կենսաբանության և իմաստի ակներև, նույնիսկ դժվարին միաձուլումից: Այդ երկակիությունն իր հոգեկան արտահայտությունը գտնում է հղի կնոջ՝ ինքն իր հանդեպ տածած ինչ-որ իմաստով անտանելի կրքի մեջ: Այդ երկակի կիրքը ծնունդ է առնում հղիության հենց սկզբից, քանի որ հղի կնոջ մոտ ինքնազմայլումը միաժամանակ և՛ ամրապնդվում է, և՛ կորցնում իր կայունությունը. երբ հայտնվում է սիրեկանը՝ իր երեխայի հայրը, մայրն արդեն որոշ չափով կորցնում է սեփական ինքնությունը և, ի հավելումն դրա, երկատվում է՝ արգանդի մեջ ապաստան տալով այդ երրորդ անծանոթին, այդ անկերպ *նախաօբյեկտին*: Այլ կերպ ասած՝ իր նախնական փուլում մայրական կիրքը, որի վրա իշխում է ինքնազմայլումը, եռանկյան պես մի բան է. այսուհանդերձ, այն իր ներշնչանքը գտնում է այդ նախաօբյեկտի՝ սաղմի մեջ, որի անորոշ կարգավիճակը (որն է՛լ ավելի է ծանրանում ժամանակակից կենսատեխնիկական միջամտությունների արդյունքում) հղի կնոջը մտորել է տալիս սեփական անձի, նույնիսկ սեփական մարդկայնության սահմանների մասին:

Կարիք չկար, սակայն, սպասելու ցողունային բջիջների և նախածննդական գենետիկ հետազոտություններին, որպեսզի հասկանայինք, որ հղի կինը ապրում է կենսաբանության և իմաստի խաչմերուկում: Իտալական Վերածննդի տիրամայրերի բացակա հայացքը կամ ներքև խոնարհած աչքերը, օրինակ՝ Ջովաննի Բելլինիի[13] գործերում, վերստին ապացուցում են այն, ինչ մեզանից շատերն արդեն գիտեն. հղի կինը «նայում է» առանց «տեսնելու», ո՛չ իր երեխայի հորը, ո՛չ էլ շրջապատող աշխարհը. նա այլ տեղում է:

Այս առաջին փուլում կիրքն ուղղված է դեպի ներս, դեպի ոչինչը: Սրան հաջորդում է երկրորդ փուլը, երբ մոր կրքի առարկան այդ նոր սուբյեկտն է, որ հետո իր երեխան է դառնալու՝ պայմանով, որ այլևս չընկալվի որպես մոր «լավ» կամ «վատ» շարունակությունը, և որ մայրը նրան սկսի իրենից առանձին գիտակցել՝ այդպիսով երեխային հնարավորություն տալով դառնալու անկախ, ինքնուրույն էակ: Վտարման, ազատ թողնելու այս շարժումը առանցքային նշանակություն ունի: Սա նշանակում է, որ մայրական կիրքն ի սկզբանե իր մեջ կրում է նաև բացասումը: Ուրիշի հետ հարաբերվել սովորելու ընթացքում, ինչը հենց մայրությունն է, մայրը երկու իրարամերժ շարժումների թակարդում է հայտնվում. միաժամանակ վտարումի ուժգին զգացումը (Մելանի Քլայնի[14] «պրոյեկտիվ նույնականացումը», որի միջոցով անձը ներթափանցում է ուրիշի մեջ՝ նրան տիրանալու, վերահսկելու կամ վնասելու համար, և որը նկարագրում է մոր և երեխայի կապը և՛ մոր, և՛ երեխայի տեսանկյունից) և այդ վտարման դանդաղումը, որը աֆեկտը վերափոխում է քնքշանքի, հոգատարության և բարեհաճության:

Այն, ինչ հիմա կասեմ, թերևս կայրացնի շատերին, բայց, իմ կարծիքով, եթե կինը չունի

մայրական երկդիմի կրքի փորձառությունը (ինքնավմայլում, որին սպառնում է մոլագարային ամենակարողությունը, օբյեկտի հետ պրոյեկտիվ նույնականացում, որն այնուհետև սուբլիմացվում և վերածվում է քնքշանքի), նա մեծ դժվարությամբ է կապ հաստատում տղամարդու հետ, և առհասարակ ուրիշ մարդու հետ, չի կարող ուրիշին սիրել այնպես, որ վերջինս չտարրալուծվի այդ օսմոտիկ[15] հույզերի մեջ (կապվածություն/թշնամանք) կամ չմատնվի կատարյալ անտարբերության (կսպվածություն, երկատում):

Նշեմ, որ մայրական կիրք ասելով՝ նկատի ունեմ այդ փորձառության կառուցվածքային կողմը, խոսքը միայն կենսաբանական մայրերի մասին չէ. բացառված չէ, որ ինքնավերլուծական մտորումները կնոջը թույլ տան ամբողջությամբ կգալ մայրական կիրքը առանց հղիության և ծննդաբերության փուլերով անցնելու (երեխա որդեգրելով, փոխնակ մայրերի օգնությանը դիմելով, տեխնիկական գալիք բացահատումների միջոցով կամ բոլորովին այլ ճանապարհներով, ինչպիսիք են, օրինակ՝ դասավանդումը, դաստիարակչական և խնամակալական աշխատանքները, հանրօգուտ գործունեությունը): Քաղաքակրթության ներկայիս փուլում շատերի համար (քանի դեռ «արհեստական արգանդ» չի ստեղծվել) կյանք տվողի մայրական կիրքը շարունակում է համարվել սիրային հարաբերությունների նախատիպը:

Ֆրոյդը վստահ էր, որ «սիրի՛ր մերձավորիդ, ինչպես քո անձը» բանաձևը մոլորություն է, Ավետարանի անիրականանալի պատգամը: Եվ իսկապես, այդպիսի սերը հնարավոր է միայն Սուրբ Ֆրանցիսկոսի[16] և նրա պես մի քանի սակավաթիվ միստիկների համար: Ինչ վերաբերում է ինձ՝ ես այն հավակնոտ կարծիքին եմ, որ «սիրի՛ր մերձավորիդ, ինչպես քո անձը» աղերսներ ունի Վինիկոտի սահմանած «բավականին լավ մայր» առեղծվածի հետ, որն ավելի դժվարըմբռնելի է, քան հղիության հանելուկը, և երեխային թույլ է տալիս ստեղծել մի անցումային տարածք, որտեղ նա կարող է ինքնուրույն մտածել: Իրականում ինքդ քեզ սիրելը հեշտ բան չէ, նույնիսկ անհնար է, կամ էլ մեծ ողբերգություն: Այսուհանդերձ «բավականին լավ մայրն» իր երեխային կարողանում է սիրել նախ ինչպես ինքն իրեն, իսկ հետո՝ ինչպես ուրիշ անհատի:

Մշակութային պլանում ես նկատել եմ, որ «կնոջ հանճարը» (թեկուզև մայրական փորձընկալումից անկախ, նույնիսկ իրարից այդքան տարբեր Հաննա Արենդտի[17], Մելանի Քլայնի կամ Կոլետի[18] կանացան ձեռնարկումներում) հոգեկան կյանքի առաջին իսկ վայրկյաններից սկսած վկայում է օբյեկտի հետ կապի գոյության մասին՝ ի տարբերություն Ֆրոյդի այն կանխադրույթի, որ աշխարհ գալու վայրկյանից սկսած ձևավորվում է առանց հստակ օբյեկտի ինքնավմայլում, և ի տարբերություն «տղամարդու հանճարի» (փիլիսոփաներ, արվեստագետներ), որն ավելի շատ տրվում է սոլիպսիստական[19] հմայքին և սուբյեկտիվ տվայտանքներին որպես այդպիսիք: Դա հաստատվում է նրանով, որ կնոջ, առավել ևս՝ մոր փորձընկալման մեջ հոգեկան կյանքի հենց ամենասկզբից հայտնվում է այդ Ուրիշը, և դրանում ոչ մի հովվերգականություն չկա: Նախնական օբյեկտային հարաբերությանը բնորոշ է անկայունությունը, որ ամեն վայրկյան սպառնում է դառնալ մոլագար խանդաղատանք, դեպրեսիայի կամ ագրեսիայի պատճառ. պրոյեկտիվ նույնականացում սեփական անձի կամ նրա՝ օբյեկտի հետ:

Այսուամենայնիվ, այս դրաման նաև դրական կողմ ունի, քանի որ կիրքը մորն ամուր կապերով կապում է ուրիշին, նրա մեջ սերմանում է ոչնչացնող կիրքը, որ բոլոր տեսակ

հարաբերությունների հիմքն է, որ մայրությունը (և հատկապե՛ս մայրությունը) արտացոլում է ամբողջությամբ (ես նրան սիրում եմ և ես նրան ատում եմ): Հետևաբար մայրությունը, իր սիրո և ատելության պոռթկումներով կարող է հայտնվել ծայրահեղ հոգեվիճակների և այլասերման սահմանում: Ես համամիտ եմ իրարից այնքան տարբեր երկու գրողների՝ Ֆրանսուա Պերիեի[20] և Անդրե Գրինի հետ, երբ նրանք պնդում են, որ մայրությունն ապահով ապաստան է կնոջ սեքսուալության համար իր այլասերումներն ու պսիխոզները ապրելու: Բայց միևնույն ժամանակ այն խելագարությունը փոխակերպելու միջոց կարող է լինել: Հետևաբար մայրությունը գալիս է բացատրելու կնոջ այլասերվածությունն ու պսիխոզները, որոնց համար հղիությունը պարարտ հող է ստեղծում, նույն կերպ, ինչ հավատալու պահանջը ծնունդ է տվել նախակրոնական փորձերին, կամ էլ աշխարհի բազմազանությունը մինչքաղաքական փորձառության առիթ է դարձել:

II. Եվ իսկապես, երեխայի մարմինը և նրան պատկանող իրերը ֆետիշացնելը, տրամադրության փոփոխությունները, մոլագարային վիճակները (խոսքը վերը նշված հանցագործությունների մասին չէ, բայց դրանք գործելու հնարավորությունը շատ մեծ է) հաճախ պատճառ են դառնում, որ կիրքը մորը վրկի մտածելու ունակությունից:

Այսուհանդերձ, մեծ մասամբ մայրական կրքի ինչ-որ օտարացում-չեկոքացում է տեղի ունենում, և հենց դրանից էլ մայրական սերը ստանում է իր կենսական ուժը և պայմանավորում մեր տեսակի ճակատագիրը: Եվ քանի որ մայրերի մեծ մասը ինքն իրեն չի վերլուծում, պետք է խոստովանել, որ մայրական փորձառության հենց կառուցվածքի մեջ ինչ-որ բան կա, որ խթանում է կրքի նյութափոխանակությունը այն չեկոքացնելու ճանապարհով: Ձեզ առաջարկում եմ դիտարկել մայրական կրքին ներհատուկ երեք գործոն. հոր տեղը, ժամանակը և լեզուն: Հոր կամ հորը փոխարինողի դերի մասին չեմ խոսի: Այդ թեման քննել են մայրությանն անդրադարձած գրեթե բոլոր հոգեվերլուծողները: Մի քանի խոսք կասեմ միայն մայրական կրքի լեզվի և ժամանակի մասին:

II. Ա. Ենթադրվում է, որ երբ երեխան աստիճանաբար սկսում է բացահայտել լեզուն, մայրը նրա հետ միասին լեզուն սկսում է նորից սովորել: Պրոյեկտիվ նույնականությամբ մայրը տեղավորվում է երեխայի բերանում, թոքերում, կերակրափողում և, մեխանիկորեն կրկնելով նրա բառերը, երեխային ուղղորդում է դեպի նշանները, նախադասություններն ու պատմությունները, և նորածինը դառնում է երեխա, խոսող սուբյեկտ: Բոլոր մայրերն այս ճանապարհով յուրովի իրականացնում են պրուստյան «կորսված ժամանակի»[21] փնտրտուքները: Իր երեխայի լեզվով խոսելով՝ կինը քայլ առ քայլ հաշտվում է «չհամընկնումների» հետ (ինչպես կոգնիտիվիստներն[22] են ասում), նա սկսում է ընդունել աֆեկտը ճանաչողությունից բաժանող անդունդը, մի բան, որի պատճառով հիստերիկներն անվերջ տառապում են:

II. Բ. Ինչ վերաբերում է ժամանակին, որ արևմտյան փիլիսոփայական միտքը միշտ կապում է մահվան հետ (այս միտքը մորն էլ երբեք հանգիստ չի տալիս), մոր դեպքում այն նույնացվում է սկզբի հետ: Իհարկե, և՛ հայրը, և՛ մայրը գիտակցում են, որ բեղմնավորումն ու ծնունդը ինչ-որ բանի սկիզբն ազդարարող գործողություններ են, բայց մոր պարագայում այդ գիտակցումն ավելի ընդգծված է, քանի որ այդ

գործընթացին նա մասնակցում է սեփական մարմնով: Մոր համար այդ նոր սկիզբը, այսինքն՝ ծնունդը, մահվան դեմ պայքար չէ միայն: Փիլիսոփաները մեզ սովորեցրել են, որ ազատությունը կարգը խախտելը չէ, ինչպես կարող ենք միամտաբար կարծել, այլ ինչ-որ բան նորից սկսելու կարողությունն է: Վինիկոտն ասում էր, որ երեխան ուզում է արգանդից դուրս գալ և աշխարհ մտնել, երբ բավականաչափ ազատ է շարժվում, որոշակի ավարտուն տեսքի է բերում իր կենսաֆիզիոլոգիական զարգացումը և որոշ չափով ինքնուրույն է դառնում: Ըստ նրա՝ սկիզբն ու ինքնուրույնությունը նույն վիճակի երկու կողմերն են: *Մոր ժամանակը* միշտ բախվում է այդ սկզբին կամ սկիզբներին, եթե նա լույս աշխարհ է բերում մի քանի երեխա կամ էլ թոռներ է ունենում: Այն միտքը, որ մեր պարգևած կյանքը վաղանցուկ է, ինչ խոսք, տագնապալի է, բայց տագնապը չքանում է, երբ ամեն անգամ ապրում ենք ինչ-որ բան նորից սկսելու անհարատև բերկրանքը: Մայրական այս փորձընկալմանը ես տալիս եմ ժամանակ անունը, որը ո՛չ հպանցիկ ակնթարթն է, ո՛չ էլ ժամանակի անդառնալի հոսքը (որը, ի դեպ, տղամարդուն ավելի է հուսահատեցնում, քան կնոջը), այլ տևականությունն է՝ շնորհիվ նոր սկիզբների: Ազատ լինել նշանակում է նորից սկսելու քաջություն ունենալ. սա՛ է մայրության փիլիսոփայությունը:

Ֆալլոսային ինքնաբավարարո՞ւմ: Մահվան ժխտո՞ւմ: Ցնորական հորիկոննե՞ր: Այս բոլոր ածանցյալները ընկած են մայրական կրքի հիմքում: Մայրական կրքի ժամանակը կարող է նաև այդ միակ օբյեկտի հանդեպ տածած կիրքը չեզոքացնող արժեք լինել՝ այսպիսով ծնունդ տալով մոր ազատությանը: Բոլորիս համար ակնհայտ է, որ, մարդկային կրքի նախատիպը լինելով հանդերձ, մայրական կիրքը նաև այդ կրքից ձերբազատվելու նախատիպն է, որ ասուն էակին հնարավորություն է տալիս հեռավորություն պահպանելու իր երկու դահիճներից՝ սեռական հակումներից և օբյեկտից, որոնք նաև իր կրքի երկու հենքերն են:

Ասածս բողոքի ալիք կբարձրացնի, բայց ես կարծում եմ, որ «բավականին լավ մայրը» առանձնապես ոչ ոքի չի սիրում. նրա կիրքը մարում է և վերածվում չեզոքության, որն էլ և կոչվում է հանգստություն, և չի դառնում հրեշային զգացում (չնայած դա էլ բացառված չէ): Հանգստության այս զգացումը մենաշնորհային կապեր չի ստեղծում, այն բաց է ամեն ինչի առաջ: Կոլետը նկարագրում է իր պատկերացումների իդեալական մորը՝ Սիդոյին[23]: Սիդոն այն կինն է, որ չի գնում սեփական դստերը տեսնելու, քանի որ նախընտրում է նայել, թե ինչպես է կակտուսի կոկոնը բացվում: «Բավականին լավ» մի մայր, որ բացի փթթումից չի սիրում ոչինչ և ոչ մեկի: «Հնարավոր փթթումը, արևադարձային ծաղկի սպասումը կասեցրել էր ժամանակի ընթացքը և լռություն տարածել ամենուր, նույնիսկ իր սրտում, որ ստեղծված էր սիրելու համար»: Բացատրեմ. եզակի կրքի սահմանները նրա համար շատ նեղ են, տիեզերական սկիզբն է նրա կրքի սահմանը: Մենք գտնվում ենք մայրական կրքի ներքին պարանոյայի սահմանին: Եթե կրկնենք Ֆրոյդի խոսքը կնոջ տեսանկյունից, «բավականին լավ մայրը» կասեր. «Ես հաջողության հասա այնտեղ, ուր պարանոյիկը ձախողվել է»: Եվ իրոք, Կոլետի մայրը *հաջողության է հասնում,* նույնիսկ եթե չի գնում դստերը տեսնելու: Նա չի վախենում, որ իրեն կլքեն, քանի որ իր դստերը փոխանցել է լեզվի հանդեպ տածած սեփական կիրքը: (Սիդոն հիասքանչ նամակներ է գրել դստերը: Կոլետը նույնիսկ ասում է, որ ընտանիքի գրողն իր մայրն է, ոչ թե «մեծն Կոլետը»): Կիրքը լեզվի միջոցով

փոխանցելու կարողությունը չէ՞ր նշանակի արդյոք ավելի անբռնադատ և հովանավորող ներկայություն, քան դաստիարակչուհի մոր ֆիզիկական ներկայությունը դստեր կողքին, որն այդպես էլ չէր անկախանա իրենից:

III. Այսպիսով, աստիճանաբար հասա մայրական կրքի սուբլիմացման ունակությանը: Իրականում մայրական կիրքն անվերջ սուբլիմացվում է, որի շնորհիվ երեխայի մոտ կարգանում է ստեղծարարությունը: Հոր ներկայությունն ու մայրական անակլիզիսը[24] հավասարապես կարևոր դեր են խաղում երեխայի մոտ լեզվի և մտքի կարգացման գործում: Ինչպե՞ս դա հնարավոր կլիներ, եթե կանայք ընդունակ չլինեին սուբլիմացվելու, որի մասին Ֆրոյդը նուրբ ակնարկներ է արել: Հոգեվերլուծության հայրը կանանց այդ հատկությունից զրկելու անզգուշությունն է ունեցել՝ թերևս նկատի ունենալով նրանց հիստերիկ դյուրագրգռությունը: Մինչդեռ, ի տարբերություն հիստերիայի, մայրական կիրքը լիբիդոն փոխակերպում է ճիշտ այնպես, ինչպես քնքշանքը թուլացնում է կույտ սեռական ձգողականությունը, մինչդեռ ինքնագնահատական և մելամաղձոտ խանդավառությունը և նույնիսկ ամենազոր «մայրական խելագարությունը» ընկրկում են մի երևույթի առաջ, որը կկոչեմ սուբլիմացիայի բոլորապտույտ, որտեղ հայտնվելով մայրը սկսում է իրեն տարանջատել նորածնից:

Ֆրոյդը սուբլիմացիայի կարգացման բոլորապտույտն ուսումնասիրել է սրամտության ձևակերպման և դրա ընկալման միջոցով: Եվ իսկապես, սրամտության հեղինակը չեզոքացնում է սեփական աֆեկտները՝ հաղորդելով միայն իր մակերեսային միտքը. նա մի կողմ է թողնում իր սեռական հակումները ու թաքուն մտքերը և կենտրոնանում է միայն իր զրուցակցի ռեակցիայի վրա: Խոսողի հաճույքը կրկնապատկվում է, երբ զրուցակիցը հասկանում է ասվածի թաքնված իմաստը: Բայց, ուշադրությո՛ւն, սա թակարդ է: Զրուցակիցն էլ իր հերթին է մեծ բավականություն զգում այն մտքից, որ իր հասկանալը նկատել են:

Սուբլիմացիայի այս բոլորապտույտը ուղիղ համեմատական է նրա հետ, ինչ տեղի է ունենում, երբ մայրն ու երեխան խոսքեր և մտքեր են փոխանակում, որի ընթացքում բառերով կամ ձայնարկություններով «առեղծվածային նշանակիչներ են»[25] արտաբերում: Մայրը ասպարեզից հեռացնում է սեփական սեռական հակումները և ուշադրությունը կենտրոնացնում միայն երեխայի ռեակցիաների վրա: Խրախուսում է, երբ երեխան սկսում է պատասխանել իրեն, չի կենտրոնանում իր ասածի վրա, միակ կարևոր բանը երեխայի պատասխանն է: Երեխայի պատասխանը փառաբանելով և խրախուսելով՝ մայրն ավելի խոր բերկրանք է ապրում:

Եթե նկատում եք, սուբլիմացիայի այս բոլորապտույտը վերծ չէ մայրական խոսքի և վարքի սուբլիմացված այլասերությունից, քանի որ մայրը թուլացնում է իր ինտելեկտուալ և հոգևոր անմիջական ազդեցությունը երեխայի վրա, որպեսզի ավելի խորությամբ զգա մարմնի ազատումի բերկրանքը, և ստանձնում է իմաստը փոխանցողի դերը, որը և պետք է երեխային «սրամիտ» դարձնի: Ա՜յ քեզ մայր: Այսպե՛ս է նա սուբլիմացնում իր երկդիմի կիրքը և երեխային հնարավորություն է տալիս ստեղծելու իր սեփական լեզուն, ասել է թե՝ ընտրելու մոր լեզվին օտար, մեկ այլ լեզու կամ էլ պարզապես օտար լեզու:

Նրանք, ովքեր հավակնում են կարծելու, թե մայրական կիրքը զուրկ է հումորից, չարաչար սխալվում են. եթե մայրերին հաջողվում է երեխայի վրա ունեցած իրենց

ինտելեկտուալ և հոգևոր ազդեցությունը փոխակերպել սրամտության հետ աղերսներ ունեցող սուբլիմացիայի բոլորապտույտի՝ այսպիսով նպաստելով մտածելու հաճույքին, ապա նրանք՝ մայրերը, գալիս են ապացուցելու Հեգելի այն միտքը, որ կանայք «*համայնքի հավերժ հեգնանքն են*»:

Այլ կերպ ասած՝ կրքի աստիճանական չեկոքացման և/կամ սուբլիմացվելու իր հատկության շնորհիվ մայրը երեխային թույլ է տալիս իր ներսում պահել և վերարտադրել ոչ թե մորը («ոչինչ չի կարող ներկայացնել մայրական օբյեկտը», գրում է Անդրե Գրինը), այլ *մոր բացակայությունը*. բայց սա հնարավոր է միմիայն այն դեպքում, երբ մայրը երեխային շնորհում է մայրական միտքը սեփականացնելու և որպես իր սեփական միտք վերարտադրելու ազատությունը: «Բավականին լավ մայրը» թերևս նա է, ով գիտի մի կողմ քաշվել՝ իր տեղը զիջելով հաճույքին, և ստեղծել մի տարածք, ուր երեխան կկարողանա ինքնուրույն մտածել և ստեղծել իրեն՝ մորը:

Այսպիսով, տեղի է ունենում ինչ-որ առումով խորհրդանշական մայրասպանություն (մատրիցիդ), քանի որ երեխան, խոսել և մտածել սովորելով, հաճույք զգալու համար մոր մարմնի կարիքն այլևս առանձնապես չի ունենում: Երեխայի միակ հաճույքը դառնում է մտածելը, նախ՝ մոր հետ և նրա օգնությամբ, ապա՝ աստիճանաբար մենակ՝ առանց մոր: Սակայն սա հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ մայրը մասնակցի իր սեփական խորհրդանշական մայրասպանությանը: Սա ենթադրում է, որ մայրը ոչ միայն չեկոքացրել է սեփական մոր հետ ունեցած իր կապը և իրենից դուրս, այլ էակի գոյության ժխտումը՝ որպես ինքնասիրահարվածության հետևանք, այլ նաև, որ երեխային ուղղված իր ուղերձը ոչ թե մտավոր առավելությունից է բխում, այլ սրամտության ուղերձ է: Միայն մայրական կրքի չեկոքացման դեպքում է տեղի ունենում կրքի սուբլիմացիան, որն էլ և երեխային ինքնուրույն մտածելու հնարավորություն է տալիս: Մայրական կիրքը կախարդություն չէ, քանի որ այն ունակ է սրամտության վերածվելու և ԴՆԹ-ի միջոցով մշակույթը փոխանցելու հաջորդ սերունդներին:

Այսպիսով, մայրական կիրքը երկատված է մեկ ներկայանում. երկատված երեխայի վրա ազդեցությունը պահելու և սուբլիմացիայի միջև: Այս երկատվածությունը խելագարության անդադար սպառնալիք է մոր համար, բայց միաժամանակ հենց այդ նույն սպառնալիքը նպաստում է մշակույթի հարատևմանը: Կրոնական առասպելներն իրենց սարդոստայնն են հյուսել այդ երկատվածության շուրջ: Կինը «ճեղք է» (եբրայերենով սա «կին»՝ *nekeva* բառի նշանակությունն է) և թագուհի Աստվածաշնչում. Սուրբ Կույսը համարվում է «ճեղք» քրիստոնեական եռամիասնության մեջ (Հայր Աստված/Որդի Աստված/Սուրբ Հոգի Աստված) և թագուհի՝ Եկեղեցում: Կրոնները մայրական երկատվածությունը նկարագրում էին այս փոխաբերություններով. ընդունելով երկատվածության փաստը՝ կրոններն այն հավերժացնում էին, բայց միևնույն ժամանակ նաև բերում էին որոշակի հավասարակշռության: Սրա արդյունքում ձևավորվում էր այսպես ասած մայրական խելագարությունը, որ ներքին հոգեկան բարդ մեխանիկմ ունեցող մարդկությանը օժտում էր իր ներքին հոգևոր կյանքը պահպանելու և արտաքին աշխարհում ստեղծարար գոյություն վարելու ունակությամբ:

Մյուս կողմից էլ, այնքան ենք մեր ուշադրությունը սևեռել մայրության կենսաբանական և սոցիալական կողմերի, ինչպես նաև սեռային հավասարության վրա, որ արդյունքում վերածվել ենք աշխարհում առաջին քաղաքակրթության, ուր մայրության խրթին

թեմային վերաբերող խոսույթի մեծ պակաս է զգացվում: Ես երազում եմ, որ այսօր՝ Ֆրոյդի ծննդից 150 տարի անց, մայր լինելու դժվարությունների քննարկումները դուրս գան նեղ մասնագիտական շրջանակներից և սկսեն հուզել ավելի լայն լսարանի՝ ընդգրկելով բոլոր մայրերին և նրանց հետ աշխատող մասնագետներին (գինեկոլոգներ, մանկաբարձներ, հոգեբաններ, հոգեվերլուծողներ, մինչև իսկ զանգվածային լրատվամիջոցները, որոնք ձևավորում են մերօրյա ամենաուժեղ իշխանությունը՝ հանրային կարծիքը) ու նրանց մղել ավելի խորությամբ հետաքրքրվելու այդ կրքով՝ հղի խելագարությամբ և վեհությամբ: Այսօր մայր լինելու համար մեկ սա է պակասում:

Ապակրոնացման ապագան, եթե այն ընդհանրապես գոյություն ունի, կախված է կնոջ՝ «բավականին լավ մայր դառնալու ունակությունից», պայմանով, իհարկե, որ հոգեվերլուծությունը նրան օգնի այդ դժվարին գործում՝ վեր հանելով և բացատրելով մայրական կրքի անտանելի խրթինությունը:

Թարգմանությունը արված է Կրիստևայի կայքից http://www.kristeva.fr/passion_maternelle.html,
բնագրի վերնագիրն է՝ La passion maternelle

1 *Վիտալիզմը* ուսմունք է, համաձայն որի կենդանի օրգանիզմը վեր է դասվում ֆիզիկայի և քիմիայի օրենքներից: Ըստ այս ուսմունքի՝ ինչ-որ վերին, կենսական ուժ է, որ նյութին կենդանություն է հաղորդում: ***(Այս և հետագա ծանոթագրությունները թարգմանչինն են:)***

2 *«Conseil national Handicap»ը* հիմնադրվել է Փարիզում, 2003-ին: Նպատակն է նպաստել հաշմանդամություն ունեցող մարդկանց լիարժեք ինտեգրմանը հասարակական կյանքին:

3 Հոգեվերլուծության մեջ *«օբյեկտային հարաբերությունը»* ցույց է տալիս անհատի (սուբյեկտի) կապը իրեն շրջապատող աշխարհի օբյեկտների հետ:

4 *Սուբլիմացիա, սուբլիմում* (ուշ լատ. sublimatio՝ վսեմացում, լատ. sublimare՝ բարձրացնել), հոգեբանության մեջ, հոգեկան հուզմունքից բխող հակումների էներգիան վերափոխող և անձին հասարակական գործունեության կամ ստեղծագործական աշխատանքի մղող հոգեկան պրոցես:

5 *Ժակ Մարի Էմիլ Լական* (1901-1981), ֆրանսիացի հոգեբույժ, հոգեվերլուծող:

6 *Դոնալդ Վուդս Վինիկոտ* (1896-1971), բրիտանացի մանկաբույժ, հոգեբույժ և հոգեվերլուծող:

7 *The good-enough mother* (1953) Վինիկոտի բավականին լավ մայրը նա է, ով կարողանում է երեխայի կարիքները բավարարել հավասարակշռված կերպով՝ ոչ չափազանց շատ, ոչ չափազանց քիչ: Բավականին լավ մորը հակադրվում է վատ մայրը, որ երեխային թողնում է մենակ իր տագնապների և տառապանքների հետ, ինչպես նաև շատ լավ մայրը, որ երեխային ապահովում է հնարավոր և անհնարին ամեն ինչով՝ այսպիսով չթողնելով, որ նա հասկանա, թե ինչ է նշանակում լինել կարիքի մեջ, ինչն անհրաժեշտ է երեխայի անձի ձևավորման և իր «ես»-ը մոր «ես»-ից տարբերելու համար: Մոր անդադար ներկայությունը երեխայի մոտ ստեղծում է ամենակարողի և ամենաուժեղի պատկերացում: Վինիկոտն այս երկուսին հակադրում է *բավականին լավ մորը*:

8 *Անդրե Գրին* (1927-2012), ֆրանսիացի հոգեվերլուծող:

9 Իլկե Բարանդե (1928-2012), ֆրանսիացի հոգեբույժ, հոգեբան:

10 *Ֆլորանս Գինյար* (1934), ֆրանկոշվեյցարացի հոգեվերլուծող:

11 *Ժանին Շասգե-Սմիրգել* (1928-2006), ֆրանսիացի հոգեվերլուծող:

12 *Մարիլիա Այկենշտայն*՝ Փարիզի հոգեվերլուծողների ընկերության անդամ:

13 *Ջովաննի Բելլինի* (1430-1516), Վերածննդի դարաշրջանի իտալացի նկարիչ:

14 *Մելանի Քլայն* (1882-1960), ավստրոբրիտանացի հոգեվերլուծող, «օբյեկտային հարաբերության» տեսության նորարարներից:

15 *Օսմոս* (հուն. σμος)՝ հրում, ճնշում:

16 *Ֆրանցիսկոս Ասիզեցի* (Ջովաննի դի Պիետրո Բեռնարդոնե, 1182-1226), իտալացի հոգևորական, միստիկ, քարոզիչ, Կրտսեր եղբայրների կամ պարզապես Ֆրանցիսկյանների միաբանության և այլ ուխտերի հիմնադիր, կաթոլիկ եկեղեցու սուրբ:

17 *Հաննա Արենդտ* (1906-1975), գերմանական ծագում ունեցող ամերիկացի քաղաքական տեսաբան:

18 *Սիդոնի Գաբրիել Կոլետ* (1873-1954), Նոբելյան գրականության մրցանակի արժանացած ֆրանսիացի գրող:

19 *Սոլիպսիզմ* (լատիներեն՝ solus, միայն + ipse, անձ), փիլիսոփայական ուղղություն է, որի համար սեփական «*Ես*»-ը գոյություն ունեցող միակ իրականությունն է :

20 *Ֆրանսուա Պերիե* (1922-1990), ֆրանսիացի բժիշկ, հոգեբույժ, հոգեվերլուծող:

21 Վալենտին Լուի-Ժորժ-Էժեն-Մարսել Պրուստ (1871-1922), ֆրանսիացի նշանավոր վիպասան, ակնարկագիր և քննադատ, մոդեռնիզմի ներկայացուցիչ: Պրուստի հիմնական երկը՝ «Կորսված ժամանակի փնտրտուքներում» (ֆր.՝ À la recherche du temps perdu) 7 վեպից բաղկացած վիպաշարն է, որը համարվում է 20-րդ դարի համաշխարհային գրականության ամենակարևոր ստեղծագործություններից մեկը:

22 *Ճանաչողական հոգեբանություն* (լատ. cognitio «ճանաչողություն, գիտելիք»), հոգեբանության բաժին, որն ուսումնասիրում է մարդկային հոգեբանության կոգնիտիվ, այսինքն՝ ճանաչողական գործընթացները: Այս ոլորտի հետազոտությունները սովորաբար վերաբերում են հիշողության, ուշադրության, զգացմունքների, ինֆորմացիայի ներկայացման, տրամաբանական մտածողության, երևակայության հարցերին, ինչպես նաև որոշումներ ընդունելու ունակությանը: Զարգացման արդի փուլում ճանաչողական հոգեբանությունը մեծապես հիմնվում է հաշվողական սարքում ինֆորմացիայի վերամշակման և մարդու ճանաչողական գործընթացների միջև համաբանության վրա: Ամենամեծ տարածումը գտել է այն ըմբռնումը, որը հոգեկան կառուցվածքը (պսիխիկա) պատկերում է ազդակների վերամշակման ամրակայված ընդունակության տեսքով: Այս ըմբռնման մեջ գլխավոր դերը հատկացվում է ճանաչողական ներքին սխեմաներին և ճանաչողության գործընթացում օրգանիզմի ակտիվությանը: Մարդու ճանաչողական համակարգը դիտարկվում է որպես մի համակարգ, որն ունի ինֆորմացիայի ներբեռնման, պահպանման, արտածման կառուցվածք (հաշվի առնելով նաև այդ համակարգի թողարկման արագության ունակության սահմանափակումները):

23 Կոլետի «Օրվա ծնունդը» (La Naissance du Jour) վեպի հերոսուհին:

24 Բնագրում հեղինակն օգտագործել է étayage (ֆր.՝ նեցուկ, հենարան) եզրույթը (հուն.՝ անակլիզիս (νάκλισις), գերմ.՝ Anlehnung, որ թարգմանաբար նշանակում է կրկնօրինակելով մեկին կամ մի բան, *anlehnen- հենվել մեկի/մի*

բանի վրա)։ Եվրույթն առաջին անգամ օգտագործել է Ֆրոյդը, և այն խոշոր հայտնագործություն է համարվում հոգեվերլուծության բնագավառում։ Սեռական հակման և մարմնի որոշ գործառույթների միջև սերտ կապ գոյություն ունի։ Այսպես, կուրծք ծծելիս նորածինը միաժամանակ բավարարում է իր սննդի պահանջը և ֆիզիկական հաճույք է վգում ամենաէրոգեն գոտում՝ բերանում։ Ընդունված է կարծել, որ այդ ժամանակ սեռական հակումը հենվում է սնունդ ստանալու պահանջի վրա և բավարարություն ստանում։ Մանկավարժության բնագավառում անակլիվիս հասկացությունը սահմանվում է ամերիկացի հոգեբան Ջերոմ Բուրների (1915-2016) առաջարկած տեսությամբ. «Անակլիվիսը չափահաս մարդու մասնակցությունն է երեխայի զարգացմանն ու աճին, որի արդյունքում վերջինս սովորում է այնպես կազմակերպել իր վարքը, որ կարողանա լուծել իր առջև ծառացած խնդիրները, մի բան, որ նա չէր կարողանում անել իր կյանքի ավելի վաղ փուլերում»։ Եվ վերջապես, ամերիկացի հոգեբույժ, հոգեվերլուծող Ռենե Շպիցը (1887-1974) հոգեվերլուծության բնագավառ է ներմուծել այս եվրույթը ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի վրա հենվելու իմաստով, որպեսզի նկարագրի օբյեկտային հարաբերության մի տեսակը. ապրելու համար երեխան իր մոր վրա հենվելու կարիք ունի՝ բառի ուղիղ և փոխաբերական իմաստով։

25 Շվեյցարացի լեզվաբան *Ֆերդինան դը Սոսյուրի* սահմանմամբ՝ լեզվական *նշանը*՝ բառը, կազմված է հասկացությունից և լսողական պատկերից, որոնք համապատասխանաբար կոչվում են *նշանակ-յալ* և *նշանակիչ*։

Սարոջինի Սահու

Թարգմանությունը՝ Սիրանույշ Օհանյանի

Սարոջինի Սահուն (Sarojini Sahoo, ծնվ. 1956), հնդիկ ֆեմինիստ գրող է, սյունակագիր ու խմբագիր: Գրում է օրիա (օդիա) լեզվով, որով խոսում է Հնդկաստանի բնակչության 4,2%-ը, ինչպես նաև անգլերեն: Պատմվածքների 8 ժողովածուի, 7 վեպի, էսսեների ժողովածուի հեղինակ է, հնդկական ակադեմիական և այլ մրցանակների դափնեկիր: Ստեղծագործությունները թարգմանվել են անգլերեն, հինդու, մալայերեն, բենգալերեն լեզուներով: «Մութ բնակարանը» սենյակի օրիա հրատարակությունը բեսթսելլեր է: Սահուն արդի հնդկական գրականության մեջ ֆեմինիզմի առաջամարտիկ է, և, ինչպես ասվում է «Արևելք-Արևմուտքի մտքի ամսագրում» (Journal of East-West Thought) հրատարակված «Կանացիությունը և կանացի առեղծվածը» էսսեի խմբագրականում՝

«Որպես հնդիկ ֆեմինիստ՝ դր. Սարոջինի Սահուի բազմաթիվ գրվածքներ անկեղծորեն դիմում են կանացի սեռականությանը, կանանց զգացմունքային կյանքին ու մարդկային հարաբերությունների խճճված հյուսվածքին՝ լայնորեն պատկերելով կանանց ներքին փորձառությունը և թե ինչպես է նրանց հասունացող սեռականությունը որպես սպառնալիք երևում ավանդական հայրիշխանական հասարակություններում: Այսպիսով այս հոդվածը բացահայտում է թեմաներ, որոնք մինչ այժմ չեն քննարկվել որևէ հնդկական խոսույթում: Ֆեմինիզմի նրա վիճելի հղացքը, Սիմոնե դը Բովուարի «Ուրիշ տեսության» նրա ժխտումը Սահուին դարձնում են Հարավային Ասիայում աչքի ընկնող ֆեմինիստ անձնավորություն, ինչի համար Հնդկաստանի KINDLE ամսագիրը նրան դասում է Հնդկաստանի 25 բացառիկ մտածելակերպով կանանց շարքը»:

Կանացիությունը և կանացի առեղծվածը

Ուզում եմ այս հոդվածը նվիրել Բելգիայից Ջուլի Բոդիի Դիփիկային,
որի նամակներն ինձ ոգեշնչեցին գրելու այն:

Վիքիպեդիայում շրջելիս Աստվածաշնչից մի հին պատմության դեմ առա, որ պատմում է Ռաբբի Ջոշուան.

Աստված կշռադատում էր՝ ինչ անդամից ստեղծի կնոջը, և Ինքն Իրեն այսպես դատեց. Ես չպետք է Ադամի գլխից ստեղծեմ նրան, քանի որ հպարտ անձնավորություն կլինի ու իր գլուխը բարձր կպահի: Թե ստեղծեմ աչքից՝ կուզի նայել բոլոր բաների մեջ, թե ականջից՝ կուզի լսի բոլոր բաները, թե բերանից՝ շատ կխոսի, թե սրտից՝ կնախանձի մարդկանց, թե ձեռքից՝ կցանկանա վերցնել բոլոր բաները, թե ոտքից՝ թափառաշրջիկ կլինի: Ուստի կստեղծեմ նրան թաքնված անդամից, այսինքն՝ կողից, որը չի երևում նույնիսկ, երբ տղամարդը մերկ է:

Այս հոդվածը ներկայացնում է հայրիշխանական տեսանկյունը, թե ինչպիսին պիտի լինի կինն իրենց աչքին: Կինը չպիտի գլուխը բարձր պահի, չպիտի ուզի նայել բոլոր բաների մեջ, չպիտի ուզի լսել այն բոլոր բաները, որ տղամարդը կարող է լսել, ու պիտի ավելի քիչ խոսի ու թողնի որևէ բան վերցնելու ցանկությունն ու նույնիսկ չնախանձի: Այն հանրագումարի է բերում, ուրեմն, որ կանացիություն՝ պարզապես նշանակում է փոթավոր, փոռիկավոր, թեթևսոլիկ, թեթևամիտ ու փոփոխուղեղ:

Նշանակալից գենդերային տարբերություններ կան կանանց ու տղամարդկանց՝ իրենց կյանքում կանացիության իմաստը սոցիալապես կառուցելու մեջ, հատկապես գենդերի, սեռականության և իշխանության հատումի առնչությամբ: Ֆրոյդյան հոգեվերլուծության տեսությունն ասում է՝ քանի որ կանանց պակասում են աչքով տեսանելի արական սեռական օրգանները, նրանք զգում են, որ «բաց են թողնում» նարցիսային կարևորության հասնելու ամենակենտրոնական բանը և, հետևաբար, գենդերային անհավասարության զգացողություն ու առնանդամի նախանձ են զարգացնում, ինչը ավելի ուշ շրջանում սեռերի միջև իշխանության համար պայքարին է առնչվում: Ֆրոյդն ասում է՝ փոքր աղջիկը իր հոր կամ եղբոր սեռական օրգանի հետ տարբերությունը և մոր սեռական օրգանի հետ նմանությունը ըննելիս կարող է նկատել մոր երկրորդ սեռ՝ պակաս տիրող սեռ լինելու կարգավիճակը: Նկատելու այս պահից աղջիկը նախանձ է ձեռք բերում արական դերային մոդելի նկատմամբ ու փորձում է իրեն համեմատել ու նույնականացնել արական դերային մոդելին՝ որպես իշխանությունը պահողի:

Ըստ Ֆրոյդի՝ սեքսը մարդկանց ամենաիկոր բնազդն է: Այս հակումը ավելի ուշ զարգանալով՝ դառնում է էդիպյան բարդույթ և էլեկտրայի բարդույթ: Կին լինելով՝ կարող եմ ասել, որ այս «առնանդամի նախանձը» ամենևին էլ կարևոր կետ չէ կանացիության համար: Այս թեման մանրամասն քննարկելու հարմար տեղը չէ, բայց դիմեցի ֆրոյդյան հոգեվերլուծության տեսությանը, քանի որ մտածում եմ, որ արուի և էգի սեռական օրգանների ձևավորումը կարող է կապ ունենալ նրանց առնականության և կանացիության հետ: Արական սեռական օրգանը դուրս ընկած է ձևավորվել, մինչդեռ

իգականը մնացել է ներսում: Այս կառուցվածքները երկու սեռերի մեջ էլ կարող են տարբեր բնութագրեր ստեղծել: Կանացիությունը, այսպիսով բնույթով ինտրովերտ է, ինչը որոշ հոգեվերլուծողներ նկարագրում են որպես «պասիվ», մինչդեռ էքստրովերտ առնականությունն իր սեռական օրգանների դրսային ներկայացման համար՝ «ակտիվ»: Հոլանդացի գիտնական Գերարդ Հենդրիկ Հոֆստեդը[1] (իմ վաղ շրջանի էսսեներից մեկում ես քննարկել ու համեմատել եմ նրա տեսությունն Աշիշ Նանդիի[2] տեսության հետ) այս տարբերությունները նկարագրում է որպես համապատասխանաբար «կյանքի քանակ» ու «կյանքի որակ»:

Ես անձամբ հավատում եմ, որ թե՛ առնականությունը և թե՛ կանացիությունը տարբեր են, բայց միշտ փոխլրացնում են միմյանց: Մենք չենք կարող ասել՝ դրանցից ո՞րն է գերադաս ու ո՞րը՝ ստորադաս: Սանքյա ուպանիշադում[3] վեդայական շրջանի փիլիսոփաները սրանք անվանել են Պրակրուտի[4] և Պուրուշա[5]: Բայց նրանց հղացքում Պուրուշան (առնականությունը) պասիվ է, իսկ Պրակրուտին (իգականությունը)՝ ակտիվ:

Սանքյա ուպանիշադի փիլիսոփայությունը նաև նկարագրում է կյանքի արարումն այս Պրակրուտի-Պուրուշա հղացքից: Ըստ այս փիլիսոփայության՝ Պրակրուտին ամենաթափանց, բայց բաղադրյալ առաջնային սուբստանց է, որը փոխակերպվում է բազմաբան բնույթների: Սկզբնական էությունը անգտանելի է իր նախնական ձևով, սակայն մնում է հավասարակշռության վիճակի և չփոխվող դրության մեջ: Այս հավերժական և անսահման սկզբունքը կենսապուրկ է և կազմված է «գունա» կոչվող երեք փոխկախյալ ու փոխփոխարինելի տարրերից, որոնք կազմված են երեք մասից. սատվա, ռաջաս ու տամաս: Այս գունաները Պրակրուտիի ոչ թե որակներն են, այլ ավելի շուտ բաղադրիչ մասերը: Դրանք բարդություն են հաղորդում Մուլա (սկզբնական) Պրակրուտիին:

Իսկ Պուրուշան անգործուն է ու կրավորական, բայց նաև զգոն ու անսահման ու հավերժական: Պուրուշայի անըմբռնելի ազդեցությամբ Պրակրուտիում խախտվում է հավասարակշռությունը և գոյանում է անսահմանափակ փոխատեղումների ու համակցությունների ողջ տիեզերքը: Պրակրուտիի առաջին ձևափոխությունը, նախասկզբնական բնույթը կոչվում է Մահատ կամ Տիեզերական Միտք: Այն այնուհետև պառուրվում է երկու ուժերում. 1) Աքաշա՝ սկզբնական նյութը և 2) Պրանա՝ սկզբնական էներգիան: Աքաշան ձևավորում է արարման նյութական հիմքը, իսկ Պրանան՝ էներգիական հիմքը: Աքաշայի և Պրանայի միջև փոխազդեցությունից ձևավորվում են հինգ նուրբ տարրերը, որոնք մոտավոր թարգմանվում են որպես Եթեր, Հուր, Օդ, Ջուր և Հող: Տարբեր համամասնություններով սրանք են տիեզերքում գոյություն ունեցող ամբողջ նյութի բաղադրիչները: Ինչպես կարելի է տեսնել, նույնիսկ Մահատը կամ Միտքը երեք գունայից ու հինգ տարրից բաղկացած մատերիա է:

Կարծում եմ՝ կանացիության դերն այլ կերպ չի կարող բացատրվել: Իգականությունն այսպիսով Շակտի կամ էներգիայի աղբյուր է համարվել հնագույն հնդկական փիլիսոփայությունում: Ափսոսելի և ապշեցուցիչ փաստ է, որ քննարկելով «կանացիությունը»՝ մենք քննարկում ենք քրիստոնեական գաղափարախոսությունը կամ հոգեվերլուծաբանների տեսանկյունը, բայց երբեք որևէ մեկը նման քննարկումներում չի դիմել հնդկական փիլիսոփայության այս գաղափարին:

Ճիշտ է, որ «կանացիություն» բառը, համեմատած «ֆեմինիստի» հետ, այնքան էլ հաճախ չի լսվում: Ես նկատել եմ, որ Արևմուտքում միայն քրիստոնյա կրոնական գիտնականներն են ավելի շատ քննարկում «կանացիությունը», մինչդեռ ֆեմինիստ գիտնականները չեն սիրում բարձրաձայնել «կանացիություն» բառը մասամբ արքետիպերին հարկադրվող կարծրատիպերի պատճառով: Նրանք նվիրվել են այն դրույթին, որ տղամարդու և կնոջ միջև տարբերությունը կուտ կենսաբանության հարց է, իսկ ֆեմինիստներից ոմանք փորձում են առհասարակ կամ հնարավորության դեպքում շրջանցել այդ բառը՝ ժխտելով կանացիությունը որպես Բնության նախագծած ու կերտած իրականություն:

Մյուս կողմից՝ մարդկային պատմության հազարամյակներից ընդհուպ մինչև մոտ անցած երկու տասնամյակը մարդիկ հալած յուղի տեղ են ընդունել այն, որ տարբերությունները տղամարդկանց ու կանանց միջև այնքան ակնհայտ են, որ մեկնաբանելու կարիք չկա: Նրանք ընդունել են բանն ինչպես որ կա: Հայրիշխանական հասարակությունը նույնպես այս հիպոթեզը օգտագործել է որպես սեռերի իշխանության պայքարի խնդիր՝ արականի գերիշխանությամբ և ավանդական արական ու իգական դերերին հավատարմությամբ: Դարեր շարունակ «կանացիության» հղացքը օգտագործվել է հայրիշխանությունը փոխակերպելու համար՝ արուների աշխարհում էգերին ենթակա դարձնելով: Կանացիությունը հայրիշխանության կողմից միշտ կրկնակի ստանդարտով է օգտագործվել:

Մինչ մերկություն պատկերող արվեստը կամ արվեստագետը գեղագիտության համար հավանություն է ստանում հասարակության կողմից, միևնույն ժամանակ մոդելը քննադատվում է կանացի պարկեշտության պակասի համար: Թե՛ հայրիշխանությունը և թե՛ ֆեմինիզմը հանուն սեռական օբյեկտավորման[6] երբեք չեն երկրպագել կանացիությունը ոչ մի իսկական իմաստով: Անվտանգ ու ապահով պահելու անունից բազմաթիվ տաբուներ ու կանոններ են դրել կանացիության վրա:

Կասկած չկա, որ ֆեմինիստ շարժման ու խոսույթի շնորհիվ մենք այժմ հնարավորություն ունենք արտահայտելու մեզ, ավելի տեսանելի դարձնել մեզ սոցիալական հեռանկարներում, և ընդունել մեր սեռականությունն ու զգայականությունը: Ինչպես Ջուլին[7] է պատմում, «Բայց այնուհանդերձ կանայք նույնպես խնդիրներ ունեն: Օրինակ՝ շատ կանայք ու աղջիկներ Արևմուտքում իրենց ամբողջովին չեն ընդունում ինչպես որ կան, քանի որ մեդիան և հասարակությունը գեղեցկության չափանիշներ են դնում մեզ վրա: Ֆոկուսն ավելի շատ արտաքին տեսքի վրա է, քան ներքին գեղեցկության»:

Եվ նա շարունակում է. «Կանայք նաև այնքան շատ ճնշումների են ենթարկվում: Նրանք ուզում են կարիերա, անկախ լինել, տունուտեղ ունենալ, երեխաներ և այլն, և այլն... Եվ գլուխ հանել դրանից, այդ ԱՄԲՈՂՋԸ միաժամանակ: Սակայն ամեն կին ուզում է կանացի ու գեղեցիկ լինել իր զգեստներով, կարդերով ու պարկեշտ շարժուձևով: Նրանք ուզում են շատ գեղեցիկ ու մեղմ լինել, բայց միևնույն ժամանակ՝ ուժեղ: Եվ այդ տեսակի կինն եմ ես տեսնում որպես իմ ներշնչանք. համեստ, բարի, սիրող կին, բայց միաժամանակ ուժեղ ու խելացի»:

Վաղ շրջանի հոդվածներում ես այս թեմաները մանրամասն քննարկել եմ՝ ցույց տալու համար ոչ միայն ինչպես են և՛ հայրիշխանական հասարակությունը, և՛ ֆեմինիստները

կանոններ ու դրույթներ սարքում, այլ նաև, որ նրանք ստեղծում են նոր տաբուներ՝ «ազատության» անունից կանանց ավելի կառավարելի դարձնելու համար:

Նույնիսկ այսպես կանայք ենթարկվում են և կառավարվում են «պարկեշտության» անունից, ինչպես նաև անտեսվում են սոցիալական հեռանկարում: Նրանց կիրառած «կանացիություն» տերմինը և՛ սխալ է հասկացվում, և՛ սխալ է օգտագործվում թե՛ հայրիշխանական հասարակության և թե՛ այսպես կոչված արմատական ֆեմինիզմի առաջյալների կողմից: Ես անձնապես երբեք որևէ տարբերություն չեմ դրել ժամանակակից կանացիության ու ֆեմինիզմի միջև, եթե ֆեմինիզմը համարում ենք կանանց բավարար ուժեղացնելու նպատակ, որպեսզի նրանք իրենց անհատա-կանությունը նշագծեն ընդդեմ նրանց, ովքեր ուզում են, որ կանայք անտեսանելի լինեն: Մենք պետք է շնորհակալ լինենք մեր նախորդ ֆեմինիստներին, որոնք հայրիշխանական տղամարդուն վերածեցին նոր առնական էության՝ գենդերային հավասարությանը հավատացողի:

Ես հավատում եմ, որ կանացիությունը կապված է շակտիի[8] հետ և «շակտիացված» է (այս «շակտիացված» բառը փոխառել եմ իմ ընկեր Վաիկենա Սիտկայի[9] «Ի՞նչ է Շակտին» հոդվածից[10]): Կարող ենք մեր կանացիության մեջ ներառել խելքի ուժը (բուդդիի), խիղճը (դայա) ու աստվածային սերը (բհակտի): Ես նաև հավատում եմ, որ այդ կանացիությունը պարմանահրաշ ուժ ունի:

Մեր ապասեռային ժամանակներում ուրախություն է իսկական կանացի կին տեսնելը, որը կարող է սիրել ու ազատություն տալ իր իսկ եզակի և այնուհանդերձ տիեզերական կանացիությանը: Մենք սեռային կզայունության[11] համար հայտարարում ենք տղամարդկանց ու կանանց միջև տարբերությունները՝ մի տեսակ ձևանալով, թե բոլորս նույնն ենք: Չափից դուրս շատ կանայք են ապականացիացվել հասարակության կողմից:

Այսօր կանացի լինել՝ նշանակում է իմանալ, թե ինչպես ուշադրություն դարձնենք մանրամասներին ու ժողովրդին, ունենանք հաղորդակցման հմտություններ ու իմանանք, թե ինչպես կապվենք և լավ աշխատենք ուրիշների հետ: Կլինեն մասնավոր ժամանակներ և իրավիճակներ, որոնցում կուլենաք ձեր կանացիության հետ ավելի մոտ ու ներդաշնակ լինել: Ընտրել կարողանալը մեծ առավելություն է և մեծ հմտություն:

Երբ էլ քննարկենք կանացիությունը, աստվածավախության, մաքրության, հնազանդության և ճշմարիտ կնոջականության սահմանմանը վերաբերող հարցեր են բարձրանում: Սա գալիս է ազատ սիրո, ամուսնության ավարտի, տղամարդկանց կանացիացման ու կանացի լինելու, ինչպես նաև սեքս-օբյեկտ լինելու մասին քննարկումների սկզբից: Ամենուր կեղծ հավատամքն է գերիշխում, որ կանանց սեռական իրավունքներին հավատացող ֆեմինիստը (ատում եմ ցանկացած կոնտեքստում «սեքս-պոզիտիվ» ասելը) «պոռնոն սատարող ֆեմինիստ» է: Պոռնոն, կարծում եմ, կնատյաց դիրքորոշում է, որը առաջ է քաշում այն գաղափարը, թե կանայք միշտ ծնվել են իրենց մարմինները տղամարդկանց հաճույքին տրամադրելու համար, և կանայք ենթակայի դերում են ցույց տրվում: Պոռնոգրաֆիան նպաստում է սեքսիզմին, կանանց նկատմամբ բռնության, բռնաբարության պատճառ է ու նաև էրոտիկացնում է կանանց վրա գերիշխումը, նրանց ստորացումն ու բռնադատումը: Այսպես կոչված սեքս պատերազմը ուշ յոթանասունականների և վաղ ութսունականների ֆեմինիստների միջև ֆեմի-

նիստներին բաժանեց երկու առանձին խմբերի՝ հակա-պոռնո ֆեմինիստներ և սեքս-պոզիտիվ ֆեմինիստներ:

Հակա-պոռնո ֆեմինիստները, ինչպիսիք են՝ Անդրեա Դվորկինը (Andrea Dworkin), Քեթրին Մաքկիննոնը (Catharine MacKinnon), Ռոբին Մորգանը (Robin Morgan), Դիանա Ռասելը (Diana Russell), Ալիս Շվարցերը (Alice Schwarzer) և Ռոբերտ Ջենսենը (Robert Jensen), փաստում են, որ պոռնոգրաֆիան վնասակար է կանանց համար և կանանց նկատմամբ բռնության ուժեղ պատճառ է կամ օժանդակում է դրան: Մյուս կողմից՝ սեքս-պոզիտիվ ֆեմինիստները, ինչպիսիք են՝ Կամիլե Պալիան (Camille Paglia), Էլեն Ուիլլսը (Ellen Willis), Սյուզի Բրայթը (Susie Bright), Պատրիկ Կալիֆիան (Patrick Califia), Գեյլ Ռուբինը (Gayle Rubin), Քերոլ Քուինը (Carol Queen), Էննի Սպրինքլը (Annie Sprinkle), Ավեդոն Քերոլը (Avedon Carol), Տրիստան Տաորմինոն (Tristan Taormino) և Բեթի Դոդսոնը (Betty Dodson), փաստարկում են, որ սեռական ազատությունը կանանց ազատության էական բաղադրիչն է: Սեռական կողմնորոշումը և գենդերը նրանք տեսնում են որպես սոցիալական կառույցներ, որոնք մեծապես ազդեցություն են կրում հասարակությունից, իսկ հայրիշխանությունը սահմանափակում է սեռական արտահայտումը: Նրանք ավելի շուտ բոլոր գենդերների մարդկանց ավելի շատ սեռական հնարավորություններ տալու կողմից են, քան պոռնոգրաֆիան սահմանափակելու: Սեքս-պոզիտիվ ֆեմինիստները մեծ մասամբ ժխտում են սեռական էսենցիալիզմը[12], քանի որ հավատում են, որ սեքսը բնական ուժ է, որը գոյություն ունի նախքան սոցիալական կյանքը և ինստիտուցիաներ է ձևավորում:

Հակա-պոռնո ֆեմինիստների սխալն այն է, որ նրանք նվազեցնում են կանանց սեքսուալ կարիքները, իսկ նրանցից շատերը հետերոսեքսուալությանը դեմ են, ինչը երկրորդ ալիքի ֆեմինիստների համար այդ ժամանակ գերիշխող ընդունված նորաձևությունն էր: Որպեսզի ժխտեն սեռական ակտում արականի գերակայությունը (ինչը, կարծում եմ, համաձայնելու համար շատ տարօրինակ գաղափար է), նրանք փաստարկում և ցույց են տալիս իրենց հափշտակվածությունը նույնասեռ միություններով կամ լեսբիականությամբ[13]: Եթե նայենք այսպիսի ֆեմինիստների կենսագրությունը, կարող ենք շատ նմուշներ գտնել, որտեղ նրանք ընդունում են լեսբիականությունը և սոցիալական նորմերից շեղվող մյուս սեռականությունները: (Ընթերցող, խնդրում եմ նկատես, որ հակա-պոռնո կամ սեքս-նեգատիվ կամ արմատական ֆեմինիստները որոշ ձևով նման են սեքս-պոզիտիվ ֆեմինիստներին):

Սեքս-պոզիտիվ շարժումը մեծ մասամբ բարոյական կամ էթիկական տարբերակումներ չի անում հետերոսեքսուալ կամ հոմոսեքսուալ սեքսի (կամ նույնիսկ ձեռնաշարժության) կամ նույնիսկ կուսակրոնություն ընտրածների համար՝ այս ընտրություններին վերաբերելով որպես անձնական նախընտրության հարց: Մյուս կողմից՝ արմատական և հակա-պոռնո ֆեմինիստները արականի գերիշխանության դեմ ապստամբության անունից չեն սատարում հետերոսեքսուալ հարաբերությունները: Նրանք կարծում են, որ սեռերի միջև սեռական անհամապատասխանությունները անհնար են դարձնում հասարակության հիմնական խնդիրները լուծելը: Նրանք կարծում են, որ ամուսնությունը կանանց ճնշելու վճռորոշ հատկանիշ է: Նրանք դեմ են մայրությանն ու որդեծնությանը, քանի որ հայրիշխանությունը մայրությունը ճանաչում է որպես գերիշխանության հարաբերության բանալի տարր ու շահագործում է մյուսներին իր իսկ օգտի համար: Այս արականը ատող դիրքորոշումները երկրորդ ալիքի ֆեմինիստներին տարան մի տեղ,

ուր նրանք ու սեքս-պոզիտիվ ֆեմինիստները սեռական տեսանկյունից միևնույն ծածկի տակ տեղ գտան:

Իսկական հարցը՝ կանանց սեռական իրավունքները կամ կանանց իրավունքներն իրենց մարմինների նկատմամբ, անտեսված է մնում ֆեմինիզմի այս երկու արմատական խմբերի միջև պատերազմում: Երբ սեքս-պոզիտիվ ֆեմինիստները վիճում են, որ կանանց սեռական ազատությունը էական է կանանց ամբողջական ազատության համար և այսպիսով չպետք է սահմանափակումներ լինեն, ինչպիսիք են սոցիալական քաղաքականությունը կամ սեքս-առևտրի աշխատողների վրա սահմանափակումներ դնող հասարակական անպատվությունը (Մքէլրոյ, McElroy), նրանք հաճախ մոռանում են, որ սեքս առևտուրը ազատություն չէ, և որ ոչ մի կին չի կարող իր իսկ սրտի կանչով ընտրել այս մասնագիտությունը: Նրանք հարկադրված են ընտրել այս մասնագիտությունը, և հայրիշխանությունն է, որը նրանց ճնշում է այս պաթետիկ մասնագիտությամբ: Մարմնավաճառությունը կանանց ճնշելու, գերիշխելու և ստորացնելու գործիք է, որն ուժեղացնում է կանանց նկատմամբ ֆիզիկական, վերբալ և սեռական բռնությունների մշակութային հանդուրժողականությունը: Սեռական ազատությունը ներմղելով սեքս առևտրի մեջ՝ մենք նվազեցնում ենք իրենց մարմինների վրա կանանց իրավունքների կարևորությունը և նրանց մղում ենք ճնշվելու հայրիշխանության կողմից:

Արդյունքում կարող ենք տեսնել, որ «սեքս» և «կանացի սեռականություն» տերմինները ամբողջապես սխալ են մեկնաբանվում արևմտյան ֆեմինիզմի դիսկուրսում: Սեռականությունը միայն մարմնական հարց չէ և իրեն չի սահմանափակում միայն սեռական վարքով ու սեռական գործունեություններով, չնայած հիմնական գործոնները դրանք են: Կնոջ սեռականության իսկական իմաստը ինչպես մարմնի հետ է կապված, այնպես էլ, մեծ մասամբ, մտքի:

Եկեք քննարկենք՝ ինչպես կնոջ «մարմինն» իր տեղը նվաճեց արևմտյան դիսկուրսի ընթացքում: Տասնիններորդ դարում, երբ Բրիտանիայում ուժի մեջ մտավ «Վարակիչ հիվանդությունների ակտը» (Contagious Diseases Act, 1864), կանանց ուժով զննում էին վեներական հիվանդությունների համար, և «մարմինը» նույնպես հայտնի դարձավ: Ժոզեֆին Բաթլերը[14] այս գործողությունների ընթացքում բարձրաձայնած, աչքի ընկնող կերպար էր: Ֆեմինիստների պատմությունից պարզում ենք, որ Սենեկա Ֆոլսի կոնվենցիայում[15] (19-20 հուլիսի 1848)[16] մարմինը չի նշվում: Մարմինը՝ որպես ռասայական ու դասակարգային տարբերության նշիչ, առաջին անգամ հիշատակվում է ֆեմինիստական շարժման մեջ, Սոջուրներ Թրութի[17] հայտնի «Ես կին չե՞մ»[18] ելույթում, Ակրոնում Օհայոյի Կանանց իրավունքների կոնվենցիայում, Օհայո, 1851 թ.: Թրութն իր ճառում ասում է. «Ես ցանկացած տղամարդու չափ մկաններ ունեմ և կարող եմ տղամարդու չափ գործ անել: Ես հերկել եմ ու տնկել ու հավաքել ամբարներում, ու ոչ մի տղամարդ չի կարողացել ինձնից անցնել: Ու ես կին չե՞մ: Ես կարող եմ տղամարդու չափ աշխատել ու տղամարդու չափ ուտել, եթե ճարեմ, ու նաև մտրակին դիմանալ: Ու ես կին չե՞մ»:

Սակայն վաստակը շնորհվում է Սիմոնե դե Բովուարին, որը «կանացի մարմինը» պատկերում է փիլիսոփայական ստրատեգիայով: «Երկրորդ սեռի» առաջին գլխում Բովուարը քննախոսում է կենսաբանության տվյալները և ավելի ուշ տալիս է կնոջ կյանքի տարբեր փուլերի ընթացքում ապրած մարմնի երևութաբանության գնահատականը: Այստեղ նա բացահայտորեն իր պատումն առաջարկում է որպես

ապրած փորձառության հանրագումար. մարմինը իրավիճակներում և ոչ որպես կենսաբանության տվյալների մաս: Նա քննարկում է մեր մշակույթում կանանց վրա ազդող հիմնական հասարակական խնդիրները, ինչպիսիք են՝ ծննդի վերահսկողությունը, արհեստական վիժումները, ընտանիքը, սեռական խտրականությունն ու ոտնձգությունն ու բռնաբարությունը: Չնայած Բովուարն իր գիրքը սկսում է կանանց մարմիններով, ավելի ուշ պնդում է, որ «գիտակները» արգանդ ունեցող ամեն մարդու կին չեն համարում: «Դուրս է գալիս, ուրեմն,– գրում է նա,– որ ամեն էգ մարդ արարած անհրաժեշտաբար կին չէ. այդպիսին համարվելու համար նա պետք է մասնակից լինի այդ միստիկական և սպառնալիքի տակ գտնվող իրականությանը, որը հայտնի է որպես կանացիություն»: Բովուարն այսպիսով մերժում է կնոջ մարմինը, և այդ ժամանակից սկսած ֆեմինիստ փիլիսոփայությունը մերժում է կնոջ մարմնի կամ կնոջ սեռականության կարիքը, իսկ նրանց միակ նպատակը կանանց ազատագրումն է վերարտադրողական խնդիրներից: Կանանց արգելվեց գեղեցկության գիտակցումը և շպարանքի կամ նորաձև հագուստների գործածումը, և կնոջ «կանացիությունը» համարվեց նրա բնույթի «բացասական» կողմը: Լյուսի Իրիգարեյը (Luce Irigaray)՝ բելգիացի ֆեմինիստ, փիլիսոփա, լեզվաբան, հոգեվերլուծող, սոցիոլոգ ու մշակութային տեսաբանը, իր քաջ հայտնի «Ուրիշ կանանց հայելի» (1974, թարգմանել է Գ. Ս. Գիլը, ու հրատարակել է Կոռնելի համալսարանի հրատարակչությունը, Իթակա) գրքում սահմանում է ֆեմինիստների այս «արականացումը»: Նա մատնանշում է, որ այս ֆեմինիստների մտքում տղամարդը ներկայացվում է որպես տիեզերական նորմա, իսկ սեռական տարբերությունները չեն ճանաչվում կամ ճանաչվում են այնպես, որ կինը մտահղացվում է որպես «մայրական-կանացի»՝ ֆեմինիստական շարժման մեջ որպես վերացական միտք հետ մղվելով:

Ես չգիտեմ աղջիկ երեխաներին առնչվող իրական փաստերն ու պատահարները: Բայց Ասիայի և Աֆրիկայի երկրներում սովորական բան է աղջիկներին ավելի կարճ ժամանակ կրծքով կերակրելը, քան տղաներին, այնպես որ կինը որքան հնարավոր է շուտ կարողանա կրկին հղիանալ տղայով: Դեռահաս աղջիկներին նրանց իսկ մայրերը ավելի քիչ ուտելիք են տալիս, քան եղբայրներին: Ի հետևանք՝ աղջիկներն աճի վճռական ժամանակ բաց են թողնում կենարար սնունդը, ինչը կասեցնում է նրանց զարգացումը և թուլացնում դիմադրողականությունը հիվանդությունների հանդեպ: Սունիտա Կիշորը (Sunita Kishor) հետազոտական զեկույց է հրապարակել Ամերիկյան սոցիոլոգիական պարբերականում (ապրիլ, 1993): Իր «Թող Աստված բոլորին տղա տա. սեռը և մանկական բարոյականությունը Հնդկաստանում» հոդվածում նա գրում է. «Չնայած կարևոր սնունդն ու բժշկական ռեսուրսները բաշխելու աճող հնարավորությանը, ինչը պայմանավորված է զարգանալով, [Հնդկաստանում] իգական սեռի երեխաների գոյատևելու շանսերը չեն լավանում՝ համեմատած տղա երեխաների հետ: Գյուղատնտեսական զարգացման համեմատաբար բարձր մակարդակը նվազեցնում է կանանց կենսական շանսերը, մինչդեռ տղաների կյանքի շանսերը մնում են անփոփոխ. ուրբանիզացիան տղաների շանսերը ավելի է բարձրացնում, քան աղջիկներինը... Ակնհայտ է, որ սեռի վրա հիմնված խտրականությունը կայուն է և նույնիսկ աճում է ռեսուրսների բաշխման մեջ, նույնիսկ երբ դրանց մատչելիությունը սահմանափակ չէ»: Սա կնոջ մարմնի հետ կապված գենդերային խտրականությու՞ն չէ:

Հնարավոր է, որ աղջիկ երեխաներն արևմտյան երկրներում այդպես չեն տառապում, ինչպես ասիական ու աֆրիկյան երկրներում: Ես սա ասում եմ, քանի որ սեռերի հարաբերությունը Երկրագնդով մեկ տարբեր երկրներում շատ արտառոց է: Նշենք, որ արևմտյան երկրներում կանանց բնակչությունը 1000 տղամարդու հետ համեմատած հետևյալն է. Ռուսաստանի Դաշնություն՝ 1140, Ճապոնիա՝ 1040, ԱՄՆ՝ 1029, և Բրազիլիա՝ 1025: Բայց այս հարաբերությունն այլ է, երբ դիմում ենք ասիական երկրներին: Այն 1004 է Ինդոնեզիայում, 983՝ Բանգլադեշում, 934՝ Չինաստանում, 933՝ Հնդկաստանում և 944՝ Չինաստանում[19]: Հնդկաստանում կին բնակչությունը դեռ նվազում է և 1000 տղամարդու համեմատ եղել է. 972՝ 1901-ին, 962՝ 1911-ին, 955՝ 1921-ին, 950՝ 1931-ին, 945՝ 1941-ին, 946՝ 1951-ին, 941՝ 1961-ին, 930՝ 1971-ին, 934՝ 1981-ին, 927՝ 1991-ին և 933՝ 2001-ին (աղբյուր՝ մարդահամար):

Մեծ Մեղքի մասին պատմվում է «Լոս Անջելես թայմսում»: Այստեղ հեղինակը նշում է, որ Ջայպուրում՝ Ռաջաստանի արևմտյան նահանգի մայրաքաղաքում, սեռի որոշման նախածննդյան թեստերի արդյունքում տարեկան 3500 իգական պտղի աբորտ է լինում: Ամենաապշեցուցիչը, համաձայն ՅՈՒՆԻՍԵՖ-ի, «1984-ին Բոմբեյում նախածննդյան սեռի որոշումից հետո աբորտների վերաբերյալ վեկույցը պնդում է, որ աբորտի ենթարկված պտուղների 8000-ից 7999-ը իգական են»: Սեռի որոշումը շահավետ բիզնես է դարձել: Մանկասպանության և հրաժարումի միևնույն ավանդությունը, հատկապես աղջիկների համար, գոյություն ուներ Չինաստանում նախքան 1949 թվականին Ժողովրդական Հանրապետության հիմնումը, և այժմ աճել է, քանի որ կառավարությունը բնակչության վերընթաց աճը վերահսկելու համար 1979-ից սկսած հարկադրեց «մեկ երեխայի քաղաքականությունը»: Յուրաքանչյուր և ամեն ծնող ուզում է տղա երեխա ունենալ:

Բացի կնոջ մարմնի հղացքից, եթե նայենք կնոջ սեռական կարգավիճակին, փաստերն ավելի անհանգստացնող են: Ոչ ոք հարսնացուին չի հարցնում նրա ցանկություններն ու ուզածը հարսանիքից առաջ, քանի որ դասավորած ամուսնությունում դեռ ամոթալի են համարվում կուսության դեմ գործողությունները, ինչպես Հնդկաստանում մինչամուսնական սեքսն ու սերն են դեռ ամոթալի գործողություններ ծնողի համար: Չնայած Հնդկաստանի Գերագույն դատարանը սատարում է անհատի իրավունքները և խստորեն հստակեցրել է, որ մինչամուսնական սեքսն ու միասին ապրելու հարաբերությունները քրեական հանցագործություն չեն, այնուհանդերձ դրանք Հնդկաստանի մետրո քաղաքներում[20] դեռ սակավադեպ են և բարեհաճ չեն նայվում:

Ես ի վիճակի չեմ հասկանալու՝ եթե երկու հասուն տղամարդ կամ երկու հասուն կին ուզում են ապրել իրար հետ, հանցանքը ո՞րն է: Առանց խոսելու բարոյականության, Աստծո, մշակույթի, սովորույթի, կրոնի ու ավանդույթի մասին, կարո՞ղ է մեկը բացատրել՝ հատկապես ինչո՞ւ ենք դատապարտում այդպիսի հարաբերությունները: Է՞լ ինչ կավելացնեք երկու մարդկանց կյանքին, որոնց հարկադրում ենք հարմարվել, ընդունել ու տեղավորվել իրենց ամուսնական հարաբերության ամբողջ ժամանակում: Ավելի լավ չէ՞ վերջիվերջո «գնելուց առաջ փորձարկել»՝ մշտական ցավի մեջ, սթրեսում ու տառապանքում ապրող երկու ամուսնացած մեծահասակների փոխարեն: Նույնիսկ եթե ամուսնալուծությունը նույնպես հեղինակավոր և ընդհանուր սոցիալական նորմ չի ճանաչվում հինդու կամ կաթոլիկ քրիստոնյաների դեպքում, այնուհանդերձ

հասարակությունն ընդունում է բազմամուսնությունները տղամարդկանց համար (չնայած օրենքի աչքին անլեգալ՝ հինդուսների և քրիստոնյաների դեպքում և լեգալ՝ մուսուլմանների դեպքում), մինչդեռ կնոջ բազմակի ամուսնությունը դեռ երազանք է որևէ հասարակությունում: Հնդկաստանում և շատ ուրիշ երկրներում ամուսնական կյանքում կինը սեռական իրավունքներ չունի: Նա չի կարող արտահայտել իր ցանկությունները և չի ակնկալվում, որ հաճույք ստանա սեքսից: Ինչպես ասվում է Հինդու կոդում՝ կինը պահանջվում է միայն «արու երեխային» ծնունդ տալու համար: Սեքսի իր ցանկությունն արտահայտելը կամ թեկուզ ամուսնու մոտ օրգազմի մասին ակատորեն խոսելը կնոջ համար կարող է նաև բնութագրվել որպես մաքրաբարոյության պակաս ու պատվազուրկ արարք: Չնայած կանանց և երեխաների զարգացման նախարարությունը և կանանց ազգային հանձնաժողովը կառավարությանը խորհուրդ են տվել բարեփոխել 1973-ի Քրեական գործընթացի կոդը և 1872-ի Հնդկաստանի Վկայության ակտը և ճանաչել սեռական ոտնձգությունների նոր կատեգորիաները՝ վերասահմանելով բռնաբարությունը և որևէ կերպ սահմանելով ու ներառելով սեռական ոտնձգությունը (ներառյալ ընտանեկան սեռական ոտնձգությունը), այնուհանդերձ առօրյայում ավելի շատ ամուսնացած կանայք են այդպիսի ամուսնական բռնաբարությունների ենթարկվում:

Բայց այսպիսի «վտանգավոր» թեմաներից կնոջ խոսելը գռեհիկ է համարվում: Նաև ոչ ոք չի համարում, որ պատշաճ է կնոջը հարցնել՝ նախքան նրան կիարկադրեն սպանել իր պտուղը: Չնայած դրան՝ հիմա Հնդկաստանի որոշ մասերում թույլատրվում են «պատվո սպանությունները», եթե կինն անցնում է սահմանները՝ ընտրելով իր իսկ ամուսնուն, սիրահետելով հանրության աչքի առաջ կամ բռնարար կենակցից ամուսնալուծություն փնտրելով. նա անպատվություն է բերում իր ընտանիքին: Թեև այս բոլոր բաները կապված են կնոջ մարմնի հետ, կինն իրավունք չունի որևէ սեփական որոշում ընդունելու:

Ամփոփելով՝ սեռականության հեռանկարները ասիական և աֆրիկյան երկրներում ամբողջովին տարբեր են արևմտյան երկրներից: Պոռնոգրաֆիան ընդունելը թե մերժելը դատարկ հարց է մնում այս երկրներում, ու անլուծելի է մնում հիմնական հարցը՝ կարո՞ղ է կնոջն արտոնվել, որ իր սեփական որոշումները կայացնի ամուսնության, մայրության, ծնող լինելու, աբորտի, հակաբեղմնավորիչներ օգտագործելու ու սեռական հարաբերության իր կամքն ու իրավունքները արտահայտելու վերաբերյալ:

1 *(ԾԹ) Կամ՝ Գերթ Հոֆստեդ (ծնվ. 1928), հոլանդացի մշակութաբան, սոցիոլոգ, տե՛ս՝ https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D5%A5%D6%80%D5%A9_%D5%80%D5%B8%D6%86%D5%BD%D5%BF%D5%A5%D5%A4*

2 *(ԾԹ) Ծնվ. 1937, հնդիկ քաղաքական հոգեբան, սոցիալական տեսաբան, քննադատ, տե՛ս՝ https://en.wikipedia.org/wiki/Ashis_Nandy*

3 *(ԾԹ) Տե՛ս՝ https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%A1%D5%B6%D6%84%D5%B0%D5%B5%D5%A1*

4 (ԾԹ) Տե՛ս՝ https://en.wikipedia.org/wiki/Prak%E1%B9%9Bti

5 (ԾԹ) Տե՛ս՝ https://en.wikipedia.org/wiki/Purusha

6 (ԾԹ) Սեռական օբյեկտավորում, մարդուն որպես սեռական հաճույքի առարկա դիտարկելը, տե՛ս՝ https://en.wikipedia.org/wiki/Sexual_objectification

7 (ԾԹ) Հավանաբար խոսքը ընծայականում հիշատակված Ջուլիի մասին է:

8 (ԾԹ) Տե՛ս՝ https://en.wikipedia.org/wiki/Shakti

9 (ԾԹ) Wahkeena Sitka, հնդիկ երգչուհի, տե՛ս՝ http://www.wahkeenasitka.com/

10 Տե՛ս՝ http://www.wahkeenasitka.com/tag/shakti/.

11 Gender sensitivity, հասարակական և անձնական կյանքում գենդերային խտրականության հետ կապված սոցիալ և մշակութային գործոնները հասկանալը, տե՛ս՝ http://eige.europa.eu/rdc/thesaurus/terms/1218

12 (ԾԹ) Որևէ սուբյեկտին նրան բնորոշ անփոփոխ հատկանիշներ վերագրելը, տե՛ս՝ https://en.wikipedia.org/wiki/Essentialism

13 (ԾԹ) Տե՛ս՝ https://en.wikipedia.org/wiki/Political_lesbianism

14 (ԾԹ) Josephine Butler, անգլիացի ֆեմինիստ ու սոցիալական բարեփոխիչ, տե՛ս՝ https://en.wikipedia.org/wiki/Josephine_Butler

15 (ԾԹ) Seneca Falls Convention, կանանց իրավունքների առաջին կոնվենցիան, տե՛ս՝ https://en.wikipedia.org/wiki/Seneca_Falls_Convention

16 http://www.npg.si.edu/col/seneca/senfalls1.htm

17 (ԾԹ) Sojourner Trut (17971883), աֆրո-ամերիկացի աբոլիցիոնիստ և կանանց իրավունքների ակտիվիստ, տե՛ս՝ https://en.wikipedia.org/wiki/Sojourner_Truth

18 http://www.npg.si.edu/col/seneca/senfalls1.htm

19 Source: World Population Prospects, United Nations 1998-2000.

20 (ԾԹ) 1 մլն և ավելի բնակչություն ունեցող քաղաքները Հնդկաստանում, տե՛ս՝ https://en.wikipedia.org/wiki/Metropolitan_area#India

Ռիչարդ Բրոտիգան

Թարգմանությունը՝ Աննա Դավթյանի

Ամերիկացի բանաստեղծ (1935-1984), 1960-ականների կոնտրկուլտուրայի ներկայացուցիչներից:

Հայքու շտապօգնություն

Կանաչ պղպեղի մի կտոր

ընկավ

աղցանի փայտե ամանից.

հետո՞ ինչ:

Տղամարդ

Գլխարկը գլխին

նա մոտ հինգ դյույմ բարձր է

տաքսու մեքենայից:

Անակնկալ

Ես բարձրացնում եմ պուզարանակոնքի նստատեղը

այնպես՝ ասես թռչունի բույն լինի,

ու տեսնում եմ կատվի հետքեր

կոնքի ամբողջ եզրով:

Սան Ֆրանցիսկո

Այս բանաստեղծությունը գտնվել է թղթե տոպրակի վրա՝ Ռիչարդ Բրոտիգանից, Սան Ֆրանցիսկոյի մի լվացքատանը: Հեղինակն անհայտ է:

Նավակ

Օ գեղեցիկ էր

մարդագայլը

իր չար անտառում:

Մենք նրան

տարանք կառնավալ

ու նա սկսեց լացել,

երբ տեսավ

Սատանայի անիվը:

Էլեկտրիկ

կանաչ ու կարմիր արցունքներ

իջան

նրա մորթե այտերից:

Նա նման էր

նավակի

մութ

ջրի վրա:

Այո, ձկնային երաժշտությունը

Իշխան ձկան գույնի քամի է փչում

աչքերիս միջով, մատներիս միջով,

ու ես հիշում եմ, թե ինչպես էին իշխանները

թաքնվում դինոզավրերից,

երբ նրանք գալիս էին գետի մոտ՝ խմելու։

Իշխանները թաքնվում էին գետնանցքերում, ամրոցներում

ու մեքենաներում։ Նրանք սպասում էին համբերատարորեն դինոզավրերի վերանալուն։

Հաբը կամ Սփրինգհիլ հանքի աղետը

Երբ դու խմում ես հաբդ,

հանքի աղետի է նման։

Ես մտածում եմ բոլոր մարդկանց մասին՝

կորած քո մեջ։

Մենք կանգ էինք առնում կատարյալ օրերին

Մենք կանգ էինք առնում կատարյալ օրերին

ու դուրս էինք գալիս մեքենայից։

Քամին նայում էր նրա մազերին։

Բանն այսքան պարզ էր։

Ես թեքվեցի ինչ-որ բան ասելու...

Քիթս ծերանում է

Հա,

երկար ծույլ սեպտեմբերյան մի հայացք

հայելուն

ասում է, որ դա ճիշտ է։

Ես 31 եմ,

ու քիթս

ծերանում է։

Այն սկսվում է
կամրջակի տակից
½ դյույմ ներքև
ու հետո ծավալվում է պառավորեն
մի դյույմ ու մի քիչ էլ.
կանգ է առնում:
Բարեբախտաբար, քթիս
մնացած մասը համեմատաբար
երիտասարդ է:
Հետաքրքիր է, թե
աղջիկները կուզե՞ն ինձ
ծեր քթով:
Արդեն լսում եմ նրանց՝
անսիրտ այդ քածերին:
«Սիմպո է,
բայց քիթը
ծեր է»:

Խնդրում եմ

Արդյոք մտածո՞ւմ ես իմ մասին
այնքան,
ինչքան ես եմ մտածում
քո մասին:

Հայտնագործություն

Հեշտոցի թերթիկները բացվում են,
ինչպես Քրիստափոր Կոլումբոսը
Կոշիկներն է հանում:
Կա՞ ավելի գեղեցիկ բան,
քան նավի կորաքիթը,
որ քսվում է մի նոր աշխարհի:

Երբեք չեմ արել սա ավելի քնքշորեն

Քո բերանի քաղցր հյութերը
նման են մեղրի մեջ լողացած ամրոցների:
Երբեք չեմ արել սա ավելի քնքշորեն:
Դու ամրոցների գալարներ ես դրել
առնանդամիս շուրջը ու պտտում ես դրանք`
ինչպես արևի լույսը թռչնի թևերին:

Տենդի հուշարձանը

Ես այգու միջով քայլեցի դեպի տենդի հուշարձանը:
Այն ապակյա քառակուսու մեջտեղում էր` շրջապատված
կարմիր ծաղիկներով ու շատրվաններով: Հուշարձանը
ուներ ծովաձիու ձև, իսկ ցուցատախտակն ասում էր`
մենք տենդից վառվեցինք ու մեռանք:

Ձմռան առաջին ձյունը

Օհ, սիրուն աղջիկ, դու բանտարկել ես
քեզ սխալ մարմնի մեջ: Ավել
քան փութը կախված է, ինչպես գունդ-գունդ
ժանյակ, քո կատարյալ կաթնասունի մարմնից:
Երեք ամիս առաջ դու նման էիր
եղնիկի, որ նայում է ձմռան առաջին ձյանը:
Հիմա Աֆրոդիտեն քշտում է քիթը վրադ
ու պատմություններ է պատմում մեջքիդ ետևում:

Սիրաբանող թուք

Մի աղջիկ կանաչ մինի
փեշով, ոչ այնքան սիրուն,
քայլում է փողոցով ներքև:

Սիրային բանաստեղծություն

Այնքան լավ է
արթնանալ առավոտյան
ամբողջովին մենակ
ու ստիպված չլինել ասել մեկին,
որ սիրում ես նրան, երբ չես սիրում
այլևս:

Կալիֆորնիայի տեխնոլոգիական ինստիտուտ

Վեջս չէ, թե ինչքան խելոք են էս
անիծյալ գյադեքը. ես ձանձրանում եմ:
Ամբողջ օրը կատաղած անձրև է եկել,
ու ոչ մի անելիք չկա:

Կաֆկայի գլխարկը

Անձրևի հետ, որ
վիրահատության նման թափվում էր տանիքին,
ես կերա մի աման պաղպաղակ,
որ նման էր Կաֆկայի գլխարկին:

Ես ապրում եմ քսաներորդ դարում

Ես ապրում եմ քսաներորդ դարում,
ու դու պառկած ես այստեղ կողքիս: Դու
երջանիկ չէիր, երբ քնեցիր:
Ոչինչ չկար, որ կարող էի անել
դրա հետ կապված: Անհույս էի: Քո դեմքն
այնքան գեղեցիկ է, որ չեմ կարող դադարել
նկարագրել այն, ու չկա մի բան,
որ կարող եմ անել՝ քեզ երջանիկ դարձնելու համար, քանի դեռ
քնած ես:

Ռոմեո և Ջուլիեթ

Եթե մեռնես ինձ համար,

ես էլ կմեռնեմ քեզ համար,

ու մեր գերեզմանաթմբերը նման կլինեն երկու սիրեկանների, որ լվանում են

իրենց շորերը միասին

նույն լվացքատանը:

Եթե դու բերես օճառը,

ես կբերեմ սպիտակեցնող հեղուկը:

Վախ, էնքան գեղեցիկ ես, որ սկսում է անձրևել

Oh, Մարսիա,

Ես ուզում եմ, որ քո երկար խարտյաշ գեղեցկությունը

դասավանդվի ավագ դպրոցում

այնպես, որ երեխաները սովորեն, որ աստված

ապրում է մաշկի մեջ երաժշտության պես

և հնչում է՝ ինչպես արևալույս կլավիկորդ:

Ես ուզում եմ, որ ավագ դպրոցի պեկուցագրերը

լինեն այսպես.

Նուրբ ապակյա իրերի հետ խաղ

A

Համակարգչային մոգություն

A

Նամակներ սիրածդ մարդկանց

A

Ձկների մասին բացահայտումներ

A

Մարսիայի երկար խարտյաշ գեղեցկությունը

A+!



Քորնել Ուեսթ

Թարգմանեցին՝ Աննա Առաքելյանը, Անի Բաղումյանը, Քրիստինե Բոյաջյանը, Հրանուշ Գևորգյանը, Մարգո Գևորգյանը, Գոհար Դադայանը, Ժենյա Եսայանը, Նարինե Հովհաննիսյանը, Տաթևիկ Հովսեփյանը, Հասմիկ Ներսեսյանը, Լիլիթ Սահակյանը, Զարուհի Սողոմոնյանը և Տաթևիկ Վարդանյանը՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի թարգմանչական ծրագրի շրջանակում: Թարգմանությունը համադրեց, ծանոթագրեց և խմբագրեց Շուշան Ավագյանը:

Քորնել Ուեսթը (Cornel West) ամերիկացի փիլիսոփա է, աստվածաբան, հրապարակախոս և քաղաքացիական իրավունքների պաշտպան: Ավելի քան քսան գրքի հեղինակ է, որոնցից ամենակարևորներն են՝ «Race Matters» (1993) և «Democracy Matters» (2004) գրքերը: Նկարահանվել է «The Matrix Reloaded» և «The Matrix Revolutions» գեղարվեստական ֆիլմերում, և «Examined Life» վավերագրական ֆիլմում (Ավիտալ Ռոնելի, Փիթեր Սինգերի, Քուամե Անթոնի Ափիայի, Մարթա Նուսբաումի, Մայքլ Հարդթի, Սլավոյ Ժիժեկի և Ջուդիթ Բաթլերի հետ): Դասավանդում է Հարվարդի համալսարանում: Ինքն իրեն անվանում է «մտավորական ակտիվիստ»:

Սև մտավորականի երկընտրանքը

Սև մտավորական դառնալու վերաբերյալ

> *Ամերիկյան հասարակության կառուցվածքի յուրօրինակությունները և այդ հասարակության մեջ մտավորական խավի դիրքը նեգրո մտավորականի գործառական դերն առանձնահատուկ են դարձնում: Նեգրո մտավորականը պետք է մոտիկից առնչվի միաժամանակ թե՛ սպիտակ ուժային կառույցի և մշակութային ապարատի հետ և թե՛ սև աշխարհի ներքին իրականությունների հետ: Սակայն այս դերում հաջողելու համար նա պետք է խորապես գիտակցի ամերիկյան հասարակության դինամիկայի բնույթը և թե ինչպես է այն հետևում հասարակության մեջ դասակարգային շերտավորումների բաղադրիչներին: …Հետևաբար նեգրո մտավորականի գործառական դերը պահանջում է, որ նա բացարձակապես չանջատվի ո՛չ սև, ո՛չ էլ սպիտակ աշխարհից:*

Հարոլդ Քրուզ
«Նեգրո մտավորականի ճգնաժամը» (1967)

Ժամանակակից սև մտավորականը կանգնած է դժվար կացության առաջ: Հայտնվելով ամբարտավան ամերիկյան հասարակության և անտարբեր սև համայնքի արանքում՝ մտավոր կյանքին լուրջ վերաբերվող աֆրո-ամերիկացին բնակվում է մեկուսացած ու կղզիացած աշխարհում: Այս դրությունն իրականում կապ չունի սև մտավորականների շարժառիթների և դիտավորությունների հետ, այլ օբյեկտիվ իրավիճակ է՝ ստեղծված նրանցից անկախ հանգամանքներից: Այս խորհրդածական ակնարկում ես կուսումնասիրեմ սև մտավորականի երկընտրանքն ու կառաջարկեմ այն հասկանալու և փոխակերպելու տարբեր ուղիներ:

Սև մտավորական դառնալու ընտրությունն ինքնապարտադրված լուսանցքայնացման քայլ է. սև համայնքի համար և դրա ներսում մտավորականն ունի ծայրամասային կարգավիճակ: Աֆրո-ամերիկյան պատմության մեջ գրագիտության ձգտումն իրոք հիմնարար թեմա է և ներքին մղում սև համայնքում: Բայց սևերը, ինչպես ամերիկացիների մեծամասնությունը, գրագիտությունը սովորաբար ընկալում են ավելի շատ որպես նյութական օգուտներ քաղելու միջոց, քան գրող, արվեստագետ, ուսուցիչ կամ դասախոս դառնալու հնարավորություն: Պատճառները, թե ինչո՞ւ են ոմանք որոշում լուրջ մտավորական դառնալ, բազմազան են, բայց շատ դեպքերում դրանք ունեն միևնույն սկզբնաղբյուրը. ազդեցիկ ուսուցչի կամ հավասարակցի հետ դավանափոխության պես մի փորձառություն, որը մեկին համոզել է կյանքը նվիրաբերել կարդալու, գրելու և զրուցելու գործին՝ անձնական հաճույքի, սեփական արժեքի և սևերի (հաճախ նաև՝ այլ կեղեքված մարդկանց) քաղաքական վիճակի բարելավման համար:

Սև մտավորական դառնալու ուղին չափազանց խնդրական է: Պատճառն այն է, որ ամերիկյան հասարակության մեջ մտավորական դառնալու ավանդական ճանապարհները միայն վերջերս են սև մարդկանց համար հասանելի դարձել և շարունակում են մնալ դժվար: Հիմնական ուղիներից են ակադեմիան կամ արվեստի, մշակույթի և

քաղաքականության գրագիտական ենթամշակույթները: Նախքան բակալավրի աստիճան ստացող սև ուսանողներին կսկսեին ընդունել էլիտար սպիտակ համալսարաններ ու քոլեջներ՝ ուշ 1960-ականներին, հատուկենտ սև կրթական հաստատություններ ներունակ սև մտավորականների համար նախնական խթան էին հանդիսանում: Եվ ամենայն ավնվությամբ, այն ժամանակ համեմատաբար ավելի շատ ու ավելի լավ սև մտավորականներ կային, քան հիմա: Սևերի քոլեջում հիմնավոր գիտելիք ստանալուց հետո, որտեղ հաստատվում էր նրանց ինքնարժեւորումն ու ինքնավստահությունը, լավագույն սև ուսանողներն ընդունվում էին սպիտակների համար նախատեսված առաջատար հաստատություններ՝ պատրաստվելու համակիր, ազատական հայացքների տեր և հաճախ մեծ հեղինակություն վայելող պրոֆեսորների մոտ: Փայլուն գործիչներ, ինչպիսիք են՝ Վ. Է. Բ. Դու Բոյսը[1], Է. Ֆրանկլին Ֆրեյժըը[2] և Ջոն Հոուփ Ֆրանկլինը[3], այս համակարգի արգասիքն էին: Այն ապագա սև մտավորականների համար, ովքեր ֆինանսական կամ անձնական պատճառներով բաց էին թողել քոլեջում սովորելու հնարավորությունը, մեծ քաղաքային կենտրոններում կային գրողների, նկարիչների, երաժիշտների ու քաղաքական գործիչների գրագիտական ենթամշակույթներ, որտեղ հնարավոր էր ոչ ավանդական ձևերով կրթվել: Մեծ անհատականություններ, ինչպիսիք են՝ Ռիչարդ Ռայթը[4], Ռալֆ Էլիսոնը[5] և Ջեյմս Բոլդուինը[6], այս գործընթացի արդյունքն էին:

Որքան էլ հեգնական է, այսօրվա ակադեմիան և ժամանակակից գրագիտական ենթամշակույթները սև երիտասարդների համար ավելի շատ խոչընդոտներ են ստեղծում, քան տասնամյակներ առաջ: Պատճառները երեքն են: Նախ՝ որովհետև ակադեմիայում սպիտակ պրոֆեսորների վերաբերմունքը փոխվել է: Սև ուսանողների, հատկապես ասպիրանտների, համար շատ ավելի դժվար է դարձել լուրջ ընդունվել որպես *ներունակ ուսումնագետ և մտավորական*՝ շնորհիվ մեր համալսարանների ու քոլեջների կառավարչական էթոսի (որտեղ ուսանողների հետ ավելի քիչ ժամանակ է ծախսվում) և գռեհիկ (ռասիստական) ընկալումների՝ բորբոքված դրական խտրականության (affirmative action) ծրագրերի կողմից, որոնք պղտորում են սև ուսանող-սպիտակ դասախոս հարաբերությունները:

Երկրորդ՝ գրագիտական ենթամշակույթներն այժմ ավելի փակ են սևերի համար, քան երեք կամ չորս տասնամյակ առաջ, սակայն ոչ այն պատճառով, որ սպիտակ ավանգարդ ամսագրերը կամ ձախական խմբերն այսօր ավելի ռասիստական են, այլ որովհետև քաղաքական և մշակութային թեժ հարցերը, ինչպիսիք են «Սև ուժ» (Black power) շարժման թողած ժառանգությունը, իսրայելա-պաղեստինյան հակամարտությունը և ամերիկյան քաղաքական դիսկուրսում Աֆրիկայի անտեսանելիությունը, խիստ սահմանազատումներ և հեռավորություն են ստեղծել սև և սպիտակ մտավորականների միջև: Ավելորդ է նշել, որ առաջատար ազատական ամսագրերում, ինչպիսիք են՝ «New York Review of Books»-ը և «New York Times Book Review»-ն, սևերի ներկայությունն աննշան է, այն համարյա գոյություն չունի: Ավելի ձախական պարբերականները, ինչպիսիք են՝ «Dissent»-ը, «Socialist Review»-ն, «The Nation»-ը և «Telos»-ը, կամ ավանգարդ ուսումնագիտական պարբերականները, ինչպիսիք են՝ «Diacritics»-ը, «Salmagundi»-ն, «Partisan Review»-ն և «Raritan»-ը, մյուսներից շատ չեն տարբերվում: Եվ միայն «Monthly Review»-ն, «Massachusetts Review»-ն, «Boundary 2»-ն և «Social Text»-ն են, որ համառորեն ջանք են գործադրում սևերի թեմաներին անդրադառնալու համար

և սև հեղինակներից ունեն կանոնավոր ներդրումներ: Նպատակն այստեղ անտարբեր ամսագրերը պարզապես մատնացույց անելը չէ (թեև դա չէ՛ր խանգարի), այլ փորձ է ընդգծել ամերիկյան մտավորական կյանքում ռասայականորեն անջատողական հրատարակչական օրինաչափություններն ու պրակտիկաները, որոնք բնորոշում են սև և սպիտակ մտավորականների միջև եղած անդունդը:

Երրորդ՝ ամերիկյան մտավորական կյանքի ընդհանուր քաղաքականացումը (ակադեմիայում և դրանից դուրս), աջակողմյան գաղափարախոսական ուղղվածության հետ մեկտեղ, թշնամական մթնոլորտ է ստեղծում սև մտավորականների կայացման համար: Ինչ-որ չափով միշտ էլ այսպես է եղել, սակայն նախկին ձախ ավատականների մի կզալի հատվածի գաղափարախոսական անձնատուրությունը նորաոճ պահպանողականությանն ու հնաոճ կայսերականությանը սև ուսանողներին և դասախոսներին ակադեմիայում և ազդեցիկ պարբերականներում շատ քիչ դաշնակիցների հետ է թողել: Այս թշնամական մթնոլորտը պահանջում է, որ սև մտավորականներն օգտագործեն իրենց սեփական միջոցները՝ հաստատությունները, ամսագրերն ու պարբերականները, ինչն իր հերթին ամրապնդում է ամերիկյան մտավորական կյանքի փաստացի ռասայականորեն անջատողական պրակտիկաները:

Սև մտավորական գործունեության ողբերգությունն այն է, որ դրան նպաստող սև հաստատութենական հենքը խարխլված է: Քաղաքացիական պատերազմից ի վեր սև մտքի փոխանակման թե՛ ծավալը և թե՛ որակը վատթարագույն վիճակում են: Չկան որևէ լուրջ սև ակադեմիական ամսագիր, մտավորական հանդես, բարձրակարգ լրագրության պարբերական կամ նույնիսկ ազգային մակարդակի թերթ: Կարճ ասած, սև մտավորական դիսկուրսի և երկխոսության ենթակառուցվածք գրեթե գոյություն չունի: Այս ողբերգությունը, մասամբ, ինտեգրման գինն է, ինչը հանգեցրել է պառակտված ակադեմիական համայնքի մասնագիտական գիտակարգերում սոսկ լուսանցքային սև խմբերի գոյությանը: Սակայն այս ողբերգության պատճառներից մեկը նաև այն է, որ սև մտավորականները հրաժարվում են հաստատել և պահպանել քննադատության և ինքնաքննադատության իրենց սեփական հաստատութենական մեխանիզմներն այնպես, որ մաշկի տարբեր գույն ունեցող մարդիկ կարողանան ներդրում ունենալ դրանց մեջ: Վերջին տասնամյակում այս հրաժարումը էական է այնքանով, որ այն շատ սև մտավորականների մոտ (որոնց ձևավորման տարիներն անցել են մի տեսակ մտավորական վակուումի մեջ) նվազեցրել է աճելու պես սուր քննադատություն ունենալու ցանկությունը և դրան դիմակայելու կարողությունը: Այսպիսով, արտաքին թշնամական մթնոլորտից բացի, լուրջ սև մտավորական գործունեության ավանդույթը վտանգված է նաև ներսից:

Մտավորականության ստեղծումը փիթխարի գործ է: Այդուհանդերձ, սև եկեղեցիներն ու քոլեջները, սպիտակների աջակցությամբ, ֆորմալ կրթություն ունեցող առաջին սև մտավորականների համար ծառայել են որպես միջոց: Քննադատության սովորության և լուրջ մտքի փոխանակման միջազգային ցանցերի ձևավորումը մեկուսացած և կղզիացած մտավորականությունից գարգանտյուական ճիգ է պահանջում: Սակայն սև մտավորականները մեծ ընտրություն չունեն. կա՛մ պետք է շարունակեն մնալ մտավոր ընդարմության մեջ ակադեմիայի և գրագիտական ենթամշակույթների եզրին՝ սև համայնքի կողմից անտեսված, կա՛մ վարեն ընդվզական ստեղծարար գործունեություն հիմնական հոսանքի լուսանցքներում՝ խրամատված կատարելապես նոր ենթակառուցվածքներում:

Մտավորական գործունեության համար սև ենթակառուցվածքների սակավությունը մասամբ բխում է սև մտավորականների անկարողությունից՝ ձեռք բերել հարգանք և սատարում սև համայնքից, մասնավորապես, սև միջին խավից: Ամերիկյան հասարակության ընդհանուր հակամտավորական տրամադրվածությունից բացի, սև մտավորականների նկատմամբ խոր անվստահություն ու կասկած կա հենց սև համայնքի ներսում: Այս անվստահությունն ու կասկածը բխում են ոչ միայն սովորական մարդկանց հանդեպ մտավորականների գոռոզ ու մեծամիտ վերաբերմունքից, այլև, որ ավելի կարևոր է, սև մտավորականների համատարած մերժումից՝ տեսանելի կերպով, օրգանապես կապված մնալ աֆրո-ամերիկյան մշակութային կյանքին: Արտամուսնության համեմատաբար բարձր ցուցանիշները, սև հաստատությունների լքումը, ինչպես նաև եվրո-ամերիկյան մտավորական արտադրանքով տարվածությունը սև համայնքի կողմից հաճախ դիտարկվում են որպես միտումնավոր ջանքեր՝ խուսափելու սև լինելու խարանից կամ որպես ինքնատելության ախտանիշներ: Եվ սև մտավորական գործունեության աննշան անմիջական ազդեցությունը սև համայնքի և ամերիկյան հասարակության վրա ամրապնդում է սև մտավորականների անկարողության, անգամ անպիտանության մասին տարածված պատկերացումները: Տիպիկ ամերիկյան ոճով, սև համայնքը գովաբանում է այն սև մտավորականներին, ովքեր աչքի են ընկնում որպես *քաղաքական գործիչներ և մշակութային արվեստագետներ.* մտավոր կյանքը չի դիտարկվում որպես ներքին արժանիքների տիրապետում կամ ազատագրող հնարավորությունների ընձեռում, այլ միայն որպես կարճաժամկետ քաղաքական շահ և հասարակական կարգավիճակ ապահովող մի բան:

Մտավորական գործունեության այս աղճատված ընկալումը լայն տարածում ունի հենց սև մտավորականների շրջանում: Հաշվի առնելով սևերի վերընթաց հասարակական շարժունության խոչընդոտները և միջին խավի հավասարակիցների կողմից կարգավիճակ ու հարստություն ունենալու ճնշումները՝ շատ սև մտավորականներ սկզբունքորեն նյութական շահ ու մշակութային հեղինակություն են փնտրում: Եվ քանի որ նրանք հիմնականում տագնապով լցված ու կարգավիճակի ետևից ընկած սև միջին խավից են, նրանց հակվածությունները հասկանալի են և ինչ-որ չափով նաև արդարացված. մտավորականներից շատերը ճանաչում, կարգավիճակ, իշխանություն և հաճախ նաև հարստություն են փնտրում: Նման ձգտումները սակայն պահանջում են, որ սև մտավորականներն ընկղմվեն և դիմեն հենց այն մշակույթին ու հասարակությանը, որոնք նվաստացնում և արժեզրկում են սև համայնքը, որից նրանք սերվում են: Կոպիտ ասած, սև մտավորականներից շատերը բաժանվում են այս կացությամբ ստեղծված երկու ճամբարի. «կայացածները», ովքեր օտարացած են սև համայնքից (և սովորաբար վերևից են նայում սև համայնքին), և «չկայացածները», ովքեր արհամարհում են սպիտակ մտավորական աշխարհը: Սակայն լինելով երկու աշխարհների արանքում և չունենալով կամ ունենալով շատ թույլ սև ենթակառուցվածքային հենք՝ այս երկու ճամբարները սև համայնքի համար մնում են լուսանցքային: Հետևաբար, «կայացած» սև մտավորականը, հաճախ անքննադատորեն, անձնատուր է լինում սպիտակ բուրժուական ակադեմիայում գերիշխող հարացույցներին ու հետազոտական ծրագրերին, իսկ «չկայացած» սև մտավորականը պարփակված է մնում աֆրո-

ամերիկյան մտավորական կյանքի հետամնաց դիսկուրսներում: Շլացնող, կեղծ կոսմոպոլիտիզմի և նախապաշարված, մաքրագործող գավառականության այլընտրանքները մշտապես առկա են սև մտավորականների կյանքում: Եվ սև համայնքը երկու այլընտրանքներին էլ անվստահությամբ ու արհամարհանքով է նայում՝ և ոչ առանց պատճառի: Դրանցից ոչ մեկն էլ դրականորեն չի ազդել սև համայնքի վրա: Հայտնի սև մտավորականները, Վ. Է. Բ. Դու Բոյսից և Սթ. Քլեր Դրեյքից[7] մինչև Ռալֆ Էլիսոնը և Թոնի Մորիսոնը[8], փորձել են հեռու մնալ երկու այլընտրանքներից էլ:

Այս իրավիճակից էլ բխում է սև մտավորականության գլխավոր արգելքը՝ կատորոշելի մտավորական ավանդույթի տևականության համար անհրաժեշտ հաստատութենական մեխանիզմները փոխանցելու և պահելու անկարողությունը: Ամերիկյան հասարակության ռասիզմը, սև համայնքի աջակցության գրեթե բացակայությունը և սև մտավորականների անորոշ կարգավիճակը խանգարել են մտքի փոխանակման, շփման և երկխոսության հարուստ ժառանգության ստեղծմանը: Իհարկե եղել են հոյակապ սև մտավորական ձեռքբերումներ, սակայն նման ձեռքբերումները չեն կարող փոխարինել ավանդույթին:

Կուզեի առաջարկել, որ աֆրո-ամերիկյան կյանքում կան երկու *բնական* մտավորական ավանդույթներ՝ *սև քրիստոնեական քարոզչության ավանդույթը և սև երաժշտական կատարողական ավանդույթը*: Երկու ավանդույթներն էլ, թեև մտավոր կյանքի հետ են առնչվում, բանավոր են, իմպրովիզային և թատերական: Երկուսն էլ արմատավորված են սևերի կյանքում և ունեն այն, ինչից սև մտավորական գործունեության գրագիտական ձևերը զուրկ են. այն է՝ ժամանակի և տարածության վրա հիմնված հաստատութենական մատրիքսներ, որոնցում գործում են ընդունված ընթացակարգեր, դատողության չափանիշներ, կատարումը գնահատելու կանոններ, անցյալի ձեռքբերումների և ներկայի ընդօրինակման մոդելներ, ինչպես նաև գերազանց նվաճումների հաստատված հաջորդականություն ու կուտակում: Սև քարոզչության և սև երաժշտության ավանդույթների հարստությունը, բազմազանությունը և կենսունակությունն ամբողջովին հակադրված են սև գրագիտական մտավորական արտադրանքի սակավությանը, անգամ աղքատությանը: Պարզապես չեն եղել այնպիսի սև մտավորականներ, ովքեր իրենց արհեստին կտիրապետեին այնպես, ինչպես Լուի Արմսթրոնգը, Չարլի Փարկերը կամ Պատվելի Մանուել Սքոթը, և այսօր էլ չկան Մայլզ Դեյվիսի, Սառա Վոնի կամ Պատվելի Գարդներ Թեյլորի պես սև մտավորականներ: Սա ոչ թե այն պատճառով է, որ չեն եղել կամ չկան առաջնակարգ սև մտավորականներ, այլ որովհետև առանց ավանդույթները սատարող հաստատութենական կայուն միջոցների մեծ ձեռքբերումն անհնար է: Եվ անկեղծ ասած, սև Ամերիկան դեռ պետք է ծնի իր մեծ մտավորականին. միակ բացառությունը Թոնի Մորիսոնն է: Անշուշտ եղել են արտակարգ մտավորականներ՝ Դու Բոյսը, Ֆրեյզերը, Էլիսոնը, Բոլդուինը, Հըրսթոնը[9] և շատ ուրիշներ: Սակայն նրանց ձեռքբերումները չեն կարող համեմատվել այն բարձունքների հետ, որ գրավել են սև քարոզիչներն ու հատկապես երաժիշտները:

Առավել մտահոգիչ է սև գրագիտական մտավորական գործունեության այն հանգամանքը, որ երբ այն, դանդաղորեն կարգանալով սև քրիստոնեական ավանդույթից, սկսեց ավելի սերտորեն փոխազդել աշխարհիկ եվրո-ամերիկյան ոճերի ու ձևերի հետ, թվում էր, թե քսաներորդ դարի երկրորդ կեսում պետք է հասներ հասունության շեմը: Սակայն մոտենալով այս դարի վերջին՝ սև գրագիտական

մտավորական գործունեությունն անկում է ապրում թե՛ ծավալով, թե՛ որակով: Ինչպես արդեն նշեցի, սրա հիմնական պատճառը սևերի համեմատաբար ավելի լայնածավալ ինտեգրումն է հետարդյունաբերական կապիտալիստական Ամերիկայի մեջ՝ իր բյուրոկրատացված էլիտար համալսարաններով, ձանձրացնող միջակ քոլեջներով ու փտող ավագ դպրոցներով, որոնք շատ քիչ են մտահոգված կամ չեն հավատում սև ուսանողների մտավորական դառնալու ներունակությանը: Ավելորդ է ասել, որ սև մտավորականի կացությունն անտարանջատելի է ամերիկյան հասարակությունում սև համայնքի, հատկապես սև միջին խավի կացությունից: Եվ միայն ամերիկյան հասարակության հիմնարար փոխակերպման միջոցով է հնարավոր փոխել սև համայնքի և սև մտավորականի դրությունը: Ու թեև փոփոխությանն ուղղված մարդկային համամբողջական ծրագրերի հանդեպ քրիստոնեական թերահավատությունս հանդիմանում է արմատականորեն ժողովրդավարական ու ազատամտական (libertarian) հասարակա-տնտեսական և մշակութային կարգերի հանդեպ խորին սոցիալիստական համոզումներիս, պետք է մի կողմ դնեմ այս մեծ հարցերն ու կենտրոնանամ ավելի իրական ուղիների վրա, որոնք կնպաստեն Միացյալ Նահանգներում սև գրագիտական մտավորական գործունեության ծավալի ու որակի բարձրացմանը: Ստորև կուրվագծեմ սև մտավորական գործունեության չորս մոդել՝ նպատակ ունենալով խթանել անհրաժեշտ ենթակառուցվածքների բյուրեղացումը:

Բուրժուական մոդելը. Սև մտավորականը՝ որպես հումանիստ

Մտավորական գործունեության բուրժուական մոդելը սև մտավորականների համար խնդրական է: Մի կողմից, ռասիստական ժառանգությունը՝ սպիտակ ակադեմիական հաստատությունների և հումանիստական ուսումնագիտության բացառող և ճնշող ազդեցությունները սև մտավորականներին դնում են պաշտպանական դիրքում. անընդհատ կարիք կա վերահաստատելու և պաշտպանելու սևերի մարդկությունը, այդ թվում՝ նրանց տրամաբանելու, կապակցված մտածելու, հստակորեն գրելու շնորհին ու կարողությունը: Սև մտավորական գործունեության բնույթն ու բովանդակությունը շատ հաճախ պայմանավորված են եղել սպիտակ ակադեմիայում սովորող սև ուսանողների ուսերին դրված այս անխուսափելի բեռի ծանրությամբ: Եվ փաստորեն, սև մտավորական կյանքը դեռ շարունակում է մնալ սևեռված այս պաշտպանականության վրա, որտեղ «կայացած» սև մտավորականները հաճախ հպարտանում են, որ ընդունված են սպիտակների կողմից, իսկ «չկայացածները»՝ հեգնում իրենց մերժված լինելը: Այս մտահոգությունը հատկապես սուր է արտահայտված սև մտավորականների առաջին սերնդի մոտ, ում որպես ուսուցիչներ և ուսումնագետներ ընդունեցին էլիտար սպիտակ համալսարաններ ու քոլեջներ (հիմնականում 1968 թ.-ից հետո ձևավորված երևույթ): Այս մտավորականների և նրանց ուսանողների հուշագրությունների հրապարակմամբ միայն կունենանք այն ազդու պատմությունները, թե ինչպես է այս պաշտպանականությունը վնասել նրանց մտավորական գործունեությանն ու ստեղծարարությանը: Այդուհանդերձ, որքան էլ այսպիսի պայքարն անձնապես ցավալի է եղել, դա պետք է մղվեր՝ հաշվի առնելով ամերիկյան մտավորական և ակադեմիական կյանքի ռասիստական միջավայրը: Պայքարն այս կշարունակվի, բայց գալիք սերունդների համար շատ ավելի քիչ բացասական հետևանքներով՝ շնորհիվ նախկինում ճանապարհ հարթողների մաքառումների:

Մյուս կողմից՝ սև համայնքում տիրող պաշարված վիճակը պահանջում է, որ սև մտավորականները շեշտադրեն իրենց աշխատանքի գործնական կողմը: Եվ սպիտակ բուրժուական ակադեմիայի շնորհած ազդեցիկությունն ու կարգավիճակը, ինչպես նաև հմտություններն ու միջոցներն այն գրավիչ են դարձնում տվյալ պարագայում: Սև մտավորականների մեծամասնության մոտ գործնականի շեշտադրումն առկա է՝ անկախ նրանց գաղափարախոսական համոզմունքներից (նույնիսկ ավելի, քան տիպական, պրագմատիկ ամերիկացի մտավորականի մոտ): Սրա պատճառը միայն իշխանության հասնելու կենսակերպերը և կարգավիճակին ուղղված դիրքորոշումները չեն, այլ նաև սև մտավորականների համեմատաբար սակավաթիվ լինելը, ինչը ստիպում է նրանց բազմաթիվ դերեր խաղալ հանուն սև համայնքի, ինչպեսև խորացնում է ինքնարդարացման կարիքը. այն, որ ունենալով եզակի հնարավորություններ և արտոնություններ, նրանք իրենց ժամանակը տեղին են ծախսում, որն էլ հաճախ հանգեցնում է ակտիվիստական և պրագմատիկ հետաքրքրությունների:

Բուրժուական մոդելի մեխն ակադեմիայի կողմից վավերացումն ու տեղակայումն է: Առանց պատշաճ վկայագրի, աստիճանի և դիրքի, բուրժուական մոդելը կորցնում է իր raison d'être-ը: Ամերիկյան ակադեմիական համակարգն ամբողջովին ներծծված է բուրժուական մոդելի ազդեցությամբ և գրավչությամբ, սակայն այս մոդելի արդյունավետությունը սև մտավորականների համար հավաստի է միայն, երբ նրանք ունեն վավերացում և տեղակայում: Այսպիսի վավերացումն ու տեղակայումը դուռ են բացում դեպի այն բացառիկ ցանցերն ու կապերը, որոնք կարող են օգնել սևերին ներգործելու հանրային քաղաքականությունների վրա: Հենց սա է կարծես եղել էլիտար սպիտակ հաստատություններում կրթված առաջին սև սերնդի նպատակը (թեև նրանց չէին թույլատրում այնտեղ դասավանդել), եթե նկատի ունենանք հասարակական գիտությունների հանդեպ նրանց հետաքրքրությունը:

Հիմնական խնդիրը սակայն այն է, որ բուրժուական մոդելը սև մտավորականների համար գոյութենական և մտավորական առումով բթացնող է: Գոյութենական առումով այն հաշմող է, որովհետև ոչ միայն պաշտպանականության տագնապներ է առաջացնում, այլև բարգավաճում է դրանց վրա: Բուրժուական հումանիստական ուսումնագիտության մեջ ստորակարգության անհրաժեշտությունն ու խոր նստած ռասիզմը չեն կարող սև մտավորականներին տալ ո՛չ պատշաճ էթոս, ո՛չ էլ հղացական հենք՝ ձերբազատվելու պաշտպանական կեցվածքից: Իսկ մտավորական թերարժեքության մեղադրանքներին անհնար է հակադրվել հակառակորդի դաշտում և նման փորձը միայն տանում է դեպի տագնապների խորացում: Ավելի շուտ դաշտն ինքնին պետք է դիտարկել որպես հնացած կենսաձևի բաղկացուցիչ մաս, որում չարժի սահմանել ժամանակակից դիսկուրսի պայմանները:

Բուրժուական մոդելը մտավորական սահմանափակումներ է դնում, այն առումով, որ գործնական առաջադրանքների և խոնարհ ընդօրինակման ճնշումների ներքո մեկը ստիպված է լինում անքննադատորեն ընդունել բուրժուական ակադեմիայում գերիշխող հարացույցները: Բոլոր մտավորականներն էլ անցնում են ինչ-որ աշակերտման շրջան, որում սովորում են հեղինակությունների լեզուն ու ոճը, սակայն երբ նրանց ի սկզբանե արդեն դիտարկում են որպես լուսանցքայնորեն տաղանդավոր, նրանց կարող են կա՛մ չափից ավելի խրախուսել, կա՛մ խաբուսիկորեն չխրախուսել, որ քննադատորեն

հարցաքննեն հեղինակությունների կողմից լուսանցքային համարվող հարացույցները: Այս անբարյացակամ միջավայրը ջլատում է նրանց քննադատավերլուծական կարողությունները և հանգեցնում իմտությունների սահմանափակ, այսինքն՝ վավերական և գործնական կիրարկմանը:

Չնայած այս սահմանափակումներին՝ բուրժուական մոդելը սև մտավորականների մեծամասնության համար անխուսափելի է: Պատճառն այն է, որ երկրի ամենակարևոր ու լուսավորող դիսկուրսները տեղի են ունենում սպիտակ բուրժուական ակադեմիական հաստատություններում, և որ ավելի նշանավոր մտավորականները դասավանդում են հենց այսպիսի տեղերում: Էլիտար սպիտակ համալսարաններից ու քոլեջներից շատերը շարունակում են մնալ կրթության, ուսման և վերապատրաստման հզոր դպրոցներ՝ հիմնականում շնորհիվ հսկայական ռեսուրսների և քաղաքացիական ավանդույթների, որոնք ապահովում են կայուն և լուրջ մտավորական նախաձեռնությունների համար անհրաժեշտ ազատ ժամանակն ու միջավայրը: Եվ ուրեմն, բացի մի քանի լուրջ ինքնուսներից (ովքեր հաճախ ունեն տպավորիչ մտահորիզոն, սակայն չունեն հիմք և խորություն), սև մտավորականները պետք է անցնեն սպիտակ բուրժուական ակադեմիայի (կամ դրա սև նմանակների) միջով:

Սև ակադեմիական վավերացումն ու տեղակայումը կարող են ամերիկյան մտավորական կյանքում հենակետ հանդիսանալ, որպեսզի ստեղծվեն մտավորական գործունեության համար սև ենթակառուցվածքներ: Ներկայումս սևերը ոչ մեծ, սակայն նշանակալի ներկայություն ունեն սպիտակ բուրժուական ակադեմիական կազմակերպություններում և կարողանում են հրատարակել թերթեր և փոքր պարբերականներ: Հաջորդ քայլը սև մտավորական ներկայության ավելի լայն հաստատութենացումն է, ինչպես արել է, օրինակ, Նյու Յորքի սև փիլիսոփաների ընկերակցությունը՝ հրատարակելով հանդեսներ, որոնք խարսխված են մի գիտակարգում (բեկումնային՝ ապագա դասախոսների մասնագիտական ուղու համար), սակայն առնչակցվում են նաև այլ գիտակարգերի հետ: Հարկ է նշել, որ մտավորական գործունեության այսպիսի սև ենթակառուցվածքը պետք է գրավի մաշկի ցանկացած երանգ կամ գույն ունեցող անձանց: Այս առումով սև գրաքննադատները և հատկապես հոգեբաններն առաջ են այլ սև մտավորականներից, քանի որ հրապարակում են ամսագրեր, ինչպիսիք են՝ «Black American Literature Forum»-ը, «The College Language Association»-ը և «The Journal of Black Psychology»-ն:

Սև ակադեմիական վավերացումն ու տեղակայումը կարող են նաև հանգեցնել մտավորական գործունեության ավելի մեծ սպիտակ ենթակառուցվածքների վերահսկմանը կամ դրանցում կցալի մասնակցություն ունենալուն: Լայն մասշտաբով սա դեռևս իրողություն չէ: Անհրաժեշտ է ապահովել ավելի մեծ սև ներկայացուցչություն կարևոր ամսագրերի խմբագրակազմերում, ինչը թույլ կտա ավելացնել սև մտավորական ներկայությունը: Այս գործընթացը շատ ավելի դանդաղ է ու քիչ տեսանելի, սակայն, հաշվի առնելով բուրժուական մոդելի գերակայությունը, այն պետք է իրականացնեն նրանք, ովքեր հակված են դրան:

Ի վերջո, խորքային առումով, բուրժուական մոդելը սև մտավորականների համար ավելի շատ խնդրի, քան թե լուծման մաս է կազմում: Բայց քանի որ մեր կյանքի յուրաքանչյուր օրն ապրում ենք այս համակարգում, մեկանից նրանք, ովքեր քննադատաբար են մոտենում բուրժուական մոդելին, պետք է փորձեն հեղաշրջել այն,

մասամբ՝ սպիտակ բուրժուական ակադեմիայի ներսից: Սև մտավորականների և նրանց ոչ սև առաջադեմ մտավորական դաշնակիցների համար սա նշանակում է ստեղծել և ընդլայնել սև մտավորական գործունեության ենթակառուցվածքները:

Մարքսիստական մոդելը. Սև մտավորականը՝ որպես հեղափոխական

Սև մտավորականներից շատերը ծնկի ռեֆլեքսի անմիջականությամբ են հակադրում բուրժուական մոդելի խիստ սահմանափակումներին (ինչպես նաև կապիտալիստական հասարակությանը). այն է՝ որդեգրում են մարքսիստական մոդելը: Վերջինս բավարարում է սև մտավորականության որոշ հիմնական կարիքներ՝ ունենալ հասարակական այժմեականություն, քաղաքական մասնակցություն և կազմակերպչական ներգրավվածություն: Այս մոդելը նաև մուտք է ապահովում դեպի ամենաքիչ այլատյաց սպիտակ մտավորական ենթամշակույթ, որ հասանելի է սև մտավորականներին:

Մարքսիստական մոդելն արտոնում է սև մտավորականների գործունեությունը և նպաստում նրանց մարգարեական դերին: Սակայն, ինչպես Հարոլդ Քրուզն է նշել[10], նման արտոնումը չափազանց սահմանափակող է և հազվադեպ է կարևորում սև մտավորական գործունեության տեսական կողմը: Կարճ ասած, մարքսիստական արտոնումից հաճախ մեծամտության հոտ է գալիս, որը նեղացնում է սև մարգարեական դերը խոսնակների կամ կազմակերպիչների. սև մտավորականներին հազվադեպ է թույլատրվում հանդես գալ որպես ստեղծագործ մտածողներ, ովքեր արժանի են լուրջ քննադատական ուշադրության: Պատահական չէ, որ այն բազում սև մտավորականները, ովքեր վերջին վաթսուն տարիների ընթացքում տարված են եղել մարքսիզմով, դեռևս պետք է ծնունդ տան մի նշանավոր մարքսիստ տեսաբանի: Միայն Վ. Է. Բ. Դու Բոյսի «Սև վերակառուցում»-ը («Black Reconstruction», 1935), Օլիվեր Քոքսի «Կաստա, դաս և ռասա»-ն («Caste, Class, and Race», 1948) և ինչ-որ չափով Հարոլդ Քրուզի «Նեգրո մտավորականի ճգնաժամը» («The Crisis of the Negro Intellectual», 1967) կարող են համազոր թեկնածուներ լինել այդ կոչման համար: Սա մարքսիստական ճամբարում սև մտավորական տաղանդի բացակայության պատճառով չէ, այլ որովհետև չկա այնպիսի ավանդույթ ու համայնք (ավելի քննադատական փոխանակում), որը թույլ կտա նման տաղանդի ծաղկում:

Ի հակադրություն բուրժուական մոդելի, մարքսիստական մոդելը սև մտավորականների մոտ ո՛չ պաշտպանականության կարիք է առաջացնում, ո՛չ էլ կարճաժամկետ հանրային քաղաքականությունների համար պատշաճ վերլուծական ապարատ է տրամադրում: Ավելի շուտ այն հանգեցնում է սև մտավորական ինքնագոհության, ինչը հաճախ խանգարում է աճին. այն նաև ընդգծում է հասարակական կառուցվածքային սահմանափակումները, գրեթե չառաջարկելով որևէ գործնական քայլեր իրադրային (կոնյունկտուրային) հնարավորությունների համար: Այս ինքնագոհությունը հանգեցնում է կա՛մ ներկուսակցական խմբավորումների, կա՛մ նախակուսակցական ձևավորումների ներսում դոգմատիկ ենթարկության և վերընթաց շարժման, կա՛մ բուրժուական ակադեմիայում լուսանցքային տեղակայման, որտեղ տիրում են կռվարար մարքսիստական հռետորություն և երբեմն խորաթափանց վերլուծություն՝ լիովին կտրված սև համայնքի բովանդակ դինամիկայից, շոշափելի իրականություններից և առաջադիմական հնարավորություններից: Հասարակական կառուցվածքային սահմանափակում-

ների վրա սևեռվածությունը հաճախ հանգեցնում է անմիտ, քիլիաստական կանխատե-սումների կամ կաթվածահարող, հոռետեսական հայտարարությունների: Նման կանխատեսումներն ու հայտարարությունները վերաբերում են թե՛ սև մարքսիստ մտավորականների ինքնապատկերացմանը և թե՛ սև ազատագրական շարժման հեռանկարին:

Հաճախ պնդում են, որ «մարքսիզմն արմատականացած, բուրժուական մտավորա-կանության կեղծ գիտակցությունն է»: Սև մտավորականների համար մարքսիստական մոդելը գործում է ավելի բարդ ձևով, քան այս մակերեսային ձևակերպումն է ենթադրում: Մի կողմից, մարքսիստական մոդելը սև մտավորականների համար ազատագրող է այն իմաստով, որ այն քննադատական գիտակցություն և վերաբերմունք է սերմանում գերիշխող բուրժուական հարացույցների և հետազոտական ծրագրերի հանդեպ: Մարքսիզմը սև մտավորականներին գրավիչ դերեր է բաշխում՝ սովորաբար շատ տեսանելի առաջնորդական դերեր, և նոր իմաստ ու հրատապություն է հաղորդում նրանց աշխատանքին: Մյուս կողմից՝ այս մոդելը սև մտավորականներին հաշմում է, քանի որ բավարարելով նրանց ինքնամաքրագործման կարիքները՝ խեղդում է սև քննադատական գիտակցության և կեցվածքների հետագա զարգացումը:

Մարքսիստական մոդելը, իր թերություններով հանդերձ, սև մտավորականների համար ավելի շատ լուծման, քան թե խնդրի մաս է կազմում: Քանզի մարքսիզմը մեր հետարդի ժամանակների «կրակե գետն» է (Feuer-bach)՝ քավարանը: Սև մտավորականները պետք է անցնեն դրա միջով, հաշտվեն դրա հետ, և ստեղծագործաբար արձագանքեն, եթե ցանկանում են, որ սև մտավորական գործունեությունը հասնի խրթնության և հղկվածության ճանաչելի մակարդակի:

Ֆուկոյական մոդելը. Սև մտավորականը՝ որպես հետարդի սկեպտիկ

Մինչ արևմտյան մտավորական կյանքի ճգնաժամը գնալով խորանում է, և մինչ սև մտավորականներն ավելի լիովին են ինտեգրվում մտավորական կյանքին՝ կամ «ուշիմ և քննադատական դիսկուրսի մշակույթին» (ինչպես Ալվին Գուլդներն էր այն անվանում), հորիզոնում նոր մոդել է հայտնվում: Այս մոդելը, որն էապես հիմնված է Միշել Ֆուկոյի ազդեցիկ աշխատանքի վրա, միանշանակորեն մերժում է բուրժուական մոդելը և խուսափում մարքսիստականից: Ֆուկոյի պատմական նոմինալիզմի նախագիծը մեր օրերի ամենաազդուորիչ մտավորական մարտահրավերներից է: Գիտելիքի և իշխանության, դիսկուրսի և քաղաքականության, ճանաչողության և հասարակական վերահսկողության բարդ հարաբերությունների այս մանրակրկիտ հետազոտությունը մտավորականներին դրդում է վերաքննել ու վերասահմանել իրենց ինքնապատկե-րացումն ու գործառույթը մեր ժամանակակից իրականությունում:

Ֆուկոյական մոդելը և նախագիծը գրավիչ են հատկապես սև մտավորականների համար, քանի որ կապված են սևերի հետարդի կացության հետ՝ պայմանավորված ողջ ակադեմիայում գերիշխող բուրժուական հումանիզմի անսանձ այլատյացությամբ, մարքսիզմի նեղ-ուղղահավատ և գիտական տարբերակների հանդեպ մարող հետաքրքրությամբ և աֆրո-ամերիկացիների կեղեքման առանձնահատկության և բարդության վերաիմաստավորման կարիքով: Ֆուկոյի խոր հակաբուրժուական տրամադրվածությունը, բացահայտ հետ-մարքսիստական համոզմունքները, և

գերիշխող դիսկուրսների և ավանդույթների կողմից արմատականորեն «Այլ» համարվողների վրա խորին սևեռվածությունը բավականին գայթակղիչ են այն քաղաքականացված սև մտավորականների համար, ովքեր պգուշանում են սև ապատագրական շարժման հնացած համադարմաններից:

Ֆուկոյի «ճշմարտության քաղաքական տնտեսության» առանձնահատուկ վերլուծությունները (դիսկուրսային ձևերի և հաստատութենական միջոցների ուսումնասիրությունը, որոնցով հասարակությունները տարածության և ժամանակի ընթացքում «ճշմարտության ռեժիմներ» են կազմավորում) մտավորականին նոր ձևով են հղացնում: Այս հղացումն այլևս հիմնված չէ «լավագույնը, որ մտածել և ասել են»-ի սահուն փոխանցման վրա, ինչպես բուրժուա-հումանիստական մոդելում է, կամ մարքսիստական մոդելի ուտոպիական էներգիաների վրա: Հետարդի իրավիճակը պահանջում է «առանձնահատուկ մտավորականի», ով խուսափում է գիտականության, բարեկրթության և մարգարեության պիտակներից և փոխարենը ընկղմվում է քաղաքական, տնտեսական և մշակութային մատրիքսների առանձնահատկության մեջ, որոնցում արտադրվում, բաշխվում, շրջանառվում և սպառվում են ճշմարտության ռեժիմները: Մտավորականներն այլևս չպետք է իրենք իրենց խաբեն, հումանիստ և մարքսիստ մտավորականների պես՝ հավատալով, որ պայքարում են «վասն» ճշմարտության. խնդիրն իրականում ճշմարտության հենց կարգավիճակի, ինչպես նաև այդ կարգավիճակը ձևավորող վիթխարի հաստատութենական մեխանիզմների համար պայքարն է: Բուրժուական հումանիզմի և մարքսիզմի նախասիրած հիմնաբառերը՝ «գիտություն», «ճաշակ», «նրբանկատություն», «գաղափարախոսություն», «առաջընթաց», «ապատագրում», այլևս չեն խոսում հետարդի մտավորականների ինքնապատկերացման մասին: Փոխարենը, կարևոր են դառնում «ճշմարտության ռեժիմ», «իշխանություն/ գիտելիք», «դիսկուրսային պրակտիկաներ» հասկացությունները:

Ֆուկոյի առանձնահատուկ մտավորականի գաղափարը հիմնված է պահպանողական, ազատական և մարքսիստական հռետորությունների խորհրդազերծման (demystification) վրա, որոնք վերականգնում, վերատեղադրում և վերակառուցում են մտավորականների ինքնություններն այնպես, որ նրանք շարունակեն գերի մնալ և սատարել գերիշխման և վերահսկման հաստատութենական ձևերին: Այս հռետորությունները տարբեր ձևերով լիազորում և վավերացնում են մտավորականների արտոնյալ կարգավիճակը, որը ոչ միայն վերարտադրում է մտավորական և ֆիզիկական աշխատանքի միջև գաղափարախոսական բաժանումները, այլև վերամբապնդում է ենթարկման և հպատակեցման կարգապահական (disciplinary) մեխանիզմները: Այս ինքնալիազորումն ակներև է մտավորականների այն պնդումներում, որ նրանք իբրև թե «պահպանում» են բարձր մշակույթի ձեռքբերումները կամ «ներկայացնում» են որոշակի խավերի և խմբերի «համամարդկային շահերը»: Աֆրո-ամերիկյան մտավորական պատմության մեջ հաճախ ենք հանդիպում այդպիսի ինքնալիազորող պնդումների՝ «տաղանդավոր տասներորդը», «մարգարեներն անապատում», «սև գեղագիտության ձևակերպողները», «սև վերածննդի հիմնադիրները», «հեղափոխական շարժման առաջամարտիկները» և այլն:

Ֆուկոյական մոդելն առաջադրում է հետարդիական թերահավատության ձախական մոտեցում. այն խրախուսում է իշխանությամբ լծված դիսկուրսների խիստ և անդադար

հարցաքննում՝ ոչ հանուն վերականգնման, բարեփոխման կամ հեղափոխության, այլ հանուն հեղաշրջման: Եվ մտավորականների ձեռնարկած հեղաշրջումը ժամանակակից հասարակություններում գերիշխող «ճշմարտության ռեժիմների», ինչպես նաև դրանց ճնշող ազդեցությունների ընդհատումն ու քանդումն է: Այս մոդելն արձագանքում է առաջադեմ սև մտավորականների քննադատական, թերահավատ և պատմական մտահոգություններին, և սոփեստական արդարացում է ընձեռում՝ ավատագրմանն ուղղված սև ընդվզական շարժումներից գաղափարախոսական և հասարակական հեռավորություն պահելու համար: Մտավորական աշխատանքը հղացնելով որպես ընդդիմադիր քաղաքական պրակտիկա, այն բավարարում է սև մտավորականների ձախական ինքնապատկերացումը, և քննադատական գիտակցությունը պաշտամունքի առարկա դարձնելով, սև մտավորական գործունեությունը պարփակում է հետարդի Ամերիկայի հարմարավետ բուրժուական ակադեմիայի մեջ:

Ընդվզողական մոդելը. Սև մտավորականը՝ որպես քննադատական, բնական կատալիստ

Սև մտավորականները շատ բան կարող են սովորել նախորդ երեք մոդելներից, սակայն չպետք է անքննադատորեն ընդունեն դրանցից և ոչ մեկը: Պատճառն այն է, որ բուրժուական, մարքսիստական և ֆուկոյական մոդելները թեպետ առնչակցվում են, բայց բավարար չափով չեն արձագանքում սև մտավորականների կացության յուրահատկությանը: Այս յուրահատկությունը մնում է և կմնա համեմատաբար չուսումնասիրված այնքան, մինչև սև մտավորականները չձևակերպեն մի նոր «ճշմարտության ռեժիմ», որը թեև կապված է, բայց սահմանափակված չէ բնաշխարհիկ հաստատութենական պրակտիկաներով, որոնք ներծծված են աֆրո-ամերիկյան կյանքի կինետիկ բանավորությամբ և հուզական ֆիզիկականությամբ, ռիթմիկ սինկոպայով, պրոթևսյան իմպրովիզությամբ և կրոնական, հռետորական ու փոխերգական կրկնություններով: Նման ձևակերպումը մասամբ կախված է բարդ սև ենթակառուցվածքներից, որոնք կարևորում են ստեղծարար և կատարելագործված սև միտքը: Այն նաև ենթադրում է գերիշխող եվրո-ամերիկյան «ճշմարտության ռեժիմների» խոր իմացություն, որոնք պետք է խորհրդավերծվեն, ապակառուցվեն և տարրալուծվեն այնպես, որ ընդլայնեն ու հարստացնեն ապագա սև մտավորական կյանքը: Սև մտածողների կողմից բացահայտվելիք նոր «ճշմարտության ռեժիմը» ո՛չ համափակ դիսկուրս է (կամ դիսկուրսների շարք), որը պահպանում է միջակ սև մտավորական արտադրանքը, ո՛չ էլ սև գրի վերջին նորաձևություն, որի շարժառիթը հաճախ բխում է սպիտակ բուրժուական մտավորական հաստատության համար շքահանդես անելու ցանկությունից: Ավելի շուտ, այն անբաժանելի է նոր մշակութային ձևերի առաջացումից, որոնք կանխատեսում են (և ուղղված են դեպի) հետ-(ոչ թե հակա-)արևմտյան քաղաքակրթություն: Ներկայումս նման խոսակցությունները կարող են երազանք և պատրանք թվալ: Այնպես որ, պետք է սահմանափակվենք առաջին քայլով՝ սև ընդվզում և սև մտավորականի դերը:

Սև մտավորականների համար առաջնահերթը պետք է լինի այն հաստատութենական ցանցերի ստեղծումը կամ վերագործարկումը, որոնք բարձրարժեք քննադատական սովորույթներ կխրախուսեն՝ հանուն սև ընդվզման: Հաստատութենացված

քննադատական գիտակցությունից պուրկ մտավորականությունը կույր է, իսկ հավաքական ընդվզումից կտրված քննադատական գիտակցությունը՝ դատարկ: Հետարդի սև մտավորականության հիմնական գործը գերիշխող դիսկուրսները և ուժերը տեղահան անելով՝ այլընտրանքային ընկալումներ ու պրակտիկաներ խթանելն, արագացնելն ու հնարավոր դարձնելն է: Սրան հասնելու միակ ձևն անխոնջ մտավորական աշխատանքն է և ներգրավված ընդվզման պրակտիկան:

Սև մտավորական գործունեության համար ընդվզողական մոդելը կառուցվում է նախորդ երեք մոդելների վրա, բայցև վանցում է դրանք: Բուրժուական մոդելից այն վերցնում է մարդու կամքի և հերոսական ջանքի շեշտադրումը: Սակայն ընդվզողական մոդելը հրաժարվում է այս կամքը և ջանքն անհատապաշտական և էլիտիստական առումով հղացնել: Միայնակ հերոսի, մարտնչող աքսորյալի և մեկուսացած հանճարի փոխարեն (մտավորականը՝ որպես աստղ, հռչակավոր անձ, ապրանք), այս մոդելը նախապատվությունը տալիս է հավաքական մտավորական աշխատանքին, որը նպաստում է համայնական դիմադրությանը և պայքարին: Այլ կերպ ասած, այն ստեղծագործաբար առոգանում է բուրժուական մոդելի կամապաշտությունն ու հերոսականությունը, բայց մերժում է վերջինիս միամտությունը՝ կապված հասարակության և պատմության դերի հետ: Մարքսիստական մոդելից այն վերցնում է կառուցվածքային սահմանափակումների, դասակարգային ձևավորումների և արմատական ժողովրդավարական արժեքների շեշտադրումը: Սակայն ընդվզողական մոդելն այդ սահմանափակումները, ձևավորումներն ու արժեքները չի դիտարկում էկոնոմիստական և դետերմինիստական տեսանկյունից: Արդյունաբերական աշխատավոր դասակարգի ի սկզբանե արտոնման և համեմատաբար ներդաշնակ սոցիալիստական հասարակության բնականոնական դրույթի փոխարեն, այն կապմակերպում է հասարակական ստորակարգության տեսակների վրա կանգվածային հարձակում և հասարակական տարասեռության արմատական ժողովրդավարական (և ապատամտական) միջնորդություն, ոչ վերացում: Կարճ ասած, ընդվզողական մոդելը հնարամտորեն ընդգրկում է մարքսիստական մոդելի կառուցվածքային, դասակարգային և ժողովրդավարական մտահոգությունները, սակայն գիտակցում է մշակույթի վերաբերյալ վերջինիս միամտությունը:

Եվ վերջապես, ֆուկոյական մոդելից ընդվզողական մոդելը յուրացնում է աշխարհիկ թերահավատության, «ճշմարտության ռեժիմների» պատմական կապմավորման և «իշխանություն/գիտելիք»-ի բազմատեսակ գործարկումների վրա սևեռվածությունը: Սակայն ընդվզողական մոդելն այս թերահավատությունը, ճշմարտության կապմավորումը և մանրակրկիտ ծագումնաբանական հարցադրումը չի վերագրում միայն իշխանության միկրոցանցերին: Իշխանության ամենուրեքության (որը պարզեցնում ու տափակեցնում է բազմաչափ հասարակական ընդհարումը) և անցյալ ուտոպիականություններին կաթվածահար անող գերհակազդեցության փոխարեն այն ստեղծում է արդյունավետ դիմադրության և հասարակության իմաստալից փոխակերպման հնարավորությունը: Ընդվզողական մոդելը զգուշորեն ընդգծում է խորին նիցշեական կասկածը և ֆուկոյական մոդելի լուսավորող ընդդիմական նկարագրությունները, թեև այն գիտակցում է վերջինիս միամտությունը՝ կապված հասարակական ընդհարման, պայքարի և ընդվզման հետ. միամտություն, որը նախ և առաջ պայմանավորված է ուտոպիականության ցանկացած ձևի և թելոսի ցանկացած ենթադրության մերժմամբ:

Սև մտավորական աշխատանքը և սև հավաքական ընդվզումը պետք է արմատավորված լինեն աֆրո-ամերիկյան կյանքի և պատմության առանձնահատկության մեջ, բայցև պետք է անխզելիորեն կապված մնան ամերիկյան, եվրոպական և աֆրիկյան տարրերի հետ, որոնք կերտում ու ձևավորում են դրանք: Այս աշխատանքը և ընդվզումը բացահայտորեն մասնավորական են (համայնքի շահերով պայմանավորված), թեև ոչ առանձնական-բացառական, և այդ իսկ պատճառով էլ աշխարհայացքով ու գործնականում միջազգային են: Իրենց պատմական նախորդների՝ սև քարոզիչների և սև երաժիշտների պես (նրանց ուժեղ և թույլ կողմերով հանդերձ), սև մտավորականները պետք է գիտակցեն, որ «նոր» և այլընտրանքային պրակտիկաների ստեղծումը գալիս է հավաքական մտավորական աշխատանքի հերոսական ջանքերից և համայնական դիմադրությունից, որոնք ձևավորում և ձևավորվում են ներկայի կառուցվածքային սահմանափակումներից, իշխանության գործադրումներից և մշակույթների միաձուլման եղանակներից: Հատկանշական աֆրո-ամերիկյան մշակութային ձևերը, ինչպիսիք են՝ սև քարոզի և աղոթքի ոճերը, հոգևոր երգերը, բլյուզը և ջազը պետք է ոգեշնչեն, բայց չսահմանափակեն ապագա սև մտավորական արտադրանքը. այսինքն՝ գործընթացը, որով այս ձևերը ստեղծվել են, պետք է արժեքավոր ներըմբռնումներ փոխանցի, բայց դրանք չպետք է նմանակվեն կամ ընդօրինակվեն: Ավելորդ է նշել, որ այս ձևերը բարգավաճում են շնորհիվ անընդմեջ քննադատական նորարարության և համընթաց ընդվզման:

Սև մտավորականի ապագան

Պետք չէ, որ սև մտավորականի կացությունը դժվար ու վհատեցնող լինի: Չնայած ամերիկյան հասարակության համատարած ռասիզմին և սև համայնքի հակամտավորական լինելուն, քննադատական տարածքը և ընդվզական գործունեությունը հնարավոր է ընդլայնել: Նման ընդլայնումն ավելի դյուրին կլինի, երբ սև մտավորականներն ավելի անկեղծ հայացքով նայեն իրենք իրենց, իրենց կերտող պատմական և հասարակական ուժերին, և իրենց համայնքի սահմանափակ, բայցև կցալի միջոցներին: Եվ ուրեմն անհետաձգելի է քննադատական այն «ինքնագույքագրումը», որը կզննի սև մտավորականների հասարակական դիրքերը, դասակարգային տեղակայումները և մշակութային սոցիալականացումները: Նման զննումը չպետք է դրդվի ո՛չ ինքնախղճահարությամբ, ո՛չ էլ ինքնաբավարարությամբ: Ավելի շուտ, այս «ինքնագույքագրումը» պետք է մարմնավորի քննադատության և դիմադրության ոգին, որը գործադրելի կլինի թե՛ սև համայնքի, թե՛ ամերիկյան հասարակության և թե՛ արևմտյան քաղաքակրթության համար՝ որպես ամբողջություն: Ջեյմս Բոլդուինը նշել է, որ սև մտավորականն «ինչ-որ առումով Արևմուտքի խառնածինն է»: Սև մտավորականի ապագան ո՛չ արևմտյան ծնողի հանդեպ խոնարհական հակվածության մեջ է, ո՛չ էլ աֆրիկյան ծնողի կարոտաբաղձ փնտրտուքում: Ավելի շուտ, այն երկրագունդը պաշտպանող ու ավելի լավ աշխարհ պատկերացնող այս հիբրիդային տոհմագծի քննադատական ժխտման, իմաստուն պահպանման և ընդվզական փոխակերպման մեջ է:

Աղբյուրը՝ Cornel West, «The Dilemma of the Black Intellectual», Cultural Critique No. 1 (Autumn, 1985), 109-124:

1 *W. E. B. Du Bois (1868-1963), ամերիկացի հասարակագետ, պատմաբան և քաղաքացիական իրավունքների պաշտպան: Ավարտել է Բեռլինի համալսարանը և Հարվարդը, դառնալով առաջին սև ամերիկացին, որ արժանացել է փիլիսոփայության դոկտորի աստիճանին: Եղել է Նայագրա շարժման (Niagra Movement) առաջնորդը և Գունավոր մարդկանց առաջադիմության ազգային ընկերակցության (National Association for the Advancement of Colored People) համահիմնադիրը: Հեղինակած գրքերից ամենահայտնիներն են «The Souls of Black Folk» (1903) ակնարկների ժողովածուն և «Black Reconstruction in America» (1935) ծավալուն աշխատությունը: [Խմբ. ծանոթագրություն]*

2 *E. Franklin Frazier (1894-1962), ամերիկացի հասարակագետ: Հեղինակել է բազում գրքեր, որոնցից առավել հայտնի են «The Negro Family in the United States» (1939) ավարտաճառը և ֆրանսերենով գրված «Bourgeoisie noire» (1955) գիրքը, որը հետագայում թարգմանվեց նաև անգլերեն՝ «Black Bourgeoisie» (1957): [Խմբ. ծանոթագրություն]*

3 *John Hope Franklin (1915-2009), ամերիկացի պատմաբան և քաղաքացիական իրավունքների պաշտպան: Նրա գրքերից ամենաընթերցվածը «From Slavery to Freedom» (1947թ.) աշխատությունն է: Դասավանդել է տարբեր համալսարաններում, ներառյալ Հարվարդի, Նյու Յորքի, Քեմբրիջի, Դյուք համալսարանները: [Խմբ. ծանոթագրություն]*

4 *Richard Wright (1908-1960), ամերիկացի հրապարակախոս և արձակագիր: «Native Son» (1940թ.) վեպը նրա ամենաճանաչված և աղմուկ բարձրացրած ստեղծագործությունն է: [Խմբ. ծանոթագրություն]*

5 *Ralph Ellison (1913-1994), ամերիկացի գրող և գրաքննադատ: Շատ հայտնի է իր «Invisible Man» վեպով, որի համար 1953 թ. արժանացել է Ազգային գրքի մրցանակին: [Խմբ. ծանոթագրություն]*

6 *James Baldwin (1924-1987), ամերիկացի գրող, հրապարակախոս և հասարակական քննադատ: Նրա «Giovanni’s Room» (1956) վեպը, Ալեն Գինսբերգի «Howl» (1955) բանաստեղծության պես, իր բացահայտ հոմոէրոտիկ բովանդակությամբ այդ ժամանակաշրջանի ամենավիճահարույց ստեղծագործություններից էր: [Խմբ. ծանոթագրություն]*

7 *St. Clair Drake (1911-1990), ամերիկացի հասարակագետ և մարդաբան: Հետազոտել և գրել է 1960-ականների խռովությունների և սև ապատագրական շարժման մասին, դասավանդել է Սթանֆորդի համալսարանում, որտեղ հիմնադրել է Աֆրիկյան-ամերիկյան ուսումնասիրությունների ծրագիրը:*

8 *Toni Morrison (1931-), ամերիկացի գրող, գրաքննադատ և հրապարակախոս, գրականության բնագավառում Նոբելյան մրցանակի դափնեկիր: Random House հրատարակչության գեղարվեստական գրականության բաժնի առաջին սև կին խմբագիրն է եղել, հեղինակել է ավելի քան երկու տասնյակ գրքեր, որոնցից ամենահայտնին՝ «Beloved» (1987) վեպը 1988-ին արժանացել է Պուլիտցերյան մրցանակի:*

9 *Zora Neale Hurston (1891-1960), ամերիկացի արձակագիր, բանահավաք և մարդաբան: Հայտնի է ամերիկյան Հարավի մասին, ինչպես նաև հայիթյան վուդու ավանդույթի իր հետազոտական աշխատանքով: Հիսունից ավելի պատմվածքների ու պիեսների հեղինակ է, գրքերից ամենաընթերցվածը «Their Eyes Were Watching God» (1937) վեպն է:*

10 *Harold Cruse (1916-2005), ամերիկացի ակադեմիկոս և հասարակական քննադատ: 1947 թվականից մինչև 1969 թվականը եղել է ԱՄՆ կոմունիստական կուսակցության անդամ: Երկար տարիներ դասավանդել է Միշիգանի համալսարանում, հայտնի է «The Crisis of the Negro Intellectual» (1967) աշխատությամբ:*



Անտոնիո Տաբուկկի

Թարգմանությունը՝ Սոնա Հարությունյանի

Իտալացի գրող Անտոնիո Տաբուկկին Antonio Tabucchi (1943-2012) հայտնի է նաև իր հականացիոնալիստական դիրքորոշմամբ: Զբաղվել է պորտուգալական գրականությամբ, Ֆերնանդո Պեսոային նվիրված երեք գիրք հեղինակել: Դասախոսել է Ջենովայի, Սիենայի համալսարաններում: Առաջին գիրքն է «Իտալիայի հրապարակը» (1975): Հայտնի ստեղծագործություններից են՝ «Հնդկական նոկտյուրն», «Զախողված երկխոսություններ», «Պաշտպանում է Պերեյրան», «Տրիստանը մահանում է»: Այս պատմվածքը (Notte, mare o distanza) թարգմանված է 1991-ին տպագրված «Սև հրեշտակ» (L'angelo nero) ժողովածուից:

Ամեն անգամ, երբ երևակայում էր, թե ինչպես կարող էին դառնալ այդ գիշերվա դեպքերը, նրա ականջին հասնում էր Տադեուշի ռնգային և հեգնական ձայնը, որ վանկարկում էր մեկն իր այն խոսքերից, որով ցանկանում էր ասել ամեն ինչ և ոչինչ. լավ սկիզբ է: Եվ շուտով ամբողջը սկսում էր կերպարանավորվել և ուրվագծվել մի շրջանակում. Պրինչիպե Ռեալ պարտեզը՝ հարյուրամյա ծառով և դեղին տների շարքով, նեղ ճանապարհը, ճանապարհով անցնող երկաթուղին, այդ ցուրտ գիշերը՝ հեռավոր 1969 թվին, երկրորդ հարկում գտնվող սենյակը՝ լեփ-լեցուն գրքերով, փոքր, ներսում՝ ընկերները, նրանք չորսն են՝ անցյալի դեմքերով, արդեն հասուն կանայք ու տղամարդիկ: Այո՛, բայց անցյալի հիշողություններում իրենց իրական տարիքից ավելի փոքր էին երևում, ո՞վ գիտի ինչու, թերևս հագնվելու ոճը կամ մազերի կտրվածքն էր պատճառը: Համենայն դեպս, նրանք քանանն անց չորս երիտասարդներ էին՝ լի հույսով և բարի կամքով, նրանք կրուցում էին անվանի բանաստեղծի հետ, ով այժմ արդեն գրեթե ծեր էր, ով երիտասարդ տարիներին պատերազմասեր էր ու կատաղի, բայց ժամանակի ընթացքում տեղի տվեց՝ հպատակվելով կյանքին ու դեպքերի ընթացքին, կատաղությունը փոխվեց հեգնանքի ու դառնության, իսկ մարտնչելու մղումը՝ սկեպտիկության մի մարդու, ով պայքարել էր ու պարտվել, ով համարում էր, որ ճակատամարտում պայքարելն անիմաստ է:

Ամեն անգամ, երբ երևակայում էր այդ գիշերվա դեպքերը, փորձում էր խուսափել Տադեուշի այդ դավադիր խոսքից, որ նման մի տարօրինակ դժկամության, համարյա թե նողկանքի, նրան դրդում էր այդ եկրակացության, ապա դրա հանգուցալուծմանը, և պատիժը, որին կռիերը պետք է դիմակայեին, և այդժամ նրանց՝ այդ փոքր խմբին տեսնում էր արդեն ճանապարհի ընկնելիս. միմյանց բարի գիշեր մաղթելիս, հետո նրանցից մեկը էլի երեք կամ չորս րոպե մի հարվածով կամ մի ավել արտահայտությամբ իստակ չիիշելով գիշերվա դեպքերը, և այդ պահին գալիս էր անողոք հանդիպման մեքենան, որը վերաբերում էր մի փորձառության, որ հենց նրանք պիտի հաղթահարեին: Բայց այդ պահին նույնքան անողոք ինչեց Տադեուշի այդ խոսքը, գրեթե անիմաստ և կեղծավոր: Եթե լավ մտածենք, ապա նրա երևակայությունը, նրա, ով այսքան ժամանակ անց փորձում էր երևակայել այդ գիշերվա դեպքերը, հետ է տանում չորս ընկերներին, ինչպես ֆիլմում հետ գնացող կադրը, և նրանց տեսնում էր թիկունքից՝ աստիճաններով բարձրանալիս, վերադառնում են Տադեուշի շեմքի մոտ, մտնում են տուն: Ահա տանն էին՝ նորից պատրաստ հրաժեշտի: Բոլորը պատրաստ վերապրելու այդ նախաբանը, դիպվածը, որ իրենց հետ կատարվելու էր այդ գիշեր, դռան մոտ էին և բարի գիշեր էին մաղթում ծեր պոետին՝ ողջ երեկո պոեզիայի մասին խոսելուց հետո:

Լավ սկիզբ է՝ այնուհետև կկրկնի Տադեուշը իր այն խոսքերից մեկը, որն արտահայտում է ամեն ինչ և ոչինչ: Գուցե *լավ սկիզբ է*-ն վերաբերում է պոեզիայի՞ն: Ի՞նչ նկատի ունի: Սա կմնա առեղծված բոլորի համար, ովքեր կանգնած են դռան մոտ՝ վերարկուները հագած: Դե, բարի գիշեր, ընկերնե՛ր, չաո, Լուիվա՛, Տիագո՛, Տադեո՛ւշ, օրեվուար, Միշե՛լ, ապա քիչ անց ինչ-որ մեկն ասաց՝ գիշեր, ծով, տարածություն: Թերևս Տիագոն էր, որ միշտ վերադառնում էր այն խոսակցություններին, այնքան բնորոշ իրեն, որ թվում էին սպառված: Խոսքն ակնհայտորեն վերաբերում էր *Լավ սկիզբ է* արտահայտությանը, դա հասկացան բոլորը: Նաև այս պատճառով էր, ով գիտի, որ նրանցից մեկը կրկին փակեց դուռը: Նորից մեկական բաժակ. մեղք է չդատարկել շիշը, որ բերել էր Միշելը, դու միշտ մի շիշ խմիչքով ես գալիս, Միշե՛լ, արի՛ աջակցիր շշի պարունակության սպառմանը, և հետո, բանաստեղծության մեջ այդպես չէ, պետք է ասել գիշերվա, ծովի և հեռավորության համար. ոչ տարածության, տարածություն, էական տարբերություն կա, ասաց Տադեուշը: Բայց սա չէր պատճառը, որ նրանք մնացին, նորից բացելու համար այն պոետներից մեկի գիրքը, որ կարդում էին այդ երեկո, և բանաստեղծությունը, որտեղ իսկապես ասվում էր՝ եթե գիշեր է, ծով է, հեռավորություն է...: Ո՛չ, դա գիտեին բոլորը, մնացել էին մի այլ բանի համար, հատկապես այն բանի համար, որ դրսում գիշեր էր, ծով կամ հեռավորություն, և Տիագոյի այդ արտահայտությունը այն կգացումն էր հայտնում, որ ունեին բոլորը, սակայն բացահայտ ցուցադրելու քաջություն՝ ոչ ոք: Անհանգստություն՝ նման տկարության, ո՛չ վախ, անապահովության և տառապանքի խառնուրդ, որ կգում են փախստականները մի քաղաքում, որն իրենցն է եղել, և կարոտի կգացում են ապրում այդ նույն քաղաքի հանդեպ, բայց մի այլ ժամանակում, ո՛չ այդ թշնամանքով լի երեկոն, այդ երեկոն՝ իր չարագուշակ ալիքներով, որ քարուքանդ էր անում շուրջբոլորը: Հենց սա էին կգում նրանք ողջույնի ժամանակ դռան մոտ կանգնած. կրկին հանեցին վերարկուները, որ հապիվ հագել էին, և մտնում են փոքրիկ

հյուրասենյակը՝ լեփ-լեցուն գրքերով, իսկ Տադեուշը ավելի լավ բանի չէր էլ սպասում, քան մի քիչ էլ ժամանակ անցկացնել նրանց հետ, և երբ պոեզիա էր կարդում, մոռանում էր ժամանակի մասին: Ասաց. «Երբ ես գրում եմ, ժամանակը ֆը՜սսսսսս է անում, ինչպես օդապարիկը թռնելիս, սկսում է ապրել անմթնոլորտ մի աշխարհում, դատարկության մեջ, նույն բանն է նաև ընթերցելիս, դուք նման բան չե՞ք զգում»: Ընկավ մի թիկնաթոռի՝ գիրքը ձեռքերում, և ֆը՜սսսսսս արեց, բոլորը ծիծաղեցին, քանի որ Տադեուշը իրեն երիտասարդ էր զգում այդ պահին, դա լավ գիտեր: Նա ծեր չէր, բայց ամեն պարագայում իր ունեցած հիսուն տարիները, ապրված կյանքը իրենց դրոշմն էին թողել դեմքին: Հիմա ձևացնում էր, ինչպես և բոլորը, թե քսան տարեկան է: Նա ֆը՜սսսսսս՜ է անում և ասում՝ հոգին դուրս պիտի գա ինչ-որ տեղից, վերից-վարից, կարևոր չէ, հոգին դուրս է ուզում գալ, մի ծակն էլ բավական է, այլապես կխեղդվի: Բոլորը ծիծաղում են, քանի որ շուտով հասկանում են՝ ինչ է ուզում ասել, քանի որ այդ գիշեր անհրաժեշտ էր ծիծաղել: Հատուկենտ մեքենաներ էին անցնում, լապտերները մարած էին, ոստիկանների մտահղացումն էր, որպեսզի ճանապարհին խռովարար խմբեր չձևավորվեն: Ամբողջ ճանապարհին լուսավորված էին միայն «Ադեջա Վալ դո Րիո»-ի դարպասը և քիչ հեռու գտնվող «Գիտարա դորադա» ցուցանակը՝ նեոնե կիթառով, ինչպես դրոշ, որի լարերից մեկը վնասված էր, իսկ ներքևում լուսարձակում էր նեոնե գրվածքը՝ խեցեմորթեր և կակղամորթեր: Տիագոն մոտեցավ պատուհանին և ասաց, թե երևում է՝ լույսերը մարել են, և ձեռքերը ծալեց կրծքին, ասես մի տարօրինակ երդում էր տալիս, կամ ասես ինչ-որ բան նրան ճնշում էր, ասաց՝ այս անգամ չեն կարողանա հաղթել, չեն կարողանա կեղծել այս ընտրության արդյունքները: Արագորեն շրջվելով պատուհանների կողմը՝ շշնջաց. ինչո՞ւ պետք է թողնենք նրանց հաղթանակել, արդեն քառասուն տարի է՝ ինչ իշխում են: Ապա ինչ-որ մեկը ծիծաղեց, ով գիտե ո՞վ էր, թերևս ոչ ոք, գուցե հառաչանք էր՝ նման նյարդային ծիծաղի, այդ պահին հեռվում լսվեց շտապօգնության կամ ոստիկանության ազդանշանի ռռնոց, և քողարկելու համար այդ չարագուշակ ձայնը, Յոհաննան ասաց՝ էլի՛ կարդանք, և, տագնապալից աչքերով նայելով չորս կողմը, երիտասարդ աղջկա աչքերով, որ ցանկանում էր հավատալ կյանքին և պոեզիային, ձեռքերը նյարդային շարժում էր, թերևս, քանի որ, շուտով բոլորը հասկացան նրա խնդրանքը և չկարողացան շնորհել նրան հույսի և երևակայության տարբեր զգացողություններ:

Երեկոյի այդ պահին էր: Դեռ վաղ էր, բայց ասես խոր գիշեր լիներ, և գիշերը իր ներկայությամբ վաղաժամ տիրացել էր այդ տարածությանը, գոյացել էր մի անշարժ կույտ, անեծք, որում՝ ինչպես կախարդանքի մեջ, որ ինչ-որ բան պետք է կոտրեր, նրանք իրենց զգում էին այդ սենյակում փակված բանտարկյալներ: Ո՞վ իմանա՝ կլիներ այդ կախարդանքը կոտրողը, նրանցից մեկը շարժվեց, հնարավոր չէ ասել՝ Տիագոն էր, թե Միշելը, և շուտով հասկացավ, որ նրանց բանտարկված կախարդությունը ի չիք է դարձել, որ նրա խոսքը հնչում էր ինչպես եթե լիներ երդմնեցուցչություն, բարձրացնում է բաժակը և ձայնով, որ մաղթանքի էր նման, բայց որ մտախոհ էր ասաց. 1969 թվականի նոյեմբերի կենացը, սալազարիզմի ռեժիմի անկման ամսի կենացը: Տարօրինակ էր՝ ինչպես այս նոյեմբերին վերհիշեց այն խոսքերը: Հոկտեմբերյան պարզ օր էր, ժամանակ էին անցկացնում լողափին, վերցրել էին միրգ և սենդվիչ: Նրանցից մեկը քաջություն էր գտել սուզվելու օվկիանոսում, արևը ջերմ էր, ապա վերադառնալով տուն՝ զգացին, որ դեմքերն այրվել են: Եվ այժմ, անակնկալ կերպով նոյեմբեր էր՝ իր ներկայությամբ,

պատուհաններից լսվում էր բուսաբանական այգու ծառերի շառաչը, արթնացել էր չարմիտ քամին, որ սուլում էր ճեղքերում, և քամուց պոկված տերևները սահում էին պատուհանների առջևով:

Անհրաժեշտ էր ևս մի բաժակաճառ, վգում էին, սեղանին դրված գրքի համար, տպարանից նոր էր դուրս եկել, մի փոքրիկ գիրք, որ Տադեուշը նախքան վաճառքի դուրս գալը վերցրել էր տպարանից՝ այդ գիշեր նրանց համար բանաստեղծություններից հատվածներ կարդալու նպատակով: Բայց նա, թվում էր, խուսափում էր այդ բաժակաճառից, ասես շփոթություն կամ չկամություն էր վգում կամ մի խուլ ամոթ այդ նոյեմբերին պոեզիա գրելու և հրատարակելու համար, նոյեմբեր՝ լի պատրանքներով շատերի համար, բայց իր համար զուրկ ամեն տեսակ պատրանքից, արդեն պարտություն արձանագրած ամիս, որի հետ լավ էր ոչ մի հույս չկապել: Մինչև որ ինչ-որ մեկը, թերևս Լուիզան կամ Յոհաննան, կամ գուցե երկուսն էլ, հետաքրքիր կուզադիպությամբ, երկչոտությամբ, որով հաճախ տարբերվում են տեղացիները, բարձրացնում են բաժակները և միաձայն ասում՝ պոեզիայի կենացը: Եվ Տադեուշը իր ռնգային և հեգնական ձայնով մրմնջաց՝ *լավ սկիզբ է*:

Միայն այդ պահին, նա, ով երևակայում էր, թե ինչպես կարող էին դառնալ այդ գիշերվա դեպքերը, նկատում է, որ Տադեուշի արտահայտությունը ստեղծում է մի չարագուշակ փակ շղթա, քանի որ այդ պահին ընկերները, եկրակացնելով Տադեուշի արտահայտությունից, որ հրաժեշտի ժամանակն է, հագնում են վերարկուները, մոտենում են դռանը, բացում են, դեռ մի քանի վայրկյան մնալով շեմին՝ հրաժեշտ տալու համար, և այդ պահին, Տադեուշը կրկնում է երդմնեցուցիչ կամ հեգնական մաղթանքը. *լավ սկիզբ է*: Ինչ-որ մեկը պատասխանեց. գիշերվա, ծովի և տարածության կենացը: Թերևս Տիագոն էր, նաև նրա համար, որ ով գիտի ինչպես, ինչ-որ մեկը կրկին փակում է դուռը, և Տադեուշը ասում է՝ ևս մի բաժակ. մեղք է Միշելի բերած շիշը մինչև վերջ չդատարկելը:

Եվ ամբողջը նորից է սկսվում երևակայության մեջ նրա, ով երևակայում էր այդ գիշերը, ինչպես մի մնջախաղ կամ կախարդանք, դռնից դեպի բազկաթոռները, բազկաթոռներից դեպի դուռը խեղճ կախարդված և դատապարտված արարածների գործողությունների անմիտ կրկնություն՝ ստիպված ձևացնելու և վերապրելու սոսկալի արկածի նախերգանքը, որ սպասվում էր այդ գիշեր, և նա, ով երևակայում էր այդ գիշերը, իր մեջ համարձակություն չէր գտնում ապրելու այն, ինչ իրականում եղել էր:

Բավական է, վե՛րջ: Հիմա դուրս են եկել, վերջապես իջնում են աստիճաններով, առաջին հարկի լապտերը այրվել է, ինչ-որ մեկը սայթաքում է, լսվում է մեկի ծիծաղը, Տիագո՛, մի՛ հրիր (Լուիզայի և Յոհաննայի ձայներն են), մի՛ կոտրատվեք (Տիագոյի ձայնն է), և վերջապես առաջին հարկում են, կոճակի կսպանակը գործի է գցում փականքը, մեկ սեղմում, և ահա դրսում են, ա՜հ, վերջապես ազատվեցին այդ արտահայտության չարագուշակ շղթայից, որ նրա երևակայության մեջ, ով երևակայում էր, թե ինչպես պետք է դառնային այդ գիշերվա դեպքերը, նրանք պահվում էին որպես բանտարկյալներ: Վերջապես դրսում են, գիշեր է, Պրինչիպե Ռեալ պարտեզը աղոտ լուսավորված է, անցորդները հատուկենտ են, ավելին՝ շուրջը ոչ ոք չկա, իրոք նման է պարետային ժամի, շուրջբոլորը ուրվական-քաղաքն է, պատուհանները ճաղապատ են, նրանք մայթի վրա են, միմյանց բարի գիշեր են մաղթում, ոմանք անմեղ կատակներ են

անում վանելու համար մելամաղձությունը, որ այդ գիշեր խոնավ շղարշի պես պարուրել էր նրանց:

Մեքենան մոտեցել էր մարած լուսարձակներով, անձայն, և երբ նկատեցին, այն կանգնել էր մայթեզրին մի խորամանկ ոստիկանապետի հետ, պատուհանը կիսաբաց էր, ներսում՝ մութ, անհնար ճանաչելու ներսում գտնվողին, միայն ատրճանակի փողն էր ուղղված նրանց վրա, որ անտեսանելի փոխում էր թիրախը, փոքրիկ շարժումներով, նրանց հերթով նշանակետի տակ է առնում, ասես երկմտում է՝ ո՛ւմ վրա կրակել: Հետո շատ բարձր, բայց հանդարտ մի ձայն ասաց. կա՛նգ առեք, պարոնա՛յք, այժմ կանգ առեք մի պահ, պտտվե՛ք մեջքով դեպի ինձ և բարձրացրե՛ք թաթիկները. Այդպես էլ ասաց՝ թաթիկները, և այդ անհարմար փաղաքշականության մեջ կար մի խտացած բռնություն, նրանք վգում էին ինչ-որ աղտեղի փաղաքշականություն և վտանգ, որ նրանց ստիպում էր թիկունքին վգալ ինչպես մի պաղ հանկարծակի և ուժգին հով, որ սարսռացնում էր նրանց: Կանգ առան որոշ ժամանակ, նայելով պատին, ինարավոր չէ ասել՝ ինչքան ժամանակ, բայց երկար, նրանց թվում էր անվերջանալի և անհեթեթ: Մի քանի րոպե առաջ նրանք խոսում էին պոեզիայից, իսկ այժմ մի անծանոթ ձայն ատրճանակի օգնությամբ գամել էր նրանց պատին: Հիմա ձեր բաճկոնները՝ մտերմիկ ասաց ձայնը՝ դրանք բերեք հերթով, առանց շրջվելու: Առաջինը Տիագոն էր, երկարեց ձեռքը մի բազկաչափ, առանց շրջվելու, ասես խուսափում էր ցանկացած ուղիղ շփումից իրենց սպառնացողի հետ: Զգում է, որ թափահարում է բաճկոնը, վգում է՝ ընկնում են մանրադրամներն ու բանալիները, ոչինչ չունեմ բաճկոնումս, եթե փող եք փնտրում՝ այն պահում եմ տաբատիս գրպանում: Ձայնը գրեթե բարեսիրտ ծիծաղեց և հետո նետեց. գյո՛թ կոմունիստ, ինձ գո՞ղ ես անվանում: Տիագոն ուժ գտավ կրկնելու և հարցնելու, բայց նա ո՞վ է, ի՞նչ է ուզում: Եվ ձայնը պատասխանեց. դա քեզ հետո կասեմ, մկնի՛կ: Ձեռքը, որ երկարել էր մեքենայի պատուհանից, փնտրեց մյուս երկու բաճկոններն էլ, որ բերել էին լարվածությամբ, և մեկ առ մեկ խուզարկելուց հետո թույլ է տալիս ընկնել առվակի մեջ, որ հոսում էր մայթի և մեքենայի միջև: Իսկ հիմա ձեր պայուսակները, օրիորդնե՛ր՝ ասաց: Առաջինը քոնը, արքայադո՛ւստր, ասաց Յոհաննային, հետաքրքիր է պրպտել քո փոքրիկ գաղտնիքները, բնական է, որ քո՝ Կույս Մարիամի դեմքով ով գիտե քանի՜ գաղտնիք ունես քո պայուսակում, ճի՞շտ է: Ձեռքը թափանցեց պայուսակի մեջ, ձեռքը մեծ էր, վերնամասը թեթևակի ուռած, իսկ մատները՝ ուժեղ ու կարճ:

Եվ այդ պահին էր, որ հայտնվեց ձուկը: Ճարպոտ, փայլփլուն, յուղոտ ձուկ էր, որ դուրս էր պրծել հատակին մեքենայի մթությունից, որը սպառնում էր այդ գիշերվա կոհերին: Պատուհանից ուռած ձեռքի գեր և կարճ մատների հետ միասին երևում էր ձկան դունչը, որ շնչահեղձ էր լինում: Ի՜նչ անհեթեթություն էր, 1969-ի նոյեմբերյան մի գիշեր Ռուա Դոմ Պեդրո Կուինտոում սև մեքենայի պատուհանից երևացող ձեռք և ձկան դունչ:

Բայց սա տեղի էր ունենում երևակայության մեջ նրա, ով մտածում էր, թե ինչպես կարող էին դառնալ այդ գիշերվա դեպքերը: Այսպես, այդ պահին նրա երևակայությունը ծնում էր ձուկ: Եվ ամենից տարօրինակն այն էր, որ թվում էր բնական, այդ խավար գիշերում՝ գրեթե կրակմար, նոր-նոր մաղող անձրևը, քամուց պոկված տերևները, բոլորին բնական է թվում, որ այդ սարսափազդու մեքենայի պատուհանից ձուկ է ցած ընկնում: Պլա՜ֆ: Ձուկը պլստաց և ընկավ մեքենայի և մայթի միջև հոսող առվակը, այն նույն տեղը, ուր ձեռքը ատրճանակով նշանառության տակ էր պահել նրանց, տղաների բաճկոններն

ու աղջիկների պայուսակները գցել: Եվ այդտեղ՝ կեղտոտ առվակում, ձուկը անշարժ պառկեց դեռ որոշ ժամանակ՝ անուժ թափահարելով պոչը, շնչահեղձ: Մահանում էր: Մեծ, շնչահեղձ լինող ձուկ էր, որ մահանում էր: Ձեռք չտա՛լ նրան՝ գոռաց Տիագոն: Նա գոռաց Յոհաննային, որ ծնրադրել էր և երկարել ձեռքերը, անմտորեն, ասես երեխայի էր օրորում: Ձեռք չտա՛լ, կրկնեց Տիագոն, ձուկը կեղտոտ է: Բայց Յոհաննան, թվում է՝ չէր լսում այդ կլկլանք և խուճապ արտահայտող գոռոցը: Չի կարելի թողնել մահանալու այս խեղճ կենդանուն, ասում է շփոթված, և Տիագոն վերսկսեց. ես կոմունիստ չեմ, ես դեմոկրատ եմ և այս պահին ցանկանում եմ իմանալ՝ ով եք դուք: Ձայնը մեքենայի միջից ճչաց, լսեց-լսեց, հետո ոռնաց. «Գյո՛թ դեմոկրատ, ինձ գողի տե՞ղ ես դրել»:

Հնարավոր է՝ Տիագոն այդպես էլ ասել է, որ ինքը դեմոկրատ է և ուզում է իմանալ՝ ո՞վ է այդ մարդը: Այդ գիշեր իսկապես դա պիտի ասեր, և, իհարկե, չխոսեր ոչ մի ձկան մասին, քանի որ ոչ մի ձուկ չկար այդ պահին, եթե ոչ նրա մտքում, ով երևակայում էր, թե ինչպես պետք է դառնային այդ գիշերվա դեպքերը: Մինչդեռ այդ գիշեր կար միայն մութը՝ Պրինչիպե Ռեալ այգու առաջ և նրանք՝ չորս սարսափահար և անշարժ ընկերներ՝ մեքենայի պատուհանից իրենց վրա ուղղված ատրճանակի նշանակետի տակ: Նաև «Գիտարա դորադա» գրվածքով նեոնե ցուցանակն էր հանգել, սպիտակ գոգնոցով մատուցողը բացել էր դուռը և նայում էր շուրջը, շուտով տեսնելով անջատած լուսարձակներով մեքենան և չորս ձեռքերը վեր պահած մարդկանց, այնպես հապճեպ փակեց ռեստորանի մետաղյա շարժական դուռը և մնաց ներսում՝ առանց լույսը միացնելու:

Բայց այնուամենայնիվ նրանց հետ միասին ձուկը կար: Անգամ եթե այդ գիշերը չէր էլ եղել, այժմ՝ այս գիշերվա մեջ, վերհիշում էր նրան, և Յոհաննան երկարել էր ձեռքերը և թվում է՝ օրորում էր ու մոլորված շուրջը նայում: Տիագոն նրան ասում էր՝ ի՞նչ ես անում: Ցա՛ծ դիր նրան, գցի՛ր կոյուղու մեջ, չե՞ս տեսնում՝ նեխած ձուկ է:

Յոհաննան խոնարհվեց առվակի առաջ և վերցրեց իր պայուսակը, որը ձեռքը գցել էր պատուհանից. Ձեռքը, որ հիմա սեղմել էր մի նամակ, ասում էր. սա է գաղտնիքը, ճի՞շտ է, արքայադո՛ւստր: Հավանաբար Յոհաննան հեկեկոցից խեղդվում էր կամ հեծեծանքից և խոսելու փորձ արեց, բայց չստացվեց, Տիագոն խոսեց նրա փոխարեն. սա նրա նշանածի նամակն է, դուք իրավունք չունեք կարդալու: Ա՜հ, ասաց ձայնը, ի՜նչ հետաքրքիր է: Ձեռքն արագորեն խլեց նամակը, բացեց և ձայնը՝ այդ մթության մեջ՝ ասես կատվի աչքեր ուներ, կարդաց. Սիրելի՛ Յոհաննա, գրեթե բոլոր վկայականները պատրաստ են, հավատա, որ կարող ենք ամուսնանալ մեկ ամսից՝ դեկտեմբերին: Ձայնը ընդհատեց ընթերցանությունը և ծիծաղեց՝ ո՜հ, ի՜նչ ռոմանտիկ է: Դուք իրավո՛ւնք չունեք կարդալու այդ նամակը՝ ասաց Տիագոն՝ մոտենալով պատուհանին: Այն պահին էր, որ մեծ ձեռքը, որ բռնել էր նամակն ու ատրճանակը, հանկարծ անհավատալի արագությամբ, ասես թռչում էր ատրճանակի փողով, վիրավորեց Տիագոյին՝ վնասելով շրթունքը, լսվեց թափվող ատամների աղմուկը, Տիագոն խոնարհվեց՝ դուրս թափելով ատամներն ու արյունը, մեքենայի դուռը բացվեց, և մարդը իջավ՝ լայնեզր գլխարկով, որ ծածկում էր դեմքը և ասաց՝ քաղաքային ոստիկանություն, փաստաթղթերը: Նա դարձավ Տիագոյին՝ այլևս հետ դնելով ատրճանակը, ձեռքերը դնելով գրպանը և հայացքը խոնարհելով, ասես իր բանտարկյալների կոշիկներին էր նայում, բայց դառնում էր Տիագոյին, քանի որ կրկնում էր. քո փաստաթղթերը, գյո՛թ դեմոկրատ, և Տիագոն, թաշկինակը շուրթերին

պահած, արյունահոսությունը դադարեցնելու համար, ինչ-որ բան քրթմնջաց, որ նման էր պատասխանի, բայց որ թվում էր հռնդյուն, հետո գլխով բացասական նշան արեց, ձեռքերով սեղմեց ծնոտը, բնական է՝ ցավում էր, և թերևս այդ պահին էր, որ Տադեուշը իջել էր աստիճաններից և նայում էր դարպասի մոտից:

Նա, ով երևակայում էր, թե ինչպես կարող էին դառնալ այդ գիշերվա դեպքերը, տեսնում էր Տադեուշին, որ իջել էր դարպասի մոտ հենց այդ պահին, մինչ Տիագոն դուրս էր թափում արյունը և հռնդում՝ թաշկինակի մեջ՝ անկարող պատասխանելու և այլևս թվում էր կորած: Բայց ի՞նչն էր տարօրինակ: Նա, ով մտածում էր այս ամենը երևակայության մեջ, չէր կարողանում չերևակայել Տադեուշին պատուհանի վարագույրի հետևում, այնտեղ վերևում՝ երկրորդ հարկում՝ պարուրված իր սենյակի մթության մեջ: Եվ ինչո՞ւ նա չէր իջել սկզբում: Հարցնում էր իր երևակայության մեջ, ինչո՞ւ էր սպասում, որ իրադարձությունները հասնեն այս կետին: Ամեն դեպքում անօգուտ էր այս նկատառումից կառչելը, այն, որ Տադեուշը հիմա այնտեղ էր՝ նրանց հետ, իջել էր, ներկա էր, բացել էր դուռը և հարցնում էր բարձր և լուսավոր ձայնով. այս պարոնն իմ ծանոթներից է, կարող եմ երաշխավորել նրա համար:

Ի՞նչ պատահեց հետո նրան, ով մտածում էր այդ գիշերվա մասին, դժվար էր ասել: Նրա երևակայությունը այդ կետում ասես անշարժանում է կամ քնում: Գործողությունների և իրադարձությունների ընդհատումը, որ ընդհատում և անշարժացնում էր նաև այդ տեսարանի բոլոր հերոսներին: Եվ նրա աչքերը պատկերը հեռու էին տանում, ներկաները և մասնակիցները հեռանում էին, ասես ինչ-որ բան քաշելով տանում էին հեռու իր մտքից, ասես ուժեղ հովը այդ սառցե քամին ծանրորեն տեղափոխում էր նրան Պրինչիպե Ռեալե պարտեզի նստարանին պապիրուսի տնկերի խուրձի մոտ, որ թափվել են լճակի ափին. Այդ հեռավորությունից անհնար էր հասկանալ՝ ո՞վ էր շարժվում և ով էր խոսում և ով էր որոշում Տիագոյի հետ գնալ, նա պետք է բերեր փաստաթղթերը իր մեքենայի միջից, որ կայանել էր Ռուա Սամպաիո Պինա փողոցում, հենց Յոհաննայի տան առջև՝ մոտ քսան թաղամաս այն կողմ կամ ուղիղ մեկ կիլոմետր, եթե լավ մտածենք: Թերևս Տադեուշը ասաց, որ ցանկանում է գնալ Տիագոյի հետ, և նաև մյուսները՝ բոլորը, իհարկե, ամեն ինչ հենց այսպես էլ ընթանում էր: Բայց մարդը խորագիտությամբ և սիրաշահելով պատասխանեց. դո՛ւ, պոե՛տ, քո տնակի մեջ մնա քո գրքերի և պոեզիայի հետ: Այդպես պետք է պատասխաներ: Եվ Լուիզային ասաց՝ դու չքացի՛ր, օրիորդի՛կ, շուտ տո՛ւն գնա: Եվ ինչո՞ւ Տիագոյի հետ միասին մնացին Յոհաննան ու Միշելը՝ առեղծված էր: Իհարկե, նրան չէր անհանգստացնում, որ Միշելը օտարերկրացի է, եթե մի քիչ ավելի երկար մտածեր՝ կհասկանար, որ տեսարանի մասին պետք չէր որ իմանա օտարերկրացին՝ օտարերկրյա ամսագրերում կարող էր լուսաբանվել դիպվածը: Ամեն դեպքում Տադեուշը վերադարձավ դարպասի մոտ և կանգնած մնաց վառված լույսերի ներքո՝ ուսը կռթնած դռանը: Լուիզան ճանապարհին ի վար իջնում էր և արագ քայլերով հեռանում գետի կողմը, մինչ Տիագոն, Միշելը ու Յոհաննան նստեցին մեքենան և սլացան: Եվ նա, ով երևակայում էր, թե ինչպես կարող էին դառնալ այդ գիշերվա դեպքերը, պարտեզի նստարանին նստած մնաց երևակայելու և միայն այդ պահին հասկացավ, որ դա հին մակնիշի Մերսեդես էր, հարգի մեքենա, մի քիչ նորաձևությունից դուրս եկած, նրանցից, որ սովորաբար վարում են հետևի նստարանին նստած ծեր տիկնանց համապատասխան վարորդները:

Բայց քիչ անց նա նրանց հետ էր: Այնտեղ էր նաև նա, հիմա, Յոհաննայի և Միշելի

մեջտեղում: Տիագոն դիմացի նստարանին էր՝ թաշկինակով սեղմած շրթունքը, մարդը արագ էր վարում, ծուռ և փողոցի նեղ հատվածներում բարձրանում մայթեզրի վրա: Թերևս գինովցած էր կամ գրգռված, վարում էր կատաղությամբ և կամ ոչ, մեկ այլ միջոց էր ցուցադրելու իր վայրագությունը և արհամարհանքը իր կյանքի հանդեպ:

Ահա Սուրբ Աստվածամայր եկեղեցին և հետո Ռատոյի հրապարակի տունը, որի կողքով սլացան, հետո Ամորերիաս այգու սյուների կողքով, հետո Ռիթզով՝ երկու կանաչ համազգեստով դռնապանների առջևով, օդը մեռելական էր, բայց նաև Ռիթզն էր թվում անբնակ, սրահների լույսերը անջատված էին: Վերջապես Ռուա Սամպաիո Պինան: Բայց մարդը, ասես վախենալով, որ իր երեք բանտարկյալները ազատ շունչ կառնեն, կթեթևանան՝ կոշտությամբ նետեց, կանգնեց մայթի մոտ և ասաց. առաջին քաղաքական դասը՝ սիրի՛ր սեփական երկիրը: Այժմ նորից գրպանից դուրս հանեց ատրճանակը՝ խաղալով հպելով տաբատին: Հասկանո՞ւմ եք՝ ի՞նչ եմ ուզում ասել, պարոնա՛յք: Ասաց՝ դուք դա չեք հասկանում, քանի որ ոչինչ չեք հասկանում: Դա գիտեմ ձեր չափ և ձեկանից էլ ավելին, Տադեուշի արտահայտությունը, հիսուն տարի է, որ ճանաչում եմ այս երկիրը, խնայե՛ք ձեր խոսքերը: Դա ասում էր բարձր և գոռ ձայնով, բայց գավազած, նա էր, որ խոսում էր, որովհետև այդ մեքենայի մեջ էր նաև նա, ինչպե՞ս կարող էր չմտածել նա, ով երևակայում էր այդ գիշերվա դեպքերը, որ Տադեուշը երբեք թույլ չէր տա, որ այդ երեք երիտասարդները միայնակ գնային այդ կեղտոտ անձնավորության ընկերակցությամբ: Ո՛չ, Տադեուշն իհարկե պնդել էր, որ ինքն էլ գնար, թերևս կանգնել էր մեքենայի առջև՝ պարզած ձեռքերով, այդ պարագայում թատերական խաղ կզգացվեր, այդ պարագայում գրոտեսկային կթվար, և հաստատամտությամբ կասեր. նաև ե՛ս եմ գալիս նրանց հետ:

Եվ այսպես, նա, ով երևակայում էր այդ գիշերվա դեպքերը, պետք է նորից երևակայեր տեսարանը և Ռուա Պեդրո Քուինտոյի փողոցի վերջին ռեստորանի մարած ցուցանակի մթության մեջ, տեսնում է Տադեուշին սև Մերսեդեսի առջև, լուսարձակների լույսից կուրացած, սպիտակ, գույնը գցած և հետո այնտեղ՝ լռության մեջ տեսնում է բոլոր չորսին՝ երեք երիտասարդներին և Տադեուշին, բայց նա, ով երևակայում էր, թե տեսնում է ամենը, հանկարծական քամու օգնությամբ տեղափոխվել էր Պրինչիպե Ռեալե այգու նստարանին և այդ հեռավորությունից անհնար էր ասել՝ ի՛նչ հերթականությամբ են նրանք նստած մեքենայի մեջ:

Ձեկնից հերոսներ մի՛ սարքեք, պատասխանեց մարդը, իմ գործառույթն է ձեկ կյանքի դասեր տալ, և եթե անգամ դուք դասը արդեն անգիր գիտեք, այն ևս մեկ անգամ լսելը միշտ էլ լավ է: Այսպես խոսելով թվում էր ավելի հանդարտ, պակաս նյարդային, այնուամենայնիվ Տադեուշի հետ խոսելիս նա դուք ձևն էր օգտագործում և այդ պահին ատրճանակը դրեց գրպանը, ասաց Տիագոյին, որ գնա և վերցնի փաստաթղթերը, քանի որ ակնհայտորեն ճանաչում էր Տիագոյի մեքենան:

Տիագոն վերադառնում է և ասում՝ այստեղ է: Մարդը դրանք ուշադրությամբ նայեց և վերադարձրեց և թվում էր՝ ամեն ինչ ավարտվեց: Ուստի, բարի գիշեր, ասաց Տադեուշը: Ակնհայտորեն ոտքի վրա չէր մնում, ուժասպառ էր, և իր ներկայությունն այլևս անօգուտ էր համարում, ոտքով գնաց, ձեռքերը գրպանում, գրեթե որոշ հանդգնությամբ, այդպես էր մտածում նա, ով երևակայում էր, թե ինչպես կարող էին դառնալ այդ գիշերվա դեպքերը: Եվ երբ Տադեուշը արդեն հեռու էր Ռոդրիգո դա Ֆոնսեկա փողոցի անկյունում, հրեական մսավաճառանոցի առջև, մարդը նորից հանեց ատրճանակն ու ասաց՝ նստե՛ք

մեքենան: Նրանք երեքով նստեցին հետևի նստարանին, և մարդը դրսում ոտքի վրա կանգնած ասաց. հիմա ինձ լա՛վ լսեք, քանի որ քաղաքական դասը միայն նոր է սկսվում: Քաղաքական դասի առաջին կանոնը՝ սիրել սեփական երկիրը: Գիտե՞ք՝ ի՛նչ է նշանակում սեփական երկիրը սիրել: Չգիտեք, քանի որ երեք ոջլոտ կոմունիստներ եք կամ դեմոկրատներ, մեծ տարբերություն չկա: Ես կասեմ դա ինչ է: Դա նշանակում է ատելություն: Ատելություն՝ պաշտպանելու համար մեր քաղաքակրթությունն ու մեր ռասան: Եվ գիտե՞ք՝ ինչպե՛ս ճանաչել ճիշտ քաղաքակրթությունն ու ճիշտ ռասան: Մեկ ուրիշ ռասայի տիրապետության տակ առնելով: Իսկ այդ հին ոճին դիմելու համար, մեկ այլ ռասային տիրապետելու համար պետք է սկզբում սեռական տիրապետություն ունենաս, ինչն էլ անում էր ստորագրյալը՝ Պորտուգալիայի քաղաքացին Լուանդայում և Լորենսու Մարքիշեում ծառայելով օրինյալ 1964-1968 թվականներին: Այսպես, իմ թանկագի՛ն ապուշներ, այս թռչնակի օգնությամբ: Եվ մինչ խոսում էր, իջեցրեց տաբատը և ցույց տվեց առնանդամը՝ աջ ու ձախ շարժելով և միկելով մթության մեջ: Հետո բարձրացրեց տաբատն ու ասաց. այս թռչնակի օգնությամբ ես պաշտպանել եմ մեր ռասան՝ բռնաբարելով այդ ՄՊԼԱ-ի[1] բոլի տղերքի աղջիկներին, որ ծուղակ էին լարում մեր հերոս վինվորների դեմ, որ թողել էին իրենց օջախները՝ պաշտպանելու համար այդ կուլուսական երկրները կոմունիզմից: Ես նրանց մի լավ բռնաբարում էի, ինչպես հարկն է, բոլորն էլ անորոշ տարիքի էին, բայց կարող եք հավատալ խոսքիս, բոլորը 13 տարեկանից ցածր էին, քանի որ սևամորթները 13 տարեկանում արդեն բոլոր իմաստներով կին են, դրանից ես հասկանում եմ: Եվ երբ ես ինչպես հարկն է վայելում էի նրանց իմ այս ատրճանակի օգնությամբ, որը կոչում եմ Մարիա դե Լուրդես, քանի որ ինձ միշտ փրկում է, իմ այս ընկեր-ատրճանակի օգնությամբ էլ ավարտում էի աշխատանքը, փորձում էի այդ պոռնիկների հետույքները, այսինքն՝ ես ներս էի մտցնում փողս հետույքը, և նրանք ինչպե՜ս էին թպրտում, ա՜հ, տեսնել էր պետք, և ես պո՛ւմ-պո՛ւմ, երկու հարված, միայն երկուսը, իսկն է ծակելու համար նրանց աղիքները, իսկ այդ կորացուցիչ հյուրասիրությունից հետո պետք էր տեսնել՝ ինչպե՛ս են նրանց հայրերը շատախոս դառնում, վերջապես մերժելով իրենց եղբայրներին, այն բանից հետո, երբ իրենց աղջնակներին վերադարձնում էին՝ երկու փամփուշտ փորի մեջ, քանի որ այդ ակտիվիստները երեխաներ շատ ունեին, է՜հ, այո, սևամորթները պարկերով երեխաներ ունեն, բայց բախտներս բերել է, մենք էլ՝ պարկերով փամփուշտ:

Այդ ժամանակ Յոհաննան երերալով դուրս եկավ մեքենայից, մոտեցավ մի ծառի և կիսով չափ հենվեց, ասես փսխում էր կամ հեծեծում էր, հետո ծիծաղում էր, ասես հիստերիայի մեջ էր կամ տարօրինակ բացականչում էր, մինչ մյուս երկուսը վազեցին օգնության, սև Մերսեդեսն արդեն հեռվում էր, լռություն էր, երևում էր արգելակների լապտերը էդուարդ 7-րդի այգու խաչմերուկում, Միշելն ու Տիագոն ասացին՝ Յոհաննա՛, քեզ տուն կհասցնենք: Բայց նա ՝ ո՛չ, ուզում էր գիշերային թարմ օդ շնչել և հետո հանդիպել տնեցիներից մեկին, ո՛չ, շնորհակալություն, թող ընկերակցեն մինչև մուտքը և հետո հեռանան, ուզում է մի փոքր միայնակ մնալ: Եվ երկուսով գնացին կողք կողքի և գլխիկոր, ասես իրենց մեղավոր էին զգում, մեղավոր ամենի համար, հետո, երբ շրջվեցին ձեռքով ցտեսություն անելու, նա ժպտում էր անբնական և վախեցած ժպիտով:

Այս պատմությունը պետք է այս կետում ավարտվեր, երբ բոլորը հեռու էին, յուրաքանչյուրն իր գործին, գիշերվա մեջ: Հեռու մարդիկ, որ այդ ձախ գիշերը կապեց

միասին նրանց ճակատագրերը, հեռու մեքենան իր վավրելի վարորդով, վերջապես հեռու գիշերը, որ իր գագաթնակետին էր և մնում էր վիջելու տեղը նոր ծագող օրվան: Բայց նա, ով երևակայում էր, թե ինչպես պիտի դառնային այդ գիշերվա դեպքերը, այս կետում անբացատրելի հուզմունք էր վգում և ցավ, որ ամենը այդպես էլ պետք է ավարտվեր, արձակվեր կամ գտներ մի ծալք, որի մեջ պահվեր, ամենը, որ ըմբոստանում էր մեկ ուրիշի հոգում: Եվ հիմա երևակայությունը նրա, ով մտածում էր այդ գիշերվա մասին, հետևում էր Յոհաննային, որ իջնում էր փողոցով, քանի որ Յոհաննան տուն չէր մտել, այլ ճանապարհ էր բռնել Բրաանկամպի կողմը, և նա հետևում էր նրան, մինչ նա անցնում էր Ալեքսանդրե Հերկուլանո փողոցով, Յոհաննան քայլում էր դանդաղ, ասես այդ ամենը անխուսափելի էր, տեսնում էր, թե ինչպես է նա կտրում-անցնում Ռոդրիգո դա Ֆոնսեկան, որտեղ ջակարանդայի ծառեր կային, շրջվեց դեպի Ռուա դե Սաո Մամեդե, ապա՝ Ռուա դա Էսկոլա Պոլիտեկնիկա, հետո՝ Ռուա Դոմ Պեդրո Քուինտո, կը՛տ-կը՛տ, նրա կրունկները կտկտում էին սալահատակի վրա 1969-ի այդ ցուրտ գիշերը դրսում, բացի նրանից, ոչ ոք չկար: Յոհաննան վերադարձավ Տադեուշի տան մուտքի մոտ, և դռանը կռթնած այնտեղ էր նա՝ Տադեուշը, որ ոչինչ չասաց, բայց ժպտաց՝ ասես խոսեր. քեզ սպասում էի, գիտեի, որ կվերադառնաս, որ չես ընդդիմանա փորձությանը: Եվ նա հավանության նշան արեց՝ ասես ընդունելով, որ եկել է, քանի որ պետք է գար և չի կարող ընդդիմանալ նրան, ինչը պիտի լինի: Նա խոնարհվեց դեպի առվակը, որ վազում էր մայթով, վերցրեց ձկանը, որ ձեռքերի մեջ շնչահեղձ էր լինում, և ասաց Տադեուշին՝ չեմ կարող թույլ տալ, որ այս խեղճ արարածը մահանա, պետք է նրան ներս տանենք և ջուրը դնենք, և նա լուռ թույլ տվեց նրան անցնել: Եվ մինչ Տադեուշը փակում էր դուռը, նա, ով երևակայում էր այդ գիշերվա դեպքերը, երևակայեց արտառոց տեսարան՝ ինչպես են նրանք բարձրանում աստիճանները՝ հեծած այդ մահամերձ ձկանը: Եվ հետաքրքիր է, որ ձուկը պոչի ամեն մի թուլացող շարժման հետ ավելի էր արագանում. մեկ անգամ, երկու անգամ, երեք անգամ, վերջում մտնում է մի հորձանք, որ դուրս է գալիս տնից պատերի և ժամանակի միջով: Կամակոր, յուղոտ, մահամերձ, բայց անխոնջ ձուկը առաջ է շարժվում տարին տարվա հետ վերջապես հասնելու նրան, Նրան, ով հիմա երևակայում էր տարիներ առաջվա այդ գիշերը: Վերջապես հասնելու նրան և վերջապես որտե՞ղ:

1 (ԾԹ)MPLA - Movimento Popular de Libertaȥ¿o de Angola, Անգոլայի ազատագրմանն ուղղված ազգային շարժում, որ պայքարում էր Պորտուգալիայի դեմ:

Ուիլյամ Կառլոս Ուիլյամս

Թարգմանությունը և առաջաբանը՝ Աննա Դավթյանի

Փաթերսոն

Հավանաբար տեսել եք Ջիմ Ջարմուշի «Փաթերսոն» ֆիլմը, որտեղ հերոսը ավտոբուսի անհայտ մի վարորդ է, որ բանաստեղծություններ է գրում, ու նրա կինը, որ բլիթներ է թխում ու տան իրերն է ներկում նմանատիպ նախշերով, ամեն օր: Անհայտ, կյանքի մեջ տոկացող միջին այս ամերիկացին Ուիլյամ Կառլոս Ուիլյամսի հերոսն է: Ֆիլմում էլ հիշատակվում է Ուիլյամսի անունը:

Ուիլյամ Կառլոս Ուիլյամսը (1883-1963) ծնվել ու ամբողջ կյանքում ապրել է Նյու Ջերսիի փոքրիկ Ռադերֆորդ քաղաքում, որտեղ քառասուն տարուց ավելի աշխատել է որպես բժիշկ, և սեփական քաղաքում անգամ համաքաղաքացիները շատ չեն իմացել, որ նա գրող է:

Շատ ազդված էր Ուոլթ Ուիթմանից ու Ջոն Քիթսից, բայց Փենսիլվանիայի համալսարանում բժշկություն սովորելու տարիներին ընկերանում է էզրա Փաունդի հետ, որի մասին ասում է՝ «Փաունդին հանդիպելուց առաջն ու հետոն նման էր մ.թ.ա.-ի ու մ.թ.-ի»: Նաև՝ «մտադրված էի օգտագործել այն նյութը, որը լավ գիտեի»,- ասում է Ուիլյամսը, իսկ նա լավ գիտեր իր հիվանդներին ու Ռադերֆորդի մարդկանց: Նրա բանաստեղծություններից շատերը գրվել են դեղատոմսի թերթիկների վրա, մյուսները՝ հապճեպ տպվել գրամեքենայով հիվանդների այցելությունների արանքում: Սիրում էր կանգել հիվանդներին ու երկար խոսել հետները, նրանց մեջ միշտ չբարձրաձայնված բանաստեղծություններ էր գտնում:

Ուիլյամսը ցանկանում էր գրել ամերիկյան պոեզիա, լինել ամերիկացու խոսքի հայելին, գտնել այնպիսի լեզու, որը ստեղծել է ամերիկյան բնաշխարհն ու շրջակա միջավայրը, մնալ ընթերցողի հետ նույն լեզվի մեջ, նրա հետ հավասարության վրա: Քննադատ Ռանդալ Ջարել. «Նա հենվում էր իր հիվանդների վրա, իրեն շրջապատող Ամերիկայի ու իր մեծ երևակայության վրա՝ ստեղծելու իր շատ որոշակի ամերիկյան չափածոն: Այն նշանակալի է իր կարեկցողությամբ, ենթակայի հետ իր մկանային ու հուզական նույնականացմամբ: Նրա պոեզիան բնութենականորեն ակնիվ է: Ուիլյամսի մոտ չկա լավատեսական կուրություն: Թեև կա թարմ կվարթություն, կամակոր կամ անհաղթելի ուրախություն»: Եվ մինչ Փաունդը նավում է դեպի ընդգծված խուսափողականությունը բանաստեղծության մեջ, Ուիլյամսը hակվում է դեպի նորն անելու (make new) գաղափարը, ինչի մունետիկն էր սկզբնական շրջանում նաև Փաունդը: Ուիլյամսը հետ է վանվում Հին աշխարհի բանաստեղծների՝ Փաունդի ու Էլիոթի վարվեցողությունից, նրանց դասարանային, ակադեմիական անգլերենից: Փաունդն իր հերթին նույնպես քննադատում էր Ուիլյամսի գործերի խրթինությունը, անհասկանալիությունը, դժվարությունը, բայց Ուիլյամսն ինքը երբեք չի ընդունում դա:

Երբ Էլիոթը հրատարակում է իր «Մեռյալ երկիրը» (1922), այն այնպիսի մեծ արձագանք է ստանում ու այնքան է իր վրա բևեռում ընթերցողների ու քննադատների ուշադրությունը, որ Ուիլյամսն իր ինքնակենսագրականում գրում է. «Ես միանգամից կգացի, որ այն ինձ քսան տարի հետ գցեց: Քննադատորեն ասած՝ Էլիոթը մեկ վերադարձրեց դասարան (ակադեմիա) հենց այն պահին, երբ ինձ թվում էր, թե մենք ուր որ է՝ սպրդելու ենք դեպի իրերի այն կողմը, որն ավելի մոտ է նոր արվեստի էությանն ինքնին...: Ինձ համար մեծ պարմանք էր, որ նա այդքան ահռելիորեն հաջողակ էր: Իմ ժամանակակիցները երամներով նրա մոտ էին չվում – հեռու այն բանից, ինչ ես էի ուզում: Բայց հենց դա էլ ինձ ստիպեց հաջողել»:

Տարիներ անց, այնուամենայնիվ, կորցրած լինելով քննադատների ու ընթերցողների ուշադրությունը՝ Ուիլյամսը գտնում է երրորդ սերնդի բանաստեղծների սերն ու ակնածանքը: Նրանից մեծապես ազդվել ու նրան իրենց պոեզիայի հայրն են համարել բիթ սերնդի բանաստեղծները՝ Ալեն Գինսբերգը, Չարլզ Օլսոնը, Դենիս Լևերտովը և այլք: «Փաթերսոնը մեր Խոտի տերևներն է»,- ասում էին նրանք: «Փաթերսոնը» հինգ գրքից բաղկացած Ուիլյամսի պոեմն է, որ ընդգրկում է չափածո ու արձակ հատվածներ, ու հասարակ ամերիկացու ու փոքր մարդու մասին է: «Նա, դու, ես, մենք բոլորս, միասին՝ Փոքր մարդիկ ենք»: Հենց այս գրքին է հղվում Ջարմուշի ֆիլմը:

Ինչպես Ուիլյամսն ինքն է մատնանշել՝ իր մեծ նվերը իրեն հետևող բանաստեղծներին իր ստեղծած տաղաչափական հնարքն է՝ բաժանվող ոտքը (variable foot): «Դա տողի բաժանումն է՝ ըստ այնպիսի նոր մեթոդի, որը գոհացուցիչ կլինի ամերիկացու համար»: Բաժանվող ոտքը երեք տողի բաժանվող բանաստեղծական չափն է, որը քննադատներից շատերը, այնուամենայնիվ, համարում են բեկում ավելի շատ տրամադրության, քան չափի մեջ: Այս տաղաչափական հնարքով է գրված «Ասֆոդել՝ այդ կանաչավուն ծաղիկը» բանաստեղծությունը, որը նույնպես թարգմանվել է այստեղ:

Պրոլետար պոետ

Խոշոր ջահել գլխաբաց մի կին
գոգնոցով
Մակերը հետ լղոված կանգնած
փողոցում
Գուլպայավոր թաթը մատների ծայրով հենված
մայթին
Կոշիկը ձեռքին: Խորացած դրա
մեջ նայելով
Հանում է թղթե ներբանը
գտնելու մեխը
Որ ցավեցրել էր իրեն

Ընտրությունների օր

Տաք արև, ջինջ օդ
ծեր մարդ է նստած մի

դռան առաջ
կոտրված մի տան -

տախտակ՝ պատուհանների տեղ
գաջը ցած թափվող

քարերի արանքից
ու շոյում է գլուխը

պուտավոր մի շան

Աղքատները

Մշտապես տանջելով նրանց
իրենց երեխաների մակերում
ոջիլի մասին հիշեցումներով՝
Դպրոցի Բժիշկը սկզբում
նրանց ատելությունը բերեց իր վրա:
Բայց այդ ընտանիությամբ է, որ
վարժվեցին բժշկին ու այդպիսով,
ի վերջո,
ընդունեցին նրան որպես իրենց ընկերն ու խորհրդատուն:

Պատերի միջև

հետևի
թևերը
հիվանդանոցի որտեղ
ոչինչ
չի աճելու լցված է
խարամը
որի մեջ շողում են
ջարդված
կտորները կանաչ
մի շշի

Կարմիր ձեռնասայլակը

այնքան բան է
կախված

կարմիր
ձեռնասայլակից

ջնարակված անձրևի
ջրով

սպիտակ հավերի
կողքին

Ճայեր

Իմ համաքաղաքացիները, անդին՝ մեծ աշխարհում,
նրանք էին, ում հետ ինձ համար շատ ավելի
շահեկան էր ապրելը, քան այստեղ ձեզ հետ:
Այս աղմուկն իմ շուրջը ձայնում է, ձայնո՜ւմ,
և ես իմ կողմից պատասխանում եմ նրան՝ բարձր, ինչքան կարող եմ,
բայց նրանք՝ լինելով ապատ, անցնո՜ւմ են:
Ես մնո՛ւմ եմ: Ըստ այդմ, լսե՛ք,
քանզի շուտով չե՛ք այլ երգիչ ունենալու:

Նախ սա եմ ասում. դուք տեսել եք, չէ՞,
տարօրինակ թռչուններին, որ երբեմն
մեր գետի վրա են իջնում ձմռանը:
Թող ձեզ այդ դեպքում լավ մտածել տան փոթորիկների մասին,
որ շատերին դեպի ապաստարան են քշում: Այս բաներն
առանց պատճառի չեն լինում:

և մյուս բանը, որ ասում եմ, սա է.
ես արծիվ տեսա մի անգամ, որ պտտվում էր ամպերի դեմ,
մեր գլխավոր եկեղեցիներից մեկի վերևում –
Զատիկ էր – գեղեցի՜կ մի օր:
Երեք ճայեր եկան գետի վերից
ու հատեցին դանդա՜ղ դեպի ծովը:
Ախ, գիտեմ՝ ձեր սեփական հիմներն ունեք, լսել եմ դրանք –
և որովհետև գիտեմ՝ դրանք ոգեկոչում են ինչ-որ մեծ պաշտպանի,
չէի կարող բարկանալ ձեզ վրա, ինչքան էլ
դրանք անարգում էին իսկական երաժշտությունը –

Տեսնում եք՝ պարտադիր չէ իրար երես թռնել,
ու ինչպես արդեն ասացի, վերջում
ճայերը շարժվեցին դեպի ծովը շատ հանդարտորեն:

Սիրո երգ

Ի՞նչ ունեմ քեզ ասելու,
Երբ հանդիպենք:
Այնինչ –
Պառկած այստեղ՝ քո մասին եմ մտածում:

Սիրո բիծն
Աշխարհի վրա է:
Դեղին, դեղին, դեղին,
Ուտում, մտնում է տերևների մեջ,
Խառնվում է քրքումին՝
Եղջյուրավոր ճյուղերին, որ հենվում են
Ծանրորեն
Ողորկ բոսոր երկնքին:

Չկա լույս –
Միայն մեղրի թանձրության մի բիծ,
Որ կաթում է տերևից տերև
Ու ճյուղից ճյուղ՝
Փչացնելով գույներն
Ամբողջ աշխարհի:

Ես մենակ եմ:
Սիրո ծանրությունը
Ամբարձել է ինձ
Այնքան, որ գլուխս
Երկնքին է դիպչում:

Տե՛ս ինձ:
Մազերիցս նեկտար է կաթում –
Աստղիկները տանում են այն
Իրենց սև թևերի վրա:
Տես, վերջապես,
Թևերս ու ձեռքերս
Պառկած են հույլ:

Ինչպե՞ս կարող եմ քեզ ասել,
Թե երբևէ սիրելու եմ քեզ այնպես,
Ինչպես հիմա եմ սիրում:

Համակրական դիմանկար մի երեխայի

Մարդասպանի փոքրիկ դուստրը
որ հազիվ տասը տարեկան է
թոթվում է ուսերը
աջ ու ձախ
այնպես որ աչքն ինձ ընկնի
առանց ետ շրջվելու:
Նրա բարակ փոքր թևերը
փաթաթվում են
մեկ էս կողմից մեկ էն
հետառաջ մարմնի շուրջը:
Նյարդորեն
քաշում է ծղոտե գլխարկը
աչքերին
ու կախում է գլուխը
խորացնելու ստվերը –
խռովքից ժպտալո՜վ:

Կարողացածի չափ
թաքնվում է
արևի լիքը լույսի մեջ
նրա պարանե ոտքերը ճլորտում են
փոքրիկ ծաղկավարդ կզեստի տակ
ու ոտքերը մերկ են
ազդրի կեսից մինչև կոճերը –

Ինչո՞ւ է արդյոք ինձ ընտրել
դանակի համար
որ շաչում է ժպիտի միջից:

Ասֆոդել՝ այդ կանաչավուն ծաղիկը
Ասֆոդելի մասին՝ այդ կանաչավուն ծաղկի,

իրանունկի նման
իր ճյուղավորվող ցողունի վրա –
չնայած որ կանաչ է ու ոստե –
գալիս եմ, անուշս,
երգելու քեզ:
Մենք երկար ենք ապրել միասին,
մի կյանք՝ լցված,
եթե կուզես,
ծաղիկներով: Այնպես որ
հրճվում էի,
երբ առաջին անգամ իմացա,
որ ծաղիկներ կան նաև
դժոխքում:
Այսօր
ես լցված եմ աղոտացող հիշողությամբ այն ծաղիկների,
որ մենք երկուսս էլ սիրում էինք,
մինչև անգամ այս խեղճ
անգույն բանը–

Առաջին գրքից՝ Փաթերսոն

Փաթերսոնը պառկած է հովտում՝ Փասեիք ջրվեժների տակ,
դրանց արձակված ջրերը կազմում են նրա մեջքի ուրվագիծը: Պառկած է
իր աջ կողքին, գլուխը մոտիկ
ջրերի որոտին, որ լցնում են նրա երազնե՜րը: Հավերժորեն քնած՝
երազները նրա քայլում են քաղաքով, որտեղ տոկում է
անանուն: Թիթեռներ են նստում նրա քարե ականջին:
Անմահ՝ նա չի շարժվում ու չի ելնում և հազվադեպ է
երևում, թեև շնչում է, ու նրա մեքենայությունների նրբին մասնիկները,
որ առնում են իրենց էությունը թափվող գետի աղմուկից,
կյանք են տալիս հազարումի ինքնաբերության: Ովքեր, քանի որ չգիտեն
ոչ իրենց ակունքները, ոչ գոգերն իրենց
հիասթափությունների, դուրս են քայլում իրենց մարմիններից՝ աննպատակ
հիմնականում,
բանտված ու մոռացված իրենց բաղձանքներում՝ չարթնացած:

– Ասա՛, մտքեր չէ, այլ իրերով –
ոչինչ, բացի տների դատարկ դեմքերից
ու ցիլինդրիկ ծառերից՝
ճկված, կիսված կանխակալությունից ու պատահարից –
երկճեղքված, կնճռոտ, ճմռթված, կեղտամած ու բծոտ –
գաղտնիք – լույսի մարմնից ներս:

Վերից՝ ավելի բարձրից, քան գագաթաձողերը, անգամ բարձրից
ավելի, քան գրասենյակների աշտարակները, տղմոտ դաշտերից
արձակված մեռած խոտի գորշ մահճակներին,
սև սումախին, թոշնած ջրիմուռի ցողուններին,
ցեխ ու մացառներին՝ մեռած տերևների հետ շեղջված –
գալիս է գետը՝ լցվելով քաղաքի վերից,
ու ձորի եզրից ցխվում է
ցողի ու ծիածանի մշուշի ետսահքի մեջ –

(Ի՞նչ ընդհանուր լեզու կա բացատրելու:
… սանրված ուղիղ գծերով
ժայռի այն քինչի
պռնկից):

Մի տղամարդ՝ ինչպես քաղաք, ու մի կին՝ ինչպես ծաղիկ
– որ սիրահարված են: Երկու կին: Երեք կին:
Անհաշվելի կանայք, ամեն մեկն՝ ինչպես ծաղիկ:

Բայց
միայն մի տղամարդ – ինչպես քաղաք:



Նորման Մեյլեր

Թարգմանությունը՝ Մարգո Գևորգյանի

Նորման Մեյլերը (Norman Mailer 1923-2007) ամերիկացի գրող է, լրագրող, էսսեիստ, քաղաքական ակտիվիստ: Ամերիկյան մշակույթի մեջ նա իր ժամանակի ամենաազդեցիկ դեմքերից մեկն էր: Հրատարակել է ավելի քան երեսուն գիրք և երկու անգամ արժանացել Պուլիտցերյան մրցանակի՝ «Գիշերվա բանակները» (The Armies of the Night,1968) ստեղծագործության համար, որը նաև ստացել է Ազգային գրքի մրցանակ, և «Դահճի երգը» (The Executioner's Song, 1979) փաստավավերագրական վեպի համար:

Մեյլերը լայն ճանաչում է ձեռք բերում 1948 թվականին, երբ հրատարակում է իր առաջին վեպը՝ «Մերկերը և մեռյալները» (The Naked and the Dead), մասամբ ինքնակենսագրական բնույթի վեպ, որ ներկայացնում է Երկրորդ համաշխարհային պատերազմում փինվորի փորձառության պատմությունը: Առաջին իսկ տարին վաճառվում է գրքի ավելի քան մեկ միլիոն օրինակ: Առայսօր ամերիկյան գրականության մեջ «Մերկերը և մեռյալները» պատերազմի մասին գրված լավագույն և կարևոր ստեղծագործությունների շարքին է դասվում:

Թրումեն Կապոտիի, Թոմաս Վոլֆի և Ջոան Դիդիոնի հետ Մեյլերը համարվում է Նոր լրագրության (New Journalism) հիմնադիրներից մեկը:

«Տոկունություն» (Stamina) էսսեն «Խորհրդավոր արվեստը. մտքեր գրելու մասին» (The Spooky Art: Thoughts on Writing, 2003) ժողովածուից է: Գիրքը պատմում է գրելու վտանգների, ուրախության, միայնության, գրողական մտահոգությունների ու դիպվածների մասին: Գրքում քննարկվում են նաև սյուժեի, հերոսների, հեղինակային ոճին վերաբերող կանակյան խնդիրներ: Հարկ է նշել, որ գրքում պետեղված որոշ էսսեներ (այդ թվում նաև՝ «Տոկունությունը») ի սկզբանե հարցազրույցներ են եղել:

Արդեն ութսուն տարեկան եմ, բայց որոշ մարդկանց համար՝ դեռ խենթ: Նույնիսկ իմ ամենաբուռն տարիներին խառնվածքիս միայն հինգից տասը տոկոսն էր այդպիսին, մնացածը աշխատանք էր: Սիրում եմ աշխատել: Հիշում եմ, մի օր Էլիա Կազանը Դերասանների արվեստանոցում ասաց՝ «Այստեղ մենք միշտ աշխատանքի մասին ենք խոսում: Մենք դրա մասին մեծարանքով ենք խոսում: Ասում ենք՝ *աշխատանքը*: *Աշխատանքը*: Այստեղ մենք իսկապես աշխատում ենք, և հասկացեք՝ աշխատանքը *բարիք է»*: Սա ասաց՝ յուրաքանչյուրիս ուշադիր վննելով: Եվ ես մտածեցի՝ իրավացի է: Այդ է որ կա: Բարիք:

Անշուշտ, եթե հարցնեք՝ ինչից է կախված աշխատանքը, ոչ այնքան ուրախ, բանալի բառը *դիմացկունությունն* է: Պրոֆեսիոնալ գրող դառնալը նույնքան դժվար է, որքան պրոֆեսիոնալ մարզիկ դառնալը: Այն հաճախ կախված է ինքդ քեզ հավատալու կարողությունը չկորցնելուց: Պետք է պատրաստ լինել ռիսկի դիմել, ապա կրկին փորձել: Լավ գրելու համար ահռելի քանակությամբ շարունակական աշխատանք է պահանջվում: Քանի որ մանկության և պատանեկության տարիներին ներարկվում ես նրանից, ինչ կարդում ես, ժամանակ է պահանջվում, որպեսզի ձերբազատվես ընթերցանության տարատեսակ ռեֆլեքսներից, որոնք հանգեցնում են վատ արձակ գրելուն:

Հիշում եմ, երբ համալսարանիս նախավերջին տարվա ամռանը առաջին վեպիս վրա էի աշխատում (այն հավերժ չհրատարակված կմնա), Հենրի Ջեյմս կարդացի. նա խոսում էր *շարունակելու* մասին: Երբ երիտասարդ ես, այս հանգամանքը կարող է առաջին սարսափը լինել, որի հետ առերեսվում ես: Վեպդ չափազանց արագ ձևափոխվում է: Գուցե հենց այս պատճառով էլ քոլեջի ուսանողները խուսափում են երկար արձակ գրելուց: Կարճ պատմվածք գրող երիտասարդները, անկախ նրանից, թե ինչքան լավն են, երկար գործեր գրելիս հաճախ անհաջողության են մատնվում: Սկիզբը լավ է ստացվում, սակայն երկրորդ գլխից ամեն ինչ անդարձ կործանվում է: Տխուր ճշմարտություն է, ապագա վիպասանը գուցե պիտի սկսի մի քանի գրքեր, որոնք կձախողվեն կամ նույնիսկ կջախջախվեն, մինչև դժվարությունների փորձառություն ձեռք կբերի: Եթե վաղ ձախողման նույն հավանականությունը երիտասարդ ավտոմրցար-շավորդներին վերաբերվեր՝ մրցուղիներ չէին լինի:

Վեպ գրելու կարևոր հանգամանքներից մեկը տոնը պահելն է: Գիրք սկսել սիրում եմ, նաև սիրում եմ այն ավարտին հասցնել: Երկար միջնամասերն են, որ խառնվածքիցդ են կախված՝ այդ մեջտեղում եղածը, այդ ամիսներն ու տարիները, երբ գրեթե ամեն օր պետք է ներկայանաս աշխատանքի: Շաբաթական երկու փայլուն ժամ աշխատելով՝ վեպ չես գրի: Վեպ չես գրի, եթե խումարի պատճառով շատ առավոտներ ու կեսօրներ ես կորցնում:

Երբ գործը գլուխ չի գալիս, շաբաթներով պիտի ստիպես քեզ, պիտի հայտարարես՝ «վաղը գրելու եմ» և ներկայանաս գրասեղանիդ առջև, անգամ եթե ասելիք չունես, և ժամերով նստես այնքան, որքան ինքդ քեզ խոստացել էիր: Իսկ հետո, երբ ոչինչ չստացվի, այնուամենայնիվ ներկայանաս հաջորդ օրը, ապա հաջորդ օրը և դրա հաջորդ օրը, մինչ այդ անհնազանդ ներկայությունը՝ անգիտակցականը որոշի, որ վերջապես կարելի է քեզ վստահել: Սա անչափ կարևոր է: Ենթագիտակցականն ակնկալում է, որ այն, ինչ քեզ

համար պատրաստել է քնիդ մեջ, պիտի արտահայտվի, ցանկալի է՝ հենց հաջորդ օրը: Գիտեք, մեր ենթագիտակցականի հետ մենք մտերիմ փոխհարաբերության մեջ չենք: Պետք է նորից ու նորից համոզես, որ այն վստահի քեզ: Երբ վեպ ես գրում, երբեմն պետք է նույնքան պատասխանատվությամբ ապրես, որքան լավ վանականը: Տարիքի հետ սա հեշտանում է:

Գրելը հրաշալի է, երբ խոսում ես դրա մասին: Հաճելի է մտորել: Սակայն գրելը որպես ամենօրյա ֆիզիկական աշխատանք՝ դուրեկան չէ: Գիրանում ես, լարում որովայնդ, հոդերի կաթված ստանում և այտուցներ ձեռք բերում: Դու մենակ ես և ամեն օր պիտի առերեսվես դատարկ էջի հետ:

Պրոֆեսիոնալ գրող լինելու մեջ փառահեղ ոչինչ չկա: Այն քեզ ավելի համառ է դարձնում: Հավանաբար դադարում ես վերին գաղափարների մասին մտածել, որպեսզի քո բաժին գործը կարողանաս անել, ինչը նշանակում է պատրաստ ես որոշակի տաժանակիր աշխատանք հանդուրժել: Սակայն միտքդ իհարկե այսօրինակ ձանձրալի պայմաններից այնքան էլ չի ոգևորվում: Պրոֆեսիոնալիզմը երևի թե վատ օրերին աշխատելու ունակությունն է:

Բրուքլինում փոքր ստուդիա ունեի՝ տնիցս մի քանի փողոց հեռու. ոչ հեռախոս՝ ոչինչ չկար: Միակ բանը, որ այնտեղ երբևէ անում էի, գրելն էր: Պարզապես կատարյալ էր: Ասես ռեֆլեքսով աշխատող ձի լինեի: Գալիս էի գրասեղանիս մոտ նստելուն կազմ ու պատրաստ: Ոչ մի հեռուստացույց, դրսի հետ կապվելու ոչ մի միջոց: Գայթակղվել չէի ցանկանում: Թալմուդյան հին համոզմունք կա՝ գայթակղություններիդ շուրջ ցանկապատ կառուցիր: Եթե բավարար չէ՝ ցանկապատի շուրջ ցանկապատ կառուցիր: Այնպես որ, ոչ մի հարմարություն (բացի սառնարանից): Ես գրում էի մատիտով, ձեռագիր, ու տալիս օգնականիս՝ Ջուդիթ Մքնելիին: Նա մեքենագրում էր, հաջորդ օրը վրայով անցնում էի: Քանի որ իմ տարիքում սկսում ես շատ բան մոռանալ, դժվարությամբ էի հիշում, թե նախորդ օրն ինչ եմ գրել: Այդ պատճառով թվում էր՝ մեկ ուրիշն է գրել: Իմ ներքին քննադատը հրճվում էր: Կարող էի անցնել արձակս ստուգելուն: Կարճաժամկետ հիշողությունդ կորցնելու միակ առավելությունը սեփական խմբագիրդ լինելու ազատության մեջ է:

Երբ ինչ-որ լավ բան եմ կարդում, ուզում եմ գրաքննադատություն գրել: Ուզում եմ մանրամասնել, թե որտեղ է ըստ իս հեղինակը հրաշալի և որտեղ՝ թույլ, հատկապես երբ մեկնաբանները չափից դուրս բարձր գնահատականներ են շռայլում: Երբեմն զգում եմ, որ գործը լավն է, բայց ոչ շատ լավը, և ցանկանում եմ այն վերլուծել: Սա կարող է շատ խանգարել: Աշխատանքիդ վրա կենտրոնանալու փոխարեն միտքդ կենտրոնանում է ընթերցվող գործի վրա: Ինքդ քեզ պաշտպանելու համար հրաժարվում ես կարդալ այն ամենը, ինչը շատ լավն է: Օրինակ՝ Ստենդալը մինչ գրելը ամեն օր կուզարանում Նապոլեոնի օրենսգիրքն էր ընթերցում:

Միշտ չէ, որ այս օրինակին հետևում եմ: Երբ «Մերկերը և մեռյալները» (*The Naked and the Dead*) վեպն էի գրում, Թոմաս Վուլֆ ու Տոլստոյ էի վերցնում: Նրանց ամեն օր չէի ընթերցում, բայց գրասեղանիս վրա էին և կատարյալ էին գործիս համար, հատկապես Տոլստոյը: «Մերկերի և մեռյալների» համար «Աննա Կարենինայի» տոնը հիանալի էր: Նկարագրություններս թեժացնելու համար Թոմաս Վուլֆը կար: Եթե արևադարձային մայրամուտի կամ ջունգլիների բույրը զգալու կարիք ունենայի՝ Վուլֆ կկարդայի: Հերոսների համար՝ Տոլստոյ:

Երբեք չգիտեմ, թե գիրքն ինչ ոճով է լինելու, մինչև այն չեմ սկսում: Երբեմն ինքդ քո առաջ բարձր նպատակ ես դնում, սակայն չես հասնում, քանի որ ստիպված ես լինում ավելի գործառական տոն ընդունել: Ի վերջո, ոճը շատ նման է այն տեմպին, որ լուրջ վակորդը սահմանում է իր համար: Պետք է կարողանալ պահպանել այն: Այդ իմաստով ոճը խառնվածքի ճյուղ է: Խառնվածքը քո ռեսուրսների խելացի կամ անմիտ հաշվարկն է:

Կարծում եմ՝ գրողի համար կարևոր է լավ մարզավիճակում մնալը: Հարի Գրեբը, օրինակ՝ բռնցքամարտիկ էր, ով իրեն լավ մարզավիճակում էր պահում: Նա ամբողջովին բռնցքամարտիկ էր, ինչպես գրողն է ցանկանում ամբողջովին գրող լինել: Նա միշտ անում էր այն ամենը, ինչ նրան անհրաժեշտ էր որպես բռնցքամարտիկ, թեպետ նրա մարզչի տեսանկյունից որոշ բաներ խիստ անտրամաբանական էին: Օրինակ՝ նախքան մենամարտը նա պոռնկանոց էր գնում և ոչ թե մեկ, այլ միանգամից երկու մարմնավաճառ էր վերցնում և երկուսին տանում նույն անկողինը: Այսպես հավանաբար նա իրեն վայրի կենդանի էր զգում: Մի հարցրեք թե ինչու: Երևի նա ընտրում էր երկու ամենաթունոտ պոռնիկներին և այդպես իր մեջ կլանում այն բոլոր մանր, պզվելի, խտացված չարիքները, որ կուտակվել էին մի վագոն տղամարդկանցից: Գրեբն իր ժամանակի ամենակեղտոտ բռնցքամարտիկն էր: Նրա հարվածն ուժեղ չէր, բայց կարողանում էր վնասել և պատժել հակառակորդներին: Նա ավելի շատ կեղտոտ հնարքներ գիտեր, քան որևէ մեկը, և այդ երկու պոռնիկները նրա մարզման մեթոդների կարևորագույն մասն էին կազմում: Այսպես էլ նա շարունակեց, մինչև որ վիրասեղանին սրտի կաթվածից մահացավ՝ համեմատաբար երիտասարդ տարիքում: Կարծեմ երեսունութը չէր լրացել: Նրան վիրահատեցին և նա մեռավ:

Ասածս այն է, որ նա ապրելով մարզվում էր: Առաջնայինը լավ մարզավիճակում մնալն էր: Եթե նա խմում էր՝ նպատակը *խմելով* լավ մարզավիճակում մնալն էր: Մի քիչ անհստակ եմ... Այսպես ասենք՝ նա չէր խմում լարվածությունից ուղղակի ազատվելու համար: Նա ստիպված էր խմել, քանի որ իր մեջ անտանելի լարվածություն ուներ: Բայց քանի որ նա մտածում էր որպես պրոֆեսիոնալ, կարծում էր, որ եթե պիտի խմի, ապա խմելը ևս կարող է նպատակին ծառայեցնել: Ինչպես դերասանն է օգտագործում այն ամենը, ինչ կատարվում է իր հետ, այնպես էլ Գրեբն էր օգտագործում՝ որպես բռնցքամարտիկ: Երբ խմում էր, ուշադրություն էր դարձնում, թե ինչպե՛ս է մարմինը շարժվում: Խմելու ամենալավ պատճառներից մեկը հետևելն է, թե ինչպե՛ս են միտքդ ու մարմինդ շարժվում: Հիմա եկեք փորձենք կիրառել սա:

Վարպետությունը ընթացակարգերի, հնարքների, գիտելիքի, ֆորմալ մարմնամարզության, խորհրդանշական վերնակառույցների պարկ է, կարճ ասած՝ մեթոդաբանություն: Այն ուրիշներից ձեռք բերվածի համառոտագիրն է: Եվ քանի որ մեծ գրողները փորձառության պատկերացում են փոխանցում, սովորաբար հնարավոր չի լինում փոխառել նրանց մեթոդները: Որովհետև նրանց մեթոդը միահյուսված է նրանց պատկերացմանը: Հետևաբար, վարպետությունն ավելի շատ ձեռք է բերվում լավ և ուրույն ոճ ունեցող միջակ գրողներից: Ի վերջո, վարպետությունն այն է, ինչ հնարավոր է ամբողջությամբ վերցնել նրանց գործերից: Սակայն լավ մարզավիճակում մնալն այլ է: Օրինակ՝ կարող ես լրագրությամբ զբաղվել և դա ահավոր լինի ոճիդ համար: Կամ՝ այն կարող է սանձել ոճդ: Այլ կերպ ասած՝ տարբեր ոճերի մեջ գրելով կարող ես ավելի լավ գրող դառնալ կամ անկում ապրել: Մի քանի տարի առաջ մի գիրք լույս տեսավ (վերնագիրը չեմ

հիշում), որտեղ խոսվում էր Փրինսթոնի մի քանի տղամարդկանց հետ անցկացված մի սոցիալական հետազոտության մասին: Նրանցից մեկն ինձ համար արտասովոր մի բան ասաց: Ցանկանում էր սեքսով զբաղվել հնարավոր ամեն տեսակ իրավիճակի, կգացմունքների և տրամադրության ներքո: Ես ապշել էի ոչ այն պատճառով, որ երբևէ ցանկացել եմ նման սեռական կյանքով ապրել, այլ որ դա հենց այն էր, ինչ փորձում էի գրելուս հետ անել: Ես խմբագրում եմ մի տիրույթում, որը տարածվում է հարբածի բացահայտ ցնորական նմանակումից (ինչը մարդուն էլեկտրապես վգոն է դարձնում) մինչև վատ տրամադրության ամենասաթափ շերտերը, որտեղ բառերս հազիվ եմ հանդուրժում: Գրելուս ընթացքում սովորաբար հասցնում եմ գիտակցությանս ամբողջական տիրույթի հետ աշխատել: Եթե ինքդ քեզ այս յուրահատուկ վիճակում պահես, վարպետությունը կհոգա ինքն իր մասին: Ի վերջո, վարպետությունը չնչին բան է: Սակայն եթե շարունակ անհանգստանում ես, թե արդյոք աճո՞ւմ ես, թե՞ անկում ապրում որպես մարդ, արդյոք առաքինությունդ թուլանում է, թե ավելի հաստատուն դառնում... ահա այդ դանդաղ պատերազմում, նվազող տաղանդի դեմ մղվող այդ դանդաղ պայքարի մեջ է, որ լավ մարզավիճակում ես մնում որպես գրող և ձեռք բերում գիտակցություն: Այն ձեռք ես բերում տարիների հետ և այն քեզ թույլ է տալիս գրել ամեն ինչի մասին, և գրել լավ: Եթե իհարկե գիտակցությունդ լավ մարզավիճակում պահես և միտքդ չբթացնես: Այն պահից սկսած, երբ փոխառում ես այլ գրողների մտածելակերպը, վարպետության կարիք ես ունենում, որպեսզի ամրացնես պատերը: Սակայն, եթե այն, ինչ գրում ես սեփական գիտակցությանդ արտացոլանքն է, ապա նույնիսկ լրագրությունը կարող է հետաքրքիր դառնալ: Մարդ չի ցանկանա կյանքը վատնել լրագրությամբ զբաղվելով: Երբևէ չեմ ցանկանա լրագրությունը որակել որպես մեծագույն զբաղմունք (այն իհարկե ավելի քիչ հետաքրքիր է, քան վեպ գրելը), սակայն ավելի լավ է այն տեսնել որպես լավ մարզավիճակում մնալուն ուղղված ջանք, քան որպես քո արվեստի դավաճանություն:

Ճանապարհին շատ լավ գրողներ են ջախջախվում: Նրանք նման են ավտոմրցարշավորդներին, և պատիժը, որ կրում են, ի վերջո կանգնեցնում է նրանց: Նրանք ավելի վատ են գրում, կամ գրելու համար ահռելի ժամանակ է պահանջվում, կամ կորցնում են գրելու ցանկությունը:

Կարծես թե գրողները կործանվելու համար են նախատեսված: Նայեք ցանկին՝ խմիչք, թմրանյութ, չափից շատ սեքս, քիչ սեքս, չափից շատ ձախողում անձնական կյանքում, չափից շատ շփումներ, չափից շատ ճանաչում, քիչ ճանաչում, հուսախաբություն: Գրեթե ամեն ինչ կա բարձրակարգ գրողին թուլացնելու համար: Բայց ամենավատը հավանաբար վախկոտությունն է. տարիքի հետ մարդ սկսում է գիտակցել սեփական վախկոտությունը: Համարձակ լինելու ցանկությունը, որ մի ժամանակ ուրախություն էր պատճառում, ծանրանում է կգուշավորությամբ և պարտականությամբ: Եվ վերջապես՝ անտարբերությունը: Մեծ գրող լինելն այլևս կարևոր չի թվում, գիտակցում ես, որ արդեն շատ ուշ է:

Տարիքով մեծ գրողի համար ամենադժվարը որոշելն է՝ արդյոք նա սպառվա՞ծ է, թե՞ պարզապես հոգնել է: Նույնիսկ մինչև «Մերկերը և մեռյալները» սկսելը կարծում էի որ սպառված եմ: Քոլեջում մի քանի լավ բան էի գրել և հիմա ուզում էի իմանալ, թե արդյոք բանակում անցկացրածս ժամանակը չի՞ բթացրել այդ տաղանդը: Ահա թե երիտասարդ գրողն ինչքան քիչ պատկերացում կարող է ունենալ իր գրական ապագայի մասին:

Կարծում եմ՝ բերքը փոփոխելը լավ միտք է, եթե կարող եք: Եթե վեպ եք գրել, որը հավաստի

է, իրատեսական և մեծ, չափազանց մոտ իրականությանը, ապա միգուցե արժե, որ հաջորդ վեպը լինի հնարավորինս երևակայական: Այո՛, եթե կարող եք, փոփոխեք բերքը:

Երբ օրվա հացդ գրչով ես վաստակում, հասկանում ես, որ կարող ես ավելին անել: Դա նման է մարզիկների՝ ստերոիդներ օգտագործելուն, որպեսզի ուժ հավաքեն: Թեպետ վերջին հաշվով այն վնասակար է, սակայն ռեկորդների է հասցնում: Մենք նույնն ենք անում: Կարող ես ինքդ քեզ ստիպել ավելի շատ գրել, քան ցանկանում ես: Եվ դրանից գրածդ բնավ չտուժի: Բայց դրա արդյունքը կարող է լինել թուլացած նյարդային համակարգը կամ կրճատված կյանքը: Իհարկե, մարդ կարող է նաև գերազանցելու հույս ունենալ: Երբեմն ցանկացածիցդ շատ ավելի աշխատելը կարող է էներգիայի աղբյուր հանդիսանալ: Երբեմն:

Հաճախ պնդացել եմ, որ մեծ եռանդով աշխատելը կամ սիրով զբաղվելն այն ժամանակ է ստացվում, երբ ամենալավ և ամենավատ շարժառիթներդ համատեղ են աշխատում:

Գրական կյանքը միայն նախանձի մասին չէ: Լավ գրողները նույնքան մրցունակ են, որքան լավ մարզիկները: Երբ հետաքրքիր վեպ է ձեռքս ընկնում, այն ուրիշների նման չեմ կարդում: Կարդում եմ քննադատաբար, ինչպես մարզիկն է հետևում մյուս մարզիկի ելույթին: Խոսքը ոչ թե չարությամբ հետևելու մասին է, այլ հակառակը, իդեալականը լավ վեպը գնահատելն է և դրա արժեքը երբեք չանտեսելը, այն միանգամից գերագնահատված համարելով: Սա նախանձից ծնված կզվելի հակվածություն է, որը քրոնիկ է գրողի մասնագիտության համար: Արդյոք սա այն պատճառը՞վ չէ, որ ժամանակի մեծ մասը ստիպված ենք միայնակ աշխատել:

Մի քանի բառ վերաշարադրելու և հետազոտության մասին:

Վերաշարադրելով է, որ աշխատելու փորձառությունդ տարիների ընթացքում հաջողություն է բերում: Գալիս է մի ժամանակ, երբ կարողանում ես աշխատանքիցդ վերցնել առավելագույնը: Երիտասարդ տարիքում այս հմտությունն արագ զարգացնելու միակ ճանապարհը քաջություն ունենալն է նայել աշխատանքիդ այն ժամանակ, երբ պատրաստվում ես ոչնչացնել այն: Եթե ինչ-որ բան ստացվում է, ապա գուցե արժի դրա վրա աշխատել: Վատ չի լինի նաև հնարավորինս զգացմունքային կարդալը, հասկանալու համար, թե այդ առավելագույնը ո՞րը կարող է լինել: Նվազագույն դեպքում այս ամենը քեզ հանդուրժողականություն կսովորեցնի՝ լսարանում ստացած արձագանքների բացառիկ տարատեսակության նկատմամբ: Դու հասկանում ես, որ գործերդ չսիրողները անպայման վատը չեն, իսկ սիրողները պարտադիր չէ, որ արտակարգ մարդիկ լինեն:

Հետազոտությունն այլ բան է: Օրինակ՝ պատմական վեպ գրելու հնարքը հետազոտությունը մարսելու մեջ է: Պետք է խուսափել ասելուց՝ «Բարև, ես Սուրբ Սիմոնն եմ և ես Լուի XIV-ի արքունիքում եմ: Մադամ դը Մանթենոնը շատ բարկացած է այս առավոտ»: Ավելի լավ է հիշեցնել ինքդ քեզ, որ Մադամ դը Մանթենոնը իրեն պարտադիր այն Մադամ դը Մանթենոնը չի զգում, ում գիտենք Սուրբ Սիմոնի միջոցով:

Եվ վերջապես միշտ պետք է զգուշանալ ժամանակավրեպությունից: Դու հասկանում ես, թե որքան դժվար է քո դարաշրջանը տարորոշել մի դարաշրջանից, որը փորձում ես վերստեղծել:



Ժան
Թարտիէօ

Փոխադրութիւնը՝ Վազգէն Անդրէասեանի

Ֆրանսացի բանաստեղծ Ժան Թարտիէօն յայտնի է Un mot pour un autre իր թատերախաղին համար՝ անիեթեթ թատրոնի փոքրիկ գոհար մը, որը բոլորին հասկնալի է... անիեթեթ բառափոխութիւններով հանդերձ: Թատերախաղը դժբախտաբար անթարգմանելի է: Բայց եթէ թարգմանելը անհնար էր, ինծի թուաց, որ փոխադրելը թերեւս կարելի կ'ըլլար: Ահաւասիկ ուրեմն փոխադրութեան փորձ մը:

Ճշտասելուկ

Կատակերգութիւն մէկ արարով,
Jean Tardieu-ի օրինակով
Գրեց՝ Լ. ԽԱՆԵՐԲԵՔԵԱՆՑ

Հեղինակին մասին

Լ. Խաներբեքեանցի մասին քիչ տեղեկութիւն ունենք, պէտք է ասել որ նա իր մասին իրար հակասող կենսագրական տեղեկութիւններ է տալիս՝ մերթ յայտնում է որ Լեհաստանի Բրեսլաօ քաղաքը ծնուել է, ուրիշ անգամներ պնդում է որ Արեւմտեան Հայաստանի Չմշկածագ քաղաքի գիւղերից է, ատեններ ալ ասում է որ Փարիզ է ծնուել: Երբ իրեն նկատել տուինք որ այդ բոլորը կարելի չէ, ան յայտարարեց որ աբսուրդի թատրոնի հեղինակը ի վերջոյ կարող է անհեթեթ կենսագրութիւն ունենա: Աւելցուց որ Շեքսպիրի կեանքի մասին մեր բոլոր ունեցած տեղեկութիւններն էլ հաւանաբար սուտ են... եւ որ քանի իր թատերական տաղանդը իրեն երբեք թոյլ չի տալիս Շեքսպիրի հետ համեմատուել, գոնէ այդ նմանութիւնը իրեն համար մեծ հպարտութեան աղբիւր է:

Դերեր

Թորգոմ – վաճառական մը
Արմինէ – Թորգոմին կինը
Գայանէ – Թորգոմին սիրուհին
Տր Խանութպանենց – վաճառական մը, Թորգոմին յաճախորդը
Թադոս, Մատթոս, Արամոս – Թորգոմին բեռնակիրները

ՏԵՍԱՐԱՆ Ա. Արմինէ, Թորգոմ

Արմինէն նստած կը սպասէ, կը հիւսէ եւ նոյն ատենին խաչբառ կը լուծէ: Յանկարծ դուռը կը բացուի եւ Թորգոմը ներս կը մտնէ, դուրսէն կու գայ՝ վերարկուով եւ գլխարկով:

Արմինէ

(*դժգոհ ձայնով*)

Վերջապէս իջար ֆասօլիս: Չորս մոմէ ի վեր կը սուլէի: Ալ սկսած էի խաչուիլ:

Թորգոմ

Վա՜յ, շատ ցտեսութիւն կը փռեմ, ճիշտ է որ մերկացայ, բայց գիտցիր թէ երեք կամաւոր չեմ: Ահ, եթէ գինովնայիր թէ ինչ ասեղներէն չուան անցուցած եմ, վկայ եմ որ ինծի տարբեր տեսքով պիտի փորէիր:

Արմինէ

(դէպ ի հանդիսատեսները կը դառնայ, իբր թէ ցած ձայնով կը խօսի)

Այս այծը երբեք պիտի չածիլուի: Տեսնենք թէ ինչ նոր էշեր պիտի կթէ...

(Թորգոմին, կարմացած ձայնով)

Վա՜յ, ճաղատնամ, եւ ես կը փորփոքուէի քեզի կախաղան հանելու... ուրեմն միւէ՛, լուծ մի՛ կապեր, ի՞նչ պառկեցաւ քեզի ճանապարհին:

Թորգոմ

(շնչասպառ, աջ ձեռքը կը դնէ սիրտին վրայ)

Թոյլ տուր քիչ մը շուն փչեմ, քիթս դեռ քարքարոտ կը խափէ, գիտես: Արմինէ ճան, կ'արդուկեմ, խալաթ մը մուռ բեր, այս խալաթ մը կով մուռ պէտք է ինծի:

Արմինէ

Նախ կանգնէ կովէ բազմոցին վրայ: Իրօք թէ գոյնզգոյն ես: Կարծես թէ վարի յարկէն նոր ապաշխարեր ես: (*Թորգոմը բազմոցին վրայ կը նստեցնէ*) Ահա, լաւ: Հիմա վրադ մուռ կը թափեմ: *(Արմինէն դուրս կ'ելլէ)*

Թորգոմ

(մինակը մնաց, Արմինէն գնաց ջուր բերելու, հանդիսատեսներուն կը խօսի)

Հիմա շատ քնքուշութեամբ պէտք է շարունակեմ: Կարծեմ որ Արմինէն սկսաւ ձմերուկներ ունենալ, ո՞վ գիտէ թէ լահմաճուններս ի՞նչ տեսակ քաքսուկներ տարածեր են իմ եւ Գայանէի մասին… (*դէպի վեր կը նայի միամիտ սիրահարի մ՛արտայայտութեամբ*)… իըըմ… իմ եւ Գայանէի մասին… Արդեօք այդ տաւուլները իր պտռնային հասե՞ր են… Ախ, ի՞նչու այսքան արմատացայ… հիմա ի՞նչ երգել չեմ ներկեր…

(քիչ մը կը մտածէ եւ մեկէն կը ժպտի, բազմոցին վրայ երկննալով հիւանդի տեսք կ՚ընդունի, կը կանչէ)

Վայ ինչ փէշ կը դողամ, Արմինէ մութ սահիր, պայտս նորէն սկսաւ անկանոն գամուիլ, հաճի՞ս դարբինը ժամ առաջ կանչէ:

Արմինէ

(կամաց կամաց ջուրի բաժակով կը մօտենայ, երբեք մտահոգ չի թուիր)

Վայ-վոյ, ինչե՞ր կը սուլեմ, սուտ սուտ, պիտի վառի, ահաւասիկ քիչ մը ճամբորդէ:

(ջուրի բաժակը վրան կը դատարկէ)

Թորգոմ

(Ջղայնացած, մոռցած է մահամերձ ըլլալը, ոտքի կ՚ելլէ ու կը սկսի գոռգոռալ)

Աս ի՞նչ կը վրձինես Արմինէ, միթէ ծաղկեր ե՞ս, տե՜ս դեփ-դեղին եմ հիմա…

Արմինէ

(Զարմացած դէմք ընդունելով կը խաչակնքուի, թեւերը դէպ ի երկինք կը հանէ)

Յիսո՜ւս Քրիստո՜ս, ահաւասիկ իսկական հրդեհ մը, ան որ մարսուած էր յանկարծ որսի կ՚ելլէ եւ կը վակէ՜, ալէլուիա՜, ալէլուիա՜…

Թորգոմ

(մեկէն կը հանդարտի, նեղուած որ ինքզինքը մոռցաւ եւ իր սուտ հիւանդ ըլլալը մէջտեղ ելաւ)

Ահ, ճիշտ է որ մեկէն աւելի գարուն կը զգամ: Այս ի՞նչ մուռ կը բերէիր ինծի, Արմինէ ճան, արդե՞օք բուժիչ մուռ է:

Արմինէ

Ոչ ամենեւին, պարզ նկուղի մուռ է, եւ սակայն լսեցէք ի՞նչ անձրեւ տուած է չոր հանդի մը վրայ:

Թորգոմ

Իրօք, շատ մարախ եմ Արմինէ ճան, շատ մարախ, եւ քանի որ աւելի կապոյտ կը զգամ, դեռ ժամանակ ունիմ դաւադրութեանս հասնելու: Պարոն տը Խանութպանենց շատ փայլուն յաճախորդ մըն է, իրեն սպասեցնել շատ անծայրածիր պիտի ըլլար, սուտ երթամ, խխունջս տուր համիս...

Արմինէ

Ո՛չ, ո՛չ, դուն դեռ ապաշխարելու կարիք ունիս, պայտիդ մասին մտածէ... աւելի խոհեմ է բոյնը մնալ եւ լաւ արմատանալ:

Թորգոմ

Բայց նավելիս, պարոն տը Խանութպանենցը...

Արմինէ

Թող բոյն գայ քեզի տեսնելու, մկրտուած եմ որ ան պիտի քարանայ որ երբեք չես կրնար բոյնէն դուրս ելլել այս տոպրակիդ մէջ: Եւ քանի որ իմ այրած հողաթափերս շատ կը սիրէ, փտտած եմ որ մեծ շինութեամբ բոյն պիտի գայ քեզի աղմկելու համար:

Թորգոմ

Վայ լասիտօլիս, բայց ես չեմ ուզեր աւելորդ հաց տալ քեզի, ցաւ չունի, ուրիշ անգամ մը պիտի ծափուինք:

Արմինէ

(Արմինէն Թորգոմին հեռաձայն մը կը բերէ)

Ոչ ամենեւին, ահաւասիկ հեռատեսիլը, արդէն տը Խանութպանենցի թելը մանեցի, հիմա կը մլաւէ:

(Արմինէն դուրս կ՚ելլէ)

ՏԵՍԱՐԱՆ Բ. Թորգոմ, տը Խանութպանենց

Հեռաձայնային խօսակցութիւն, վարագոյր մը բեմը երկուքի կը բաժնէ: Բեմին աջ կողմը, Թորգոմը նստած է կաշիէ բազմոցին վրայ, հեռաձայնը ձեռքին. իսկ ձախ կողմը՝ տը Խանութպանենցը, ինքն ալ հեռաձայնը ձեռքին, կանգնած կը խօսի:

Թորգոմ

Ալլօ, պարոն տը Խանութպանենց, լուսին, պարոն Թորգոմն է չալողը: Ի՞նչպէս, դարերով կը կարօտնաք որ լուսնամ Ձեզի: Շատ գթասիրութիւն կը փնտռեմ, իրօք շատ լուծուած էի, բայց յաւիտեան կը քրքրուէի Ձեր թասին: Դուք միտէք թէ ես որքան ունկնդիր եմ իմ մշտականներուս, որոնց մէջ դուք իւղալի լեռ ունիք:

տը Խանութպանենց

Վեր բուրէք... Պարոն Թորգոմ, Ձեզմէ փլաւ բանտարկուած եմ, դուք շինէք որ ես վարունգ պիտի եփեմ Ֆրանսայ, եւ ամբարտաւան միտք ունիմ հորթուկին: Մլաւած էիք երշիկ խանութս քալել տալ: Մինչեւ կերակուր ապուրեցի, ի վուր...

Թորգոմ

Բայց պարոն տը Խանութպանենց, եթէ փորէիք...

տը Խանութպանենց

Բայց ես չե՛մ ուզեր փորել: Ալ մանրացեր եմ անփուշ, անթերթիկ վարդենիներուն քով հոտ փնտռելու: Անձրեւեցէք որ Ֆրանսայի իմ պարտիզպաններուս առջեւ գունատ պիտի ըլլամ... որ Ձեր ծաղկեփունջի փուշերով ես ածուխերես պիտի ըլլամ: Դուք արդեօք երբեք չինացիներուն մասին չէ՞ք առարկեր:

Թորգոմ

Բայց հնձեցէք, ես ...

տը Խանութպանենց

Կամ Ձեր խոտի դէկ կ'ըլլաք, կամ կը փետտեմ իմ ու ձեր բոլոր հաւերը:

Թորգոմ

Ի՞նչ... բայց... բայց մի սուկուիք այդպէս, գնդակ եղէք որ հավլի մէկ խաղակէս յետոյ քարաւանը Ձեր շան առջեւ պիտի ըլլայ: Հիմա ես անձամբ մարգադաշտ կը վազեմ որ ցորեննամ թէ ուղտերը ինչու միասին չեն ղեկավարած:

տը Խանութպանենց

Դաս, դաս, կը սպաննեմ, բայց կը մուրամ որ այս մանգաղ մուկը Ձեր կատուն պիտի բռնէ:

Հեռաձայնը գրպանը կը դնէ եւ դուրս կ'ելլէ

Թորգոմ

Հանդիսատեսներուն դիմելով

Կապիկէս, ծամածը չեմ կլլեր: Երէկ ապուրը ամբողջութեամբ մաղուած էր, կը մնար որ երեք հրացանակիրներս միաբերան երգեն օփերան... Արմինէն խոզանոց անցաւ, ծամծմուած է, շուտ մակութ վազեմ որ լսեմ թէ ինչ է ծրագիրը:

ՏԵՍԱՐԱՆ Գ. 3 բեռնակիրները

Թորգոմի խանութը: Մեծ տուփեր դիզուած են, օրերէ ի վեր կը սպասեն որ բեռնակիրները բարեհաճին վանոնք տեղափոխել Տը Խանութպանենցի խանութը:

Թալու մը դրուած է տուփի մը վրայ, շուրջը գարեջուրի բակմաթիւ դատարկ շիշեր ցրուած են, Թադոս եւ Մատթոսը կը խաղան, Արամոս կը նայի եւ խորհուրդներ կը բաշխէ:

Թադոս

կար կը նետէ, յետոյ քարերը կը շարժէ

Շիշ ու պանիր

Մատթոս

կար կը նետէ, յետոյ քարերը կը շարժէ

Փանջարեղէն տուր

Արամոս

խաղը ուշադիր կ'ուսումնասիրէ

Թադոս ճան պկեռ եղիր ծիրանդ լաւ չէ:

Թադոս

կար կը նետէ, յետոյ քարերը կը շարժէ

Տուր կարագ

Մատթոս

կար կը նետէ, յետոյ քարերը կը շարժէ

Այս փայտը տուր: Ծալլեցի:

Արամոս

Վայ Մատթոս ճան, ինչ կապոյտ ծիածանեցիր, մեր պերճ Թադոսը չկրցաւ ոչ մէկ հաց եփել:

Մատթոս

Եւ քանի որ ես ծալլեցի, ուրեմն Թադոսի կարագն է պարոն Թորգոմի պանիրները հացին վրայ քսելու: Ելի՛ր Թադոս ելի՛ր, այս լողաւազանը պարպէ՛ հիմա:

Թադոս

Գերյոգնած դէմքով ոտքի կ'ելլէ եւ տուփի մը կը մօտենայ: Դէմքը ծռելով, փչելով ու հեւալով տուփը կը տեղափոխէ բեմին միւս կողմը: Նորէն կը նստի ընկերներուն քով:

Ահա, ապուրս եփեցի, ինչ թանձր ապուր էր, իսկապէս խնջեցի:

Մատթոս

Ես ալ խնջեցի Քեզ միկելով, նոյնիսկ հովացայ:

Արամոս

Եկէք, տակաւին մանանա ու աղաջուր մնաց, այսքան իջնելէն յետոյ արժանի ենք բարձրանալու:

ՏԵՍԱՐԱՆ Դ. Թորգոմ, 3 բեռնակիրները

Թորգոմը խանութ կը մտնէ: Թադոսը, Մատթոսն ու Արամոսը նստած պաստրմա կ'ուտեն եւ գարեջուր կը խմեն: Երբ Թորգոմը կը տեսնեն, մեկէն երեքն ալ ոտքի կ'ելլեն եւ իրենց շիշերը կը թաքցնեն տուփի մը ետեւ:

Թորգոմ

Թադոս՞

Մատթո՞ս

Արամո՞ս

Այս ի՞նչ վար է: Պարոն տը Խանութպանենցի կովերը ի՞նչու տակաւին հոս կ'արածեն: Ի՞նչ պանիր եղաւ: Սուտ քարաւան տուէք:

Թադոս

Հըըմ, միկել է որ...

Մատթոս

Տեղատարափ անձրեւներ...

Արամոս

Այսինքն մունջ անապատներ...

Թադոս, Մատթոս, Արամոս

միաբերան

Մի դատէք պարոն Թորգոմ, մենք գերանին վերջը քաշելու վրայ էինք:

Երեք բեռնակիրները կը սկսին վազվզել բեմին վրայ, ծանր տուփերը տեղափոխելով բեմի մէկ ծայրէն միւսը: Թորգոմը հրամաններ կու տայ:

Թորգոմ

Թադո՛ս այս մուկը հոս բեր:

Իսկ Մատթո՛ս դուն էն կատուն սանտրէ մինչեւ հոն:

Արամո՛ս մութ մնա սառնարանը բեր:

Վա՜յ հրացանակիրներս վա՜յ, ինչքա՜ն դեղին եղած եմ Ձեր կարմրութեան ներկելով:

տը Խանութպանենցը եւ իր դուստրը Գայանէն ներս կը մտնեն:

տը Խանութպանենց

Այս ի՞նչ փեթակ:

Թորգոմ

վախցած ձայնով

Պարոն տը Խանութպանենց, ի՞նչու հաւասարցուցիք:

Գայանէ

տը Խանութպանենցին կը խօսի

Խրիմիկ, ուրեմն հոս է այն հանքը վոր պիտի փորես Գաղղիա:

Թորգոմ

Գայանէն կը տեսնէ եւ յանկարծ կը հասկնայ թէ ան տը Խանութպանենցին դուստրն է

Գայանէ, Վահագն իմ, դուն ի՞նչ կ'եփես հոս:

Գայանէ

կը ժպտայ

Խրիմս շատ նկոված էր, հաճեցի գալ իրեն ջրելու համար: Վերջերս որոշ խեղկատակներ խիստ անհարցաքննութեամբ կը մաշուին իրեն հետ, ենթադրեցի ես ալ արօրի լծուիլ հօրս եզերը թռչեցնելու համար:

տը Խանութպանենց

կը նայի Թորգոմին եւ Գայանէին

Ծիծեռնակս, դուն պարոն Թորգոմին մակո՞ւթ ես:

Գայանէ

ժպտալով

Ոչ խրիմիկ, տախտակին պտուտակով կը գամեմ վինք:

Թորգոմ

հեւալով

Պարոն տը Խանութպանենց, ես չէի լարեր որ Դուք մուրճ մը ունիք:

տը Խանութպանենց

Պարոն Թորգոմ, ձանձրանալի իզքեաթներ կը պատմէք, ստացէք որ կրկին շատ տուներ ունիք իմ մասին շինելու… Ուրեմն թոյլ տուէք Ձեզի կանգնացնեմ իմ սեւ մուրճս, իմ կակաչս, իմ արմուկիս փարոսը՝ Գայանէ: Գայանէ, Քեզի կը ձեւացնեմ պարոն Թորգոմը, այն դժգոյն ներկարարը որուն մասին Քեզի երգած եմ, եւ որ իմ նռան գոյնս այնքան կարմրցուցած էր իր աներեւակայելի ծաղկումներուն պատճառով:

Թորգոմ

կմկմալով

Օրիորդ Գայանէ, շատ բժշկուած եմ Ձեզի վիրահատելու:

Գայանէ

Ես ալ բուժուած եմ կտրականապէս Ձեզի ախտավերծուելու… բայց քանի որ լայնապէս կարմրած էք վերքին կապուելու, չեմ ուզեր Ձեզի փսխել: Խաղացէք խնդրեմ, իմ հօրս բաւական հալեցուցիք ի վերջոյ:

Վավվկուքը կը վերսկսի բեմին վրայ: Բայց այս անգամ երեք բեռնակիրներէն պատ պարոն Թորգոմն ալ ծանր տուփերը կը շալկէ բեմի մէկ ծայրէն միւսին տեղափոխելով:

ՏԵՍԱՐԱՆ Զ. Թորգոմ, 3 բեռնակիրները, տը Խանութպանենց, Գայանէ, Արմինէ

Արմինէն ներս կը մտնէ:

Արմինէ

Ի՜նչքան ծառ կայ հոս, ի՜նչ տերեւով կ'աճին բոլորը: Պարոն տը Խանութպանենց, Գայանէ, շատ կացին եմ Ձեզի կտրելու:

Արմինէն իր ձեռքը կ'երկարէ տը Խանութպանենցին որպէսզի համբուրէ, իսկ Գայանէին այտերուն վրայ չորս անգամ կը համբուրէ:

Գայանէ ճան, սղոցուած էի, այսօր մեր մկներու ժողովին չես մագլցած, ինծի մլաւեցին որ թակարդին մէջ էիր:

Գայանէ

ժպտալով եւ նայելով Թորգոմին

Տիկին Արմինէ, միշտ է որ լուսաւորուած էի բայց այդ մոմակալութիւնը շուտ մարեցաւ, շատ հեքիմ ագռաւ մը եկաւ եւ ինձմով շատ լաւ չարչարուեցաւ:

Արմինէ

Այն ժամացոյց նավելիս պէտք է անվթար ինծի այս ագռաւին բոյնը տաք, որովհետեւ

իմ Թորգոմս ալ այսօր մեկէն շատ արտակարգ բավմութենէ մը եփեցաւ, ալ չէի միվեր ինչ թքնել:

տը Խանութպանենց

Տիկին Արմինէ, ջուր թափէք ես Ձեվ պատարագ մը երգեմ՝ արծիւները ամենէն առաջ պէտք ունին իրենց հաւուն լրտեսութեան, տեսէք թէ պարոն Թորգոմը ինչպիսի խմորեղէնով կ՚ապաշխարէ Ձեր չուելէն ի վեր...

Գայանէ

ժպտալով եւ նայելով Թորգոմին

Այո կարծես թէ մեկէն ճուտիկ դարձեր է, իր այսօրուայ մոմակալութիւնն ալ շատ շուտ մարեցաւ:

Արմինէ

ժպտալով եւ նայելով Գայանէին

Միտօֆա Գայանէ, ինծի կը թուի որ Ձեր գանգրութիւնն ալ քննչական սրբութիւն մը ունի Թորգոմիս վրայ, իր ճուտիկութեան կտկտանութիւնը հայրենադարձեր է:

տը Խանութպանենց

Տիկին Արմինէ, Գայանէ ճան, քանի որ երկուքիդ մակոյկի թիերով իմ ականջս բացուեցաւ, եկէք երեքով նաւարկելու երթանք, եւ քաշենք որ Թորգոմն եւ իր լարախաղացները նախիրը մինչեւ օդապարիկս բարձրացնեն:

Տը Խանութպանենցը, Գայանէն ու Արմինէն դուրս կ՚ելլեն, Թորգոմն ու իր բեռնակիրները կը շարունակեն աշխատիլ:

Վարագոյրը կը գոցուի



Ջոան Դիդիոն

Թարգմանությունը՝ Անի Բաղումյանի

Ամերիկացի արձակագիր, էսսեիստ, լրագրող Ջոան Դիդիոնը (Joan Didion, 1934) Թոմաս Վուլֆի, Թրումեն Կապոտիի և այլոց հետ համարվում է նոր լրագրության հիմնադիր ներկայացուցիչներից մեկը: Նրա առավել հայտնի գործերից են՝ «Խաղա ինչպես որ կա» («Play It as It Lays», 1970), «Ընդհանուր աղոթագիրք» («A Book of Common Prayers», 1977), «Ժողովրդավարություն» («Democracy»,1984) վեպերը, «Տարտամ քայլերով դեպի Բեթղեհեմ» («Slouching Towards Bethlehem», 1968), «Սպիտակ ալբոմը» («The White Album», 1979) էսսեների ժողովածուները, «Խորհելու մոգական տարին» («The Year of Magical Thinking», 2005) հուշագրությունը, որն իրապատում ժանրում արժանացել է Ազգային գրքի մրցանակին: Դիդիոնը նաև մի շարք պիեսների հեղինակ է:

«Ինչու եմ ես գրում»-ը սկզբնապես եղել է հեղինակի կրույց-բանախոսությունը Կալիֆորնիայի համալսարանում (Բերկլի)՝ Ռեջենթս դասախոսությունների շրջանակում: Բանախոսության խմբագրված և վերամշակված տարբերակն առաջին անգամ հրատարակվել է «Նյու Յորք թայմսում»1976-ի դեկտեմբերին:

«Գրելը թշնամական արարք է» արտահայտությունը դառնալու էր Դիդիոնի ամենահայտնի ու վիճահարույց մտքերից մեկը: Հետագայում իր հարցազրույցներից մեկում նա պարզաբանել է. «Դա թշնամական արարք է, քանզի փորձում ես մեկ ուրիշին ստիպել, որ այդ ամենը տեսնի այնպես, ինչպես դու ես

տեսնում, փորձում ես նրան պարտադրել քո միտքը, քո պատկեր(ացում)ը: Ուրիշի միտք այսպես ներխուժելն ու այն շրջելը թշնամական արարք է: Շատ հաճախ մենք ցանկանում ենք մեր երազը, մեր մղձավանջը պատմել ինչ-որ մեկին: Ոչ ոք չի ցանկանում լսել ուրիշի երազը՝ լավ թե վատ. ոչ ոք չի ցանկանում այն իր հետ ման տալ: Գրողն ընթերցողին միշտ խորամանկորեն լսել է տալիս իր երազը»:

Ջոան Դիդիոն գրողի «երազները», որքանով ինձ է հայտնի, մինչ այժմ հայերեն թարգմանված չկան: Այս թարգմանությունն այդ բացը լրացնելու մի փորձ է:

Անգլերենից թարգմանությունը կատարվել է Շուշան Ավագյանի գրական թարգմանություն դասընթացի շրջանակում:

Ինչու եմ ես գրում

Անշուշտ, այս պրույցի վերնագիրը գողացել եմ Ջորջ Օրուելից: Գողանալուս պատճառներից մեկն այն է, որ բառերի հնչողությունն ինձ դուր է գալիս: *Ուայ այ րայթ (ինչու եմ ես գրում):* Ահա երեք կարճ, աներկբա բառ, որոնք ունեն մեկ ընդհանուր հնչյուն, և այդ հնչյունը սա է՝

այ (ես)

այ (ես)

այ (ես)

Գրել՝ շատ առումներով նշանակում է ասել *ես*, քո ես-ը ուրիշներին պարտադրել, ասել՝ ի՛նձ լսեք, այդ ամենը տեսեք ի՛մ աչքերով, փոխե՛ք ձեր միտքը: Դա ագրեսիվ, նույնիսկ թշնամական արարք է: Կարող եք հատկանիշ ցույց տվող բառերն ու պայմանական եղանակի բայաձևերը քողարկել բազմակետերով կամ խուսափողական հնարքներով՝ մի տեսակ ակնարկելու և ոչ թե պնդելու, վկայակոչելու և ոչ թե հայտարարելու համար, սակայն ոչ մի կերպ հնարավոր չէ խույս տալ այն փաստից, որ բառերը թղթին հանձնելը գաղտնի կռվարարի մարտավարություն է. ներխուժում, գրողի ընկալումների հարկադրում ընթերցողի խիստ անձնական տարածքի վրա:

Վերնագիրը գողացա ոչ միայն այն պատճառով, որ բառերը ճիշտ էին հնչում, այլ նաև նրա համար, որ դրանք կարծես ոչ անիմաստ ձևով իրենց մեջ ամփոփեին ողջ ասելիքս: Շատ գրողների նման ես էլ ունեմ միայն այս «առարկան», այս «ոլորտը»՝ գրելը: Ես ձեզ չեմ կարող հաղորդում բերել որևէ այլ բնագավառից: Կարող եմ ուրիշ հետաքրքրություններ ունենալ. օրինակ՝ ես «հետաքրքրված եմ» ծովային կենսաբանությամբ, սակայն հույս չունեմ, թե կգաք լսելու ծովային կենսաբանության մասին իմ պրույցը: Ես գիտնական չեմ: Ոչ էլ առավել ևս՝ մտավորական: Նկատի չունեմ, որ «մտավորական» բառը լսելիս հանում եմ պենքերս, այլ ուղղակի որ չեմ մտածում վերացական ձևով: Բերկլիում սովորելու տարիներին մի տեսակ ուշ դեռահասության անհույս խանդավառությամբ փորձեցի ժամանակավոր մուտքի արտոնագիր գնել դեպի գաղափարների աշխարհ, ինձ համար կռել մի միտք, որն ունակ կլիներ վերացական բաների հետ առնչվելու:

Կարճ ասած՝ փորձեցի մտածել: Չստացվեց: Ուշադրությունս անդառնալիորեն շեղվում էր դեպի որոշակին, շոշափելին, դեպի այն, ինչն այն ժամանակ և այդ պահից ի վեր իմ ճանաչած բոլոր մարդկանց կողմից սովորաբար համարվում էր երկրորդական: Փորձում էի խորհել հեգելյան դիալեկտիկայի մասին ու փոխարենն ինձ բռնացնում էի սևեռված հայացքով պատուհանիս դիմաց ծաղկող տանձենուն նայելիս ու հետևելիս, թե ինչպես, ինչ որոշակի ձևով էին ծաղկաթերթերը թափվում գետնին: Փորձում էի կարդալ լեզվաբանության տեսություն, սակայն դրա փոխարեն մտածում, թե արդյոք բարձունքում՝ բլրի վրա, բևատրոն արագացուցչի լույսերը վառ էին: Երբ ասում եմ՝ ինձ հետաքրքիր էր, թե արդյոք լույսերը վառ էին բևատրոնի ներսում, դուք միանգամից կենթադրեք (եթե առհասարակ գործ ունեք գաղափարների հետ), որ բևատրոնն ընկալում էի իբրև քաղաքական խորհրդանշան, մտածում ռազմարդյունաբերական համալիրի և համալսարանական համայնքում դրա դերի մասին, սակայն կսխալվեք: Ինձ պարզապես հետաքրքիր էր, թե արդյոք լույսերը վառ էին արագացուցչի ներսում և թե ինչ տեսք ունեին դրանք. միայն ֆիզիկական փաստը:



Բերկլին դժվարությամբ ավարտեցի: Ոչ այն պատճառով, որ ունակ չէի գաղափարների հետ գործ ունենալ — իմ մասնագիտացումն անգլերենն էր և կարող էի տուն-ու-պարտեզ պատկերաշարը «Կնոջ դիմանկարը» վեպում տեղորոշել այնպես, ինչպես ցանկացած այլ ուսանող. պատկերաշարն ինքնին այն որոշակին էր, որ գրավում էր ուշադրությունս — այլ պարզապես Միլթոնին նվիրված դասընթացն անցնելն ականջի հետև էի գցել: Արեցի այսպես: Մինչ ամռան վերջ պետք է գիտական աստիճան ստանայի. դրա համար կային այնպիսի պատճառներ, որոնք հիմա արտառոց են թվում: Անգլերենի ֆակուլտետում ի վերջո համաձայնեցին Միլթոնի հարցում ինձ գիտակ համարել՝ պայմանով, որ ամեն ուրբաթ Սակրամենտոյից հասնեմ այնտեղ ու խոսեմ «Կորուսյալ դրախտի» տիեզերաբանության մասին: Այդպես էլ արեցի: Լինում էին ուրբաթներ, որ գնում էի Գրեյհաունդ ավտոբուսով, և պատահում էր, որ նստում էի միջցամաքային ուղևորության մեկնող, վերջին շնչում գտնվող «Սան Ֆրանցիսկո սիթի» գնացքը: Այլևս չեմ կարող ասել՝ Միլթոնն ա՞րևն էր դրել իր «Կորուսյալ դրախտի» տիեզերքի կենտրոնում, թե՞ Երկիրը. հարց, որը նվազագույնը մեկ դար շարունակ համարվել է այդ ժամանակաշրջանի գխավոր հարցերից մեկը, ու թեմա, որի մասին այդ ամռանը գրեցի 10.000 բառ, սակայն այսօրվա պես հիշում եմ գնացքի ճաշասենյակում կարագի կծվահամ հոտը, ու թե ինչպես էին Գրեյհաունդ ավտոբուսի մուգ ապակիները Կարքինեզ նեղուցի նավթակտման գործարանները ներկել գորշավուն ու անհասկանալիորեն չարագուշակ լույսի մեջ: Կարճ ասած՝ իմ ուշադրությունը միշտ ուղղված էր դեպի եզրը, ծայրամասը, դեպի այն, ինչը կարող էի տեսնել, համը զգալ, շոշափել. դեպի կարագն ու Գրեյհաունդ ավտոբուսը: Այդ տարիներին ես ճանապարհորդում էի անհուսալի անձնա-գրով ու կեղծված փաստաթղթերով: Գիտեի, որ գաղափարների աշխարհի օրինավոր բնակիչը չէի: Գիտեի՝ մտածել չէի կարող: Ու գիտեի այն ամենը, ինչը չէի կարող անել, ու, հետևաբար,

այն ամենը, ինչը ես չէի: Ինձանից տարիներ պահանջվեցին բացա-հայտելու համար, թե ով եմ ես:

Ես գրող էի:

Նկատի չունեմ «լավ» կամ «վատ» գրող, այլ պարզապես գրող, մեկը, ում ամենակլանված ու եռանդով լի ժամերն անցնում են բառերը թղթի կտորներին դասավորելով: Եթե թղթերս կարգավորված լինեին, ես երբեք գրող չէի դառնա: Եթե մտքիս մեջ գոնե սահմանափակ մուտք ունենալու բախտավորություն ունենայի, այլևս գրելու ոչ մի պատճառ չէր լինի: Ես գրում եմ, որ հասկանամ, թե ինչ եմ մտածում, ինչին եմ նայում, ինչ եմ տեսնում, ու թե դա ինչ է նշանակում: Թե ինչ եմ ուզում ու ինչից եմ վախենում: Ինչո՞ւ Կարքինեզ նեղուցի նավթավտման գործարանները 1956 թ. ամռանն ինձ չարագուշակ թվացին: Ինչո՞ւ էին բևատրոնի գիշերային լույսերը քսան տարի շարունակ վառվում իմ մտքում: *Ի՞նչ էր կատարվում մտքիս այս պատկերներում:*

Երբ ասում եմ մտապատկերներ, խոսում եմ շատ որոշակիորեն եզրերին ցոլացող պատկերների մասին: Տարրական դպրոցի հոգեբանության դասագրքում մի կատվի նկար կար՝ նկարված շիզոֆրենիայով հիվանդի կողմից՝ հիվանդության տարբեր փուլերում: Կատվի շուրջը թրթռացող ցոլք կար. նայելիս երևում էր, թե ինչպես էր մոլեկուլային կառույցը նկարի եզրերին սկսում տրոհվել: Կատուն դառնում էր ետնա-պատկերը, իսկ ետնապատկերը՝ կատուն, բոլոր մասնիկները փոխազդում էին միմյանց հետ, փոխանակում իոններ: Հալյուցինածիններ օգտագործող մարդիկ նկարագրում են առարկաների նույնպիսի ընկալում: Ես շիզոֆրենիայով չեմ տառապում, ոչ էլ հալյուցի-նածիններ եմ օգտագործում, բայց կան պատկերներ, որոնք իսկապես ցոլացող են ինձ համար: Ուշադիր, շատ ուշադիր նայելու դեպքում ցոլքը չնշմարել չեք կարող: Այն այնտեղ է: Այս ցոլացող պատկերների մասին երկար մտածել չեք կարող: Պարզապես թաքնվում եք ու թողնում, որ դրանք ձևավորվեն: Մնում եք լուռ: Չեք խոսում շատ մարդկանց հետ և թույլ չեք տալիս, որ ձեր նյարդային համակարգը խափանվի, ու փորձում եք ցոլքի մեջ տեղակայել կատվին՝ քերականությունը պատկերում:

Ինչպես տառացիորեն նկատի ունեմ «ցոլքը», այնպես տառացիորեն էլ նկատի ունեմ «քերականությունը»: Քերականությունը դաշնամուր է, որը նվագում եմ լսողությամբ, քանի որ թվում է՝ դպրոցից բացակայել եմ հենց այն ժամանակ, երբ անցնում էինք կանոնները: Քերականության մասին ամբողջ գիտեցածս դրա անսահման ուժն է: Նախադասության կառուցվածքի փոփոխությունը դրա իմաստը փոխում է այնպես հաստատ ու անդրդվելիորեն, ինչպես տեսախցիկի դիրքը՝ լուսանկարվող առարկայի: Տեսախցիկի անկյան մասին այսօր շատերին է հայտնի, սակայն քչերը գիտեն նախա-դասության մասին: Բառերի դասավորությունը կարևոր է, և ձեր մտապատկերներում կարող եք գտնել ցանկալի դասավորությունը: Պատկերը թելադրում է դասավորությունը: Պատկերը թելադրում է, թե ինչպիսի նախադասություն է լինելու՝ պարզ, թե բարդ, երկար, թե կարճ, ներգործական, թե կրավորական, ավարտվելու է ուժգնորեն, թե մարելու է աստիճանաբար: Պատկերը թելադրում է՝ ինչպես դասավորել բառերը, իսկ բառերի դասավորությունը պատմում է ձեզ կամ ինձ, թե ինչ է կատարվում պատկերում: Ուշադի՛ր եղեք:

Պատկերն է ձեզ պատմում:

Ոչ թե՝ դուք նրան:

Թույլ տվեք բացատրել, թե ինչ նկատի ունեմ մտապատկերներ ասելով: Ես սկսեցի «Խաղա ինչպես որ կա» («Play It as It Lays») վեպը իմ մնացած բոլոր վեպերի նման՝ գաղափար չունենալով «հերոսի», «սյուժեի» և ոչ էլ անգամ «իրադարձության» մասին: Մտքումս ունեի միայն երկու պատկեր, որոնց կանդրադառնամ քիչ հետո, և տեխնիկական մտադրություն, այն էր՝ գրել մի այնպիսի սեղմ ու ակնթարթային վեպ, որը կավարտվեր նախքան կիասցնեիք նկատել, մի այնպիսի էլիպտական ու արագընթաց վեպ, որը թղթի վրա գրեթե գոյություն չէր ունենա: Վերադառնանք պատկերին: Առաջին պատկերը սպիտակ տարածություն էր: Դատարկ տարածություն: Սա հենց այն պատկերն էր, որը թելադրեց գրքի պատմության միտումը. գիրք, որտեղ այն ամենը, ինչը պետք է կատարվեր, կատարվելու էր էջերից դուրս, մի «սպիտակ» գիրք, որին ընթերցողն իր սեփական մղձավանջները պետք է թելադրեր: Այնուամենայնիվ, այս պատկերն ինձ ոչ մի «պատմություն» չէր պատմում, չէր հուշում ոչ մի իրավիճակ: Երկրորդ պատկերը պատմում էր: Երկրորդը մի դեպք-պատկեր էր, որին ինքս էի ականատես եղել:

Գիշերը ժամը մեկին երկար մազերով ու կարճ սպիտակ շրջազգեստով երիտասարդ մի կին մտնում է Լաս Վեգասի «Ռիվիերա» խաղատուն: Միայնակ անցնում է խաղատնով ու վերցնում հեռախոսը: Ես հայացքով հետևում եմ նրան, քանի որ մինչ այդ լսել էի անունը, երբ նրան հեռախոսի մոտ էին կանչում, ու անունը ծանոթ էր թվացել. նա երկրորդական դերեր խաղացող դերասանուհի է, ում ժամանակ առ ժամանակ տեսնում եմ Լոս Անջելեսում, Ջաքսի նման տեղերում, մի անգամ էլ տեսել եմ գինեկոլոգի մոտ՝ «Բևերլի Հիլզ կլինիկայում», բայց երբեք չեմ փորձել հետը: Ես նրա մասին ոչինչ չգիտեմ: Ո՞վ է ուզում նրա հետ հեռախոսով խոսել: Ինչո՞ւ են նրան այստեղ կանչել: Ինչպե՞ս հայտնվեց այստեղ: Լաս Վեգասում հենց այս պահը պատճառ դարձավ, որ «Խաղա ինչպես որ կա» գիրքը սկսի ինքն իրեն գրվել, սակայն այս պահը վեպում հայտնվում է աննկատ՝ այն գլխում, որը սկսվում է այսպես.

«Մարիան կազմեց բոլոր այն բաների ցուցակը, որոնք երբեք չէր անելու: Նա երբեք կեսգիշերն անց միայնակ չէր քայլելու «Սենդս» կամ «Սեզար» խաղատուն-հյուրանոցներով: Նա երբեք փարթիի ժամանակ չէր կվարձանալու, Ս-Մ չէր անելու՝ եթե ինքը չուզեր, մուշտակներ չէր վերցնելու Էյբ Լիփսիից, չէր վաճառելու թմրանյութ: Նա երբեք յորքշիրի հետ չէր քայլելու Բևերլի Հիլզում»:

Սա գլխի սկիզբն է ու նաև վերջը, որը կարող է հուշել, թե ինչ նկատի ունեմ «սպիտակ տարածություն» ասելով:

Հիշում եմ՝ երբ դեռ նոր էի սկսել գրել վերջերս ավարտին հասցրած «Ընդհանուր աղոթագիրք» («A Book of Common Prayers») վեպը, մտքումս ունեի մի քանի պատկեր: Պատկերներից մեկը հիշատակածս բևատրոնին էր, չնայած դժվար թե կարողանամ ձեզ միջուկային էներգիայի ձևավորման մասին պատմություն պատմել: Մյուսը առևանգված և Միջին Արևելքի անապատներից մեկում կործանված 707 ինքնաթիռի

լուսանկարն էր թերթում: Մեկ այլ պատկեր էլ գիշերային տեսարանն էր իմ սենյակից՝ հյուրանոցային սենյակ Կոլումբիայի ծովափին, որտեղ մեկ շաբաթ անցկացրեցի պարատիֆով հիվանդ: Ես ու ամուսինս Կոլումբիայի ափ էինք եկել Ամերիկայի Միացյալ Նահանգները մի կինոփառատոնում ներկայացնելու (հիշում եմ, թե ինչպես էի անընդհատ «Ջեք Վալենտի» կանչում, կարծես թե անունը շատ կրկնելուց ինձ ավելի լավ էի զգալու): Դա տենդ ունենալու համար շատ անհարմար վայր էր ոչ միայն այն պատճառով, որ իմ վատառողջ լինելը վիրավորել էր մեկ հյուրընկալողներին, այլ նաև նրա համար, որ ամեն գիշեր հյուրանոցի գեներատորը խափանվում էր: Լույսերն անջատվում էին: Վերելակը կանգ էր առնում: Ամուսինս գնում էր երեկոյան միջոցառումներին ու իմ բացակայության համար հորինում պատճառներ, իսկ ես մնում էի մենակ հյուրանոցի համարում, մթության մեջ: Հիշում եմ ինձ պատուհանի մոտ կանգնած, երբ փորձում էի Բոգոտա կանգել (հեռախոսները կարծես աշխատում էին նույն սկզբունքով, ինչ գեներատորները) ու նայում գիշերային քամու բարձրանալուն ու մտորում, թե ինչ եմ անում այստեղ՝ հասարակածից տասնմեկ աստիճան հարավ, 39.4 աստիճան ջերմությունով: Պատուհանից երևացող այդ տեսարանը, ինչպես նաև 707-ի այրվելը, հստակորեն պատկերված են «Ընդհանուր աղոթագրքում», և, այնուամենայնիվ, այդ պատկերներից և ոչ մեկն ինձ չէր պատմում այն պատմությունը, որն ինձ պետք էր:

Պատկերը, որը պատմում էր, որը ցոլարձակում էր, շողում ու միակցում մնացած բոլոր պատկերները, Պանամայի օդակայանն էր՝ առավոտյան ժամը վեցին: Այդ օդակայանում եղա միայն մեկ անգամ, երբ Բոգոտա թռչող ինքնաթիռը մեկ ժամով կանգ էր առել լիցքավորվելու, բայց թե ինչպիսի տեսք ուներ այն այդ օրը, մնաց դրոշմված այն ամենի վրա, ինչ տեսա մինչև «Ընդհանուր աղոթագիրքն» ավարտելը: Ես այդ օդակայանում ապրեցի տարիներ: Մինչև հիմա էլ զգում եմ օդի տաքությունը, որը զգացի ինքնաթիռից իջնելիս, ու տեսնում եմ առավոտյան ժամը վեցին ասֆալտի կույրից բարձրացող կրակը: Զգում եմ՝ ինչպես է կիսաշրջազգեստս խոնավանում ու կնճռոտվում ոտքերիս շուրջ: Զգում եմ՝ ինչպես է ասֆալտը կպչում սանդալներիս: Հիշում եմ, թե ինչպես էր «Պան Ամերիքն» ինքնաթիռի պոչն անշարժ լողում ասֆալտե թռիչքուղու վերջում: Հիշում եմ սպասասրահում ավտոմատ ապարատների ձայնը: Եվ ձեվ կարող էի ասել նաև, որ այդ օդակայանում մի կնոջ եմ հիշում, նիհար ամերիկուհու՝ *նորտեամերիկանա*, ենթադրում եմ՝ քառասունին մոտ, ով մատին հարսանեկան մատանու փոխարեն մի մեծ քառակուսի զմրուխտ ուներ, սակայն ոչ մի այդպիսի կին էլ այնտեղ չկար:

Ես այդ կնոջն օդակայանում հետո եմ դրել: Հորինել եմ նրան այնպես, ինչպես հորինել եմ այն երկիրը, որտեղ օդակայանն էր գտնվում, ու այն ընտանիքը, որը ղեկավարում էր

այդ երկիրը: Գրքի կինն օդակայան չի եկել մեկնելու կամ դիմավորելու ինչ-որ մեկին: Նա օդակայանի սրճարաններից մեկում թեյ է պատվիրում: Սակայն նա պարզապես չի «պատվիրում», այլ նաև պահանջում է, որ ջուրն իր աչքի առաջ քսան րոպե եռացվի: Ի՞նչ է անում այս կինն օդակայանում: Որտեղի՞ց է եկել և ինչո՞ւ չի գնում մեկ այլ տեղ: Որտեղի՞ց նրան այդ մեծ կմրուխտը: Ի՞նչ խանգարման կամ երկատման հետևանքով է հավատացած, որ ջրի եռալը տեսնելու իր պահանջը կարող է բավարարվել: «Նա չորս ամիս շարունակ մի օդակայանից մյուսն էր գնում. դա կարելի էր հասկանալ՝ նայելով նրա անձնագրի վիզաները»: Այն բոլոր օդակայանները, որտեղ Շարլոտ Դուգլասի անձնագիրը կնքել էին, իրար շատ նման կլինեին: Երբեմն աշտարակի վրայի ցուցանակին գրված կլիներ «Բիենվենիդոս», երբեմն՝ «Բիեվնու», որոշ տեղերը տաք և թաց կլինեին, մյուսները՝ տաք ու չոր, սակայն այս օդակայաններից յուրաքանչյուրում պաստելային երանգներ ունեցող բետոնե պատերը կլինեին ժանգոտած ու կեղտոտ, իսկ թռիչքուղուն կից ճահճուտում թափված կլինեին պահեստամասի վերածված «Ֆեյրչայլդ F-227»-ի կմախքի մնացորդները, և ջուրը եռացնելու անհրաժեշտություն կլիներ:

«Ես գիտեի, թե ինչու էր Շարլոտը գնացել օդակայան, անգամ եթե Վիկտորը չգիտեր»:

«Ես գիտեի օդակայանների մասին»:

Այս տողերը հայտնվում են «Ընդհանուր աղոթագրքի» կեսերում, սակայն ես դրանք գրել եմ գիրքը սկսելուց երկու շաբաթ անց, երբ դեռ գաղափար չունեի, թե Շարլոտ Դուգլասը որտեղ էր եղել կամ թե ինչ էր անում օդակայաններում: Մինչ այս տողերը գրելը ես մտքումս չունեի «Վիկտոր» անունով ոչ մի կերպար: Անվան անհրաժեշտությունն ու հենց «Վիկտոր» անունն ինձ մոտ ծագեց նախադասությունը գրելիս. *Ես գիտեի, թե ինչու էր Շարլոտը գնացել օդակայան* թվում էր անավարտ: *Ես գիտեի, թե ինչու էր Շարլոտը գնացել օդակայան, անգամ եթե Վիկտորը չգիտեր* ուներ ավելի ուժգին պատմողական շարժ: Եվ, որ ամենակարևորն է, մինչ այս տողերը գրելը ես չգիտեի, թե ով էր այդ «ես»-ը, թե պատմությունը պատմողն ով էր: Մինչև այդ պահը որոշված էր, որ «ես»-ը պարզապես լինելու էր հեղինակի՝ տասնիններորդ դարի ամենագետ պատմողի ձայնը: Սակայն արդեն գրվել էր.

«Ես գիտեի, թե ինչու էր Շարլոտը գնացել օդակայան, անգամ եթե Վիկտորը չգիտեր»:

«Ես գիտեի օդակայանների մասին»:

Այս «ես»-ի ձայնը չէր պատկանում իմ տանն ապրող և ոչ մի հեղինակի: Այս «ես»-ը մեկն էր, ով ոչ միայն գիտեր, թե ինչու էր Շարլոտը գնացել օդակայան, այլ նաև գիտեր «Վիկտոր» անունով մեկին: Ո՞վ էր այդ Վիկտորը: Ո՞վ էր պատմողը: Ինչո՞ւ էր նա ինձ այս պատմությունը պատմում: Թույլ տվեք մի բան ասել այն մասին, թե ինչու են գրողները գրում. եթե ես իմանայի այս հարցերից որևէ մեկի պատասխանը, վեպ գրելու անհրաժեշտություն այլևս չէի ունենա:

Աղբյուրը՝ Joan Didion, “Why I Write”. The New York Times, 5 December, 1976.

_ ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Րաֆֆի
Աճէմեան



Շարանկար, գծագրավէպ, եւ մասամբ նորին

Մտորումներ Վիգէն Պէրպէրեանի եւ Եան Քէպպիի «Կառոյցը փտած է, ընկեր» հատորին առիթով (Viken Berberian - Yann Kebbi, «La Structure est pourrie, camarade», Actes Sud BD հրտրկչ., 2017, Ֆրանսա)

Եթէ բացառենք Թաւշեայ յեղափոխութեան խաղաղ պսակումը, կրնանք ըսել որ Վիգէն Պէրպէրեանի գծագրավէպը՝ «Կառոյցը փտած է, ընկեր»՝ կանխատեսած էր վայն արդէն 2017ին: Կարելի է նաեւ ըսել որ, տարօրինակ յստակատեսութեամբ մը, հետեւանք հաւանաբար շրջապատի մթնոլորտին ու դէպքերուն հանդէպ գրողին անսովոր ներզգացողութեան, Պէրպէրեանի նախորդ երկու վէպերը եւ՝ չըսենք կանխատեսած էին, սակայն մօտէն կը նկարագրէին վրայ հասնելիք միջազգային երկու մեծ վերիվայրումները. առաջինը, որ կը կոչուի «Հեծանւորդը» (The Cyclist), լոյս տեսած 2002ին Նիւ Եորք, մամուլի տակ կը գտնուէր երբ տեղի պիտի ունենար Սեպտեմբեր 11ի դէպքը եւ միջազգային ահաբեկչութիւնը անցնէր նոր ոլորտ: Գիրքը կը նկարագրէ հեծանիւով անձնասպանական գործողութիւն ծրագրողի մը մտորումները ու խանդավառութիւնը մօտալուտ քայլին ու հետեւանքներուն մասին՝ մէկ կողմէն, միաժամանակ խօսելով ուտելիքի ու սեռայինի հանդէպ անոր քիմքին ու ճաշակին

մասին: Այդ տարօրինակ վգայարանական վուգորդումը գիրքի մը մէջ, որ պիտի երեւան գար պայթումներէն անմիջապէս ետք, խօսիլ պիտի տար հեղինակի կանխատեսութեան մասին: Պէրպէրեանի լոյս ընծայած երկրորդ հատորը կը կոչուի «Տաս քափիթալ» (Das Kapital), լոյս տեսած 2007ին կրկին Նիւ Եորք: Այս անգամ անիկա կ'առնչուէր համաշխարհային սակարաններու աշխարհին եւ անով իսկ կը կանխէր 2008ին վրայ հասնելիք իսկայական անկումը: Գիրքը ունի «սիրոյ ու սակարաններու մասին վէպ» ենթախորագիրը ու կը նկարագրէ բաժնետոմսերու առուծախով վբաղող գործակալի մը գլխաւոր աշխատելաձեւը՝ գրաւ դնող անոնց մօտալուտ անկումին վրան փոխանակ վերելքին, ինչպէս նաեւ անոր կապերը բնապահպան աիաբեկիչի մը կատարելիք արարքին հետ: Վրայ հասնող իսկական անկումը անշուշտ շուտով պիտի գերազանցէր գիրքին կանխատեսածը: Երկուքն ալ լայն արձագանգ գտած էին օրին իրենց բերած իւրայատուկ խառնուրդներովը մտաւորականին, վգայականին ու լեզուական հրավառումին: Անցնելով վերջին գիրքին, որ նորաբանութեամբ մը պիտի նկարագրենք որպէս «գծագրավէպ», ի՞նչ կը պատմէ ան: Նախ՝ ի՞նչ ըսել է գծագրավէպ:

Պատմութիւն պատմելը մարդ արարածը յատկանշող հիմնական գիծերէն մէկն է եւ առ այդ նկարներու օգտագործումը կ'երկարի մինչեւ քարանձաւներու պատերուն եղած գծագրութիւնները: Գիր եւ գիծ միշտ ներկայ եղած են մշակութային արտադրանքին մէջ եւ յաջորդականութիւն ցուցաբերող դրուագներ կարելի է գտնել օրինակ եգիպտական նշանագիրներով գրութիւններու մէջ: Նկարչութեամբ պատմութիւն պատմող արուեստի դրսեւորումները կ'երեւին մանրանկարչութեան մէջ, գորգանկարներու, որմնանկարներու, եւայլն, սակայն այդ բոլորին մէջ կը պակսէին երկու հիմնական տարրեր, որոնց երեւումը ԺԹ. դարու կէսերէն սկսեալ հիմը պիտի դնէր պատմութիւն պատմելու նոր ձեւի մը: Այդ երկու նորութիւններն են՝ ժամանակի թաւալումին պատրանքը ստեղծող իրերայաջորդ նկարներու օգտագործում եւ կերպարներու խօսքը անոնց բերնէն ելող պղպջակներու մէջ տեղադրում: Այս երկու հնարքները, որոնց կ'աւելնան տպագրական արուեստի կրած վարգացումներն ու հանրամատչելի մամուլի երեւումը, պիտի սատարեն նորածին արուեստի մը արագ ընձիւղումին եւ ասիկա կանավան լեզուներով ու կանավան ցամաքամասերու վրայ միաժամանակ: Անոր պիտի տրուին տեղւոյն մշակոյթէն բխող տարբեր անուններ, անգլերէնով՝ comic strip, ֆրանսերէնով՝ bande dessiné, իտալերէնով՝ fumetti (ակնարկելով խօսքի պղպջակներուն կամ ամպիկներուն), ճափոներէնով՝ manga (հապճեպ պատկեր), եւայլն: Ամէն երկրի մէջ կը վարգանան նաեւ արուեստը յատկանշող իւրայատուկ ձեւեր ու մօտեցումներ: Ճափոնականը օրինակ, մանաւանդ սկիզբի օրերուն, կը յատկանշուէր աժան թուղթի վրայ տպուած հաստափոր հատորներով, հապճեպ եղած, ուր շեշտը կը դրուի շարժումի եւ քմայքներ արտայայտող սեւ-ճերմակ գծագրութիւններու վրայ, մինչ ֆրանսականը երկար տասնամեակներ կը մնար 48 էջի վրայ գունաւոր, խնամուած ու յստակ շրջագիծերով յատկանշուող արտադրութիւն մը: Թարգմանութիւնները կանոնք պիտի տարածէին երկրէ երկիր, միաժամանակ տարածելով նաեւ փոխազդեցութիւնները:

Առաջին օրէն այս արուեստը մօտէն պիտի առնչուի երգիծական ու մանկական գրականութիւններու հետ: Երգիծանկարչութեան պարագային կապը յստակ է՝ թէեւ այս պարագային մէկէ աւելի նկարներով պատմուող դրուագն է խնդրոյ առարկան: Հոնկէ comic strip կամ comics եզրը որ դժբախտաբար յղուելով ծիծաղաշարժին, անբաւարար

կը նկատուի ծիծաղաշարժէն անդին որեւէ բան պատմող գրութեան համար: Ինչ կը վերաբերի մանկականին՝ յստակ է նկարապարդումին ու ընդհանրապէս գծուած նկարին գրաւչութիւնը այդ ոլորտի գրականութեան հանրութեան համար, ինչ որ պատճառ պիտի դառնայ որ մանկապատանեկանը դառնայ այս նոր արուեստին կիզակէտը մանաւանդ սկզբնական տարիներուն: Նոյնը կարելի է ըսել գծանկարային ֆիլմերու պարագային, ինչ որ Հայաստան կը կոչուի «մուլտ», օրինակի համար: Սակայն յստակ է որ գծանկարով արտայայտուող այս արուեստները կրնան ուղղուիլ որեւէ տարիքի հանրութեան կամ մշակել որեւէ տեսակի բնանիւթ:

Ամերիկեան comicsի մեծագոյն երկու ճիւղերը պիտի ըլլան՝ մէկ կողմէ դէպի կենդանական կերպարներով տիվնէյական մշակումներ, միւս կողմէ՝ սուփըր հերոսներու ժանրը, մանաւանդ քառասունականներէն սկսեալ: Ֆրանսականին, աւելի ճիշդ ֆրանսախօսին մէջ, որով Պելճիքական արտադրութիւնը առ այսօր մեծ տեղ կը գրաւէ անոր մէջ, bande dessinéeի մեծագոյն հերոսը կը նկատուի Թէնթէնը, որուն արկածա-խնդրութիւնները պարփակող հատորները երեսունականներէն սկսեալ ոչ միայն թարգմանուած են բազմաթիւ լեզուներու ու տարածուած աշխարհով մէկ, այլ նաեւ հիմը դրած արուեստի ձեւի մը, որ կը կոչուի «յստակ գիծ» (ligne claire): Ինչ կը վերաբերի ճափոնականին, թէեւ անոր արմատները կ'երթան մինչեւ ԺԹ. դարու սկիզբ (Հոքուսայ), անոր մեծագոյն վարպետին՝ Օսամու Թէզուքայի բազմաբեղուն գործունէութիւնը յիսունականներուն հիմը դրած է այսօր ամենածաւալունը նկատուող համաշխարհային ժանրի մը, որ կը տարածուի մինչեւ Քորէա ու Չինաստան, իսկ վերջին տասնամեակ-ներուն երթալէն աւելի կ'որդեգրուի որպէս աշխատելաձեւ Արեւմուտքի մէջ գործող արուեստագէտներու կողմէ:

Այս երեք լեզուներէն դուրս, թարգմանականին կողքին պանապան երկիրներ նաեւ ունեցած են տեղական արտադրութիւններ: Երկրէ երկիր սակայն նոյն ընդունելութիւնը չէ գտած ան: Օրինակի համար, մեծ թիւով գրողներ ու գրականութիւն ստեղծուած են Իտալիա, Սպանիա, Անգլիա, Հոլանտա, Գերմանիա, հիւսիսային եւրոպական ու պալքեան երկիրներ, Լեհաստան, նախկին Եուկոսլավիա, Արժանթին, Պրազիլ, եւայլն, մինչ շատ մը ուրիշ երկիրներ գրեթէ ամբողջովին վերծ մնացած են այս արուեստի ներթափանցումէն: Նախկին Խորհրդային Միութեան սահմաններէն ներս անիկա նկատուած էր բուրժուական ու վատապղեցիկ, եւ ուրեմն մնացած էր լուսանցքային: Սկսեալ ութսունականներէն, մանաւանդ Միութեան փլուզումէն ետք, շարանկարը Ռուսիոյ մէջ կը թեւակոխէ վերելքի շրջան մը: Հայաստան ալ անմասն չի մնար այս ամենէն: Խորհրդային շրջանէն կարելի է յիշել Վարդան Զաքարեանի անունը («Նարեկ իշխանը», «Սասունցի Դաւիթ»): 2000ականներու կէսերուն Երեւանի մէջ քանի մը տարի տեղի ունեցան շարանկարի փառատօներ ու կան պանապան ծլարձակումներ ու հեղինակներ, ընդ որում գլխաւորը պէտք է նկատել Տիգրան Մանգասարեանը («Ի Խավարէ Ի Լոյս», «Լռութիւն», «Մինչեւ հոգիների վաճառքը», եւայլն): Հայաստանէն դուրս կարելի է յիշել հայերէնով ամբողջովին շարանկարի նուիրուած երկու պարբերական, երկուքն ալ մանկապատանեկան ու դաստիարակչական բնոյթի. առաջինը 1952-1955 Փարիզ լոյս տեսած «Արաքս»ն է (խմբգր. Ն. Յովհաննէսեան, ամիսը երեք անգամ, 6 էջանի սեւ-ճերմակ, լոյս տեսած 37 թիւ), երկրորդը 1970ականներուն Պէյրութ հրա-տարակուած «Մկոն ու Չալոն» պարբերականն է (Համազգային, 26-32 էջ գունաւոր, լոյս տեսած 12 թիւ):



L'ARMÉE DU PEUPLE DE NOTRE
JEUNE RÉPUBLIQUE A CHASSÉ
LES LOUPS, ET POUR ÇA
JE VOUS FÉLICITE.
NOUS AVONS RECOUVRÉ NOTRE
INDÉPENDANCE, ET POUR ÇA
JE VOUS SALUE.
ET JE VOUS INVITE À RESTER,
AU LIEU DE PARTIR À MOSCOU, BERLIN,
PARIS, LOS ANGELES, LA SILICON VALLEY
ET NEW YORK. NOUS, NOUS AVONS
NOTRE IDENTITÉ, NOTRE MARQUE.
TOUT EST À CONSTRUIRE
INDOMPTABLES SOLDATS

À Paris, un jour, alors que
j'entrais dans ma boulangerie
préférée au coin de la rue de
Marseille et de la rue
Yves-Toudic, le syndicoliste,
j'ai eu comme
une révélation.


Cet édifice aux arches historiques dans un style
assyro-ourartéen de l'ère soviétique, c'est le marché
de l'avenue Machtots. Prenons quelques minutes pour
contempler cet espace menacé. Que voyez-vous ?

Սկզբնական տարիներուն մամուլը, մանաւանդ օրաթերթերու կիրակնօրեայ գունաւոր էջերը լայն տեղ տուած են այս արուեստին, ապա երկար տասնամեակներ անիկա ապրած է ու արուեստագէտներ ապրեցուցած պարբերական ճոխ մամուլի մը էջերուն մէջ, յաճախ ուղղուած մանկապատանեկան ոլորտին: Վաթսունականներուն կացութիւնը սկսած է փոխուիլ կամաց-կամաց, երբ ընթերցողներն ալ սկսած են հասուննալ ու աւելին պահանջել անկէ: Ֆրանսախօս աշխարհին մէջ անիկա ստացած է իններորդ արուեստ յորջորջումը, իսկ հայերէնով, գոնէ արեւմտահայերէնի մէջ, որոշ գործածութիւն ունեցած է «շարանկար» եզրը որպէս bande dessinée հարազատ թարգմանութիւն:

Տասնամեակներով անկաշկանդ զարգացման փուլ մը ապրելէ ետք յիսունականներուն ստիպուած եղած է ան յարմարելու գրաքննական որոշ օրէնքներու կապանքին, երեխաներուն վրայ ենթադրեալ վատ ազդեցութեան մեղադրանքին տակ, եւ ասիկա այս եւ այդր Ատլանտեան: Վաթսունականներու սեռային յեղափոխութեան հետ շարանկարն ալ ոտնակոխած է ազատագրութեան նոր հանգրուան մը, տեղ տալով արգիլեալ բոլոր տեսակի նիւթերու, իսկ իննսունականներէն սկսեալ ան կ'ապրի իբրեւ արուեստ հասունացման նոր փուլ մը: Հատորները տեղ կը գտնեն գրախանութներու լաւագոյն դարաններուն վրայ, գրողները կը դառնան հեռատեսիլի աստղեր բայց մանաւանդ ձեւաչափը ինքնին, քայլ պահելով նիւթերու ազատագրումին ու հասունացման հետ, կը կոտրէ իր կապանքները՝ ըլլայ գիրքերու չափեր կամ էջերու թիւեր եւ արտադրութիւնը դուրս կու գայ առեւտրական կանոններով ղեկավարուող հրատարակչատուներէ դէպի արուեստի միաւորներ: Հետեւելով արուեստի աշխարհը յատկանշող սղաճին, շարանկարի էջերն ալ այսօր կը վաճառուին հանրածանօթ աճուրդատուներու երդիքներու տակ ապահովելով աննախադէպ գիներ:

Այս ամէնուն հետ վերջին տասնամեակներուն հրապարակ նետուեցաւ անգլերէնով graphic novel նորաստեղծ եզրը: Դրդապատճառը անշուշտ դուրս գալ էր մանաւանդ անգլերէնով comicsի սահմանափակումէն, որով գրողները այսօր կը գրեն վիրենք հետաքրքրող նիւթեր, որոնք կ'երկարին ինքնակենսագրականէն մինչեւ ամէն տեսակի ժանրային պեղումներ պարփակող փնտռտուքներ՝ հոգեբանական, գիտաերեւակայական, գերբնական, ընկերային, ոստիկանական, եւայլն: Շարանկարը նաեւ թափանցած է լրագրական ասպարէզ ինչպէս նաեւ մեկնողական եւ դաստիարակչական ոլորտ: Չկան այլեւս նախկին մանկականի կամ ծիծաղաշարժի կնիքն ու սահմանափակումը ու ասպարէզը բաց է գրողին ու գծողին երեւակայութեան ու կարողութիւններուն: Պէտք է ըսել որ արտադրութիւնն ալ շատ բեղուն է ու որակը բացառիկ մակարդակի: Երկար տատամսումներէ ետք հատորները ոչ թէ միայն այլեւս տեղ կը գտնեն հանրային լայն խաւերու ձեռքին, որպէս որեւէ այլ գիրք, այլ նաեւ արուեստը ինքնին կ'ապրի զարգացման ոսկեդար մը, ըլլայ հրատարակուող հատորներու թիւով, ըլլայ մանաւանդ որակով: Այս ամէնուն կ'ընկերակցի մասնագիտական վերլուծական մամուլի ու համալսարանական ամպիոններէ ներս անոր նուիրուած աւարտաճառերու երեւումը: Իններորդ արուեստը յստակօրէն անցած է մանկական ու ժողովրդական արուեստի իր սկզբնական կարգավիճակէն քայլ մը անդին:

Ինչ կը վերաբերի graphic novel եզրին, որուն համար որդեգրեցինք հայերէնով գծագրավէպ եզրը, կը թուի թէ ան դժգոհութիւն պատճառած է երկուստեք՝ թէ՛ գրական ոլորտին մօտ, թէ՛ շարանկարի պաշտպաններուն: Յստակ է որ գծագրութիւն եւ վէպ մէկ

եկրի մէջ միացնելը կրնայ գայթակղութիւն նկատուիլ: Սակայն պէտք է ընդունիլ նաեւ որ քսան տարի է ու աւելի այդ եկրը կը բանի գէշ կամ աղէկ, իսկ անոր ծածկին տակ ստեղծուող գրականութիւնը հրապարակը ողողած է իր հատորներով ու թափանցելով հանրային գիտակցութենէն ներս, վերջապէս ինքզինք դարձուցած է արուեստի տեսանելի ու ընդունուած ձեւ մը:

Վերադառնալով հատորին, ի՞նչ կը պատմէ ան: Փրոֆեսոր Ֆռունկիկ, Ֆրանսա մեծցած ճարտարապետ, ետեւ կը ձգէ իր երկիրը ու կը մեկնի Երեւան միանալու հօրը, Սերգէյ Զաքոյեանին, հանրայայտ ճարտարապետ՝ ծանօթ պարոն Կրաղիւս (Monsieur Ciment) մակդիրով: Պարոն Կրաղիւս կը վարէ Արմատական ճարտարապետութեան բաժանմունք կոչուող միաւորի մը ընդհանուր տնօրէնի պաշտօնը եւ պատասխանատուն է քաղաքը վերակառուցելու պատրուակով վայն քանդող մոլուցքին: Ֆռունկիկ մեծ համարում ունի հօր հանճարին նկատմամբ եւ անոր նման ինքն ալ մեծ ջատագով է կրաղիւսի: Հօր միջամտութեամբ կը դառնայ համալսարանի դասախօս եւ իրը կը դարձնէ Երեւանը համայնավարութեան օրերէն մնացած ձախող շինութիւններէն ձերբազատելու մտահոգութիւնը: Առ այդ հավարաւոր տուներ կոհ կ'երթան քանդիչ մեքենայի խոշոր գունդին, որ ճօճուելով աջ ու ահեակ, կը քանդէ շինութիւն շինութեան ետեւէ: «Հիմա բաւարար տեղ ունինք», կը յայտարարէ ան, «քաղաքը վերակառուցելու համար»: Ֆռունկիկ մանկութենէն սնած է ճարտարապետութեամբ: Իբր երեխայ անոր բերնէն ելած առաջին բառը եղած է՝ կրաղիւս: Ծնողներու բաժանումէն ետք ֆրանսացի մօր հետ կը մեկնի Փարիզ ու հոն հասակ նետելով իր կարգին կը դառնայ ճարտարապետութեան ուսանող: Սակայն ուսումը կիսատ թողած կը մեկնի նախ Ռուսաստան, տեղւոյն վրայ ուսումնասիրելու համար շինութիւնները ու ապա Երեւան: Վերակառուցելու մոլուցքին մէջ անշուշտ ան չ'անդրադառնար որ մարդոց բնակարաններն են քանդուողը մինչ փողոց մնացած անօթեւաններու թիւը երթալէն կ'աճի: Իսկ այն պահերուն երբ կ'անդրադառնայ, կանոնք կը նկատէ ակամայ եւ առժամեայ կոհերը փոփոխութեան: Ճամբան քալած ատեն կը հանդիպի ցուցարարներու խումբի մը, որոնց կը խոստանայ արդիական տուներ, երեք պէտքարանով, սակայն անոնք ետ կը պահանջեն իրենց փլցուած ու մէկ պէտքարանով տուները, մինչ անոնցմէ մէկը փաթթուելով իր ոտքերուն կ'անիծէ վինք, մաղթելով որ թաղուի 300 թոն կրաղիւսի տակ: Ֆռունկիկ չ'անդրադառնար նաեւ որ ոչ թէ միայն իրենց կառուցածները նոյնքան տգեղ են որքան նախկինները, այլ նաեւ քաղաքին հաւաքական յիշողութիւնն է որ կը կորսուի այդպէս առ յաւէտ: Վերջ ի վերջոյ ան ինքզինք պիտի գտնէ հիւանդանոցի անկողնի մը վրան, կոհ՝ քանդիչ գունդի արկածով հարուածի մը գլխուն: Մինչ այդ սակայն ժողովրդական յեղափոխութիւնը մուտք պիտի գործէ նախագահական պալատ ու տապալէ իշխանութիւնը: Յեղափոխութիւնը արիւնալի պիտի ըլլայ եւ վայրագ ընդհարումներուն կոհ պիտի երթայ նաեւ հայրը, երբ ցուցարարները պիտի խուժեն անոր գրասենեակը ու վինք վար նետեն բարձրայարկ շէնքէն:

Յեղափոխութիւնը հակաճարտարապետական յեղափոխութիւն մըն է, բայց փոխաբերութիւնը յստակ է: Պէրպէրեանի կառուցածը հէքիաթ մըն է, ուր կ'երեւին արդիապաշտ ու բրտապաշտ (brutalist) ճարտարապետներու անուններ ու ուսմունքներ: Մէկ կողմէն հեգնանքը կը յորդի տողերէն, երբեմն կարծես ամէն տողի տակ, միւս կողմէն սակայն կերպարները տոգորուած են սրտառուչ անկեղծութեամբ մը, այն

աստիճան որ յաճախ ընթերցողը կը շուարի՝ խնդա՞յ թէ լա՞յ։ Ֆռունկիկ կը ձախողի իր առաքելութեան մէջ ու կը վերադառնայ Փարիզ։ Կը հրաժարի նաեւ կրաղիւսէն։ Հարցը որ կը դրուի վերջաւորութեան յիշողութեան հարցն է։ Քաղաքը քար ու քանդ եղած է։ Բայց ոչ միայն քաղաքը։ Ժողովրդական ճաշարանի մը մէջ ան կը լսէ երկու յեղափոխականներու կռույցը ուր մէկը, ճարտարապետութեան ուսանող, միւսին կ՚ըսէ՝ «յիշողութեան քանդումին է որ ականատես եղանք։ Տասը տարիէն մարդ բան պիտի չյիշէ... կ՚ուզէի գեղագիտականացնել այս ամէնը, որպէսզի յեղափոխութեան ձգած վէրքերը պահուին հաւաքական յիշողութեան մէջ»։ «Երբեք չմոռնալ, որով յոռեգոյն ոճիրը վկային մահն է», կը շարունակէ ան։ «Բայց կան բաներ որ կ՚ուզէի մոռնալ», կը պատասխանէ դիմացինը, «օրինակ մարտ 1ի դէպքերը» ...։

Ֆռունկիկ կը վերադառնայ Փարիզ ու գործ կը գտնէ իբրեւ պէտքարաններու գծագիրներ պատրաստող հասարակ ճարտարապետ։ Յստակ է որ ուրախ չէ։ Մինչ ճամբայ կ՚ելլէ ուղղուելու համար մօր տունը, դիմացը կ՚ելլէ նոյն այդ երեւանցի անտուն ցուցարարը, որ Երեւան փաթթուած էր ոտքին ու անիծած պինք։ «Ինչպէ՞ս հոս հասար» հարց կու տայ Ֆռունկիկ։ Իսկ ան կը պատասխանէ նոյն անէծքով ու կ՚անհետանայ։ Փարիզը կը շարունակէ իր ժխորալի երթը։

Այսքանը ինչ կը վերաբերի դիպաշարին։ Շարանկար մը կամ գծագրավէպ մը ի մի կը բերեն արուեստի երկու ճիւղ՝ պատում ու գծագրութիւն։ Երբեմն երկուքին հեղինակը կրնայ ըլլալ նոյն անձը, որուն պարագային հեղինակը կը նկատուի ամբողջական հեղինակ։ Բայց ընդհանրապէս մասնագիտացումը ամէն մէկ ճիւղին համար կը պարտադրէ տարբեր հեղինակներ։ Իրականութեան մէջ այս արուեստին գլխաւոր յատկանիշն ու հմայքը ճիշդ այդ երկուքը ի մի բերելն է այնպէս մը, որ մէկը միւսին ամբողջացնէ, եւ ոչ օրինակ պատկերը դառնայ նկարազարդում կամ գիրը դառնայ պատրուակ։ Հո՛ն կը կայանայ յաջողութեան գերագոյն երաշխիքը, երբ ընթերցողը գիրքը կը մոռնայ, ինչպէս լաւ ֆիլմին կամ լաւ վէպին առջեւ կը մոռնանք ֆիլմը կամ գիրքը ու մենք մեզ պահ մը կը գտնենք անոր մէջ։ Ի տարբերութիւն վէպին, ուր պատկերները ամբողջովին կը կառուցուին ընթերցողի մտքին մէջ, քանի որ վերջ ի վերջոյ միտքը պատկերներ ստեղծելով կը հետեւի դրուագներուն, եւ ուրեմն ամէն ընթերցող կը ստեղծէ իր իւրայատուկ պատկերներու շարքը,- ասոր լաւագոյն դրսեւորումը դէմքերն են, ինչպէ՛ս ամէ՛ն ընթերցող գիրքի տողերէն կը ստեղծէ հերոսներու ի՛ր դիմանկարները,- այստեղ պատկերները տրուած են, կամ գոնէ տեսողական գետնի վրայ առաջարկուած են։ Ասիկա տակաւին իրապաշտ պատկերներով գիրքի պարագային։ Կրնան անոնք նաեւ զուտ նկարչական ըլլալ, պատկերի հրաւէր, կամ պարզապէս տրամադրութիւն առաջարկող։ Ի տարբերութիւն ֆիլմին սակայն, ուր պատկերներու ամբողջ շարքն ու թաւալման ընթացքը կը պարտադրուին դիտողին իրական՝ այսինքն ընթացքի մէջ եղող՝ ժամանակի մէջ, այստեղ էջին վրայ երեւցողը անջատ ու սառած շրջանակներ են միայն, մինչ դիպաշարը կը յառաջանայ էջը կազմող աղիւսակներու ոստումներով, այնպէս որ ընթերցողին միտքն է որ ստիպողականութեան տակ է կառուցելու շրջանակէ շրջանակ ժամանակային անցքերը, լեցնելու քառակուսիներուն միջեւ մնացած պարապները։ Հո՛ս է որ յաջող գործի մը մէջ, գիր, պատկեր ու պարապ վիրար կ՚ամբողջացնեն ընթերցողի մտքին մէջ։ Ուրիշ մեծ տարբերութիւն մը ֆիլմի հետ այն է, որ հոս ժամանակը գծային չէ այլ առաձգական ու ամբողջովին կը գտնուի ընթերցողի հակակշռին տակ։ Շրջանակէ

շրջանակ անցքը կը համապատասխանէ ժամանակին մէջ յառաջացումի, բայց կը բաւէ որ ընթերցողը հայեացքը դարձնէ էջին մէկ կամ միւս երեսին, որպէսզի ժամանակն ալ երթայ ետ կամ առաջ։ Այնպէս որ ընթերցողը ժամանակները կրնայ տեսնել իր ուզած կշռոյթով եւ ուղղութեամբ, առաւել եւս կրնայ պանոնք տեսնել բոլորը միասին։ Կարծես ընթերցողին աչքը ըլլար աստուածային աչքին համազօր, որ կը տեսնէ անցեալ, ներկայ ու ապագայ միաժամանակ։

Այսպէս, յաջող գործ մը պէտք է կարենայ գիր ու գիծ այնպէս մը միացնել, որ ընթերցումը ոչ թէ միայն չկաղայ, այլ նաեւ չաւարտի, որով ընթերցողին երեւակայութիւնը նոյնքան դերակատարութիւն ունի գործին ծաւալման ու յայտնութեան մէջ մտքի պաստառին վրայ, որքան գործը ինք։ Գրութեան կամ գծագրութեան գեղեցկութիւնը, բանաստեղծականութիւնը, մէկը միւսին մէջ բանուածքն ու ագուցումը, այս բոլորը կը խաղան իրենց դերերը։ Լաւ գործ մը այս բոլորը միացնելով կը փռէ կայն ընթերցողի մտահորիզոնին, թոյլ տալով որ շնչէ ու ընթերցողը մղէ կրկին բանալու գիրքը ու թերթելու էջերը։ Տրուած ըլլալով որ առաջին հայեացքով գլխաւոր երեւցողը գծագրութիւնն է, երբեմն խաբկանքը կը ստացուի որ ա՛ն է գործը առաջ տանող գլխաւոր մեքենան, մինչդեռ հակառա՛կն է ճիշդը։ Առանց լաւ դիպաշարի՝ գծագրութիւնները չեն կենդանանար ու գործը թռիչք չ'առներ, մինչ գիրքը կը սկսի ծանրանալ ձեռքերուն մէջ։

Այլ յատկանիշ մը ընթերցումի թափն է։ Թէեւ միջին չափով գծագրավէպի հատոր մը հեղինակներէն կրնայ պահանջել տարուան մը աշխատանք, ըսենք գուցէ նոյնքան որքան վէպի մը պարագային, ի տարբերութիւն անոր՝ հատորին ընթերցումը ընդհանրապէս կը պահանջէ շատ աւելի նուազ ժամանակ։ Առաջին ընթերցումը յաճախ կը մնայ գրութեան մօտիկ, կ'ուզէ կարդալ գրուածը հետեւելով գիրին ու արագ անցնելով գծանկարներուն վրայէն, որով պատմուածն է որ կը լարէ ընթերցումը ու ընթերցողը կը մղէ դարձնելու էջերը։ Ապա կու գան աւելի դանդաղ թափառումները պատկերներուն վրայ մինչ աչքը մէկիկ-մէկիկ կը մտնէ անոնց մէջ, կը պտտի, կամաց-կամաց քակելով կանոնք, յայտնաբերելով անոնց ընդերքը ու այդտեղ գտնելով յաւելեալ հաճոյք ու տեղեկութիւն։ Շօշափելի գեղագիտական հաճոյք մը կայ միշտ պատկերի ընկալումին մէջ ու աչքը յաճախ կը սիրէ մնալ այդտեղ մինչ միտքը կը շարունակէ կառուցել պատմուածին վրայ, աւելցնել մանրամասնութիւններ որ չկան անպայման գրութեան մէջ։ Առաւել եւս, շարանկարի կամ գծագրավէպի ընթերցումը վարժութեամբ ձեռք բերուող հաճոյք մըն է, արուեստի որեւէ գործի նման, եւ ասոր մէջ մանկութեան անոր հմայքին տակ ինկած ըլլալը կը խաղայ որոշակի դեր, ինչպէս որ ընթերցանութիւնը տղային մօտ հունտը կը դնէ գիր ու գրականութեան ապագայ հաճոյքին։

Հարցը կը մնայ՝ ինչպէ՞ս մօտենալ Պէրպէրեանի ու Քէպպիի այս գործին։ Նախ սակայն, ո՞ւր տեղադրել կայն։ Հրատարակիչը, Actes Sud, որ յարաբերաբար երիտասարդ հրատարակչատուն մըն է, չի պատկանիր շարանկարի ըսենք աւանդական հրատարակիչներու հոյլին։ Ան աւելի ծանօթ է հրատարակած իր վէպերով, մանաւանդ թարգմանական (Նինա Պէրպէրովա, Փոլ Օսթէր, եւայլն) ու մանաւանդ ֆրանսական գրական տարածքէն ներս ապահոված յարաբերաբար մեծ թիւով մրցանակներով։ Actes Sud, ինչպէս գրական գործերու շատ մը հրատարակչատուներ, 2000ականներու կէսերուն իր հրատարակութիւններու ցուցակին վրայ աւելցուց նաեւ շարանկարային գործերու ցուցակ մը, փորձելով ետ չմնալ շուկային վրայ այս տեսակի գիրքերու

առուծախին կրած մեծ աճէն: Շարքը կը բաղկանայ միջազգային գրողներու հատորներէ, քանի մը հին աստղեր, բայց մեծ մասամբ նոր սակայն որոշ կշիռք վայելող անուններ: Պէրպէրեանի ու Քէպպիի գիրքը ամէն առումով գեղեցիկ հատոր մըն է ու լիովի կ'ընդգրկուի՛ եւ հրատարակիչի գիրքերու շարքին մէջ, եւ՛ գծագրավէպին, որ տիրողն է այդ ցուցակին մէջ, որպէս ժանր: Դասական շարանկար մը չէ ան: Վկայ մատիտով գծագրութիւններուն պարտուղի ոճը, նիւթի ընտրութիւնը եւ աղիւսակի ու պղպջակներու գրեթէ ամբողջական բացակայութիւնը: 90ականներէն սկսեալ գծագրավէպի մէջ կատարուած պանապան փորձերը հանգեցուցած էին ավատութեան այս աստիճանին, ուր նիւթը ի՛նք կը բերէ իր կաղապարը եւ ոչ հակառակը, ինչ որ եղած էր պարագան նախապէս այս արուեստին առաջին 100 եւ աւելի տարիներուն ընթացքին:

Քէպպիի գունաւոր մատիտով գծագրութիւնները պայթուցիկ են ու կը կրեն իւրայատուկ ոճի մը կնիքը: Երիտասարդ արուեստագէտ մըն է ան, քանի մը մանկական հատորներու հեղինակ, որուն գծանկարները կ'երեւին միջազգային մամուլի ամենածանօթ պարբերաթերթերուն մէջ եւ այս ոճը արդէն խօսիլ կու տայ ինքն իր մասին: Գունաւոր մատիտի այս ինքնուրոյն գործածութիւնը հատորին կու տայ ծաւալող ու անընդհատ շարժումի մէջ եղող շունչ մը: Գիծերը յաճախ դուրս կը յորդին հատորէն ու յօրինուածքները կլանիչ են իրենց գոյներու առատութեամբ ու ընդհանուր գեղեցկութեամբ: Երեխայական գծանկարներ յուշող այս աշխատելակերպը Պէրպէրեանի ընդյատակեայ հեգնանքին միանալով կը ստեղծէ գիրքին գլխաւոր մթնոլորտը: Նիւթն ալ ինքնին՝ քանդում ու յիշողութիւն՝ այժմէական նիւթ մըն է ու սիրելի մանաւանդ որոշ մտաւորական շրջանակներու մօտ: Քէպպիի Երեւանը կրնայ ըլլալ որեւէ քաղաք, թէեւ հոն յստակ կ'երեւին Երեւանի գլխաւոր յուշարձանները, իսկ ճարտարապետական քանդումի այս դրուագը ունի միջազգային տարողութիւն:

Այս ամէնուն մէջ կորսուողը սակայն պատումն է ու Պէրպէրեանի լեզուն: Անոր նախորդ երկու հատորներուն մէջ մեծ դեր ունէին այդ գեղեցիկ անգլերէնով յորդող տողերն ու ընդհանուր շարահիւսութիւնը: Շռայլութիւն մըն էր այդ լեզուն ու ընթերցումը լարող գլխաւոր ազդակ մը: Այստեղ, մասամբ կորսուելով թարգմանութեան մէջ, բայց մանաւանդ որով գիծ եւ գիր ուրիշ բանի կը վերածուին, լեզուն կը մնայ բացակայ: Դիպաշարին կը պակսի այդ ներքին ձգումը, որ պիտի մղէր դարձնելու էջերը: Յստակ է որ հատորը դասական կամ պատմողական ժանրի հատոր մը չէ, սակայն գրութիւնները երբեմն ետեւ-ետեւի ինկող շարադրանքներու տպաւորութիւն մը կը ձգեն փոխանակ պատմութիւնը առաջ մղելու: Տեղ մը ընթերցումը կարծես կը կենայ: Քէպպիի գիծը գերապանց է, սակայն Ֆռունկիկի կերպարը օրինակ կը մնայ ծաղրանկարային, որով կարծես չի ստանար բաւարար թանձրութիւն: Կորսուող քաղաքն ալ կը մնայ քիչ մը շատ թէական, օդին մէջ քաղաք մը: Իշխողը անշուշտ կործանիչ մեքենայի ամենաքանդ գունդն է, որ ներկայ է գրեթէ ամէն էջի վրայ: Հատորը ամբողջ անոր քմայքին տակն է կարծես: Տպաւորիչ է այդ ամէնը եւ լաւ կ'աշխատի փլուզման ընդհանուր մթնոլորտի կառուցման մէջ: Յեղափոխութեան էջերն ալ շատ լաւ են: Բախումներու ուժգնութիւնը լիովի կը ցոլանայ այդտեղ: Ընթերցումի աւարտին սակայն, եթէ հասցուցիք մինչեւ հոն, բան մը կարծես կը մնայ պակաս: Պէրպէրեան կը խոստովանի որ Երեւանի մէջ ականատես եղած է նման քանդումի տեսարանի եւ բնակիչներու բողոքին: Գիրքին նիւթը հոնկէ կու գայ: Վերջապէս շատ չէ անցած տակաւին այն օրերէն երբ հանրայայտ

«սովետական» շինութիւններ պոհ կ'երթային հիմնականաբար շահամոլութեան (ո՞վ կը յիշէ այսօր Երիտասարդական պալատը), չըսելու համար հին Երեւանի մնացած վերջին թաղամասը...: Ստեղծուած կերպարներուն ու դրուագներուն կը պակսին այդ կորուստը իսկապէս զգացնելու կարողութիւնը, որով կը մնան կարծես պատրուակներ սրամիտ գրութիւններու ու գեղեցիկ նկարներու ծառայող: Այդ առումով գիրքը շատ ընդհանրական է ու հայ ընթերցողը կը ձգէ իր քաղցին: Այդ ալ անշուշտ ուրիշ պատմութիւն:

Ինչ կը վերաբերի հատորի գտած ընդունելութեան, գրախօսականները՝ ըլլայ ֆրանսական մամուլի մեծ անուններուն մէջ, ըլլայ մասնագիտական՝ բացառապէս դրական են: Գործը նորութիւն մը կը բերէ եւ տրուած ըլլալով անոր քաղաքական երեսն ու Քէպպիի գեղեցիկ գիծը, որուն կ'աւելնայ նաեւ հրատարակիչի ծանուցողական մեքենան, յառաջացուցած է որոշ հետաքրքրութիւն եւ գովասանական էջեր ու արտայայտութիւններ չեն պակսիր գրեթէ ամէն տեղ: Թէեւ Քէպպի-Պէրպէրեան կոյգը պիրենք նախորդող Տիփուի-Պէրպէրեան (Շառլ) կոյգը չեն (մեծ հռչակ վայելող եւ «գեղադէմ» Փարիզի բնակչութիւնը նկարագրող մրցանակակիր գիրքերու հեղինակներ), ոչ ալ Մարժան Սատրապի կամ Ռիատ Սաթթուֆ, որոնց հատորները պէսթսէլըրներ դառնալով նոր շունչ ու տարողութիւն բերին գծագրավէպի ժանրին վերջին քսան տարուան մէջ, երեւոյթը կը մնայ քաջալերելի եւ այս արուեստին մէջ ձեռքի վրայ համրուող հայկական անուններուն վրայ այս յաւելումը ուրախալի երեւոյթ է:

Վահան
Իշխանյան



Այլ պատմություն.
Պաչյանի «Ցտեսություն, Ծիտ» վեպը

Բանակը պատանու ծիլ տվող անհատականությունը չորացնող մի հաստատություն է, ուր անձերը ձուլվում են կաստաների մեջ կամ հրամանատարի բռնությունների տակ դառնում մի մարմին: Արամ Պաչյանի «Ցտեսություն, Ծիտ» վեպի հերոսը հենց ոչնչացվող անհատականությունն է, ուր կերպարի անորոշությունը լրացվում է մարդու միջից անհատին հանելու պատմությամբ:

Արամ Պաչյանի «Ցտեսություն, Ծիտ» վեպը լույս տեսավ 2012-ին «Անտարես» հրատարակչությամբ, ապա երկրորդ հրատարակությունը եղավ 2017-ին՝ «Դարակ» հրատարակչությամբ:

Քանի՞ հոգի է այդ հերոսը, նույն մա՞րդն է սպայի ոտքերի տակ ծեծից մեռնողը. «Դիակին ինչքան ուզում ես խփի: Ես միս ու արյուն չունեմ: Դու էդքան բո՞ւթ ես, մինչև հիմա գլխի չե՞ս ընկել, ախմախ վիժվածք... Էնքան խփեցիր, որ երեսիս մաշկը՝ քիթս, բերանս, դունչս ցրիվ եկան... Հիմա ամբողջ օրը պատուհանի մոտ կանգնած՝ ժամերով դուրս եմ նայում ու բարձրացող քամու մեջ դիմագծեր եմ հնարում, որ սուր բեկորներ դարձած սլանում են, կորում փոշու ամպի մեջ» , «Հրամանատարը լիքը կում անելով թքում է բերանիդ մեջ»:

Եվ այդ նո՞ւյնն է բուժկետում ինքնասպան եղած փինվորը, ով ջրծաղիկով իրեն վարակել էր, որ կորամասում չհայտնվի որպես անձեռնմխելիների կաստայի տաբուավորված անդամ. նրա «հանցանքն» այն էր որ «պիղծ» տեղում՝ կուգարանի հատակին ընկած սանրը վերցնելով «պղծվել» էր, դառել տաբու, իրեն կպնողն էլ կպղծվեր (բանակային ժարգոնով՝ գառլախվել, բայց Պաչյանը ժարգոն չի օգտագործում): Հեղինակը չի տարանջատում հերոսներին, ցույց չի տալիս, թե նրանք նո՞ւյն փինվորն են, թե՞ տարբեր փինվորներ, թողնում է ընթերցողի հայեցողությանը ու վեպի ամբողջ ընթացքում մնում է հարցը՝ մի՞ փինվորի անձն է բազմապատկվել, դարձել մի քանի փինվորներ, թե՞ մի քանի փինվորներ իրենց ողբերգություններն ի մի են բերել մի անձի մեջ ու, ապաստան գտնելով, այնտեղ նույնացել: Հեղինակն ու ընթերցողը դառնում են փինվորի միակ մխիթարությունը, որը միայն վեպով է հնարավոր դառնում. «Քեզ սպասում են մարդիկ, ովքեր չգիտեն քո մասին, բայց ստեղծում են քեզ»:

Սա բանակի միջին կաստան է, որ պետք է դիմանա վերին կաստայի սահմանած նորմերին, հանկարծ չսայթաքի ու ընկնի ներքևի, անձեռնմխելիների, «պղծվածների» կաստա: Մյուս շերտերը հստակ անձինք են՝ վերին կաստայում հոլանդական սիգար ծխող ու քծնողների ոհմակով շրջապատված Կարդինալը, ով որոշում է, թե ո՛ւմ պետք է նվաստացնել, և ստորին՝ անձեռնմխելիների կաստայում Միքի Մաուսը, ով ձեռնոց է դնում, որ իր «պիղծ» մարմինը չքսվի մյուսներին ու նրանց էլ չպղծի:

Ի՞նչ է այդ անձեռնմխելիների կաստան, ինչո՞ւ են նրանք դառնում անձեռնմխելի՝ գառլախ:

Հայաստանի մեծ քաղաքներում, մասնավորապես, Երևանում դեռ սովետական տարիներից բակ ու դպրոց էին ներխուժել սովետական հանցագործ աշխարհի բանտային օրենքները, պատանի տղաներն առաջնորդվում էին այդ օրենքներով, բարձրագույն հաստատություններում դրանք ավելի թույլ էին արտահայտված:

Սովետական բանակում այդ օրենքները չէին գործում, ոչ կանոնադրական հարաբերություններ կոչվածը հին ու նոր ծառայողների հարաբերությունն էր, ուր հին ծառայողը ավելի արտոնյալ դիրք ուներ:

Անկախ Հայաստանում, երբ ստեղծվեցին Հայաստանի զինված ուժերը, առաջացան ոչ կանոնադրական այլ հարաբերություններ, բանակ ներխուժեցին քրեական աշխարհի այդ օրենքները տարբեր ձևախեղումներով (ամենաակնհայտ ձևախեղումը այն է, որ հանցագործ աշխարհի օրենքները մերժում են պետությանը ծառայելը, ուսադիր կրելը, սակայն այդ օրենքների հետևորդները գնում են բանակ ու ծառայում):

Այդ օրենքներով «փչացած» է դառնում կամ «գյոթանում» է կամ գառլախվում է, այսինքն՝ անձեռնմխելիների կաստա են նետվում պասիվ միասեռականները, ապա նաև այն հետերոսեքսուալները, ովքեր կնոջը կունիլինգուս են արել: Ավելի խիստ դեպքեր կան, ովքեր համբուրվել են մինետ արած կնոջ հետ, ապա նաև՝ ովքեր շփվել են «փչացած» դարձածների հետ՝ նրանց իրերից են օգտվել, սիգարետ են վերցրել, հաց են կերել հետները:

Բանակի ծանոթ գնդապետը պատմում էր, թե կորամասում պարզել էին, որ փինվորներից մեկը պասիվ միասեռական է, որից հետո ամբողջ կորքը դրսում կանգնել, ճաշարան չէր մտել, պահանջելով ամբողջ սպասքը թափել, նորը բերել: Ասում է, որ

հրամանատարներով օրինակ ցույց տալու համար ճաշարանում այդ նույն ափսեներով ճաշ կերան, սակայն վորքը անդրդվելի մնաց, և միայն ամբողջ սպասքը թափելուց ու նորը բերելուց հետո մտան ճաշելու: Մեկ ուրիշ վինվոր էլ պատմում է, որ երբ պարվվել է, որ խոհարար կինը օրալ սեքս է արել, ամբողջ վորքի պահանջով նրան հեռացրել են և ամբողջ սպասքը փոխել:

Ուրեմն, այս ամբողջ տաբուների համակարգը կապված է սեռական հարաբերությունների և սեռական արգելքների հետ, որոնք սողոսկել են նախ հանցագործ աշխարհի օրենքներ, ապա՝ բակեր, դպրոցներ և անկախ Հայաստանում՝ բանակ:

Նաև ստորին կաստա են նետվում նրանք, ովքեր խախտել են որոշակի տարածքներում սահմանված կանոնները: Բանակում այդ բոլորին անվանում են գառլախ կամ գառլախված:

Հովհաննես Իշխանյանը «Գառլախ. հայկական բանակի անձեռնմխելիները» ակնարկում գրում է.

«Գառլախ» բառը թուրքերենից է եկել, նշանակում է՝ կեղտոտ, անարգված, փչացած: Գառլախը սեփական կամ ուրիշի կեղտին դիպչելն է կամ կեղտի հետ առնչություն ունեցող տարածքում որևէ առարկայի դիպչելը:

Գառլախ տարածքն էն տեղն է, որ ինչ-որ ժամանակ օգտագործվել է որպես պետքերը հոգալու տեղ, որտեղ ծառի տակ միզել են կամ կղել: Գործող վուգարանն էլ է գառլախ տարածք: Գառլախում կարելի է քայլել, բայց ինչ-որ բան վերցնելը տաբու է:

Եթե որևէ մեկը գառլախ տարածքում ընկած բան վերցնի, ինքն էլ է գառլախվում, ու վորքն իրան ընդունում է որպես գառլախ: Ոչ ոք իրեն՝ գառլախին չի կպնում, ոչ ոք հետը հաց չի ուտում, կարծես թե գառլախվածն էլ է համարվում գառլախ տարածք ու վրան կպցրած է «անարգված է» ցուցանակը: Ու կար կատակ՝ ասում էին, որ եթե ընկնես վուգարան, չհելնես՝ գառլախվել ես:

Բայց եթե գառլախ տարածքում ընկնում է սրբության (մայր, հայր, քույր, եղբայր, սիրած աղջիկ, կին, երեխա) նկարը կամ նամակը, դրանց տերը պարտավոր է ընկած իրը վերցնել: Այս դեպքում սուրբ իրը վերցնողը գառլախ չի համարվում, հակառակը, եթե չվերցնի, ինքը սրբապիղծ կհամարվի, քանի որ իր սրբության նկարը թողել է գառլախ տարածքում: («Անկախ» շաբաթաթերթ, 4 հունիսի, 2009, http://archive.ankakh.com/?p=937):

Բանակում շատ ինքնասպանություններ լինում են այս օրենքներով նվաստացման պատճառով:

Հանցագործ աշխարհի այս կաստայավորման համակարգի էլեմենտները կան նաև հասարակական կյանքում: Գործիչները հաճախ են հակառակորդին վիրավորում բանակային ստորացնող բառապաշարով՝ գառլախ, աբիժնիկ և այլն, որպես օրինակ վերջին հանդիպածը՝ քաղաքացիական ակտիվիստ Վահե Գևորգյանը ֆբ-ում օգոստոսի 2-ին գրել է. «էդ 41 գառլախների անունները գաղտնի ա՞» , նկատի ունենալով Ազգային Ժողովի այն պատգամավորներին, ովքեր ստորագրություն էին տվել երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին կալանքից ազատելու համար:

Արամ Պաչյանի երկու հերոսները այս օրենքների պոհերն են՝ Միքի Մաուսը, ով ձեռնոցներ է կրում, որ հանկարծ իր մատներով չդիպչի փինվորներին, թե նա ինչո՞ւ է հայտնվել անձեռնմխելիների կաստայում, վեպում չի ասվում: Ապա նաև՝ բուժսենյակի տղան, որ պուգարանի հատակից սանր է վերցրել:

Պետությունը, «Զինուժը», հեռուստատեսային լուրերը, պատմության դասագրքերը կերտում են բանակի մի պատմություն, և իշխանության իրավական ինստի-տուցիաներով, հասարակական օրենքների պարտադրանքով փակում այլ տեղեկու-թյան, այլ պատմության ճանապարհը (ինչպես բռնաբարվածն է որպես ստորացված թաքցնում իր դեմ կատարված հանցանքը, այնպես էլ երիտասարդը ամաչում է վկայել իրեն «փչացնելու» բանակ թափանցած գողական ադաթը, քանի որ հասարակական իշխանության սահմանած կարգով վկայելը «փչանալու» ակտը կրկնելու է վերածում): Բայց մեկ էլ «փաստելու», «ցուցմունք տալու», պարտավորությունից, «ամոթից» ազատագրված գրականությունը վկայում է մեկ այլ պատմություն, ուր բանակի ինքնասպանությունների ու սպանությունների վիճակագրության փոխարեն բանակային բարքերին ու հրամանատարների սադիզմին պոհ գնացած երազող հոգիների պատմություններն են, ուր մահը ամենաահավոր վախճանը չէ, դրա համար էլ փինվորները մեռնում են, հետո մահից հետո կորացրվում, ապրում. «Գլխիս իջած քո ամեն հարվածն ինձ մտածել էր սովորեցնում. սովորեցնում էր կրկին հիշել ու հեռանալ՝ կոշիկներիդ տակ թողնելով մարմինս»:

«Ցտեսություն, Ծիտ» վեպին պուգահեռ է Համբարձում Համբարձումյանի «Գյոթնոցի բիձեն» պատմվածքը(Ինքնագիր 9), որ պատմում է բանտում անձեռնմխելիների կաստայում հայտնված ծերունու դրաման:

Մահվան ու կյանքի սահմանը այնպես է ջնջված, որ մահից հետո ապրելը մի անդրշիրիմյան, ֆանտաստիկ կյանք չի, սովորական առօրյա է, ծանոթ մի երկրի առօրյա, ուր մարդկանց ապրելու նշանը երազելն է, և այդ երազանքը իրականացնում է միշտ ինչ-որ մի ուրիշը, ոչ վեպի հերոսը, ինչպես նախկին ուսուցչուհի, մրգավաճառ Նառայինը, նրանից ամուսինը բաժանվել էր չբերության համար. «Ոչ ոք չգիտի, որ ես էլ երեխա ունեմ, բայց ես էլ երեխա ունեմ, աղջիկ, ինձ իտալացիները բուժել են, արգանդս հանել են, տեղը իտալական արգանդ են դրել: Դու հավատում ես Նառային ու մեկ-մեկ պատկերացնում նրա իտալական արգանդը՝ նկարազարդված փոքրիկ թռչուններով, ինչպես դեղին, կանաչ, կարմիր փուչիկների վրա, որոնցից մեկի մեջ քնած է նրա աղջիկը»:

Կամ «պղծված» փինվորը, ում երազանքն էր Փարիզ մեկնել, բայց իր փոխարեն Փարիզ է գնում եղբայրը ու բանակ նամակներ գրում. «Բոլորը քո վերադարձին են սպասում, իսկ Փարիզն ու ես՝ քեզ»: Իսկ ինքը էլ չի կարող Փարիզ գնալ, ինքը այլևս չի կարող ո՛չ երազանք ունենալ, ո՛չ էլ այն իրականացնել, ինքն այլևս երազանքներ ունեցող մարդ չի. «Սանրը վերցրել եմ, չեմ կարող գալ Փարիզ», ու այս վախճանի, բանակային հանրության մարդուն տաբուացնող սպանության համեմատ կենսաբանական մահը ավելի սովորական է, որ նա իրականացնում է՝ ասեղով ջրծաղիկի վերքերը փորփրելով: Նրա վախճանը վրա է հասնում այն պահին, երբ հիվանդասենյակում պառկած իրեն ուտելիք է բերում «պիղծ» Միքի Մաուսը, ում այցը նշանն էր նաև իր «պղծության». միայն Միքին կարող է իրեն այցելել, քանի որ ինքն էլ է վերածվել անարգված տարածքի, տաբուի, ինչպես պուգարանի հատակը, ինչպես Միքի Մաուսը:

«Փչանալու», տաբու դառնալու սարսափը ավելի է շեշտվում, երբ «հերոսը» երանի է տալիս իր մեռած մանկության ընկերոջը, որ բանակում չհասցրեց ծառայել. «Մտածում էի քո մասին, ուրախանալով, որ շուտ մեռար, որովհետև եթե չմեռնեիր ու բանակ գայիր, ինքնասպան էիր լինելու: Ամեն առավոտ լավ տղերքի կոշիկները փայլեցնող ստրուկը: Երկու տարի անընդմեջ ճաշարանում նրանց համար կարտոֆիլ կտապակեիր, անձնական քարտուղար, մատուցող, մոխրաման դատարկող, լուր տանող-բերող ու փափլիկ քամակիդ համար անկողնում զուգընկեր կլինեիր: Վաշտի հրամանատարը ամեն առիթով քացու տակ կգցեր քեզ, քարշ կտար իր սենյակ ու մի ժամ փետով կլխկեր չաղ մարմինդ: Բոզություն անել կստիպեր, իսկ դու չդիմանալով ակորդներով լցված գլխիդ ու մեջքիդ իջած հարվածներին՝ ոռնալով կպատմեիր ամեն ինչ, կպատմեիր զումարտակի լավ տղերքի առօրյան, հատ-հատ մատնացույց կանեիր նրանց ֆինանսական աղբյուրները: Կկիսվեիր նրանց հեռահար նպատակների ու թաքուն երազանքների մասին: Հետո վաշտի հրամանատարը կթքեր երեսիդ ու դուրս կշպրտեր սենյակից՝ սեղանի շուրջը տղերքի երեսին նետելով, որ դու բոզ ես, որ ամեն ինչ պատմել ես, որ քեզ տեղը տեղին չեն դաստիարակել, ծեծվելուն չեն կոփել, ու հենց այդ վայրկյանից կսկսեր քո իսկական վերջը: Տղերքը ծակվելուդ համար քեզ կփչացնեին ամենաանհավանական ձևերով: Կպրկեին ճաշարանում հաց ուտելուց: Գիշերը քնած ժամանակ կմոտենային մահճակալիդ ու առատ շիթով հանկարծակի կմիզեին երեսիդ... կարգելեին բոլորին քեզ ձեռքով բարևել....» և այլն: Իսկ հետո հայտնվում է «փչացված» դարձածը՝ Միքին. նրա պես դառնալու վախը վինվորների մեջ նստած է. «Նա քայլում էր մարմնիդ միջով ճաշարանի ետնաբակից, գլուխը կախ...»:

Միակ փոքրիկ ճիգը վեպի սկզբում սեքսի նկարագրությունն է, որ հիշեցնում է գարնան մասին շարադրություն գրող գերազանցիկ աշակերտի ամեն կերպ գեղեցիկ գրելու ճիգը: Բայց դա կարծես մինչ կորակոչվելն էր, դեռ կենդանի երազանքների շրջանը: Իսկ վեպի վերջում ամեն ինչ իր տեղն է ընկած, և սեքսն էլ կործանված հոգիների վայելքի փնտրտուք է. «Հանկարծ ուսդ ցնցվում է Նառայի ձեռքի չոր թափահարումից: Գոտկատեղից ներքև լրիվ մերկ է: Շալվարն ու տրուսիկը իջեցրել է մինչև չոքերը: Նառայի դեղին տրուսիկի վրա փոքրիկ, կարմիր ձկնիկներ կան: Նա ծիծաղում է ու շարունակում եռանդուն թափահարել ուսդ: Ելնում ես աթոռից կանգնում դիմացը: Գլուխդ համարյա դիպչում է փորին: Մի փոքր ներքևում իտալական արգանդն է: Վախվորած, ինչպես շան ձագին սկսում է շոյել ցից-ցցից մազերդ: Փորձում ես կռանալ, բարձրացնել տրուսիկը, հետ է քաշվում: Ես ամեն օր երկու կապ կանաչի եմ ուտում, որ 130 տարի ապրեմ»:

«Ցտեսություն, Ծիտ» ահա վեպը, գրականությունը՝ հասարակության ընդդիմությունը:

՝Իսկ ժողովրդավարության ցուցիչ կլիներ, եթե պատմության ֆակուլտետներում Հայաստանի պատմության դասագրքին, հերոսականությանը զուգահեռ, հանձնարարվեր գրական գործեր, և նրանց մեջ՝ «Ցտեսություն, Ծիտը»:

ISSN 1829-1139
18002>
9 771829 113004